9(47.925)
Մ-78

ՄԵՍՉՅԱՆ

ՂՐԻՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՓԱՂԹԱԹ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1801 • 1917

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

В. А. МИКАЕЛЯН

ИСТОРИЯ АРМЯНСКОЙ КОЛОНИИ В КРЫМУ

(1801—1917)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1970

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

9(47.925)
Մ - 78

Վ. Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՂՐԻՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(1801—1917)

463

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1970

9(c)15(176)
Մ 78

Աշխատությունն ընդգրկում է դրիմահայոց ևոր շրջանի ամբողջական պատմությունը: Այնտեղ լուսաբանված են գաղութի պատմության հիմնական հարցերը՝ գաղութի վերականգնումը, դրիմահայոց վարչա-կառավարման օրգաններբ, սոցիալ-տնտեսական դրությունն ու հասարակական կյանքը, մշակույթը: Մենագրությունը շարադրված է Երևանի, Լենինգրադի, Մոսկվայի, Օդեսայի և Սիմֆերոպոլի արխիվներից հաղված նյութերի հիման վրա:

1—6—1

Ծնողներիս՝
ԱԼԵՔՍԱՆԻ և ՄԱՐԻԱՄԻ
անմոռաց հիշատակին

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ղրիմի հայկական գաղութի պատմությանը նվիրված այս երկրորդ գրքով ամբողջանում է ղրիմահայոց բազմադարյան պատմությունը: 1964 թվականին լույս տեսած համառուն վերնագրով մեր աշխատությունը ներառնում էր այդ պատմության միջնադարյան շրջանը, մինչև 1778 թվականը: Հայտնի է, որ 1778 թվականի արտագաղթեցմանը հաջորդած մեկ-երկու տասնամյակներին ղրիմահայ գաղութը փաստորեն դադարեց գոյություն ունենալ: Սակայն XVIII դարի վերջերին և XIX դարի սկզբներին, ինչպես նաև հետագայում հայերի՝ դեպի Ղրիմ կատարած զանգվածային և մասնակի տեղափոխումների շնորհիվ գաղութը կրկին վերականգնվեց:

Ղրիմահայոց այս ժամանակաշրջանի պատմությունը հույժ ուշագրավ է բազմաթիվ կողմերով. գաղութում գործում էին վարչա-կառավարման երկու օրգան՝ բաղաքային ռատուշա և դատարան, ղրիմահայերը ծավալել էին տնտեսական լայն գործունեություն, զարկ տվել մշակույթի զարգացմանը, ունեին նաև հասարակական-բաղաքական աշխույժ կյանք՝ իր բազմանյուղ թելերով:

Ներկա աշխատությամբ նպատակ ունենալով ավարտել ղրիմահայոց նախասովետական շրջանի պատմությունը, փորձել ենք լուսաբանել վերոհիշյալ պրոբլեմները և դրանց պատասխող բազմաթիվ հարցեր ու խնդիրներ:

ԳԼՈՒԽ ՄԻՆՉԻՆ

ԳԱՂՈՒԹԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Ղրիմի բնակեցման խնդիրները: Արտագաղթից խուսափած հայեր: Հայ կաթոլիկների վերադարձը: Հ. Առղությանը և Ղրիմում հայերի վերաճառատաման միջոցառումները: Հին Ղրիմի բնակեցումը հայերով: Նոր նախիջևանցիների տեղաշարժը դեպի Ղրիմ: Տրիզորխապոլցիների ճառատավելը Դարասուբազարում: Հայերի արտագաղթերը Թուրքիայից Ղրիմ, ռուսահպատակության ընդունումը: Հայ ազգաբնակչության բանակը Տավրիկյան նահանգում և նրա տեղաբաշխումը:

1778 թ. ճակատագրական հետևանքներ ունեցավ ոչ միայն ղրիմահայության, այլև բուն Ղրիմի տնտեսական կյանքի համար: Ղրիմի խանին ռուսական արքունիքից լիակատար կախման մեջ դնելու նպատակով Եկատերինա հայերին ու հույներին տեղահանելու քաղաքականությունը, թեև հասավ նպատակակետին, բայց շուտով կառավարությանը կանգնեցրեց այնպիսի դժվարությունների առջև, որոնք այդ իսկ անհետաձգ քաղաքականության արդյունքն էին: Քրիստոնյա ազգաբնակչությանը Ղրիմից դուրս չբերելու դեպքում Եկատերինա միացումը ռուսական կայսրությանը Եկատերինա կառավարությանը մի փոքր ավելի գլխացավանք պատճառեր, բայց իրողություն է և այն, որ առանց քրիստոնյաներին արտագաղթեցնելու էլ այդ խնդիրը ինքնըստինքյան լուծվում էր՝ պատերազմում ռուսական զենքի տարած հաղթանակով և հետպատերազմյան շրջանում Ղրիմում ռուսական մեծաթիվ զորքի մշտական ներկայությամբ: Բայց, ինչևիցե, քրիստոնյաների տեղահանումը արդեն կատարված փաստ էր, և Եկատերինա ստիպված էր իր արդյունաբերծող բնակչությունից, Ռուսաստանի առաջ կանգնելով «դրանից խոցված տեսքով»[1]:

[1] *Павел Сумароков,* Досуги крымского судьи ч. I, СПб., 1803, стр. 160.

Եվ հիրավի, Ղրիմի տնտեսական կյանքը ժամանակի իր հիմնական ճյուղերով (առևտուր, արհեստագործություն, երկրագործություն) հայերի և հույների հեռացմամբ կատարյալ քայքայում ապրեց։ Թաթար ազգաբնակչությունը ի վիճակի չէր գոցելու այն բացը, որ հետևել էր քրիստոնյաների արտագաղթեցմանը, և ամենից շատ ինքն էր տուժում արհեստագործական արտադրանքի ու մթերքների պակասից, քրիստոնյա ազգաբնակչության հաշվին ձրի կամ կիսաձրի ապրելու դարերով ավանդական դարձած հնարավորության կորստից։ Միացումից տարիներ անց Ղրիմ ժամանած Պավել Սումարոկովը, ժամանակի բանիմաց և շրջահայաց ռուսական աստիճանավորներից մեկը, նշում էր, թե քրիստոնյաներին արտագաղթեցնելուց և Ղրիմը միացնելուց հետո, կառավարությունը «ցնցվեց, տեսնելով, որ գյուղերը փլատակներ են դարձել, այգիները՝ լքված անտառներ, արհեստները, արդյունագործությունը՝ ձրիակերության և համոզվեց, որ իր նոր հպատակներին նախքան որդեգրելը, դատապարտել է որբության»[2]։ Հայերի ու հույների տեղահանումը, շեշտում էր նա, «իր հետևից թողեց փլատակներ և ամայություն»[3]։

Տնտեսական այսօրինակ անմխիթար վիճակ էր տիրում ոչ միայն միացմանը (1783) հաջորդած առաջին տարիներին, այլև տասնամյակներ շարունակ։ Ադմիրալ Մորզվինովը, Ռուսաստանի տնտեսական կյանքին քաջատեղյակ բարձրաստիճան պաշտոնյաներից մեկը, ցավով նշում էր, թե «Ղրիմը անկում ապրեց այն ժամանակներից ի վեր, երբ լեռնային մասից դուրս եկան քրիստոնյաները և թաթարները պրպղեցրին նրանց այգիներն ու տեղերը։ Մեծ վնաս տեղի ունեցավ, բայց կառավարությունը լռում էր, պատահական դիպվածի թողնելով այս վնասի ուղղումը»[4]։

Տավրիկյան մարզի կառավարիչ Վ. Վ. Կախովսկու վկայությամբ, կառավարությունը, իրոք, «առանձնապես հոգ չէր տանում» հիանալի այդ երկրամասի «տխուր պատկերը» վերաիոխելու ուղղությամբ[5]։ Եվ դա ոչ թե կառավարության անգիտության հետևանքով, այլ պարզապես այն պատճառով, որ երկրամասի բնակեցումն ու նրա տնտեսական կյանքի զարթոնքը պահանջում էին մեծ միջոցներ. և ապա՝ Ռուսաստանի ծայրագավառները առհասարակ գտնվում էին միևնույն հետամնաց վիճակում։

Սակայն ինչ-որ քայլեր, այնուամենայնիվ, ձեռնարկվում էին, և ամենից առաջ՝ թերակղզին բնակեցնելու ուղղությամբ։ Այդ նպատակով Տավրիկիայում տեղակայվեցին Եկատերինոսլավյան և Ցանագորիական գնդերը, պաշտոնաթող զինվորներ, վորակոչիկներ, նրանց կանայք, Լեհաստանից եկածներ և նույնիսկ դասալիքներ[6]։

Թերակղզու բնակեցումը նախատեսվում և աստիճանաբար իրականացվում էր տեղացի (ռուսական) և օտարերկրյա գաղթականության հաշվին։ Հսկայական հողատարածություններ տրվեցին, օրինակ, Ջերնիգովի և Վորոնեժի նահանգներից եկած վերաբնակիչներին՝ շնչին 16 դեսյատին հաշվով։ Բացի դրանից, 1.560.721 դեսյատին հող նախատեսված էր հատկացնել գաղթականներին, պետական գյուղացիներից հատուկ գյուղերի հիմնադրմանը, անասնապահության զարգացմանը, մասնավոր անձանց և այլն[7]։

1798 թ. փետրվարի 13-ին ընդունվեց մանիֆեստ Ղրիմը օտարերկրյա գաղթականներով բնակեցնելու մասին։ Մանիֆեստը բոլոր օտարերկրացիներին, առանց դիրքի և դավանանքի խտրության, իրավունք էր վերապահում ըստ իրենց ցանկության բնակություն հաստատել Ղրիմի թերակղզու քաղաքներում ու գյուղերում, բացառությամբ Սևաստոպոլի, իբրև ռազմական նավահանգստի։ Մանիֆեստի 10-րդ կետը բոլոր գաղթական օտարերկրացիներին տալիս էր արտոնություններ, ազատում զինվորական ծառայությունից[8]։

Ահա այսպիսի պայմաններում Ղրիմից եկած հայերից շատ ու շատերը և ոչ միայն նրանք, այլև մեծաթիվ արևմտահայեր XVIII դարի վերջին և XIX դարում սկսում են զանգվածաբար և առանձին ընտանիքներով, օրենքով սահմանված թե զարտուղի ճանապարհներով քաշվել Ղրիմ, աստիճանաբար վերակենդանություն տալով 1778 թվականի արտագաղթով կարծես թե մեկընդմիշտ մարած երբեմնի «Armenia maritima»-յին՝ ղրիմահայ գաղութին։

---

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում։

4 «Записки императорского общества сельского хозяйства Южной России», книга шестая, Одесса, 1873, стр. 364.

5 *В. Х. Кондораки,* В память столетия Крыма, М., 1883, т. 1—5, стр. 44.

6 *А. Г. Заводовский,* Сто лет жизни Тавриды, Симферополь, 1885, вып. I, стр. 115.

7 Նույն տեղում, էջ 130։

8 Центральный государственный исторический архив СССР (в дальнейшем ЦГИА СССР), ф. 1286, оп. 4, 1807, д. 672, л. 2 соб.

XIX—XX դարերի ղրիմահայ գաղութը հիմնականում կազմավորվում է XVIII դարի 90-ական թվականներին և XIX դարի առաջին երկու տասնամյակներին, թեև, ինչպես կտեսնենք, հայերի գաղթը դեպի Ղրիմ, մանավանդ Թուրքիայից, չի դադարում մինչև առաջին աշխարհամարտն ու մեծ եղեռնը։ Գաղութը առաջանում էր տարբեր շարժառիթներով ու խնդիրներով, ինչպես նաև տարբեր ուղիներով Ղրիմ անցած հայերից։ Սակայն մինչ այդ հարցի քննարկումը, մի փոքր կանգ առնենք աննշմար ու աննկատ այն հայկական կյանքի վրա, որ կար Ղրիմում 1778 թվականի արտագաղթից հետո՝ շնորհիվ այնտեղ մնացած հատ ու կենտ հայության և որին երբեք չի կարելի գաղութ անունը տալ։

Արտագաղթեցումից անմիջապես հետո տարբեր պատրվակներով հայեր էին մնացել հիմնականում Թեոդոսիայում, այն էլ աննշան քանակությամբ։ Իհարկե, մյուս քաղաքներում ևս կարելի էր հանդիպել առանձին հայերի, ինչպես, Բախչիսարայում Քյուրքչի Խաչատուրին, որին Ղրիմ էին թողել ռուսական ռեզիդենտ Կոստանդինովի թույլտվությամբ և Շահին-Գիրեյի կամքով՝ վերջինիս մոտ իբրև մուշտակագործ վարպետ աշխատելու համար։ Շահին-Գիրեյը սրան իր «ծառայությունների համաո» 1783 թ. հատուկ ֆիրմանով, իբրև հավերժական սեփականություն, նվիրում է ոչ ավել ոչ պակաս՝ Հին Ղրիմի հայկական ս. Խաչ վանքը՝ այգով և շինություններով հանդերձ, ինչպես նաև բնակելի մի տուն՝ Թեոդոսիայում[9]։

Գ. Պոտյոմկինի պահանջով գրաֆ Դերիմանը 1784 թ. կազմել է տալիս Կաֆայի (Թեոդոսիայի) պլանը, ըստ որի այն ժամանակ քաղաքում կային՝ 29 մզկիթ, 13 հունական և 22 հայկական եկեղեցի (իհարկե չգործող), 6 բաղնիք, 33 ջրավազան. քաղաքում ապրում էին 20 հույն, 30 հայ, 63 հրեա և 694 թուրք[10]։ 1780-ական թվականներին քաղաքում մնացած այս հայերը խնդրում են իշխանություններից բնակության համար իրենց հատկացնել քաղաքի մի մասը և իրենց վերադարձնել տեղի հայկական եկեղեցիները[11]։ Այս պահանջը, ինքնին, ցույց է տալիս, որ այդ շրջանում Թեոդոսիայում ապրող հայերը միայն բուն այդ քաղաքից չէին, նրանց մեջ էին նաև Ղրիմի զանազան քաղաքներից տարբեր պատրվակներով արտագաղթից խուսափած և Թեոդոսիայում հավաքված ընտանիքներ։ Նրանք ցանկանում էին տեր դառնալ քաղաքից հեռացած իրենց ազգակիցների տներին և եկեղեցիներին։

Կաֆայի պլանում նշված «30 հայը», հավանաբար, թերի տվյալ է, որովհետև այդ նույն ժամանակ կազմված պաշտոնական մի տեղեկանքում նշված էր, թե Կաֆայում ապրում են 80 հայ տղամարդ (առանց ընտանիքի), 70 տղամարդ և 75 կին՝ ընտանիքներով (սրանք բնիկ ղրիմեցիներ էին) և 13 հոգի՝ անատոլիացի հայեր[12]։ Մի փոքր ավելի ուշ սրանց թիվը նկատելիորեն աճում է. ինչպես վկայում է Ճանապարհորդ Ժիլբեր Ռոմը, 1786 թվականին քաղաքում արդեն ապրում էին մոտ 700 հայեր[13]։ Հայ բնակչության այս և հետագա աճը, ինչպես կտեսնենք, հետևանք էր հայերի՝ հատկապես նախիջևանից դեպի Ղրիմ կատարած փախուստի, մի երևույթ, որը համաճարակի պես ընդգրկել էր նորերս հիմնված քաղաքի հայ ազգաբնակչության մի շոշափելի մասը։ Ղրիմահայության շարքերը սոսկարացնում էին նաև արևմտահայերը։

Երբևէ բարգավաճ Թեոդոսիայի հայ գաղութի կյանքը այս շրջանում աննշմար էր ու անդրադարձ։ Զբաղվելով ձկնորսությամբ, դրեթե աննկամտաբեր մանրածախ առևտրով և հյուրանոցներ պահելով, կաֆահայերը ապրում էին այն վարդագույն հույսով, որ վաղ թե ուշ կվերադառնան ծաղկուն Կաֆայի և նրա բազմահազարանոց հայ գաղութի երանելի ժամանակները[14]։ Թեև XIX դարում Թեոդոսիայում արդեն գոյատևում էր պատկառելի հայկական մի գաղութ, սակայն, այդուհանդերձ, իր բնակչության քանակով և թե տնտեսական կշռով այն բնավ չէր հիշեցնում XV դարի Կաֆայի հայկական գաղութը, որն այն ժամանակ կյանք ու եռանդ էր տալիս Կոստանդնուպոլսի հաշակր վայելող քաղաքին։

Գաղութի վերականգնման ճանապարհին առաջին խոշոր իրագործությունը հայ կաթոլիկների վերադարձն էր նկատելիորեն ավից կրկին Ղրիմ՝ Ղարասուբազար քաղաքը։ 1778 թվականին Ղրիմի քրիստոնյա մյուս ազգաբնակչության հետ միասին կաթոլիկ հայերը ևս, նրանց հավասար արտոնություններով, դուրս էին բերվել Թերակղզուց։ Տարբերությունը միայն այն էր, որ Նախիջևանի փոխարեն նրանք հաստատվել էին Նկատելիորոսլավ 1-ին (հետագայում Նովոմոսկովսկ) շրջանում։ Նրանց բնակությունը այստեղ

9 Центральный Государственный военно-исторический архив (в дальнейшем ЦГВИА), ф. 52, оп. 1/194, д. 336, ч. III, л. 50.

10 Записки Одесского общества любителей истории и древностей (в дальнейшем ЗООИД), Одесса, 1881, т. 12, стр. 280.

11 ЦГИА СССР, ф. 1374, оп. 2, д. 1815, л. 93.

12 ЗООИД, 1863, т. V, стр. 123.

13 *Жильбер Ромм*, Путешествие в Крым в 1786 г., Л., 1941, стр. 48.

14 *В. Х. Кондораки*, указ. соч., стр. 55.

կարճատև եղավ՝ մեկ տասնամյակից մի փոքր ավելի, 1778 թվականի աշնանից մինչև 1790 թվականը[15]։ Հայ կաթոլիկների եկատերինոսլավից հեռանալու ձգտումը թելադրվում էր տնտեսական անհրապույր պայմաններով, որ բաժին էին ընկել նրանց այստեղ։ Եկատերինոսլավի այն շրջանը, ուր հաստատվել էին նրանք, բոլորովին անհարմար էր առևտրական լուրջ գործունեություն ծավալելու համար։ Դրությունն ավելի էր բարդանում նրանով, որ Սամար և նրա վտակ Կիլչենի գետերը, ափերից դուրս գալով, հեղեղում էին նրանց տները և վտանգի ենթարկում իրենց կյանքն իսկ[16]։ Այս էլ ստիպում է նրանց 1787 թվականին դիմելու Գ. Ա. Պոտյոմկինի միջնորդությանը՝ Ղրիմ վերադառնալու համար թույլտվություն ստանալու աղերսագին խնդրանքով[17]։ Վերջինիս համար դժվար չէր բավարարել խնդրատու համայնքին։ Այդպիսի թույլտվությունը միանգամայն ներդաշնակ էր Ղրիմը բնակեցնելու կառավարական խնդրին, որը, մանավանդ, թերակղզուց թաթարների դեպի Թուրքիա մասսայաբար հեռանալու[18] հետևանքով պահանջում էր վճռական քայլերի դիմել։ Թեև կառավարությունը առնառուների (ալբանացիների) պահակախմբերով հարավ-արևելյան ողջ ծովափը, ընդհուպ մինչև Յալթա, պահպանում էր օտարերկրա նավերի մոտենալուց և արգելակում թաթարներին փախչելու Թուրքիա[19], բայց, այդուհանդերձ, զգալի թվով թաթարներ հեռանում էին Ղրիմից, մի երևույթ, որը խոշոր չափեր ընդունեց հատկապես 19-րդ դարի կեսերին[20]։ Բացի այդ, հայ կաթոլիկները իրենց խնդրանքը գլուխ բերելու նպատակով համաձայնվում էին այդ տեղափոխությունը կատարել սեփական միջոցներով[21]։ Այս հանգամանքներն էլ նկատի ունենալով, Գ. Պոտյոմկինը հայ կաթոլիկներին շնորհում է վերադառնալու թույլտվություն, մի բան, որին չէին կարողանում հասնել նախիջևանցի խնդրատուները։

Նովոմոսկովսկից Ղրիմ վերադարձողները միայն հայ կաթոլիկներ չէին. նրանց մեջ կային նաև լուսավորչական հայեր և նույնիսկ հույներ։ Խնդիրն այն է, որ 1778 թվականի արտագաղթի ժամանակ հայ կաթոլիկների հետ միասին նույն վայրերն էին տեղափոխել նաև բազմաթիվ լուսավորչական հայեր և հույներ, որոնք հայ կաթոլիկներին համահավասար մտել էին հայ կաթոլիկ դատարանի իրավասության տակ[22]։ 1790 թվականին այս հայերն ու հույները նրանց հետ միասին տեղափոխվում են Ղարասուբազար։ Ըստ տեղեկագրի՝ տեղափոխվածների թիվն էին 210 հայ կաթոլիկներ, 102 լուսավորչական հայեր և 123 հույներ, այսինքն 435 մարդ[23]։ Այլ տվյալներով, Եկատերինոսլավից Ղրիմ վերադարձած մարդկանց թիվը հաշվվում է 1000 հոգի[24]։ Այս տարբերությունը կարող էր առաջանալ այն պատճառով, որ 1000 հոգի ասելով գուցե նկատի են ունեցել ոչ միայն Ղարասուբազար, այլև առհասարակ Ղրիմ վերադարձած բոլոր այն հայերին, որոնք չէին մտնում կաթոլիկ դատարանին ենթակա համայնքի կազմում, բայց օգտվելով հանդամանքից, իրենք էլ բռնել էին Ղրիմ տեղափոխվելու ուղին. մյուս կողմից, հավանաբար, վերևում նշված 435 մարդկանց պիտի համարել միայն արական սեռի ներկայացուցիչներ, ինչպես այն ժամանակ սովորաբար վարվում էին։ Եթե դա այդպես է, ապա եկածների թիվը, վերջին դեպքում, շուրջ երկու անգամ նվազեցված է։ Մեր այս ենթադրությունը իրողության բավարար հիմքեր է ստանում այն ցուցակով, որը 1794 թվականին Ղարասուբազարի հայ կաթոլիկ դատարանը ներկայացրել է Տավրիկիայի նահանգապետ Ս. Մ. Ժեգուլինին և որը 1790 թվականին Նովոմոսկովսկից դուրս գալուց առաջ ներկայացված ցուցակի պատճենն է[25]։ Ցուցակում անուն առ անուն նշված են բոլոր վաճառականները և նրանց ընտանիքների անդամները, ըստ գիլդիաների, ինչպես նաև մեշչանները[26] և նրանց ընտանիքների անդամները։ Մենք ցուցակը բերում ենք համառոտած ձևով, անհրաժեշտ չհամարելով նշել տեղափոխ-

15 ЦГИА СССР, ф. 1286, оп. 1, 1803 г., д. 46, л. 103 об.

16 Նույն տեղում։

17 Նույն տեղում։ Տե՛ս նաև *А. Скальковский*, Опыт статистического описания Новороссийского края, Одесса, 1850, стр. 292.

18 *А. И. Маркевич*, Переселение крымских татар в Турцию в связи с движением населения в Крыму, «Известия Академии наук СССР», Отделение гуманитарных наук, 1928, стр. 380.

19 *Жильбер Ромм*, указ. соч., стр. 61.

20 *А. И. Маркевич*, указ. соч., стр. 388—390, 401.

21 ЦГИА СССР, ф. 1286, оп. 1, 1803 г., д. 46, л. 104.

22 Նույն տեղում, թ. 103։

23 Նույն տեղում, թ. 104ա և 104բ։

24 Հ. Տեր-Աբրահամյան, Պատմություն Խրիմու, Թեոդոսիա, 1865, մաս I, էջ 104։

25 Հայկական ՍՍՀ Պետական կենտրոնական պատմական արխիվ (այսուհետև ՀՍՍՀ ՊԿՊԱ), ֆ. 139, ց. 1, գ. 1465, թ. 145։

26 Մենք նպատակահարմար ենք գտել այս բառը գործածել նույնությամբ, նրա տակ հասկանալով մեշչանների (քաղաքաբնակների՝ լայն առումով) դասին պատկանող մարդկանց. սրա մեջ էին մտնում բնակչության ազնվականական և վաճառականական շերտին չպատկանող արհեստավորները, ծառայողները, առևտրականները, քաղաքաբնակ աշխատավորները։

ված ծխատերների և նրանց ընտանիքի անդամների անունները (տե՛ս ստորև բերված ցուցակը)։

Այսպիսով, Նովոմոսկովսկից Ղարասուբազար տեղափոխվեցին 718 հոգի։ Սակայն հայ կաթոլիկների դատարանի իրավասության տակ գտնված անձանց թիվը տարեցտարի ավելանում էր՝ բուն դատարանի և տեղական իշխանությունների թույլտվությամբ նրա իրավասության տակ նորանոր հայ ընտանիքներ ընդունելու հաշվին։ Մինչև 1800-ական թվականները համայնքն աճում է ևս 253 հոգով[27]։ Նոր համալրումները ամենից առաջ առնչվում էին այն արտոնություններին, որոնցից ի սկզբանե օգտվում էին դատարանի իրավասության տակ գտնվողները։ Այնինչ 1803—1804 թվականներից հետո այդպիսի համալրումները արդեն հազվադեպ էին լինում, որովհետև կառավարական մի շարք որոշումներով շնորհված արտոնություններից օգտվել կարող էին միայն

ՑՈՒՑԱԿ[28]

Ղարասուբազարի հայ կաթոլիկների դատարանի իրավասության ենթակա վաճառականների և մեշչաննների, որոնք նկատելիորեն կուսակցություններից վերաբնակեցվել են Տավրիկյան մարզ

Վաճառականներ

Կոչումը	*Մարդկանց քանակը*		*Տարեկան գումարային վաճառքի չափը*	*Կապ. մեկանան առկոս*	
	արական սեռ	*իգական սեռ*		*ռուբ.*	*կոպ.*
1-ին Գիլդիայի վաճառականներ կաթոլիկներ (կաթոլիկ հայեր) . . .	2	4	10.050	100	50
2-րդ Գիլդիայի վաճառականներ կաթոլիկներ (կաթոլիկ հայեր)	12	12	15.150	151	50
3-րդ Գիլդիայի վաճառականներ					
ա) կաթոլիկներ (կաթոլիկ հայեր) .	93	85	35.700	357	—
բ) հայեր	27	25	14.700	147	—
գ) հույներ	28	18	9.450	94	50
Ընդամենը	162	144	85.050	849	50

[27] ЦГИА СССР, ф. 1286, 1803 г., оп. 1, д. 46, л. 104 об.

28 ՀՍՍՀ ԳԿՊՊ, ֆ. 139, ց. 1, գ. 1465, թ. 116—143։

Մեշչաններ

	Մարդկանց քանակը		*Մեկից մյուսին ռուբլի*	*Դրանց վրա վերադիր*	
	արակ. սեռ	*իգակ. սեռ*		*ռուբ.*	*կոպ.*
Կաթոլիկներ (կաթոլիկ հայեր) (31 ծուխ)	97	76	62	—	24
Հայեր (28 ծուխ)	80	68	56	1	12
Հույներ (27 ծուխ)	25	66	54	1	8
	202	210	172	2	44

Նրանք, ովքեր դատարանի իրավասության տակ էին մտել մինչև այդ թվականները։ Այդ արտոնությունները, որ 1779 թվականի նոյեմբերի 14-ի հրովարտակով Եկատերինա II-ը տվել էր ղրիմահայ կաթոլիկներին նրանց հոգևոր առաջնորդ Հակոբ վարդապետի անունով և որոնք 1800 թվականի ապրիլի 18-ին հաստատել էր նաև Պավել I-ը, բատ էության, նույնն էին, ինչ որ նույն ժամանակ շնորհվել էին Ղրիմից դուրս եկած լուսավորչական հայերին։

Հրովարտակով հռոմեադավան հայերը ոչ միայն օգտվում էին Ռուսաստանի քաղաքացիների բոլոր արտոնություններից և իրավունքներից, այլև՝

ա) դասվում պետական բնակիչների շարքը և տասը տարով ազատվում պետական հարկերից ու ծառայություններից, իսկ այդ ժամկետը լրանալուց հետո տարեկան վճարում՝ վաճառականները դրամագլխի մեկ ռուբլուց մեկ տոկոս, արհեստավորներն ու մեշչանները՝ ծխից 2 ռուբլի, իսկ գյուղատնտեսությամբ զբաղվել ցանկացողները՝ յուրաքանչյուր դեսյատինի դիմաց՝ 5 կոպեկ.

բ) ազատ կերպով կարող էին զբաղվել ներքին և արտաքին առևտրով, կառուցել առևտրական նավեր, հիմնել ֆաբրիկաներ ու գործարաններ, առևտրական կրպակներ, աճեցնել պտղատու այգիներ, արտադրել գինիներ, որոնք կարող էին նաև տակառներով վաճառքի հանել ռուսական քաղաքներում. թույլ էր տրվում նաև թորել ֆրանսիական օդի[29], բայց միայն սեփական օգտագործման համար.

29 Ֆրանսիական օդի՝ այսինքն խաղողի օղի։ Տե՛ս „Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа“ (в дальнейшем см. „Собрание актов“), М., 1833, т. 1, стр. 223.

գ) ազատվում էին զորքերին օթևան տրամադրելուց, բացառությամբ այն դեպքերի, երբ զորախմբերն անցնելու էին իրենց գյուղերի մոտով. ընդմիշտ ազատվում էին նաև զորակոչիկներ տալուց. բայց ովքեր կամավոր կերպով կցանկանային մտնել զինծառայության, այդ չէր արգելվում.

դ) իրավունք ունեին կառուցելու եկեղեցիներ ու զանգակատներ և ըստ իրենց սովորության ու կարգի՝ ազատ կերպով կատարել եկեղեցական արարողություններն ու ժամասացությունները. միայն հոգևոր գործերի գծով ենթարկվում էին Բելոռուսիայի կաթոլիկ եպիսկոպոսին.

ե) վերջապես, կաթոլիկ հայերը հիմնելու էին ռատուշա՝[30] կաթոլիկ դատարանի անվան տակ[31]։

* * *

Ղրիմում հայերի վերահաստատման գործին զգալի մասնակցություն է ցուցաբերում ռուսահայոց հոգևոր առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը։ Թերևս նա զղջացել էր 1778 թվականի արտագաղթի կազմակերպմանը ցույց տված փութկոտ օժանդակության համար։ Մի բան, սակայն, ակներև է, որ 1787 թվականին Ղրիմ կատարած այցից հետո նա նախիջևան էր վերադարձել ցնցող տպավորությամբ. «զգալի եղև մեզ յոյժ, —նշում էր նա,— տեսանելն զաւերութիւն քաղաքացն, եկեղեցեացն և վանօրէից մերոց. լի տրտմութեամբ դարձանք անտի (Ղրիմից—Վ. Մ.) ի Նախիջևան, ի նոյեմբերի 24»[32]։

Տավրիկիայում հայերի հաստատման գործը գլուխ բերելու մտայնությամբ Հ. Արղությանը 1793 թվականին կրկին գալիս է Ղրիմ, որտեղ արդեն բավական թվով հայեր կային։ Նա դիմումներ է անում կառավարությանը՝ Ղրիմի մի շարք վայրեր հայերին հատկացնելու խնդրանքով։ 1794 թվականին Արղությանը Պլատոն Զուբովին այս առիթով գրում էր, թե լինելով Ղրիմում, ինքը այնտեղ հանդիպել է «բավական մեծ թվով հայերի. նրանց մի մասը մնացել է Նովոմոսկովսկի շրջանը վերաբնակեցվածներից, իսկ մյուսները՝ նորերս եկածներ են։ Այս հայերից Ղարասուբազարում ապրող մոտ 200 ընտանիքներ, Անատոլիայից ներգաղթածներ, ինձ հայտնեցին իրենց վճռական ցանկությունը՝ սեփական ծախսով տեղափոխվելու ավերված Թեոդոսիա քաղաքը, որտեղ այժմ մնացել են հայկական շատ եկեղեցիներ և վանքեր, իսկ արհեստավորները՝ Հին Ղրիմ, քանի որ այնտեղ դիրքը հարմար է և այնտեղի թե ջրերը և թե օդը կարող են նրանց հաղորդել այն արտադրանքին, որ կթողարկեն ֆաբրիկատները»[33]։ Հ. Արղությանն ընդգծում էր, որ եթե հայերի հիշյալ խնդրանքը հարգվի, ապա դա մեծապես շահավետ կլինի պետության իսկ համար, «որովհետև այստեղ բնակվելը առիթ կտա շատ հայերի Անատոլիայից և սահմանակից այլ վայրերից տեղափոխվելու և ընդունելու ռուսահպատակություն»[34]։ Հ. Արղությանն ավելացնում էր, թե ղրիմահայերի խնդրանքը բավարարելու և նրանց տեղափոխելու համար զարնանը ինքը կրկին կգնա Ղրիմ։

Այլ հայերի հետ միասին Ղարասուբազարի հայերին ևս Թեոդոսիա տեղափոխելու պահանջը Հ. Արղությանը առաջ էր քաշում նաև մեկ այլ նկատառումով։ Բանն այն է, որ սրանք այն լուսավորչական հայերն էին, որոնք գտնվում էին քաղաքի հայ-կաթոլիկ դատարանի իրավասության տակ։ Թեոդոսիա տեղափոխելով, բնական է, որ Արղությանը նրանց դուրս կբերեր կաթոլիկ դատարանի տնօրինությունից։ Արղությանին մտահոգում էր նրանց մեջ կաթոլիկության տարածման վտանգը, թեև լուսավորչական հայերը դատարանին ենթարկվում էին միայն իրենց տնտեսական և իրավական գործերով, այնինչ կրոնական խնդիրներում միանգամայն անկախ էին[35]։ Հետագայում Ղարասուբազարի լուսավորչական հայերը ստեղծեցին իրենց հոգևոր կառավարությունը, որը վարում էր ողջ Ղրիմի կրոնական գործերը։

Հ. Արղությանի այս միջնորդությունը շուտով արժանանում է կառավարության դրական պատասխանին, որովհետև, ինչպես ակնարկել ենք, թերակղզում հայերի հաստատվելը միանգամայն համապատասխանում էր Ղրիմի բնակեցման ընդհանուր խնդիրներին։ 1794 թվականի ապրիլի 30-ին գրաֆ Պլատոն Զուբովը Տավրիկյան մարզի կառավարիչ Ս. Ս. Ժեզուլինին կարգադրում է՝ թույլ տալ Ղարասուբազարում և Ղրիմի այլ վայրերում ապրող հայերին, ըստ իրենց ցանկության, վերաբնակվելու Հին Ղրիմ և Թեոդոսիա,

30 *Հայաստանում և մերձբալթյան երկրներում ռատուշան քաղաքային խորհուրդ էր, խորհրդարան, իսկ Ռուսաստանում XVIII դարում և XIX դարի առաջին կեսին՝ քաղաքային ինքնավարության օրգան։*

31 ЦГИА СССР, ф. 1152 г., 1840, д. 129, лл. 17 об.—18 об.

32 *«Դիտան հայոց պատմութեան», Թիֆլիս, 1911, գիրք Բ, էջ 14։*

33 *ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 139, ց. 1, գ. 1465, թ. 54ա։*

34 *Նույն տեղում, թ. 54բ։*

35 *Նույն տեղում, թ. 145։*

463

այդ վայրերում նրանց հատկացնել անհրաժեշտ քանակությամբ հողեր, մշակման և հատուկ տեղեր՝ շենքերի ու կրպակների շինության համար. ամեն կերպ օժանդակել Հ. Արղությանին՝ արտասահմանից եկող հայերին Ղրիմում տեղավորելու գործում[36]։

Այս նպատակով լուրը իմանալով, Հ. Արղությանը վերադառնում է Տավրիկիա։ Տեղում գործերին ծանոթանալուց հետո նա մշակում է հայերին տեղավորելու և նրանց կյանքը կարգավորելու մանրամասն գործնական միջոցառումներ և հուլիսի 8-ին դրանք ներկայացնում է Ս. Ս. Ժեգուլինին։ Հ. Արղությանը առաջարկում էր. թեև Ղրիմի տարբեր ծայրերից Թեոդոսիա տեղափոխվող հայերի թիվը առայժմ մեծ չէ, բայց իրեն հայտնի տվյալներով շուտով Անատոլիայից և այլ վայրերից այնտեղ բնակության կգան մեծ թվով հայ ընտանիքներ, ուստի անհրաժեշտ է Թեոդոսիայում բոլոր այդ հայերին հատկացնել առանձին թաղամասներ, կրպակներ, պահեստաշենքեր, հյուրանոցներ ու մինչև 1000-ի հասնող այլ շենքեր, ինչպես և համապատասխան հողեր։ Նա նպատակահարմար էր գտնում հայերին տալ սարալանջից մինչև ծովափն ընկած տարածությունը և այն չափելու համար իրեն հետ Թեոդոսիա գործուղել հողաշափ։ Արղությանը խնդրում էր Թեոդոսիայի ս. Սարգիս հայկական եկեղեցու բակում գրանվող իջևանատունը կրկին վերադարձնել եկեղեցուն, որպեսզի վերջինիս տերիտորիան չնեղանա, և անհրաժեշտ կարգադրություն իջեցնել, ում հարկն է, որպեսզի ոչ մի արգելք չհարուցվի Թեոդոսիային մերձակա բարձունքի վրա գտնվող հայկական վանքի վերականգնման գործին։ Թեմի առաջնորդը առաջարկում էր Թեոդոսիայում աշխատանքներն ավարտելուց հետո հողաշափին ուղարկել Հին Ղրիմ՝ հայերին հատկացված հողերը սահմանագծելու համար։ Քանի որ ս. Խաչ վանքի հողերը տակավին չեն բաժնեհատված ու սահմանագծված, ինչպես նաև չեն հանված Գ. Պոտյոմկինի նվիրած Սուգակի երկու այգիների պլանները, Արղությանն անհրաժեշտ էր գտնում այդ նպատակով առանձնացնել մի հատուկ հողաշափ, որը իր իսկ ներկայությամբ կկատարի այդ աշխատանքները. առաջարկում էր դրանից հետո այդ այգիներին տիրելու մասին իրեն տալ անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը։ Որովհետև ս. Խաչ վանքի տիրույթներից կտրված և ուրիշներին բաշխված հողերը վերադարձնելն այլևս անհնարին է, Արղությանն առաջարկում էր

[36] «Известия Таврической ученой архивной комиссии» (ИТУАК), Симферополь, 1896, № 25, стр. 93.

դրանց փոխարեն վանքին տալ այլ հողակտորներ։ Քանի որ վանքից վերցված և մետաքսի գործարանին տրված հողերը վերջինիս համար անօգտակար են և, ընդհակառակը, խիստ անհրաժեշտ են վանքի համար, Արղությանը պահանջում էր դրանք վերադարձնել վանքին՝ դոմեր և աղքատների ու մշակների համար բնակելի շենքեր կառուցելու։ Նրա կարծիքով դա հնարավորություն կտա վերականգնելու անշքացած վանքը և խիստ կհանդիսանար Ղրիմում հայերի բնակության հաստատելուն։ Արղությանը առաջարկում էր ստեղծել պայմաններ, որպեսզի հողաչափը անկաշկանդ կերպով սկսի ու ավարտի իր աշխատանքները, իսկ ս. Խաչ վանքի բոլոր հողերի սահմանագծումը վերջացնելուց հետո իրեն տալ պլանները, հողաչափական դրքերը և հրաման՝ դրանց տիրելու վերաբերյալ։ Ս. Փրկիչ վանքը (Բախչելի, այժմ Բոգատոյե գյուղի մոտ) նույնպես իր տնօրինությանը հանձնելու նպատակով, Արղությանը առաջարկում էր վանքի հողերից ու շենքերից դուրս բերել այնտեղ խուժած թաթարներին[37]։ Տավրիկյան մարզի կառավարիչ Ս. Ժեգուլինը հավանություն ու համաձայնություն է տալիս Արղությանի առաջարկներին, և իր կարծիքը կտա ու կտա դրավոր ուղարկում է նրան[38]։

Ղրիմում հայերի բնակեցման իր ծրագրի իրագործման համար Հ. Արղությանը երեք ամիս մնում է այնտեղ, գործնական քայլեր անում՝ լուծելու այդ խնդրի հետ կապված ամեն մի հարց։ Այս շրջանում նրան մենք տեսնում ենք մերթ Թեոդոսիայում, մերթ ս. Խաչ վանքում և Հին Ղրիմում, մերթ Սուգակում և Զարասուբազարում և մերթ էլ՝ կրկին Թեոդոսիայում։ Այս վերջինում նա հողաչափ Սամբուլովի հետ թաղ ու թաղ շրջում է, բնաթում հայերին հատկացվելիք շենքերն ու հողամասերը և հուլիսի 28-ին հատուկ գրությամբ խնդրում Ս. Ժեգուլինից անհրաժեշտ կարգադրություն անել հողաչափին՝ արագ կերպով իրեն՝ Ժեգուլինին, ներկայացնելու ընտրված այդ տեղերի պլանը, իսկ իրեն՝ Արղությանին, թույլ տալ, քանի դեռ ինքը Ղրիմում է, իր ձեռքով հայերի վրա բաժանելու բաղաքի այն ազատ տեղերն ու անները, որոնք պատկանում էին պետությանը, բայց որոնց նախկին տերերը այժմ Թեոդոսիայում են։ Խոսքը այն հայերի մասին էր, որոնց տները արտագաղթից հետո անցել էին պետության իրավասությանը, բայց որոնցից մի քանիսի տերերին այժմ հաջողվել էր վերադառնալ Թեոդոսիա։

[37] ՀՈՍՀ ՊԿՊԱ, ֆ. 139, ց. 1, գ. 1465, թթ. 66—69։

[38] Նույն տեղում, թթ. 72—75։

Հուլիսի 28-ի այս դրությամբ Արղությանը դժուշորեն ակնարկում էր նաև Հին Ղրիմի ու Թեոդոսիայի արոտավայրերից հայերին հողեր հատկացնելու մասին[39]։

Ղրիմում հայերի բնակեցման խնդրում Արղությանը դիմում է նույնիսկ այնպիսի քայլերի, որոնք, թերևս, սիրուն հակառակ լինեին նրա իսկ սկզբունքներին։ Խնդիրն այն էր, որ նա առաջիններից մեկն էր, որ իշխանությունների առաջ հարց էր բարձրացնում և պահանջում Ղրիմ փախած բոլոր նախիջևանցիներին նո ւ ուղարկել իրենց բնակավայրը։ Այնինչ, 1794 թվականի սեպտեմբերի 20-ին Տավրիկյան մարզի կառավարիչից նա խնդրում էր փախուստական նախիջևանցիներից 30 ընտանիք թողնել Ղրիմում. 15-ը՝ ս. Խաչ վանքում, 10-ը՝ Թեոդոսիայում, հայկական եկեղեցու պահպանման համար, իսկ 5-ը՝ ս. Փրկիչ վանքում[40]։ Բանն, իհարկե, այն չէ, որ սրանք աղքատ և նույնիսկ վերադարձի անհրաժեշտ ծախսերից զուրկ ընտանիքներ էին, այլ այն, որ այս և այն առիթով Արղությանը փաստորեն նեցուկ էր կանգնում ղրիմահայ գաղութի վերաստեղծմանը մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ հայերի թիվը Ղրիմում դեռևս շատ չէր։ 1799 թվականին, օրինակ, նրանք ընդամենը 252 ընտանիք էին՝ 1043 անդամներով[41]։ Սրանց մեջ չէին մտնում հայ կաթոլիկները։

* * *

Չնայած հայերին Ղրիմում բնակեցնելու ուղղությամբ Հ. Արղությանի եռափած ջանքերին, թերակղզուց նրա հեռանալուց հետո դրանք գրեթե անկատար մնացին։ 1798 թվականի սեպտեմբերին Ռուսաստանում բնակվող հայ համայնքների կարիքների մասին կառավարությանը ներկայացրած գրության մեջ Հ. Արղությանը դարձյալ բարձրացնում էր ղրիմահայոց հարցը, վերստին առաջ քաշելով Թեոդոսիայի մի մասն ու ամբողջ Հին Ղրիմը հայերին հատկացնելու և ս. Խաչ վանքի հողերը սահմանագծելու պահանջը[42]։ Դրան հաջորդած 1799 թվականի ապրիլի 15-ի կայսերական հրամանը, թեև ընդառաջ էր գնում ղրիմահայերի այս խնդրանքին[43], սակայն գործը դարձյալ տեղից չէր շարժվում։

39 Նույն տեղում, թթ. 76 և 89։
40 Նույն տեղում, թթ. 102—104։
41 ЦГИА СССР, ф. 1374, оп. 2, д. 1815, л. 89.
42 Там же, лл. 21—22.
43 «Собранне актов», т. I, стр. 197.

1790-ական թվականների վերջերին Ղրիմի տարբեր քաղաքներում ապրող հայերի մեջ ծագում և գնալով ամրապնդվում է Հին Ղրիմ քաղաքում հավաքվելու, այդ քաղաքը զուտ հայկական բնակավայր դարձնելու գաղափարը, մի մտայնություն, որը իր արտացոլումն է գտնում 1798—1799 թվականներին նրանց կողմից իշխանություններին ներկայացրած խնդրագրերում։ Վերջիններս չէին հանդում միայն այդ թույլտվությունը ստանալուն, այլ գնում էին ավելի հեռու, պահանջելով ապագա հայկական այդ քաղաքի բնակչությանը տալ տնտեսական արտոնություններ և իրավական ինքնություն՝ իր գործերը վարելու հարցերում։ Կառավարությունը, վերջապես, լիովին ընդառաջում է Ղրիմում հավաքված հայերի խնդրանքին, դրա իրականացման մեջ տեսնելով նաև կայսրությանը նորերս միացված երկրամասի տնտեսական զարգացմանը նպաստող հեռանկարներ։ Այս վերջին շարժառիթը, անշուշտ, առաջատար դեր է խաղացել ղրիմահայոց անունով 1799 թ. հոկտեմբերի 28-ի հրովարտակը ընդունելու գործում։ Այդ հրովարտակը, որը արտոնությունների և իրավական հարցերում հիմնականում կրկնում էր նախկինում հայերի ստացած առանձնաշնորհումները, իր առաջին հոդվածով թույլ էր տալիս բոլոր նրանց, ովքեր ցանկանում են, բնակություն հաստատել Հին Ղրիմ քաղաքում։ Երկրորդ հոդվածը եկեղեցական արարողությունների կատարման համար Թեոդոսիայում ապրող հայերին էր տալիս այնտեղ եղած հայկական եկեղեցիներից Հրեշտակապետ, ս. Սարգիս, ս. Գևորգ եկեղեցիները և քաղաքից դուրս գտնվող Վերափոխման վանքը, նրան պատկանող հողերով հանդերձ, այդ եկեղեցիներին առընթեր եղած մարդկանց թվին համապատասխան, ինչպես սահմանված էր ռուսական ծխերի համար. եկեղեցիներն ու վանքը պահվելու էին հայ համայնքի միջոցներով։ «Իսկ Թեոդոսիա քաղաքի ներսում՝ նրա արտաքին պարսպից մինչև ծովափը, մեծ մզկիթից մինչև Հունական սլոբոդան ձգվող լայնությամբ ընկած հին Հայկական գյուղը (իմա թաղամասը— Վ. Մ.), որտեղ գտնվում են վերոհիշյալ եկեղեցիները», հրամայվում էր տալ հայերին, «այդ գյուղը կոչելով Հայկական սլոբոդա»։ Բացի այդ ս. Սարգիս եկեղեցուն էր հանձնվում Աջամ-Խան անվամբ իջևանատունը։ Հրովարտակի երրորդ հոդվածով կայսրը հրամայում էր Հին Ղրիմին մերձակա ս. Խաչ վանքին սահմանագծված հողերը հատկացնել վանքին և տալ դրանց պլանները։ Չորրորդ հոդվածով հաստատվում էին 1799 թվականի հունվարի 4-ի և ապրիլի 15-ի հրամաններով կայսրության մեջ ապրող հայերին տրված դավանանքի ազա-

տությունն ու իրավունքները և նրանց արտոնվում էր իրենց գյուղերում կառուցել վանքեր, եկեղեցիներ, դպրոցական և եկեղեցական այլ շինություններ, դրանցում ազատորեն կատարել ժամասացություն ու կրոնական արարողություններ: Հոգևոր գործերով հայերը ենթարկվելու էին Էջմիածնի կաթողիկոսին և Ռուսաստանում նրա ներկայացուցչին: Քանի որ Ռուսաստանում ապրող հայերի թիվը գնալով բազմապատկվում էր և դրան համապատասխան աճում էր նաև եկեղեցիների քանակը, ապա հրովարտակը անհրաժեշտ էր համարում եկեղեցական գործերը հաջող վերահրսկելու համար Աստրախանում, վարդապետի նախագահությամբ, հիմնել Հայկական հոգևոր կոնսիստորիա՝ կազմված երեք ավագերեցներից, երկու բարեպաշտ աշխարհականներից և չորս դասակարգային ծառայողներից: Կոնսիստորիայի իրավասությանը պետք է ենթարկվեին ռուսական կայսրության մեջ գտնվող բոլոր հայկական եկեղեցիները, ծխերը և աշխարհականները, այդ թվում նաև ղրիմահայերը: Հոգևոր կոնսիստորիան ենթարկվում էր ռուսահայոց հոգևոր առաջնորդին: Տեղերում ստեղծվում էին հոգևոր կառավարություններ: Հինգերորդ հոդվածը պարտավորեցնում էր Հին Ղրիմը բնակեցնելուց և նրան 12 հազար դեսյատին հող առանձնացնելուց հետո, այնտեղ հիմնել հայկական դատարան, մագիստրատի անվան տակ, և նրանում դատական ու հայցային գործերը լսել հայերեն լեզվով, հայկական հին սովորություններին ու օրենքներին համապատասխան: Վեցերորդ հոդվածը հայերին դասում էր պետական բնակիչների շարքը և, համաձայն 1799 թվականի ապրիլի 15-ի հրամանի, նրանց 10 տարով ազատում էր բոլոր տեսակի տուրքերից. դրանից հետո վաճառականները պիտի վճարեին գրամագլխի մեկ ռուբլուց մեկ տոկոս, մեշչաններն ու արհեստավորները՝ ծխից երկուական ռուբլի, իսկ գյուղացիները, որոնցից յուրաքանչյուրին սահմանված էր տալ 30 դեսյատին հող, ամեն դեսյատինի դիմաց՝ 5 կոպեկ: Ունևորները իրավունք էին ձեռք բերում իրենց հողամասերի վրա կառուցելու տներ, կրպակներ, պահեստներ, ֆաբրիկաներ, ազատվում էին դրբերին օթևան տալու պարտավորությունից: Հայերն ամիշա ազատվում էին նաև դինվորական ծառայությունից, բայց ցանկացողներին դա չէր արգելվում: Յոթերորդ հոդվածը հայերին շնորհում էր առևտրով ու արհեստներով զբաղվելու ազատություն և արտոնություններ. նրանք կարող էին, առանց առևտրական ներքին մաքսեր վճարելու, ազատորեն առևտուր անել կայսրության մեջ և նրա սահմաններից դուրս, կառուցել առևտրանավեր, հիմ-

նել գործարաններ ու ֆաբրիկաներ, պղպատու այգիներ, թորել գինի և ֆրանսիական օղի, փոքր չափով դրանք վաճառել իրենց գյուղերում և տակառներով արտահանել Ռուսաստանի քաղաքները: Վերջին՝ ութերորդ հոդվածով կայսերական հրովարտակը բոլոր գինվորական և քաղաքացիական պետերին, ինչպես նաև ատյաններին հանձնարարում էր ոչ միայն թույլ տալ և չխանգարել Հին Ղրիմի հայերին՝ օգտվելու շնորհվող արտոնություններից, այլև անհրաժեշտության դեպքում նախազգուշացնել նրանց ակնկալվելիք վնասներից ու վտանգից և ամեն կերպ աջակցել նրանց հոգևոր ու աշխարհիկ վարչություններին[44]:

1799 թվականի հոկտեմբերի 28-ի հրովարտակի ընդունումից հետո էլ Հին Ղրիմում և առհասարակ թերակղզու վրա հայերի բնակություն հաստատելու գործը բավական լուրջ դժվարությունների էր հանդիպում: Վերջիններս աղերսվում էին նյութական միջոցների սղության, հողային, վարչական, իրավական և այլ հարցերում տեղական իշխանությունների ու հայերի միջև ծագած տարբեր բնույթի վեճերի, մանավանդ նախիջևանցիներին ետ ուղարկելու խնդիրների հետ:

Սակայն նախ Հին Ղրիմի բնակեցման մասին: Այստեղ հայերի բնակեցման դժվարությունները, բացի վերևում նշվածներից, կապված էին նաև մեկ այլ հարցի հետ: Բանն այն է, որ տարբեր քաղաքներից և առաջին հերթին Ղարասուբազարից, Սիմֆերոպոլից ու Եվպատորիայից բոլոր հայերը չէին, որ ցանկանում էին տեղափոխվել Հին Ղրիմ: Այստեղ նրանց հավաքելու դաղափարի հեղինակն ու իրագործման ջատագովը հոգևորականներն էին և ամենից առաջ ինքը՝ Արղությանը[45]: Հոգևոր դասի այսպիսի նախաձեռնությունը սուրջին հերթին կապված էր եկեղեցու նյութական շահագրգռվածության և ապա՝ ազգային-կրոնական ծեսերի ու դավանանքի պահպանման հետ: Տարբեր վայրերում գրիվ եկած հայությունը երկու դեպքում էլ եկեղեցուն դժգույն ապագա էր խոստանում: Ա. վելացնենք նաև, որ ս. Խաչին կից տրվող հսկայական հողատարածությունները սպասում էին իրենց մշակողին, մանավանդ սկզբնական շրջանում, երբ Ղրիմում սուր կերպով զգացվում էր աշխատավոր ուժի կարիքը, և դժվար էր նույնիսկ հողերը կապալով տալը[46]: Այս բանը նկատի էր նաև ներքին գործերի մինիստր

44 «Собрание актов», т. I, стр. 219—224.

45 Государственный архив Одесской области (в дальнейшем Одесский облархив), ф. 1, оп. 221, д. 2, л. 24.

46 Նույն տեղում, թ. 24 և 27բ:

վ. Պ. Կոշուբեյը, որը, աչքի առաջ ունենալով այն ժամանակ (1803) Հին Ղրիմում ընդամենը երկու տասնյակ հայ ընտանիքների առկայությունը, դիմագրավում էր այնտեղ հայկական մագիստրատի ստեղծմանը: Նա գրում էր, թե հայ հոգևորականները ջանում են կենսագործել Հ. Արղությանի նախագծումները «ոչ թե հօգուտ Ղրիմում ապրող հայերի, այլ իրենց սեփական շահերի, որովհետև անհավանական է, որ տարբեր քաղաքներում գործեր ձեռնարկած, արհեստներով և զանազան արդյունագործությամբ զբաղվող մարդիկ ցանկանան կամավոր կերպով բնակության տեղափոխվել ամայի մի վայր, և դա այն դեպքում, երբ ոչ մի օգուտ չի ակնկալվում»[47]:

Տակավին մինչև հրովարտակը, 1799 թվականի մարտի 4-ին, Աբրահամ վարդապետը Հին Ղրիմից գրած իր նամակում Արղությանից խնդրում էր արագացնել հայերին արտոնություններ շնորհելու գործը, Հին Ղրիմը հանձնել նրանց և նախիջևանցի փախստականներին հրամայել «ի Ղրիմ մնալ և զկայսերն հարկ կբերկնապատիկ տալ»[48]: Հրովարտակից հետո, 1800 թվականի մայիսի 1-ին, Հ. Արղությանը Պետերբուրգից կարգադրում է Գրիգոր վարդապետին՝ գնալ Ղրիմ, հավաքել բոլոր հայերին և ձեռնարկել Հին Ղրիմ քաղաքի հիմնադրմանը: Ավելի ուշ, դեկտեմբերի 8-ին իջեցրած կոնդակով նա ղրիմահայերին հրահանգում էր. «մի ոք յասմրհետէ համարձակիցի յայլ դաստատանալոյն զգլուխ իւր կապիլ և գրել. զի ամենեքդ հրամանաւ և պրվիլեկաւ Մեծի կայսերն՝ պարտիք լեալ Ղրիմ ժողովիլ և յաւուկ իրաւարան հաստատիլ...»[49]:

Սակայն հոգևոր հովվի խոսքերը գրեթե մնում էին ձայն բարբառո հանապատի. այլևայլ վայրերի և առաջին հերթին Նոր Նախիջևանի հայերը, իրոք, շատ էին ձգտում տեղափոխվել Ղրիմ, սակայն կառավարական որոշումներն ու Հ. Արղությանի կոնդակը նրանց չէին վերաբերում: Իսկ ղրիմահայերի մի զգալի մասն էլ, վերևում նշված պատճառներով, չէր ամպարում տեղափոխվել իրեն հատկացված նոր բնակավայրը, մանավանդ որ այդ տեղափոխությունը զուտ ցանկության հարց էր: Ահա թե ինչու, չնայած կայսերական հրովարտակին, մինչև 1805 թվականը Հին Ղրիմում

47 Նույն տեղում, թ. 27բ:

48 Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի (այսուհետև Մատենադարանի) արխիվ, ֆ. կաթ. դիվան, թղթ. 9, վավ. 41, թ. 1:

49 Նույն տեղում, թղթ. 10, վ. 47, թ. 1:

հայերին հողեր դեռևս չէին հատկացվել, և եղած պլանով այնտեղ ընդամենը 22 ընտանիք հայ կար[50]: Վիճակը գրեթե նույնն էր նաև 1806 թվականին:

Հին Ղրիմի հայ համայնքին ըստ հրովարտակի 12.000 դեսյատին հող հատկացնելու խնդիրը ձգձգվում և խոչընդոտների էր հանդիպում: 1804 թվականին համայնքի կողմից ընտրված հավատարմատարներ Խաչերես Մանուկովի և Բաղդասար Բեդրոսովի միջնորդությամբ Թեոդոսիայից Հին Ղրիմ եկած ներքին գնմասավային դատարանի չինովնիկը բավարարվեց սոսկ այդ առթիվ բանավոր կարգադրություններ անելով, և համայնքի հողային սահմանները տարիներ շարունակ, ինչպես հետագայում կտեսնենք, մնացել էին անորոշ. Հին Ղրիմի վրա պետ նշանակված և նրա հիմնադրման պատասխանատու կապիտան Թեմրիազը գրեթե ոչինչ չէր ձեռնարկում՝ կազմված ցուցակներով նահանգի տարբեր քաղաքներից հայերին հիմնադրվող քաղաքը տեղափոխելու ուղղությամբ, չնայած նրա անունով, համապատասխան հրովարտակի, նահանգական իշխանությունները բազմաթիվ կարգադրություններ էին իջեցրել[51]:

Հին Ղրիմի հայկական գաղութի հիմնադրման գործում վճռական բեկում տեղի ունեցավ 1805—1806 թվականներին, երբ հարցի լուծման նախաձեռնությունն իրենց ձեռքը վերցրին նըշված հավատարմատարները, և երբ ղրիմահայերի անունից կատարած նրանց միջնորդությունն ու խնդրանքները, վերջիվերջո, գործնական հետևանքներ ունեցան: 1805 թվականին նախագծվում և սրվում է Հին Ղրիմ քաղաքի կառուցման հատակագիծը[52]: Դրանից հետո Բ. Բեդրոսովն ու Խ. Մանուկովը տեղական իշխանություններին դիմում էին, ըստ էության, արդեն խնդրելով նըրանցից օժանդակել Ղրիմի տարբեր քաղաքներից հայերին Հին Ղրիմում հավաքելու գործին:

Հին Ղրիմում արդեն հաստատված, ինչպես նաև այնտեղ տեղափոխվել ցանկացող հայկական համայնքի ներկայացուցիչներ Բ. Բեդրոսովն ու Խ. Մանուկովը 1805 թվականին Տավրիկայի քաղաքացիական նահանգապետին են ներկայացնում երեք անվանական ցուցակներ, այն է՝ Տավրիկայի քաղաքներում

50 Одесский облархив, ф. 1, оп. 221, 1805 г., д. 2, л. 27, Крымский областной Государственный архив (в дальнейшем Крымоблархив), ф. 67, оп. 1, д. 10, л. 131 об.

51 Крымоблархив, ф. 67, оп. 1, д. 10, л. 131—132.

52 Նույն տեղում, գ. 28, թ. 4:

ապրող և Հին Ղրիմում բնակվել ցանկացողների, Նախիջևանից և արտասահմանից եկած, ինչպես և ս. Խաչ վանքում գտնվող ու ոչ մի տեղ չգրանցված հայերի և Հին Ղրիմում արդեն բնակվողների ցուցակները: Հավատարմատարները խնդրում էին ցուցակներում նշված մարդկանց դուրս գրել 1806 թվականի վաճառականական և մեշչանական ցուցակներից և հրովարտակի 6-րդ հոդվածի համաձայն գրանցել Հին Ղրիմում, նրանց ազատելով բոլոր տեսակի հարկերից[53]: Այս խնդրանքին ընդառաջելով, նահանգապետը պահանջում է նահանգական վարչությունից իջեցնել անհրաժեշտ կարգադրություն, որպեսզի Հին Ղրիմ տեղափոխվել ցանկացողներին ոչ մի արգելք չհարուցվի, իսկ նրանցից պահանջվող անցյալ հարկերը գանձվեն Թեոդոսիայի ներքին զեմստվային դատարանի կողմից[54]: Դրան հաջորդում է, դարձյալ Բ. Բեդրոսովի և Ի. Մանուկովի ներկայացրած խնդրագրին համապատասխան, Խերսոնի և Օդեսայի զեներալ նահանգապետ Էմանուել Օսիպովիչ Դյուկ դե-Ռիշելյոյի կարգադրությունը Նոր Նախիջևանից եկած հայերին Հին Ղրիմում թողնելու մասին, պայմանով, որ նրանք բոլոր հարկերը վճարեն կրկնակի չափով (Հին Ղրիմի և Նոր Նախիջևանի փոխարեն), ինչպես այդ խոստացել են իրենք՝ հավատարմատարների միջոցով[55]: Հայերի ներկայացրած խնդրագրերի, ինչպես և դրանց հիման վրա Դյուկ դե-Ռիշելյոյի ու Տավրիկիայի նահանգապետի կարգադրությունների համաձայն, տավրիկյան արքունական էքսպեդիցիան վճռում է.

1. Թեոդոսիայում, Ղարասուբազարում, Սիմֆերոպոլում, Եվպատորիայում և Հին Ղրիմում ապրող 63 հայերին, հավասարապես նաև նույն քաղաքներում, ինչպես նաև Բախչիսարայում ու Պերեկոպում գտնվող արտասահմանից եկած նրանց 115 ազգակիցներին հրովարտակի հիման վրա բնակության գրանցել Հին Ղրիմ քաղաքում: Եթե նրանցից ոմանք կցանկանան վաճառականություն անել, ապա այդ մասին պետք է հայտնեն քաղաքի ռատուշային. վերջինիս բացման մասին պետք էր իրազեկ դարձնել նահանգական վարչությանը:

2. Կազմել Թեոդոսիա, Ղարասուբազար, Սիմֆերոպոլ, Բախչիսարայ, Եվպատորիա, Պերեկոպ և Կերչ քաղաքներում վաղուց ի վեր գրանցված 250 հայ վաճառականների ու մեշչաններ

53 Одесский облархив, ф. 1, оп. 221, 1805 г., д. 2, л. 12 об.

54 Նույն տեղում:

55 Նույն տեղում:

ների ցուցակները և ուղարկել այդ քաղաքների իշխանություններին, այն հաշվով, որպեսզի նրանցից յուրաքանչյուրից հարցում կատարվի՝ ցանկանո՞ւմ է արդյոք տեղափոխվել Հին Ղրիմ, թե՞ ուզում է մնալ իր տեղում:

3. Ղարասուբազարի հայ-կաթոլիկ դատարանի իրավասությանը ենթակա այն վաճառականների ու մեշչանների մասին, որոնք ցանկություն են հայտնել մտնել Հին Ղրիմի հայ համայնքի մեջ, հարցում կատարել դատարանից՝ թե նրանք ի՞նչ դավանանքի են՝ կաթոլիկ թե լուսավորչական և արդյո՞ք համաձա՞յն են մտնել Հին Ղրիմի հայկական ռատուշայի իրավասության տակ. եթե այո, ապա նրանց գրանցել քաղաքի բնակիչների ցուցակներում և այդ մասին հայտնել ատյանին:

4. Կազմել Հին Ղրիմում բնակվել ցանկացող նոր Նախիջևանցիների անվանական ցուցակները և դրանք ուղարկել Եկատերինոսլավի արքունական պալատ. խնդրել, որպեսզի պալատը այդ ցուցակները հանձնի Նոր Նախիջևանի մագիստրատին և կարգադրի վերջինիս կատարելու համապատասխան շտկումներ՝ թե այս հայերից, ըստ հաշվեհամարի, ովքեր են գրանցված վաճառականների և մեշչանների դասերում, նկատի ունենալով միաժամանակ այն հանգամանքը, որ նրանցից շատերն իրենց ընտանիքներով քսան և ավելի տարիներ ապրում են Ղրիմում, ունեն առևտրական և այս երկրին բնորոշ արհեստագործական ձեռնարկներ, հիմնել են իրենց տնտեսությունները և, ընդ որում, 1805 թվականի մարտի 31-ին սենատի ընդունած հրամանի համաձայն պարտավորվում են կրկնակի հարկեր վճարել՝ իրենց կրկնակի ունեցվածքի[56] դիմաց Նախիջևանում և Ղրիմում: Ղրիմում սրանց մնալու դեպքում, Տավրիկյան նահանգական ատյանը խնդրում էր վերոհիշյալ պալատից իրեն հայտնել, թե այդ հայերից ում վրա և որ ժամանակվանից ինչքան պարտքեր են մնացել՝ դրանք գանձելու համար:

5. Ի հաստատումն Հին Ղրիմ վերաբնակվել ցանկացող հայ համայնքի կողմից զեներալ-նահանգապետին տրված խնդրա-

56 Ունեցվածք ասելով չպիտի հասկանալ միայն ուղղակի իմաստով: Կրկնակի ունեցվածքի դիմաց հարկ վճարելու խնդիրը առաջանում էր պարզապես այն պատճառով, որ գրանցված լինելով Նախիջևանի հասարակության կազմում, նրանք իրավական տեսակետից օգտվում էին այդ քաղաքի համայնքին տրված տնտեսական և այլ կարգի արտոնություններից և դրանց դիմաց պետք է հարկեր վճարեին, մի բան, որից, ինչպես տեսնում ենք, Ղրիմ փախածները չէին հրաժարվում:

դրի, Տավրիկայի արքունական ապյանում նրա հավատարմատարներից պարտավորագրեր վերցնել, թե արդյոք ճիշտ է նրանց պնդումն այն մասին, որ Նոր Նախիջևանից Ղրիմ քաշված հայերի ապառիկները, Եկատերինոսլավի արքունական պալատի կողմից հաստատավելուց հետո, Հին Ղրիմի հայ համայնքը պարտավորվում է փակել միանվագ և մինչև հաջորդ հաշվեհամարը կրկնակի չափով մուծել նրանց հարկերը՝ ինչպես Նոր Նախիջևան քաղաքի մագիստրատի, այնպես էլ Հին Ղրիմի գծով[57]։

Նոր Նախիջևանից Ղրիմ անցած հայերի հարցի քննարկումը թողնելով իր տեղին, այստեղ նշենք միայն, որ Եկատերինոսլավի արքունական պալատը և Տավրիկայի նահանգական վարչությունը այս շրջանում ջանում էին հանգել հետևյալ որոշմանը. Հին Ղրիմում տուն և տնտեսություն ունեցող հայերին, որպեսզի նրանք չթալքայվեն ու չտնանկանան, թողնել այնտեղ, իսկ նրանց, ովքեր այդպիսիք ունեն Նոր Նախիջևանում, պարտադրել, որ թողնեն թերակղզին և վերադառնան իրենց նախկին բնակավայրը[58]։

Դժվարություններով և չարչարանքով հանդերձ, այնուամենայնիվ, գրեթե անմարդաբնակ ու ավերակ դարձած Հին Ղրիմի, Երբեմնի հայաբնակ ու վիճաշեն Սուրխաթի, բնակեցումը հայերի կողմից իրականացվում էր։ Այդ գործը առավել նորմալ և արագ ընթացք է ստանում, երբ նրա իրականացումը անցնում է Հին Ղրիմի հայկական քաղաքային ռատուշայի տնօրինությանը։ Բացվելուց մի քանի ամիս անց, 1808 թվականի դեկտեմբերի 8-ի նիստում ընդունված որոշման համաձայն ռատուշան նահանգի քաղաքային ոստիկանություններին է ուղարկում Հին Ղրիմ տեղափոխվելու ենթակա հայերի ցուցակները և պահանջում արագացնել նրանց վերաբնակեցումը։ Նկատի ունենալով ձմեռային պայմաններում տեղափոխման հետ կապված դժվարություններն ու նյութական վնասները, ռատուշան այդ հայերին թույլ էր տալիս մինչև 1809 թվականի գարնանը մնալ իրենց տեղերում, իսկ դրանից հետո անմիջապես վերաբնակվել Հին Ղրիմ[59]։ Հաջորդ գարնանը ռատուշան դիմում է նահանգական կառավարության գործադիր էքսպեդիցիայի միջնորդությանը։ Վերջինս մարտի 18-ին ընդունած որոշմամբ Սիմֆերոպոլի, Բախչիսարայի, Եվպատորիայի, Պերեկոպի և Ղարասուբազարի քաղաքային ոստիկանություններից պահանջում է կատարել Հին Ղրիմի հայկական քաղաքային ռատուշայի խնդրանքը[60]։ Սրա հիման վրա նշված քաղաքների իշխանությունները սկսում են կազմել իրենց մոտ ապրող և Հին Ղրիմ տեղափոխվելու ենթակա հայ ընտանիքների ցուցակները։ Օրինակ, Թեոդոսիայի քաղաքային ռատուշան ներկայացրել էր 22, իսկ Ղարասուբազարի քաղաքային ոստիկանությունը 19 հայ ընտանիքների ցուցակներ[61]։

Ռատուշայի ձեռնարկած միջոցառումների շնորհիվ քաղաքը դնալով հայաշատ էր դառնում։ Միայն Նախիջևանում անշարժ գույք չունեցողների թիվը այստեղ 1812 թվականին հասնում էր 523 հոգու (163 ընտանիք)։ Հայտնելով այդ մասին Դյուկ դե-Ռիշելյոյին, Տավրիկիայի փոխնահանգապետը նույն թվականի մարտի 12-ին նշում էր, որ նոր հիմնադրած հայկական Հին Ղրիմ անունը կրող քաղաքը, 1804 թվականից և մանավանդ ռատուշան բացվելուց հետո բոլորովին նոր տեսք է ստացել։ «Այնտեղ տեղափոխվող հայերը,— տեղեկացնում էր նա Ռիշելյոյին,— ռատուշան բացվելուց հետո այդ քաղաքում հաստատելով մշտական բնակություն, ժամ առ ժամ գեղեցկացնում են քաղաքը՝ ինչպես տներ, կրպակներ, իջևանատներ կառուցելով, այնպես էլ առավել անհրաժեշտ այլ հաստատություններով։ Նոր բնակեցված այս քաղաքի բնակիչների զգալի մասը նախիջևանցի հայեր են, որոնք, թեև հաշվեհամարով գրանցված են այն քաղաքում, բայց անձնագրերով մշտապես ապրում են Հին Ղրիմում»[62]։

Եվ իրոք, 1807 թվականի օգոստոսին, փաստորեն մեկ տարում, հայերը Հին Ղրիմում արդեն կառուցել էին 160 նոր տներ, իսկ քաղաքի բնակչության թիվը հասել էր 1500-ի, ճնշող մեծամասնությամբ հայեր[63]։ Հին Ղրիմի հայկական քաղաքային ռատուշայի տվյալներով 1810 թվականին քաղաքում ապրում էին 1307 հայեր և 333 այլազգիներ։ Նույն տվյալներով հայերը քաղաքում կառուցել էին 165 նոր տներ, 4 իջևանատուն, 95 կրպակ, 6 սրճարան և այլն[64]։

Որքան քաղաքը առաջադիմում էր, այնքան ավելի էր ուժեղանում ղրիմահայոց ձգտումը՝ տեղափոխվելու այնտեղ։ 1810—1820-ական թվականներին Ղրիմի տարբեր քաղաքներից և հատ-

57 Одесский облархив, ф. 1, оп. 221, 1805 г., д. 2, лл. 17—20.
58 Նույն տեղում, թ. 31։
59 Крымоблархив, ф. 67, оп. 1, д. 10, л. 132 соб.

60 Նույն տեղում, գ. 6, թ. 13։
61 Նույն տեղում, թթ. 14, 18—22, 36։
62 Одесский облархив, ф. 1, оп. 221, 1805 г., д. 2, л. 135.
63 Крымоблархив, ф. 67, оп. 1, д. 8, л. 2 об.
64 Նույն տեղում, գ. 35, թ. 24։

պատկա Ղարասուբազարից հայերը զանգվածաբար դիմում են Հին Ղրիմի հայկական ռատուշային՝ այնտեղ տեղափոխվելու և նրա հրավառության տակ մտնելու խնդրանքով[65]։ Միայն 1822 թվականի առաջին չորս ամիսներին թերակղզու տարբեր բաղաքներից Հին Ղրիմ էին տեղափոխվել 68 հայեր[66]։ Սակայն թե Հին Ղրիմ բաղաքի և թե առհասարակ ամբողջ Տավրիկյան նահանգի հայ բնակչության շարքերը համալրվում էին ոչ միայն նախիջևանցիների, այլև Թուրքիայից, Կովկասից, Մոլդավիայից և այլ շրջաններից այնտեղ անցած հայ դաղթականական զանգվածների հաշվին։

* * *

Հին Ղրիմը հայերով բնակեցնելու հարցը քննարկելիս մենք միայն հարևանցիորեն ակնարկեցինք Ղրիմ փախչող նոր նախիջևանցիների խնդիրը։ Այնինչ այդ հարցը արժանի է համակողմանի լուսաբանման, որը ոչ միայն լույս կսփռի ղրիմահայ գաղութի վերստեղծման պատմության վրա, այլև կբացահայտի սոցիալ-տնտեսական այն շարժառիթները, որոնք հայերին ստիպում էին թողնել նոր Նախիջևանը և անցնել Ղրիմ։

Ղրիմահայոց մինչռուսական շրջանի պատմությանը նվիրված մեր աշխատության մեջ արդեն նշել ենք, որ չնայած դեպի ռուս ժողովուրդն ու Ռուսաստանը տածած իրենց բացահայտ համակրանքին, ինչպես և պատերազմի ժամանակ և նրանից անմիջապես հետո ռուսական զորքերին ցույց տված օգնությանը, ղրիմահայերը համաձայն չէին լքել իրենց դարավոր հայրենիքը և տեղափոխվել նոր բնակավայրեր, ուր պետք էր ամայի դետնի վրա ամեն ինչ սկսել նորից։ Այնինչ Ղրիմում նրանք թողնելու էին իրենց տները, պարտեզներն ու այգիները, արհեստանոցները, ցանած արտերը, հավատատեղիները և վերջապես հարազատների գերեզմանները։ Պարզ է, որ ակամայից գաղթեցված ղրիմահայերի մի մասը չէր ուզում հաշտվել իր հայրենիքից մեկընդմիշտ զրկվելու մտքի հետ։ Ղրիմ ևս դառնալու մտայնությունը օրըստօրե աճում և ավելի մեծ թվով մարդկանց էր համակում մանավանդ անտեսական այն մեծ դժվարությունների հետևանքով, որոնց նրանք հանդիպում էին իրենց նոր բնակավայրերում։ Նոր Նախիջևանում հայերը չէին կարող չտեսնել, որ իրենց այս նոր

65 Նույն տեղում, գգ. 115 և 141։

66 Նույն տեղում, գ. 314, թ. 2ա։

բնակավայրը շատ կողմերով՝ թե աշխարհագրական դիրքով և թե տնտեսական զարգացման աղդակներով զիջում էր Ղրիմին։ Նախ, առևտրին հարմար իր դիրքով Ղրիմը XVIII դարի վերջին և XIX դ. սկզբներին գերազանցում էր Դմիտրի Ռոստովսկի ամբողջ շրջանում ընկած տափաստաններին, որ հատկացվել էին հայերին։ Եվ դա ոչ միայն արտաքին աշխարհի, այլև բուն Ղրիմում ծավալվող առևտրի առումով։ Ղրիմում հայ առևտրականը ավելի շատ սպառողներ, իսկ արհեստավորները ավելի շատ պատվիրատուներ կգտնեին, քան թե նոր յուրացվող հողերում։ Բայց ամենից շատ, ինչպես կտեսնենք, Ղրիմ էին ձգտում գաղթեցվածների աշխատասիրական, առավել աղքատ շերտերը և գյուղացիները։ Եվ դա հասկանալի է. միջակ և աղքատ արհեստավորների ու բանվորների համար նոր ոտքի ելնող քաղաքում շատ ավելի զբաղվար էր զբաղմունք գտնել, քան Ղրիմում, ուր նրանք էին հոգում արհեստներից հետու կանգնած թաթար բնակչության պահանջները։

Նախիջևանից Ղրիմ քաշվող հայերի այս մտայնությունը արտահայտող բազմաքանակ փաստաթղթերից բերենք միայն մեկը։ Դա Եվպատորիայի քաղաքային մագիստրատի կողմից 1795 թվականի հունիսի 25-ին Տավրիկիայի արքունական պալատին ներկայացրած զեկուցագիրն է, որտեղ ուղղակի մեջ են բերված նախիջևանցի հայերի պատճառաբանություններն իրենց Ղրիմում մնալու վերաբերյալ։ «Նրանք (նախիջևանահայերը — Վ. Մ.) հրնուց ի վեր լինելով տեղացի բնիկներ, լիովին ծանոթ լինելով այստեղի առևտրին,— գրում էր մագիստրատը,— առավել ընդունակ են զբաղվելու դրանով և դրա միջոցով դրամագլուխ շահել։ Իսկ գեղարվեստագործները (գեղարվեստական արհեստներով զբաղվողները — Վ. Մ.) և արհեստավորները մինչև արտագաղթեցումը սովորել են այստեղի գեղարվեստագործությունն ու արհեստները, որոնցով զբաղվել կարող են միայն այս երկրամասում։ Մինչդեռ Նախիջևանում ապրողները բոլորովին զրկված են դրանով զբաղվելու միջոցով հայթայթելու իրենց և իրենց ընտանիքների պահանջները»[67]։

Այսպիսին էր արհեստավոր և առևտրական փախստականների վիճակը։ Իսկ գյուղացիների՞նը։ Միթե պարզ չէ, որ այգեգործությանը բնաելացած ղրիմահայ գյուղացին սկզբնական շրջանում դժվարությամբ պիտի համակերպվեր դուռ դաշտավա-

67 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 139, ց. 1, գ. 1465, թ. 172բ և 184։

թությամբ զբաղվելու իր նոր վիճակին։ Ինչպես կտեսնենք, հենց այգեգործության համար անբարենպաստ պայմանները ստիպեցին անգամ Գրիգորիոպոլից նոր Նախիջևան արտաքսված ընտանիքներին՝ հեռանալու Ղրիմ։ Այս բոլորից բացի, բնակչության աշխատավոր շերտերի՝ նոր բնակավայրերից դեպի Ղրիմ փախչելը ստանում էր, անշուշտ, նաև սոցիալական բողոքի նշանակություն, բողոք, որը նրանք պասիվ ձևով արտահայտում էին մասամբ իրենց արտագաղթի պատճառը դարձած ունևոր դասի հանդեպ։

Դեռ արտագաղթի ժամանակ ղրիմահայ առաջին ընտանիքները կարողացել էին այս կամ այն պատրվակով խույս տալ և մնալ Ղրիմում։ Թևրակղզի վերադառնալ ցանկացողների համար սրանք ոչ միայն ձգող ուժ էին, այլև հենարան՝ մանավանդ դարձի հետ կապված սկզբնական շրջանի դժվարություններն ու խոչընդոտները հաղթահարելու իմաստով։ Ղրիմը Ռուսաստանին միացնելուց հետո Նախիջևանից այնտեղ հայերի կատարած փախուստը պարբերական բնույթ է ընդունում։ Ոմանք Ղրիմ էին անցնում ընտանիքներով կամ միայնակ, առանց որևէ թույլտվության, իսկ ոմանք էլ՝ Նոր Նախիջևանի մագիստրատից Ղրիմում առևտուր անելու ժամանակավոր անձնագրերով, որոնց ժամկետը լրանալուց հետո էլ հրաժարվում էին վերադառնալ։

Ղրիմը Ռուսաստանին միացնելու հաջորդ իսկ տարում, 1784 թվականին, բազմաթիվ հայեր դիմում են Տավրիկյան մարզի կառավարիչ Վ. Վ. Կախովսկուն, խնդրելով նրան թույլ տալ վերադառնալու Ղրիմ և ետ ստանալու իրենց տները, կրպակները և այլն[68]։ № 865 կարգադրով Վ. Կախովսկին նրանց թույլ է տալիս տիրել Ղրիմում մնացած իրենց գույքին և այնտեղ առևտուր անել, սակայն արգելում է տեղափոխվել մշտական բնակության, պատճառաբանելով, թե Նոր Նախիջևանի հիմնադրման վրա «ծախսվել է բավականաչափ պետական դրամ»[69]։

1784—1789 թվականներին Նոր Նախիջևանից Ղրիմ էին անցել ավելի քան 120 հայեր, որոնք հրաժարվում էին վերադառնալ։ 1790 թվականի մայիսի 17-ին Եկատերինոսլավի կուսակալական վարչությունը Տավրիկյան մարզի կառավարիչ Ս. Ժուկովլինից պահանջում է առանց անձնագրերի կամ ժամկետանց անձնագրերով Ղրիմում ապրող վերոհիշյալ նախիջևանցիներին

68 Крымоблархив, ф. 799, оп. 3, д. 8, л.л. 10—11.

69 Նույն տեղում։

Հ. Այվազովսկու կիսանդրին Թեոդոսիայում։

Հ. Այվազովսկու գերեզմանը Թեոդոսիայի Սուրբ Սարգիս եկեղեցու բակում:

պահակների հսկողությամբ եւ ուղարկել Նախիջևան[70]: Սրան համապատասխան Ս. Ժեգուլինը նույն բովանդակությամբ կարգադրություն է իջեցնում Տավրիկայի մարզային վարչությանը: Նույն թվականի սեպտեմբերի 6-ին վերջինս զեկուցում էր Ս. Ժեգուլինին, թե նրա կարգադրությունը ի կատար է ածվում. նոր նախիջևանցիներից ոմանք «պահակների հսկողությամբ» եւ են ուղարկվել, իսկ մյուսները՝ հանձնվել են Նոր Նախիջևանից այդ նպատակով Ղրիմ եկած մարդկանց[71]:

Խափանիչ այս միջոցներն անգամ անզոր էին կանգնեցնելու նոր նախիջևանցիների փախուստը դեպի Ղրիմ: Ահա թե ինչու 1794 թվականին իշխանությունները դիմում են ավելի կտրուկ միջոցների: Ապրիլի 30-ին Պ. Զուբովը կարգադրում է Ս. Ժեգուլինին գործադրել խստիվ միջոցներ, որպեսզի նախիջևանցի փախստականներին ոչ մի տեղ ապաստան չտրվի, իսկ թաքնվողները, անհրաժեշտ հսկողության ներքո, ուղարկվեն իրենց նախկին բնակավայրերը[72]: Միաժամանակ Պ. Զուբովը պահանջում էր այդպիսիներին հանձնել Նոր Նախիջևանի մագիստրատի լիազոր կապիտան Ստ. Չալխուշյանին, թույլ չտալ առանց անձնագրի որևէ նախիջևանցու մուտքը Ղրիմ՝ թե Պերեկոպի և թե Արքայտի կողմից[73]: Բանն այնտեղ է հասնում, որ նահանգական կառավարությունը փախստականներին հայտնաբերելու և եւ ուղարկելու գործը հանձնարարում է ոստիկանությանը և հունական հետևակային գնդին[74]:

Այս շրջանում գործին միջամտում է Հ. Արղությանը: Ս. Ժեգուլինին ուղղած իր գրավոր խնդրանքով նա առաջարկում է ոչ միայն Ղրիմում թողնել իր ներկայացրած ցուցակի 30 ընտանիքներին, այլև կարգադրել քաղաքային ու գեմստվային ոստիկանապետերին (исправники), որպեսզի սրանք եւ գնալու չհարկադրեն նաև կարողությամբ այդ ընտանիքներին հավասար նախիջևանցիներին, որոնք գրանից ահաբեկված իրենց կյանքը վտանգելու գնով ցրիվ են եկել թերակղզու տափաստանային և անտառային վայրերը: Իր այդ խնդրանքը Հ. Արղությանը պատ-

70 Հայկական ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 139, ց. 1, գ. 1465, թ. 1:
71 Նույն տեղում, թ. 11:
72 ИТУАК, Симферополь, 1896, № 25, стр. 93.
73 Հայկական ՍՍՀ ՊԿՊԱ, ф. 139, д. 1465, л. 57.
74 Նույն տեղում, թ. 58:

ճառաբանում էր նրանով, որ Նոր Նախիջևանի մագիստրատն էլ պահանջում է ետ վերադարձնել միայն ունևորներին ու վաճառականներին[75]։ Պ. Զուբովի 1794 թվականի ապրիլի 30-ի կարգադրությունը ևս փաստորեն չի կատարվում։ 1796 թվականի հունվարի 11-ին Եկատերինոսլավի կուսակալությունից հայտնում էին Ս. Ժեզուլինին, թե չնայած վերոհիշյալ կարգադրությանը, մինչև այժմ ոչ ոք չի վերադարձել Նոր Նախիջևան. ընդհակառակը, փախստականների թիվը շարունակ մեծանում է։ Եթե փախստականները ետ չուղարկվեն, գրում էին փոխարքայությունից, ապա ամբողջ Նախիջևան քաղաքն ու շրջակա գյուղերը ամեն ինչով հանդերձ կջանան տեղափոխվել այնտեղ, և ոչ մի խոստություն չի կարող կասեցնել նրանց»[76]։

Նոր Նախիջևանից Ղրիմ անցած հայերի հարցում նահանգական և տեղական իշխանությունները ցուցաբերում էին գերատեսչական մոտեցում։ Եթե Եկատերինոսլավի կուսակալությունն ու Նոր Նախիջևանի մագիստրատը XVIII դարի վերջին և XIX դարում, հարկերն ու պետական ծախսերը մարելու խնդրին համապատասխան, անընդհատ պնդում էին հայերին ետ ուղարկելու վրա, ապա Տավրիկիայի մարզային (հետագայում նահանգական) վարչությունն ու տեղական իշխանությունները, ելնելով թերակղզու տնտեսական զարգացման հեռանկարներից, ջանում էին հայերին պահել Ղրիմում, այդ նպատակի համար օգտագործելով նպաստավոր առիթներ։ Սակայն շատ դեպքերում վերջիններս ստիպված էին լինում, ելնելով զուտ ձևական օրինականությունից, ընդառաջ գնալ Նախիջևանի մագիստրատի պահանջներին, որոնք, սակայն, գործնականում անկատար էին մնում, որովհետև հեշտ գործ չէր բռնի ուժով ի մի ժողովել թերակղզով մեկ սփռված հայերին, երբ նրանց պատսպարում և ապաստան էին տալիս տեղացիները, երեկվա իրենց հարևանները։

Ղրիմի քաղաքային իշխանությունները առիթը բաց չէին թողնում հայերին գրանցելու թերակղզու քաղաքներում, վաճառականական կամ մեշչանական դասերի կազմում։ Այսպես, օգտագործելով 5-րդ, 1795 թվականի հաշվեհամարը, Եվպատորիայի, Թեոդոսիայի և Ղարասուբազարի մագիստրատներն ու քաղաքապետարանները իրենց իրավասության տակ էին ընդունել բազմաթիվ նախիջևանցիների, որոնք այդ քաղաքներում ունեին

75 ՀԱՍՀ ՊԿՊԱ, ֆ. 139, ց. 1, գ. 1465, թ. 102։

76 Նույն տեղում, թ. 167ա և բ։

տներ, կրպակներ ու արհեստանոցներ, անձնագրերով, ընտանիքներով հանդերձ երկար ժամանակ ապրում էին Ղրիմում, զբաղվում առևտրով ու արհեստագործությամբ և որոնց մի մասը Նոր Նախիջևանում գրանցված էր սոսկ ձևականորեն[77]։

Եկատերինոսլավի կուսակալական վարչության պահանջները կատարելու նպատակով Տավրիկիայի արքունական պալատը 1796 թվականի հունիսի 4-ին կարգադրում է տեղական մագիստրատներին՝ իրենց իրավասության տակ չընդունելու այլևս ոչ մի նախիջևանցու։ Պալատը միաժամանակ կուսակալությանն է ներկայացնում 1795 թվականի 5-րդ հաշվեհամարի ընթացքում կազմած Ղրիմում գտնվող այն նախիջևանցիների անվանական ցուցակը[78], որոնք ցանկություն էին հայտնել գրանցվել տեղերում վաճառականական և մեշչանական դասերի շարքը։ Ստորև համառոտած ձևով բերում ենք այդ ցուցակը, մի կողմ թողնելով ընտանիքի գլխավորի և անդամների անվանական թվարկումը։

Նախիջևանցի ընակիչների կոչումը	Հայտարարված դրամագլխի քանակը	Տարիքը	
		արական	իգական
3-րդ գիլդիայի վաճառականության մեջ			
Եվպատորիայում	40.125	58	47
Ղարասուբազարում	20.100	22	16
Թեոդոսիայում	5000	7	4
Ընդամենը Տավրիկյան մարզում վաճառականության մեջ գրանցված նախիջևանցիներ	65.225	87	67
Մեշչանների դասը			
Եվպատորիայում	—	134	131
Ղարասուբազարում	—	62	48
Ընդամենը մեշչաններ	—	196	179

Այսպիսով, օգտվելով 1795 թվականի հաշվեհամարից, Ղրիմի տեղական իշխանություններն իրենց իրավասության տակ էին ընդունել 529 նախիջևանցի հայերի, բայց մարզային արքունական պալատը մեկ տարի անց ստիպված էր նրանցից հրաժարվել՝ Ղրիմից նրանց հեռացնելու տնօրինությունը թողնելով եկատե-

77 Նույն տեղում, թթ. 172, 184ա։

78 Նույն տեղում, թ. 173։

ռինոսլավի կուսակալության քննարկմանն ու որոշմանը[79]։ Իհարկե, այս 529-ի մեջ լրիվ չափով չեն ընդգրկված Նախիջևանից դուրս եկած և Ղրիմում հաստատված հայերը։ Ցուցակին կից գրությունից և բուն ցուցակի վերնագրից երևում է, որ ցուցակում տեղ էին գտել միայն 1795 թվականի հաշվեհամարի ժամանակ Ղրիմում վաճառականական կամ մեշչանական դասերում գրանցվելու նպատակով դիմում տված մարդկանց և նրանց ընտանիքի անդամների անունները։ Դժվար չէ, ուրեմն, հնթադրել, որ Ղրիմ անցած նախիջևանցիների թիվը շատ ավելի է եղել, քան նշված 529-ը, որովհետև շատերը նման դիմումներ չէին անում։

Դեպի Ղրիմ շարժվող հայերը կարծես թե նախապես որոշել էին անսասան մնալ իրենց վճռում։ Նախիջևանից հեռանալու տրամադրությունը գնալով լուրջ սպառնալիք էր ներկայացնում քաղաքի տնտեսական զարգացմանը։ Իշխանությունների հետ միասին դրանց դիմագրավելու համար ոտքի են ելնում նաև հոգևորականները։ Եթե 1799 թվականի մարտի 4-ին Աբրահամ վարդապետը Հին Ղրիմից գրած իր նամակում խնդրում էր Հ. Արղությանից՝ Ղրիմ անցած նախիջևանցիներին թողնել Հին Ղրիմում[80], ապա Կարապետ աբեղան հունիսի 30-ին Նոր Նախիջևանից Հ. Արղությանին ուղարկած դիմումում ամբաստանում էր Աբրահամ վարդապետի այդ վարքագիծը։ Պետական իշխանությունների նման հոգևորականներն էլ ցուցաբերում էին իրենց կրոնա-գերատեսչական մոտեցումը։ Ինչպես հունիսի 30-ի, այնպես էլ հուլիսի 4-ի իր նամակներում Կարապետ աբեղան խընդրում էր Հ. Արղությանից հասարակության անունով մի գրավոր հորդոր ուղարկել՝ ցրելու Նախիջևանում տարածված այն լուրերը, որոնց համաձայն իբր թե կայսրը բոլոր ցանկացողներին իրավունք է շնորհել գնալ և բնակվել Հին Ղրիմում կամ Թեոդոսիայում[81]։ Նա Հ. Արղությանին զգուշացնում էր, թե Հին Ղրիմի հայերին տրվելիք հրովարտակը չինի թե այնպես կազմվի, որ նախիջևանցիներն այն օգտագործեն Ղրիմ տեղափոխվելու նպատակով։ «Լաւապես գիտասջէք,—գրում էր նա,—իմ ջանքս այն է, որ անդ փախստական գնացօղքն յետս դարձուցանել և չէ թէ նախիջևանու նորոգ տնուր անդ տանել»[82]։

79 Նույն տեղում, թ. 184բ։
80 Մատենադարանի արխիվ, ֆ. կաթ. դիվան, թղթ. 9, վ. 41, թ. 1։
81 Նույն տեղում, թ. 9, վ. 96, գ. 2։
82 Նույն տեղում, թ. 3։

Ղրիմ քաշված հայերի համառությունը հաճախ ստիպում էր Նախիջևանի մագիստրատին լիազորներ ուղարկել Ղրիմ՝ ժամկետանց անձնագրեր ունեցողներին նոր անձնագրեր տալու և հարկերը հավաքելու համար[83]։ Ի միջի այլոց հարկերի մասին։ Ղրիմ անցած նախիջևանցիները, աննշան բացառություններով, վճռում էին և՛ Նոր Նախիջևանում ըստ հաշվեհամարի դրանցված լինելու հետևանքով առաջացած հարկերը, և՛ թե կատարում քաղաքային բոլոր տեսակի պարհակները Ղրիմում[84]։ Ընդ որում սա կատարվում էր համաձայն կառավարիչ սենատի 1805 թվականի մարտի 31-ի հրամանի, որ պահանջում էր մի նահանգից մյուսը տեղափոխվելու դեպքում, մինչև հաջորդ հաշվեհամարը, հարկեր վճարել հին և նոր բնակավայրերի դիմաց[85]։ Այս հրամանը օգտագործելով՝ Ղրիմ անցած նախիջևանցիները 1805 թվականին հասնում են նրան, որ Դյուկ դե-Ռիշելյոն և նույնիսկ Եկատերինոսլավի արքունական պալատը համաձայնվում են հրամանը տարածել թերակղզու քաղաքներում տուն ու տեղ ունեցող նախիջևանցիների վրա, իսկ նրանք, ովքեր տուն և տնտեսություն ունեն Նոր Նախիջևանում, այդպիսիներին ետ ուղարկել[86]։ Հարևանցիորեն նշենք, որ Եկատերինոսլավի արքունական պալատի տվյալներով նախիջևանցի փախստականների թիվը Ղրիմում այդ ժամանակ հասնում էր 852 հոգու[87]։

Այս հրամանից հետո պայքարը մի կողմից նախիջևանցիներին Ղրիմում թողնելու, իսկ մյուս կողմից նրանց այնտեղից հեռացնելու համար ավելի է բորբոքվում, որովհետև Ղրիմի տեղական իշխանությունները ջանում էին այն օգտագործել և ավելի շատ հայեր գրանցել մշտական բնակության, իսկ դա իր հերթին ավելի էր խթանում Նոր Նախիջևանից կատարվող փախուստը։ «Եթե Զերդ մեծությունը իր հզոր հովանավորությամբ և կարգադրությամբ չպաշտպանի, ապա ժամանակի ընթացքում [Նոր Նախիջևանը] կենթարկվի լիակատար քայքայման և ավերածության,— գրում էր Նոր Նախիջևանի մագիստրատի չինովնիկներից մեկը Դյուկ դե Ռիշելյոյին։ — Այս բոլորի պատճառը Տավրիկյան նահանգի քաղաքային և զեմստվային իշխանություններն են, որոնք առանց որևէ ահ ու դողի ընդունում, կառավարում և պահում են այս-

83 Նույն տեղում, վ. 109, թթ. 1—2։
84 Одесский облархив, ф. 1, оп. 221, 1805 г., д. 2, л. 32 об.
85 Նույն տեղում։
86 Նույն տեղում, թ. 31ա, բ և 41։
87 Նույն տեղում, թ. 41։

տեղից փախած ժամկետանց անձնագրերով հայերին և իրենց կողմից անձնագրեր են տալիս նրանց՝ ոչ միայն այնտեղ թափառական կյանք վարելու, այլև ընտանիքներով, բարեկամներով և իրենց համոզած մարդկանցով գաղտնի կերպով այստեղից հեռանալու համար»[88]։ Թեև գրության հեղինակը հայերի Ղրիմ փախչելը բացատրում է որոշակի միակողմանիությամբ, սակայն չի կարելի չնկատել, որ զեկուցագրում, հեղինակի կամքից անկախ, արտացոլում է գտել հայերի Նոր Նախիջևանից Ղրիմ վերաբնակվելու բավական զանգվածային բնույթ ստացած ձգտումը։ Մի փոքր ավելի ուշ, 1806 թվականի մարտի 13-ին, Եկատերինոսլավի արքունական պալատին ներկայացրած իր ընդարձակ զեկուցագրում Նոր Նախիջևանի մագիստրատը, առանց երկարաբանությունների, զգուշացնում էր, որ եթե Տավրիկիայում իշխանությունները այսուհետև ևս շարունակեն ջանք ու եռանդ ցուցաբերել Նախիջևանից փախածներին տեղավորելու խնդրում և եթե վճռական արգելք չհարուցվի, ապա Նոր Նախիջևանը կզրկվի իր բնակչության մի զգալի մասից, որովհետև դեպի Ղրիմ են ձգտում նաև ուրիշները[89]։

Մագիստրատը պնդում էր, թե իր հաշվումներով Ղրիմ անցած նախիջևանցիներից 746 հոգի Նոր Նախիջևանում ունեն տներ, այնինչ Հին Ղրիմում նրանք ունեն ընդամենը 50 տուն[90]։ Այս փաստը ուշադրության է արժանի երկու կողմով։ Նախ այն, որ մինչև 1805 թվականի մարտի 31-ի սենատի որոշման վրա հիմնված Դյուկ դե-Ռիշելյոյի վերոհիշյալ կարգադրությունը, այս խնդրի առթիվ ներկայացրած իր բազմաթիվ և բազմատեսակ զեկույցներից, խնդրանքներից ու բողոքներից և ոչ մեկում մագիստրատը չէր նշում Ղրիմ անցած այսքան մեծ թվով մարդկանց Նոր Նախիջևանում տուն ունենալու փաստը։ Հետևապես, սույն փաստարկը այժմ առաջ էր քաշվում չեզոքացնելու համար իրավության առաջին մասը և, ընդհակառակը, մեծապես օգտվելու համար նրա երրորդ մասից, որը հրահանգում էր Նոր Նախիջևանում տուն ունեցողներին Ղրիմից արտաքսել իրենց բնակավայրը։ Այնուհետև, եթե մի պահ ընդունելու իսկ լիներնք, որ տների վերաբերյալ մագիստրատի բերած թվերը ճիշտ են, ապա այդ

88 Նույն տեղում, թ. 38ա, բ։
89 Одесский облархив, ф. 1, оп. 221, 1805 г., д. 2, л. 44.
90 Նույն տեղում, թթ. 42բ և 46։

դեպքում այս փաստը պարզապես կամրապնդի մեր այն կարծիքը, թե Ղրիմը հիշյալ հայերին նյութապես ևս լավի էր շահագրգռում, քան իրենց նորաստեղծ քաղաքը. այլապես նրանց կողմից կատարյալ անմտություն կլիներ լքել սեփական տուն ու տեղ և տեղափոխվել Հին Ղրիմ, որը, փաստորեն, նոր պետք է հիմնադրվեր, առանց որևէ նյութական աջակցության։

Մարտի 13-ի իր բողոք-զեկույցը մագիստրատն ավարտում էր, հուսահատորեն փաստարկելով այն պարագան, թե փախստականներին հայտնաբերելու ուղղությամբ իր գործադրած բոլոր ջանքերը իզուր են անցել. խոսքը վերաբերում էր և՛ գրավոր դիմումներին և՛ թե փախստականներին հայտնաբերելու և ետ ուղարկելու նպատակով մագիստրատի կողմից Ղրիմ ուղարկած նրա ներկայացուցիչների անպտուղ գործունեությանը։ Մագիստրատի առաջին լիազոր Պավել Թոմանովը Ղրիմ եկավ 1792 թվականին, երկրորդը՝ Դասպար Սահաթչի-օղլուն 1793 թվականին, երրորդը՝ կապիտան Ստեփան Ջալխուշյանը 1794 թվականին, չորրորդը՝ պրապորշչիկ Սուսբատմազովը 1796 թվականին և, վերջապես, Հարություն Պոպովը՝ 1799 թվականին[91]։ Ղրիմում սրանց թափած ջանքերը զուր անցան, ապագան ցույց տվեց, որ իզուր էր մագիստրատը նրանց վրա գումարներ ծախսել։ Վեճը դնալով խճճվում էր, տարիներ շարունակ չստանալով վերջնական և անվերապահ լուծում։

Եկատերինոսլավի արքունական պալատի կողմից ներկայացրած մագիստրատի այս բողոքի կապակցությամբ 1806 թվականի մայիսի 5-ին Դյուկ դե-Ռիշելյոն կարգադրում է հայտնել Տավրիկիայի արքունական պալատին և Նախիջևանի պատգամավորներ Նազարեթ Ախաշևին ու Ստեփան Պոլիվանովին, որ Ղրիմում տուն ու տեղ չունեցող հայերը պետք է ետ ուղարկվեն Նախիջևան, իսկ մյուսները՝ մնան Ղրիմում[92]։ Բայց, ինչպես տեսանք, այս որոշումը Ղրիմի և Նոր Նախիջևանի իշխանությունները ջանում էին մեկնաբանել յուրովի, անգամ չքաշվելով դրան հարմարեցնել բռնաբռոսիկ փաստեր։

Այսպես թե այնպես վեճը այնքան է բորբոքվում, որ 1811 թվականի հուլիսին դառնում է կառավարիչ սենատի հատուկ քննության առարկա։ Հուլիսի 31-ին սենատը լսում է Հին Ղրիմում գտնվող նախիջևանցիների հարցը։ Այս կապակցությամբ քննության

91 Նույն տեղում, թ. 50։
92 Նույն տեղում, թ. 66բ։

Ն դրվում Հին Ղրիմի հայ համայնքի հավատարմատարի խնդրանքը՝ 621 նախիջևանցիների Հին Ղրիմում թողնելու, Եկատերինոսլավի արքունական պալատի գրությունը՝ այն պատճառների մասին, որոնց հետևանքով Նոր Նախիջևանի հասարակությունը չէր համաձայնվում նշված հայերին թույլ տալ մնալու այնտեղ, և Հին Ղրիմի հայկական քաղաքային ռատուշայի հաղորդումը նշված հայերին քաղաքում թողնելու և նրանց Նոր Նախիջևան չվերադառնալու պատճառների վերաբերյալ։ Վերջին հաղորդումից երևում է, որ Հին Ղրիմում արդեն հաստատված և իրենց սեփական տուն ու տեղը դրած մարդկանց այնտեղից ետ ուղարկելը երկու քաղաքների համար էլ տնտեսապես ձեռնտու չէր։ Հարցն այն է, որ Հին Ղրիմ քաղաքի հայ հասարակությունը պարտավորվում էր մինչև հաջորդ հաշվեհամարը վճարել Նոր Նախիջևանում գրանցված, բայց իր մոտ ապրող հայ ընտանիքների բոլոր հարկերն ու տուրքերը։ Միևնույն, տեղափոխվելով Նոր Նախիջևան, սրանք կզրկվեին Ղրիմում ունեցած իրենց առևտրական ու արհեստագործական ձեռնարկումներից, տնտեսապես կթայքայվեին և ի վիճակի չէին լինի Նոր Նախիջևանում մուծել իրենց հարկերն ու պարտքերը, հետևապես դրանց ծանրությունը կիջներ տեղի հայ հասարակության ուսերին[93]։

Հապա ինչո՞ւ էր Նախիջևանի մագիստրատը տարիներ շարունակ համառում։ Հարցը պարզ է դառնում, երբ մենք ուշադիր հետևում ենք մագիստրատի գրեթե բոլոր խնդրանքներում և բողոքգրերում տեղ գտած այն սպառնալիքներին, ըստ որոնց, եթե փախստականները ետ չվերադառնան, ապա քաղաքի բնակչության թիվը կշարունակի նոսրանալ՝ նորանոր ընտանիքների փախուստի հետևանքով։ Մագիստրատը ավելի շատ ահաբեկված էր Ղրիմում մնացածների վարակիչ օրինակից, քան թե հարկերի գանձման դժվարություններից, հարկեր, որոնց վճարումը Ղրիմում գտնվողները գրեթե կանոնավոր կերպով կատարում էին։ Առանձին դեպքերում չվճարված հարկերի մասին աղմուկ-աղաղակ բարձրացնելով, մագիստրատը ձգտում էր այն օգտագործել իր նպատակին հասնելու համար։ 1811 թվականի նոյեմբերի 11-ին Հովակիմ Լազարյանին ուղղած խնդրագրում Նոր Նախիջևանի քաղաքագլուխ Գևորգ Օգաբաշևը հայտնում էր, որ եթե Ղրիմ անցած նախիջևանցիները ետ չբերվեն, ապա «դա մեծ ավերածություն և քայքայում կբերի մեր

93 Նույն տեղում, թ. 92։

քաղաքին ու հասարակությանը», «քաղաքին կպատճառի մեծ ամայացում»[94]։

Մագիստրատն, անտարակույս, բավարար հիմքեր ուներ նման երկյուղ կրելու և շուտով իրադարձությունները բորբոքում են նոր բողոքներ ու հակամարտություններ։ Այս անգամ արդեն Ղրիմ էին ուղում անցնել Նախիջևանին մերձակա հայկական երեք գյուղերի՝ Մեծ Սալայի, Ղրիմի և Ջալգրի բնակիչները։ Սրանք փորձում են օգտվել կայսրության մեջ նոր մարդահամարի վերաբերյալ 1811 թվականի մայիսի 18-ին ընդունված մանիֆեստից և տեղափոխվել Ղրիմ, համառում են ռևիզիական (հաշվեհամարային) ցուցակներ կազմելիս ու, ինչպես Դյուկ դե-Ռիշելյոյին գրում էր Տաղանրոգի քաղաքապետը, «անհնազանդություն ցույց տալիս տեղական իշխանությանը։ Մյուս երկու գյուղերից հավաքվելով Ղրիմ գյուղը, նրանք աղմուկ-աղաղակով սպառնում են թե նրանց, ովքեր չեն համաձայնվի Տավրիկիա տեղափոխվել, և թե նրանց, ովքեր կփորձեն համոզել իրենց՝ տալու ռևիզիական ցուցակները»[95]։ Դրությունն այնքան լուրջ է դառնում, որ 1811 թվականի օգոստոսի 6-ին և 9-ին կատարվածի մասին Տաղանրոգի քաղաքապետը հաղորդում է անձամբ Բագավորին, իսկ ինքը զինված ջոկատով մեկնում է հայկական գյուղերը՝ «ծագած խռովությունը ճնշելու»[96]։ Այդ խռովությանը առիթ էր տվել այն լուրը, որ իբր թե նախիջևանցիներին ազատ գրանցում են Ղրիմում[97]։ Բնականաբար, այդպիսի թույլտվության դեպքում տեղափոխվել ցանկացողների շարքերը շարունակ կստվարանային։ Նման դեպքերը կանխելու նպատակով քաղաքապետը Դյուկ դե-Ռիշելյոյից խնդրում էր կարգադրություն անել Ղրիմից Նախիջևան «արտաքսելու նշված 729 հոգուն և անօրինական կերպով Ղարասուբազարի և Հին Ղրիմի քաղաքային ռատուշաների գրանցած 11 ընտանիքները»[98]։ Իրենց հերթին Դյուկ դե-Ռիշելյոյին են դիմում նաև նշված գյուղերի բնակիչները։ Հավատարմատար Հովհաննես Մինասովի միջոցով նրանք ներկայացնում են տեղափոխվել ցանկացողների ցուցակները և աղերսում ընդառաջ գնալ իրենց խնդրանքին։ Բողոքելով իրենց տընտեսական ծանր վիճակից, նրանք ընդգծում էին, թե Ռոստովի

94 Մատենադարանի արխիվ, Լազարյանների ֆ., թղթ. 102, գ. 4 (հ. 6), վավ. 180։

95 Одесский обл. архив, ф. 1, оп. 221, 1805 г., д. 2, л. 103 с об.

96 Նույն տեղում։

97 Նույն տեղում, թ. 104։

98 Նույն տեղում։

գավառում իրենք չեն կարող հոգալ ամենակենսական պահանջները և վճարել պետական հարկերը, այնինչ Ղրիմում կզբաղվեն իրենց համար սովոր և ավյալ երկրամասին հատուկ առևտրով, արհեստներով[99]։ Գրավոր խնդրանքներին զուգընթաց գյուղացիները դիմում են նաև գործնական քայլերի. նրանք գաղտնի կերպով կազմում են ռևիզիական ցուցակներ և հավատարմատարների միջոցով ուղարկում Ղրիմ[100]։

Հուլիսի 31-ի հիշյալ նիստում, նկատի ունենալով Նոր Նախիջևանի մագիստրատի և Ղրիմի իշխանությունների իրարամերժ պահանջները, սենատը գտնում է, որ հայերի Ղրիմում մնալու կամ Նախիջևան վերադառնալու նպատակահարմարության հարցը պատշաճ կերպով ուսումնասիրված չէ և Դյուկ դե-Ռիշելյուին հանձնարարվում է Տագանրոգի քաղաքապետի միջոցով ճշտել, թե հաշվեհամարի համաձայն որքան բնակիչներ են գրանցված Նոր Նախիջևանում և արդյոք ճիշտ են հայերին Հին Ղրիմում չթողնելու մասին նրանց բերած փաստարկները. պարզել Հին Ղրիմում մնալ ցանկացող խնդրատուների ներկա վիճակը՝ նրանց թիվը, սեփական տների քանակը, զբաղմունքը, վարձով ապրողների թիվը, ինչով են նրանք պարապում։ Այս տվյալների հիման վրա, նկատի ունենալով երկու քաղաքների զարգացման շահերը, պահանջվում էր համապատասխան կարծիք ներկայացնել սենատին[101]։

Այս պահանջի համաձայն Դյուկ դե-Ռիշելյոն կարծիք է մըտցընում սենատ՝ 550 հոգի նախիջևանցիների Հին Ղրիմում թողնելու մասին[102]։ Սրանք միայն Հին Ղրիմում գտնվողներն էին։ Ըստ Նոր Նախիջևանի մագիստրատի 1811 թվականի հոկտեմբերին ներկայացրած անվանական ցուցակի, ամբողջ Տավրիկյան նահանգում նրանց թիվը հասնում էր 735-ի[103], իսկ Տավրիկյան նահանգապետի տվյալներով՝ 712 հոգու[104]։ 1812 թվականի մայիսի 22-ին Դյուկ դե-Ռիշելյոն առաջարկում է սրանց բոլորին թողնել Ղրիմում։ Սակայն կառավարիչ սենատը հարցին կրկին վերջնական լուծում չի տալիս և նույն թվականի հուլիսի 5-ի հրամանով Դյուկ դե-Ռի-

99 Նույն տեղում, թ. 105։

100 ЦГИА СССР, ф. 1263, оп. 1, д. 23, л. 167 об.

101 Одесский облархив, ф. 1, оп. 221, 1805 г., д. 2, л. 91—95.

102 Մատենադարանի արխիվ, Լազարյանների ֆոնդ, թ. 102, գ. 4 (հ. 6), վ. 180։

103 Крымоблархив, ф. 67, оп. 1, д. 58, л. 11.

104 Одесский облархив, ф. 1, оп. 221, 1805 г., д. 2, л. 152 об.

շելյոյից լրացուցիչ տվյալներ է պահանջում[105]։ Սենատի այս պահանջը հիմնված էր Տագանրոգի քաղաքապետի կառավարությանը ներկայացրած զեկուցագրի վրա, որտեղ ցույց էր տրված, թե 1811 թվականի մարդահամարը Նոր Նախիջևանում ընկալել են յուրովի, այնպես, որ իբր թե ով ուր ցանկանա՝ կարող է տեղափոխվել, և սկսել են մասսայական ձգտում ցուցաբերել Ղրիմ տեղափոխվելու համար[106]։ Այսօրինակ խնդիրները, որ առաջանում էին պարբերաբար, շարունակ ձգձգում էին հարցի լուծումը, որի առթիվ արդեն կուտակվել էր բյուրոկրատական փաստաթղթերի հսկայական մի կույտ։ Միայն Նախիջևանի մագիստրատի բողոքները կազմում էին ավելի քան 1000 թերթ[107]։

1814 թվականի օգոստոսին հարցը, վերջապես, ստանում է իր լուծումը։ Օգոստոսի 31-ին կառավարիչ սենատը, լսելով այս հարցը, Դյուկ դե Ռիշելյոյի անունով ընդունում է հետևյալ հրամանը[108]. Հին Ղրիմում թողնել 212 նախիջևանցի հայ ընտանիքներ, նրանց դուրս գրել Նոր Նախիջևանից և ներկա 6-րդ հաշվեհամարի ժամանակ գրանցել Հին Ղրիմում։ Իր այս վճռին սենատը տալիս էր այն հիմնավորումը, թե ա) հայերը 1805 թվականից ի վեր խնդրում են իրենց վերագրանցել Հին Ղրիմում, սակայն մերժում են ստացել բացարձակապես Նոր Նախիջևանի համայնքի համառելու պատճառով, որը չի համաձայնվում նրանց թույլտվություն տալ, չնայած որ նրանք, բացառությամբ 32 ընտանիքի, Նոր Նախիջևանում չունեն ոչ տուն, ոչ կրպակներ և ոչ էլ նստակեցության հետ կապված որևէ այլ բան. բ) այս հայերի վրա չի կարելի տարածել կառավարիչ սենատի 1805 թվականի մարտի 31-ի և 1806 թվականի սեպտեմբերի 18-ի հրամանների ընդհանուր կանոնները՝ մեշչանների նահանգից նահանգ տեղափոխելու և մինչև հաջորդ հաշվեհամարը նրանցից կրկնակի հարկեր գանձելու վերաբերյալ, քանի որ հայերը, նրանց շնորհված հրովարտակով, հարկեր են մուծում ոչ թե ըստ շնչի, այլ ըստ ծխերի. ինչ վերաբերում է պետական և հասարակական հարկերի գծով նախիջևանում նրանց ունեցած 6.779 ռուբլի 44 կոպ. պարտքերին, ապա հրամայվում էր դրանք գանձել նրանցից։ Նշված 212 ընտանիքները, թեև տարիներ ի վեր հաստատվել էին Ղրիմում, բայց 1795 թվականի հաշվեհամարով

105 Նույն տեղում, թթ. 174—179։

106 Նույն տեղում, թ. 174բ։

107 Մատենադարանի արխիվ, Լազարյանների ֆ., թ. 102, գ. 4 (հին 6), վ. 174։

108 Крымоблархив, ф. 67, оп. 1, д. 143, л. 2 с об.

գրանցված էին Նոր Նախիջևանում։ Բացի այդ, սենատը հրամայում էր Հին Ղրիմում թողնել նաև 22 ընտանիքներ, որոնք 1778 թվականի արտագաղթից հետո եկ էին վերադարձել Ղրիմ, ունեին իրենց տնտեսությունները, բայց 1795 թվականի հաշվեհամարով Նոր Նախիջևանում գրանցված չէին։ Միաժամանակ սենատը կարգադրում էր ինքնակամ կերպով, առանց անձնագրի, Ղրիմ տեղափոխված ընտանիքներին եկ ուղարկել Նոր Նախիջևան[109]։

Ի կատարումն սենատի այս հրամանի՝ Տավրիկիայի նահանգական կառավարության գործադիր էքսպեդիցիան 1815 թվականի հուլիսի 8-ին որոշում է հանձնարարել Թեոդոսիայի ստորին զեմստվային դատարանին՝ Հին Ղրիմում գրանցվելու համար թույլ տրված նախիջևանցիների ցուցակի համեմատ ստուգել, թե այդ ցուցակում նշվածներից այժմ փաստացի կերպով ովքեր են Հին Ղրիմում բնակվում և ովքեր՝ ոչ, և եթե ոչ, ապա նրանք ո՞ր քաղաքում կամ գավառում են ապրում. Հին Ղրիմում և Թեոդոսիայի գավառում գտնվող նախիջևանցի հայերից գանձելով ապառիկային դրամները, դրանք ուղարկել Նախիջևանի մագիստրատ։ Քաղաքային ոստիկանություններին, ստորին զեմստվային դատարաններին և Հին Ղրիմի հայկական քաղաքային ռատուշային իջեցնելով կառավարիչ սենատի հրամանի համաձայն Նախիջևան եկ ուղարկելու ենթակա փախստական հայերի ցուցակները, գործադիր էքսպեդիցիան իր որոշմամբ նրանցից պահանջում էր իրենց իրավասության տակ գտնվող այդպիսի հայերից նախ գանձել ապառիկային պարտքերը, ապա առանց որևէ պատճառաբանություն ընդունելու նրանց Ղրիմից վտարել Նոր Նախիջևան և այս բոլորի մասին զեկուցել նահանգական կառավարությանը[110]։

Ղրիմում անհամեմատ ավելի շատ նախիջևանցի հայեր մնացին, քան սենատի հրամանով նշված 234 ընտանիքներն էին։ Նյութերի բացակայության պատճառով այժմ դժվար է ասել, թե իշխանություններին արդյո՞ք հաջողվեց եկ ուղարկել այն նախիջևանցիներին, որոնք Ղրիմ էին անցել առանց անձնագրերի։ Մի բան, սակայն, ակներև է, որ Ղրիմը ռուսական կայսրության մեջ մտնելուց հետո տեղի հայ գաղութի վերսկզբնավորման մեջ նշանակալից էր Նախիջևանից այստեղ տեղափոխված ընտանիքների, այսինքն բուն ղրիմահայերի դերը։ Այդ դերը չէր որոշվում նրանց քանակով։ Ամենից առաջ այն հանդում էր գաղութի վերականգնման ասպարեզում նրանց ցուցաբերած առաջնակ նախաձեռնությանը։

109 Крымоблархив, ф. 67, оп. 1, д. 143, л. 2 об.
110 Նույն տեղում։

* * *

XIX դարի սկզբներից ղրիմահայերի շարքերը սուվարանում են նաև գրիգորիոպոլցիների հաշվին։ 1802 թվականի հունվարի 30-ին կառավարիչ սենատին տրված բարձրագույն հրամանը, նկատի ունենալով Գրիգորիոպոլի անհարմար դիրքը առևտրի և արհեստագործության զարգացման համար, այնտեղի հայերին թույլ էր տալիս գաղթել Ղրիմ, Նոր Նախիջևան և առհասարակ ուր որ նրանք ցանկանան։ Այս հրամանից օգտվել են ուշում ամենից առաջ 1793 թվականին Գրիգորիոպոլից Նոր Նախիջևան տեղափոխված 36 հայ ընտանիքները, որոնք այնտեղ էին հետացվել «դնեպր արտասահման նրանց փախուստը կանխելու և Գրիգորիոպոլում ապրող նրանց ազգակիցների միջև խաղաղություն հաստատելու համար»[111]։ Աղքատ ու զծգոհ այս ընտանիքներին լռեցնելու համար իշխանությունները Նոր Նախիջևանում նրանց նկատմամբ մշտական հսկողություն սահմանելու հետ մեկտեղ ցույց են տալիս նյութական որոշակի օգնություն։ Սրանց պարենամթերքով ապահովելու համար պետական գանձարանից գումար տրամադրելուց բացի, 7083 ռուբլի էլ հատկացվում է տներ կառուցելու և տնտեսություններ հիմնելու համար[112]։ Նրանք ազատված էին ընդհանուր պարհակներից և պետությունից ստացած գումարները վերադարձնելուց։ Եվ չնայած դրան, «նրանք տառապում են ծայրահեղ աղքատության մեջ և ձգտում են, ինչպես սրանից առաջ էլ բազմիցս փորձել են, փախչել Գրիգորիոպոլ և Ղրիմ, ուր արդեն տարբեր ժամանակներում գնացել են 17 հոգի», —գրում էր Նովոռոսիայի քաղաքացիական նահանգապետը ներքին գործերի մինիստր կոմս Վիկտոր Պավլովիչ Կոչուբեյին 1802 թվականի նոյեմբերի 7-ին[113]։ 1802 թվականին Նախիջևանում մնացած գրիգորիոպոլցիները՝ 81 հոգի, խնդրում էին թույլ տալ իրենց տեղափոխվելու Ղրիմ, իսկ 12 հոգի՝ Գրիգորիոպոլ[114]։ Ներքին գործերի մինիստրից խնդրելով միջնորդել նրանց Ղրիմ տեղափոխվելու թույլտվության համար, նահանգապետը ընդգծում էր, թե Նախիջևանում սրանք «չեն կարողացել որևէ կարողություն ձեռք բերել» և այնպիսի ծայրահեղության են հասել, որ իրենց կերակրելու և ոչ մի միջոց չունեն։ Ինքը՝ նահանգա-

111 ЦГИА СССР, ф. 383, оп. 29, д. 188, л. 1 об.
112 Նույն տեղում, թ. 2։
113 Նույն տեղում, թ. 2 բ։
114 Նույն տեղում։

պետն էլ, համամիտ էր խնդրատու դրիգորիոպոլցիների հետ, որ «աղքատության հետևանքով նրանք չեն կարող զբաղվել առևտրով, իսկ պտղատու և խաղողի այգիներ, որոնց աճեցնելու մեջ նրանք բավականին հմտություն ունեն, Նոր Նախիջևանում չկան, մինչդեռ Ղրիմում, որտեղ այս բնագավառը ծաղկուն վիճակում է, նրանք հույս ունեն ձեռք բերել անհրաժեշտ ապրուստ»[115]։

Նոյեմբերի 26-ին Վ. Պ. Կոչուբեյը տեղյակ է պահում Նահանգապետին, որ թագավորը թույլ է տվել դրիգորիոպոլցի հայերին Նոր Նախիջևանից տեղափոխվել Ղրիմ[116]։ Նահանգապետն իր հերթին այդ մասին հայտնում է Նոր Նախիջևանի մագիստրատին և Ղրիմի քաղաքացիական իշխանություններին[117]։ Բավականին մեծ դժվարություններով, որոնք հիմնականում կապված էին ճանապարհածախսերի հետ, դրիգորիոպոլցիների տեղափոխումը Ղրիմ հաջողվում է։ Նրանք հիմնականում հաստատվում են Ղարասուբազարում և մտնում տեղի քաղաքային ռատուշայի և ոչ թե հայ կաթոլիկ դատարանի իրավասության տակ, ինչպես այդ նախապես ենթադրվում էր[118]։

* * *

Չնայած Նոր Նախիջևանից Ղրիմ հայերի կատարած վերաբնակեցմանը, այնուհանդերձ, XIX—XX դարերում ղրիմահայության մեջ գերակշիռ թիվ էին կազմում ոչ թե նրանք, այլ Արևմտյան Հայաստանից և Թուրքիայի զանազան քաղաքներից ու շրջաններից տարբեր ժամանակներում մասսայաբար կամ առանձին ընտանիքներով Տավրիկիա գաղթած հայերը։

Հայերը Արևմտյան Հայաստանից և թուրքական շրջաններից հեռանում էին տնտեսական ու քաղաքական այն ծանր պայմանների և հետապնդումների պատճառով, որոնք տարեցտարի գնալով ավելի էին սաստկանում։ Այս տեսակետից բնորոշ է Ռուսաստանի ներքին գործերի մինիստրին Ամասիայի բնակիչ Հովհաննես Հարությունի Իլինկիրյանի 1811 թվականի ապրիլին գրած դիմումը, որտեղ նա, կարծես թե ամփոփելով իր նման հաղարավոր արևմտահայերի մտայնությունը, գրում էր. «Հայտնի է Ձերդ գերազանցությանը, որ թուրքական տիրապետության տակ գտնված և այժմ էլ գտնվող հայերը, կեղեքված այդ ծանր լծի տակ, ձգտել և հիմա էլ ձգտում են ազատվել նրա (Թուրքիայի— Վ. Մ.) իշխանությունից,

115 Նույն տեղում, թ. 1ա, բ։
116 Նույն տեղում, թ. 4։
117 Նույն տեղում, թ. 5։
118 Крымоблархив, ф. 179, оп. 1, д. 59, л. 25 с об.

որպեսզի իրենց համար գտնեն հուսալի կառավարություն ու հանդիստ այլ պետություններում և բուն մեծի մասին Ռուսաստանում»[119]։

Պատմական իրողությունն այնպիսին էր, որ Ռուսաստանի ժողովուրդների համար բանտ դարձած ինքնակալական կարգերը, ճորտատիրության ամենադաժան պայմանների պահպանությամբ հանդերձ, զգալի արտոնություններ էին շնորհում օտարերկրյա գաղթականներին, այդ թվում նաև հայերին։ Այս քաղաքականությունն, անշուշտ, ընդհանուր ոչինչ չուներ օտարահպատակ քրիստոնյաների հանդեպ ռուսական թագավորների «փրկարար» դերի մասին ազնվականական պատմագրության տարիներ շարունակ թմբկահարած կեղծիքի հետ։ Դա պարզապես թելադրվում էր Ռուսաստանի և, հատկապես, մոտիկ անցյալում նրան միացած նահանգների տնտեսական զարգացման և այդ շրջանների բնակեցման անհրաժեշտությամբ։

Հայերի՝ Թուրքիայից Ղրիմ գաղթելը կապված էր նաև առևտրի, արհեստագործության, այգեգործության և շերամապահության զարգացման համար թերակղզու հարմար դիրքի հետ։ Թուրքիայից Ղրիմ գաղթելու գաղափարին հավանություն էր տալիս և դրա իրականացմանը հնարավորին չափ նպաստում էր Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը։ 1790-ական թվականներին այս կամ այն տիպով իշխանություններին արած իր դիմումներում նա անընդհատ շոշափում էր Թուրքիայից եկած և առաջիկայում գալ նախապատրաստվող հայերին Ղրիմում առանձին բնակավայրեր և հողեր հատկացնելու հարցերը։ 1794 թվականին նրան են դիմում ավելի քան 200 ընտանիք Թուրքիայից եկած և Ղարասուբազարում հաստատված հայեր՝ Թեոդոսիայի մի մասը և Հին Ղրիմը իրենց բնակության տալու համար թույլտվություն ստանալու խնդրանքով[120]։ Մենք արդեն տեսանք, որ այս թույլտվությունը ստանալու անհրաժեշտությունը Հ. Արղությանը հիմնավորում էր նաև իր ձեռքի տակ ունեցած այն ուժերով, որոնց համաձայն շուտով Ղրիմ էին գաղթելու մեծ թվով հայեր այլ երկրներից և մանավանդ Թուրքիայից[121]։

Եվ իրոք, 1800 թվականի հոկտեմբերի 21-ին Կոստանդնուպոլսի հայերից մեծ թվով ընտանիքներ դիմում են Ախտիյարի (Սևաստոպոլի) նավահանգստի մաքսատան դիրեկտոր հայազգի Տարաս

119 ЦГИА СССР, ф. 398, оп. 81, д. 1016, л. 1.
120 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 139, ց. 1, գ. 1465, թ. 54։
121 Նույն տեղում, թ. 66։

Իվանովիչ Այվազովին, խնդրելով նրա միջնորդությունը իշխանությունների առաջ՝ Ղրիմ տեղափոխվելու թույլտվություն ստանալու վերաբերյալ[122]։ Պատահական չէր, որ հայերը դիմել էին սրա միջնորդությանը։ Այվազովը այն աչքի ընկնող մարդկանցից էր, որոնք շոշափելի մասնակցություն էին ցուցաբերել 1787—1791 թվականների ռուս-թուրքական պատերազմից հետո թուրքական շրջաններից հայերին Դնեստրի այս կողմը տեղափոխելու գործում[123]։

Իշխան Գ. Գագարինին, ինչպես նաև նահանգապետ Ի. Ի. Միխելսոնին 1801 թվականի փետրվարի 20-ին ուղղած իր համանման բովանդակությամբ դիմումի մեջ[124] Այվազովը գրում էր. «իմ հայրենակիցները, Կոստանդնուպոլսի հայ հասարակությունը, տեղյակ լինելով հայերին թուրքական շրջանից Դնեստրի այս կողմը բնակեցնելու մեջ ունեցած իմ հաջողություններին, այժմ հատուկ այդ նպատակով 1800 թվականի հոկտեմբերի 21-ին այստեղ ինձ մոտ ուղարկված Բազդասար Ազնաուր օղլու միջոցով գրում են, թե Ռուսաստանում բնակվող իրենց ազգակիցների օրինակով նրանք ևս ոչ քիչ թվով ընտանիքներով ցանկանում են մտնել ռուսաց օգոստոսափառ կայսեր հովանավորության տակ»[125]։ Ցանկություն հայտնելով հաստատվելու Ղրիմում, պոլսահայերը Տ. Այվազովին և Ազնաուր օղլուն էին թողել այնտեղ իրենց համար բնակավայրի ընտրության նախաձեռնությունն ու իրավունքը։ Տ. Այվազովը միաժամանակ Գ. Գագարինին հայտնում էր, որ գաղթողները Ղրիմում զբաղվելու են առևտրով, մեղաքյա և բամբակյա կտորեղենի ձեռագործությամբ, շերամապահությամբ։ Այս վերջին հանգամանքը նկատի ունենալով՝ Տ. Այվազովը նպատակահարմար էր գտնում գաղթող հայերին բնակության տեղ տալ Թեոդոսիայում և ապահովել անհրաժեշտ քանակությամբ հողերով ու անտառներով[126]։ Գաղթել ցանկացողների խնդրանքին համապատասխան, Տ. Այվազովը միջնորդում էր նրանց վրա տարածել այն բոլոր արտոնությունները, որ ռուսական միապետները ժամանակին շնորհել են հայերին[127]։ Փաստաթղթերից հետևում է, որ պոլսահայերին թույլ է տրվել տեղափոխվել Ղրիմ։ Ի. Ի. Միխելսոնի ներկայացրած զեկուցագրի կապակցությամբ Ալեքսանդր I-ը կառավարիչ սենատին կարգադրում է քննարկել այդ հարցը և հարցել հայերի խնդրանքը[128]։

Միշտ չէ, որ հայերի Թուրքիայից Ղրիմ տեղափոխվելուն հաջորդում էր նման գրագրություն։ Հաճախ առևտրով ու արհեստագործությամբ զբաղվելու նպատակով գալով Ղրիմ, հայերը այնուհետև չէին հեռանում այնտեղից և հետագայում խնդրում թույլտվություն՝ ռուսահպատակություն ընդունելու համար։ Ամասիայի վիճակի առաջնորդ Աբրահամ արքեպիսկոպոսը 1816 թվականի սեպտեմբերի 8-ին հատուկ գրությամբ խնդրում էր Մանվել վարդապետից Ամասիայի բոլոր հայերին «որք տասն կամ տասնևհինգ և մանաւանդ քան ամաւ իսկ այդ երկիր (իմա Ղրիմում— Վ. Մ.) թափառեն, առ ի պաշտպանել զաստուածադիր օրէնս՝ հրաման յարքունական հանեալ իբր յաքսորս մղեսցես զնոսա յերկիր իւրեանց»[129]։ Վիճակի առաջնորդի խնդրանքը վերաբերում էր այն հայերին, որոնք Ամասիայում թողել էին իրենց ընտանիքները. սրանց էր, որ նա պահանջում էր ետ ուղարկել և ոչ թե առհասարակ բոլոր ամասիացիներին։

Թուրքիայից Ղրիմ հայերի տեղափոխությունները, որ դարերի տրադիցիա ունեին և նոր թափ էին ստացել հատկապես Ղրիմը Ռուսաստանին միացնելուց հետո, չավարտվեցին միայն միացմանը հաջորդած 2—3 տասնամյակներով. դրանք պարբերական բնույթ էին ընդունել ամբողջ XIX դարում և XX դարի առաջին տասնամյակում, ընդհուպ մինչև առաջին համաշխարհային պատերազմը։

1820 թվականին Թուրքիայում հայ կաթոլիկների նկատմամբ ուժեղացվող հետապնդումների պայմաններում բացվում է Թեոդոսիա քաղաքը նրանցով բնակեցնելու լայն հեռանկար։ Կաթոլիկ հայերի հավատարմատարների տվյալներից ելնելով՝ պիտի նշենք, որ Կ. Պոլսում և փոքրասիական քաղաքներում՝ Եվդոկիայից մինչև Անկարա, Անկարայից՝ Տրապիզոն, Էրզրումից մինչև Դիարբեքիր բնակվող «15—20 հազար հայ կաթոլիկ ընտանիքները... փնտրում էին նոր հայրենիք»[130]։ Սրանց մեծամասնության հայացքները ուղղվում են դեպի Թեոդոսիա, «որտեղ ապրում էին նրանց հայրենակիցները»։ 1820 թվականի սկզբներին գաղթի դիմող այս հայության գլխավոր հանձնարարականները ձեռքներին Թեոդոսիայի քա-

122 ЦГИА СССР, ф. 13, 1801 г., оп. 1, д. 28, л.л. 4—5.
123 Նույն տեղում, թ. 4։
124 Նույն տեղում, թթ. 1—4։
125 Նույն տեղում, թ. 4։
126 Նույն տեղում, թ. 4բ։
127 Նույն տեղում։
128 Նույն տեղում, թ. 3։
129 Մատենադարանի արխիվ, ֆ. կաթողիկոսական դիվան, թղթ. 29, վ. 73։
130 Архив внешней политики России, ф. Главный архив П-19, 1820 г., д. 1, л. 5 об.

զաբապետի մոտ են գալիս նրանց հավատարմատարները։ Վերջիններիս ներկայացրած նամակներից և նրանց իսկ ասելուց հետևում էր, որ կաթոլիկ հայերը Թուրքիայից հեռանում էին ոչ միայն թուրքական իշխանությունների, այլև լուսավորչական հայ կղերի հետապնդումների պատճառով[131]։ Նախքան հայրենիքը թողնելու և իրենց ունեցվածքն ու տնտեսությունը տեղափոխելու մասին վճիռ ընդունելը, նրանք փորձում են կառավարությունից ստանալ երաշխիք, բաղաքական հովանավորության նման մի բան, որը իրենք կկարողանային օգտագործել՝ գաղթի ժամանակ ծագած դժվարությունների դեպքում[132]։ Պարզ ասած՝ հայ կաթոլիկները նախապես գիտակցում էին, որ այսքան մեծ քանակությամբ բնակչության արտագաղթը կհանդիպի թուրքական իշխանությունների արգելքներին, ուստի և ցանկանում էին գործը այնպես գլուխ բերել, որ իրենց տեղափոխության նախաձեռնության և բուն ընթացքի մեջ գործուն մասնակցություն ցուցաբերեին ռուսական կառավարությունն ու Կոստանդնուպոլսի նրա դեսպանը։

Թեև հայ կաթոլիկների այս գաղթը դեպի Ղրիմ տեղի չունեցավ, սակայն նրա շուրջը ծագած պաշտոնական գրագրությունը վերին աստիճանի հետաքրքիր է այն առումով, որ բացահայտում է հայերի Ղրիմ տեղափոխվելու և թե նրանց այդ քայլը խրախուսելու նպատակով ռուսական իշխանությունների ցուցաբերած շահագրգռության շարժառիթները։

Գաղթել ցանկացող կաթոլիկ հայերի նամակներն ու դիմումները ուղղված էին Թեոդոսիայի քաղաքապետ գաղտնի խորհրդական էնգելին։ Դրանց հիման վրա 1821 թվականի մարտի 22-ին էնգելը ներքին գործերի մինիստրության կառավարչին է ներկայացնում ընդարձակ մի զեկույց՝ «Նկատառումներ Թեոդոսիա քաղաքի բնակչության բազմացման և այնտեղ թուրքական շրջաններից կաթոլիկ դավանանքի հայերի վերաբնակեցման մասին» վերտառությամբ։ Նա այդ զեկույցի մեջ զարգացնում է իր տեսակետները խնդրառու հայ կաթոլիկ ընտանիքներին անպայման ընդառաջելու մասին։ Եվ որովհետև քաղաքապետի կարծիքում արտահայտություն է գտել այն ժամանակ ռուսական կառավարող շրջանների ընդհանուր մտայնությունը, ապա տեղին է հանգամանորեն կանգ առնել այդ փաստաթղթերի վրա։

131 Նույն տեղում, թ. 5։
132 Նույն տեղում, թ. 5բ։

«Այժմ ստեղծվել է անսպասելի երջանիկ մի վիճակ,— սկսում էր իր զեկույցը քաղաքապետը,—որը կարող է ամբողջությամբ փոխել Թեոդոսիայի դեմքը և նրա արագ զարգացման համար բացել փայլուն հեռանկար»։ Այդ հեռանկարը Ղրիմի գործերին տեղյակ էնգելը կապում էր ստեղծված այն վիճակի հետ, որ Թուրքիայի «հայ կաթոլիկները, որոնք ճնշված են ու հալածված՝ մի կողմից հայ լուսավորչականներից, մյուս կողմից՝ մահմեդականներից, հուգենոտների նման ցանկանում են դուրս բերել իրենց արդյունաբերությունն ու կապիտալը օտար երկիր և հյուրընկալ երկրում փրկել իրենց գլուխները, ընտանիքներն ու իրենց պապերի հավատը»[133]։ Մտահոգված Թեոդոսիայի զարգացմամբ, որը թեև հայաստարարվել էր պորտո-ֆրանկո (բաց նավահանգիստ), բայց շարունակում էր մնալ անմխիթար վիճակում, էնգելը գտնում էր, որ պետք է օգտվել «հարևանների սխալներից» և «Թեոդոսիա տեղափոխվելու համար պիտանի մի ժողովրդի կողմից արած դիմումը, թվում է, թե բոլոր նկատառումներով արժանի է կառավարության ուշադրությանը և [արժե գնալ] մի քանի աննշան զոհողությունների, որոնք գուցե առաջ գան և որոնք կհատուցվեն առավել չափով, քան այդ կարելի է պատկերացնել»[134]։

Քաղաքապետի առաջարկները, որոնց համար առաղձ էին ծառայել կաթոլիկ հայերի նամակներում ամփոփված խնդրանքները, պիտի հանգեին հետևյալ արտոնություններին ու պայմաններին. ամենից առաջ Թեոդոսիա գաղթող հայ կաթոլիկներին թույլ կտրվի, առանց մաքս վճարելու, իրենց հետ բերել ողջ ունեցվածքը, հագուստը, ամեն տեսակի զոհարեղենը և այլն։ Արհեստավորներն ու ֆաբրիկանտները կարող են անվճար կերպով տեղափոխել գործիքները, հաստոցները, բոլոր իրերը։ Հնարավոր է, որ լինեն դեպքեր, երբ գաղթողը ճանապարհ ընկնի իր ունեցվածքից առաջ կամ, ընդհակառակը, ունեցվածքը ուղարկի իրենից առաջ։ Առաջին դեպքում գաղթողին երաշխիք տալ իր հասնելուց հետո 8 ամսում նրան իր ապրանքները վերադարձնելու մասին, իսկ երկրորդ դեպքում՝ ապրանքները պահել մաքսատանը մինչև տիրոջ հասնելը։ Երկրորդ, ռուսահպատակություն ընդունելուց հետո գաղթողները օգտվելու են այն բոլոր իրավունքներից, որպիսիք ունեն Ղարասուբազարի հայ կաթոլիկները։ Գաղթողները կկազմեն մի առանձին համայնք՝ «Թեոդոսիայի հայ կաթոլիկական համայնք» անվան տակ։ Երրորդ,

133 Նույն տեղում, թ. 5ա։
134 Նույն տեղում, թ. 5ա, բ։

այդ համայնքի մեջ մտնող ամեն ոք, համայնքին անդամագրվելու ժամանակից սկսած, 5 տարի ժամկետով ազատվում է քաղաքապետարանին ամեն տեսակի հարկեր վճարելուց։ Չորրորդ, եկողներին ընդունելու և տեղավորելու նպատակով ստեղծվում են երեք խնամակալներ, որոնցից երկուսին նշանակում է քաղաքապետը, իսկ մյուսին՝ քաղաքի հայ կաթոլիկ համայնքը[135]։

Քաղաքապետի կարծիքով նշված պայմանների առկայության դեպքում «Թեոդոսիայի կաթոլիկ հայերը մի րոպե անգամ չեն հապաղի գաղտնի կապ հաստատելու Անատոլիայում գտնվող իրենց բարեկամների ու ծնողների հետ։ Այսպիսի պայմաններում ներգաղթը կսկսվի անմիջապես, առանց մեծ ջանքերի»[136]։ Այսպիսով, քաղաքապետը ոչ միայն ընդառաջ էր գնում հայերի խնդրանքին, այլև միտում էր ավելի բորբոքել այն, ոտքի բարձրացնել Թուրքիայում ապրող բոլոր հայ կաթոլիկներին։ Նա նշում էր նաև հարցի լուծման գործնական ուղիները։ Նա գտնում էր, օրինակ, որ Ղրիմի հետ առևտուր անող բազմաթիվ թուրքական նավեր կստանձնեն հայերի տեղափոխման գործը։ Ամենից առաջ խնդիր է դրվում օգտագործել Տրապիզոնի դերերեյ Բոհադիր-օղլուն, որին պատկանում էին բազմաթիվ նավեր և որը Ռուսաստանում ունեցած իր վատ համբավը ցրելու համար կհրապուրվեր այդ ձեռնարկով[137]։

Այսպիսի մեծածավալ գաղթի կազմակերպման համար քաղաքապետը գործնական միջոցներին զուգընթաց առաջարկում էր նախաձեռնել քաղաքական լուրջ գործունեություն։ «Տրապիզոնի ֆրանսիական դեսպան Մսյո Դյուպրեն նույնպես այս պայմաններում կարող է մի քանի ծառայություններ մատուցել,— գրում էր Էնգելը։— Կոստանդնուպոլսում մեր դեսպանի համագործակցությունը էական է։ Նա պետք է կարողանա, ի միջի այլոց, օգտագործել հալածանքները՝ առաջադրված նպատակին հասնելու համար։ Թուրքական կառավարությանը չգրգռելու համար, որքան հնարավոր է, պետք է ձգձգել Կ. Պոլսի կաթոլիկ հայերի փախուստը, որը հետագայում միշտ էլ կարելի է անել, և, ընդհակառակը, պետք է արագացնել մայրաքաղաքից հեռու բնակած քաղաքների բնակչության մեկնումը[138]»։ Ավելի մեծ քանակությամբ հայ կաթոլիկների ոտքի հանելու նպատակով, Էնգելը առաջարկում էր օգտագործել «քա-

135 Նույն տեղում, թ. 6ա, բ։
136 Նույն տեղում, թ. 6բ։
137 Նույն տեղում, թ. 7ա։
138 Նույն տեղում։

հանաներին՝ գաղթի շուրջը ագիտացիա մղելու համար, որովհետև չունենալով հասարակական պաշտոններ, վերջիններս կարող են վատահություն ներշնչել հայերին[139]։ Միաժամանակ նա պահանջում էր Թեոդոսիայի քաղաքապետի, այսինքն իր տնօրինության տակ դնել որոշակի գումար՝ նավապետին և առհասարակ որևէ ձևով այս գործին ծառայություն մատուցած անձանց պարգևատրելու համար[140]։

Դժվար չէ կռահել, որ այս տողերի հեղինակը և, ամենայն հավանականությամբ, նրան գործակից Թեոդոսիայի հայ կաթոլիկներից առանձին երևելիներ նախապես անմասնակից չեն եղել Թուրքիայում բնակվող կաթոլիկ հայերի եռանդը այս ուղղությամբ շարժելու գործին։

Չնայած երկրամասի տնտեսական զարգացման համար կաթոլիկ հայերի մասսայական այդ գաղթից ակնկալվող լավագույն հեռանկարին, ռուսական կառավարությունը և անձամբ ինքը՝ Ալեքսանդր I-ը, մեծ զգուշություն են ցուցաբերում այս խնդրում՝ պարզապես չսրելու համար հարաբերությունները սուլթանական Թուրքիայի հետ։ Թեոդոսիայի քաղաքապետի նշված միջնորդագրությունը առիթով Ալեքսանդր I-ը կարգադրում է կաթոլիկ հայերին թույլ տալ գաղթելու Ղրիմ ճիշտ այն հիմունքներով, ինչպիսիք տրվում են օտարերկրյա բոլոր գաղթականներին։ Սակայն Կոստանդնուպոլսի ռուսական միսիան «այս գործում բոլորովին և ոչ մի մասնակցություն չպիտի ունենա»։ Միաժամանակ ինքնակալը քաղաքապետին ևս կարգադրում էր «այս հարցում ոչ մի արտասահմանյան դրագրություն չձեռնարկել, որպեսզի չանվանարկվենք Բ. Դռան հետ ունեցած մեր դիվանագիտական հարաբերությունները»[141]։ Այս, իհարկե, չէր նշանակում, թե ռուսական կառավարությունը հասկացնում էր Թուրքիայի կաթոլիկ հայերին՝ ձեռք քաշելու իրենց մտադրությունից։ Պարզապես ցուցաբերվում էր դիվանագիտական զգուշություն։ Ընդհակառակը, կայսերական կարգադրությունը գաղթող կաթոլիկ հայերին շնորհում էր ղրիմաբնակ հայերի և օտարերկրյա գաղթականների բոլոր առանձնաշնորհումներն ու արտոնությունները և պահանջում այդ մասին Թուրքիայի հայ կաթոլիկներին տեղյակ պահել ոչ թե ռուսական դիվանագիտական ուղիներով, այլ իրենց իսկ հայերի գործակալների միջոցով։ Այս

139 Նույն տեղում։
140 Նույն տեղում, թ. 7ա, բ։
141 Նույն տեղում, թ. 1ա, բ։

բոլորի հետ միասին կայսրը քաղաքապետին հանձնարարում էր եթե գաղթականների Թեոդոսիա գալուց հետո կարիք զգացվի նրանց համար ընդունելու հատուկ կանոններ, ապա այդ մասին զեկուցել կառավարությանը[142]։

Թագավորական այս կարգադրությունը 1820 թվականի մայիսի 11-ին ներքին գործերի մինիստրության կառավարիչը ուղարկում է Թեոդոսիայի քաղաքապետին և միաժամանակ իր կողմից հանձնարարում նրան, «հրապարակումից խուսափելու համար», հայտնել կաթոլիկ հայերի Թեոդոսիայում գտնվող ներկայացուցիչներին, որ նրանց չի արգելվում գաղթել Ղրիմ, բայց Կոստանդնուպոլսի ռուսական միսիան այդ գործին չի կարող որևէ մասնակցություն ցույց տալ և այդ տեղափոխությունը հայերը պիտի կատարեն իրենց նախաձեռնությամբ ու ծախսերով[143]։

Թուրքիայի կաթոլիկ հայերի մասսայական այս արտագաղթը թեև տեղի չունեցավ, բայց XIX դարում ղրիմահայության մեջ կարելի էր հանդիպել նրանց շատ ներկայացուցիչների, որոնք այստեղ էին եկել տարբեր ժամանակներում առանձին ընտանիքներով կամ միայնակ։

Ասացինք, որ XVIII դարի վերջին տասնամյակից սկսած մինչև առաջին աշխարհամարտը հայերը անընդհատ Թուրքիայից գալիս և հաստատվում էին Ղրիմում։ Սրանց մի մասը իր բնակության օրինական տեսք էր տալիս և, անցնելով բյուրոկրատական քաշքշուկի բոլոր աստիճանները, սկսած քաղաքային ոստիկանատներից ու ռաուռուշաններից ընդհուպ մինչև նահանգական վարչությունն ու ներքին գործերի մինիստրությունը, ընդունում էր ռուսահպատակություն։ Դրա համար նրանք տալիս էին զրավոր երդում, ներկայացնում երաշխավորող անձանց, ընդ որում երդումն ընդունում էին պաշտոնական անձանց ներկայությամբ։ Մի մասն էլ, թեև չէր դիմում այդ քայլին և ձևականորեն պահպանում էր թուրքահպատակությունը, բայց ըստ էության մնում էր իբրև Ղրիմի մշտական բնակիչ, որովհետև սրանք տասնյակ տարիներով, երեխաներով ու թոռներով ապրում էին Ղրիմում, ունեին իրենց տունն ու տեղը, տնտեսությունը և առհասարակ Թուրքիա վերադառնալու և ոչ մի մտադրություն չունեին։ Սրանք պարզապես լուրջ նշանակություն չէին տալիս դրան և չէին ուզում ավելորդ քաշքշուկով զբաղվել, ժամանակ ու միջոցներ վատնել հպատակություն ընդունելու վրա։ Այսպես, միայն Ղարասուբազար քաղաքում 1832 թվականին հաստատվել, իրենց տունն ու տնտեսությունն ունեին թուրքահպատակ 18 հայ ընտանիքներ, որոնք զբաղվում էին առևտրով[144]։ Այնինչ անհամեմատ ավելի մեծ էր թուրքահպատակ այն ընտանիքների քանակը, որոնք այդ նույն ժամանակ Ղարասուբազարում զբաղվում էին արհեստագործությամբ. վերջիններիս թիվը հավասար էր 89-ի[145]։

Փաստաթղթերից աներկբա հետևում է, որ շատ ավելի մեծ է եղել ռուսահպատակություն ընդունողների քանակը։ Ղրիմի մարզային պետական արխիվի Տավրիկիայի նահանգական վարչության ֆոնդում պահպանված բոլորովին էլ ոչ լրիվ արխիվային գործերից երևում է, որ 1830 թվականից մինչև 1913 թվականը նման խնդրանքով իշխանություններին էին դիմել ավելի քան 200 ընտանիք թուրքահպատակ հայեր[146], որոնք ապրում էին Ղրիմում։ Այս տվյալները թերի պիտի համարել այն պատճառով, որ նրանց ընդգրկման շրջանից դուրս է մնացել մոտ 50-ամյա մի ժամանակաշրջան՝ 1780—1830 թվականները, երբ հայերի արտագաղթերը Թուրքիայից դեպի Ղրիմ ավելի զանգվածային էին, պարբերական և ծավալով անհամեմատ մեծ։ Դրանք թերի են նաև այն իմաստով, որ այնտեղ չեն գրանցված հպատակության ընդունման համար տրված բոլոր դիմումները։ Մենք վերցրել ենք պարզապես միայն մի գերատեսչության գծով պահպանված արխիվային գործերը։

* * *

Ղրիմահայության մշտական համալրումը դրսից եկած գաղթականներով, բնականաբար, շոշափելի տեղաշարժ էր մտցնում նրա թվական կազմում։ Այդ տեսակետից իմաստ ունի մի փոքր կանգ առնել ղրիմահայության տեղաբաշխման և նրա քանակի լուսաբանման վրա։ Այս լուսաբանումը նպատակահարմար է տալ երեք շրջանով. առաջին՝ XVIII դարի վերջին և XIX դարի առաջին տասնամյակներին, երկրորդ՝ XIX դարի կեսերին և երրորդ՝ XIX դարի վերջերին ու XX սկզբներին։

Նախ տեղաբաշխման մասին։ Հայ ազգաբնակչությունը Ղրիմում, հիմնականում, հաստատվեց այն քաղաքներում, որոնք միջնադարում ևս հայաշատ բնակավայրեր էին։ Այստեղ բացառու-

142 Նույն տեղում։
143 Նույն տեղում, թ. 1ր և 2ա։
144 Крымоблархив, ф. 169, оп. 1, д. 96, л. 8—12.
145 Նույն տեղում, թթ. 16—23։
146 Նույն տեղում, ֆ. 27, ց. 7, գ. 1355։

թյուն է կազմում Սիմֆերոպոլ քաղաքը (նախկին Ակմեչեթը), որտեղ թաթարական տիրապետության ժամանակ հայերի թիվը աննշան էր, մինչդեռ Ղրիմը Ռուսաստանին միացնելուց հետո տարեցտարի, հատկապես XIX դարի կեսերից սկսած, այն շարունակ ավելանում էր։ Եվ սա միանգամայն հասկանալի է. դառնալով նահանգական կենտրոն, Սիմֆերոպոլը առավել գերազանց դիրք էր ձեռք բերում նաև տնտեսական ու կուլտուրական զարգացման առումով և այդ իսկ պատճառով էլ նրա բնակչության աճը, Ղրիմի մյուս քաղաքների համեմատությամբ, ավելի արագ էր ընթանում։ Եվ այնուամենայնիվ, հայկական կյանքը ամենից ամփոփ վիճակ էր ապրում Հին Ղրիմում, որը փաստորեն հայկական մի գավառաքաղաք էր, մանավանդ մինչև 1870-ական թվականները, այսինքն մինչև հայկական ռատուշայի փակումը։ Այս տեսակետից սրան որոշ չափով նման էր Ղարասուբազարը, որտեղ ինքնուրույն կերպով նույն ժամանակաշրջանում գործում էր հայ կաթոլիկների դատարանը և որտեղ թաթարներից հետո բնակչության քանակով հայերը XIX դարի առաջին կեսին բռնում էին երկրորդ տեղը[147]։ Ինչպես տեսանք, ժամանակին (XVIII դարի վերջ, XIX դարի սկզբներ) փորձեր կատարվեցին Թեոդոսիան ևս Հին Ղրիմի նման հիմնականում հայերով բնակեցնելու ուղղությամբ, սակայն դրանք անհաջող անցան։ Այնուամենայնիվ, Թեոդոսիան ուսումնասիրվող ժամանակաշրջանում շարունակում էր մնալ իբրև Ղրիմահայության կարևոր կենտրոններից մեկը. եղան ժամանակներ նույնիսկ, որ այն դարձավ հայ գաղութի կուլտուր-կրթական ամենակարևոր կենտրոնը և Նախիջևան—Բեսարաբիայի հայկական հոգևոր թեմի առաջնորդի աթոռատեղին։

Նշանակալից թվով հայեր էին ապրում նաև Արմյանսկի Բազարում (Օրաբազարում), Եվպատորիայում, Բախչիսարայում, Յալթայում, Կերչում և այլուր։ Արմյանսկի Բազարի բնակչության հիմնական մասը XIX դարի առաջին կեսերին, օրինակ, կազմում էին հայերը[148]։

Բնակչության քանակի առումով ղրիմահայ գաղութը XVIII դարի վերջին և XIX դարի առաջին երեք տասնամյակներին ներկայացնում էր հետևյալ պատկերը։ Նովոռոսիայի նահանգապետ Ի. վան Սեյեցկու՝ 1799 թվականի փետրվարի 17-ին կառավարությանը տված զեկուցագրի համաձայն այն ժամանակ Ղրիմի քաղաքներում և գյուղական վայրերում ապրում էին 252 ընտանիք կամ 1043 հոգի հայեր։ Սրանց մեջ չէին մտնում Նոր Նախիջևանից Ղրիմ փախած և այնտեղ բնակվող 700—800 հայերը, ինչպես նաև նրանք, որոնք տակավին չէին ընդունել ռուսահպատակություն։ Խոսքը հիմնականում Թուրքիայից եկած հայ ընտանիքների մասին է։ Մ. Գյումուշխանեցու վկայությամբ 1812 թ. Ղրիմի չոթ քաղաքներում ապրում էին 450 հայ ընտանիքներ[149]։ Գաղթականական նոր ընտանիքների (որոնք ընդունում էին ռուսահպատակություն) համալրումների շնորհիվ 1820-ական թվականներին ղրիմահայության քանակը ավելի քան եռապատկվել էր. 1820 թվականին Ղրիմի նահանգում հաշվվում էր 770 հայկական ընտանիք[150]։ Եթե յուրաքանչյուր ընտանիքի անդամների թիվը միջինն ընդունենք 5 հոգի, ինչպես սովորաբար վարվում են, ապա կտեսնենք, որ 1820-ական թվականների վերջերին Ղրիմում ապրում էին մոտ 4.000 հայեր։ Այս թվից դուրս են մնացել Ղարասուբազարի հայ կաթոլիկ դատարանի իրավասությանը ենթակա հայերը (թե կաթոլիկ և թե լուսավորչական), թվով 689 հոգի[151]։ Ուրեմն XIX դարի առաջին քառորդի վերջին Ղրիմում ապրում էին առնվազն 4500 հայեր։

Տասնհինգ տարի անց ղրիմահայության թիվը աճում է 1000 հոգով և 1844 թվականին հասնում 5401 մարդու, որոնցից 3796-ը լուսավորչական, իսկ 1605-ը՝ կաթոլիկ[152]։ Այս տվյալների հեղինակը Տավրիկիայի նահանգապետն էր։ 1845 թվականին նա կառավարությանն է ներկայացնում մի տեղեկագիր՝ նահանգի այլազգի բնակչության քանակի մասին 1844 թվականին։ Այդ տեղեկագրից էլ մենք քաղել ենք վերոհիշյալ տվյալները։ Սրանք, իրրև պաշտոնական տվյալներ, ինչպես, առավել հավաստի են, քան «Новороссийский календарь»-ի նշած քանակը, որի համաձայն նահանգում 1845 թվականին ապրում էին 4826 հայեր (3214 լուսավորչական և 1612 կաթոլիկ)[153]։

Հայ բնակչության քանակը Ղրիմում հաջորդ 2—3 տասնամյակներին ավելանում է ավելի քան 2500 հոգով և 1874 թվականին

147 «Новороссийский календарь» на 1838 г., стр. 117.

148 Նույն տեղում, էջ 116։

149 ЦГИА СССР, ф. 1374, оп. 2, д. 1815, л. 89, «Արարատ», ամսագիր, 1915, № 11—12, էջ 869։

150 Մատենադարանի արխիվ, անհատական անձանց Ֆ., թ. 167բ, վ. 56։

151 Крымоблархив, ф. 179, оп. 1, д. 333, л. 3.

152 ЦГИА СССР, ф. 1281, оп. 4, д. 49, л. 88.

153 «Новороссийский календарь», на 1847 г., Одесса, 1846, стр. 72.

հասնում է 7000 հոգու[154]: Այդ աճը հիմնականում տեղի էր ունեցել հայերի՝ Թուրքիայից և այլ վայրերից դեպի Ղրիմ կատարած տեղափոխությունների և ռուսահպատակության ընդունելու շնորհիվ: Այս շրջանում՝ 1850—1870-ական թվականներին, հայերը նկատելի թիվ էին կազմում Սիմֆերոպոլում, Ղարասուբազարում, Հին Ղրիմում, Թեոդոսիայում և Կերչում: Հաջորդ քսանամյակում ղրիմահայության թիվը աճում է գրեթե նույն տեմպերով: Պաշտոնական տվյալներով, 1892 թվականին նրանց թիվը, առանց կաթոլիկ հայերի, կազմում է 7424 հոգի. դրանցից 3968 տղամարդ և 3456 կին[155]: Ստորև բերվող աղյուսակը ցույց է տալիս, թե ինչ պատկեր էր ներկայացնում այդ ժամանակ հայերի տեղաբաշխումը Տավրիկյան նահանգում ըստ քաղաքների և գյուղական վայրերի:

Տավրիկյան նահանգի բնակչությունն ըստ դավանության 1892 թ.[156] Հայլուսավորչականներ

№	Քաղաքներում	Արակ.	Իգակ.		Գավառներում	Արակ.	Իգակ.
1	Սիմֆերոպոլ . . .	1097	1109	1.	Սիմֆերոպոլի գ.	78	79
2	Բախչիսարայ . . .	38	22	2.	Թեոդոսիայի գ.	88	76
3	Ղարասուբազար .	510	310	3.	Յալթայի գավ.	52	2
4	Թեոդոսիա	281	264	4.	Գերեկոպի գավ.	122	112
5	Հին Ղրիմ	986	778	5.	Եվպատորիայի գ.	27	93
6	Յալթա	103	42	6.	Դնեպրի գավ.	25	18
7	Եվպատորիա . . .	103	53	7.	Մելիտոպոլի գ.	39	43
8	Գերեկոպ Արմյանսկի բազարի հետ միասին	113	140	8.	Բերդյանսկի գ.	10	17
9	Մելիտոպոլ	148	159				
10	Բերդյանսկ	19	16				
11	Օրխով	1	—				
12	Նոգայսկ	128	123				
	Ընդամենը	3527	3016		Ընդամենը	441	440

Այսպիսով, 1892 թվականին Տավրիկյան նահանգում ապրում էին 7424 հայեր: Եթե սրանց ավելացնենք շուրջ 1400 հոգի կաթոլիկ

154 *А. К. Завадский-Краснопольский*, Крым, природа, население и особенности края, СПб, 1874, стр. 6.

155 «Приложение к всеподданнейшему отчету о состоянии Таврической губернии за 1892 г.», Симферополь, 1893.

156 Նույն տեղում:

հայերին[157], ապա կտեսնենք, որ նրանց թիվը կազմում էր 8824 մարդ: Ահա նաև հաջորդ տարիների մասին եղած տվյալները, ընդհուպ մինչև 1897 թվականը, այսինքն մինչև ռուսական կայսրության մեջ անցկացված առաջին ընդհանուր մարդահամարը: Հաջորդ, 1893 թվականին հայերի թիվը նահանգում կազմում է 8044 մարդ, 1895 թվականին՝ 8314 մարդ, իսկ 1896 թվականին՝ 7996 մարդ[158]: Այս տատանումները պիտի բացատրել դրսից Ղրիմ եկած կամ Ղրիմից այլ վայրեր մեկնած հայ ընտանիքների և առանձին անձանց տեղաշարժերով:

Առաջին ընդհանուր մարդահամարի տվյալներով Տավրիկիայի նահանգում ապրում էին 8938 հայեր (5094 արական և 3844 իգական սեռի)[159]: Ամբողջ հայ աղգաբնակչությունից 6389 մարդ, այսինքն ավելի քան 70 տոկոսը, ապրում էին քաղաքներում, իսկ 2549 մարդ՝ գավառներում: Նշված 8938 մարդուց 1444-ը հայ կաթոլիկներ էին:

Ըստ լեզվական և դավանանքի հատկանիշների, հայերի տեղաբաշխումը Տավրիկյան նահանգում 1897 թվականին ուներ հետևյալ պատկերը[160].

№№	Գավառներ և նրանցում քաղաքներ	Ըստ մայրենի լեզ.	Ըստ դավանանքի	№№	Գավառներ և նրանցում քաղաքներ	Ըստ մայրենի լեզ.	Ըստ դավանանքի
		հայերեն	հայ-լուս. և հայ-կաթոլիկ			հայերեն	հայ-լուս. և հայ-կաթոլիկ
1	2	3	4	5	6	7	8
1	Սիմֆերոպոլի գավառում	3011	2944	2	Բերդյանսկի գավառում	201	195
	Սիմֆերոպոլում . .	1937	1904		Բերդյանսկում . .	74	64
	Բախչիսարայում . . .	35	29		Նոգայսկում	84	91
	Ղարասուբազարում .	798	789				

157 ЦГИА СССР, ф. 1281, оп. 4, д. 49, л. 88, «Первая Всеобщая перепись населения Российской империи, 1897 г.», Таврическая губерния, СПб, 1904, стр. X, и *А. Скальковский.* Опыт статистического описания Новороссийского края, Одесса, 1850, стр. 292.

158 «Приложение к всеподданнейшему отчету...» за 1893, 1895 и 1896 годы, Симферополь.

159 «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г.», XLI. Таврическая губерния, СПб, 1904, стр. V.

160 Նույն տեղում, էջ 2—3:

1	2	3	4	5	6	7	8
3	Դենգըբի գավառում .	47	46	8	Թեոդոսիայի գավառում	2417	2350
	Ալեշկիում .	1	1		Թոդոսիայում . . .	880	861
4	Եվպատորիայի գավառում .	472	443		Հին Ղրիմում	397	398
	Եվպատորիայում . . .	347	342	9	Կերչ-Ենիկալեի քաղաքագլխատարան .	709	688
5	Մելիտոպոլի գավառում	373	362		Կերչում . .	679	658
	Մելիտոպոլ.	203	201		Ենիկալեում	1	1
6	Պերեկոպի գավառում	617	597	10	Սևաստոպոլի քաղաքապետարանում . .	467	464
	Պերեկոպում	190	186		Սևաստոպոլում . . .	439 ՝՝ ՝՝	439
7	Ցալթայի գավառում	624	611		Բալակլավայում . .	5	5
	Ցալթայում	319	308		Ընդամենը	8938	8700

Այսպիսով, հայերի հիմնական դանգվածը կենտրոնացված էր Սիմֆերոպոլի, Թեոդոսիայի, Յալթայի, Պերեկոպի և Եվպատորիայի գավառներում և համապատասխանաբար կազմում էր այդ գավառների բնակչության 2,1, 2,1, 0,9, 1,2 և 0,7 տոկոսը[161]:

1897 թվականի մարդահամարի տվյալները, 1892 թվականի տվյալների հետ համադրելիս, տեսնում ենք, որ այդ ժամանակաշրջանում ղրիմահայ գաղութի բնակչության քանակական կազմում աննշան փոփոխություններ են տեղի ունեցել. հինգ տարում նրանց թիվն ավելացել էր ընդամենը 114 հոգով: Ամենից հատկանշականը, սակայն, Հին Ղրիմ քաղաքի հայ ազգաբնակչության նվազումն էր աննախընթաց չափերով: Եթե 1892 թվականին քաղաքում ապրում էին 1764 հայեր (քաղաքի ամբողջ բնակչությունը այն ժամանակ 3925 հոգի էր), ապա 1897 թվականին այնտեղ բնակվում էր ընդամենը 397 հայ, այսինքն նրանց թիվը քաղաքում պակասել էր գրեթե 4 անգամ: Առիթից օգտվելով նշենք, որ Հին Ղրիմը, որտեղ դարասկզբից սկսած ընդհուպ մինչև 60-ական թվականները ճնշող

161 «Статистический справочник Таврической губернии», часть 1-я, Статистический очерк Таврической губернии, вып. I, Симферополь, 1915, стр. 15.

մեծամասնությամբ հայեր էին բնակվում և որը հայկական մի գավառաքաղաք էր, 60—70-ական թվականներից ի վեր՝ Սիմֆերոպոլի ու Թեոդոսիայի բարձրանալուն զուգընթաց և հայկական ռասայի փակման հետևանքով, գնալով զրկվում էր իր հայազգի բնակչությունից: Սրանք, ըստ մեծի մասին, տեղափոխվում են Սիմֆերոպոլ: Այդպիսին էր Հին Ղրիմի վիճակը նաև XX դարի սկզբին. 1902 թվականին այնտեղ ապրող հայերի թիվը հավասար էր 410 հոգու, այն ժամանակ, երբ նահանգում նրանց թիվը հասել էր 9364-ի[162]:

Հայերի թիվը Ղրիմում գնալով մեծանում էր և համեմատական տվյալներից երևում է, որ 1913 թվականին այն տատանվում էր 13—15 հազարի միջև: Թևրակղզու վրա այս շրջանում ևս նրանք շարունակում էին հիմնականում ապրել քաղաքներում: Առ մեկը հունվարի 1913 թվականի Ղրիմի թերակղզու վրա (և ոչ թե ամբողջ Տավրիկյան նահանգում) բնակչության թիվը հավասար էր 649523 մարդու, որոնցից քաղաքներում ապրում էր 319.569 մարդ[163]: Եթե ընդունենք, որ 13—15 հազար հայությունից ավելի քան 12 հազարն ապրում էր քաղաքներում, ապա կտեսնենք, որ այդ ժամանակ նրանք կազմում էին քաղաքային բնակչության 4 տոկոսը, ռուսներից, ուկրաինացիներից, հրեաներից հետո բռնելով չորրորդ տեղը:

Անթույլատրելի է չվերապահել, որ խնդրո առարկա ժամանակաշրջանում ղրիմահայության քանակի վերաբերյալ վերը բերված տվյալները խիստ հեռու են լիակատար լինելուց: Իրականում թերակղզու վրա հայերի թիվը զգալապես գերազանցում էր այդ տվյալները: Այս հանգամանքը հետևանք էր այն իրողության, որ անցկացված մարդահամարներին ու հաշվեհամարներին (ревизия), սահմանված կարգի համաձայն, ենթակա էին միայն ռուսահպատակ ղրիմահայերը և գաղթականական ընտանիքներից նրանք, որոնք ընդունել էին այդ հպատակությունը: Մինչդեռ խոշոր թիվ էին կազմում նաև Թուրքիայից եկած այն առանձին հայերն ու հայկական ընտանիքները, որոնց ճնշող մեծամասնությունը, թեև մշտապես հաստատվել էր Ղրիմում, բայց հազար ու մի առիթով ռուսահպատակություն չէր ընդունել և, հետևապես, դուրս էր մնացել հաշվառումից, ուրեմն և մեր կողմից վերևում նշված թվաքանակից:

162 «Հույս», պատկերազարդ օրացույց-հանդես, Թիֆլիս, 1905, էջ 164:

163 «Статистический справочник Таврической губернии», часть 1-я, выпуск первый, стр. 5 и 53.

Բայց ճշմարտությունն այն է, որ ռուսահպատակություն չընդունած այդ մարդիկ, մեծամասամբ «թուրքահայեր», զգալի մի զանգված էին, կազմում էին ղրիմահայ առևտրա-արհեստավորական դասի կարևոր հատվածը, ղրիմահայության, հավանաբար, 1/4—1/3 մասը՝ դատելով առևտրի ու արհեստների մեջ նրանց ցուցաբերած մասնակցությանը վերաբերող տվյալներից։ Այս պարագան պարտավորեցնում է մեզ մտցնել ղրիմահայության քանակական կազմում։ Կարող ենք, օրինակ, նշել, որ ղրիմահայերի թիվը 1840-ական թվականներին ոչ թե 5400 էր, այլ, հավանաբար, 7000—7500, 1870-ական թվականներին ոչ թե 7000-էր, այլ 9000—10.000, իսկ 1890-ական թվականներին՝ 8500-ի փոխարեն 12—13 հազար։ Այս նույն հիմնավոր մոտեցմամբ XX դարի առաջին տասնամյակին եղած 12—13 հազարի դիմաց կարող ենք նշել 18—20 հազար հավանական թվաքանակը։ Եթե ռուսահպատակություն չընդունած ղրիմահայերն էլ հաշվառված լինեին, ապա մեր արած այս կռահումները ամբողջ ղրիմահայության իրական թվաքանակի հետ համադրելիս աննշան շեղումներ պիտի տային միայն։

Հայ բնակչության մի մասը (1897 թ. մարդահամարի տվյալներով 2549 մարդ) ապրում էր գյուղատիպ վայրերում, ավաններում, գյուղերում, այս կամ այն մեծահարուստի հողերի վրա գտնվող խուտորններում ու գաստակերտերում, առանձնացած տնտեսություններում (экономии) և այգիներում։ Այս առումով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում ստորև բերվող տեղացուցակը[164]։ Այդ հետաքրքրությունը կապված է ոչ միայն այն փաստի հետ, որ այնտեղ մեկ առ մեկ նշված են հայաբնակ ոչ-քաղաքատիպ վայրերը ըստ Տավրիկյան նահանգի գավառների, այլև այն կարևոր տվյալների հետ, որ պարունակում է ցուցակը ամեն մի բնակավայրի հողատարածության, նրա պատկանելության և այլ հարցերի վերաբերյալ։ Նշենք, որ տվյալները վերաբերում են 1915 թվականին, իսկ ստորև բերվող ցուցակն էլ հանել ենք «Статистический справочник Таврической губернии» 8 պրականոց ժողովածուի 4—8-րդ պրակներում զետեղված տվյալներից՝ վերցնելով միայն հայկական ծխեր ունեցող բնակավայրերը և հայերին պատկանող հողատարածությունները (տես՝ 63 էջի ցուցակը)։

164 «Статистический справочник Таврической губернии», Симферополь, 1915, выпуск I—VIII.

№ №	Բնակավայրերի անվանումը (գյուղեր, ավաններ, խուտորներ, տներ, շեներ և այլն)	Վերաբերության ենթակա գավառը	Բնակավայրի տեսակը (գյուղաքաղաք, գյուղ, ավան, խուտոր, գաստակերտ, տնտեսություն, այգի)	Տնային տնտեսությունների քանակը	Հողերի ընդհանուր մակերեսը (հեկտարներով)	Հողերի ընդհանուր մակերեսը (դեսյատիններով)	Բնակավայրի հողի քանակը[165] ընդհանուր	ընդհանուր-ից՝ ոռոգելի	ընդհանուր-ից՝ պարտեզներ	Հեռավորությունը նահանգային կենտրոնից, գավառական քաղաքից և գավառակից (վերստներով)
1	2	3	4	5	6	7	8	9		
	Ա ի մ ֆ ե ր ո պ ո լ ի գ ա վ ա ռ									
1	Նալբանդովա Վ. Մ.		տնտեսություն	1	հողեր	4,6	—	4,6		
2	Նալբանդովներ Վ. Մ., Մ. Մ., Է. Մ. և Շնայդերը (համատեղ սեփ.)		գյուղ	1	„	827	4,8	831,8		
	Մուրզաև Է. Գ.		խուտոր	1	„	125	—	125		
3	Բարանով Մ. Օ.		„	1	„	7,29	—	7,29		
4	«Տարրա-էյչ» Բ. Մ. Մեչին		տնտեսություն	1	„	42,27	—	42,27	40 վերստ Սիմֆերոպոլից	
5			գյուղ	1	„	16,53	—	16,53		
6	Գեսսով Լ. Յա.		այգի	1	„	11,67	—	11,67		
7	Կապրիելով Մ. Ա.		„	1	„					
8	Մեֆերով Լ. Ա.		տնտեսություն	1	„	1005	—	1005		
			այգի	1	„	16,79	0,45	17,24		
9	Թոխատով Ա. Մ.		„	1	„	4,52	—	4,52		
10	Բախչիարյանց Գ. Խ.		„	1	„	0,16	—	0,16		
11	Կարան Յա. Բ.		„	1	„	0,28	—	0,28		
18	Ակոպյան Բ. Ա.		„	1	„	0,15	—	0,15		
13	Ներսեսով Է. Ն.		„	1	„	0,3	—	0,3		
14	Մարիև Ն. Ա.		„	1	„	0,37	—	0,37		
15	Սպենդիարով Գ. Ա.		„	1	„	5,25	—	5,25		
16	Գասպիրով Յ. Մ.		„	1	„	0,48	—	0,48		
17	Յիրու Օ. Մ.		„	1	„	4	—	4		
18	Մխիթով Մ. Ա.		„	1	„	25	—	25		
19	Բարին		խուտոր	3	„				50 վերստ Սիմֆերոպոլից	

165 Հողերի բանակը հաշված է դեսյատիններով։

1	2	3	4	5	6	7	8	9
20	Յիգոև Պ. Վ.	խուտոր	1	հայկր	177,66	—	177,66	
21	«Մոն-Ռեպոս» Բաբաև Մ. Լ.	մեռահասու-թյուն	2	„	43,35	—	43,35	52 վերստ Սիմֆերոպոլից
22	Թոփալով Ս. Մ. («Անաքոյ» Ալիխն մերձակա)	„	1	„	1053	5	1058	32 վերստ Սիմֆերոպոլից
23	«Թերեքլի-շահ Ալի», Ալիումչի Կ. Օ.	„	1	„	602,8	2,5	605,3	
24	«Կոզի-էսկեր-Կոյ» Սեֆերով Պ. Յա.	խուտոր	1	„	849,55	—	849,55	
25	«Խեր-Խարտով» Սերեբրյակով եղբայրների հողամասը	հողամաս	1	„	691,66	—	691,66	55 վերստ Սիմֆերոպոլից
26	«Շախվալ» Ալիումչի Օ. Պ.	այգի	1	„	32,58	—	32,58	
27	Դուտով Լ. Յա.	„	1	„	16,53	—	16,53	
28	Կաբրիելով Մ. Ա.	„	1	„	11,67	—	11,67	
29	Սեֆերով Լ. Ա.	մեռահասու-թյուն	1	„	1005	—	1005	
30	Թոփալով Ա. Մ.	այգի	1	„	16,79	—	16,79	
31	Թոփալով Յա. Մ.	„	1	„	24	—	24	
32	Բոյաջիև Յա. և Ս. Կ. «Կոշդեգեր-մեն»	„	1	„	7,5	—	7,5	
33	Ժամդոչև Գ. Ֆ.	„	1	„	11,21	—	11,21	
34	Օրերով Ա. Ն.	խուտոր	1	„	290	—	290	
35	Խարա-Կարահա Ռ. Ս.	այգի	1	„	4,21	—	4,21	
36	Սեֆերով Բ. Մ.	„	1	„	19,58	—	19,58	
37	Դարախով Ա. Օ.	„	1	„	15,54	—	15,54	
38	«Մուստաֆա-բեյ» Բոյաջյան Խ. Բ.	խուտոր	1	„	10	—	10	
39	«Անաստասևկա և Մուստաֆա-բեյ» Յա. Կ. և Ս. Կ. Բոյաջևներ.	„	1	„	59,2	—	59,2	
40	«Մուստաֆա-բեյ, Կոշ-Դեգերմեն».	„	1	„	3	—	3	
41	Զիրախով Կ. Խ.	այգի	1	„	2,5	—	2,5	
42	Զիրախով Կ. Խ.	„	1	„	1,75	—	1,75	
43	Գևոպիկ Գ. Գ.	„	1	„	1,85	—	1,85	
44	Յիգոև Ս. Բ.	խուտոր	1	„	15,48	—	15,48	

1	2	3	4	5	6	7	8	9
45	Կ. Խ. և Տ. Խ. Յիգոևներ (ընդ-հանուր տիրույթ)	դաստա-կերտ	1	հայկր	0,29	—	0,29	
46	Յիգոև Կ. Խ.	„	1	„	0,1	—	0,1	
47	Սպենդիարովներ Օ. Ի. և Կ. Ի.	մեռահասու-թյուն	1	„	2026	18	2044	
		այգի	1	„	2,5	—	2.5	
48	Նալբանդովա Ա. Կ.	կալվածք	1	„	722,42	6	728,42	
49	Իսուֆ Մ. Օ.							
50	Թումանովա Մ. Ա. «Խուտոր Պրի-յատնոյե սվիդանիյե»	խուտոր	1	„	5	—	5	
		կալվածք	1	„	215,42	16,27	231,69	
51	Թումանով Կ. Ա.	այգի	1	„	12,55	—	12,55	
52	Դաուտովա Ս. Ս.	„	1	„	3	—	3	
53	Զիրախով Կ. Խ.							
54	«Բեկի-էլի» Քուշնարևներ (նույնը Կուրկչիևներ)	մեռահասու-թյուն	1	„	—	—	600	

Պերեկոպի գավառ

1	Քարաքաշ Եդոր («Ախյազալի սադ»)	խուտոր	1	հայկր	17	—	17	94 վերստ Սիմֆերոպոլից և 126 վերստ Պերեկոպից
2	Ջուդրուկ (Աբրամովի)	„	2	„	480	20	500	75 վերստ Սիմֆերոպոլից և 65 վ. Պերեկոպից
3	Ջանտուգան (Վաժնիչի եղբայրներ)	ավան	7	„	615	146	761	150 վ. Սիմֆերոպոլից 60 վ. Պերեկոպից
4	Ջաբա (Վաժնիչի)	դաստա-կերտ	1	„	350	—	350	140 վ. Սիմֆերոպոլից 55 վ. Պերեկոպից
5	Օդի-Կայդաչ (կապալով վերցրել էր Քուշնարևը)	խուտոր	1	„	—	—	—	100 վ. Սիմֆերոպոլից 38 վ. Պերեկոպից

1	2	3	4	5	6	7	8	9
				Յալթայի գավառ				
1	Հանջիևա Մ. Ք.	խուտոր	1	հայկը	5,72	—	5,72	
2	Դեմիրջի գյոլ	գյուղ	285	»	829	5100	5929	44 վ. Սիմֆերոպոլից
	Դեմիրջի գյուղին տրքնքեր մասնավոր տիրույթներ՝							
3	Բրանդտ Ա. Ա.	կալվածք	1	»	3,84	—	3,84	
4	Քուշնարև Կ. Գ.	դաչա	1	»	0,63	—	0,63	
5	Թախտուզով Խ. Խ. (Կուզլար)	խուտոր	1	»	0,22	—	0,22	
6	Ջալբաշ Պյոտր	»	1	»	0,23	—	0,23	
7	Նախշունով Ե. Կ.	դաչա	1	»	0,26	—	0,26	
8	Հովհաննես Շիվորյան	այգի	1	»	5,35	—	5,35	
9	Մուրզաև Պ. Վ.	դաչա	1	»	0,19	—	0,19	
10	Պոպով Մ. Կ. («Ալթինչաիր»)	»	1	»	4,39	—	4,39	
11	Պոպովա	»	1	»	0,1	—	0,1	
				Եվպատորիայի գավառ				
1	Չոնդուլայ	գյուղ	4	հայեր	1720	—	1720	102 վ. Սիմֆերոպոլից 39 վ. Եվպատորիայից
2	Ջաթայ (Սեֆերովի Մ. Լ.)	տնտեսություն	2	»	548	—	550	75 վ. Սիմֆերոպոլից 15 վ. Եվպատորիայից
3	Կարաջա	»	11	»	—	—	19500	130 վ. Սիմֆերոպոլից 70 վ. Եվպատորիայից
4	Յաշպեկ	»	1	»	—	—	2750	110 վ. Սիմֆերոպոլից 50 վ. Եվպատորիայից
5	Կոտուր (Օրերովի)	»	1	»	1050	100	1150	46 վ. Սիմֆերոպոլից 20 վ. Եվպատորիայից

1	2	3	4	5	6	7	8	9
				Թեոդոսիայի գավառ				
1	Աջիլար (Շահիրովկէրի)	խուտոր	3	հայկը	48	—	48	68 վ. Թեոդոսիայից
2	Բեշկուրտկա-Ջանկոյ	»	1	»	42	—	42	74 վ. Սիմֆերոպոլից
3	Բեշկուրտկա (Վ. Ս. Քուշնարևի)	»	1	»	30	—	30	65 վ. Թեոդոսիայից 74 վ. Սիմֆերոպոլից 65 վ. Թեոդոսիայից
4	Բեշկուրտկա (Մ. Ա. Մուրզաևի)	»	1	»	45	—	45	73 վ. Սիմֆերոպոլից 65 վ. Թեոդոսիայից
5	Էսսեն-Էլլի (Ն. Ա. Այվազովսկու)	»	1	»	482	1	483	22 վ. Թեոդոսիայից
6	Էսսեն-Էլլի (Յա. Կ. Բենկլիևի)	»	1	»	186	14	200	22 վ. Թեոդոսիայից
7	Էսսեն-Էլլի (Օ. Ա. Դուրանտեի)	»	1	»	97	4	101	25 վ. Թեոդոսիայից
8	Ղամիշլիկ (Յա. Խ. Բենկլիևի)	կալվածք	1	»	854	—	854	40 վ. Թեոդոսիայից
9	Օրթալանկ (Գ. Լ. Սպենդիարովի)	»	1	»	1108	2	1120	

Այս ցուցակում տեղ են գտել այն հայերը, որոնց տնօրինության տակ (սեփականություն կամ կապալային հողված) եղել են նշանակալից հողատարածություններ, և բազմաթիվ հայ աշխատավոր ընտանիքներ, որոնք կառչելով մի փոքր հողաբաժնից կամ թե աշխատանք գտնելով այս կամ այն մեծահարուստի կալվածքում՝ հողի մշակմամբ հայթայթում էին իրենց հանապազօրյա ապրուստը: Առայժմ մեզ հետաքրքրողը հարցի սոցիալական կողմը չէ, այլ այն, որ վերը բերված ցուցակը պատկերացում է տալիս ղրիմահայության հենց այդ հատվածի տեղաբաշխման մասին ըստ բնակակետերի, հատված, որը մշտապես հաստատվել էր թերակղզու գյուղատիպ վայրերում և իր բախտը կապել այգեգործության ու երկրագործության հետ: Քաղաքաբնակ հայության հետ միասին այս հատվածը կյանքի կոչեց նոր շրջանի ղրիմահայ գաղութը, որի պատմությունը հույժ ուշագրավ է և ուսումնասիրության արժանի՝ հասարակական-քաղաքական, տնտեսական ու մշակութային առումով:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՎԱՐՉԱ-ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՐԳԱՆՆԵՐԸ

Հին Ղրիմի հայկական բաղաքային ռատուշան. նրա ստեղծումը, բնութագրությունները, իրավունքներն ու պարտականությունները: Ղարասուբազարի հայ կաթոլիկների դատարանը. հիմնադրումը, կառուցվածքը, նրա անդամների սոցիալական կազմը: Դատարանի եկամուտները, վարչա-տնտեսական իրավունքներն ու պարտականությունները: Ղրիմահայ եկեղեցական օրգանները, նրանց գործունեությունը:

Ղրիմահայ գաղութի վարչա-կառավարման օրգանների մասին խոսելիս պիտի նկատի ունենալ, որ նահանգի այլ ազգի բոլոր բնակիչներին համահավասար հայերը ևս ենթարկվում էին նահանգական և տեղական իշխանությունների իրավասությանը: Բայց թերակղզու վրա միաժամանակ գոյատևում էին հայկական երկու գաղթօջախներ, որոնք մինչև 60-ական թվականների վերջերը հասարակական-վարչական կյանքի կարգավորման տեսակետից ապրում էին մի տեսակ ուրույն վիճակ: Դրանք՝ Հին Ղրիմի լուսավորչական հայերի և Ղարասուբազարի կաթոլիկ հայերի համայնքներն էին: Նահանգական իշխանություններին ենթարկվելով հանդերձ, սրանք միաժամանակ ունեին վարչա-կառավարման իրենց օրգանները. առաջինները՝ քաղաքային ռատուշա, իսկ վերջինները՝ կաթոլիկական դատարան, որոնք տեղում վարում էին իրենց իրավասության տակ գտնվող հայկական այդ համայնքների վարչական, տնտեսական և դատական գործերը:

Անդրադառնանք դրանց գործունեության բնութագրմանը.

Հին Ղրիմի հայկական բաղաքային ռատուշան հիմնադրվել է Պավել I-ի կողմից 1799 թվականի հոկտեմբերի 28-ին տրված հրովարտակի 5-րդ հոդվածի համաձայն, որտեղ ասված էր. «Տավրիկայում բնակվող [հայ] համայնքի կողմից Հին Ղրիմը բնակեցնելուց և նրան 12.000 դեսյատին հող, ջրով և անտառով հանդերձ, հատկացնելուց հետո, ամենաողորմածաբար հրամայում ենք հիմնել սեփական Հայկական դատարան, մագիստրատի անվան տակ, և այն-

տեղ հայերեն լեզվով քննել ու վճռել դատական և հայցային գործերը՝ այդ ժողովրդի նախնի օրենքներին ու սովորույթներին համապատասխան, հասարակությունից ընտրված անդամների միջոցով, ունենալ անհրաժեշտ քանակությամբ քարտուղարներ և գրասենյակային ծառայողներ, որոնք բոլորը օգտվելու են այն նահանգի հասութքային աստիճաններից, որտեղ գտնվում է այդ համայնքը: Այս դատարանը կամ մագիստրատը ենթակա է նահանգական վարչությանը և նահանգի կառավարչին, ընդ որում ամեն մի այդպիսի դատարանին կամ մագիստրատին, ինչպես և նրանց Ատրպատականի կոնսիստորիային, տրվում է կառավարության կողմից ընտրված կնիք»[1]:

Այս հրովարտակից հետո դատարանը անմիջապես չհիմնադրվեց: Դա հնարավոր էլ չէր, քանի որ այն ժամանակ քաղաքը գրեթե անմարդաբնակ էր: Անցավ բավական երկար մի ժամանակամիջոց, ավելի քան 8 տարի, մինչև հնարավոր դարձավ բացել ռատուշան: Դա կապված էր Հին Ղրիմի բնակեցման հետ, որը, ինչպես տեսանք, գործնական ընթացք ստացավ 1805—1806 թվականներին միայն: 1807 թվականի օգոստոսի 5-ին քաղաքի հայ հասարակությունը դիմում է Տավրիկյան նահանգի քաղաքացիական նահանգապետին, խնդրելով քաղաքային կյանքը կարգավորելու և վարելու համար, եղած հրովարտակի հիման վրա, բացել ռատուշա[2]:

Վերջապես, 1808 թվականի հուլիսի 28-ին Հին Ղրիմի հայկական քաղաքային ռատուշան բացվեց: Այդ օրը տեղի ունեցավ նրա առաջին, հիմնադիր նիստը: Ահա այդ նիստի արձանագրությունը.

«1808 թվական, 28 հուլիսի, երեքշաբթի.

Հին Ղրիմի հայկական քաղաքային ռատուշա ներկայացել են.

Բուրգոմիստր՝ Մինաս Ավեդիքով
ռատմաններ[3] Միխայիլ Կապրելով
Լուսեղեն Պետրոսով

երեկոյան ժամը 8-ին

Լսեցին.—Ըստ հրամանի Նորին կայսերական մեծության Հին Ղրիմի հայկական քաղաքային ռատուշայում լսեցին Տավրիկայի նահանգական կառավարության գործադիր էքսպեդիցիայի որոշումը... Նորին պայծառափայլություն Խերսոնի ռազմական նահանգապետ... գեներալ-լեյտենանտ Էմանուել Դյուկ դե-Ռիշելյոյի առաջարկը այս օրվանից ռատուշայի գործունեությունը սկսելու և այն շարունակելու մասին՝ Տավրիկիայի հայ հասարակությանը 1799 թ. հոկտեմբերի 28-ին ամենաողորմածաբար շնորհված հրովարտակի և ընդհանուր օրենքների հիման վրա, որով և բացված է այս ռատուշան.

Որոշեցին.—Այս առթիվ կազմել քաղվածք՝ ներկա գտնվող անդամների ստորագրությամբ և այն կցել գործերին[4]:

Իր ավելի քան 60-ամյա գործունեության ընթացքում ռատուշան պահպանել էր արձանագրությունների կազմման այս ձևը: Նրա նիստերը միշտ տեղի էին ունենում ուշ երեկոյան, շաբաթը 2—3 անդամ, ըստ անհրաժեշտության:

1799 թվականի հրովարտակի հիման վրա ռատուշան ստեղծվում էր հայ համայնքի անդամներից, երեք տարին մեկ անդամ կատարվող ընտրությունների միջոցով: Քվեարկությունը գաղտնի էր, կատարվում էր ընտրագնդակներով: Ընտրված էր համարվում նա, ով ավելի շատ գնդակներ էր ստանում, որովհետև մի տեղի համար առաջադրվում էր ոչ թե մեկ, այլ սովորաբար 2—3 թեկնածու: Թեր ստացած գնդակների թիվը կեսից պակաս չպետք է լիներ, այսինքն տիրում էր պարզ մեծամասնության սկզբունքը, որը խախտելու դեպքում նահանգական կառավարությունը ընտրվածների գործերը չէր հաստատում[5]: Ընտրություններին մասնակցում էին վաճառականներն ու մեշչանները: Վերևում բերված արձանագրության երեք անձինք ռատուշայի առաջին անդամներն էին, որ ընտրվել էին 1808 թվականին: Նրանցից բացի հայ համայնքը ընտրում էր քաղաքագլուխ և ավագ (староста): 1808 թվականին քաղաքագլուխ էր ընտրվել Հովակիմ Մուրադովը[6]:

Համայնքի ընտրություններին մասնակցող ներկայացուցիչները հայկական եկեղեցում, քահանայի ներկայությամբ, երդում էին տալիս ընտրությունների ժամանակ անկողմնակալ և անաչառ լինելու մասին: Երդման գրավոր տեքստում, որի տակ երդումն ընդունելուց հետո ստորագրում էին, ասված էր[7].

«Ես ի ներքոյ անբվանեալըս խոստանամ և երդնում ամենակա-

1 «Собрание актов», т. I, стр. 222.
2 Крымоблархив, ф. 67, оп. 1, д. 8, л. 2 об.
3 Ռատմանը ռատուշայի անդամն էր:

4 Крымоблархив, ф. 67, оп. 1, д. 10, л. 1.
5 Նույն տեղում, գ. 517, թ. 37բ, նաև գ. 7:
6 Նույն տեղում գ. 12, թ. 4:
7 Բերում ենք նույնությամբ, առանց որևէ ուղղագրական փոփոխության:

թող առաջի աստուծոյ սուրբ ավետարանին և կենարար խաչին նօրա։ Վասն այս պանին կուգիմ և պարտ իմ առաջի ընկալ վիպօրէն քաղաքիս հօլօվա (քաղաքագլուխ—Վ. Մ.) ևս ջըլէնըն (անդամներ—Վ. Մ.) էսկի Խրիմ քաղաքին ռաթուշի և նըմանապես դումայի քաղաքիս ըսթառոսթայի, իմօյ պայծառութեան և ճշմարտութեան ղըղճմտանացս. ոչ շահավօրութեան կօղմանէ բօբրր պարեկամութեան և կամ դուշմանութեան հնտրեալ այս քաղաքիս հզպարքն, որօ կու տեսնիմ առաջի ընկալ հավատարութեանը և արդարութեան ղըղճմտանացն որօցմէն որ ևս ումուդօվիմ, որօվ տեսա հնտրեալ նօցա դատավօրութեան, որ ցույց տայ իր արդար ծառայութեանը նօրա կայսերական մեծութեանըն և ջերմեռանդութեան որդի հանրենին մերոյ։ Եվ վասն բոլոր հասարակաց կառավարութեան կատարէ ամենայնի. ապա եթէ ևս վիպօրէն այս սրղալ կերպից ցույց տամ, որօ ևս կապեալ իմ զիս ճարտարութեանըս և հասարակի օգտավետութեան և ոչ սղալ կամավրս, ուրկէ իմօյ կապեալ խօսքն այս կենացս ամենայն հասարակի մերուս ըստ մարդասիրական բարուց և քրննօղ առաջի այ նօրա այլեղ դատաստանին պարտիմ երթումական խուրուրին (խորհուրդ—Վ. Մ.) զճշմարտութինըս այս իմ հրնտրութեանըն։

Համբուրեմ խօսքն և սուրբ խաչն բրչին իմոյ, ամէն»[8]։

Թագավորին և կայսրութեանը հավատարիմ և նվիրված մնալու, «արդար ու անսղալ» ծառայելու մասին երդում էին տալիս ընտրվածները, դարձյալ քաղաքի հայկական Վերափոխման եկեղեցում[9]։ Ընտրությունների բոլոր այս արարողությունները կատարվում էին կայսրության մեջ գոյություն ունեցող օրենքներին համապատասխան, ճիշտ այն կարգով, ինչ կարգով տեղի էին ունենում ռուսական քաղաքային մագիստրատների և ռատուշաների ընտրությունները։

Ընտրությունների ավարտից հետո, դրանց արդյունքները՝ քվեարկության ցուցակները, ընտրողների ստորագրությամբ, ուղարկվում էին նահանգական վարչություն՝ ի հաստատություն։ Միայն նահանգական իշխանության կողմից հաստատվելուց հետո ընտրված անձինք կարող էին անցնել իրենց պաշտոնական պարտականությունների կատարմանը։

Հին Ղրիմի հայկական քաղաքային ռատուշայի և Ղարասուբազարի հայ-կաթոլիկական դատարանի ընտրությունները, որոնք անց

8 Крымоблархив, ф. 67, оп. 1, д. 7, л. 25.

9 Նույն տեղում, թթ. 42—44։

էին կացվում միևնույն կարգով, շատ հաճախ մեծ դժվարությունների էին հանդիպում։ Հարցն այն է, որ ընտրություններին պիտի մասնակցեին ռատուշայի և դատարանի իրավասության տակ գտնվող նաև այն անձինք, որոնք ցրված էին նահանգի տարբեր քաղաքներում՝ իրենց առևտրա-տնտեսական գործերի բերումով։ Ընտրություններին սրանց ևս մասնակից դարձնելու համար ռատուշան և դատարանը հաճախ ստիպված էին լինում դիմել զանազան քաղաքների ոստիկանություններին, նրանցից խնդրելով իրենց մոտ գտնվող դատարանին ու ռատուշային հնթակա անձանց տեղյակ պահել առաջիկա ընտրությունների մասին, պարտավորեցնելով նրանց ժամանակին վերադառնալ Հին Ղրիմ և Ղարասուբազար ընտրություններին մասնակցելու համար[10]։ Ինչպես և պետք էր սպասել, շատ հաճախ նյութական շահը մնում էր առաջին պլանի վրա և, չնայած ստանձնած պարտավորություններին, քչերն էին վերադառնում. երբեմն այս հանգամանքը պատճառ էր դառնում ընտրությունների ձախողման կամ հետաձգման, ինչպես այդ տեղի ունեցավ, օրինակ, 1817 թվականին[11]։ Ավելին, լինում էին նաև դեպքեր, երբ գերազանցելով իրենց նյութական շահը, առանձին մարդիկ նույնիսկ հրաժարվում էին ստանձնել ընտրություններից հետո իրենց պարտականությունները։ Պերեկոպում առևտուր անող Բարուկ Մանուկով Կոստանը, օրինակ, 1818 թվականին «հիվանդության» պատրվակով հրաժարվում է վերադառնալ Հին Ղրիմ և անցնել քաղաքագլխի պարտականությունների կատարմանը, որովհետև այդ նրան կբերեր նյութական վնաս, ստիպելով թողնել Պերեկոպը։ Այդ ժամանակ նման շարժառիթներով խնդրում էր իրեն ազատել Հին Ղրիմի քաղաքագլխի պարտականություններից նաև Միքայել Գաբրիելովը[12]։

Չնայած ֆաշիստների կատարած ավերին, Ղրիմի մարզային արխիվում դրեթե լրիվ չափով պահպանվել են Հին Ղրիմի հայկական քաղաքային ռատուշայի գործերը, 1768 արխիվային միավոր[13]։ Դրանց մեջ են նաև երեք տարին մեկ անցկացված ընտրությունների արդյունքները։ Վերջիններս ցույց են տալիս, որ մինչև XIX դարի կեսերը ընտրել և ընտրվել են քաղաքի միայն հայ բնակիչները։ 50-ական թվականներից սկսած ընտրություններին որոշ մասնակցու-

10 Նույն տեղում, թթ. 4—5։

11 Նույն տեղում, թ. 16։

12 Նույն տեղում, թթ. 55—56, 75։

13 Նույն տեղում, Старокрымская городская ратуша, ф. 67.

թյուն են ցուցաբերում նաև քաղաքի ռուս բնակիչները[14], որպես միայն ընտրողներ, իսկ թե՛ քաղաքապլուխ և թե՛ ռատուշայի անդամներ նրա գոյության առաջին իսկ օրից մինչև վերջը ընտրվում էին միայն հայերից, որովհետև բարձրագույն հրամանով նրանց էր շնորհված ռատուշա ունենալու իրավունքը, իբրև Հին Ղրիմ նորաբնակ քաղաքի բնակիչների:

Ռատուշայի անդամները փաստորեն աշխատում էին հասարակական կարգով, առանց վարձատրության: Աշխատավարձ էին ստանում քարտուղարը, դրասենյակային երկու ծառայողները, ցրիչը և պահակը[15]: Ռատուշայի անդամը քաղաքից բացակայելու համար պարտավոր էր այդ մասին դրավոր դիմել և ստանալ ռատուշայի մյուս անդամների որոշմամբ կայացած թույլտվություն[16]:

* * *

Բազմատեսակ էին ռատուշայի պարտականություններն ու իրավունքները: Թեև այն համարվում էր դատական օրգան, բայց այդ չափի հասկանալ նեղ իմաստով. նրա գործունեության հետ ամենաթեռուցիկ ծանոթությունն անդամ ցույց է տալիս, որ ռատուշան քաղաքացիական և քրեական հարցերի լուծման հետ միասին և դրանցից առավել իր ժամանակը նվիրում էր բազմաթիվ այնպիսի հարցերի քննարկմանն ու ընթացք տալուն, որոնք վերաբերում էին քաղաքի վարչա-տնտեսական և հասարակական կյանքին, կենցաղին և, որպես այդպիսիք, մտնում տեղական գործադիր իշխանությունների ֆունկցիաների մեջ: Հետևապես, սրա վրա էին դրված նաև այդ օրգանների պարտականությունները:

Համառոտակի, ընդհանուր գծերով, կանգ առնենք Հին Ղրիմի հայկական քաղաքային ռատուշայի իրավունքների, պարտականությունների և գործունեության բնութագրման վրա:

Իրավական տեսակետից ռատուշայի պարտականությունները որոշվում էին 1799 թվականի հոկտեմբերի 28-ի հրովարտակով, որը պարտավորեցնում էր նրան գործերը վարել հայերի ազգային օրենքներին ու սովորություններին համապատասխան[17]: Միաժամանակ իր գործունեության ընթացքում ռատուշան ելնում էր կայսերական օրենքներից և կենտրոնական ու նահանգական կառավարություններից իջեցվող բազմատեսակ շրջաբերականներից ու հրահանգներից[18], որոնք ընդլայնում էին նրա գործունեության շրջանակները, դրանց մեջ ընդգրկելով ոչ միայն զուտ քաղաքացիական ու քրեական բնույթի դատական վեճերը, այլև մյուս քաղաքների մադիստրատների նման ամբողջ քաղաքի տնտեսական, հասարակական-քաղաքական կյանքը՝ իր բազմապիսի ճյուղերով:

Ռատուշան քննում էր բաղաքացիական վեճերի առնչությամբ ծագած գործեր և համապատասխան վճիռներ կայացնում: Դրանք խնամակալական, ժառանգական, առանձին անհատների, նրանց ու ամբողջ համայնքի միջև հողային, քաղաքի բարեկարգման, հարկերի վճարման և այլ բնույթի հարցեր էին: Հարկավոր դեպքում ռատուշան դիմում էր Թեոդոսիայի ստորին դեմստավային դատարանի օգնությանը: Քրեական գործերը լսելիս ռատուշայի իրավունքները ավելի շատ հանգում էին այս կամ այն հանցագործին նախնական քննության ենթարկելու և ապա նրա գործը դատարան հանձնելու խնդրին. անհրաժեշտության պարագայում, հանցագործին վտանգազերծելու նպատակով, ռատուշան կարող էր նրան վերցնել նախնական կալանքի, կալանքել ձեռքերը և ուղարկել քաղաքում իր իրավասության տակ գտնվող բանտը:

Այստեղ անհրաժեշտություն չկա մանրամասն լուսաբանել քրեական այն գործերը, որոնք քննարկել է ռատուշան: Բերենք, սակայն, բազմաքանակ գործերից մեկ-երկուսը, որպեսզի ավելի պարզ ցույց տանք ռատուշայի գործունեության այս բնագավառը: 1810 թվականի հունվարի 2-ին ռատուշան լսում է Հին Ղրիմի հայկական Վերափոխման եկեղեցու քահանա տեր Հակոբի հայտարարությունը այն մասին, որ հունվարի 1-ի լույս 2-ի գիշերը ոմն Գրիգորիս բռնվել է հանցանքի վայրում, երբ փորձել է քանդել հիշյալ եկեղեցու պատը: Սրան, ձեռքերը շղթայված, բերում են նիստի: Պարզվում է, որ նա կալանավորվում է արդեն երկրորդ անգամ և այն անձն է, որ մեկ ուրիշի հետ միասին ժամանակին մեղադրվում էր գողության և քաղաքում կռիվներ սարքելու մեջ: Ռատուշան իր անդամներին հանձնարարում է պարզել նրա գործած նախկին և նոր հանցանքների մանրամասները և զեկուցել այդ մասին՝ համապատասխան վճիռ կայացնելու համար[19]: Ահա և մյուս օրինակը. 1835

14 Նույն տեղում, ց. 1, գ. 1339, թթ. 4, 5, 23:
15 Նույն տեղում, գ. 799, թ. 18:
16 Նույն տեղում, գ. 10, թ. 37:
17 «Собрание актов...», т. I, стр. 222.
18 Крымоблархив, ф. 67, оп. 1, д. 10, л. 1.
19 Նույն տեղում, գ. 35, թ. 1:

թվականի հունվարի 9-ի նիստում (ներկա էին բուրգոմիստր Աղաջան Լուսեղենովը, անդամներ Սիմոն Հովհաննեսովը և Սերոբ Խաբաբջանովը) լսվում է Աստվածատուր Հովհաննեսովի հայցը այն մասին, որ հունվարի 7-ի երեկոյան, երբ ինքը ընտանիքով բացակայել է տնից, ջարդել են իր տան դռների փականքը, խուժել ներս և տարել մեծ գումարի արժողությամբ ապրանք։ Եղած ավյալներով պարզվում է, որ հանցագործը Թեոդոսիայի գավառի Մուրադչայ-Սարայ գյուղի բնակիչ Բեկի Մեչնարիֆ օղլին է։ Նրա տանն էլ հենց հայտնաբերվում է գողոնի մի մասը։ Այս նիստում ռատուշան որոշում է «կատարել անհրաժեշտ քննություն և արդյունքների մասին հատուկ զեկուցել»[20]։ Երեք օր հետո, հունվարի 12-ի նիստում, կրկին անդրադառնալով այս խնդրին, ռատուշան որոշում է այդ գործը «հանդամանորեն հետաքննելու համար ուղարկել Թեոդոսիայի ստորին զեմստվային դատարան, ուր, ըստ տնօրինության, պահակների հսկողությամբ ուղարկել ամբաստանյալներ Թեոդոսիայի գավառի Մուրադչայ-Սարայ գյուղի բնակիչ Բեկի Մեչնարիֆ օղլուն և Թեոդոսիայի մեշչանության մեջ գրանցված բնիկ վրաստանցի Սավա Իվանով Գուրջուն..., որպեսզի այդ դատարանը լրացնելով այս գործը, այն ուղարկի Թեոդոսիայի գավառային դատարան՝ քննություն և վճիռ կայացնելու համար, իսկ այս գործի և ամբաստանյալների ստանալու մասին տեղեկացնի ռատուշային»[21]։

Գործից, այսպիսով, երևում է, որ քրեական գործերով վերջնական վճռի իրավունքը վերապահվում էր գավառային դատարանին, չնայած գործի նախնական քննությունն ու հանցագործների նկատմամբ առաջին պատժիչ միջոցների կիրառումը, ընդհուպ մինչև նրանց կալանավորելն ու կալանդելը, կատարում էր ռատուշան։

Ռատուշայի բոլոր տարիների (1808—1869) նիստերի արձանագրությունները[22] վկայում են, որ այն իր ժամանակի գերակշիռ մասը տրամադրում էր Հին Ղրիմ քաղաքի բարեկարգման, առևտրի, տնտեսական զարգացման, հարկերի գանձման և նման տիպի այլևայլ հարցերի։

Սկզբից ևեթ ռատուշան պայքար ծավալեց 1799 թվականի հրովարտակով Հին Ղրիմի հայերին շնորհված 12.000 դեսյատին հողերը լրիվ չափով սահմանագծելու և նրանց տալու համար։ Այս պայքարը բավական երկար ժամանակ խլեց[23]։ Սկսած 1809 թվականից ընդհուպ մինչև 1825 թվականը ռատուշան բաղմիցս զբաղվեց նաև քաղաքում շերամապահության զարգացման հարցերով[24]։

Մանավանդ զգալի էր ռատուշայի մասնակցությունը առևտրի կազմակերպման մեջ։ Քաղաքում ռատուշան էր անցկացնում վաճառականների ամենամյա ցուցակագրումն ըստ գիլդիաների, ստանում և բաշխում առևտրական վկայագրերը, տալիս առևտուր անելու հավատարմագրեր ու լիազորագրեր, վերցնում դրանց դիմաց հասանելիք տուրքերը։ Ամսե-ամիս կամ եռամսյակ առ եռամսյակ ռատուշան նահանգական իշխանություններին զեկուցում էր այդ գանձումների մասին։ Քաղաքում առևտուրը ծավալելու համար ռատուշան հսկում էր առևտրական կետերի ստեղծմանը, եղած պայմանագրերի ժամանակին կատարմանը, քաղաքը պարենամթերքով ապահովելու գործին և այլն։ Ռատուշան ապահովում էր այլ քաղաքներում բացվող առևտրական տոնավաճառներին կամ թե առևտրի հանված ապրանքների վաճառքին քաղաքի հայ առևտրականների մասնակցությունը, այդ մասին նախապես քաղաքում տարածելով համապատասխան հայտարարություններ։ Նահանգական իշխանություններից նա ստանում և ցանկացողներին տալիս էր անձնագրեր, նրանց շնորհելով որոշակի ժամանակով այլ նահանգներում առևտուր անելու իրավունք։

Ծավալելով առևտրա-տնտեսական այսօրինակ գործունեություն, ռատուշան, որպես ունևոր դասի օրգան, դրանով մեծապես ծառայում էր վաճառականների, առևտրական ու արհեստագործական դասերի առավել հարուստ շերտերի շահերին։ Իսկ որպես միապետության կողմից դրված օրգան՝ ռատուշան անընդհատ պայքար էր ծավալում, որպեսզի քաղաքի համայնքը անդերի ու ժամանակին կատարեր պետության հանդեպ ունեցած իր պարտականությունները։ Այս առումով հատկապես անհրաժեշտ էր նրա դերը իր կարևոր պարտականություններից մեկի՝ հարկերի գանձման գործում, թեև, երբեմն, մասսաների աղքատության հետևանքով, նա ստիպված էր լինում դիմել գանազան միջնորդությունների։ Հարկերը հավաքում էր քաղաքի ավագը՝ այդ առթիվ ռատուշայից նրա անունով տրված հրամանի համաձայն։ Նա պարտավոր էր հարկե-

20 Крымоблархив, ф. 67, оп. 1, д. 647, лл. 11—12.

21 Նույն տեղում, թ. 16։

22 Նույն տեղում, գ. 10, թ. 1 և գ. 1735, թթ. 7—8։

23 Крымоблархив, ф. 67, оп. 1, д. 10, л. 105.

24 Նույն տեղում, գ. 10, թ. 127, գ. 28, թ. 4, գ. 350, թ. 1—2 և այլն։

րը գանձելուց հետո զեկուցագիր ներկայացնել ռատուշա՝ հավաքված հարկերի և մնացած պարտքերի մասին[25]։

Ռատուշայի իրավասությանն էին ենթակա նաև խնամակալական և ժառանգական գործերը, որբային դատարանը։ Նա էր զբաղվում հայերի՝ ռուսահպատակություն ընդունելու և Հին Ղրիմում գրանցելու հարցերով, քննարկում այդ հարցերը և իշխանությունների առաջ միջնորդություններ անում։ Իսկ ռուսահպատակ հայերին ռատուշան ինքնուրույն կերպով կարող էր ընդունել և գրանցել համայնքի կազմում, բացառությամբ առանձին դեպքերի։

Համառոտակի այսպիսին էր իրավական, վարչա-տնտեսական և հասարակական այն հարցերի շրջանակը, որոնք կազմում էին Հին Ղրիմի հայկական քաղաքային ռատուշայի գործունեության ոլորտը։ Ռատուշան գոյատևեց մինչև 1870 թվականը, թեև դեռևս 1866 թվականի ապրիլի 13-ին ընդունվել էր օրենք սակավ բնակչություն ունեցող քաղաքներում մագիստրատուներն ու ռատուշաները վերացնելու և դրանց փոխարեն քաղաքային պարզեցված հասարակական վարչություններ ստեղծելու մասին։ Վերացված հայկական ռատուշայի փոխարեն ստեղծվում է Հին Ղրիմի քաղաքային պարզեցված հասարակական վարչությունը։

* * *

Ղարասուբազարի հայ կաթոլիկական (իմա հռոմեա-կաթոլիկների) դատարանը, որի գործունեությունն սկսվում է 1790 թվականից և ավարտվում 1870 թվականին, ընտրվում էր իր իրավասությանը ենթակա համայնքի վաճառականների ու մեշչանների կողմից ճիշտ այն կարգով, ինչպես ընտրվում էին Հին Ղրիմի հայկական քաղաքային ռատուշայի անդամները։ Դատարանի կազմի մեջ մտնում էին քաղաքագլուխն ու երեքատենակալող անդամներ, որոնցից մեկը նախագահ էր, իսկ մյուս երկուսը՝ ատենակալներ։ Բացի սրանցից, դատարանն ուներ քարտուղար և գրասենյակային ծառայողներ։ Քաղաքագլուխն ու ատենակալները ընտրովի էին, իսկ մյուսները նշանակվում էին կառավարության կողմից։

Քաղաքագլուխը ոչ թե ամբողջ Ղարասուբազարի, այլ միայն հայ-կաթոլիկների դատարանին ենթակա համայնքի անօրենն էր։ Սրանից զատ քաղաքն ուներ իր դուման և քաղաքագլուխը, որի ընտրություններին դատարանի իրավասության տակ գտնվող համայնքը նույնպես մասնակցում էր, մի երևույթ, որը գոյություն չուներ Հին Ղրիմում, որովհետև այնտեղ քաղաքի տերն ու անօրենը

25 Крымоблархив, ф. 67, оп. 1, д. 35, л. 159.

Հայկական ռատուշան էր, այնինչ Ղարասուբազարում հայ-կաթոլիկ դատարանը միայն իր համայնքի անօրենն էր։ 1847 թվականին, օրինակ, Ղարասուբազարի քաղաքագլուխ Սերոսմովը փորձում է զանազան խորամանկ ուղիներով հայ-կաթոլիկական դատարանի համայնքին զրկել քաղաքագլխի ընտրություններին մասնակցելու իրավունքից։ Հայերը կոահում են նրա միտումը և իրենց հավատարմատարներ Խաչերես Ներսեսովի և Խաչիկ Մրզայանի միջոցով պահանջում դատարանից միջնորդել նահանգական իշխանությունների առաջ՝ կանխելու համար քաղաքագլխի այդ կարգադրության իրագործումը, որովհետև «մեր հասարակությունը,— գրում էին նրանք,— Ղարասուբազարում վերաբնակվելուց ի վեր միշտ մասնակցել է քաղաքագլխի ընտրությանը, այն իրական պատճառաբանությամբ, որ նա (հասարակությունը— Վ. Մ.) մասնակից է քաղաքագլխի և դումայի անդամների կողմից տնօրինվող քաղաքային եկամուտներին»[26]։ Հայ-կաթոլիկական համայնքի բողոքը հարգվում է, և դատարանին ենթակա հայերը (կաթոլիկ թե լուսավորչական) շարունակում են մասնակցել ընտրություններին։

Թեև դատարանի իրավասությանը ենթակա էին նաև բավականին թվով հայ-լուսավորչականներ ու հույներ, բայց դատարանի գոյության ավելի քան 70 տարվա ընթացքում նրանցից հատ ու կենտ մարդիկ էին ընտրվում նշված պաշտոններում։ Սկզբից մինչև վերջ հիմնականում այդ պաշտոններում ընտրվում էին հայ-կաթոլիկները, որովհետև 1779 թվականի նոյեմբերի 14-ի հրովարտակով նրանց էր շնորհված դատարան ունենալու իրավունքը։ Պահպանվել են դատարանի գործավարության և ընտրությունների բոլոր գործերը[27]։ Ընտրությունների ցուցակները, որոնցում հանդամանորեն նշվում էին ընտրված անձի ծառայություններն ու կարողությունը, վկայում են, որ իր սոցիալական կազմով դատարանը հանդիսացել է հայ-կաթոլիկ վաճառականների և մեշչանների ամենահարուստ շերտի օրգանը[28]։ Ըստ մեծի մասին, սրանք մեծահարուստ առևտրականներ էին, որոնք իրենց ձեռքը կենտրոնացնելով մեծ չափով հողեր, առևտրից ոչ պակաս եկամուտ էին ստանում նաև այգեգործությունից, գինեգործությունից և անտեսության այլ ճյուղերից։

Կաթոլիկ դատարանի պահպանման ծախսերը կատարվում էին պետության հաշվին։ Այդ ծախսերը տարբեր տարիներ տար-

26 Крымоблархив, ф. 179, оп. 1, д. 338, л. 1.

27 Նույն տեղում, Карасубазарский римско-католический суд, ф. 179.

28 Նույն տեղում, ֆ. 179, ց. 1, գգ. 275, 322 և այլն։

բեր գումարի էին հասնում։ Աշխատավարձի գումարը դատարանում 1790 թվականին, օրինակ, կազմում էր 520 ռուբլի։ Եթե դրան ավելացնենք 300 ռուբլի գրասենյակային և այլ տիպի ծախսումները, ապա այդ տարվա ընդհանուր գումարը կկազմի 820 ռուբլի[29]։ Հետագայում սկսում են վճարել նաև դատարանի ընտրովի անդամներին։ Աշխատավարձ չէր տրվում միայն քաղաքագլխին։ 1865 թվականին, օրինակ, դատարանի բոլոր աշխատողների տարեկան աշխատավարձը կազմել էր 198 ռ. 60 կոպեկ։ Ըստ պահպանված տոմսակացուցակի, այդ գումարը բաշխվել էր հետևյալ կերպ.

1. Դատարանի նախագահ, Ղարասուբազարի մեշչան Եսայի Դուշչիևին՝ 33 ռուբլի 96 կոպեկ.
2. Ատենակալ, Ղարասուբազարի 2-րդ գիլդիայի վաճառական Ակիմ Սելիմովին՝ 28 ռուբլի 29 կոպեկ.
3. Ատենակալ, Ղարասուբազարի մեշչան Միխայիլ Տարասովին՝ 28 ռուբլի 29 կոպեկ.
4. Քարտուղար, տիտղոսավոր խորհրդական Արիստիդ Կոնդրակուն՝ 56 ռուբլի 61 կոպեկ.
5. Գրասենյակային ծառայող Պյոտր Անտիկին՝ 51 ռուբլի 45 կոպեկ.

Ընդամենը՝ 198 ռուբլի 60 կոպեկ[30]։

Չնայած ռուսականացրած իրենց ազգանուններին՝ և Ակիմ Սելիմովը, և Միխայիլ Տարասովը հայեր էին. առաջինը լուսավորչական էր, իսկ երկրորդը՝ կաթոլիկ[31]։

Աշխատավարձի գումարի՝ 1790 և 1865 թվականների միջև եղած տարբերությունը բացատրվում է նրանով, որ նախկին գումարը, 1844 թվականից սկսած, վերածվում էր արծաթյա ռուբլու[32]. աշխատավարձի գումարը մնացել էր նույնը, փոխվել էր միայն նրա դուտ դրամական արտահայտության ձևը։

Դատարանի նկամուտները գոյանում էին առևտրական փաստաթղթերի բաժանումից, դրոշմաթղթերի վաճառքից (դրոշմատուրքից), բանկերում պահվող գումարների տոկոսներից, պետական հատկացումներից և այլ աղբյուրներից։ Դատարանի կազմած տեղեկագրերից, օրինակ, երևում է, որ 1836 թվականին դատարանն ուներ 10.544 ռուբ. 44 1/4 կոպեկի մուտք արված գումար,

29 ЦГИА СССР, ф. 1286, оп. 1, д. 46, л. 103 об.
30 Крымоблархив, ф. 179, оп. 1, д. 324, л. 5.
31 Նույն տեղում, գ. 322, թթ. 4—5։
32 Նույն տեղում, գ. 324, թ. 1։

որից 2233 ռուբ. 55 կոպեկը կազմում էր հենց այդ տարվա մուտքը[33]։

Դատարանի նիստերը վարվում էին հայերեն և ռուսերեն։ Գործավարությունը (գրագրությունները) կատարվում էր ռուսերեն։ Այլ կերպ չէր էլ կարող լինել, որովհետև դատարանը պաշտոնապես կապված էր նահանգական իշխանությունների հետ, ենթարկվում էր նրանց։ Այս կամ այն որոշումը իրեն ենթակա համայնքին մատչելի դարձնելու նպատակով դատարանը դրանք թարգմանում էր հայերեն[34]։ Գրասենյակային ծառայողը պատասխանատու էր դատարանի գործերի պահպանման համար. դրանով նա միաժամանակ փաստորեն արխիվային գործեր էր վարում։ Դատարանը պարբերաբար լսում էր այդ ծառայողի հաշվետվությունը գործավարության ընթացքի մասին[35]։

Ղարասուբազարի հայ-կաթոլիկական դատարանի գործունեությունը խարսխված էր իրավական այն հիմքի վրա, որ շնորհված էր նրան Եկատերինա II-ի 1779 թվականի նոյեմբերի 14-ի հրովարտակով, Ղրիմից դուրս գալու ժամանակ։ Հրովարտակի 5-րդ հոդվածում ասված էր. «Բնակության հաստատելուց հետո հիմնել ռատուշա, որը կոչել կաթոլիկ դատարան, այնտեղ դատ և դատաստան տեսնել ձեր իրավունքներին և սովորություններին համապատասխան, ձեր իսկ միջից ընտրված պետերի միջոցով, որոնք օգտվում են Աղովի նահանգի հաստիքային աստիճաններից ու աշխատավարձից և ենթակա են կուսակալական վարչությանը»[36]։

Հայ-կաթոլիկական դատարանի իրավունքների ու պարտականությունների այս սահմանումը չպիտի հասկանալ զուտ դատական օրգաններին հատուկ ֆունկցիաներով միայն։ Հին Ղրիմի հայկական ռատուշայի նման նա ևս օգտվում էր այն իրավունքներից, որպիսիք ունեին կայսրության մեջ գոյություն ունեցող մյուս մագիստրատներն ու ռատուշաները, այսինքն՝ տնօրինում էր իր իրավասության ենթակա վաճառականների, մեշչանների և արհեստավորների դատական և վարչա-տնտեսական գործերը։ Ինչպես 1851 թվականի հունիսի 13-ին դատարանը զեկուցում էր Տավրիկայի նահանգական կառավարությանը, այդ գործերը հայցային (интересные), քրեական, քննչական, վիճաբանական, խնամակալական և այլ բնույթի էին։ Դատարանը զբաղվում էր նաև ընտ-

33 Նույն տեղում, գ. 223, թթ. 4—6 և 10։
34 Նույն տեղում, գ. 203, թ. 35։
35 Նույն տեղում, գ. 249, թ. 1։
36 ЦГИА СССР, ф. 1152, 1840 г., д. 129, л. 18.

րությունների, հարկերի գանձման, վաճառականների ցուցակագրման, վաճառականներին և մեշչաններին բացակայելու համար գրավոր թույլտվություններ տալու, առևտրին հսկելու, ժառանգական վաճառականական գրամագլուխներից մեկ տոկոսանոց մաքսը գանձելու և այլ խնդիրներով: Բացի այդ, դատարանը, իբրև պետության դրածո ատորին մի օրգան, լիակատար պատասխանատվություն էր կրում վերևից իջեցված պաշտոնական բոլոր որոշումների ու կարգադրությունների անշեղ կատարման համար, թեև կայսերական հրովարտակով նա իր գործերը պիտի վարեր հայերի ազգային սովորություններին ու օրենքներին համապատասխան:

Իր անմիջական պարտականությունները կատարելիս հայ-կաթոլիկական դատարանը ամենից շատ ստիպված էր լինում զբաղվել առևտրին վերաբերող խնդիրներով: Հարցն այն է, որ XVIII դարի վերջին և XIX դարի առաջին կեսին Ղրիմը արդյունաբերական զարգացման առումով գրեթե աննկատ քայլեր էր անում, և գյուղատնտեսության կողքին երկրամասի տնտեսական կյանքում շարունակում էր գերակշիռ դեր խաղալ առևտուրը: Այդպիսի պայմաններում զարմանալի չէ, որ դատարանի վարչա-տնտեսական գործունեության մի զգալի հատվածը զբաղեցրել էր առևտուրը: Խնդիրը միայն այն չէ, որ ստանալով առևտրական արտոնագրեր և տոմսեր տալու իրավունք, դատարանը պետք է զբաղվեր դրանց հետ կապված բոլոր հարցերով (արտոնագրեր տալու մասին ամեն ամիս կամ երեք ամիսը մեկ նահանգական իշխանություններին զեկուցելը, դրանց գիմաց սահմանված գումարների գանձումը և ժամանակին մուծումը պետական գանձարան և այլն), այլև այն, որ դատարանը զգալի ժամանակ էր տրամադրում նաև բուն առևտրի կազմակերպման հարցերին (առևտրական կրպակների բացում, առևտրի վրա հսկողության սահմանում, հավատարմագրերի և լիազորագրերի հաստատում և այլն), ինչպես նաև վաճառականական ցուցակների կազմմանը: Ընդ որում, այս վերջինները խիստ փոփոխական էին. ամեն տարվա վերջին վաճառականական այս կամ այն դիլդիայում մնալու կամ նոր գրանցվելու համար յուրաքանչյուր անձ (կամ ընտանիք) պետք է դատարանին համապատասխան հայտարարություն աներ, նշելով իր գրամագլխի քանակը: Այս առիթով կխոսենք առևտրին նվիրված բաժնում, այստեղ, սակայն, շեշտենք, որ այդ բոլորը բավականին ընդլայնում էին դատարանի՝ առևտրի հետ կապված գործունեությունը:

Վերը մենք մոտավորապես տվեցինք ընդհանուր բնութագիրը այն հարցերի, որոնք Զարասուբազարի հայ-կաթոլիկների դատա-

րանը քննարկում և ընթացք էր տալիս՝ կապված իր իրավունքների ու պարտականությունների հետ:

Հին Ղրիմի հայկական քաղաքային ռատուշայի և Զարասուբազարի հայ-կաթոլիկական դատարանի իրավասությունից դուրս էին Ղրիմի մյուս քաղաքներում ու բնակավայրերում՝ Եվպատորիայում, Թեոդոսիայում, Սիմֆերոպոլում, Արմյանսկի Բազարում, Բախչիսարայում և այլուր հաստատված հայ համայնքները: Սրանք, իսկ ռատուշան ու դատարանը փակվելուց հետո նաև Հին Ղրիմի ռատուշային ու Զարասուբազարի հայ-կաթոլիկական դատարանին ենթակա հայերը, անմիջական կերպով ենթարկվում էին ցարական իշխանության տեղական օրգաններին: Ըստ իրենց կարողության հայ գաղութի ունևոր դասի ներկայացուցիչներից ոչ քչերը կարողանում են (մանավանդ 1870-ական թվականներից սկսած, երբ փակված էին թե ռատուշան և թե դատարանը) վարչա-տնտեսական պաշտոններում որոշակի տեղեր գրավել: Տակավին XIX դարի հենց սկզբին Ախտիյարի (Սևաստոպոլի) առևտրական մաքսատան դիրեկտորն էր հայազգի Տ. Ի. Այվազովը, որը այդ պաշտոնին հասել էր, ըստ երևույթին, հայերին ռուսական շրջանները վերաբնակեցնելու գործում ցուցաբերած իր ջանասեր ծառայությունների համար[37]: 1870—80-ական թվականներին մի շարք պաշտոններ էր վարում Սիմֆերոպոլի հայ համայնքի ամենահարուստ ներկայացուցիչներից մեկը՝ Պետրոս Սահակի Թոփալյանը (Տոպալովը): Սա քաղաքի դումայի և նրա գնահատող հանձնաժողովի անդամներից էր, առևտրական պատգամավոր, Տավրիկայի հարավային ընկերության անդամ, էջմիածնի գանձանակով հանգանակության հոգաբարձու[38]: Ցարական իշխանություններին նվիրաբերած իր ծառայության համար նա արժանացել էր բազմաթիվ պարգևների, այն է՝ երկու ոսկե մեդալի (Ստանիսլավի և Աննայի ժապավենների վրա), ս. Աննայի երրորդ աստիճանի և Ստանիսլավի երկրորդ աստիճանի շքանշանների[39]: Պ. Ս. Թոփալյանը ղրիմահայ առևտրա-վաճառականական դասի այն մեծահարուստ ներկայացուցիչներից էր, որոնք իրենց տնտեսական շահերով և քաղաքական նկատառումներով միահյուսվել էին ցարական իշխանությունների և շահագործող դասակարգերի հետ:

1892 թվականի հունիսի 11-ին ընդունվում է քաղաքային կանոնադրություն՝ դումաների ընտրություններին մասնակցելու իրա-

37 ЦГИА СССР, ф. 13, оп. 1, д. 28, л.л. 1—3.

38 Крымоблархив, ф. 63, оп. 1, д. 422, л.л. 2—3.

39 Նույն տեղում, թ. 4բ:

վունքի մասին։ Այդ օրենքը մասնակցության իրավունքի հիմքում դնում էր ունեցվածքային ցենզը։ Ղրիմի քաղաքներով մեկ սփռված հայության ճնշող մեծամասնությունը զրկված էր ընտրություններին մասնակցելու իրավունքից։ Սիմֆերոպոլի հայերից, օրինակ, քաղաքային դումայի ընտրություններին 1896 թվականին մասնակցում էր ընդամենը 80 մարդ։ Ընտրողների ցուցակներում գրանցվածների թվում չկար մեկը, որ ունենար 1000 ռուբլուց պակաս անշարժ գույք[40]։

XX դարի սկզբին Տավրիկիայի նահանգի մի շարք քաղաքներում (Արմյանսկ, Մելիտոպոլ, Ղարասուբազար) հայ ունևոր դասի առանձին ներկայացուցիչների հաջողվում է նույնիսկ տիրանալ այդ քաղաքների ամենաարժեքավոր պաշտոններին՝ դառնալ քաղաքագլուխ[41]։

* * *

Ղրիմահայ կյանքում իր ուրույն տեղն ու դերն ուներ հայ հոգևորականությունը։ Գաղութահայ պայմանները այնպիսին էին, որ եկեղեցին ու նրա օրգանները, բացի իրենց կրոնական խնդիրներից, այստեղ առավել շատ էին միջամտում համայնքի աշխարհիկ գործերին, որով և նրանց գործունեությունը մի զգալի մասով հասարակական նշանակություն էր ստանում, կապվելով ղրիմահայության ներքին կյանքի շատ և շատ կողմերի հետ։ Այս առումով էլ հարկավորություն է առաջանում մի փոքր կանգ առնել հայ հոգևոր օրգանների կառուցվածքի վրա Ղրիմում։

Մինչև 1803 թվականը ղրիմահայության գործերը վարում էր Նոր Նախիջևանի հոգևոր կառավարությունը։ 1803 թվականին ռուսահայ թեմի առաջնորդ (հետագայում՝ 1810—1831 թթ. կաթողիկոս) Եփրեմի[42] կարգադրությամբ սկսվում է Ղրիմի հոգևոր կառավարության գործունեությունը։ Այս առթիվ Ղարասուբազարի հայկական դպրոցի հոգաբարձուների 1822 թվականի ապրիլին Հովակիմ Լազարյանին ուղղած նամակում կարդում ենք. «Ձի որպես մեք հատուկտիր ժողովեցաք աստ՝ նոյնպես և հոգևորականք մեր՝ ըստ պատահման առօրական և դարձք էին, էր ոչ բոլոր այս վիճակ մեկ քահանայ ունէր, ի հայոց... Բայց ժողովուրդք, թէև սակաւք, յեօթն

40 «Крым» (газета), Симферополь, 1896, № 235.

41 «Լույս», հանդես, Թիֆլիս, 1905, էջ 165։

42 Եփրեմը մինչև 1810 թ., սկսած 1801 թվականից, նշանակված էր ռուսահայ թեմի առաջնորդ, առանց Մոլդավիայի ու Բեսարաբիայի, որոնց հայկական եկեղեցիները ենթարկվում էին Գրիգոր արքեպիսկոպոսին (1806—1827)։

քաղաքն որ ցրուեալք, մինչև 1803 թիւն ի Նախիջևանու հոգևոր կառավարութենէն կախեալ էաք, ապա սրբազնակատար Եփրեմ կաթողիկոսն առաքելով զհնիք հոգևոր կառավարութեան անուամբ, իբր ունեցաք մնալէն կառավարել առանց զծագումն և զվախճան գործոյն գիտելոյ»[43]։

Զարգացող դեպքերը այնպիսին էին, որ էջմիածինը չէր կարող իրադարձությունների տարերային ընթացքին թողնել հոգևոր գործերի կառավարումը։ Բուլղար դաղթականների տեղավորման հետ ծագած հողային վեճերը, որոնք սպառնում էին մեծապես վնասել ս. Խաչ վանքի (ուրեմն և Մայր աթոռի) տնտեսական շահերին, հրամայաբար պահանջում էին Ղրիմ ուղարկել ձեռներեց, բանիմաց և գործունյա մի հոգևորական։ Այդ պահանջը ավելի կարևորություն էր ստանում այն պատճառով, որ վանքի հողերի նկատմամբ բուլղարների հավակնությունները արժանացել էին Հին Ղրիմի հայերի հավանությանն ու պաշտպանությանը։ Ահա այս շրջանում, 1812 թ. «հայոցդական պարտավորությամբ» Ղրիմ է գալիս Մանվել վարդապետ Գյումուշխանեցին։ Սա եռանդուն գործունեություն է ծավալում ս. Խաչ վանքի հողերը պահպանելու համար, «թէև անյաջողք եղեն ժամանակքն ի կողմունս մահտարաժամք յայտնելովք... և ս. Խաչ վանքի կալուածոց ըստ պուղարաց և նախարարաց տարաձայնութեանց ընդ յայսորդին մերոյ,— կարդում ենք Հ. Լազարյանին գրված նույն նամակում,— որովք ո՛չ կարէր զկայ առնուլ ուրեք, ի՛ կուպեռնին, յատես ի Գրիգորիպոլ և ի Պեթերբուրգ երթևեկութեամբք, որք յայտնիք են ձերում ազգային բարերարութեան»[44]։

Այսպիսով, անհրաժեշտությունը ստիպում է էջմիածնին հոգևոր կառավարության կողքին ամբողջ նահանգի հայերի գլխին պահել նաև հաջորդի (առաջնորդական փոխանորդի) պաշտոնը, որը պահպանվեց մինչև XIX դարի կեսերը։ Օրինակ, 1842 թվականին Ղրիմի հաջորդն էր Թադևոս վարդապետ Բեկզադյանը[45]։ 1840-ական թվականների կեսերից այս պաշտոնը իր տեղը զիջում է Ղրիմի հայ հոգևորականների և վանքի գլխավոր հոգաբարձուի[46] պաշտոնին։ Այս վերջինը վարում էին ղրիմեցի աշխարհիկ, ճանաչված մարդիկ և նման փոփոխությունն էլ, հավանաբար, թելադրված է եղել հենց այդ անհրաժեշտությամբ։ Ըստ երևույթին, Մանվել վարդապետից

43 Մատենադարանի արխիվ, Լազարյանների ֆոնդ, թղթ. 105, գ. 11, վ. 130, թ. 1ա։

44 Նույն տեղում։

45 Նույն տեղում, ֆ. կաթ. դիվան, թղթ. 102, վ. 32, թ. 1ա։

46 Նույն տեղում, թղթ. 121, վ. 21, թ. 2ա։

հետո հաջորդների վարած տնտեսական գործերը չեն բավարարել էջմիածնին, և նա որոշել է դրանք հանձնել աշխարհիկ անձանց, որոնք, բնականաբար, չէին կարող հաջորդ լինել. դրա համար էլ այս վերջինի փոխարեն հանդես է եկել հոգաբարձուի պաշտոնը: 1846 թվականին այդ պաշտոնը հանձնարարվում է ղրիմահայ մեծահարուստ Թ. Տելվեթյանին: Գլխավոր հոգաբարձուն հետևում էր, որպեսզի ղրիմահայ եկեղեցիների երեսփոխաններն ու մյուս պաշտոնյաները ժամանակին և բարեխղճորեն կատարեն իրենց պարտականությունները Ղարասուբազարի հայ հոգևոր կառավարության և էջմիածնի հանդեպ: Խոսքը տնտեսական հաշիվների մասին էր: 1846 թվականի սեպտեմբերի 17-ին Ներսես Աշտարակեցուն գրած իր հաշվետու նամակում գլխավոր հոգաբարձու Թ. Տելվեթյանը բողոքում էր, թե եկեղեցիներից և ոչ մեկը դեռևս չի ներկայացրել իր տարեկան հաշիվները. «Մենք կարգադրեցինք այնպես,— գրում էր նա,— որ հոգևոր կառավարությունն ամենայն տեղ հրովարտակն, որ ամենայն երեցփոխանք և գործակատարք յուր ժամանակին ըստ առաջնու սովորության և առաջի օրինակին հաշիվներն ուղարկեն հոգևոր կառավարության և երբ կառավարությունն բոլորն ստանա, իմաց անեն մեզ և մենք գնամք ի միասին կառավարության հաշիվներուն վերահասու լինիմք, եթե պակաս են այնպիսի հաշիվք անհամեմատ օրինակին կամ երևելի պակասության այն ժամանակին ժուռնալ անիմք կառավարությանս և մենք ըստ սրա գրեմք և պահանջեմք պակասության կամ այն ժամանակին, եթե հարկը պահանջէ, գնա անդամն կառավարության կամ մենք վերահասու լինիմք, որ չը լինի ծանրություն ոչ կառավարության, ոչ ժողովրդո և ոչ մեզ և մենք ավելորդ փողն ստանամք և ձեռնադրեմք ժուռնալին, որ այսքան փող, այսինչ եկեղեցուն պատկանյալ ստացա և ուղարկիմ յուրապատկան տեղն ըստ հրամանի տյառնդ, և գործք մնա կառավարության միայն ժուռնալն ցույց տա ամենայն ինչ»[47]:

Մենք հատուկ միտումով բնագրածակ քաղվածք բերեցինք հիշյալ փաստաթղթից, որովհետև նրանում պարզորոշ երևում են ընդհանուր հոգաբարձուի հիմնական պարտականությունները, ինչպես և դրանցով պայմանավորված այդ պաշտոնի ստեղծման տնտեսական շարժառիթները, որոնց մասին ակնարկվից վերևում:

Տեղերում, եկեղեցիների տնտեսական հաշիվները վարելու համար, կային ընտրովի երեցփոխաններ[48], կաթողիկոսի կողմից նշա-

47 Նույն տեղում, թ. 2ա և բ:

48 Նույն տեղում, անհատական անձանց ֆոնդ, թղթ. 132, վ. 222, մաս 1:

նակված վերատեսուչներ և կառավարիչներ[49]: Հատուկ ուշադրություն էր դարձվում ս. Խաչ վանքի՝ Պերեկոպի գավառում գտնվող հողերի կառավարմանը: 1845 թվականի հուլիսի 7-ին, օրինակ, Ներսես կաթողիկոսը Արմյանսկի Բագարում հատուկ կոնդակով Գևորգ Սահիանի Սպենդիարյանին նշանակում է այդ հողերի կառավարիչ, երեք տարի ժամանակով[50]:

Անդրադառնանք, սակայն, Ղարասուբազարի հայ հոգևոր կառավարության և ամբողջ Ղրիմի հաջորդի պարտականություններին ու իրավունքներին: Հոգևոր կառավարությունը կոչվում էր Ղարասուբազարի, որովհետև այնտեղ նրա նստավայրն էր, մինչդեռ նրա իրավասությանը ենթակա էին ղրիմահայ բոլոր եկեղեցիները: Ինքը՝ կառավարությունը, ենթարկվում էր Նախիջևան-Բեսարաբիայի հայ-լուսավորչական թեմի առաջնորդին և Ղրիմի հաջորդին:

Թուրքական տիրապետության շրջանում Մոլդավիան և Վալախիան, իրենց հարակից շրջանների հետ միասին, կազմում էին հայկական առանձին մի թեմ[51], իսկ Ռուսաստանում գտնվող հայկական եկեղեցիներն ունեին իրենց թեմը, որի կենտրոնը Աստրախանն էր: 1812 թվականին Բեսարաբիան միանում է Ռուսաստանին: Ռուսաստանում գտնվող հայկական եկեղեցիները դրանից մի քանի տարի հետո բաժանվում են երկու թեմերի: Նոր Նախիջևանը, Ղրիմը և Եվրոպական Ռուսաստանի ամբողջ հարավ-արևմուտքի և արևմուտքի, հետագայում նաև Մոսկվայի ու Պետերբուրգի հայկական եկեղեցիները կազմում են Նախիջևան-Բեսարաբիայի թեմ՝ Քիշնև կենտրոնով, իսկ մյուսները մտնում Աստրախանի թեմի մեջ[52]:

1806—1827 թվականներին Բեսարաբիայի և Մոլդավիայի թեմի առաջնորդը Գրիգոր արքեպիսկոպոսն էր, սակայն սրան ենթարկվում էին միայն Բեսարաբիայի ու Մոլդավիայի հայկական եկեղեցիները: Նախիջևանի, Ղրիմի և աստրախանյան հայերի հոգևոր առաջնորդը 1801—1810 թվականներին Եփրեմ արքեպիսկոպոսն էր, իսկ 1810 թվականից մինչև 1828 թվականը Ռուսաստանի (բացի Բեսարաբիայից, 1827 թ. Գրիգոր արքեպիսկոպոսի մահից հետո՝ նաև Բեսարաբիայի) բոլոր հայկական եկեղեցիները գտնվում էին Հովհաննես արքեպիսկոպոս Ներսիսյանի (նույնը

49 Նույն տեղում, թղթ. 154, վվ. 20, 34:

50 Նույն տեղում, վ. 20:

51 ЗООИД, т. 29, II, стр. 83 (*Л. Меликсет Беков*, Из материалов для истории армян на юге России).

52 Նույն տեղում:

Դաւոնակերյանի) հովվության ներքո[53]։ Ըստ երևույթին Ռուսաստանի ներքին գործերի մինիստրության օտարազավանների հոգևոր գործերի դեպարտամենտն ու էջմիածինը թեմի սահմանները ամեն անգամ փոփոխում էին՝ նշանակված հոգևոր առաջնորդի դիրքին ու ունակություններին համեմատ։ Նախիջևան-Բեսարաբիայի և Ատրպատականի թեմերի վերոհիշյալ սահմաններով բաժանումը, երբ գործող օրենքներին համապատասխան «Նախիջևան-Բեսարաբիայի թեմի մեջ են մտնում Պետերբուրգում, Մոսկվայում, Եկատերինոսլավի, Խերսոնի և Բեսարաբիայի նահանգներում, ինչպես նաև Դոնի զորքերի մարզի Ռոստովի և Տագանրոգի օկրուգներում գտնվող հայ-լուսավորչական եկեղեցիները»[54], փաստորեն սկսվում է միայն 1828 թվականից՝ Ներսես արքեպիսկոպոս Շահազիզյան-Կամսարականի (Աշտարակեցու) նշանակմամբ*։

Եվ ահա, թեմի առաջնորդներից մեկը՝ Հովհաննես արքեպիսկոպոսը (Դաւոնակերյանը), 1820 թվականին լինելով Ղրիմում, զրավոր կարգադրություններ է անում[55] տեղի հոգևոր կառավարության և հոգևորականների գործունեության վերաբերյալ։ Կարգադրությունները ավարտուն ձևավորում են ստանում 1821 թվականի փետրվարին։ Այդ ամսի 16-ին Նոր Նախիջևանից նա Ղրիմ է ուղարկում մի կանոնադրություն՝ «Կանոնական բարեկարգութիւն վիճակիս մերոյ հոգևոր կառավարութեան և ամենայն հոգևորական պատկանելեաց» վերտառությամբ։ Այս կանոնադրությունը հիմնակա-

53 ЗООИД, т. 9, стр. 315—316 (Архиепископ Гаврил Айвазовский, Армяно-григорянские архиереи в Новороссии и Бессарабии).

54 «Св. законов», изд. 1896 г., ст. 1163 Устава дух. дел иностранных вероисповеданий.

* Ավելորդ չենք համարում այստեղ հիշատակել Նախիջևան-Բեսարաբիայի թեմի առաջնորդներին՝ Աշտարակեցուց հետո մինչև առաջին աշխարհամարտը. արքեպիսկոպոս Մատթեոս Վեհապետյան *(1847—1857)*, Գաբրիել վրդ. Այվազյան *(1857—1865)*, արքեպիսկոպոս Նիկոգոր Տեր-Կարապետյան *(1865—1867)*, արքեպիսկոպոս Գևորգ Տեր-Մկրտչյան *(1868—1871)*։ Սրա մահից հետո՝ *1871—1877 թթ.* թեմը չուներ առաջնորդ և այն հաջորդաբար կառավարում էին Գևորգ վարդապետը, իշխան Աբամելիքը և Սարգիս Տեր-Կասպարյանը։ Արքեպիսկոպոս Սահակ Մխիթարյան *(1877—1879)*, արքիեպիսկոպոս Մակար Տեր-Պետրոսյան *(1879—1885)*, արքեպիսկոպոս Գրիգոր Սահինյան *(1887—1889)*, եպիսկոպոս Գրիգոր Ադափիրյան *(1891—1894)*, արքեպիսկոպոս Հուսիկ Մովսիսյան *(1894—1897)*, արքեպիսկոպոս Ներսես Խուդավերդյան *(1899 թվականից մինչև առաջին համաշխարհային պատերազմը)* (տե՛ս ЗООИД; т. IX, стр. 315—318; т. 29, II, стр. 82—85).

55 *Մատենադարանի արխիվ, անհատ. անձանց ֆոնդ, թղթ. 30, վ. 12, թթ. 18—23։*

նում կրկնում է Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի՝ 1795 թվականին նախիջևանցիների համար արած «կանոնական բարեկարգութիւնը», որն Արղությանը «ի տիպ արձանացուցեալ ի տետրակս թողեալ էր իբրև օրենք մշտնջենական»[56]։ Մինչև այս կանոնադրությունը, սկսած 1816 թվականից, կառավարությունը իր տնտեսական գործերը վարելիս ղեկավարվում էր գանձապետ Սրապիոնյանին՝ մանվել վարդապետի տված գրավոր կարգադրությամբ[57]։

Այս նոր կանոնները որոշակի հետաքրքրություն են ներկայացնում, որովհետև նրանցում տրված են հոգևոր կառավարության, նրա անդամների, առաջնորդական հաջորդի և հոգևոր մյուս պաշտոնյաների իրավունքներն ու պարտականությունները և դրանցով պայմանավորված՝ եկեղեցու և հավատացյալ ծխականների միջև գոյություն ունեցող իրավական հարաբերությունները դաղութում։

Առաջին կետում Հովհաննես արքեպիսկոպոսը հիմնավորում էր հոգևոր կառավարության համար կանոններ ունենալու անհրաժեշտությունը, ելնելով պետական այն հրամանից, թե «բոլոր հոգևոր կառավարութիւնք ըստ կարգաւորելոյ մինիստրական նախագահ տարութեան հոգևորականաց և ըստ առաջադրութեան հոգևոր կոնսիստորին մերոյ կան կանոնափակել և ըստ ակնարկելոյ նոցա պարտին ամենայն հոգևոր իրողութիւնք ունիլ զընթացս կառավարութեան. վասն որոյ մեզ հարկէ յամենայն վիճակս մեր է սկզբանն զհարկաւոր պակասութիւն հոգևոր կառավարութեանցն հոգալ, զի մի յամօթ մնացուք առաջի հոգևորական մինիստրին մերոյ»[58]։

Կանոնների երկրորդ կետը Ղարասուբազարը համարում էր հոգևոր կառավարության և հաջորդի նստելավայրը։ Ըստ երրորդ կետի, հոգևոր կառավարության անդամները նշանակվում էին հաջորդի և հասստատվում՝ թեմի առաջնորդի կողմից։ Կառավարությունը պահելու էր երկու գրագիր՝ գործավարությունը հայերեն և ռուսերեն տուններու համար։ Այս վերջինը, բացի կառավարության և հաջորդի գրագրությունները վարելուց, պարտավոր էր տեղի հայկական ուսումնարանի երեխաներին սովորեցնել ռուսերեն գրել և կարդալ. դրա համար էլ սրա աշխատավարձի մի մասը վճարում էր հոգևոր կառավարությունը, իսկ մյուսը՝ վարժարանը։

Չորրորդ կետով թեմի առաջնորդը ապահովում էր կառավարության, գրագիրների և հաջորդի ծախսերը։ Քանի որ հոգևոր

56 *Նույն տեղում, կաթ. դիվան, թղթ. 38, վ. 195, թ. 2բ։*

57 *Նույն տեղում, թղթ. 29, վ. 2, թ. 1։*

58 *Նույն տեղում, թղթ. 38, վ. 195, թ. 2ա։*

կառավարությունը ոչ միայն Ղարասուբազարի, այլ Ղրիմի ամբողջ հայության օրգանն էր, ապա նրա ծախսերը պիտի հոգային ոչ միայն Ղարասուբազարի հայերը, ինչպես այդ կատարվում էր մինչև 1821 թվականը, այլ նաև Ղրիմի վիճակի մյուս վայրերի եկեղեցիները։

Կանոնադրության 4—8, 10 և 13—19 կետերը վերաբերում էին բնակչությունից դանձվելիք եկեղեցական ղանաղան տուրքերին, որոնցով պահվում էին ղրիմահայ եկեղեցիներն ու հոգևորականները և որոնք, իբրև մշտական մի ծանր բեռ, ընկած էին ղրիմահայ աշխատավորների ուսերին։ Կանոնադրության այդ հոդվածներում (4—20) նշվում են ոչ միայն եկեղեցական ղանաղան գանձումները և նրանց չափը՝ ըստ եկեղեցիների ու խավերի, այլև էջմիածնին, Ղրիմի հաջորդին ու հոգևոր կառավարությանը, քահանաներին ու սարկավագներին դրանցից հասնող բաժինները, ինչպես և սահմանվում էր այն կարգը, թե եկեղեցական այս կամ այն ղանձումը հոգևորական ո՞ր աստիճանավորին կամ ինստիտուտին է պատկանում՝ կաթողիկոսի ներկայացուցիչների՞ն, հաջորդի՞ն, նվիրակնե՞րին, թե՞ քահանաներին, էջմիածնի՞ն թե հոգևոր կառավարությանը։ Քանի որ այս վերջին խնդիրը սերտորեն կապված է եկեղեցական տուրքերի հետ, ապա կրկնությունից խուսափելու և ամբողջական շարադրանք տալու համար նպատակահարմար ենք համարել դրանք լուսաբանել միասին՝ հարկերի բաժնում։

Կանոնադրությունը հոգևոր և տնտեսական գործերով ղրիմահայ հոգևորականությանն ու հայ հոգևոր կառավարությունը ենթարկում էր հաջորդի՝ որպես առաջնորդական փոխանորդի իշխանությանը։ «Մենք նմա յանձնել եմք և պնդանել միայնոյ կախին այն ամենայն տնօրինութիւնք հոգևոր գործոց մերոց և նա զոր քահանայ և յատկացուսցէ. նա միայն կարէ հովուել զնոսա, զի կառավարութիւն և աթոռակալքն գոլով կախեալ զբարեհաճոյ կամաց յաջորդին, կարօղ իսկ են զհաշիւն քահանայից պահանջողութեամբ առնուլ»[59]։

Կանոններով (հոգված իններորդ) ս. Խաչ վանքը, ինչպես որ այն կար «ի սկզբանէ», շարունակում էր համարվել վիճակի առաջնորդարան, այն ենթարկվում էր միայն Ղրիմի հաջորդին և թեմի առաջնորդին։ Միաժամանակ կանոնադրության հիշյալ հոդվածը ս. Խաչի կառավարիչին էր ենթարկում Թեոդոսիայի ս. Գևորգ և Բախչիսարայի ս. Փրկիչ վանքերը։ Հոգևոր տոներին վանքերում պատարագում էր հաջորդը կամ վանքի վարդապետներից որևէ մեկը, իսկ մնացած օրերին՝ հաջորդի կարգադրությամբ որևէ քահանա[60]։

Տանմեկ և տասներկուերորդ հոդվածները, «Հայաստանեաց եկեղեցական կարգադրութեան» համաձայն, որն հրահանգում էր, թե «ոչ կարէ քաղաք մի միով քահանայիւ կառավարիլ», սահմանում էին Ղրիմի յոթ քաղաքներում պահվող հայ քահանաների թիվը՝ Ղարասուբազարում՝ 4 քահանա, Թեոդոսիայում, Եվպատորիայում, Հին Ղրիմում և Օրարազարում՝ 2-ական, Սիմֆերոպոլում և Բախչիսարայում՝ 1-ական քահանա։ Նշված կանոնից վերջին երկու քաղաքների համար կատարվում էր շեղում այն պատճառով, որ նրանցում այն ժամանակ հայերի թիվը սակավ էր։ Այն քաղաքներում, որտեղ նշանակվում էին 2 և 4 քահանաներ, հայությունը սրանց միջև բաժանվում էր ըստ ծխերի։ Մատյաններից դուրս մնացած ժողովուրդը համարվում էր տերունի[61]։

Համառոտակի այսպիսին էին հայ եկեղեցու կառուցվածքն ու նրա գործունեության շրջանակները Ղրիմում XIX դարում և XX դարի առաջին մեկ ու կես տասնամյակում։

* * *

Մենք լուսաբանեցինք ղրիմահայ գաղութի վարչա-տնտեսական և իրավական օրգանների՝ Հին Ղրիմի հայկական քաղաքային ռատուշայի, Ղարասուբազարի հայ-կաթոլիկական դատարանի, ինչպես նաև ղրիմահայ եկեղեցական օրգանների ու պաշտոնյանների իրավունքներն ու պարտականությունները։ Սրանց գործունեության զանազան կողմերի մանրամասն լուսաբանմանը ընթերցողը կհանդիպի աշխատության այն բաժիններում, որտեղ քննարկվում են գաղութի առևտրա-տնտեսական և հասարակական կյանքին վերաբերող հարցերը։ Այդպես ենք վարվել, հնարավոր հարցերի թեմատիկ լուսաբանման անհրաժեշտությունից և կրկնությունից խուսափելու ձգտումից։

59 Մատենադարանի արխիվ, ֆ. կաթ. դիվան, թղթ. 38, վ. 195, թ. 4ա։

60 Նույն տեղում, թ. 3ա։

61 Նույն տեղում, թ. 3բ և 4ա։

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

ՂՐԻՄԱՀԱՅԵՐԻ ՋԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ղրիմահայոց առևտրական գործունեությունը: Առևտրական գիլդիաները և հայ առևտրական դասի պայքարը իր արտոնությունների պահպանման համար: Հայ վաճառականները գիլդիաներում: Առևտրի ուղիներն ու ապրանքները: Հայերի դերը բեռնակրզու ներքին և արտաքին առևտրի մեջ: Հին Ղրիմի հաղթի հայերի պայքարը նրա համար: Ղրիմահայ խոշոր հողատերեր: Առևտրական կապիտալի մուտքը հողագործության մեջ: Հայ եկեղեցապատկան հողերը Ղրիմում: Ղրիմահայ եկեղեցու եկամտաբերը: Արհեստները գաղութում: Ղրիմահայ գործարանատերեր և ֆաբրիկանտներ: Գաղութի սոցիալական շերտավորումը: Հարկային ճնշումը. պետական և եկեղեցական հարկերն ու տուրքերը: Պայքար նախկին արտոնությունների պահպանման համար:

Վերսին հաստատվելով թերակղզու վրա, հայերը գործուն մասնակցություն են ունենում նրա տնտեսական կյանքի զարգացմանը, այն էլ մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ միացումից հետո առաջին տարիներին կառավարությունը շատ թույլ քայլեր էր անում երկրամասի տնտեսական վիճակը շտկելու և առաջ տանելու ուղղությամբ: Այս շրջանում ղրիմահայոց հիմնական զբաղմունքներն էին առևտուրը, արհեստագործությունն ու երկրագործությունը, որոնց զարգացմանը զգալապես նպաստում էին տեղական պայմանները և հայերին շնորհված արտոնությունները:

* * *

Կապված ռուսական ներքին շուկայի և Արևելքի երկրների, հատկապես Թուրքիայի առևտրա-արհեստագործական միջավայրի հետ, ղրիմահայերը, անկախ թերակղզու ամբողջ բնակչության մեջ ունեցած իրենց ոչ մեծ քանակից, զգալի մասնակցություն էին

ցուցաբերում Տավրիկյան նահանգի ներքին և արտաքին առևտրին, շատ հաճախ հանդես գալով առևտրական զանազան գործարքներ կազմակերպողների և իրականացնողների դերում: Ղրիմահայոց առևտրական գործունեությունը ներառնում էր և՛ մանրածախ, և՛ մեծածախ առևտուրը: Իր կրպակում ամփոփված մանր առևտրականի ու շարչու կողքին XIX դարում Ղրիմում մենք հանդիպում ենք տասնյակ ու տասնյակ հայ վաճառականների, որոնք ընդգրկված տարբեր քաղաքների գիլդիաներում՝ առևտրական ծավալուն գործարքներ էին ձեռնարկում և դարձել էին մեծահարուստ գրամատերեր:

Նախ գիլդիաների և դրանց նկատմամբ ղրիմահայ առևտրական դասի բռնած դիրքի մասին: Այդ հարցին մենք ստիպված ենք անդրադառնալ հենց այժմ, մինչև բուն առևտրին վերաբերող խնդիրների քննարկումը, որովհետև այն ծագեց գաղութի վերատեղծման առաջին իսկ շրջանում և առիթ հարուցեց հայերի բավական տաք բողոքներին, որոնց հետևանքով նրանց մի մասին ի վերջո հաջողվեց պահպանել շնորհված արտոնությունները:

Վաճառականների գիլդիաները միջնադարյան առևտրի ամենատիպիկ կազմակերպություններից էին[1]: Ռուսաստանում դրանք յայն տարածում գտան XVIII—XIX դարերում և որպես վաճառականների դասային կազմակերպություն՝ պաշտպանում էին նրանց շահերը: Ըստ ունեցվածքային կարողության, գիլդիանները բաժանված էին երեք տիպի՝ առաջին, երկրորդ և երրորդ գիլդիաների: Սրանց անդամակցելը պայմանավորված էր կապիտալի այն քանակով, որ հայտարարում էր վաճառականը գիլդիայի մեջ մտնելիս: Կառավարիչ սենատի 1775 թվականի մայիսի 25-ի հրամանագրով առաջին գիլդիայի մեջ մտնելու համար վաճառականի կապիտալը պիտի լիներ ավելի քան 10 հազար ռուբլի, երկրորդի մեջ մտնելու համար՝ 1000 մինչև 10.000 ռուբլի, իսկ երրորդի մեջ՝ 500—1000 ռուբլի: 1785 թվականի քաղաքային կանոնադրությունը (Городское положение) որոշ փոփոխություն մտցրեց հայտարարվող կապիտալի քանակի մեջ, երկրորդ գիլդիայի համար հաստատելով 5000—10000 ռուբլի, իսկ երրորդի համար՝ 1000—5000 ռուբլի: 1863 թվականին երրորդ գիլդիան վերացվեց. դրա փոխարեն մտցվեցին վաճառականական կամ գիլդիական վկայականներ: Որ-

1 Միջնադարյան գիլդիայի մասին տե՛ս А. К. Дживилегов, Торговля на западе в средние века, СПб. 1904, стр 115—117.

պես միջնադարյան առևտրի ինստիտուտներ, գիլդիաների գոյության անհրաժեշտությունը զգացվում էր, քանի դեռ թույլ էին զարգացած կապիտալիստական հարաբերությունները։ XIX դարի վերջերին, այդ հարաբերությունների հարաճուն զարգացմանը զուգընթաց, գիլդիաները աստիճանաբար սկսում են վերանալ։

1807 թվականի հունվարի 1-ի մանիֆեստի 9-րդ հոդվածով Ռուսաստանում ապրող հայ վաճառականները փաստորեն զրկվում էին կայսերական հրովարտակներով արտոնված իրենց առանձնաշնորհումներից առևտրի մեջ և պարտավոր էին վեց ամսվա ընթացքում գրանցվել գիլդիաներում[2]։ Ինչպես և պետք էր սպասել, արտոնություններով ապահովված հայերի առևտուրը գիլդիաների մեջ ներգրավել միտող այս որոշման մեկնաբանումն ու իրագործումը հանդիպում է Ռուսաստանում որոշակի պայմաններով հաստատված հայ վաճառականների համընդհանուր դժգոհությանը։ Բարձրացած բողոքներին անմասնակից չի մնում նաև ղրիմահայ առևտրական դասը։ Նա ևս, մյուսների հետ միասին, դիմումներ է ներկայացնում Ալեքսանդր I-ին, խնդրելով չխախտել նախկին արտոնությունները։ Հետևանքը լինում է այն, որ 1808 թվականի նոյեմբերի 6-ի կայսերական վճռով, մինչև հարցի լուծումը, պահպանվում են հայ համայնքների նախկին իրավունքներն ու առանձնաշնորհումները[3]։ Կառավարիչ սենատի 1813 թվականի նոյեմբերի 20-ի հրամանագրով, մինչև հատուկ որոշում ընդունելը, Աստրախանի հայերին թողնում էին նախկին իրավունքները[4]։ Սա վերաբերում էր նաև մյուս համայնքներին, և այս արտոնագրումը հարատևեց մինչև 1824 թվականը։

1824 թվականի նոյեմբերի 14-ին բարձրագույն մանիֆեստով հրապարակվում է լրացուցիչ որոշում գիլդիաներ հիմնելու և այլ կարգի առևտրի մասին։ Այս որոշումը նորից առաջ է բերում հայ համայնքների բողոքը[5], որովհետև վերստին հրապարակ էր գալիս գիլդիաների մեջ մտնելու և նախկին արտոնություններից զրկվելու վտանգը։ Զրկելով ռուս վաճառականներին համահավասար պայմանների մեջ, հայ վաճառականները չէին դիմանա նրանց մրցակցությանը, իսկ նրանցից շատերն էլ, նախապես չունենալով գիլդիաներ մտնելու համար անհրաժեշտ դրամագլուխ, կզրկվեին առ-

2 «Собрание актов», II, стр. 85.

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում։

5 Крымоблархив, ф. 67, оп. 1, д. 383, л.л. 1, 46—49, 50—51, 62.

հասարակ առևտուր անելու հնարավորությունից։ Ռուսաստանի հայերի ծննդից ֆինանսների մինիստր Ե. Կանկրինին հղած խնդրագրում ռուսահայ թեմի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսը, նկատելով Ռուսաստանում բնակվող հայ համայնքների ընդհանուր կացությունից, հետևյալ կերպ էր բացատրում գիլդիաներից ակնկալվելիք վնասը հայ առևտրական դասի համար։ «Ընդունելիք (իմա հայերից— Վ. Մ.) շատերը մինչև այժմ իրենց առևտրական ձեռնարկումները կատարում են իրենց կրոնակիցների միջոցով, գլխավորապես առանց դրամագլխի, վարկով և նրանցից ստացված ոչ մեծ քանակությամբ ապրանքների դիմաց արտահանում են ռուսական արտադրանքներ։ Գիլդիաներ չգրվելու և առևտուր անելու արդելքը... շատ ընտանիքների կհասցնի անկման։ Եթե նրանք մտնեն գիլդիական դասի մեջ, նրանք ի վիճակի չեն լինի առևտուր անել եվրոպական վաճառականության նման, որովհետև նրանց (հայերի—Վ. Մ.) ձեռնարկումներին չեն համապատասխանում ոչ հայերի ընդունակությունները, հաշվենկատությունն ու համարձակ շրջահայեցությունը... և ոչ էլ գիլդիական դասի հետ կապված պարտականությունների կատարումը...»[6]։

Հայերը ի վիճակի չէին նաև Ռուսաստանում առևտուր անել օտարերկրյա հյուրերին տրվող իրավունքներով, հյուրեր, որոնց մանիֆեստը հեռու էր պահում ներքին առևտրից։ Այդ դեպքում նրանք պետք է գրաղվեին մեծածախ առևտրով միայն, մինչդեռ դրա համար չունեին անհրաժեշտ չափի դրամագլուխ. հետևապես հայերը պետք է թողնեին առևտուրը, իսկ դրանով «պարսկական, թուրքական և ասիական այլ ժողովուրդների հետ կատարվող առևտուրը ծայրահեղորեն կտուժի հատկապես այն պատճառով,— զգուշացնում էր Հովհաննես արքեպիսկոպոսը,— որ այն կատարվում է միայն հայերի աջակցությամբ և միջոցով»[7]։

Մի կողմ թողնենք թեմապետի՝ հայերի առևտրական ունակություններն ու հնարավորությունները նսեմացնող որոշակի նկատառումներով կատարված թյուրերը։ Սակայն չենք կարող հիմնականում չհամաձայնվել նրա հետ այն խնդրում, որ գիլդիաների մեջ մտնելը և դրանով պայմանավորված առևտրական նախկին առանձնաշնորհումներից զրկվելը մեծ հարված էին հայ առևտրական կապիտալին։ Ահա այդ էր պատճառը, որ կայսերական այդ վճիռը ոտքի էր կանգնեցրել թե՛ բուն առևտրական խավին և թե՛ նրա հո-

6 ЦГИА СССР, ф. 880, оп. 5, д. 386, л.л. 11 с об.

7 Նույն տեղում, թ. 12։

գևոր առաջնորդներին։ Վերջիններից մեկը՝ ամենայն հայոց պատրիարք Եփրեմը, տակավին 1815 թվականին Հովակիմ Լազարյանին պարտավորեցնում էր այս հարցում սատար կանգնել հայերին ռուսական իշխանությունների առաջ[8]։ Հ. Լազարյանը 1823 թվականին դիմում է Ե. Կանկրինին և առաջ քաշում ճիշտ այն պատճառաբանությունները, որոնք բովանդակված էին Հովհաննես արքեպիսկոպոսի խնդրագրում։

1825 թվականի ապրիլի 10-ին ազատ առևտուր անելու առթիվ հայերի ունեցած արտոնությունները պահպանելու խնդրանքով Արակչեևին է դիմում Եփրեմ կաթողիկոսը։ Հայերին գիլդիաների մեջ ընդգրկելը կաթողիկոսը համարում էր վնասաբեր ինչպես հայերի, այնպես էլ պետական գանձարանի համար, որովհետև, նրա կարծիքով, դրանից հայերը ծայրահեղորեն կքայքայվեին և գանձարանը կզրկվեր մինչ այդ նրանց առևտրի շրջանառությունից ստացվող եկամուտներից։ Խնդրանքն ավելի ազդեցիկ դարձնելու համար կաթողիկոսը իր պարտքն էր համարում զգուշացնել, որ այդ որոշումը իրականացնելու դեպքում «առևտուրը Ռուսաստանի հպատակ հայերի ձեռքից կանցնի առհասարակ ասիացիներին, որոնք Պարսկաստանի և Թուրքիայի հպատակներն են»[9]։ Սա էլ խնդրանքի քաղաքական հիմնավորումն էր։

Լրացուցիչ որոշման դեմ բողոքում էին ոչ միայն հայերը։ Նրա վերացման օգտին ձայն էր բարձրացրել նույնիսկ ադմիրալ Մորզվինովը, որը նրա նախապատրաստողներից և նախաձեռնողներից մեկն էր[10]։ Մորզվինովի այդ քայլը հետևանք էր տեղերից ստացված բողոքների, որոնք առաջանում էին որոշումը իրականացնելու ժամանակ։ «Ամենուր փորձը ցույց տվեց,— գրում էր նա,— որ ներքին առևտրի գծով 1824 թվականին հրատարակված լրացուցիչ կանոնները էական քայքայում են առաջացրել նրանում և նոր պատնեշ կանգնեցրել արդյունաբերության հաջող զարգացման առաջ... դրանք (որոշումները— Վ. Մ.) անուղղակի վնաս են հասցրել մեծածախ առևտրին, իսկ մանրածախ առևտուրը ամենուր գրեթե քայքայել են[11]։ Դժգոհում էին ոչ միայն հա-

8 Նույն տեղում, թ. 6ա։

9 Նույն տեղում, գ. 387, թ. 1ա։

10 Крымоблархив, ф. 67, оп. 1, д. 383, л. 1с об.

11 Նույն տեղում։



Ա. Տատուրյան, Ա. Սպենդիարյան, Վ. Սուրենյան։

Քրիստափոր Կարա-Մուրզա:

յերը, այլև առհասարակ բոլոր նրանք, որոնք ռուսական առևտրի մեջ օգտվում էին որոշակի առանձնաշնորհումներից[12]:

Այս հարցի շուրջը ծագած բողոքների առնչությամբ լուրս աշխարհ են գալիս նախ կառավարիչ սենատի 1831 թվականի հունիսի 2-ի որոշումը և ապա՝ Նիկոլայ I-ի 1832 թվականի փետրվարի 29-ի հրամանը սենատին: Դրանց էությունը այս հարցում հանգում էր հետևյալին. նախքան 1807 թվականի մանիֆեստի հիման վրա բոլոր հայերին հարկադրելը՝ պահպանվում էին նախկին հրովարտակներով հայ համայնքների ունեցած առանձնաշնորհումները, սակայն բոլոր այն հայերը, որոնք դուրս էին համարվում այդ համայնքներից (սրանք նրանք էին, որոնք համայնքների մեջ էին մտել հրովարտակների ընդունումից հետո կամ թե առհասարակ չէին մտնում դրանց մեջ), կարող էին մինչև 1833 թվականի հունվարի 1-ը ընդունել ռուսահպատակություն և դրանից հետո, ըստ իրենց գրաղմունքների տեսակների, 1832 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ձեռք բերել առևտրական վկայագրեր: Նրանք, որոնք բաց կթողնեին նշված ժամկետը, համարվում էին որպես առևտուր չանող օտարերկրացիներ և առևտրական գործարքներ կարող էին ձեռնարկել ոչ այլ կերպ, քան համաձայն Ասիական կոմիտեի որոշման՝ հաստատված 1825 թվականի հուլիսի 25-ին[13]: Վերջին որոշումը թույլ էր տալիս միայն մեծածախ առևտուր առանց հարկեր վճարելու, այն էլ մաքսային սահմանագծում, փոխանակային տներում և երեք գլխավոր տոնավաճառներում: Մանրավաճառ առևտրին մասնակցել կարող էին (խոսքը, ինչպես երևում է, ոչ-ռուսահպատակ ասիացիների մասին էր) միայն գիլդիաների և մեշչանների համար սահմանված վկայականներով, առանց ռուսահպատակություն ընդունելու:

Այսպիսով, Հին Ղրիմի հայկական քաղաքային ռատուշայի և Ղարասուբազարի հայ—կաթոլիկական դատարանի իրավասությանը ենթակա հայերը մնում էին նախկին արտոնություններում, բացառյալ նրանց, որոնք ռատուշայի և դատարանի համայնքներին անդամագրվել էին տրված հրովարտակներից հետո: Այս չէր նշանակում, իհարկե, թե հայերը չընդգրկվեցին գիլդիաներում: Ինչպես կտեսնենք հետո, XIX դարում մանրավաճառ առևտրական հայ մեշչանների կողքին Ղրիմի քաղաքների առևտրական

12 Նույն տեղում:

13 «Собрание актов», т. I, стр. 112, т. II, стр. 323.

գիլդիաների մեջ ամուր դիրքեր էին բռնել նաև հայ վաճառականները՝ բան իրենց կարողության և առևտրական կապերի։

Ղրիմը Ռուսաստանին միացնելուց հետո առաջին տարիներին թերակղզու ամբողջ տնտեսական կյանքի հետ միասին առևտուրը նույնպես թույլ էր զարգանում։ Դա բացատրվում էր պատերազմի հետևանքով Ղրիմում առաջացած իրավիճակով, առհասարակ, և քրիստոնյա ազգաբնակչությանը՝ հայերին ու հույներին Ազովի նահանգ տնդափոխելու հանգամանքով, մասնավորապես, ազգաբնակչություն, որի ձեռքին էր կենտրոնացված տավրիկյան առևտուրը։ Բավական է ասել, որ ջենովական և թաթարական շրջանում Ղրիմի գլխավոր առևտրական նավահանգիստ, երբեմնի ծաղկուն և բազմամարդ Կաֆայում 1798 թվականին ընդամենը 119 բնակեցված տուն էր մնացել[14]։ Գործին սկզբում թույլ էր օգնում նույնիսկ կառավարական այն միջոցառումը, որով Թեոդոսիան հռչակվեց պորտո-ֆրանկո[15]. թեև դրանով քաղաքի նավահանգիստը առանց որևէ մաքսի իր ծովային դարպասները բաց էր անում առևտրականների համար, իսկ այնտեղ բնակվել ցանկացողներին տրվում էին մի շարք արտոնություններ (բնակելի տների կառուցման համար քաղաքի տերիտորիայում անվճար կերպով տներ հատկացնելը, շինանյութից օգտվելը, խանութներ, կրպակներ, արհեստանոցներ հիմնելը և այլն)[16], այնուհանդերձ քաղաքի տնտեսական վիճակը XVIII դարի վերջին շարունակում էր մնալ անհրապույր։ Այս շրջանում դրությունը բարվոք չէր նաև Ղրիմի մյուս քաղաքներում։ Ռուսական կայսրությանը նորերս միացված նահանգը նոր էր յուրացվում և նման վիճակը անխուսափելի էր, երբ մանավանդ այն դիտում ենք կայսրության մեջ տիրող ճորտատիրական կարգերի ընդհանուր տնտեսական համայնապատկերի հետ կապակցված։

Եվ այնուամենայնիվ, Ղրիմը Ռուսաստանին միացնելու հաջորդ իսկ տարվանից (1784) ձեռնարկվել սկսեցին տավրիկյան առևտուրը վերականգնելու ինչ-որ քայլեր, և դրանք անողների մեջ էին նաև հայերը, որոնք, անշուշտ, դրանցից կոնկրետ շահ էին ակնկալում։ Հայ առևտրականների ջանքերն այս շրջանում հատկապես նկատելի էին արտաքին և Ազովի ավազանի ու կովկասյան շրջանների հետ առևտուրը վերականգնելու գործում։ Այդ

14 *Н. Барсамов*, Феодосия, Симферополь. 1957, стр. 49.

15 Նույն տեղում, էջ 51։

16 Նույն տեղում։

են վկայում 1784 թվականի մարտ-ապրիլին Ղրիմի նավահանգիստները ժամանած առևտրական նավերի մասին կազմված տեղեկագրերը, որ բերում ենք ստորև[17] (տե՛ս էջ 100)։

Ըստ գեներալ-պորուչիկ բարոն Իգելստրոմի գրասենյակի 1784 թվականի ապրիլի 12-ին կազմած տեղեկագրի՝ Ղրիմի նավահանգիստներում գտնվում էին հայերին պատկանող երկու առևտրանավեր (Եվպատորիայի և Թեոդոսիայի նավահանգիստներում), իսկ ժամանած բոլոր նավերի վրա կային 43 հայ առևտրականներ[18]։ Մեկ այլ տեղեկագրով, կազմված ապրիլի 29-ին, նավահանգիստները ժամանած հայ առևտրականների թիվը հավասար էր 49 հոգու[19]։

1784 թվականին Ղրիմի նավահանգիստների համար առևտրական թեկուզ և ոչ մեծաթիվ նավերի ժամանումը բավական նշանակալից երևույթ էր։ Այդ նույն ժամանակ արտագաղթեցումից ձողպարած որոշ հայեր թերակղզու այս ու այն անկյունում սկսել էին առևտրական աշխույժ գործունեություն ծավալել։ Գրանցից մեկն էր Եվպատորիայի մեծահարուստ Գրիգոր աղան, որը քաղաքում իշխանատուն էր պահում՝ բազմաթիվ ծառաներով հանդերձ[20]։ Այդ նույն ժամանակ, XVIII դարի 80—90-ական թվականներին, Եվպատորիայի մեծահարուստ վաճառականներից էր Թուրքահպատակությունից ռուսահպատակության անցած Ավետիք Խաչատուրովը։ 1787 թվականի օգոստոսի 14-ին Եվպատորիայի նավահանգստում բռնագրավում են սրա ապրանքները՝ 6000 ռուբլու արժողությամբ։ Մաքսատան ծառայողները Խաչատուրովին հայտնում են, թե ապրանքների վաճառքից ստացվող դրամը կհանձնվի պետական գանձարան, իսկ հետագայում տոկոսների ձևով այն լրիվ կվերադարձվի նրան։ Խաչատուրովը դիմում է Գ. Ա. Պոտյոմկինին։ Վերջինս 1787 թվականի նոյեմբերի 25-ին № 5331 հրամանագրով Տավրիկայի փոխ-նահանգապետ Գոլիցինին կարգադրում է ստուգել Խաչատուրովի խնդրանքը և ներկայացնել իրեն զեկուցագիր՝ անհրաժեշտ կարգով այն լուծելու համար[21]։

XVIII դարի վերջերին և XIX դարի սկզբներին, երբ դժվարություններով հանդերձ բավական արագ իրագործվում էին թերա-

17 ЦГВИА, ф. 52, д. 336, ч. III, л.л. 32—33, 77—78, ч. IV, л.л. 8—10.

18 Նույն տեղում, թ. 81։

19 Նույն տեղում, մաս 4, թ. 12։

20 *В. Х. Кондораки*, В память столетия Крыма, М., 1883, т. I, стр. 17.

21 ИТУАК, № 13 (1891 г.), стр. 15.

ՏԵՂԵԿԱԴԻՐ

1784 թ. մարտ–ապրիլ ամիսներին Ղրիմի ճավահանգիստները ժամաճած նավերի

Նավի անվանումը և որտեղից է ժամանել	Նավատիրոջ անունը, նավաստինների և ուղևորների* թիվը	Բեռը
Մարտի 9-ին, երեք կայմանի նավ, անատոլիական Ունիա քաղաքից	Նավատեր՝ թուրք խոջա Ահմետ, նավաստինները՝ թուրքեր։ Ուղևորները՝ ռուսահպատակ 13 հայեր և թուրքահպատակ 1 հույն	Կիտրոն, նարինջ, նպարեղեն, կապոցներով զանազան մանրաքյա և բամբակյա կտորեղեն և ծխախոտ
Մարտի 5-ին	Նավատեր՝ ռուսահպատակ հույն, ուղևորների թվում նաև հայեր	Կարմիր գինի, չորացրած մրգեր
Մարտի 21-ին, երկկայմանի նավ, Կոստանդնուպոլսից	Նավատերը՝ ռուսահպատակ հայ, նավաստինները՝ ռուսահպատակ հայեր, ուղևորները՝ թուրքահպատակ 1 թաթար և ռուսահպատակ 12 հայ	Ջամիչ և յուղ
Մարտի 23-ին	Նավատերը՝ հույն, նավաստինները հույներ և թուրքեր, ուղևորները՝ 3 հայ, 1 հույն, 2 թուրք	Ծխախոտ, բամբակյա քաթան
Մարտի 28-ին	Նավատեր՝ ն. Նախիջևանցի հայ Անդրեյ Նիկիտին, նավաստինները՝ 3 հայ, ուղևորները՝ 5 հույն, 1 ռուսահպատակ հայ և 1 թուրքահպատակ հայ	
Ապրիլի 6-ին	Ուղևորների թվում՝ հայեր	
Ապրիլի 8-ին, անատոլիական Ունիա քաղաքից	Ուղևորների թվում՝ 3 հայ	Կոֆե, մետաքսյա և բամբակյա կտորեղեն, ծխախոտ
Ապրիլի 10-ին, Տագանրոգից	Ուղևորների թվում՝ նախիջևանցի 15 հայեր	Բամբակյա գործ. վածքեղեն, ծխախոտ, ալյուր, ճարպ

* Ուղևորների տակ պիտի հասկանալ առևտրականներին։

կրղղու բնակեցման խնդիրները, Ղրիմի ամբողջ տնտեսական կյանքի հետ միասին աշխուժացում է նկատվում նաև առևտրի մեջ, որն սկսում է ավելի ընդլայնել իր կապերը ռուսական ներքին շուկայի հետ։ Նոր Նախիջևանից և Թուրքիայից օրինական թե զարտուղի ճանապարհով Ղրիմ անցած հայ ընտանիքներն էլ ամենաբարի զգալի են դարձնում հայերի մասնակցությունը տավրիկյան առևտրում՝ ինչպես բուն թերակղզում և ռուսական ներքին շուկաների հետ ունեցած կապերում, այնպես էլ արտաքին առևտրական առնչություններում։

Բնութագրելով Ղրիմի միջոցով XIX դարում կատարված առևտրի ուղղությունները, ամենից առաջ պիտի նշել, որ դրանք կապված էին ափամերձ և արտասահմանյան նավագնացության հետ։ Այս շրջանում առևտրական կապերը շարունակ ուժեղանում են սևծովյան ավազանի ռուսական նավահանգիստների, Կովկասի, Աղովի ծովի առափնյա քաղաքների, ինչպես և արտասահմանի, մանավանդ՝ թուրքական շրջանների հետ։ Ռուսական ներքին շուկայի հետ տավրիկյան առևտրի կապերը առավել սերտանում են երկաթուղու կառուցումից հետո, երբ Սևաստոպոլ—Լազովայա երկաթգծով թերակղզին կապվում է Խարկովի, Մոսկվայի և առհասարակ կենտրոնական Ռուսաստանի հետ։

XIX դարի առաջին տասնամյակներին Թեոդոսիայի, Կերչի և Եվպատորիայի նավահանգիստների միջոցով կատարվող առափնյա և արտաքին առևտրի մեջ, ինչպես նաև Ղրիմի ներքին առևտրում գնալով նշանակալից դեր էին խաղում հայ առևտրական դասի ներկայացուցիչները՝ թե բուն ղրիմահայերը և թե նախիջևանցիներն ու թուրքահպատակ հայերը։ Այս շրջանում հայերը շարունակում էին իրենց ձեռքը պահել Կովկասի, հատկապես Չերքեզիայի հետ կատարվող առևտուրը, մանավանդ որ 1821 թվականի հոկտեմբերի 10-ի հրամանագրով Չերքեզիայից Ղրիմ բերվող բոլոր ապրանքները համարվում էին մաքսազերծ[22]։ Թեոդոսիայի մեծահարուստ հայ վաճառականներից մեկը՝ երկրորդ գիլդիայի վաճառական Գաբրիել Թորոսովը, օրինակ, 1826 թվականի ապրիլի 19-ին Թեոդոսիայի քաղաքապետարանից խնդրում էր թույլ տալ քաղաքի նավահանգստում ընդունելու իր առևտրական գործակալներից մեկի կողմից Չերքեզիայում գընված բավական մեծ քանակությամբ մորթեղենը, քանի որ Կերչի

22 Крымоблархив, ф. 45, оп. 1, д. 945, л. 2.

մաքսատունը, որը պիտի ընդուներ Չերքեզիայից մուծվող ապրանքներ, դեռևս հիմնված չէր։ Առևտրական գործակալներ ունենալը ինքնին արդեն խոսում է Թորոսովի ունեցած առևտրական գործարքների ծավալի մասին[23]։ Սակայն անդրադառնանք նրա խնդրանքին։ Այս վերջինը ուրիշ է տալիս քաղաքապետարանին, որպես Ղրիմի տնտեսական զարգացման համար կարևոր մի խընդիր՝ Չերքեզիայի ու Աբխազիայի հետ կատարվող առևտրի և Կերչի մաքսատան ու արգելանոցի հարցը բարձրացնել ֆինանսների մինիստրության առաջ։ Մինչև Կերչի արգելանոցի կառուցումը, Չերքեզիայից ու Աբխազիայից առանց մաքսի Թեոդոսիայի նավահանգիստը ապրանքներ ընդունելու հարցը ֆինանսների մինիստրը մացնում է մինիստրների խորհրդի քննարկմանը։ Մինիստրների խորհուրդն ընդառաջում է այդ խնդրանքին և ընդունում համապատասխան որոշում, որը հաստատվում է Նիկոլայ I-ի կողմից[24]. այս հանգամանքը դարձյալ խոսում է այն մասին, թե ինչպիսի կարևորության էր տրվում Կովկասի հետ Ղրիմի վաճառականների ունեցած առևտրական գործերին։

Տնտեսական շարժառիթներից բացի, XIX դարի 20-ական թվականներին Չերքեզիայի հետ առևտուր անողներին այսօրինակ արտոնություններով օժտելը կապված էր նաև քաղաքական, մասնավորապես Կովկասում Թուրքիայի ու Ռուսաստանի միջև եղած հակամարտություններում հայ վաճառականներին օգտագործելու հանգամանքի հետ։ Այդպիսի պարտականություններ էին ստանձնել, օրինակ, Թամանում, Անապայում, Չերքեզիայում 1827 թվականին առևտուր անող ղրիմահայ վաճառականներ Դանիել Պետրոսովը, Յուսուֆը, Հովակիմ Սերկիզովը, Եգոր Չերնոկովը և շատ ուրիշներ[25]։

Սակայն չերքեզներին թուրքական ազդեցությունից կտրելու նպատակով ռուսական իշխանությունները երբեմն համակրանք էին տածում նրանց առանձին ներկայացուցիչների այս կամ այն դժգոհության հանդեպ՝ ընդդեմ հայ առևտրականների։ 1828 թվականին, օրինակ, ռուսական առանձին պաշտոնյաներ հարց են բարձրացնում արգելելու հայերի առևտուրը Կուբանի փոխանակային առևտրատներում, այնինչ կոլեգիական քարտուղար Խարտուլյարի՝ Կերչի և Բուգազի առևտրի կառավարչի տեղակալ Կոլինցին 1828

23 Նույն տեղում։

24 Նույն տեղում, թ. 10։

25 Архив внешней политики России, ф. Главный архив, У—Бз, д. 232, 1824 г., лл. 242—244, 261—262, д. 256, л. 77.

թվականի մարտի 13-ին ուղղած զեկուցագրի համաձայն այդ փոխանակային առևտրատներում «ներմուծվող մեծ քանակությամբ ռուսական ապրանքները բերվում էին ոչ թե լեռնականների, այլ հայերի կողմից[26]»։

XIX դարի առաջին կեսին հայերը շարունակում էին աշքի ընկնել թուրքական շրջանների և հատկապես Կոստանդնուպոլսի ու Տրապիզոնի հետ կատարվող առևտրում։ Նրա մասնակիցն էին և Ղրիմում հաստատված հայերը և թե նրանց ազգակիցները Թուրքիայում։

Առևտրի ապրանքները բնութագրելիս, հարկ է նշել, որ դրանց մեջ գերակշիռ տեղ էին գրավում պարենամթերքն ու հագուստները։

Ղրիմ էին ներմուծվում մետաքսյա և բամբակյա գործվածքներ, հագուստեղեն, բամբակյա մանվածք, սեկ (այծի բարձրորակ կաշի), պղինձ, մետաղե և կավե ամաններեն, սոսինձ, ձյութ, շինափայտ, բրինձ, գինի, մեղրամոմ, շաքար, ձեթ, ձկթապատուղ, չորացրած մրգեր, սուրճ, սիսեռ, խավլար, թուրքական խունկ և այլ ապրանքներ[27]։ Ներմուծում բառը այստեղ չպիտի հասկանալ միայն արտասահմանից բերելու իմաստով, որովհետև այս ապրանքների մի զգալի մասը մուծվում էր ռուսական ու կովկասյան շրջաններից։ Մյուս կողմից, սրանց մի մասը թերակղզի էր բերվում XIX դարի առաջին տասնամյակներին, մինչդեռ հետագայում դրանցից շատերը սկսեցին արտադրվել տեղում։

Ղրիմից արտահանվում էին. բուրդ, կաշի, մշակված կաշվեղեն, ալյուր, ցորեն, դարի, վարսակ, կորեկ, ձկնեղեն, աղյուս, կղմինդր, ծխախոտ և այլն[28]։

Ցամաքային առևտրում նշանակալից էր Պերեկոպի և Արմյանսկի հայերի դերը։ Սրանց առևտրի հիմնական արտադրանքներն էին Պերեկոպի լճերից արդյունահանվող աղը, սմուշկաները (նորածին գառան մորթիները), բուրդը և անմշակ կաշվեղենը[29], ապրանքներ, որոնք հիմնականում արտադրվում էին թերակղզու հյուսիսային շրջաններում։

Ղրիմի տնտեսական կյանքի, այդ թվում նաև առևտրի զարգացման մեջ հայերի խաղացած դերը XIX դարի առաջին կեսերին

26 Նույն տեղում, գ. 259, թ. 34։

27 П. Сумароков, Досуги крымского судьи, ч. I, стр. 130—131; ЦГВИА, ф. 52, д. 336, ч. III, лл. 33, 77—78, ч. IV, л. 8, 10; Տեր-Աբրահամյան, Պատմություն Ղրիմու, Թեոդոսիա, 1865, էջ 119։

28 Հ. Տեր-Աբրահամյան, Նշվ. աշխ., էջ 120։

29 «Новороссийский календарь» на 1838 год, стр. 116.

առավել ցայտուն կերպով երևում էր Հին Ղրիմ և Ղարասուբազար քաղաքներում, մանավանդ մինչև 1870-ական թվականները, երբ դեռ գործում էին հայկական քաղաքային ռատուշան և հայ-կաթոլիկական դատարանը։ Ուստի և այս քաղաքների հայ համայնքների առևտրական գործունեությանը հարկ ենք համարում անդրադառնալ առանձին-առանձին։

Մենք առիթ ունեցանք բնութագրելու այն գործունեությունը, որ իրականացնում էին Հին Ղրիմի հայկական քաղաքային ռատուշան և Ղարասուբազարի հայ-կաթոլիկական դատարանը՝ առևտուրը պետականորեն սահմանված օրենքներին և հայերին տրված առանձնաշնորհումներին համապատասխան հունի մեջ պահելու համար։ Համայնքների անդամներին վաճառականությամբ և մանրածախ առևտրով զբաղվելու թույլտվություն տալու համար քաղաքային ռատուշան և Ղարասուբազարի հայ-կաթոլիկական դատարանը իշխանություններից ստանում և բաշխում էին առևտուրը արտոնող հետևյալ տիպի փաստաթղթեր.

ա. մանրածախ առևտրի վկայագրեր.

բ. կրպակներ և սրճարաններ պահելու տոմսեր.

գ. գիլդիական վկայագրեր.

դ. ծխախոտ վաճառելու, գինու նկուղներ պահելու ակցիզային վկայագրեր.

ե. գործակատարի վկայագիր.

զ. վկայականներ վաճառական դասին պատկանելու մասին.

է. վարձակալական պայմանագրեր՝ հաստատված ռատուշայի կամ կաթոլիկ դատարանի կողմից.

ը. ոգելից խմիչքներ վաճառելու համար արտոնագրեր.

թ. առևտուր անել արտոնող միջնորդական փաստաթղթեր՝ լիազորագրեր և հավատարմագրեր[30]։

Առևտրական այս վկայագրերից ու արտոնատոմսերից բացի, ռատուշան և դատարանը ստանում ու բաժանում էին նաև Հին Ղրիմից և Ղարաբազարից բացակայելու և կայսրության այլ քաղաքներում առևտուր անելու իրավունքը արտոնող անձնագրեր, որոնք լինում էին միամյա կամ կիսամյա։ Անձնագրերը այս կամ այն անձին տրվում էին ռատուշայի և դատարանի նիստերի որոշմամբ և միայն այն դեպքում, երբ տվյալ անձը ներկայացնում էր համայնքի երկու անդամների գրավոր երաշխավո-

30 Крымоблархив, ф. 67, оп. 1, д. 647, л. 5; д. 1758, л.л. 5—26, ф. 179, оп. 1, д. 326, л.л. 53—79; д. 253, л.л. 21, 26, 30, 32.

րությունը[31]։ 1812 թվականին, օրինակ, ռատուշան այսպիսի անձնագրեր էր տվել իր իրավասությանը ենթակա 103 մարդու, մի հանգամանք, որ խոսում է այլ քաղաքներում հին ղրիմցիների ունեցած առևտրական աշխույժ գործունեության մասին[32]։

Առևտուր անելու համար փաստաթղթեր ձեռք բերելը ժամանակի ընթացքում դառնում է պարտադիր, և դատարանն ու ռատուշան լիակատար պատասխանատվություն էին կրում օրենքի այս մասի պահպանման համար։ Տավրիկյան արքունական պալատի 1867 թվականի նոյեմբերի 7-ի № 3192 շրջաբերականում՝ ուղղված Ղարասուբազարի հայ-կաթոլիկական դատարանին, օրինակ, ասված է. «առևտրի և մանուֆակտուրայի դեպարտամենտի սույն թվականի հոկտեմբերի 9-ի № 6051 առաջարկի հիման վրա արքունական պալատը հանձնարարում է Ղարասուբազարի հռոմեա-կաթոլիկական (իմա հայ-կաթոլիկական— Վ. Մ.) դատարանին՝ անհապաղ կերպով Ղարասուբազար քաղաքում հայտարարել, որպեսզի առևտուր անող և այլ տեսակի զբաղմունքներ ունեցող անձինք, համաձայն 1865 թվականի փետրվարի 9-ի առևտրի ու արհեստների իրավունքի դիմաց մաքսերի մասին բարձրագույն հաստատված կանոնադրության, առաջիկա նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների ընթացքում ձեռք բերեն անհրաժեշտ վկայականներ և արտոնատոմսեր՝ դեկտեմբերի 31-ից հետո առանց փաստաթղթերի առևտուր անելու առիթով իրենց առևտրական ձեռնարկությունները փակելու և տուգանքի ենթարկվելու վտանգից խուսափելու համար[33]»։

Առևտրական փաստաթղթերի դիմաց դատարանն ու ռատուշան համայնքի անդամներից ստանում և պետական գանձարան էին մուծում համապատասխան տուրք, որի չափը ժամանակ առ ժամանակ փոփոխվում էր։ 1867 թվականին, օրինակ, 4-րդ կարգի վայրերի վաճառականներին և մեշչաններին տրվող առևտրական արտոնագրերը գնահատվում էին հետևյալ արժողությամբ.

Մանրածախ առևտուրը արտոնող տարեկան վկայականը արժեր 10 ռուբլի.

1-ին կարգի գործակատարի տոմսը՝ 20 ռուբլի.

2-րդ կարգի գործակատարի տոմսը՝ 5 ռուբլի.

2-րդ գիլդիայի վաճառականի վկայականը՝ 35 ռուբլի.

31 Նույն տեղում, ֆ. 67, ց. 1, գ. 10, թ. 75։

32 Նույն տեղում, գ. 103, թթ. 1—8։

33 Նույն տեղում, ֆ. 179, ց. 1, գ. 326, թ. 12՝.

վաճառականական ընտանիքի անդամի վկայականը՝ 5 ռուբ. 70 կոպ.

վաճառականական ընտանիքի դլխավորներին 2-րդ գիլդիայի վկայականներին կից տրվող վկայականը բարձրարժեք դրոշմաթղթի վրա՝ 1 ռուբլի և այլն[34]։

Դատարանն ու ռատուշան գանձումներ էին կատարում նաև առևտուր անելու համար իրենց կողմից տրված միջնորդական փաստաթղթերի դիմաց։

Հին Ղրիմի քաղաքային ռատուշան և Ղարասուբազարի հայ կաթոլիկների դատարանը անմիջապես հսկողություն էին սահմանում առևտրի բուն ընթացքի վրա, հետևում, որպեսզի այն կատարվի վերևից սահմանված կարգին համապատասխան։ 1843 թվականի հունվարին, օրինակ, ռատուշան հանձնարարել էր իր քարտուղարին հետևել գինետների մաքրությանը, ոգելից խմիչքների անաղարտությանը, որակին, վաճառման գների պահպանմանը, ինչպես նաև հսկել, որպեսզի խմիչքները չվաճառվեն ապառիկով կամ գրավականով[35]։

Ռատուշայի և դատարանի միջոցով հայ մեծահարուստ վաճառականներն ու առևտրից ուռճացած մեշչանները հնարավորություն էին ստանում մասնակցելու այլ քաղաքներում կազմակերպված առևտրական զանազան գործարքներին, աճուրդներին, տոնավաճառներին։ Այսօրինակ ձեռնարկումներին առևտրական դասի հարուստ շերտի ներկայացուցիչների մասնակցությունը ապահովելու համար ռատուշան և դատարանը, վերևից իջեցված հրահանգների ու կարգադրությունների համաձայն, ընդունում էին անհրաժեշտ որոշումներ և կատարում հրապարակումներ։ Ահա դրանցից մեկը, որ տվել էր Հին Ղրիմի ռատուշան թուրքահպատակ Պետրոս Հարությունյանի Թեոդոսիայում աճուրդի հանված տան վաճառքի վերաբերյալ Տավրիկայի նահանգական կառավարության գործադիր էքսպեդիցիայից ստացված շրջաբերականի հիման վրա։ 1835 թվականի հունվարի 30-ի նիստում ռատուշան որոշում է. «Թեոդոսիայի 3-րդ թաղամասում գտնվող և 11.500 ռուբլի գնահատված թուրքահպատակ հայ Պետրոս Հարությունյանի՝ Բեդրոս օղլու, տունը գնել ցանկացողներին հրապարակելու մասին. նշված շինությունը գնելու համար սույն թվականի մարտի 7-ին Թեոդոսիայի առևտրական դատարան ներկայանալու մասին Հին Ղրիմ քաղաքում անել համապատասխան հրապարակում»[36]։ Այդ նույն նիստում նման բովանդակությամբ որոշումներ են ընդունվում տիտղոսավոր խորհրդական Ֆ. Խարտուլյարի՝ Թեոդոսիայում վաճառվող և 2000 ռուբլի գնահատված տան և չինովնիկ Սոտնիկովի՝ Նիկոլաևում վաճառքի հանված ու 4460 ռուբլի գնահատված շենքի վերաբերյալ[37]։

Առևտուր արտոնող նշված փաստաթղթերը ձեռք էին բերում ոչ միայն 1779 և 1799 թվականների հրովարտակների առանձնաշնորհումներից չօգտվող հայերը։ Ինչպես կտեսնենք հարկերի լուսաբանմանը նվիրված բաժնում, թեև Հին Ղրիմի հայկական ռատուշայի և Ղարասուբազարի հայ-կաթոլիկական դատարանի գոյության ընթացքում նրանց իրավասության տակ գտնվող հայերից չէին վերցվել նշված հրովարտակներով տրված «առանց ներքին մաքսերի վճարման կայսրության մեջ ազատ առևտուր անելու» իրավունքները, բայց այլոց հետ միասին տարիների ընթացքում սկսում են առևտրական վկայականներ ու տոմսեր գնել և գիլդիաների մեջ մտնել նաև այդ երկու համայնքի անդամները՝ ըստ հարմարության և ովյալ դեպքում ակնկալվելիք շահույթի և կամ էլ՝ իշխանության այս կամ այն օրգանից ստացված կարգադրություններին ու որոշումներին հարմարվելու անմիջական խնդիրների։ 1827 թվականին, օրինակ, Հին Ղրիմում կային գիլդիաների մեջ գրված տասը վաճառականներ (տե՛ս 108-րդ էջի աղյուսակը)։

Մենք միտումնավոր կերպով բերեցինք գիլդիաների մեջ մտած վաճառականների ցուցակները, որպեսզի ցույց տանք, որ նույնիսկ արտոնություններից ու առանձնաշնորհումներից օգտվելու առաջին տասնամյակներին էլ Հին Ղրիմի առանձին մեծահարուստներ ձեռնտու էին համարում մտնել վաճառականական գիլդիաների մեջ։ Բաբակ Մանուկովը, ըստ երևույթին, երկու դրամագլուխ է հայտարարել՝ տեղում և Պերեկոպում առևտուր անելու համար, երկու վաճառականների դրամագլուխների չափի սահմաններում։

Հին Ղրիմի հայ համայնքը, մանավանդ քաղաքում հիմնադրվելու առաջին տասնամյակներին, իր ճնշող մեծամասնությամբ գտնվում էր ծայրահեղ աղքատ վիճակում։ Եվ եթե, այնուամենայնիվ, 1826—1827 թվականներին քաղաքում կային այն ժամանակվա համար բավական մեծ գումար ներկայացնող 8000

34 Նույն տեղում, թ. 144։
35 Նույն տեղում, ֆ. 67, ց. 1, գ. 799, թթ. 4—6։
36 Նույն տեղում, գ. 647, թ. 38—39.
37 Նույն տեղում, թթ. 24 և 38։

ԱՆՎԱՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ

1826 թ. Հին Ղրիմում գիլդիաների մեջ ընդգրկված վաճառականների, նրանց գրամագլուխների, ինչպես և այն անձանց, թե նրանցից ովքեր են 1827 թ. վաճառականությունից անցնում մեշչանների դասը և ընդհակառակը[38]

№	3-րդ գիլդիայի վաճառականներ	Տարիքը	Նրանց ունեցած գրամագլուխը		Գրամագլուխ, որ 1827 թ. պետք է ներմուծեին	Արտերկրյա ապրանքների վրա գանձվող մաքսատուրքը
			1826 թ. համար	1827 թ. համար հայտարարված գրամագլուխը		
1	Բեղրոսով (5 տղաներով) . . .	74	8000 ռ.	8000 ռուբ.	100 ռուբ.	40 ռ.
2	Խիտունով (3 տղաներով) . . .	75	8000 ռ.	8000 ռուբ.	100 ռուբ.	40 ռ.
3	Միքայել Կապրելով (2 տղաներով)	39	8000 ռ.	8000 ռուբ.	100 ռուբ.	40 ռ.
4	Կևորկ Միտինխանով	34	8000 ռ.	8000 ռուբ.	100 ռուբ.	40 ռ.
5	Մանուկ Վարտանով	62	8000 ռ.	—	—	—
6	Օվանես Մուգերդիչով	22	8000 ռ.	—	—	—
7	Օվանես Մանուկով	34	8000 ռ.	—	100 ռուբ.	20 ռ.
8	Բաբակ Մանուկով	56	—	8000 ռուբ.	100 ռուբ.	20 ռ.
9	Բաբակ Մանուկով (առևտուր է անում Պերեկոպում) .	56	—	8000 ռուբ.	100 ռուբ.	20 ռ.
10	Նիկողոս Կապրելով	56	—	8000 ռուբ.	100 ռուբ.	20 ռ.

ռուբլի դրամագլուխ ունեցողներ, ապա դա, ամենայն հավանականությամբ, առնչվում էր 30 հազար ռուբլի պետական այն վարկի հետ, որն իբր թե շնորհվում էր «ոտքի կանգնեցնելու համար» քաղաքի ազատ համայնքը։ Արժե մի փոքր կանգ առնել այդ վարկի պատմության վրա, որովհետև այն բացահայտում է վարկավորման իսկական նպատակները և լույս սփռում քաղաքի տնտեսական անհրապույր վիճակի վրա 1810—1820-ական թվականներին։

1818 թվականին Ալեքսանդր I-ը, շրջագայելով Տավրիկյան նահանգը, ականատես է լինում «այն ծայր աղքատությանը, որ

38 Նույն տեղում, գ. 454, թ. 42—43։

կրում էին Հին Ղրիմի հայերը»[39]։ *1818 թվականի հոկտեմբերի 23-ին ֆինանսների մինիստրին ուղղած իր կարդադրության մեջ թագավորը, ելնելով Ղրիմի տեղական իշխանությունների իրեն ներկայացրած տեղեկություններից, քաղաքում տիրող դրությունը բացատրում էր բնակիչների զբաղմունքների անբավարար վիճակով, զբաղմունքներ, որոնց «ամբողջ շրջանառությունը հանգում էր մանրածախ փոխանակային առևտրի»*[40]։ *Հին Ղրիմի հայերի դրությունը շտկելու նպատակով նա առաջարկում էր 1799 թվականի հրովարտակով շնորհված 12000 դեսյատին հողի փոխարեն նրանց արտոնել գինու առևտրի իրավունք, իսկ Ղրիմի լճերից ձրի բաց թողնել 50 հազար փութ աղ՝ տեղում վաճառելու համար*[41]։ *Սակայն Հին Ղրիմի հայ համայնքը չի համաձայնվում դրան, որովհետև գինու վաճառքի դիմաց նա չէր կարող վճարել սահմանված տուրքը*[42]։ *1820 թվականի ապրիլի 10-ին, ի փոփոխումն իր 1818 թվականի հոկտեմբերի 10-ի կարգադրության, Ալեքսանդր I-ը ֆինանսների մինիստրին հատուկ հրամանով կարգադրում է Հին Ղրիմի հայերին բաց թողնել 30 հազար ռուբլի վարկ և այն տրամադրել Խերսոնի և Տավրիկայի գինվորական նահանգապետ գրաֆ Լանժերոնին՝ բաշխելու և այդ մասին զեկուցելու իրեն*[43]։

Այդ վարկը բաշխելու շուրջն առաջացած պատմությունը ցույց է տալիս, որ վարկավորման նպատակը եղել է՝ նախ լրացնել հողերի այն պակասը, որ առաջացել էր 1799 թվականի հրովարտակով Հին Ղրիմի հայերին 12.000 դեսյատին հող տալու կապակցությամբ՝ քաղաքի շրջակայքում այդքան ազատ հողատարածությունների և անտառներ չլինելու հետևանքով և ապա՝ օգնել առևտրական դասի առավել ունևոր շերտին՝ ընդլայնելու իր գործունեությունը և զարկ տալու առևտրի զարգացմանը։ Ինչպես և պետք էր սպասել, աղքատներին աննշան բաժին ընկավ այդ վարկից։

Վարկը բաշխելու կարգը սահմանելու համար Թեոդոսիա ժամանած Տավրիկիայի քաղաքացիական նահանգապետն իր մոտ է կանչում հին ղրիմցիների ներկայացուցիչներին։ Պարզվում է, որ Հին Ղրիմի 366 հայ ընտանիքներից քաղաքում ապրում է ընդամե-

39 Одесский облархив, ф. 1, оп. 219, д. 10, 1823, л. 35.

40 Նույն տեղում։

41 Նույն տեղում, թ. 36ա։

42 Նույն տեղում, թ. 73ա, բ։

43 Նույն տեղում, թ. 90։

նը 123 ընտանիք, իսկ մնացածները ցրված են այլ քաղաքներում. Թեոդոսիայում՝ 45, Կարասուբազարում՝ 122, Սիմֆերոպոլում՝ 12, Բախչիսարայում՝ 3, Եվպատորիայում՝ 29, Պերեկոպում՝ 12, Օբիդոշնայում՝ 1, Նախիջևանում՝ 19 ընտանիք: Հին Ղրիմում բնակվողները պահանջում են վարկավորել միայն նրանց, ովքեր ավյալ պահին բնակվում էին քաղաքում, պատճառաբանելով, թե այլ քաղաքներում ապրողները իրավունք չունեն վարկ ստանալ, որովհետև վարկավորման «ամբողջ նպատակը քաղաքի վիճակի բարելավումն է»[44]:

Կար, սակայն, ավելի լուրջ խոչընդոտ: Քաղաքացիական նահանգապետը խոստովանում էր, թե Հին Ղրիմում «ապրող հայերից սեփական ունեցվածքի տեր է համարվում միայն 23 ընտանիք, իսկ մնացածները աղքատ են»[45], այնինչ հարուստները պարտավորվում էին վարկի դիմաց երաշխավորել միայն այն աղքատ ընտանիքներին, որոնց իրենք կմատնանշեն: «Ակնհայտ է,— գրում էր նահանգապետը,— որ նման բաշխումը առիթ կարող է տալ շատ անարդարությունների և վերջ ի վերջո կավարտվի նրանով, որ վարկից կօգտվեն վերջին դասակարգից (աղբատներից— Վ. Մ.) շատ քչերը միայն, որոնք կկարողանան իրենց երաշխավորողներ ճարել, մինչդեռ ամենաաղքատները, որոնց ամենից շատ պետք է օգնություն ցույց տրվի, ոչ մի վարկ չեն ստանա»[46]: Քաղաքացիական նահանգապետը այս վիճակը խոստովանում էր զինվորական նահանգապետին 1822 թվականի հուլիսի 19-ին հղած իր գրության մեջ, այսինքն մի չինովնիկ մյուսին բացատրում էր առկա վիճակը: Ինչպես շուտով կտեսնենք, ելնելով պետական շահերը պաշտպանելու խնդրից, ինքը՝ նահանգապետն էլ դառնում է վարկավորման այդ անարդար սկզբունքի նախաձեռնողներից: Նախքան վարկի բաշխելը, կառավարությունը մտահոգված էր նրա ապահովմամբ՝ անշարժ գույքով, վարկավորվողների կողմից: Հին Ղրիմի հայերը, բացի իրենց տներից, չունեին որևէ այլ տեսակի անշարժ գույք: Մինչդեռ այդ տները չէին կարող դրավական դառնալ վարկի համար, որովհետև նախ դրավ էին ընդունվում միայն նահանգական և նավահանգստային քաղաքներում գտնվող շենքերը և երկրորդ՝ Հին Ղրիմի տների մեծ մասը հյուսված էր ճյուղերից և քաղաքը սակավ բնակեցված լինելու հետևանքով չէր կարող անհրաժեշտ գնով վաճառվել[47]: Բնականաբար, պետական պաշտոնեությանն ավելի շատ հետաքրքրում էր հարցի այս կողմը, քան թե աղքատներին ոտքի կանգնեցնելու խնդիրը, մանավանդ, որ անհնարին էր համատեղել աղքատների վարկավորման և վարկի ապահովման այլաբևեռ պարագաները:

Ելնելով առեղծված վիճակից, քաղաքացիական նահանգապետը առաջարկում էր վարկ տալ Հին Ղրիմում ապրող կամ այլ քաղաքներում գտնվող այն հին ղրիմցիներին, որոնք ըստ գույքային ունեցող կարգի, իրենց անշարժ ունեցվածքով կարող էին երաշխավորել վարկի մարումը, պայմանով, որ այդ հարուստները ստացած դումարի կեսը, ըստ Հին Ղրիմում հիմնված վարկային կոմիտեի նշանակման, հատկացնեին աղքատներին: Վարկավորվող այս հարուստ անձինք գրավոր ապահովում էին ամբողջ դումարը՝ թե իրենց և թե աղքատների բաժինը[48]:

1822 թվականի օգոստոսի 14-ին քաղաքացիական նահանգապետն իր և զինվորական նահանգապետի կարծիքը, բոլոր փաստաթղթերով հանդերձ, ուղարկում է Հին Ղրիմի վարկային կոմիտեի վերջնական եղրակացությանը: Նոյեմբերին նահանգապետը ստանում է վարկային կոմիտեի զեկուցագիրը, որտեղ ամփոփված էին վարկը բաժանելու նոր կանոնները: Նույն ամսի 16-ին այդ կանոնները, իր դիտողությունների և լրացումների հետ միասին, քաղաքացիական նահանգապետը ուղարկում է Նովոռոսիայի նահանգական կառավարչի վերջնական լուծմանը: Վարկը բաշխելու վերաբերյալ ընդունվում են հենց այդ կանոնները՝ նահանգապետի կատարած աննշան փոփոխություններով: Դրանց համաձայն՝

1. *Խաղողի այգիների և Թեոդոսիայում գտնվող քարաշեն տան գրավականով՝ 30 հազար ռուբլուց 14 հազարը տրվում էր Աղաջան Սարկիսովին և Առաքել Նիկողոսովին: Այդ դրամից 4 հազար ռուբլին նրանք պետք է բաշխեին աղքատներին, ներկայացրած ցուցակի համաձայն: Այսպիսով, աղքատներին տրվում է վարկի ոչ թե կեսը, այլ մեկ քառորդից մի փոքր ավել: Ուրեմն տեղի էր ունեցել յուրատեսակ մի կոմպրոմիս՝ պաշտոնեության և զաղութի հայ համայնքի հարուստների միջև:*

2. *Մնացած 16 հազարը բաշխվում էր հետևյալ կերպ. մինչև 100 ռուբլի վարկ վերցնողները բաժին չէին հանում աղքատներին, իսկ 100 ռուբլուց ավել վերցնողները նշանակված քառորդ մասը տալիս էին աղքատներին: Հակառակ վարկային կոմիտեի կարծիքի, աղքատները փաստորեն չէին կարող անմիջական կերպով վարկ*

44 Նույն տեղում, թ. 142ա:
45 Նույն տեղում, թ. 142բ:
46 Նույն տեղում:
47 Նույն տեղում, թթ. 142—143:
48 Նույն տեղում, թ. 143բ:

վերցնել, որովհետև դրա համար պահանջվում էր հատուկ դրամական, որից նրանք զուրկ էին։

3. Անհուսալի (վարկը վերադարձնելու իմաստով) մարդկանց վարկ չէր տրվում։

4. Համայնքը պահանջում էր վարկից տարեկան երկու տոկոսը տրամադրել ծխական դպրոցին։ Նահանգապետը ըստ էության ջրում է այս պահանջը, մոցնելով այն կարգը, թե վարկավորվողը այդ տոկոսը պիտի տա ոչ թե պարտադիր, այլ կամավոր կերպով։

5. Բարձրագույնս հաստատված կանոնների համաձայն վարկի տոկոսները պետք էր վերածել քաղաքային գումարների[49]։

Ինչպես տեսնում ենք, աղքատների դասը տնտեսական լիակատար կախման մեջ էր դրվում հարուստներից, թեև վարկավորումը ներկայացվում էր որպես Հին Ղրիմի բոլոր հայերին աջակցող տնտեսական միջոցառում։ Հարուստից ողորմություն ստացած աղքատը, պարզ է, որ պիտի դառնար նրա ցանկությունների հլու կամակատարը, նա չէր ուզում զրկվել վարկի իր աննշան բաժնից։ Բացի այդ, իր երեք քառորդով վարկը բաժին էր ընկնում հարուստ վերնախավի մի բուռ ներկայացուցիչներին, աղքատներին մնում էր ընդամենը 7500 ռուբլի։ Միթե պարզ չէ, որ այդ գումարը դժվար թե կարողանար էական փոփոխություններ մտցնել Հին Ղրիմի աղքատ հայ ընտանիքների դրության մեջ։ Պարզ է նաև այն, որ ստանալով 23—24 հազար ռուբլի վարկ՝ 5—6 հոգի մեծահարուստ քաղաքացիները հնարավորություն էին ստանում ընդլայնելու իրենց առևտրական շրջանառության ոլորտը։ Դրանով էլ հենց վարկավորման մասին Ալեքսանդր I-ի ընդունած հրամանագիրը հասնում էր իր կետ-նպատակին։

Նշված վարկի տոկոսներից առաջացած գումարները ծախսվում էին քաղաքի, այդ թվում նաև բուն ռատուշայի վրա։ Տոկոսները հավաքվում էին Տավրիկայի հանրային խնամածության վարչությունում և ապա փոխանցվում ռատուշայի տրամադրության տակ։ 1834 թվականին տոկոսները կազմել էին 1200 ռուբլի[50]; 1843 թվականին վարչությունը քաղաքի ռատուշային է տրամադրում իր մոտ եղած 6241 ռուբլի դրամագլուխը, որի մեջ էին մտնում նաև տարեկան 250 ռուբլի 86 կոպեկի հասնող տոկոսները։ Այդ գումարը պահպանման է հանձնվում ռատուշայի անդամ, գանձապահ Վարդանովին[51]։

49 Одесский облархив, ф. 1, оп. 219, д. 10, 1823 г., л.л. 156—158.

50 Крымоблархив, ф. 67, оп. 1, д. 647, л. 4.

51 Նույն տեղում, գ. 799, թ. 13։

Հին Ղրիմի առևտրի մեջ տարեցտարի ավելանում էր գիլդիաներում ընդգրկված վաճառականների թիվը։ 1859 թվականին, օրինակ, այն հասնում է 19 հոգու[52]։ 1861 թվականի ռեֆորմից հետո, երբ համայն Ռուսաստանի տնտեսական զարգացման աշխուժացումից դուրս չէր մնացել նաև Տավրիկյան նահանգը, որոշ տեղաշարժ է նկատվում նաև հին ղրիմցիների առևտրական գործունեություններում։ Այդ մասին է վկայում «Հին Ղրիմի առևտրի և արդյունաբերական ձեռնարկությունների գլխավոր ստուգման մատյանը», որ կազմվել է 1870 թվականի համար։ Ըստ այդ մատյանի, Հին Ղրիմ քաղաքում գործում էին 11 առևտրական կրպակներ, գինու 4 նկուղներ, 5 գինետուն, 2 ասիական սրճարան, 2 հացի փուռ և 1 բաղնիք[53]։ Սրանք բոլորն էլ պատկանում էին ռատուշայի իրավասության տակ գտնվող 37 հայերի, չնայած այդ ժամանակ քաղաքի բնակչության մեջ արդեն նշմարելի տոկոս էին կազմում նաև թաթարներն ու ռուսները։ Առևտրական այս կետերը, որ պահվում էին համապատասխան վկայականների ու առևտրատոմսերի միջոցով, հիմնականում վաճառում էին բրդյա և բամբակյա գործվածքներ, ծխախոտ, հաց, ոգելից խմիչքներ, կաշվեղեն (մշակված և անմշակ), հացաբուլկեղեն, շինանյութ, մասնավորապես աղյուս, կղմինդր և այլ ապրանքներ[54]։

Բայց որքան առևտրի մեջ բարձրանում էր Սիմֆերոպոլի, Եվպատորիայի, Պերեկոպի ու Թեոդոսիայի դերը, այնքան Հին Ղրիմի առևտրական կյանքը անշքանում էր։ 1892 թվականին քաղաքում առևտրից օգտվելու փաստաթղթերի վաճառքից հավաքված գումարը ընդամենը հավասար էր 424 ռուբլի 26 կոպեկի, իսկ գինետների, արտադրված և դուրս տարված ապրանքներից՝ համապատասխանաբար 200 ռուբլի և 278 ռուբլի 26 կոպեկ[55]։ XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին, երբ Հին Ղրիմից հայերի հեռանալու և Թերակղզու այլ քաղաքներ տեղափոխվելու հետևանքով այնտեղ ընդամենը մնացել էր 410 հոգի հայ (1902 թ.)[56], քաղաքի առևտրական կյանքն էլ լիակատար վայրէջք էր ապրել։

Հայերի, մանավանդ հայ-կաթոլիկական համայնքի իրավասությանը ենթակա համայնքի գերը դպալի էր մանավանդ Ղարասու-

52 Նույն տեղում, գ. 1339, թթ. 4—5։

53 Նույն տեղում, գ. 1758, թթ. 5—25։

54 Նույն տեղում։

55 «Приложение к всеподданнейшему отчету о состоянии Таврической губернии 1892—1901 гг.», за 1893 г., Симферополь.

56 «Լուսա», հանդես, 1905, էջ 164։

քաղարի առևտրի մեջ, մի քաղաք, որն այն ժամանակ իր բնակչության քանակով և տնտեսական կշռով Ղրիմի կարևորագույն կենտրոններից մեկն էր։ Դեռևս Պավել Սումարոկովի ժամանակ, այսինքն իրենց հիմնավորման առաջին իսկ շրջանում, Զարասուբազարի «լավագույն վաճառականները համարվում էին կաթոլիկադավան հայերը»[57]։ Սրանց մեջ ուռճացած առևտրականները ավելի շատ էին, քան Հին Ղրիմի համայնքում։ Պահպանված փաստաթղթերից երևում է, որ ամեն տարի համայնքի անդամներից բավական մեծ դրամագլուխ ունեցող 15—25 մարդ անդամագրված են եղել 3-րդ, հետագայում նաև 1-ին գիլդիայի վաճառականական դասերին։ 1829 թվականին դատարանի կազմում կային 3-րդ գիլդիային անդամագրված 28 վաճառականներ, 1841 թվականին՝ 16 վաճառական[58]։ Դարի կեսերին, 1855 թվականին, դատարանի գերատեսչության գծով 3-րդ գիլդիայում ընդգրկված հայկաթոլիկ վաճառականների թիվը 98 հոգի էր։ Այդ գիլդիայում էին գրանցված նաև 25 հայ լուսավորչականներ[59]։

Վաճառականական գիլդիաների մեջ մտնող բնտանիքների թիվը փոփոխական էր և կախված էր վաճառականության շարքը դասվելու վերաբերյալ մեշչաններից ստացված հայտարարություններից։ Շատ հաճախ տարեվերջին, երբ ընդունվում էին հաջորդ տարվա առևտուր կատարելու համար տրված հայտարարությունները, ոմանք մեշչանությունից անցնում էին վաճառականության շարքերը և ընդհակառակը։ Ամեն ինչ կախված էր նրանից, թե ով՝ ինչ կարողության տեր է դարձել։ Եվ, որովհետև դատարանի, ինչպես և Հին Ղրիմի հայկական ռատուշայի ամբողջ գոյության ընթացքում նրանց անդամների համար այդ պարտադիր չէր, և նրանք առևտուր կարող էին անել գիլդիաներից դուրս, ապա գիլդիաներին անդամագրվում էին, հավանաբար, այն ժամանակ, երբ դա առավել շահավետ էր, քան եղած կարգով առևտուր, մեծամասամբ մանրածախ առևտուր անելը, ինչպես նաև այն ժամանակ, երբ ուռճացած մեծահարուստ առևտրականին այլևս չէր բավարարում մանր առևտրի ոլորտը, և իր տրամադրության տակ եղած դրամագլուխը նա ուզում էր օգտագործել ավելի լայն առևտրական գործարքներում։

Գիլդիայի մեջ մտնելու կամ մնալու համար տարեվերջին հայկաթոլիկական դատարանի անունով տրվում էր համապատասխան դիմում։ Ահա, օրինակ, Հովակիմ Լազարյանի դիմումը 1863 թվա-

57 П. Сумароков, Досуги крымского судьи, ч. II, стр. 70.
58 Крымоблархив, ф. 179, оп. 1, д. 333, л. 3, д. 226, л. 39.
59 Նույն տեղում, գ. 246, թ. 9։

կանի առաջին կեսի համար իրեն՝ ընտանիքով հանդերձ, 3-րդ գիլդիայի մեջ պահելու վերաբերյալ։ Դիմումը տրված էր կես տարվա համար, քանի որ ֆինանսների մինիստրի կողմից առևտրի և արդյունագործության համար մաքսերի նոր նախագիծ մտցնելու կապակցությամբ 1862 թվականի հոկտեմբերի 5-ին իջեցված կայսերական հրամանը պահանջում էր առևտրական բոլոր տեսակի փաստաթղթերը տալ միայն 1863 թվականի առաջին կիսամյակի համար։ Իր դիմումում Հ. Լազարյանը գրում էր. «Ներկայումս, 10-րդ հաշվեհամարով հաշվառված իմ ընտանիքով հանդերձ, կաթոլիկական դատարանի գերատեսչության գծով գտնվելով 3-րդ գիլդիայի վաճառականական կոչման մեջ, ցանկանում եմ 1863 թվականին ևս պահել այդ կոչումը և Զարասուբազարում կատարել այդ գիլդիայի վաճառականների համար սահմանված առևտուրը։ Այդ նպատակով կաթոլիկական դատարանին հայտարարելով 3-րդ գիլդիայի վաճառականական 2400 ռուբլի դրամագլուխ և... 1862 թվականի հոկտեմբերի 5-ին բարձրացուն հաստատված առևտրի ու արդյունագործության իրավունքի համար տուրքերի նոր նախագծի հիման վրա սրան կից ներկայացնելով 1863 թվականի առաջին կիսամյակի համար գիլդիական այս կարգի մաքսերը, այն է վկայականի և հաղորդակցության ճանապարհների համար 21 ռ. 50 կոպ., զեմստվային պարհակները պետականը՝ 1 ռ. 72 կոպ., նահանգականը՝ 1 ռ. 42 կ. և քաղաքայինը 3 ռ., ընդամենը՝ 27 ռ. 64 կոպ., ողորմածաբար խնդրում եմ կարգադրել ինձ, ընտանիքիս հետ միասին, 1863 թվականին հաստատելու 3-րդ գիլդիայի մեջ, տալով առևտրի իրավունք շնորհող անհրաժեշտ վկայականը՝ առևտրատոմսերով հանդերձ»[60]։

Դատարանին նման դիմումներ են տալիս 21 հոգի։ Դատարանը իր 1862 թվականի դեկտեմբերի 31-ի նիստում հարգում է նրանց խնդրանքը[61] և այդ մասին զեկուցում Տավրիկիայի արքունական պալատին[62]։ Այդ վաճառականների թվումն էին Զարասուբազարի հայ առևտրական դասի ունևոր ներկայացուցիչները՝ Վարվառա, Լուսեղեն և Գրիգոր Կուշչիևները, Հովհաննես, Խաչիկ և Գալուստ Մուրզաևները, Հովսեփ և Հովակիմ Լազարևը, Վարվառա Քուշնարևան, Մարտիրոս Քոպոևը, Ուսթիան Թումբևը, Էպրեստ Կայմամզովը, Մարզար Կարամուրղան, Հովսեփ Քեչիևը, Կարապետ Մա-

60 Նույն տեղում, գ. 289, թ. 39։
61 Նույն տեղում, թթ. 53—54։
62 Նույն տեղում, թ. 63։

վիևը, Պետրոս Տեր-Մանուկովը, Մանուել Միսերովը, Ակիմ Սիմյոնովը, Լուսեղեն Խանջիևը, Պողոս Մազլումովը և Գրիգոր Զյումբրիլովը[63]։

1863 թվականին, ինչպես հիշատակվեց, վաճառականական 3-րդ գիլդիան վերացվեց։ Դրա հետևանքով Ղարասուբազարի գիլդիանների մեջ ընդգրկված հայ վաճառականների թիվը մի փոքր նվազեց, որովհետև որոշ մարդիկ, համապատասխան չափի դրամագլուխ չունենալու պատճառով, դուրս էին գալիս գիլդիաներից և առևտուր անում մեշչանական դասի համար սահմանված կարգով։ Սակայն այդ ամենին չէր նշանակում, թե Ղարասուբազարում ծավալված գիլդիական առևտրի մեջ նվազում էր հայ վաճառականական կապիտալի բաժինը։ Ընդհակառակը, թեև գիլդիաների մեջ ընդգրկված հայերի թիվը մի փոքր պակասել էր, բայց հայ առևտրական կապիտալի չափը ավելացել էր, որովհետև 3-րդ գիլդիայի փոխարեն հայերն անդամակցում էին 2-րդին, որի համար, 3-րդի համեմատությամբ, ունևցած դրամագլուխը դրեթե կրկնակի անգամ ավել պիտի լիներ։ Այսպես, Ղարասուբազարի հայ-կաթոլիկական դատարանի գերատեսչության գծով 1867 թվականի համար 2-րդ գիլդիայում գրանցված հայ վաճառականների անվանական ցուցակի համաձայն, վերջիններիս թիվը հավասար էր 13 հոգու[64] (1863 թվականի 23-ի փոխարեն)։ Ինորոշն այն է, որ այս 13 վաճառականներից դրեթե բոլորը կային վերևում բերված 1863 թվականի վաճառականների ցուցակում։ Տասներեքը՝ դրամագլուխ հայտարարած ծխատերերի թիվն է, մինչդեռ վաճառականական դասի մեջ մտածների թիվն ավելի մեծ էր, որովհետև ընտանիքի գլխավորների հետ միասին վաճառականական ընտանիքի անդամի համար սահմանված վկայագիր վերցնելով (որն արժեր 5 ռուբլի)՝ վաճառականությամբ զբաղվելու իրավունք էին ստանում նաև ծխերի անդամները։ Օրինակ, նշված 13 ծխատերերի ընտանիքների անդամներից 14 հոգի ձեռք էին բերել հիշյալ վկայականները[65]։ Անդամագրվելով 2-րդ գիլդիային, սահմանված կարգի համաձայն, ամեն մի վաճառական վճարում էր 35 ռուբլի՝ 4-րդ կարգի բնակավայրերի 2-րդ գիլդիայի համար, 15 ռուբլի՝ իբրև պետական և նահանգական զեմստվային հարկեր և 10 ռուբլի՝ վաճառականական

63 Նույն տեղում, թթ. 64, 91։
64 Նույն տեղում, գ. 326, թթ. 1—2։
65 Նույն տեղում։

վկայականին կից ամեն մի տոմսի համար[66]։ Այդ տոմսերը արտոնում էին առևտրական կրպակներ պահելու իրավունքը։

Ղարասուբազարի առևտրի մեջ շատ ավելի մեծ էր կաթոլիկական համայնքի մեջ մտնող և նրանից դուրս գտնվող տեղացի այն հայերի մասնակցությունը, որոնք առևտուր էին անում գիլդիաներից դուրս։ Ըստ մեծի մասին սրանք զբաղվում էին մանրածախ առևտրով, վաճառելով հագուստեղեն, պարենամթերք և լայն սպառման այլ տեսակի առարկաներ։ Բերենք այդ վկայող բաղում փաստաթղթերից մեկը։ Դա «Ղարասուբազար քաղաքի հայ-կաթոլիկական դատարանի գերատեսչության գծով եղած առևտրական և արդյունաբերական ձեռնարկների ստուգման 1861 թվականի մատյանն» է։ Այդ մատյանի տվյալներով համեմատաբար ոչ մեծ այդ քաղաքում (այն ժամանակ քաղաքն ուներ 10—12 հազար բնակչություն) դատարանին ենթակա 70 հայեր պահում էին առևտրական մեծ ու փոքր տարբեր տեսակի ձեռնարկներ, այն է՝ մանր ապրանքներ վաճառող 27 կրպակ, գործվածքեղենի 8 կրպակ, 6 դինեատուն, 4 դինեվաճառ խանութ, 1 դինու նկուղ, օղու վաճառքի 2 կետ, 7 ասիական սրճարան, ալյուր վաճառող 4 խանութ, 2 ծխախոտի կրպակ, շինանյութի 1 խանութ և մոմ վաճառող երկու կետ[67]։ Առևտրական այս խանութներից, կրպակներից ու կետերից միայն մի քանիսն էր պատկանում վաճառականներին. դրանց ճնշող մեծամասնությունը մանրածախ առևտրի վկայականներով և տոմսերով առևտուր անող հայ մեշչանների սեփականությունն էր։ Սրանք միայն այն հայերն էին, որոնք մտնում էին կաթոլիկական դատարանի գերատեսչության տակ։ Մինչդեռ քաղաքում այս շրջանում արդեն առավել նշանակալից թիվ էին կազմում լուսավորչական հայերը, որոնք չէին ենթարկվում դատարանի տնօրինությանը և, հետևապես, նրանց կատարած առևտուրը չի արտացոլված վերը բերված մատյանում և առհասարակ դատարանի փաստաթղթերում։

1850-ական թվականների վերջերին հավատարմագրերի և լիազորագրերի հաստատման կապակցությամբ հայ-կաթոլիկական դատարանի իրավասությունը սահմանափակելու փորձերը, սպառնալով հայ համայնքի և առհասարակ Ղարասուբազարի առևտրական դասի շահերին, բողոքի են մղում առևտուր անող վաճառականներին և մեշչաններին։ Մինչև 1858 թվականը այդ փաստաթղթերը

66 Նույն տեղում։
67 Նույն տեղում, թթ. 53—79։

հաստատում էր դատարանը։ 1858 թվականին Տավրիկայի քաղաքացիական պալատը, նկատի ունենալով այն, որ օրենքների ժողովածուի 728 և 1533 հոդվածների (1857 թ. հրատարակություն) համաձայն կալքագրերն ու հավատարմագրերը կարող են հաստատման ներկայացվել և ի կատար ածվել ոչ այլ կերպ, քան կալքագրային գործերի հետ, արգելում է հայ կաթոլիկական դատարանի կողմից նման փաստաթղթերի հաստատումը։ Դա ստիպում է Ղարասուբազարի հայ վաճառականներին և մեշչաններին 1858 թվականի հուլիսի 23-ին համախոսականով դիմել կառավարիչ սենատին, խնդրելով վերացնել այդ արգելքը[68]։ Համախոսականագրում նրանք բացատրում էին, որ 1779 թվականի նոյեմբերի 14-ի հրովարտակի հիման վրա 1790 թվականին հաստատված իրենց դատարանը, իր գոյության սկզբից մինչև 1858 թվականը, այսինքն շուրջ 68 տարի, հաստատում ու տալիս էր անհրաժեշտ հավատարմագրեր և լիազորագրեր։ Այդ հանգամանքը, հայտնում էին նրանք, հնարավորություն էր ընձեռում Ղարասուբազարի առևտրական դասի համար անձնական բացակայությամբ չընդհատել քաղաքում կատարվող առևտուրը կամ արդյունագործությունը և կայսրության այլ քաղաքներում, ըստ անհրաժեշտության, իրենց հավատարմատարների միջոցով ձեռնարկել առևտրի կամ արդյունաբերության հետ առնչվող գործարքներ, ինչպես նաև կապալով տալ, գրավ դնել, գնել կամ վաճառել անշարժ գույքը և դրանց առնչվ անհրաժեշտ գործողություններ կատարել, այդ հավատարմատարներին իրենց փոխարեն ատենատները ուղարկել և այլն։ Անգրագետ և ծերացած անձինք ևս իրենց լիազորված մարդկանց միջոցով հնարավորություն էին ստանում առևտրական գործարքների մասնակցել։ Դիմումի վերջում նրանք իրենց խնդրանքին տալիս էին այն հիմնավորումը, թե քանի որ Ղարասուբազարում չկա ոչ գավառային դատարան և ոչ էլ այլ կարգի պաշտոնատուն, որին կից լիներին կալքագրային գործեր, ինչպես այդ պահանջում էր քաղաքացիական պալատը, ապա այդ փաստաթղթերը հաստատելու և ստանալու համար իրենք ստիպված կլինեին մեկնել Սիմֆերոպոլ կամ Թեոդոսիա, որոնցից առաջինը գտնվում է 40, իսկ երկրորդը՝ 63 վերստ հեռավորության վրա, մի բան, որն իրենցից կպահանջի զուր ծախսեր և ժամանակի անտեղի վատնում[69]։

Ղարասուբազարի հայ առևտրական դասի այս խնդրանքը սենատը ուղարկում է Նովոռոսիայի և Բեսարաբիայի գեներալ-նահանգապետի և ներքին գործերի մինիստրի եղրակացությանը։ Նահանգապետն ու մինիստրը հարգելի համարելով հայ վաճառականների և մեշչանների պատճառաբանությունը, միջնորդում են բավարարել նրանց խնդրանքը[70]։ Սենատի դեպարտամենտը 1859 թվականի դեկտեմբերի 14-ին որոշում է թույլ տալ Ղարասուբազարի հայ-կաթոլիկական դատարանին հաստատելու հավատարմագրեր և լիազորագրեր, բայց քանի որ դրանով լրացում պիտի մտցվեր գոյություն ունեցող օրենքներում, դեպարտամենտը գործը հանձնում է կառավարիչ սենատի առաջին երեք դեպարտամենտների և ժողովի քննությանն ու վերջնական վճռին[71]։ Այս վճիռը, այսինքն գործը վերոհիշյալ ատյաններն ուղարկելու որոշումը, ընթացք է ստանում միայն 1860 թվականի սեպտեմբերի 9-ին[72]։ Նույն թվականի նոյեմբերի 4-ին ընդհանուր ժողովը, քննելով այս հարցը, նույնպես հարգում է խնդրատուների դիմումը և որոշում, ըստ հաստատված կարգի, խնդրել բարձրագույն թույլտվություն[73]։ 1861 թվականի հուլիսի 15-ին ստացվում է նաև այդ թույլտվությունը[74]։

Ղարասուբազարի առևտրի մեջ նշանակալից էր թուրքահպատակ հայ առևտրականների մասնակցությունը, մանավանդ մեծ էր շրջանառության մեջ նրանց ներդրած դրամագլուխը։ Ստորև բերում ենք Ղարասուբազարում թուրքահպատակ հայերի ունեցած առևտրական ծավալուն գործունեությունը վկայող փաստաթղթերից մեկը, որն, ինչպես կտեսնենք, հետաքրքրություն է ներկայացնում շատ և շատ կողմերով (տե՛ս էջ 120—121)։

Այս ցուցակից երևում է, որ թուրքահպատակ հայ առևտրականները տարիներ շարունակ առաջատար մասնակցություն են ունեցել Ղարասուբազարի առևտրի մեջ։ Այդ առաջին։ երկրորդը, 1832 թվականին նրանց կողմից առևտրի մեջ ներդրած գումարը կազմել է 113.500 ռուբլի, չհաշված մեծահարուստ առևտրական Պողոսին, որը քաղաքում ուներ 16 կրպակ։ Եվ երրորդ, ցուցակից հետևում է, որ նրանց առևտուրը կրել է, որոշ իմաստով, մասնագիտացված բնույթ. ըստ մեծի մասին նրանք զբաղվել են զանազան կտորեղենների ու գործվածքների, հիմնականում բարձրորակ (красные товары) մանուֆակտուրայի վաճառքով։

68 ЦГИА СССР, ф. 1149, 1861 г., д. 39, л. 2.

69 Նույն տեղում, թ. 6բ։

70 Նույն տեղում, թթ. 7—8։

71 Նույն տեղում, թ. 10ա։

72 Նույն տեղում։

73 Նույն տեղում, թ. 12ա և բ։

74 Նույն տեղում, թ. 17ա։

ՑՈՒՑԱԿ[75]

Ղարասուբազարում առևտուր անող բուրթաճիպատակ հայերի, 1832 թ.

№№	Անունը	Ո՞ր թվակա-նից է գրա-նըվում Իուս-աստատանում	Ի՞նչ առևտրով է զբաղվում	Ո՞ւնի արդյոք կրպակներ և այլ ձեռնարկներ, եթե առևտուր է անում, ապա որքան գումարի
1	2	3	4	5
1	Մինաս	1832	կտորեղենի վաճառքով*	առևտրական խանութ կամ կրպակ չունի, առևտուր է անում 8000 ռ. գումարի
2	Կիրկոր Ակոպով	1830	նույնը	ձեռնարկներ չունի, առևտուր է անում 8000 ռուբլի գումարի
3	Սարգիս	1820	նույնը	առևտուր է անում 10.000 ռուբլի գումարի, առևտրական ձեռնարկներ չունի
4	Սիմոն Միքայել	1826	նույնը	առևտրական ձեռնարկներ չունի, առևտուր է անում 3000 ռուբ. գումարի
5	Առաքել Սիմոնով	1824	նույնը	առևտրական ձեռնարկներ չունի, առևտուր է անում 5000 ռ. գումարի
6	Խաչատուրով	1820	նույնը	առևտրական ձեռնարկներ չունի, առևտուր է անում 7000 ռ. գումարի
7	Միրտիչ Գրիգորով	1817	նույնը	ունի տուն, առևտուր է անում 12.000 ռուբլի գումարի
8	Կարապետ Օվանեսով	1827	նույնը	առևտրական ձեռնարկներ չունի, առևտուր է անում 10.000 ռուբ.
9	Հակոբ Օվանեսով	1821	նույնը	առևտրական ձեռնարկներ չունի, առևտուր է անում 12.000 ռ. գումարի
10	Աբրահամ	1822	նույնը	առևտրական ձեռնարկ-եր չունի, առևտուր է անում 6000 ռուբ. գումարի
11	Հովհաննես Կարապետով	1820	մաներ ապրանքներով	առևտրական ձեռնարկներ չունի, առևտուր է անում 10.000 ռ. գումարի
12	Սիմյոն	1818	կտորեղենի վաճառքով	առևտրական ձեռնարկներ չունի, առևտուր է անում 3000 ռուբ. գումարի
13	Պողոս	1827	նույնը	ունի 16 կրպակ
14	Հովհաննես	1827	նույնը	առևտրական ձեռնարկներ չունի, առևտուր է անում 3000 ռուբ. գումարի
15	Կալպակչիճ.	1807	տարբեր ապրանքների վաճառքով	ունի սրճարան, առևտուր է անում 8000 ռուբլի գումարի
16	Սահակ	1832	մաներ ապրանքների վաճառքով	առևտրական ձեռնարկներ չունի, առևտուր է անում 1500 ռուբ. գումարի
17	Բախտիյար	1832	կտորեղենի վաճառքով	առևտրական ձեռնարկներ չունի, առևտուր է անում 7000 ռ. գումարի

[75] Крымоблархив, ф. 169, оп. 1, д. 96, л.л. 8—12.

* *Տեքստում՝* красные товары.

* * *

XIX դարի երկրորդ կեսին և XX դարի առաջին տասնամյակին երկրագործության և արհեստների հետ միասին առևտուրը շարունակում էր զլխավոր տեղ գրավել ղրիմահայության զբաղմունքների մեջ՝ իհարկե հնարավորին չափ հարմարվելով Ռուսաստանի տնտեսական կյանքում հատկապես հետևյալ շրջանում ծայր առած փոփոխություններին։

Կապիտալիստական ուղի մտած ռուսական տնտեսության և առևտրի զարգացմանը համապատասխան Ղրիմի առևտուրը այդ շրջանում աճում է աննախընթաց չափերով։ Սիմֆերոպոլն ու Կերչը, Եվպատորիան ու Թեոդոսիան դառնում են ոչ միայն նահանգի, այլև կայսրության առևտրական կարևոր կենտրոններից։ Ներքին առևտրի մեջ շարունակում էր կարևոր դեր խաղալ Ղարասուբազարը։ Սիմֆերոպոլում, օրինակ, 1900 թվականին հաշվվում էր 650 առևտրական ձեռնարկ՝ մինչև 10.000.000 ռուբլի շրջանառությամբ[76]։ Նրանից քիչ էր ետ մնում Եվպատորիան, որտեղ առևտրի տարեկան ընդհանուր շրջանառությունը հավասար էր 8 միլիոն ռուբլու[77]։ Հատկապես շրջանում առևտրի զարգացումը մեծ չափեր է ընդունում Սևաստոպոլում և Թեոդոսիայում։ Եթե 1866 թվականին այդ երկու նավահանգիստների ապրանքաշրջանառությունը հավասար էր ընդամենը 2.799.340 ռուբլու, ապա XIX դարի վերջին այն արդեն կազմում էր 24 միլիոն ռուբլի[78]։ Առևտրի զարգացմանը խթանեց Սևաստոպոլ—Լազովայա երկաթուղին, որի կառուցումն ավարտվեց 1874 թվականին։ Ղրիմից արտահանվում էին հաց, մրգեր, ծխախոտ, գինի և այլն։ 1913 թվականին արտահանվել է 10 միլիոն 500 հազար փութ հացահատիկ և ալյուր, 2 միլիոն փութ մրգ, 300 հազար փութ ծխախոտ, 50 հազար փութ բուրդ, 18 հազար փութ կաշվեղեն և այլն[79]։

Տոկոսային հարաբերությամբ ապրանքային շրջանառության մեջ արտահանման բաժինը շարունակ աճում էր՝ 1866 թվականի 48,5 տոկոսի փոխարեն դարավերջին կազմելով 96,8 տոկոս[80]։ Արտահանման մեջ առաջին տեղը զբաղեցնում էր հացահատիկը. արտահանվում էր ոչ միայն բուն Ղրիմի, այլև Տավրիկյան նահանգի հյուսիսային գավառների և Ուկրաինայից եկող հացը։

Ղրիմի առևտրի այս վերընթացին և ծավալմանը մասնակից էր նաև գաղութահայ առևտրական դասը, որի գործարքները նկատելիորեն աշխուժացան Ղրիմի պատերազմի և հատկապես հետևյալ շրջանում։ Պատերազմի ժամանակ ղրիմահայ վաճառականությունն իր վրա էր վերցրել Սևաստոպոլի պատերազմական կարիքների մատակարարման մի մասը, իսկ 60—70-ական թվականներին փութկոտ մասնակցություն էր ցուցաբերում երկաթուղային շինարարությանը[81]։

Ոչ միայն անձամբ, այլև իրենց գործակալների միջոցով ղրիմահայ վաճառականներն ու ուռճացած առևտրականներն օրըստօրի ընդլայնում էին իրենց առևտրական գործունեությունը բուն Ղրիմի, ինչպես և կայսրության մոտիկ թե հեռավոր քաղաքներում, առևտրի մեջ ունեցած իրենց հմտությամբ արժանանում համընդհանուր վստահության, մանավանդ տոնավաճառների և ապառիկով առևտուր անելու պարագաներում։ XIX դարի երկրորդ կեսի ղրիմահայ մշակութային գործիչ, Ղրիմի և առհասարակ Հարավային Ռուսաստանի տնտեսական կյանքին քաջատեղյակ Հ. Տեր-Աբրահամյանը այս կապակցությամբ գրում է. «Խրիմեցի հայ մը (հայտնի բան է քիչ թե շատ ծանոթ անձն), եթե ապրանք գնելու ժամանակ չորս կամ հինգ մասին մեկը պատրաստ դրամագլխով հատուցանե, մնացյալ երեք կամ չորս մասը առանց դժվարության կհավատան որոշմամբ ժամանակի»[82]։ Իհարկե, նման վստահության հիմքը կարող էին լինել միայն առևտրական երկարամյա գործունեությունն ու մշտական շփումը։

Այս շրջանում ղրիմահայ առևտրական դասի շատ ներկայացուցիչներ դառնում են ռուսական քաղաքներում կազմակերպված տոնավաճառների (տարեկան թե ամսական) մշտական մասնակիցը։ Մանավանդ նշանակալից էր նրանց մասնակցությունը Խարկովի տոնավաճառներին։ Տարեկան չորս անգամ նրանք Խարկովի տոնավաճառներից Ղրիմ էին բերում մեծ քանակությամբ ապրանքներ. 1-ինը հունվարի 1-ին, որ ղրիմցիները Խրեշչենսկի (Крещенский) էին անվանում, 2-րդը՝ օգոստոսի 15-ին՝ աստվածածնի վերափոխման տոնին (Успенский), 3-րդը՝ հոկտեմբերի 1-ին՝ պաշտ-

76 П. Н. Надинский, Очерки истории Крыма, Крымиздат, 1951, ч. I, стр. 155.

77 Նույն տեղում։

78 Նույն տեղում, էջ 156։

79 Նույն տեղում, էջ 199։

80 Նույն տեղում, էջ 156։

81 Հ. Տեր-Աբրահամյան, Պատմություն Խրիմու, մասն I, էջ 120։

82 Նույն տեղում, էջ 119։

պան ս. աստվածածնի տոնին (Покровский) և 4-րդ՝ հոգեգալըստյան տոնին (Троицкий)[83]։ Ռուսական քաղաքներից բերվող ապրանքներին ղուզրնթաց, օգտագործելով իրենց կապերը, ղրիմահայերը այս շրջանում շարունակում էին Թուրքիայից և այլ վայրերից Ռուսաստան ներմուծել նշանակալից քանակությամբ ապրանքներ, այդ թվում՝ նարինջ, լիմոն, կաղին, ձիթապտուղ, ձեթ, մեղր, ամանեղեն, ապակի և ձեռակերտ ապրանքներ[84]։

Սկսած XIX դարի երկրորդ կեսից և մանավանդ 60—70-ական թվականներից, ղրիմահայ առևտրականների գործունեությունը սկսում է կենտրոնանալ Սիմֆերոպոլում, որին ղուզրնթաց հայերի առևտուրը նշանակալից էր նաև Թեոդոսիայում, Արմյանսկի Բազարում, Ղարասուբազարում և Եվպատորիայում։ Ըստ 1895 թվականի Սիմֆերոպոլի վաճառականների այբբենական ցուցակի՝ քաղաքում այն ժամանակ կային գիլդիաների մեջ ընդգրկված ավելի քան 7 տասնյակ հայ վաճառականներ[85]։ Սրանց թվումն էին Բոյաջիևները, Մազլումովները, Զաքիևները, Քիչիևները, Գուսիկովները, Թոփալովները, Սպենդիարովները, Թումանովները և վաճառականական մեծահարուստ շատ ու շատ այլ ընտանիքներ։ Իրենց գործակատարների ու հավատարմատարների միջոցով սրանք առևտուր էին անում արդեն կապիտալիստական տնտեսությանը համապատասխան ձևով՝ պահում էին առևտրական մասնագիտացված ֆիրմաներ, խանութներ, կրպակներ, առևտուրը հաջող և արագ կատարելու համար դիմում էին մամուլի և ռեկլամային այլ միջոցների օգնությանը և այլն։ Ահա, օրինակ, Ի. Բ. Բոյաջիևի հայտարարությունը, որ քաղում ենք «Крым» թերթի 1897 թվականի մարտի 3-ի համարից. «Մարտի 5-ից սկսած Ի. Բ. Բոյաջիևի մահուդամանուֆակտուրային խանութում նշանակված է առկա և ամեն օր ստացվող ապրանքների 8-օրյա մեծ վաճառք»[86]։ Մի այլ հայտարարության մեջ, որ սիմֆերոպոլցի հայ վաճառական Քրիստափորովը և նրա ընկերակիցները զետեղել էին նույն թերթի 1897 թվականի մայիսի 19-ի համարում, կարդում ենք. «Գ. Ն. Քրիստափորովը և ընկ. սրանով հայտարարում են, որ 1897 թվականի մայիսի 1-ից նոր գնացուցակով վաճառքի են հանվում սեփական նկուղներում պահպանվող գինիներ»։

Երաշխավորելով իր գինիների անաղարտությունը, ֆիրման

83 Նույն տեղում։

84 Նույն տեղում, էջ 119—120։

85 Крымоблархив, ф. 63, оп. 1, д. 328.

86 «Крым», газета, Симферополь, 1897, № 53.

խնդրում էր հատուկ ուշադրություն դարձնել պատիճների ու խցանների և նրանց վրա կնքված ֆիրմայի դրոշմի անխախտվածության վրա[87]։ Ահա նաև մեկ ուրիշ ռեկլամ. «Սիմֆերոպոլում Յա. Գ. Մազլումովի խանութում ստացվել են շատ տեսակի անջրանցիկ բրեզենտներ»[88]։

Մենք միտումնավոր բերեցինք այս ռեկլամները ցույց տալու համար, թե նախկին խոջան կամ մանրավաճառը ինչպես էին հարմարվել կապիտալիստական տնտեսության պահանջներին և ընթանում էին նրա զարգացմանը համաքայլ։

Եթե նույնիսկ մի կողմ թողնենք գիլդիաներում չընդգրկված հայ առևտրական կապիտալը, այսինքն այն հայ առևտրականներին, որոնք առևտուր էին անում առևտրական վկայականներով և այլ փաստաթղթերով և որոնք նշանակալից թիվ էին կազմում, ապա նույնիսկ միայն գիլդիաներում ընդգրկված հայ վաճառականների կապիտալի բաժնեհատվածը XIX դարի վերջին և XX դարի սկզբներին կարևոր դեր էր խաղում Ղրիմի առևտրի մեջ։ Պաշտոնական տվյալներով դարի վերջին Ղրիմում բոլոր գիլդիաներում ընդգրկված վաճառականների թիվը հավասար էր 4936 հոգու։ Հայ վաճառականները կազմում էին դրա 10,6 տոկոսը, զիջելով միայն ռուսներին և ուկրաինացիներին (սրանք միասին կազմում էին 32,8 տոկոս), հրեաներին (26,2 տոկոս) և թաթարներին (19,7 տոկոս)[89]։ Սակայն հայերը զրավում էին՝ առաջին տեղը, եթե մենք այդ տոկոսը համեմատում ենք Ղրիմի բնակչության մեջ հայերի թվական կազմի տեսակարար կշռի հետ։ Ելնելով վերոհիշյալ տոկոսից, կարող ենք ասել, որ այդ ժամանակ Ղրիմում կար 523 հայ վաճառական։ Մենք կարող ենք մոտավոր հաշվարկ կատարել, թե որքան էր նրանց կողմից շրջանառության մեջ դրած կապիտալը։ Արդեն գիտենք, որ 1863 թվականին երրորդ գիլդիան վերացվեց։ Գիտենք նաև, որ երկրորդ գիլդիայի մեջ մտնողի հայտարարած կապիտալը պիտի լիներ 5000—10.000 ռուբլի, իսկ առաջին գիլդիայինը՝ 10.000 ռուբլուց ոչ պակաս։ Եղած փաստաթղթերը հավաստում են, որ Ղրիմում եռեֆորմյան շրջանում, մանավանդ 90-ական թվականներին, հայ վաճառականները մեծ մասամբ ընդգրկված էին առաջին կարգի գիլդիայում։ Եթե մենք ամեն մի հայ վաճառականի հայտարարած կապիտալը այս շրջանում ընդունենք նվազագույնը 8000—10.000 ռուբլի, ապա կտեսնենք, որ շրջանառության մեջ հայ առև-

87 Նույն տեղում, № 123։

88 Նույն տեղում, № 174։

89 П. Н. Надинский, указ. соч., стр. 204.

տորական կապիտալը Ղրիմում XIX դարի վերջին հավասար էր մոտավորապես 5 միլիոն ռուբլու։ Սա միայն գիլդիաներում ընդգրկված հայ վաճառականների առևտուրն էր, հետևապես չէր ներկայացնում ղրիմահայ ամբողջ առևտրական կապիտալը։ Եթե դրան ավելացնենք գիլդիաներից դուրս առևտուր անող հարյուրավոր հայերին, որոնց (մանավանդ Հին Ղրիմի հայկական քաղաքային ռատուշայի և Ղարասուբազարի հայ-կաթոլիկական դատարանի վերացումից հետո) ոչ մի հաշվառման ենթարկել հնարավոր չէ, ապա միանգամայն հիմք կունենանք հայտարարելու, որ XIX դարի վերջին և XX դարի սկզբներին ռուս, հրեա և թաթար առևտրականների կողքին ղրիմահայ կապիտալը շարունակում էր առաջատար դիրքեր պահպանել թերակղզու ներքին և արտաքին առևտրի մեջ։

* * *

Ղրիմահայերի անտեսական կյանքում նշանակալից տեղ էին գրավում գյուղատնտեսական զբաղմունքները, հատկապես այգեգործությունը, ծխախոտագործությունը, բանջարաբուծությունն ու անասնապահությունը, մասամբ էլ՝ շերամապահությունը։ Ձևական-իրավական տեսակետից բոլոր ղրիմահայերը գտնվում էին հավասար վիճակում, բայց ունեցվածքային տարբեր դրություններն անխուսափելիորեն տարբեր վերաբերմունք էր առաջացրել նրանց մոտ հողի նկատմամբ։ Կային խոշոր հողատերեր և սրանց կողքին՝ միջակ և աղքատ անտեսություններ։

Սկզբում հողի հետ ամենից շատ կապված էին հին ղրիմեցիները։ Հին Ղրիմ քաղաքը վերահիմնելու համար, ինչպես նշել ենք, 1799 թվականի հրովարտակի հիման վրա հայերին շնորհվել էր 12 հազար դեսյատին հող՝ ջրերով և անտառով հանդերձ[90]։ Այս հողն ստանալու շուրջը բավական սուր վեճեր ծավալվեցին և Հին Ղրիմի հայկական քաղաքային ռատուշան ստիպված էր երկար ժամանակ զբաղվել այդ հարցով։

Քանի որ հայ համայնքի հողային խնդիրը առնչվում էր առհասարակ Ղրիմում այն ժամանակ ծագած հողային վեճերի և դրանք լուծող հանձնաժողովի գործունեության հետ, ապա հարկ է մի փոքր կանգ առնել դրանց վրա։ 1793 թվականին հատուկ մանիֆեստով կառավարությունը թույլ էր տալիս Ղրիմում բնակեցման և մշակման համար բաշխել միայն ազատ մնացած հողերը[91]։ Սակայն մանիֆեստը խախտվում է, և 1796 թվականին կառավարիչ սենատոր դիվերալ-նահանգապետ Ա. Զուբովին իջեցրած հրամանով պահանջում էր ազատ հողերի անվան տակ բաշխված, բայց իրականում թաթարներին և մյուս հողատերերին պատկանած հողաբաժինները վերադարձնել իրենց նախկին տերերին կամ նրանց բավարարել ուրիշ միջոցներից[92]։ Բայց այդքան էլ հեշտ չէր լուծել հողային վեճերը, որոնց արմատները գալիս էին միացման առաջին իսկ տարվանից։ Պ. Սումարոկովը դրանում մեղադրում էր նաև Գ. Պոտյոմկինին, «որը հողերի անշրջահայաց բաշխմամբ քիչ մեղք չէր գործել։ Գյուղացիներին օգտակար ոչ-մեծ հողակտորների փոխարեն՝ հազարավոր դեսյատիններ տրվում էին կամ բոյարների, որոնք այդ հողերը թողնում էին անուշադիր վիճակում, կամ անհայտ եկվորների, որոնք անտեղյակ էին շինարարության մեջ և զուրկ՝ որևէ միջոցից։ Լիազորված չինովնիկները, հանձնարարականներին հակառակ, տալիս էին ոչ այն, ինչ որ պիտի տրվեր... Կասկածը տիրել էր ամենքին՝ ոչ-ոք չէր ձեռնարկում գործի, նվեր ստացած հողերի մշակմանը։ Ծագում էին վեճեր, բախումներ,— ահա Ղրիմի այժմյան վիճակը»[93]։

Հողային վեճերի լուծման համար 1797 թվականին ստեղծվում է հատուկ հանձնաժողով։ Եվ որովհետև սա չկարողացավ լուծել ծագած խնդիրները, 1802 թվականին հիմնվում է չորս հոգուց բաղկացած նոր հանձնաժողով՝ սենատոր և գաղտնի խորհրդական Լոպուխինի ղեկավորությամբ։ Հանձնաժողովը խնդիր ուներ Ղրիմում եղած հողերը բաժանել երկու կատեգորիայի՝ ազատ և տեղացիներին պատկանող[94]։ Այս կապակցությամբ 1804 թվականին ընդունվում է տեղացիներին և եկվորներին «հաշտեցնող» մի որոշում, ըստ որի թաթարների սեփականատիրական իրավունքը ճանաչվում էր միայն նախկին խանական և կալվածատիրական այն հողերի վրա, որոնք չէին տրվել նորեկներին, իսկ նորերս հատատված բնակիչներին հատկացված հողերը արգելվում էր նրանցից ետ վերցնել և վերադարձնել նախկին թաթար տերերին[95]։ Այս նոր հողատերերի և

90 «Собрание актов», т. I, стр. 222.

91 *Г. Ф. Блюменфельд*, Крымско-татарское землевладение, Одесса, 1888, стр. 40.

92 Նույն տեղում։

93 *П. Сумароков*, указ. соч., т. I, стр. 161.

94 *Г. Ф. Блюменфельд*, указ. соч., стр. 41.

95 Նույն տեղում, էջ 45։

թաթարների միջև եղած հարաբերությունը հանգում էր հետևյալին. ա) թաթարները անձնապես ազատ էին, բ) տնամերձ հողամասը մնում էր որպես նրանց սեփականությունը և գ) մյուս հողերը մնում են նրանց օգտագործմանը, քանի դեռ թաթարները ապրում էին դրանց վրա և կատարում իրենց նախկին, այսինքն՝ հողատերերի հանդեպ ունեցած պարտավորությունները[96]: 1827 թվականին ընդունված կանոնադրության նոր նախագիծը չէր նշում նոր հողատերերի հանդեպ թաթար գյուղացիների ունեցած պարտավորությունը, տուրքերի չափը և այլն. նա հողատիրոջը իրավունք էր վերապահում դրանց չափը որոշելու համար պայմանագրեր կնքել թաթար գյուղացիների հետ[97], այնինչ 1804 թվականի որոշումը թաթարներին պարտավորեցնում էր կատարել նախկին պարտույթները: Այսպիսով, 1827 թվականի կանոնադրությունը նոր հողեր ստացած մարդկանց դիտում էր որպես դրանց լիիրավ սեփականատերեր, նրանց վերապահելով տուրքերի ու պարհակների չափը սահմանելու իրավունքը: Ինչպես ստորև կտեսնենք, թաթարների նկատմամբ այդպիսի իրավունք էր վերապահվել նաև Հին Ղրիմի հայ համայնքին, թեև հողային վեճեր լուծող հանձնաժողովը չէր լուծել նաև նրանց խնդիրը:

Հարցն այն է, որ հայերի Հին Ղրիմում հաստատվելու պահին քաղաքի շրջակայքում չկային այնքան ազատ հողատարածություններ, որքան այդ նախատեսում էր 1799 թվականի հրովարտակը: Ավելին, հայերին ստիպում էին ղրաղեցրած հողամասերից մի քանիսը վերադարձնել դրանց նախկին տերերին[98]: Այս վերջիններս հողեր էին ստացել շնորհիվ իշխանությունների կողմից Տավրիկիայում կատարած հողերի այն շռայլման, որ տիրում էր Ղրիմում միացման առաջին շրջանում: Իր հերթին հայ համայնքն էլ չէր ուզում գնալ զիջումների: Թափահարելով թագավորական հրովարտակը, նա պահանջում էր իրականացնել այն: Տակավին քաղաքում հիմնավորվելու նախօրյակին, 1804 թվականին, Հին Ղրիմ տեղափոխվող հայ համայնքի ներկայացուցիչ Խաչերես Մանուկովը դիմում է Ղրիմում հողային վեճերը լուծող հանձնաժողովին, խնդրելով ուղարկել հողաչափ՝ հրովարտակով քաղաքին շնորհված 12 հազար դեսյատին հողերը չափելու և սահմանագծելու համար[99]: Հանձնաժողովը մերժում է այս խնդրանքը, պատճառաբանելով, թե իր իրավասությունների մեջ չի մտնում զլխավոր պլանների սահմանագծումը[100]:

Հայերը, սակայն, միաժամանակ դիմում են նահանգական կառավարության գործադիր էքսպեդիցիային: Վերջինս կարգադրում է Թեոդոսիայի ստորին դեմստավային դատարանին՝ բավարարելու հայերի խնդրանքը: Այս կարգադրության հիման վրա հիշյալ դատարանի ատենակալ Թեմրեզը ժամանում է Հին Ղրիմ և «կողմնակի մարդկանց միջոցով նշում քաղաքին պատկանող հողի՝ անտառով հանդերձ, սահմանները»[101]: Սակայն Թեմրեզի կատարած գործը փաստորեն մնում է անհետևանք, թեև իր չափումների ու սահմանագծումների մասին նա քաղաքին տվել էր վկայական՝ որպես իրավական հիմք հայ համայնքի կողմից հրովարտակով սահմանված հողերին տիրելու համար: Վկայականից չէր երևում, թե ովքեր էին ներկա գտնվել Թեմրեզի չափումներին, մարդիկ, որոնք պարտավոր պիտի լինեին մինչև հողերի ձևական չափումը հանդես գալ վկաների դերում: Դա առաջինը: Երկրորդ, դարձյալ անհայտ էին մնում քաղաքի համայնքին պատկանող հողերի սահմանները, ինչպես և այն հողերը, որ գրավել էին մասնավոր անձինք: Անորոշ էին մնում նաև նորաստեղծ հայկական այդ քաղաքի բնակչության տրվող անտառների սահմաններն ու քանակը: Մի խոսքով, կարիք էր զգացվում կանոնավոր սինոռագծման:

Այս հանգամանքները ստիպում են քաղաքային ատաուշային 1808 թվականի նոյեմբերի 17-ին կրկին քննել հողերի հարցը: Ատաուշան որոշում է խնդրել Թեոդոսիայի ստորին դեմստավային դատարանից՝ հատուկ հողաչափ ուղարկելու Հին Ղրիմ և միանգամ ընդմիշտ հաստատուն կերպով ճշտելու ու որոշելու բարձրագույն հրովարտակով տրվող հողերի սահմանները: Սակայն հարցը այդպես էլ չլուծվեց և քաղաքի համայնքը (այսինքն հայերը) շարունակում էր օգտվել ավելի քիչ հողերից, քան հրովարտակով նախատեսված 12 հազար դեսյատինը: 1824 թվականին քաղաքին բաց թողնված 30 հազար ռուբլի վարկով այդ վեճը որոշ չափով լուծում էր ստանում: Սակայն, անկախ դրանից, իր ձեռքի տակ եղած հողերի վրա հայ համայնքը զբաղվում էր այգեգործությամբ, բանջարաբուծությամբ, անասնապահությամբ և որոշ չափով նաև շերամապահությամբ:

96 Նույն տեղում, էջ 45—46:

97 Նույն տեղում, էջ 47:

98 *Н. Мурзакевич*, Поездка в Старый Крым, ИТУАК, № 6, 1888, стр. 75.

99 Крымоблархив, ф. 24, оп. 3, д. 1, л. 13.

100 Նույն տեղում, թ. 19բ:

101 Նույն տեղում, ֆ. 67, ց. 1, գ. 10, թ. 105:

Հետաքրքիր է այստեղ նշել հողից օգտվելու այն կարգը, որ սահմանված էր հայ համայնքի համաձայնությամբ Հին Ղրիմում հաստատված այլազգաղաթացիների՝ ռուսների, հույների և թաթարների համար: Քաղաքային կանոնադրության հիման վրա առաջին երկուսը պետք է մուծեին քաղաքային բոլոր հարկերն ու տուրքերը, ինչպիսիք մուծում էին հայերը, իսկ չհամաձայնելու դեպքում նրանց արգելվում էր օգտվել քաղաքի առանձնաշնորհումներից[102]: Դրանից բացի, սրանք պարտավոր էին կատարելու իրենց վրա եղած պարհակները: Այլ էր, սակայն, այն թաթարների վիճակը, որոնք զբաղվում էին հողագործությամբ: Վերևում բերված կարգի համաձայն նրանք քաղաքի հանդեպ գտնվում էին այն վիճակում, ինչ վիճակում որ գտնվում էին կալվածատիրական հողերի վրա ապրող թաթարներն իրենց հողատերերի հանդեպ: Ղրիմում հողային վեճերը լուծող հանձնաժողովին տրված լրացուցիչ կանոնների 28-րդ հոդվածի հիման վրա սրանք պարտավոր էին քաղաքին տալ, իբրև հարկ, բերքի 10-րդ մասը, այսինքն տասնորդ, և տարեկան 5—8 օր աշխատել հօգուտ քաղաքի: Եվ քանի որ իրավական տեսակետից հողատերը ամբողջ հայ համայնքն էր, ապա վերջինս թաթարների հանդեպ հանդես էր գալիս կալվածատիրոջ դերում: Նշված կարգի 3-րդ հոդվածի համաձայն հարկերի և այլ մուծումների շուրջը թաթարների և նրանց կալվածատերերի միջև ծագած վեճերը լուծվում էին պաշտոնատներում: Այս կապակցությամբ 1824 թվականի ապրիլի 28-ին Հին Ղրիմի հայկական քաղաքային ռատուշայի անունով իշխցրած իր կարգադրության մեջ Տավրիկիայի քաղաքացիական նահանգապետը գրում էր. «Եվ քանի որ ավյալ դեպքում քաղաքային համայնքը (հայ հասարակությունը—Վ. Մ.) նույնն է, ինչ որ հողատերը, ապա եթե քաղաքի ու թաթարների միջև հարկերի ու տուրքերի առթիվ առաջ գան վեճեր, քաղաքագլուխը պետք է դիմի զեմստվային դատարան»[103]:

Դժվար չէ նկատել թաթարներին այսպիսի դրության մեջ պահելու նպատակը: Խնդիրն այն է, որ հայերին հավասար պայմաններից օգտվելու դեպքում սրանք մասսայաբար կփախչեին թաթար հողատերերից: Իսկ դա ամենևին ձեռնտու չէր կառավարությանը, այն էլ մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ թաթարների մոտ նկատվում էր Թուրքիա քաշվելու զանգվածային ակնհայտ ձգտում: Այդ որոշմամբ կառավարությունն ընդառաջում էր թաթար խոշոր

102 Крымоблархив, ф. 67, оп. 1, д. 359, л. 1.
103 Նույն տեղում, թ. 1ա:

հողատերերի շահերին, իսկ ինչ վերաբերում է ռուս կամ հույն գյուղացիներին, ապա քանի որ կայսրությանը միացած այդ երկրամասում չկային ճորտատիրական հարաբերություններ, ապա կառավարությունը սրանց նկատմամբ նման որոշում ընդունելու կարիք չէր զգում:

Հին ղրիմցիների և առհասարակ ղրիմահայության գյուղատնտեսական զբաղմունքների մասին խոսելիս անհրաժեշտ է առանձին շեշտել նրանց դերը շերամապահության զարգացման մեջ: Դրա առիթը բնավ այն չէ, թե շերամապահությունը առաջատար տեղ է ունեցել նրանց կյանքում: Ընդհակառակը, ղրիմահայ բնակչության հողին կառչած հատվածի հիմնական զբաղմունքները միշտ էլ եղել են այգեգործությունը, բանջարաբուծությունն ու ծխախոտագործությունը, մասամբ նաև դաշտավարությունը: Եվ այդուհանդերձ, եթե մենք առանձին ուզում ենք ընդգծել հայերի դերը Ղրիմում՝ շերամապահության զարգացման մեջ, ապա դրա պատճառը պարզապես այն էր, որ նրանք Ռուսաստանին նորերս միացած երկրամասում տնտեսական այդ ճյուղի արմատավորման առաջին նախաձեռնողներից և խթանողներից էին:

Ելնելով Ռուսաստանի տնտեսության համար այնքան անհրաժեշտ այդ ճյուղի զարգացման խնդիրներից, կառավարիչ սենատը դեռևս 1800 թվականի փետրվարի 24-ին ընդունած իր որոշման մեջ հատուկ ուշադրություն էր դարձնում նաև շերամապահության զարգացմանը Հին Ղրիմ քաղաքում[104]: Որոշումը խոստանում էր ամեն կերպ խթանել շերամապահությամբ զբաղվողներին: 1808 թվականին բացված Հին Ղրիմի հայկական քաղաքային ռատուշայի առաջին գործերից մեկը լինում է շերամապահության զարգացման հարցը, գոյություն ունեցող թթենիների պահպանության խնդիրը: Ռատուշայի հանձնարարությամբ Կիզլյար քաղաքից բերվում է 10 ֆունտ թթենու սերմ[105]: Շերամապահության գծով Տավրիկայի նահանգական տեսուչի զրության համաձայն հայկական ռատուշան 1809 թվականի նոյեմբերի 23-ի նիստում արձանագրում է, որ եղած թթենիների մի մասը ոչնչացրել են թաթարները, և քաղաքի տերիտորիայի վրա մնացել է ընդամենը թթենու 520 ծառ ու 79 տնկի և որ չնայած քաղաքը հիմնադրելու հետ կապված դժվարություններին, «հայերը կատարելապես հակված են զարգացնելու տնտեսության այդ ճյուղը»: Ռատուշան որոշում է հավաստիացնել շերամապահության գծով տեսուչին, որ առաջիկայում տարեցտարի

104 ЦГИА СССР, ф. 1374, оп. 3, д. 2489, л. 1—3.
105 Крымоблархив, ф. 67, оп. 1, д. 12, л. 10.

նշանակալից թվով կավելացվի թթենիների քանակը: Միաժամանակ ռատուշան Գրիգոր Տոնապետյանին նշանակում է վերակացու՝ հսկելու համար քաղաքում թթենիների պաշտպանությանը և շերամապահության զարգացմանը: Ռատուշան որոշում է նաև քաղաքի բնակիչներից ստորագրություններ վերցնել ծառերը չոչնչացնելու մասին, իսկ հակառակ վարվողներին՝ ենթարկել տուգանքի[106]:

Սակայն շերամապահության զարգացման գործին Հին Ղրիմում մեծ վնաս է հասցվում Թեոդոսիայի գավառում տարածված վարակիչ հիվանդությունների ժամանակ, երբ օգտվելով առաջացած վիճակից, առանձին անձինք ոչնչացնում են եղած թթենիների կեսից ավելին[107]: Բայց հաջորդ շրջանում հայերը շարունակում են մեծ ուշադրություն նվիրել շերամապահությանը, մանավանդ որ կառավարությունն ինքն էր նրանց տրամադրում թթենու սերմեր[108]:

XIX դարի առաջին տասնամյակներին Ղրիմում շերամապահության զարգացման մեջ նկատելի նախաձեռնություն և շահագրգռվածություն են ցուցաբերում Արևմտյան Հայաստանից և մանավանդ Ամասիայից այստեղ անցած հայերը: Դրանցից մեկն էր մեծահարուստ վաճառական Հովհաննես Հարությունի Իլինկիրյանը, որը 1811 թվականին նեբքին գործերի մինիստրությանը բազմաթիվ գործնական առաջարկություններ է անում Ղրիմում շերամապահության զարգացման վերաբերյալ: Թթենիներ աճեցնելու և շերամապահությամբ զբաղվելու նպատակով նա առաջարկում էր մինչև 100 հազար ռուբլու սահմաններում պետության հետ միասին դնել հողեր, այդ գումարի չորրորդ մասի վճարումը վերցնելով իր վրա: Նա խոստանում էր Ամասիայից բերել տալ մետաքսաթելի գործարանի համար անհրաժեշտ բոլոր հարմարանքները: Հ. Իլինկիրյանը իր պարտքն էր համարում կառավարությանը նաև տեղեկացնել, որ եթե հարգվի իր խնդրանքը, ապա նրա օրինակին կհետևեն բազմաթիվ ամասիացի հայեր, որոնք մետաքսագործության և շերամապահության մեջ Թուրքիայում ամենալավագույն մասնագետներն են: Ներքին գործերի մինիստրությունը մասամբ բնդառաջ է գնում Հ. Իլինկիրյանի խնդրանքին, նրան թույլ տալով իր հաշվին ցանկացած տեղում հողեր գնել և շերամապահությամբ զբաղվել[109]: Նման նախաձեռնությամբ հանդես են գալիս նաև այլ

106 Նույն տեղում, գ. 28, թ. 4—5:
107 Նույն տեղում, թ. 36բ:
108 Նույն տեղում, գ. 350, թ. 1ա:
109 ЦГИА СССР, ф. 398, оп. 81, д. 1016, лл. 1—25.

հայեր, օրինակ՝ շամախեցի Պ. Կ. Շահվերդյանը, որը Ղարասուբազարում այդ նպատակով մեծ գումարներ է ծախսում[110]:

* * *

XIX—XX դարերում Ղրիմում գոյություն ուներ հայ խոշոր հողատերերի բավական բազմանդամ մի խավ, որի ներկայացուցիչներն իրենց նախնիների տիրույթների պապենական ժառանգորդները չէին, ինչպես այդ սովորաբար լինում է, այլ զարգացման կապիտալիստական ուղու վրա կանգնած առևտրական ունևոր ու ձեռնարկատեր գործատերեր, որոնք քայլ առ քայլ իրենց եկամտի աղբյուր ներեց գործատերեր, որոնք քայլ առ քայլ իրենց եկամտի աղբյուր էին դարձնում նաև հողատիրությունը: Եղած փաստերը անհերքելիորեն հավաստում են, որ Ղրիմում հայ խոշոր հողատիրությունը առաջացել էր շնորհիվ առևտրական կապիտալի, և ոչ թե գոյություն ուներ իբրև ժառանգական ֆեոդալական մի ինստիտուտ, թեև իրենց հողերի վրա հայ սեփականատերերն էլ չէին խորշում դիմելու հողօգտագործման մեռնող ձևերին:

Դեռևս XVIII դարի վերջերից և XIX դարի սկզբներից սկսած հայ առևտրական դասի ունևոր շատ և շատ ներկայացուցիչներ, ըստ կարողության, առիթը բաց չեն թողնում իրենց ձեռքում կենտրոնացնելու մեծ քանակությամբ հողատարածություններ և փաստորեն դառնում են խոշոր հողատերեր: Այդ պրոցեսը շարունակվում էր XIX դարի ամբողջ ընթացքում և XX դարի սկզբներին նույնպես, և որպես դրա անմիջական հետևանք, Ղրիմում ստեղծվում է հայ խոշոր հողատերերի պատկառելի մի խավ, որի ներկայացուցիչները միաժամանակ հարուստ վաճառականներ էին և ուռճացած առևտրականներ: Հողից ստացած իրենց եկամուտների զգալի մասը սրանք դնում էին առևտրական շրջանառության մեջ և տարեցտարի մեծացնում առևտրի շրջանակներն ու ծավալը: Միաժամանակ, որպես մեծահարուստ վաճառականներ իրենց ձեռքի տակ ունենալով որոշակի դրամագլուխ, նրանք կարողանում էին զարկ տալ հողագործությանը, XIX դարի երկրորդ կեսից սկսած այն հարմարեցնելով կապիտալիզմի զարգացման պահանջներին:

Տակավին 1780-ական թվականներին Ղրիմում մենք հանդիպում ենք արտագաղթից խուսափած առանձին հայերի, որոնք օգտվելով միացման սկզբնական շրջանում առաջացած վիճակից, ձեռք էին գցել մեծ քանակությամբ հողատարածություններ: Այդպիսին էր, օրինակ, թեոդոսիացի մի ոմն Վարդերես, որը 1781 թ-

110 Հ. Տեր-Աբրահամյան, Պատմություն Ղրիմու, մաս I, էջ 78:

վականին թաթարական ավագ Մահմեդ բեյից գնել էր Զուրյուկ-սու գյուղը, իսկ երեք տարի անց, 1784 թվականին, նրա հողերի կեսը վաճառել ենթասպա Յուրուլին[111]։ XIX դարի սկզբներին հսկայական հողատարածություններ էր դարձել Եղիազար Քարակաշը, որը թաթար կալիտան Սեիդ-օղլի Չելեբուշ գնել էր Սիմֆերոպոլ գավառի Կիրկ և Դեգերմենջի գյուղերի հողերը և անխնա շահագործում էր թաթար աշխատավորներին[112]։ Այս նույն ժամանակ և ճիշտ նման ճանապարհով խոշոր հողատեր էր դարձել հայազգի առևտրական Հևքիմ Կիրկորը, որը տակավին 1790 թվականին մեծ հողակտորներ էր գնել գնդապետ Կոլովլևից Ջանդամ-գայ, Ջարակ և Կիզակ թաթարական գյուղերի մոտ և նրանց հողամասերի հաշվին[113]։

Որքան հայ առևտրական կապիտալը ոտքի էր կանգնում ու զորեղանում, այնքան ավելի էր նա թափանցում հողատիրության մեջ։ Այս բանը նրան Ղրիմում առավել հեշտ էր հաջողվում մանավանդ այն պատճառով, որ երկրամասի հսկայական հողատարածություններ, որ միացման ժամանակ շռայլորեն բաժին էին ընկել այս կամ այն անձնավորությանը՝ թաթար թե քրիստոնյա, դարձել էին հաճախակի առուծախի առարկա։ Կար նաև մի այլ հանգամանք, որը նույնպես նպաստում էր Ղրիմում հողերի առուծախին. դա այն էր, որ Ղրիմում մեկ շնչին ընկնող հողաքանակը շատ ավելի բարձր էր, քան մյուս նահանգներում։ Այսպես, Թերակղզու վրա 1913 թվականին ամեն մի բնակչին ընկնում էր 3,5 դեսյատին, այնինչ Եկատերինոսլավի նահանգում այն կազմում էր 1,85 դեսյատին, Խերսոնի նահանգում՝ 1,85, Բեսարաբիայի նահանգում՝ 1,63, Վոլինի նահանգում՝ 1,68, Չերնիգովի նահանգում՝ 1,52, Կիևի նահանգում՝ 1,01, Պոլտավայի նահանգում՝ 1,34 և այլն։ Խոշոր հողատեր էր դարձել հայ մեծահարուստ վաճառական Սերգեյ Թումանովը, որի տիրույթը գտնվում էր Սիմֆերոպոլի գավառի Զոմբայ գյուղում[114]։ Դարի կեսերին եկամտաբեր կալվածքներ էին ձեռք գցել հայազգի ծովակալ Լ. Մ. Սերեբրյակովը և նրա ազգականները Սիմֆերոպոլի գավառի էֆենդի-քյոյ գյուղում[115]։

111 Крымоблархив, ф. 799, оп. 3, д. 13, л. 2.

112 Նույն տեղում, ֆ. 24, ց. 1, գ. 11, թ. 34։

113 Նույն տեղում, գ. 199, թ. 12։

114 Նույն տեղում, ֆ. 26, ց. 1, գ. 5583, թ. 1։

115 ЦГВИА СССР, ф. МА (Молдавская армия), оп. 258, св. I, д. 4, л.л. 33, 64.

Ղրիմի պատերազմի շրջանում Սերեբրյակովի կալվածքների պաշտպանության համար հատուկ միջոցներ են ձեռք առնվում։ Այս կապակցությամբ բոլոր զորամասերին իջեցվում է հատուկ պահպանագիր (охранный лист), որտեղ «նորին կայսերական մեծության անունից Ղրիմում գտնվող Հարավային բանակի բոլոր զորքերին, հրամանատարներին և անձանց, ռազմա-ցամաքային ու ռազմա-ծովային ուժերին հրամայվում է՝ պահպանել առափնյա պաշտպանական գծի պետ, փոխծովակալ Սերեբրյակովի՝ Սիմֆերոպոլի գավառի էֆենդի-քյոյ գյուղում գտնվող կալվածքը վիրավորանքից, նեղումներից և ոտնձգություններից և նրան ցույց տալ ամեն տեսակի օգնություն և պաշտպանություն... հակառակ դեպքում [մեղավորներին] պատժի ենթարկել ռազմա-քրեական օրենսդրքի համաձայն»[116]։ Պահպանագրի վերջում շեշտված էր, որ Լ. Սերեբրյակովի կալվածքը գտնվում է նորին կայսերական մեծության հատուկ հովանավորության տակ։ Լ. Մ. Սերեբրյակովը մի կալվածք էլ ուներ Ղարասուբազարում, որի համար ևս նրա անունով իջեցվել էր պահպանագիր[117]։

Ժամանակի ընթացքում հողային մեծ տարածություններ են կենտրոնանում Նալբանդովների (835 դեսյատին), Մուրզաևների (170 դ.), Սեֆերովների (2425 դ.), Բուխալովների (1167 դ.), Յիգոևների (191 դ.), Ալիմունջիների (691 դ.), Օբերովների (1440 դ.), Սաեփանովների (2044 դ.), Թումանովների (231 դ.), Քուշնարևների (630 դ.), Այվազյանների (483 դ.), Բենկլիևների (1054 դ.) և Բուրիշների ձեռքին[118]։ Այս տվյալները, որոնք քաղել ենք 1915 թվականին կազմված «Статистический справочник Таврической губернии» ժողովածուի 4—8-րդ պրակներից, բոլորովին հեռու են լիակատար չափով ներկայացնելու բոլոր հայ հողատերերին և նրանց հողատիրույթների քանակը, որովհետև նրա հեղինակը չի ունեցել նման նպատակամղում։ Տվյալները մենք քաղել ենք գյուղատիպ բնակավայրերի ցուցակներից, որոնց մեջ մատնանշված են այդ բնակավայրերի նաև այն հողերը, որոնք պատկանել են այս կամ այն անձանց (այդ թվում նաև հայերի)։ Բայց չէ՞, որ կային հսկայական հողեր, որոնց վրա չկային գյուղեր, ավաններ, խուտորներ և տնտեսություններ և այդպիսի հողերը, բնականաբար, չեն ընկել գյուղատիպ բնակավայրերի ցուցակների մեջ, հե-

116 Նույն տեղում, թ. 64։

117 Նույն տեղում, թթ. 64—65։

118 «Статистический справочник Таврической губернии», Симферополь, 1915, вып. IV—VIII.

տեսակես չեն արտացոլվել ցուցակներում, այնինչ նման հողերի քանակը բավականաչափ մեծ է եղել։ Այդ ցուցակներում տեղ չեն գտել, օրինակ, հայ եկեղեցական կալվածքները Ղրիմում (ավելի քան 4000 դեսյատին)[119], Նալբանդովների այգիները, անտառները, վարելահողերն ու խոտհարքները Արտակ դաստակերտում (40 հազար ռուբլու արժեքով)[120], Հ. Այվազովսկու կալվածքները, որոնք միայն Թեոդոսիայի գավառում հավասար էին 1900 դեսյատինի[121]։ Սակայն բերված ցուցակն էլ բավական է, որպեսզի հիմնովին պատկերացում կազմենք հայ խոշոր հողատերերի և նրանց գրաված տնտեսական դիրքերի մասին Ղրիմում՝ XX դարի սկզբնական շրջանում։

Իհարկե, բերված ցուցակը չի եղել բոլոր ժամանակների համար։ Տարիների ընթացքում խոշոր հողատերերի քանակը փոփոխվում էր, բայց, որպես կանոն, մեծանալու տենդենցով, որովհետև հայ առևտրական կապիտալի զորացումը խթանում էր նրա ներկայացուցիչների ներթափանցումը հողատիրության մեջ։ Նրանցից ոմանք ձեռք էին բերում նոր հողակտորներ, իսկ մյուսները, ըստ ծագած խնդիրների ու տնտեսական նպատակների, վաճառում էին դրանք։ Այսպես վաճառվեց, օրինակ, Պերեկոպի գավառի Կարա-Թոգայ և Բիյուկ-Ջաբա գյուղերում գտնվող Սպենդիարյանների 6128 դեսյատին կալվածքի մի մասը (1906 թվականին)։ Ըստ բաժանման ակտի՝ ամբողջ կալվածքը գնահատված էր 551.610 ռուբլի։ Սիմֆերոպոլի տոհմական պատվավոր քաղաքացի Աֆանաս Ակսենտի Սպենդիարյանի (կոմպոզիտոր Ալ. Սպենդիարյանի հայրը) մահից հետո 1902 թվականին բաժանման ակտով կազմված կալվածքի մի մասը, 3937 դեսյատին, բաժին է ընկնում փոքրահասակ Լեոնիդ Լեոնիդովիչ Սպենդիարովին, որի վրա խնամակալներ էին նշանակված Ալեքսանդր Աֆանասի Սպենդիարովը և նրա կինը՝ Վարվառա Լեոնիդովնան։ 1905 թվականի մարտի 24-ին սրանք դիմում են Պերեկոպի քաղաքային որբային դատարանին և խնդրում թույլ տալ իրենց վաճառելու Լեոնիդ Լեոնիդովիչի հողաբաժինը, որովհետև տիրակից հողատերերը, որոնց թվում էին նաև իրենք՝ նշված խնամակալներն ու Նատալյա Կարպովնա Սպենդիարովան, համաձայնության չէին գալիս հողերը բաժանելու գործում։ Հողը խնդրում էին թույլ տալ վաճառելու ազատ գնով, բայց

119 ЦГИА СССР, ф. 821, оп. 140, д. 73 б/5 л 31 об.

120 Նույն տեղում, ց. 6, գ. 561, թ. 12։

121 Նույն տեղում, ֆ. 994, ց. 4, գ. 1583, թ. 1, ֆ. 821, ց. 140, գ. 6/5, թ. 24ա, բ։

ոչ պակաս, քան բաժանման ակտում նշված արժեքը՝ 354 հազար ռուբլին։ 1906 թվականի մարտի 14-ին կառավարիչ սենատը տավրիկյան նահանգապետի անունով իջեցրած հրամանագրով թույլատրում է այդ վաճառքը[122]։ Ականավոր երկրաբաններին պարգևատրելու համար նախատեսված Լեոնիդ Սպենդիարյանի ֆոնդը, հավանաբար, առաջացել է այս գումարից։

Շատ աննշան բացառությամբ վերևում բերված, ինչպես և մյուս հողատերերի անուններին մենք հանդիպում ենք վաճառականական ցուցակներում, առևտրական այս կամ այն ձեռնարկումները գլխավորողների շարքում։ Նրանցից և ոչ մեկը չէր ապրում իր կալվածքում։ Նստած քաղաքներում՝ սրանք իրենց ձեռքի տակ եղած հողերից եկամուտներ էին ստանում տարբեր ձևերով։ Այն ժամանակ Ղրիմում խոշոր հողատերերն իրենց կալվածքները տալիս էին կիսարարությամբ, կապալով կամ վաճառում էին բերքը (դեռևս չհավաքված)։ Կային նաև այնպիսիները, որոնք դիմում էին վարձու աշխատանքի։ Բերքի վաճառքը ամենից շատ կիրառվում էր պտղատու այգիների նկատմամբ։ Ընդ որում ծառերի վրա բերքի վաճառքը տեղի էր ունենում առանց որևէ պաշտոնական արարողության և պաշտոնական անձանց ներկայության[123]։ Պարզապես գնողն ու վաճառողը սովորական թղթի վրա իրենց ծանոթ լեզվով միմյանց տալիս էին փոխադարձ ստորագրություններ, որոնցում ամփոփվում էին վաճառքի ու գնման պայմանները։ Պտղատու, ինչպես և խաղողի այգիների բերքի մի հիմնական մասը գնում էին մոսկովյան առևտրականներն ու ֆաբրիկանտները, ինչպես և տեղական գործարանատերերը[124]։

Այգեգործության, բանջարաբուծության և ծխախոտագործության զարգացման մեջ զգալի էր հայերի մասնակցությունը։ Խոսքը այն մասին չէ միայն, որ նկատելի քանակությամբ խաղողի և պրտղատու այգիներ էին կենտրոնացել առանձին հայ մեծահարուստների ձեռքին, այլև այն, որ թուրքական բռնությունների հետևանքով օրըստօրե ղրիմահայության շարքերը ստվարացնող արևմտահայերի մեծամասնությունը թերակղզու վրա կապվում էր հողի հետ (մանավանդ Յալթայի և Թեոդոսիայի գավառներում) և ըստ ամենայնի զարկ տալիս այգեգործության, բանջարաբուծության և

122 Крымоблархив, ф. 27, оп. 1, д. 9796, л.л. 1—5.

123 «Статистический справочник Таврической губернии», часть первая, стр. 90.

124 Նույն տեղում։

ծխախոտագործության զարգացմանը։ Սրանք մշակում էին ոչ միայն իրենց, այլև կապալի միջոցով խոշոր հողատերերի այգիները։ Ղրիմում ոչ մի խոշոր հողատեր չէր զբաղվում, օրինակ, ծխախոտագործությամբ։ Նրանք գերադասում էին իրենց հողերը տալ կապալով, որովհետև ծխախոտի մշակմանը հատկացվող հողերի գինը բավական բարձր էր. հարավային ծովափին մեկ դեսյատինի դիմաց այն տատանվում էր 120—200 ռուբլու, հյուսիսային լեռնալանջերում՝ 80—100 ռուբլու միջև[125]։ Կապալով վերցնողները հիմնականում Թուրքիայից եկած հայերն էին, հույներն ու թուրքերը, որոնք և Ղրիմում տարածել էին ծխախոտի «սամսուն» և «տրապիզոն» տեսակները[126]։

* * *

Ղրիմում խոշոր հողատեր էր հայ եկեղեցին։ Այդ ասելով, ամենից առաջ նկատի ունենք ս. Խաչ վանքին պատկանող հողերը՝ այգիներով ու անտառներով հանդերձ։ Վանքը հողատեր էր դարձել մի տեսակ ժառանգական իրավունքով այն հողերի վրա, որոնք նրան ժամանակի ընթացքում նվիրել էին թաթար խաները կամ ձեռք էին բերվել նրանց տիրապետության շրջանում։ Նվեր ստացած և տարբեր միջոցներով գնված հողերի մասին ս. Խաչ վանքում պահպանվել էր թուրքերեն գրված վաճառուշորս փաստաթուղթ[127]։ *1768—1774 թթ. ռուս-թուրքական պատերազմից և Ղրիմը Ռուսաստանին միացնելուց (1783) հետո, երբ հայերը տեղահանվեցին Ազովի նահանգ և վանքն անշքացավ, նրա հողերի մեծ մասը բաժին ընկավ պետական գերատեսչությանը և անցավ Իզյումովկա և այլ գյուղերին*[128]։ Վանքի հողերից մի պատկառելի հատված էլ (շուրջ 2500 դեսյատին) 1787 թվականին Գ. Ա. Պոտյոմկինի հատուկ հրամանով տրվում է կոլեգիալ խորհրդական Հովհաննես Լազարյանին[129]։ Սակայն 1788 թվականի դեկտեմբերի 5-ին Տավրիկիայի նահանգապետ Ս. Ժեգուլինին ուղղած հատուկ նամակով Հովհ. Լազարյանը հրաժարվում է այդ հողերից և դրանք, այգիների ու անտառների հետ միասին, վերադարձնում վանքին, իբրև սեփականություն[130]։ Կարելի է կարծել, որ Հ. Լազարյանի այս քայլի դրդապատճառը եղել է ոչ միայն նրա տեղյակությունը վանքապատկան հողերի պատմությանը[131] և ս. Խաչը վերակենդանացնելու ձգտումը, այլև այդ հողերի վրա արևմտահայ գերդաստաններ տեղավորելու խնդիրը, հարց, որն այն ժամանակ լրջորեն հուզում էր Լազարյաններին և Արղությանին։ Ինչևիցե, Լազարյանի նամակին համապատասխան Ս. Ժեգուլինը 1789 թվականի հուլիսի 3-ին կարգադրում է Թեոդոսիայի զեմստվային իսպրավնիկ Թեմիրշիլ Մուրզային՝ նշված հողերը հանձնել վանքի վարդապետ Կարապետի տնօրինությանը[132]։ Հարցին ավելի որոշակի լուծում տալու նպատակով ձեռք է բերվում կառավարիչ սենատի հատուկ հրամանը, որով վանքի շրջանում ընկած ամբողջ հողատարածությունները տրվում էին նրան՝ իբրև հավիտենական սեփականություն[133]։ Վանքի հողատիրական իրավունքը իրավական ձևակերպում է զրտնում նաև Հին Ղրիմի հայերին 1799 թվականի հոկտեմբերի 28-ին տրված կայսերական հրովարտակում։ Այդ հրովարտակի 3-րդ հոդվածով Պավել I-ը կարգադրում էր. «Հին Ղրիմ քաղաքին մերձակա հայկական Սբ. Գևորգ (Սբ. Խաչ—Վ. Մ.) վանքին չափագծված հողերը ամենաողորմածաբար ամրացնելով նրան՝ տալ պլան»[134]։ Ս. Խաչ վանքին այդ հողամասերը տրամադրելիս կառավարությունն ընդառաջ էր գնում Հ. Արղությանի և վանքի վարդապետների այն պատճառաբանությանը, թե այդ հողերի վրա բնակություն հաստատելու համար արտասահմանից հրավիրվել են հարյուրավոր հայ ընտանիքներ[135]։

Ս. Խաչի հողերը կառավարիչ սենատի որոշումներից և կայսերական հրովարտակից թե՛ առաջ և թե՛ հետո բավական երկարատև վեճերի առարկա էին դարձել։ Արդեն ակնարկել ենք, որ տակավին 1784 թվականին բախչիսարայցի Քյուրքչի Խաչատուրը, Շահին-Գիրեյի խանական ֆերմանը ձեռքին, Ղրիմի ռուսական իշխանություններից պահանջում էր իրեն հանձնել ս. Խաչը՝ իր շինություններով և այգիներով հանդերձ՝ իբրև խանական հրովարտակով իրեն նվիրաբերված հավերժական սեփականություն[136]։

125 Նույն տեղում, էջ 100։
126 Նույն տեղում։
127 ЦГИА СССР, ф. 880, оп. 5, д. 108, л. 4 об.
128 Նույն տեղում։
129 Նույն տեղում, ֆ. 1374, ց. 2, գ. 1815, թ. 79բ։
130 Նույն տեղում։
131 Նույն տեղում, ֆ. 880, ց. 5, գ. 108, թ. 4բ։
132 Նույն տեղում, ֆ. 1374, ց. 2, գ. 1815, թթ. 79բ—80ա։
133 Նույն տեղում, ֆ. 880, ց. 5, գ. 108, թ. 4բ։
134 «Собрание актов», т. I, стр. 220.
135 ЦГИА СССР, ф. 880, оп. 5, д. 108, л. 5.
136 ЦГВИА СССР, ф 52, оп. 1/194, д. 336, ч. III, л. 49—50.

XIX դարի սկզբներին ս. Խաչի հողերին սպառնում էր նաև կաթոլիկական Քավության եղբայրությունը: Սա հիմնվել էր 1732 թվականին Իտալիայում, Ալֆոնս Մարիա Լիգորի կողմից, իսկ 1749 թվականին արժանացել էր Բենեդիկտ 14-րդ պապի հաստատմանը: Կաթոլիկական այդ օրդենի անդամները իբր թե նպատակ ունեին «հնարավոր ընդօրինակմամբ նվիրաբերվել Փրկչին և օգնության հասնել ճնշվածներին,— հատկապես գյուղական բնակչությանը՝ պրոպագանդի և կրոնական արարողությունների միջոցով»[137]: Իրականում օրդենի նպատակը կաթոլիկության տարածումն էր և հողերին ձրի տիրանալը: Այդ նպատակին էլ հենց XIX դարի սկզբում նրանց բերում է Ղրիմ, որտեղ սրանք փորձում են իշխանությունների օգնությամբ տիրանալ ս. Խաչին և Հին Ղրիմի հայ համայնքին հատկացվող հողերին[138]:

Վանքի հողերի մի մասին, այն հողերի, որոնք ընկած էին վանքի և Հին Ղրիմի միջև, փորձում էին տիրանալ թաթարները: Հայերին ու հույներին Ղրիմից դուրս բերելու (1778) և Ղրիմը Ռուսաստանին միացնելու (1783) միջև ընկած ժամանակահատվածում (5 տարի) թաթարները, օգտվելով անիշխանությունից և անտերությունից, «մանում են նրանց այգիներն ու տեղերը»[139], այսինքն տիրանում նրանց անտեր մնացած հողերին, թեև միացումից հետո դրանք հայտարարվել էին պետական սեփականություն[140]: Դեռևս Գ. Պոտյոմկինի ժամանակ ստանալով իր նախկին հողերը, որոնք այնուհետև հաստատում գտան 1799 թվականի հոկտեմբերի 28-ի հրովարտակում, հայ հոգևորականությունը թաթարներից ետ է վերցնում դրանք: Սա էլ հենց առիթ է տալիս թաթարների բողոքին, որոնք 1801 թվականին իրենց հավատարմատարների միջոցով դիմում են Նովոռոսիայի ռազմական նահանգապետ Ի. Միխելսոնին, բողոքելով այն մասին, թե հայ վարդապետ Ղազարը երկրորդ անգամ չափել և վանքի հողերին է միացրել Հին Ղրիմի և վանքի միջև գտնվող հողերն ու անտառները՝ ոչ միայն պետական, այլև թաթարների սեփական հողերը, ընդհուպ մինչև նրանց շինությունները[141]:

137 *Н. Родзевич*, Проект наделения землей в Старом Крыму братства искупления (ЗООИД, т. XXII, оттиск, стр. 1).

138 *Նույն տեղում, էջ 1—4:*

139 «Записки императорского об-ва сельск. хозяйства Южной России», книга шестая, Одесса, 1873, стр. 364.

140 ЦГИА СССР, ф. 1305, оп. 1, д. 1, л л. 268—270.

141 *Н. Родзевич*, указ. сочин., стр. 3.

Միաժամանակ թաթարները հայտնում էին, որ տակավին 1793 թվականին վանքի վարդապետը, հիմնվելով կաբավարության կողմից վանքին հողեր նվիրելու մասին կարգադրությունների վրա, դարձյալ իրենցից հողեր է կտրել և վանքի կալվածքին միացրել, որի պատճառով «նրանք՝ թաթարները, հավասարապես նաև մզկիթն ու ուսումնարանը քայքայվել են»[142]:

Ս. Խաչ վանքի հողերից զրկվելու վտանգը հայ հոգևորականությանը ռեալ կերպով սկսում է անհանգստացնել 1810 թվականից, երբ Դյուկ դե-Ռիշելյոյի հրամանով Օդեսայի շրջանից Ղրիմ են տեղափոխվում 59 բուլղար ընտանիքներ, որոնց բնակության համար Հին Ղրիմի հայկական քաղաքային ռատուշան քաղաքին կից հողեր է հատկացնում[143]: Սբ. Խաչի հոգևորականները բողոքում են, որ հատկացված այդ հողերի կեսը պատկանում է ոչ թե քաղաքին, այլ վանքին[144]: Բուլղարների և քաղաքի հայ համայնքի հետ ունեցած հողային այդ վեճը ստիպում է էջմիածնին Ղրիմ ուղարկել Ձեռնադրեց և բանիմաց մի հոգևորականի. ընտրությունը կանգ է առնում Մանվել վարդապետ Գյումուշխանեցու վրա: Գալով Ղրիմ, իբրև ս. Խաչ վանքի առաջնորդ, Մանվելը անդիջում պայքար է սկսում վանքի հողերի պահպանման համար: Սակայն բողոքում էին նաև բուլղարները՝ ապավինած Հին Ղրիմի հայ հասարակության աջակցությանը: 1814 թվականի փետրվարի 12-ին Տավրիկիայի քաղաքացիական նահանգապետ Բորոզդինը ներքին գործերի մինիստրին ուղղած իր գրության մեջ գտնում էր, որ բողոքող կողմերին հանդստացնելու լավագույն միջոցը կլիներ այն, որպեսզի «վանքին համոզեինք բուլղարներին զիջելու անհրաժեշտ քանակի հողեր»[145]: Համանման կարծիք է հայտնում նաև պետական խորհրդական Լոշկարյովը, որը մինիստրության կողմից Ղրիմ էր գործուղվել բուլղարական գաղութի վիճակը ստուգելու համար:

Վեճին լուծում տալու նպատակով նահանգապետ Բորոզդինի հրահանգով ստեղծվում է խառը հանձնաժողով՝ կազմված պետական պաշտոնյաներից, բուլղարների ու Հին Ղրիմի հայ համայնքի ներկայացուցիչներից, ինչպես նաև հայ հոգևորականների նշանակած պատգամավորներից, որպիսիք էին Մանվել վարդապետը, վաճառական Հաջի Նիկողոսովը և կալվածատեր Մելիքը: 1815 թվականին

142 *Նույն տեղում, էջ 4:*

143 Одесский облархив, ф. 1, оп. 219, д. 4, 1816 г., л. 14.

144 *Նույն տեղում:*

145 *Նույն տեղում:*

այդ հանձնաժողովը պարզում է, որ բուլղարական գաղութի կեսը հաստատվել է վանքապատկան հողերի վրա, որոնց տարածությունը հավասար է 514 դեսյատինի, իսկ մյուս կեսը՝ Հին Ղրիմի հայերի համայնապատկան հողերի վրա[146]: Մանվելը և վանքի պատգամավորները համաձայնվում են ղիջել մինչև 86 դեսյատին, «բայց քաղաքի բնակիչները (հայերը—Վ. Մ.) և բուլղարները դրանով չբավարարված՝ պահանջում են ամբողջ 514 դեսյատինը»[147]: 1815 թվականի դեկտեմբերի 20-ին գործն այս վիճակում ներկայացվում է քաղաքացիական նահանգապետի պաշտոնակատար Տոդորովին, իսկ վերջինս էլ՝ Խերսոնի ռազմական նահանգապետ Ա. Լանժերոնին: Ամենաուշագրավն այն է, որ ս. Խաչ վանքի դեմ, ի պաշտպանություն բուլղար գյուղացիների, բողոքի ձայն է բարձրացնում Հին Ղրիմի հայ համայնքը, որը վանքի պահանջը համարում է անօրինական[148]: Միաժամանակ հին ղրիմցիները 1817 թվականի փետրվարի 12-ին հատուկ «հայտարարությամբ» դիմում են Մանվել վարդապետին: Նրանք հայտնում են, թե վիճելի հողը պատկանում է ոչ թե վանքին, այլ քաղաքին, իսկ բուլղարները այնտեղ հաստատվել են քաղաքի հայ հասարակության և ռազմական նահանգապետ Դյուկ դե-Ռիշելյոյի համաձայնությամբ, 1810 թվականին կնքված կոնդիցիաներով. այդ կոնդիցիաները բուլղարներին տալիս էին արտոնություն և 10 տարի նրանց փոխարեն հարկերն ու տուրքերը վճարելու էին քաղաքի հայերը, որպիսի պայմանով էլ բուլղարները ընդունվել էին քաղաքի հայ հասարակության կազմում[149]:

Բայց Մանվելը մնում է անդիջում, նա ոչ միայն հողերն էր ետ պահանջում, այլև պոնում էր, որ դրանք բուլղարների ձեռքն անցնելու պատճառով 1810 թվականից մինչև 1816 թվականը, այսինքն 7 տարի, վանքը կրել է 32 հազար ռուբլու կորուստ և պահանջում էր ի հատուցումն դրա՝ պետական հողերից վանքին տալ 24 հազար դեսյատին[150]: Այնինչ հողերի վրա արդեն հիմնավորված և տուն ու տեղ հաստատած բուլղարներին տեղահանելը դժվարին ու աննպատակ մի ձեռնարկում կլիներ և այն էլ մի ժամանակ, երբ վանքապատկան հսկայական հողեր բնակեցված չէին և մնացել էին գրեթե անմշակ: «Այս վանքը ունի մեծ կալվածք, որն հարուստ

146 Նույն տեղում, թթ. 14բ—15ա:
147 Նույն տեղում, թ. 15ա:
148 Նույն տեղում, թ. 25ա:
149 Նույն տեղում, թ. 33:
150 Նույն տեղում, թ. 25բ:

է անտառով, խոտհարքով և վարելահողերով, բայց այնտեղ բացի վարդապետից և մի վանականից ոչ ոք չի բնակվում»[151],— գրում էր Լոշկարյովը:

1817 թվականին իշխանությունները փորձեր են անում ընդհանուր լեզու գտնել վիճող կողմերի հետ: Հունիս ամսին Մանվել վարդապետին առաջարկում են բուլղարներին անցած հողերի փոխարեն ընտրել այլ հողեր: Սա հատուկ մի չինովնիկի հետ «դիտելով ազատ մնացած զանազան հողեր», հայտնում է Տավրիկիայի քաղաքացիական նահանգապետին, թե վանքի համար ընտրել է Պերեկոպի գավառի Ադի-Ղայղաչ գյուղի շրջանում բնկած հողամասը, որն ընդգրկում է 10.870 դեսյատին 1606 սաժեն մշակելի և 412 դեսյատին 1101 սաժեն անմշակ հողեր[152]:

Սակայն Խերսոնի ռազմական նահանգապետ Ա. Լանժերոնը, ի պատասխան Տավրիկիայի քաղաքացիական նահանգապետի հարցմանը, գտնում է, որ վանքի վնասի փոխհատուցման համար բավական կլիներ 1000 դեսյատին կամ թե դրանից մի փոքր ավելի[153]: Վեճը այս ձևով շարունակվում է մինչև 1821 թվականը: Այդ թվականին, չնայած Մանվել վարդապետի՝ կառավարական տարբեր տոյաններին արած բազում բողոքներին, մինիստրների կոմիտեն, ընդառաջելով բուլղարների խնդրանքին, որոշում է վանքի կալվածքից կտրել և նրանց հատկացնել 1000 դեսյատին, դրա փոխարեն Պերեկոպի գավառի Ադի-Ղայղաչ բնաատմանում վանքին նախատեսելով 2000 դեսյատին: 1821 թվականի նոյեմբերի 21-ին կառավարիչ սենատը այդ մասին իջեցնում է հատուկ հրաման, իսկ Ղրիմի նահանգական վարչությունը ձեռնամուխ է լինում դրա կատարմանը[154], և վեճը դադարելու փոխարեն ավելի է բորբոքվում, այս անգամ արդեն ոչ թե 514 դեսյատինի, այլ առհասարակ վանքապատկան հողերի շուրջը:

Մանվել վարդապետը, սակայն, չէր էլ մտածում հաշտվել առաջացած վիճակի հետ և ուղղակի դիմում է Ալեքսանդր I-ին[155]:

Թագավորին արած խնդրանքի հետ միասին Մանվելին հաջողվում է ժամանակավորապես կասեցնել կառավարիչ սենատի վերհիշյալ հրամանի կատարումը այն պատճառաբանությամբ, թե այդ հրամանի հիման վրա նախատեսված պլանը ոչ ոքի կողմից հաս-

151 Նույն տեղում, թ. 27ա:
152 Նույն տեղում, թ. 31բ:
153 Նույն տեղում:
154 ЦГИА СССР, ф. 880, оп. 5, д. 108, л. 6.
155 Նույն տեղում, թ. 6բ:

տատված չէ և, հետևապես, ենթակա է կասկածի[156]։ Այդ մասին տեղյակ պահելով կաթողիկոսին, Մանվելը միաժամանակ վճռական բողոք էր հայտնում այս հարցում ռուսահայոց թեմի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսի բռնած անտարբեր վերաբերմունքի դեմ։ Նախքան թագավորին դիմելը, Մանվելը դիմել էր նաև հոգևոր դեպարտամենտի կառավարիչ Շիշկովին[157]։ Մանվել վարդապետի բողոքներն ու դիմումները մնում են անարդյունք, և 1824 թվականին բարձրագույն վճռով բուլղարներին անցած 1000 դեսյատին հողի դիմաց վանքին հատկացվում է 2000 դեսյատին հողամաս Պերեկոպի գավառի Ադի-Ղայղաչ բնասահմանում[158]։

Այս հրամանը վերջնականապես համոզում է Մանվել վարդապետին, որ վանքը վնաս տանուլ է տվել և իզուր են անցել տարիներ շարունակ իր մղած պայքարն ու այդ նպատակով ծախսած գումարները, որոնք միայն 1812—1818 թվականներին կազմել էին 3540 ռուբլի։ Հատկապես զգալի էին Պետերբուրգ գնալ-գալու և գրագիրներին տրված գումարները[159]։ 1825 թվականի սեպտեմբերի 19-ին Թեոդոսիայից ռուսահայոց առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսին գրած նամակում հայտնելով, թե «վերանորոգեցաւ հրաման տերութեան» և «անցեալ ամի նշանակեալ գծեն հատնել և տալ պուլղարաց», Մանվել վարդապետը գտնում է, որ դրանով «ամենայն ինչ առ ի լրումն» և, հետևապես, Ղրիմում իր մնալը համարում էր ավելորդ ու խնդրում թույլ տալ իրեն մեկնելու Թիֆլիս[160]։ Այդ նույն օրը նա համանման բովանդակությամբ մի նամակ էլ գրում է Ներսես Աշտարակեցուն, որտեղ հանգամանորեն բացատրում է, որ իր Ղրիմ գնալու և այնտեղ 14 տարի գործելու շարժառիթը եղել են վանքապատկան հողերի շուրջը ծագած վեճերը։ «1809 թվականէն կարգ բանին այնպես անօրինեաց, որ մեք բաժանեցաք ի սրբազանակատար վեհապետէն, մնալ ի կողմն Գրիգորուպօլու, 11-էն (իմա՝ 1811 թվականից ի վեր—Վ. Մ.) թէ վեհապետի հրամանաւ, և թէ վիճակաւոր արքեպիսկոպոսի, Ղռիմու վանքի տարտարոսութեան ի կողմանէ պուլղարաց և յանհոգութեան մերազնեաց՝ որ յանձնեցաւ մեզ, (ընդգծումը մերն է— Վ. Մ.) տեսեալ զհնամենի հինգհարիւր ամենի, բոլոր հոգուով հետևեցաք այս 14 ամ չէ տալ

156 Նույն տեղում, թ. 30բ։
157 Մատենադարանի արխիվ, ֆ. կաթ. դիվան, թղթ. 38, վավ. 187, թ. 1։
158 Նույն տեղում, թղթ. 102, վավ. 32, թ. 4բ։
159 Նույն տեղում, թղթ. 23, վավ. 165, թ. 1։
160 Նույն տեղում, թղթ. 51, վավ. 106։

ավերումն այնքան հնութեամբ ազգային անուամբ ճանաչեալ վանքին»[161]։ Եվ այնուհետև Մանվել վարդապետը վշտացած խոստովանում էր, թե «յիմարութիւն մեր անդ եղև, որ չնկատեցաք անօգնական լինելն մեր»։

Ս. Խաչ վանքի հողերի շուրջը ծագած վեճերը սրանով չեն վերջանում. դրանք շարունակվում են մինչև 50-ական թվականները, թեև 1825 թվականից ի վեր վանքը տիրում էր Պերեկոպի գավառի Ադի-Ղայղաչ հողամասից 2000 դեսյատին հողերի։ Խնդիրն այն է, որ 1821 թվականի նոյեմբերի 21-ի հրամանով (որը վերահաստատվել էր 1824 թ.), բացի նշված հողերից, ս. Խաչին պիտի մնային 708 դեսյատին հողեր նախկին կալվածքից, այսինքն վանքի շրջանում, հողեր, որոնց շուրջը վեճեր էին գնում վանքի և թաթարական Օթուզ գյուղի միջև և որոնք լուսյան մնացել էին վանքի անօրինության տակ[162]։ Սակայն 1821 թվականի հրամանագրի այդ որոշումը, այսինքն հողաչափելու և այդ 708 դեսյատին հողամասը (անտառներով ու այգիներով հանդերձ) վանքին հատկացնելու խնդիրը չէր լուծել, թեև Թեոդոսիայի հողաչափ Տենիլովը վանքից կտրել և բուլղարներին էր հատկացրել 1000 դեսյատին հողեր, իսկ Պերեկոպի հողաչափ Ռազումովը՝ 2000 դեսյատին Ադի-Ղայղաչ հողամասից չափել և առանձնացրել էր վանքին[163]։ Վանքը շարունակում էր բողոքել, որովհետև նախապես թվում էր, թե իր շրջանում եղած ազատ հողերը ոչ թե 708 դեսյատին էին (ինչպես նախատեսել էր 1821 թ. հրամանը), այլ 310 դեսյատին 2070 սաժեն (ըստ Տենիլովի հաղորդման)[164]։ Հողերի մի մասը ժամանակին տրվել էր փոխգնդապետ Չևատիին, որին նվիրված 200 դեսյատինի փոխարեն 1807 թվականին անօրինական կարգով հատկացրել էին 360 դեսյատին[165]։

Պահպանված փաստաթղթերից անհնարին է պարզել, թե Չևատիի հետ ս. Խաչ վանքի ունեցած հողային վեճը ինչ ավարտ է ստացել։ Սակայն 1840-ական թվականների վերջերից սկսած ընդհուպ մինչև 1863 թվականը Ղրիմի հայ հոգևորականությունը խորվում է հողային նոր վեճի մեջ, որը նախաձեռնել էր ինքը՝ ս. Խաչից բուլղարներին օտարված 1000 դեսյատին անտառը հետ ստանալու

161 Նույն տեղում, վավ. 107, թ. 1ա։
162 Одесский облархив, ф. 1, оп. 191, д. 33, л. 6.
163 Նույն տեղում։
164 Նույն տեղում, թ. 7։
165 Նույն տեղում, թ. 8։

համար։ Դառնալով թեմի առաջնորդ, Գ. Այվազովսկին ջանում է որքան կարելի է այդ պահանջին տալ իրավական ու հիմնավոր տեսք, որովհետև շինափայտով հարուստ անտառը նրա իսկ արտահայտությամբ այժմ արդեն «արժեր շատ տասնյակ հազար ռուբլի արծաթով»[166]։ Տարիներ (1849—1863) տևող երկարատև ու համառ պայքարից հետո ղրիմահայ եկեղեցու գլխավորները ստիպված էին նահանջել[167]։

Հետագայում կատարված ճշգրիտ հողաչափումները վկայում են, որ Հին Ղրիմի շրջանում վանքին մնացած անտառածածկ կալվածքը, վարելահողերով ու արոտավայրերով հանդերձ, ոչ միայն պակաս չէր նախատեսված 708 դեսյատինից, այլ շատ ավելի էր. այն կազմում էր 1215 դեսյատին[168]։ Նախատեսվածից շատ էր նաև «Ադի-Ղայդաչ» հողամասը՝ 2000-ի փոխարեն այն հավասար էր 2708 կամ 2767 դեսյատինի[169]։ Եթե սրան ավելացնենք 18,5 դեսյատին վանքապատկան այգին և հողերը Սուդակին մերձակա Աչտավյան հովտում, ինչպես նաև 3 դեսյատին հող էլ բուն Հին Ղրիմ քաղաքի շրջանում[170], ապա կտեսնենք, որ վանքապատկան հողերը հավասար էին շուրջ 4000 դեսյատինի, մի հողատարածություն, որն իր չափով ու որակով կարող էր ժամանակի Հայաստանի ամենահարուստ կալվածատիրոջ նախանձը շարժել։

Ղրիմում հայ եկեղեցու կալվածքները հիմնականում բնդգրկում էին ս. Խաչ վանքի այս հողերը։ Սակայն սրանց կողքին ոչ մեծ չափի հողակտորներ ունեին նաև մյուս եկեղեցիները, օրինակ, Բախչելի գյուղի ս. Փրկիչ վանքը (2 դեսյատին այգի և 5 դեսյատին այլ հողեր)[171], Հին Ղրիմի եկեղեցին (12 դեսյատին), Թեոդոսիայի եկեղեցիները և այլն[172]։

* * *

Ս. Խաչի հողերից ստացված եկամուտները կազմում էին ղրիմահայ եկեղեցու եկամուտների առյուծի բաժինը։ Այդ եկամուտների մի հատվածը ծախսվում էր տեղում, վանքի հոգևորականների պահպանման և տնտեսական այլ կարիքների վրա, իսկ մյուս բա-

166 ЦГИА СССР, ф. 880, оп. 5, д. 33, л. 98.

167 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, թղթ. 69, վավ. 38, քք. 20, 26։

168 ЦГИА СССР, ф. 821, оп. 140, д. 73 б/5, л. 31 об.

169 Նույն տեղում, թ. 31բ և 75բ։ Տե՛ս նաև «Крым» (газета), Симферополь, 1892, № 37.

170 ЦГИА СССР, ф. 821, оп. 140, д. 73 б/5, л. 29—31.

171 Նույն տեղում, թ. 14բ։

172 Նույն տեղում, քք. 25—26։

ժինը՝ Ղարասուբազարի հոգևոր կառավարության և Ղրիմի հայորդի միջոցով ուղարկվում էր թեմի առաջնորդարան, որտեղից էլ բաժինն էր ստանում նաև Մայր աթոռը։

Ինչ ձևով էր վանքը եկամուտներ ստանում իր հողերից։ Եղած փաստաթղթերը միաբերան վկայում են, որ ըստ մեծի մասին վանքը այդ հողերը որոշակի գումարով տալիս էր կապալով, որոշակի մի ժամանակահատվածի համար։ Բացառություն էին կազմում վանքին մերձակա և Սուդակում գտնվող վանքապատկան այգիները, որոնց մշակումը հիմնականում կատարում էր վանքը՝ դիմելով դրսի ուժ վարձելու, ձեռնտու գներով «իրղաթներ և մշակներ» պահելու մեթոդին[173]։

Սկզբնական շրջանում հողերի կառավարումը, ավելի ստույգ ասած կապալով տալը, բավական անկանոն բնույթ էր կրում։ Դա կապված էր առհասարակ կազմակերպչական այն թերությունների հետ, որոնցից չէր կարողացել խուսափել ղրիմահայ եկեղեցին գաղութի վերստեղծման առաջին տասնամյակներին։ Սակայն առաջին շրջանի այդ թերությունը գնալով վերանում է, և ղրիմահայ հոգևորականությունն ու նրա վերին դեկավարությունը՝ թեմական առաջնորդարանը և էջմիածինը, ջանք չեն խնայում Ղրիմում ևս որքան կարելի է մեծ եկամուտներ ստանալ Ղրիմի եկեղեցապատկան կալվածքներից։

Էջմիածինը ս. Խաչի կալվածքներին սկսում է պատշաճ ուշադրություն դարձնել 1820-ական թվականների վերջերից, երբ 1828 թվականին թեմի առաջնորդ է նշանակվում Ներսես Աշտարակեցին։ Սա իրեն հատուկ եռանդով տեղական հոգևոր գործիչներից պահանջում է պարբերաբար հաշվետվություն տալ տնտեսական գործերի վերաբերյալ, որոնց նա ավելի պակաս ուշադրություն չէր նվիրում, քան հոգևոր հարցերին։ Ղրիմի հաջորդ թադևոս վարդապետ Բեկզադյանի ներկայացրած հաշվետվության ոչ լրիվ տվյալներով 1833—1842 թվականներին (չհաշված 1835—1836 քք.), այսինքն 8 տարիների ընթացքում, ս. Խաչ վանքի եկամուտները հողերից կազմել էին 14.170 ռուբլի[174], այսինքն տարեկան միջին հաշվով ավելի քան 1500 ռուբլի։ Սակայն այս գումարը գնալով մեծանում էր, որովհետև Ղրիմում հողերի գնի բարձրացմանը զուգահեռ հայ հոգևորականությունն էլ տարեցտարի ավելացնում էր կապա-

173 Մատենադարանի արխիվ, ֆ. կաթ. դիվան, թղթ. 9, վավ. 41, թ. 2։

174 Նույն տեղում, թղթ. 105, վավ. 232։

լագինը։ 1845 թվականի ամռանը գալով Ղրիմ և ծանոթանալով տեղի գործերին, Ներսես Աշտարակեցին, որը թեև 1843 թվականին ընտրվել էր կաթողիկոս, բայց դեռ Թիֆից չէր հեռացել, հուլիսի 7-ին Արմյանսկի Բազարում իր ձեռքով գրված կոնդակով Գևորդ Ստեփանի Սպենդիարյանին նշանակում է ս. Խաչ վանքի Պերեկոպի գավառում ունեցած հողերի կառավարիչ։ Որպես այդպիսին՝ Գ. Սպենդիարյանը պարտավոր էր երեք տարուց ոչ ավելի ժամանակով այդ հողերը տալ կապալով, ժամանակին ստանալ կապալագինը և այն ուղարկել Ղարասուբազարի հոգևոր կառավարությանը[175]։ Ս. Խաչի հողերից ստացվող եկամուտները ավելի են մեծանում Գ. Այվազովսկու օրոք։ Նրա ժամանակ Պերեկոպի կալվածքի դիմաց վանքը տարեկան ստանում էր 1650 ռուբլի, իսկ անտառի և Սուդակի այգուց՝ համապատասխանաբար՝ 500 և 400 ռուբլի[176]։

Վանքը եկամուտ էր ստանում նաև վանքամերձ 14 դեսյատին այգուց և վարելահողերից, որոնք ինքն էր մշակում «իրղաթներով և մշակներով»։ Դեռ 1830-ական թվականներին միայն այգու խաղողից ստացվող 500 դույլ գինու վաճառքը տարեկան բերում էր 150 ռուբլու եկամուտ[177]։ Սրան պետք է ավելացնել քաղաքամերձ վարելահողերը, որոնք կապալով էին տրվում թաթարներին ու բուլղարներին։ Բոլոր այս եկամուտները, եթե ի մի գումարենք, կտեսնենք, որ XIX դարի կեսերին միայն հողերից ս. Խաչը ստանում էր մոտ 5000 ռուբ. ամենամյա եկամուտ։ Վերջինս դարավերջին և XX դարի սկզբին կրկնապատկվում և շարունակ մեծանում է, որովհետև հողի գինը դնելով բարձրանում էր։ 80-ական թվականներին, օրինակ, միայն Ադի-Ղայղաչը վանքին տարեկան բերում էր 4000 ռուբ. եկամուտ[178]։ XIX դարի 70—80-ական թվականներից սկսած հայ եկեղեցին հարմարվելով զարգացող կապիտալիստական հարաբերություններին և ձգտելով ավելի մեծ եկամուտների, հողերն սկսում է կապալով տալ աճուրդի միջոցով, որը բավական երկարատև էր լինում և նպաստում էր կապալագնի բարձրացմանը։ Տեղին ենք համարում այս առիթով միջ բերել «Крым» թերթի 1892 թվականի մարտի 25-ի համարում զետեղված հայտարարությունը.

«Նախիջևան-Բեսարաբիայի հայ-լուսավորչական վիճակային կոնսիստորիան սրանով հայտնում է, որ Սիմֆերոպոլ քաղաքում,

175 Մատենադարանի արխիվ, անհատական անձանց ֆոնդ, թղթ. 154, վ. 20։

176 Центральный Государственный архив древних актов (в дальнейшем ЦГАДА), ф. 1252, д. 402, л. 17 об.

177 Մատենադարանի արխիվ, ֆ. կաթ. դիվան, թղթ. 71, վավ. 246, թ. 1բ։

178 Հայկական ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, թղթ. 42, վավ. 38, թ. 2։

տեղի հայ-լուսավորչական թեմական դպրոցի շենքում սույն թվականի մայիսի 20-ից տեղի կունենա աճուրդ, երեք օրը մեկ անգամ օրինականացված վերաաճուրդով հանդերձ՝ Հին Ղրիմի հայ-լուսավորչական Սբ. Գևորգ (Սբ. Խաչ) վանքին պատկանող վարելահողերն ու խոտհարքը, ընդամենը 2708 դեսյատին, կապալով տալու համար, որ գտնվում են Պերեկոպի գավառում, Ադի-Ղայղաչ անվանյալ բնասահմանում։ Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի և վերաաճուրդի նշված օրերին հրավիրվում են ք. Սիմֆերոպոլ, տեղի հայկական թեմական դպրոցի շենքը, ուր կարող են ցանկացած ժամանակ ծանոթանալ այն կոնդիցիաներին և պայմաններին, որոնց համաձայն նշված հողը տրվում է կապալով։ Աճուրդն սկսվում է 4000 ռուբլի 65 կոպ. գումարից (սա տարեկան գինն էր— Վ. Մ.), որն այժմ ստացվում է իբրև արենդավճար այդ հողի դիմաց»[179]։

XX դարի սկզբներին կապալագինը ավելի մեծ չափերի է հասնում։ 1906 թվականին «Ադի-Ղայղաչը» տրվում է կապալով 6 տարի ժամանակով, տարեկան 10 հազար ռուբլով «որոյ զմի մասն գործադրի ի պետս պահպանութեան կոնսիստորիայի և զմնացորդն առաքի ի ս. Սիոնդն Ս. Էջմիածնի»[180], թեև, ինչպես հետո կտեսնենք, տավրիկյան հայերը ջանում էին այդ եկամուտներն օգտագործել դպրոցների վրա։

Նույնիսկ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, օգտվելով Ղրիմում ստեղծված խառը վիճակից և լենինյան հողային դեկրետի իրականացման ժամանակավոր դանդաղումից, հայ եկեղեցին Ղրիմում շարունակում էր պահպանել իր կալվածքը։ Նախիջևանի և Բեսարաբիայի հայ-լուսավորչական կոնսիստորիայի 1918 թվականի սեպտեմբերի 12-ի նիստը, ելնելով այն բանից, որ Ադի-Ղայղաչ կալվածքի կապալի ժամկետը վերջանում էր, որոշում է Սիմֆերոպոլ գործուղել Թեմի կառավարիչ Մուշեղ վարդապետին՝ Ղրիմում եղած հողերը աճուրդի միջոցով նորից կապալով տալու և կապալառուներ Յուֆուդ Զորեֆից և Եսիֆան Քեշիշյանից 12.500 ռուբ. կապալավճարը ստանալու համար[181]։

Կապալագնի վերընթաց բարձրացումը, իբրև կանոն, հարվածում էր ոչ թե կապալառուի, այլ աշխատավորների շահերին, որոնք ստիպված էին օրնիբուն դատել կապալառուների հողի վրա, կամ

179 «Крым», 1892, № 37, 25-го марта.

180 Հայկական ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 2110, թ. 4։

181 Մատենադարանի արխիվ, ֆ. կաթ. դիվան, թղթ. 239, վ. 46 II։

որոնց կապալառուները ստրկացուցիչ պայմաններով հողերը հանձնում էին մշակման։ Լինելով ուռճացած և հարուստ մարդիկ, կապալառուները եկեղեցական հողերի միջոցով զգալի եկամուտներ էին ստանում՝ ի հաշիվ աշխատավորների շահագործման։ Մյուս կողմից, հայ եկեղեցին ևս իրեն վատ չէր զգում, որովհետև ինչ էլ պատահեր՝ ժամանակին ստանում էր իր կապալագինը։ Այստեղից հետևում է, որ հողերը կապալով տալով՝ եկեղեցին Ղրիմում ևս մասնակցություն էր ցուցաբերում աշխատավոր դասի շահագործմանը։

Բացի հողերից, ղրիմահայ եկեղեցին ուներ եկամտի այլ աղբյուրներ, որոնք առաջանում էին ոչ միայն ծխերից վերցվող եկեղեցական տուրքերից ու դանձումներից, այլև եկեղեցապատկան զանազան շենքերից, առևտրական կրպակներից և այլն։ Ղրիմի հայոց Թադևոս վարդապետ Բնկզադյանի 1834 թվականին կազմած ցուցակի համաձայն 1831—1842 թվականներին միայն առաջնորդական (այսինքն եկեղեցական տուրքերից և այլ հոդվածներից Թեմի առաջնորդին ընկնող բաժինը) և վանքային եկամուտները Ղրիմում կազմել էին 32.561 ռուբ. 75 կոպեկ[182]։ Ինչպես տեսնում ենք, դա չէր կարող ներկայացնել ղրիմահայ բոլոր եկեղեցիների ստացած ամբողջ եկամուտը, որը ըստ առանձին եկեղեցիների նըշված թվականներին ուներ հետևյալ պատկերը.

1. Ամենափրկիչ վանք, Բախչելի գյուղում, եկամուտները՝ 4.576 ռ. 61 կ., ծախսերը՝ 4.099 ռ. 76 կ., մնացորդ՝ 476 ռ. 85 կ.։
2. Ղարասուբազարի ս. Աստվածածին եկեղեցի, եկամուտները՝ 43.307 ռ. 42 կ., ծախսերը՝ 10.962 ռ. 78 կ., մնացորդ՝ 32.344 ռ. 64 կ.։
3. Թեոդոսիայի ս. Հրեշտակապետի և ս. Սարգսի եկեղեցիներ, եկամուտները՝ 13.501 ռ. 85 կ., ծախսերը՝ 6.512 ռ. 59 կ., մնացորդ՝ 6.989 ռ. 26 կ.։
4. Թեոդոսիայի ս. Գևորգ եկեղեցի, եկամուտները՝ 9.842 ռ. 04 կ., ծախսերը՝ 2.653 ռ. 66 կ., մնացորդ՝ 7.188 ռ. 38 կ.։
5. Հին Ղրիմի ս. Աստվածածին եկեղեցի, եկամուտները՝ 5.405 ռ. 90 կ., ծախսերը՝ 4.338 ռ. 34 կ., մնացորդ՝ 1.067 ռ. 56 կ.։

182 Նույն տեղում, թղթ. 105, վավ. 232։

6. Սիմֆերոպոլի ս. Աստվածածին եկեղեցի, եկամուտները՝ 9.576 ռ. 72½ կ., ծախսերը՝ 7.000 ռ. 16 կ., մնացորդ՝ 2.576 ռ. 56½ կ.։
7. Բախչիսարայի ս. Աստվածածին եկեղեցի, եկամուտները՝ 2.485 ռ. 53 կ., ծախսերը՝ 1.228 ռ. 07 կ., մնացորդ՝ 1.257 ռ. 46 կ.։
8. Եվպատորիայի ս. Նիկողայոս եկեղեցի, եկամուտները՝ 18.075 ռ. 68 կ., ծախսերը՝ 16.052 ռ. 59 կ., մնացորդ՝ 2.023 ռ. 09 կ.։*
9. Օրաբազարի ս. Աստվածածին եկեղեցի, եկամուտները՝ 10.674 ռ. 40 կ., ծախսերը՝ 4.224 ռ. 25½ կ., մնացորդ՝ 6.450 ռ. 14½ կ.։
10. Օբիտոչնայի ս. Աստվածածին եկեղեցի. (միայն 1839—1842 թվականների համար) եկամուտները՝ 3.711 ռ. 85½ կ., ծախսերը՝ 1.060 ռ. 23½ կ., մնացորդ 2.651 ռ. 62 կոպեկ[183]։

Այսպիսով, 1832—1842 թթ. ղրիմահայ եկեղեցիները, որպես եկամուտ, մուտք են արել 121.158 ռուբ. 01 կոպ.։ Այդ գումարից նրանք ծախսել են 58.132 ռուբլի 44 կոպեկ։ Հետևաբար, իբրև զուտ եկամուտ, մնացել էր 63.025 ռուբլի 57 կոպեկ։ Այս թվերը տալիս են եկեղեցական եկամուտների ու ծախսերի մոտավոր պատկերը միայն և բոլորովին հեռու են լիակատար լինելուց, որովհետև 1832—1843 թվականների միջև ընկած մի շարք թվականների համար պարզապես չկան տվյալներ, ուրեմն և այդ թվականները չեն ընդգրկված։ Բացի այդ, տվյալներ չկան նաև Օրիտոչնա հայկական գյուղի եկեղեցու 1832—1838 թվականների և Սուրբշի հայկական եկեղեցու, ինչպես և ս. Խաչ վանքի մասին առհասարակ, էլ չենք խոսում այն մասին, որ մի շարք եկեղեցիների եկամուտներն ու ծախսերը ցուցակներում լրիվ չեն արտացոլվել։ Թեոդոսիայի ս. Սարգիս և ս. Հրեշտակապետի եկեղեցիները, օրինակ, 1845 թվականին միայն Աղարիա Պոպովի մոտ տոկոսներով պահպանության էին հանձնել 9.637 ռ. 31 կոպեկ[184], իսկ Ղարասուբազարի ս. Աստվածածին եկե-

* Եվպատորիայի ս. Նիկողայոս եկեղեցու եկամուտներն ու ծախսերը շատ են, որովհետև եկեղեցու շինարարությունը, որ տարիներով ձգձգվում էր, մեծ գումարներ էր պահանջում։

183 Մատենադարանի արխիվ, ֆ. կաթ. դիվան, թղթ. 108, վավ. 408, թթ. 1—5։

184 Նույն տեղում, թղթ. 116, վավ. 334։

ղևցին 1841—1845 թթ., այսինքն 5 տարում, դանձանակություններից, մոմի, խնկի և զանազան իրերի վաճառքից, շենքի վարձից և նվիրատվություններից ստացել էր 16.115 ռուբլի $68^1/_2$ կոպեկ եկամուտ[185]։

Եկեղեցական դումարները տարեցտարի ավելանում էին նաև վարկավորման միջոցով։ Հարցն այն է, որ ծախսերից հետո մնացած դումարները Ղարասուբազարի հոգևոր կառավարությունն ու Ղրիմի գլխավոր հոգաբարձուն, նաև՝ վիճակային առաջնորդարանը տալիս էին այս կամ այն մեծահարուստներին, կամ հիմնարկին՝ տոկոսով։ Բացի վերոհիշյալ հայազգի մեծահարուստ Ազարիա Պոպովից, ս. Սարգիս և ս. Հրեշտակապետ եկեղեցիները 1851 թվականին տոկոսով այլ անձանց և հիմնարկների մոտ ունեին 25.774 ռուբլի 57 կոպեկ, իսկ Ղարասուբազարի ս. Աստվածածին եկեղեցին՝ 32.851 ռուբլի 17 կոպեկ[186]։

1860-ական թվականներին, Գաբրիել Այվազովսկու առաջնորդության օրոք, երբ Նախիջևան-Բեսարաբիայի հայ-լուսավորչական թեմի առաջնորդարանը տեղափոխված էր Թեոդոսիա, առաջնորդարանը 27.464 ռուբ. տոկոսով էր տվել առանձին մեծահարուստների։ 12.000 ռուբլի տրվել էր հայազգի վաճառական Սեմյոնովին, որը տոկոսները մարելու համար առաջացած պարտքի դիմաց եկեղեցուն առաջարկում էր 630 դեսյատին հող[187]։ Միանգամայն պարզ է, որ իր նման գործունեությամբ հայ եկեղեցին ուժեղացնում էր ոչ միայն իր, այլև հայ առևտրական դասի տնտեսական դիրքերը։

Թեև եկեղեցական եկամուտների ու ծախսերի մասին բերված տվյալները սպառիչ չեն, սակայն եղածն էլ լիովին պատկերացում է տալիս համեմատաբար նորերս վերականգնված հայկական գաղութում եկեղեցու օրըստօրե ուժեղացող տնտեսական դրության մասին, ի հաշիվ գաղութահայ աշխատավոր զանգվածների։

Եկեղեցիների տնտեսական գործերը, որոնք հանգում էին նաև դումարների ժամանակին դանձմանը, վարում էին ընտրովի երեցփոխները, նշանակովի վերատեսուչները, կառավարիչներն ու գործակատարները։ Սրանք պարտավոր էին ժամանակին կատարել բոլոր գանձումները և, դույթյուն ունեցող կարգի համաձայն, ոչ միայն այդ մասին հաշվետվություն տալ Ղարասուբազարի հայ հոգևոր կառավարությանը, այլև վերջինիս ուղարկել նրա հաստատելիք դումարները։

Սակայն մի բան էր պարտավորությունը, այլ բան՝ նրա բարեխիղճ կատարումը։ Երեցփոխները, որոնք սովորաբար ընտրվում էին հարուստներից, անձամբ և թե իրենց օգնականների միջոցով եկեղեցական դումարների հաշիվները վարում էին անկանոն, առանց մշակված որևէ կարգի, ըստ իրենց հայեցողության ու խրղճմտանքի և դրանով իսկ առիթ ու հնարավորություն տալիս ամեն տեսակի չարաշահումների[188], որոնցից ավելի շատ տուժում էին ոչ թե վիճակային կոնսիստորիան ու հոգևորականությունը, այլ ծխականները, որովհետև վերջին հաշվով չարաշահվում էին նրանցից գանձված գումարները, մինչդեռ այդ չարաշահումները չէին կանխում եկեղեցական դումարների աճը։ 1858—1865 թվականներին, օրինակ, թեմի եկամուտները միայն եկեղեցական և վիճակային գանձումների գծով կազմել էին 293.784 ռ. 26 կ.[189]։

XX դարի սկզբին Ղրիմում հայ եկեղեցու ունեցվածքի մասին համեմատաբար լիակատար պատկերացում կարող ենք կազմել այն ցուցակներից, որ կազմվել էին հայ եկեղեցու գույքը բռնագրավելու մասին 1903 թվականի հունիսի 12-ի օրենքի կապակցությամբ։ Նպատակահարմար ենք համարել այստեղ համառոտակի բերել յուրաքանչյուր եկեղեցու գույքը, և դա ինչ-որ ինքնանպատակ բան չէ և ոչ էլ զուտ գիտական հետաքրքրասիրությունից։ Դա կարևոր է այն պատճառով, որ եկեղեցու տնտեսական դիրքերը անուղղակիորեն վկայում են գաղութի տնտեսական մակարդակը, որոշ իմաստով վերջինիս տեղն ու դիրքը ժամանակի հայ հասարակական կյանքում։

1903 թվականին Ղրիմ գործուղված հատուկ հանձնաժողովի պաշտոնյաներ Գեսելն ու Ռոմանյուկը ձեռնամուխ են լինում ստորև բերվող գույքի և կապիտալի օրենքով սահմանված մասի (այսինքն հիմնական բաժնի, բացի եկեղեցիների և նրանց առընթեր ծխական դպրոցների շենքերի) բռնագրավմանը (իմա՝ բռնագրավմանը). սեպտեմբերի 9-ին նրանք ավարտում են բռնագրավումը։

185 Նույն տեղում, վավ. 342։

186 Նույն տեղում, թղթ. 162, վավ. 289, թթ. 1—4։

187 ЦГИА СССР, ф. 821, оп. 140, д. 33/3032, ч. III, л. 369 с об.

188 ЦГИА СССР, ф. 821, оп. 140, д. 33/3032, ч. III, л. 366 об.

189 Նույն տեղում, թ. 371։

Ըստ ցուցակների Ղրիմի հայկական եկեղեցիներն ունեին.

I. Սիմֆերոպոլի ս. Աստվածածին եկեղեցին

1. Անշարժ գույք— չորս քարե շենքեր՝ բաղկացած 35 սենյակներից, որոնք տրվում էին վարձով։

2. Կապիտալ— 1.000 ռուբլի Սիմֆերոպոլի փոխադարձ վարկի ընկերությունում և 2.700 ռուբ. ավանդ՝ համաձայն Մ. Մոմջիևի հոգեկտակի, 2.000 ռուբլու արժողությամբ ստացական և 6.000 ռուբ. պարտավորագիր[190]։

II. Բախչելիի ս. Փրկիչ վանք[191]

1. Անշարժ գույք—պտղատու այգի (2 դեսյատին) և 5 դեսյատին այլ հողեր, վանքին կից շինություններ, որոնցից միայն երկուսը բաղկացած էին 19 սենյակից։ Միայն մրգի վաճառքից վանքը տարեկան ստանում էր 700 ռուբլի, նշված էր փաստաթղթերում[192]։

III. Ղարասուբազարի ս. Աստվածածին եկեղեցին

1. Անշարժ գույք— ա) չորս շենքեր «Ջիլտերլի» ծխում, որոնք կազմում էին մի ամբողջ թաղամաս, բ) քարե շենք։ Այդ շենքերից երկուսը տրվում էին վարձով, տարեկան 825 ռուբլով, իսկ մնացած երկուսում տեղավորված էին ծխական և կարուձևի դպրոցները, գ) քարվանսարայ «Շոր-Ջալի» ծխում, որ կոչվում էր «Տաշ-խան» և բաղկացած էր հին ու նոր կառույցներից։ Նրանցում տեղավորված էին 7 կրպակներ, պահեստներ և այլն։ Այս, ինչպես նաև այլ շենքերի դիմաց եկեղեցին տարեկան ստանում էր 1267 ռուբ. վարձ։ Եկեղեցին հողեր և պտղատու այգի ուներ Ղարասու գետի ափին և 8 դեսյատին հող էլ՝ դերեզմանոցի շրջանում։

2. Կապիտալ—կանխիկ դրամ՝ 316 ռուբ. 49 կ., 500 և 5.000 ռուբ. արժողությամբ ավանդատոմսեր[193]։

IV. Թեոդոսիայի ս. Սարգիս, ս. Հռեշտակապետ, ս. Հովհաննես և ս. Անճայի եկեղեցիները

1. Անշարժ գույք— բնակելի երեք տուն՝ 8 բնակարանով և 6 հյուրասենյակներով, ինչպես նաև կոշիկի արհեստանոցով ու սրճարանով հանդերձ։ Միայն սրճարանի սենյակների դիմաց

190 Նույն տեղում, գ. 70 6/5, ԹԹ. 7—10։
191 Նույն տեղում, ԹԹ. 14—15։
192 Նույն տեղում, Ա. 15։
193 Նույն տեղում, ԹԹ. 16—18։

ս. Սարգիս եկեղեցին տարեկան ստանում էր 810 ռուբ.։ Ս. Սարգիս եկեղեցուն էին պատկանում երեք շենքեր, որոնք տրվում էին վարձով։

2. Կապիտալ— 50.000 ռուբլի՝ Հ. Այվազովսկու կողմից ս. Սարգիս եկեղեցուն կտակած կալվածքի վաճառքից։ Նախկին խալիբյան ուսումնարանի շենքը, որը տարեկան բերում էր 3.000 ռուբ. վարձագին[194]։

V. Հին Ղրիմի ս. Աստվածածին եկեղեցին

1. Անշարժ գույք— ա) չորս սենյականոց քարե շենք, բ) 12,5 դեսյատին հողամաս և խաղողի այգի։ Եկեղեցին խաղողի այգի ուներ նաև Օթուզ գյուղում։

2. Կապիտալ— ա) 157 ռ. 38 կ. կանխիկ դրամ, բ) ավանդատոմս՝ 5.000 ռուբլու ,գ) բանկի վկայագիր՝ 1.200 ռուբ. և դ) տարբեր մարդկանց պարտքով տրված 1.975 ռուբ.[195]։

VI. Ս. Խաչ վանք

1. Անշարժ գույք— ա) խաղողի այգի՝ 5 դեսյատին Սուդակին մերձակա Այսավլի հովտում և նրան առընթեր 14 դեսյատին հող (այգիներն այս շրջանում տրված էին կապալով՝ տարեկան 500 ռուբլով, այգիներում կային գինու արտադրության հարմարանքներ), բ) անտառ՝ Հին Ղրիմի շրջանում 1215 դեսյատին և 3 դեսյատին հող, գ) 2708 դեսյատին հող Պերեկոպի դավառում, որն այդ ժամանակ կապալով էր տրված Սպենդիարովին[196]։

VII. Աւմյանսկի Բազարի ս. Աստվածածին եկեղեցին

1. Անշարժ գույք— ա) չորս սենյականոց բնակելի տուն և բ) 5 սենյականոց քարաշեն տուն, գ) 5 առևտրական կրպակ և 2 ամբարանոց։ Սրանք բոլորն էլ տրվում էին վարձով։ Վարձով էր տրվում նաև ծխական դպրոցի եկեղեցապատկան շենքը։

2. Կապիտալ— ա) 233 ռուբ. կանխիկ դրամ և երկու ավանդատոմս՝ յուրաքանչյուրը 1.000 ռուբլու[197]։

VIII. Կերչի ս. Հռեշտակապետ եկեղեցին

1. Անշարժ գույք— երկու երկհարկանի շենք՝ նկուղային հարկերով[198]։

194 Նույն տեղում, ԹԹ. 20—23։
195 Նույն տեղում, ԹԹ. 25—28։
196 Նույն տեղում, ԹԹ. 29—31։
197 Նույն տեղում, ԹԹ. 39—41։
198 Նույն տեղում, ԹԹ. 35—36։

IX. Եվպատորիայի ս. Նիկողայոս եկեղեցին

1. Աճշարժ գույք— ա) երիք շենքեր՝ բաղկացած 8 սենյակներից, բ) 7 կրպակ։

2. Կապիտալ— ա) 800 ռուբլու ներքին փոխառության տոմս, բ) 700 ռուբլու մուրհակ, գ) 3.900 ռուբլու պարտատոմսեր[199]։

Վերոհիշյալ ավյալներում արտացոլում չի գտել Բախչիսարայի, Օրիտոշնայի, Սուբաշի հայկական եկեղեցիների և Սևաստոպոլի աղոթատան ունեցվածքը։ Ավելին, լիակատար տվյալներ չէին կարող լինել եկեղեցիների կապիտալի վերաբերյալ, թեև կառավարական հանձնարարությունն ստանձնած չինովնիկները ջանք ու եռանդ չէին խնայում պետությանն անցնող հայ եկեղեցու գույքն ու կապիտալը հայտնաբերելու և բռնագրավելու համար։ Կառավարական հրահանգումը այդ ջանքերի համար խոստանում էր հայտնաբերած կապիտալից 5 տոկոսանոց պարգև-վարձատրություն[200]։ *Ղրիմում, օրինակ, աչքի է ընկնում իրավախորհրդատու մի ոմն Շաերնգոլդ, որն իր հայտնաբերած 5.400 ռուբ. դիմաց ստանում է 270 ռուբ. փոխհատուցում*[201]։ *Սրա և մյուսների ջանքերով, օրինակ, ճշտվում է, որ Սիմֆերոպոլի մեծահարուստ վաճառական Մ. Մոմջյանը Սիմֆերոպոլի, Հին Ղրիմի և Ղարասուբազարի եկեղեցիների ծխական դպրոցներին կտակել էր ոչ թե 10.700, այլ 33.400 ռուբլի, իսկ ս. Սարգիս եկեղեցին Հ. Այվազովսկու նվիրաբերած կալվածքից ստացել էր 47.497 ռուբլի։ Հայտնաբերված էր զանազան անձանց մոտ գտնվող 5.386 ռուբ. դրամ, որը պատկանում էր ղրիմահայ եկեղեցիներին*[202]։ *Շրջանցելով չինովնիկներին, եկեղեցիների քահանաներն ու երեցփոխները զանազան պատրվակներով նրանցից թաքցնում էին եկեղեցապատկան առանձին գումարներ՝ դրանք բռնագրավումից ազատելու համար։*

Չնայած տվյալների ոչ լիակատարությանը, այնուհանդերձ եղած փաստերը լիովին հավաստում են, որ իր զարգացման ընթացքում ղրիմահայ եկեղեցին տնտեսապես զնալով զորեղացել և դարձել էր անշարժ ու շարժական բավական խոշոր գույքատեր մի հնություն, որին այդ ունեցվածքը հնարավորություն էր տալիս գործուն մասնակցություն ունենալ թերակղզու հողային, առևտրական ու վարկային գործարքներում և դրանով իսկ օրըստօրե ամրապնդել իր տնտեսական դիրքերը։

199 *Նույն տեղում, թթ. 43—44։*

200 *Նույն տեղում, թ. 97բ։*

201 *Նույն տեղում։*

202 *Նույն տեղում, թթ. 93—95։*

* * *

Առևտրի և գյուղատնտեսական զբաղմունքների կողքին Ղրիմի տնտեսության մեջ XIX դարում նշանակալից դեր էր խաղում արհեստագործությունը։ Վերամշակվող արդյունաբերական ձեռնարկությունների ողորմելի վիճակը[203] *փոխհատուցվում էր փոքր արհեստանոցներով, որոնք կոչված էին բավարարելու նահանգի բնակչության բազմապիսի պահանջները, և դրա համար էլ Ղրիմի միացմանը հաջորդած հարյուրամյակում արհեստագործությունը դեռևս չէր կորցրել իր նախկին նշանակությունն ու շարունակում էր կարևոր դեր խաղալ նաև ղրիմահայ գաղութի կյանքում։ Հայերը լավ համբավի արհեստավորներ էին Հին Ղրիմում, Ղարասուբազարում, Թեոդոսիայում, Սիմֆերոպոլում և այլուր։ Տակավին 1801 թվականին Ղրիմում բնակություն հաստատել ցանկացող հայերն իրենց հավատարմատար-միջնորդի բերանով կառավարությանը տեղյակ էին պահում, թե առևտրի հետ միասին իրենց հիմնական զբաղմունքն է լինելու արհեստագործությունը, մանավանդ մետաքսյա ու բամբակյա գործվածքեղենի և հագուստի արտադրությունը*[204]։

Արհեստների զարգացման խնդիրները կարևոր տեղ էին բռնում Հին Ղրիմի հայկական քաղաքային ռատուշայի գործունեության մեջ։ Ելնելով առևտրական և արհեստավորական դասերի ունեվոր շերտի շահերից, տակավին իր հիմնադրման առաջին ամիսներին, ռատուշան սրանց համար անխափան գործունեության հնարավորություններ ստեղծելու նպատակով ջանում էր նրանց ապահովել պարենամթերքով, որպեսզի «նրանք հարկադրված չլինեն բացակայելու» և չընդհատեն իրենց աշխատանքը[205]։ *Հին Ղրիմում հայերն ունեին բազմաթիվ արհեստանոցներ՝ համապատասխան քաղաքի այն ժամանակվա տնտեսական պահանջներին։ Նրանք հայտնի անվագործներ էին, դարբիններ, քարտաշներ, ջուլհակներ, կոշկակարներ, հացագործներ*[206] *և այլն։*

Ղրիմահայ արհեստավորության շարքերը մշտապես համալրվում էին արևմտահայ արհեստավորներով, որոնք բռնած պանդխտի հալածական ուղին՝ հանգրվան էին գտնում նաև Ղրիմի իրենց հայրենակիցների մոտ։ Միայն Ղարասուբազարում 1832 թվականին

203 «По поводу столетнего юбилея присоединения Крыма». Симферополь, 1883, стр. 19.

204 ЦГИА СССР, ф. 13, оп. 1, д. 28, л. 4 об.

205 Крымоблархив, ф. 67, д. 10, л. 79.

206 *Նույն տեղում, գ. 1758, թթ. 5—25։*

գրանցված էին 89 թուրքահպատակ արհեստավոր հայեր (չհաշված ընտանիքի անդամներին), որոնք տարբեր ժամանակներում, հատկապես 20-ական թվականներից սկսած, գալով այնտեղ՝ զբաղվում էին տարբեր արհեստներով։ Բայց միատեսակ չէր նաև սրանց վիճակը. ոմանք օրվա հաց վաստակող արհեստավորներ էին միայն, իսկ ոմանք էլ հասել էին բավական մեծ կարողության և պահում էին առանձին արհեստանոցներ՝ աշխատողներով հանդերձ։ Զարասուբազարի հայ արհեստավորները հիմնականում զբաղվում էին հացաբուլկեղենի արտադրությամբ, ոսկերչությամբ, արծաթագործությամբ, վարսավիրությամբ, դերձակությամբ, կոշկակարությամբ, ներկարարությամբ և այլն[207]։ Հայ արհեստավորները Զարասուբազարում աչքի էին ընկնում մանավանդ բամբակի մշակության մեջ, մետաքսաթելի և արծաթաթելի արտադրությամբ, ամբողջ Ղրիմի համար նրանք էին պատրաստում սուջուխ և բաստուրմա[208]։ Զարասուբազարում և թե ամբողջ թերակղզու վրա հայերը ճանաչված որմնադիրներ էին, քարտաշ վարպետներ։

Հայերը լավ համբավ էին վաստակել նաև գինեգործության և օղեգործության մեջ։ 1799 թվականի հոկտեմբերի 28-ի հրովարտակի 7-րդ հոդվածը նրանց արտոնում էր արտադրել «խաղողի ամեն տեսակի գինիներ, դրանցից և խաղողից թորած ֆրանսիական օղին վորը չափերով վաճառել իրենց դյուղերում, իսկ Ռուսաստանի ներքին քաղաքները տակառներով արտահանվածը վաճառել անարգել»[209]։ Հրովարտակում սահմանված արտոնության 10-ամյա ժամկետն անցնելուց հետո խաղողի օղու և առհասարակ գինու վաճառքի համար համայնքը պետք է վճարեր սահմանված կապալագինը։ Այսպիսով, ղրիմահայ համայնքը ուներ գինիների և խաղողի օղու արտադրության իսկական մենաշնորհ, որից, բնականաբար, չէին զլանում օգտվել այդեսիր մեծահարուստները, մանավանդ որ լինելով վաճառականներ և առևտրականներ՝ հնարավորություն էին ստանում ընդլայնելու իրենց առևտրական գործարքների ոլորտը։

Արհեստների կողքին ղրիմահայության հարուստ խավի առաջ-վել կարող ներկայացուցիչները մասնակից էին դարձել թերակղզու վրա սկիզբ առնող գործարանային արտադրության զարգացմանը։ Ղրիմի արդյունաբերությունը, որը զարգանում էր հումքի տեղական բազայի վրա, հիմնականում ընդգրկում էր պահածոների գործա-

207 Նույն տեղում, ֆ. 169, ց. 1, գ. 96, թթ. 16—23.
208 *B. X. Кондораки*, Универсальное описание Крыма, ч. 14, стр. 54.
209 «Собрание актов», т. I, стр. 223

րաններ, ծխախոտի ֆաբրիկաներ և ալրաղացային ձեռնարկություններ։ Հայ գործարանատերեր և ֆաբրիկանտներ կային Սիմֆերոպոլում, Հին Ղրիմում, Թեոդոսիայում, Ղարասուբազարում։ Նրանք ունեին ձկնորսարաններ, կաշեմշակման, պահածոների, կղմինդրի և աղյուսի գործարաններ, ձեռնարկություններ, որոնք տիպական էին XIX դարի Ղրիմի արդյունաբերության համար։ XIX դարի առաջին կեսում, 20—30-ական թվականներին, Թեոդոսիայում գտնվող երկու ձկնորսարանն էլ, օրինակ, պատկանում էին Աբակում Հարությունյանին[210]։ Այդ գործարանները որսացել էին 1829 թվականին՝ 219 տոննա ձուկ, 1830 թվականին՝ 157 տոննա և 1831 թվականին՝ 231 տոննա ձուկ[211]։ Հին Ղրիմում հայերն ունեին կղմինդրի արտադրության երկու գործարան, կաշվի վերամշակման[212], ինչպես նաև կրի գործարան[213]։ Օճառի, մոմի, կաշվի, կոշիկի արտադրության ձեռնարկություններ ունեին Զարասուբազարի և Սիմֆերոպոլի մեծահարուստ հայերը, այդ թվում՝ Բ. Մոմջյանը, Գ. Ռաֆայելյանը և ուրիշներ[214]։ Սևաստոպոլում XX դարի սկիզբներին հայտնի ֆաբրիկանտ էր Գ. Գևորգյանը (Кеворков). սա ուներ մակարոնի ֆաբրիկա, որը գործում էր շոգեմեքենայի միջոցով[215]։ Տավրիկայում, Եկատերինոսլավի նահանգում, ինչպես և Կովկասում տարածում էին գտել Ս. Սրապիոնյանի արհեստանոց-ֆաբրիկայում արտադրված կովկասյան կոշիկները։ Ս. Սրապիոնյանն իր ձեռնարկությունը հիմնել էր 1906 թվականին Սիմֆերոպոլում, իսկ հումքը ստանում էր Պետերբուրգից և Կովկասից[216]։

Մինչև 1870-ական թվականները, մինչև Ուկրաինայում քարաղի արդյունահանումը, Ղրիմի արդյունաբերության մեջ կարևոր տեղ էր գրավում աղի արտադրությունը։ Որոշակի կարողության հասած առանձին մեծահարուստ հայեր անմասնակից չէին աղի լճերից ստացվող եկամուտները ձեռք գցելու համար մղված պայքարին։

Ղրիմը Ռուսաստանին միանալուց (1783 թ.) մինչև 1863 թվականը լճերից աղի արդյունահանման բացարձակ իրավունքը պատ-

210 ЦГИА СССР, ф. 1281, оп. 11, д. 160, л. 21.
211 Նույն տեղում, թթ. 21, 41, գ. 161, թ. 45, գ. 162, թ. 38։
212 Крымоблархив, ф. 67, оп. 1, д. 1758, л. 5—25.
213 «Приложение к всеподданнейшему отчету о состоянии Таврической губернии», за 1892—93 гг.
214 ЦГИА СССР, ф. 821, оп. 140, д. 73 б/5, л. 49; Крымоблархив, ф. 169, оп. 1, д 96, л.л. 16—23.
215 Մատենադարանի արխիվ, անհատական անձանց ֆոնդ, թղթ. 132, վավ. 222 I։
216 Крымоблархив, ф. 706, оп. 1, д 416, л. 77.

կանում էր պետությանը, գանձարանին[217]: Սակայն, տեսնելով, որ դա քիչ օգտաբեր է, կառավարությունը «Աղի վարչությունը» վերափոխում է Ակցիզային վարչության և, ինչպես նշում է Ա. Կ. Զավադսկին, «աղի արդյունահանողներին տրվող առանձնաշնորհումները՝ ակցիզի ամսական երկարաձգման և պետական լճերը արդյունահանման համար մասնավոր անձանց զիջելու հետ միասին մի փոքր աշխուժացնում են աղի արդյունահանումը Ղրիմում»[218]: Այս շրջանից ի վեր մասնավոր անձանց միջև սկսվում է կատաղի մի պայքար՝ աղի լճերը կապալով վերցնելու համար: Կապալ ստացողների թիվը 60-ական թվականներին այնքան մեծ էր, որ Ակցիզային վարչությունը երբեմն այս կամ այն լիճը կապալով տալու համար դիմում էր վիճակահանման[219]: Գլխավոր հավաքատեղին Արմյանսկ քաղաքն էր[220], որի հայերի կարևոր զբաղմունքներից մեկն էլ հենց աղի արդյունահանումն ու վաճառքն էր[221]: Կապալառուների թվում կային նաև այլ ղրիմահայեր[222]:

Աղի արդյունահանումը կատարվում էր բանվորական ձանգվածի ամենադաժան շահագործման միջոցով, անասելի ծանր պայմաններում: Ա. Կ. Զավադսկի-Կրասնոպոլսկին, որ ժամանակի դեպքերին ականատես ու քաջատեղյակ հեղինակ էր, այդ կապակցությամբ գրում էր. «Տոթ, կիզիչ արևի տակ, խմելու ջրի ամենաողորմելի պաշարով, որը հաճախ աղի էր, աշխատանքը ընթանում էր վաղ առավոտից մինչև ուշ գիշեր: Առաջին 7—10 օրերին աշխատանքն ընթանում էր արտակարգ հաջողությամբ: Սակայն 10—15 օր հետո ոսպի (լճի աղի ջրի) մեջ մնալը բանվորների համար դառնում է զգալի: Ոտպը քայքայում է մաշկը՝ մինչև ահավոր վերքերի առաջացմանը»[223]:

Առևտրից, արհեստագործությունից, գործարանային արտադրությունից և հողագործական զբաղմունքներից զատ, ղրիմահայ գաղութը իր ներկայացուցիչներն էր ունենում թերակղզու վրա կատարվող զրեթե բոլոր քիչ թե շատ խոշոր տնտեսական ձեռնարկու-

217 *А. К. Завадский-Краснопольский*, Крым, природа, население, и особенности края, СПб., 1874, стр. 41.

218 Նույն տեղում:

219 Նույն տեղում, թ. 42:

220 Նույն տեղում:

221 «Новороссийский календарь» на 1838 г., стр. 116.

222 «Լույս», հանդես, 1905, էջ 165 (Սուրխաբյանի «Ղրիմի հայերը» հոդվածը):

223 *А. К. Завадский-Краснопольский*, указ. сочин., стр. 42—43.

ներին՝ սկսած երկաթուղային շինարարությունից, առևտրական գանազան գործարքներից, ընդհուպ մինչև ջրմուղների անցկացումը և այլն:

Վերջին հարցի կապակցությամբ, օրինակ, տեղին է նշել այն դերն ու մասնակցությունը, որ ցուցաբերեց աշխարհահռչակ նկարիչ Հ. Այվազովսկին Թեոդոսիայի բնակչությանը խմելու ջրով ապահովելու գործում: Ժամանակի ընթացքում մեծ նկարիչը կարծես թե կրկնում էր ղրիմահայոց նախնիներին, որոնք տակավին XIV դարում Թեոդոսիայում անցկացրին ջրմուղ: 1887 թվականի մայիսի 30-ին Թեոդոսիայի քաղաքային դումայի նիստում նա քաղաքը ջրով ապահովելու համար իրեն պատկանող Սուբաշի լճից քաղաքին օրական նվիրաբերում է 30 հազար դույլ ջուր և այդ մասին արած իր հանդիսավոր հայտարարությունը ամրապնդում հատուկ պայմանագրով[224]: Հ. Այվազովսկու այս նախաձեռնությունը հնարավորություն է տալիս շատ կարճ ժամկետում կառուցել 30 կմ ջրմուղ, որի շնորհիվ 1888 թվականին քաղաքն արդեն ապահովված էր ջրով[225]: Արժանի է հիշատակության նաև «էլեկտրիչեստվո» կամպանիայի ձեռնարկ ինժեներ Ն. Կ. Շանվիրոյանը, որի նախաձեռնությամբ և նախագծով 1901 թվականի աշնանը առաջին անգամ արտաքին էլեկտրական լուսավորություն է ստանում Սիմֆերոպոլի կենտրոնական մասը[226]: Այսպիսի օրինակները բազմաքանակ են և դրանք բոլորը վկայում են Ղրիմի տնտեսական կյանքում հայ գաղութի ունեցած դերն ու նշանակությունը:

* * *

Ի սկզբանե ղրիմահայ գաղութին բնորոշ էր սոցիալական ընդգծված շերտավորումը: Հարցն այն է, որ այն հայերը, որոնք Նախիջևանից և Թուրքիայից անցնում էին Ղրիմ, իրենց բացարձակ մեծամասնությամբ աղքատ դասակարգի ներկայացուցիչներ էին և Ղրիմ գաղթելու հիմնական պատճառներից մեկն էլ նաև աղքատությունն էր: Ղրիմը, իհարկե, սրանց սոցիալ-տնտեսական վիճակում էական փոփոխություն չէր կարող մտցնել: Սրանք դառնում էին էժան աշխատուժ նավահանգիստներում, հարուստ հողատերերի մոտ, եկեղեցական հողերի վրա և այլուր: Ղրիմահայության

224 «Крым» (газета), 1889, № 39.

225 Նույն տեղում:

226 Крымоблархив, ф. 63, оп. 1, д. 455, лл. 1—2.

հիմնական մասը, որ մտնում էր մեշչաննների դասի մեջ, միատարր չէր։ Թեև նրանք բոլորն էլ իրավահավասար էին, բայց իրենց սոցիալական-տնտեսական վիճակով խիստ խայտարղետ էին։ Կային ուռճացած մեշչաններ, որոնք այդ դրության էին հասել առևտրի և արհեստների մեջ իրենց ունեցած տիրապետող դիրքով, և սրանց կողքին՝ քայքայված առևտրականների, արհեստավորների, ինչպես և բանվորների ու օրամշակների մի հոծ զանգված, որը մի պատառ հաց վաստակելու համար դատում էր օրն ի բուն։ Սրանց շարքերը տարեցտարի համալրում էին պանդուխտ արևմտահայերը։ Գաղութի ամենահարուստ խավը, սակայն, ներկայացնում էր վաճառական դասը, որի մի շարք ներկայացուցիչներ միաժամանակ նաև խոշոր հողատերեր էին։ Ցարական պաշտոնեության ամենամերձ հովանավորությամբ սրանք այլազգի մյուս մեծահարուստների հետ միասին անխնա շահագործում էին հայ, ռուս, թաթար և հույն աշխատավորներին։

Որքանով Ղրիմի տնտեսական զարգացումը ընթանում էր կապիտալիստական ուղիով, այնքանով նոր երանգավորում էր ստանում նաև ղրիմահայության սոցիալական բաժանումը։ Հատկապես 60-ական թվականներից սկսած գաղութի հարուստ վերնախավի շարքերում սկսում են հանդես գալ նաև հայ-ֆաբրիկանտ կապիտալիստներ, որոնք, սակայն, դեռևս չէին խզել իրենց կապերը առևտրի և հողագործության հետ։ Սրան զուգընթաց նկատելի է դառնում նաև հայ վարձու բանվորների քանակական աճը, հատկապես նավահանգստային քաղաքներ Սևաստոպոլում, Թեոդոսիայում և Եվպատորիայում։

Սանր էր նաև գաղութահայ աշխատավորների այն հատվածի վիճակը, որը իր ապրուստը հայթայթում էր երկրագործական աշխատանքներով։ Այդ հատվածը հիմնականում ներկայացնում էին սակավահող ընտանիքները կամ բոլորովին հողազուրկ մշակները, որոնք իրենց օրվա վաստակը հանում էին մեծահարուստ հողատերերի կամ սրանց կապալառուների հողերի վրա աշխատելով։

Այսպիսով, իր ունեցվածքային կացությամբ ղրիմահայությունը հիմնականում շերտավորված էր երեք մասի՝ առևտրա-վաճառականական և խոշոր հողատերերի մեծահարուստ դաս, միջին կարողության տեր առևտրականներն ու արհեստավորները և աղքատ դասակարգը, որը կապված էր թե քաղաքային և թե գյուղական զբաղմունքների հետ։ Այսպիսի շերտավորումը ղրիմահայությանը բնորոշ էր գաղութի վերականգնման սկզբից ևեթ։ 1821 թվա-

կանի կանոնական բարեկարգությունը ղրիմահայ ամբողջ ժողովրդին, ըստ նրա ունեցվածքի, բաժանում էր երեք մասի՝ «առաջնոց, միջնոց և վերջնոց» և ըստ այդմ էլ սահմանում դանձումների չափը[227]։

Գաղութահայ աշխատավոր զանգվածների ուսին ծանր մի բեռ էին այն հարկերն ու տուրքերը, որ նրանք վճարում էին պետությանն ու եկեղեցուն։

1779 թվականի նոյեմբերի 14-ի և 1799 թվականի հոկտեմբերի 28-ի հրովարտակների, ինչպես նաև դարավերջին և XIX դարի սկզբներին ընդունված մի շարք որոշումների ու հրամանագրերի համաձայն Ղրիմում հաստատված հայ համայնքները (թե Հին Ղրիմի հայերը և թե Ղարասուբազարի հայ-կաթոլիկական դաստարանին ենթակաները), հրովարտակներով սահմանված 10 տարին անցնելուց հետո, պետությանը հարկեր էին վճարում՝ ա) վաճառականները՝ դրամագլխի յուրաքանչյուր ռուբլուց մեկ տոկոս, բ) մեշչաննները՝ դրամագլխի յուրաքանչյուր ռուբլուց մեկ տոկոս, գ) մեշչաններն ու արհեստավորները՝ յուրաքանչյուր ծխի դիմաց 2 ռուբլի և դ) գյուղացիները՝ ամեն մի դեսյատին հողի դիմաց՝ 5 կոպեկ[228]։

Սակայն իշխանության սաղրին և վերին օղակները 19-րդ դարի հենց սկզբներից սկսում են ոտնահարել հայ համայնքներին տրված արտոնությունները և նրանց ծանրաբեռնել դանազան պարհակներով, մի հանգամանք, որ առաջ է բերում նրանց համընդհանուր բողոքն ու պայքարը՝ հանուն իրենց առանձնաշնորհումների պահպանման։

Առաջինը բողոքի ձայն է բարձրացնում Ղարասուբազարի հայ կաթոլիկական դաստարանի համայնքը։ 1801 թվականից սկսած նահանգական իշխանությունները քայլ առ քայլ խուզում էին նրա առանձնաշնորհումները և նշանակում բազմատեսակ պարհակներ՝ փոստապարհակ, ոստիկանության և հրշեջ խմբերի պահպանման ծախսեր, փոսեր փորելու, պահակատներ կառուցելու, քաղաքում տեղակայված Սմոլենսկյան զրադունյան գնդի կարիքները հոգալու, ճանապարհասյուներ և զորանոցներ կառուցելու, զորքերին վառելիք տալու, կալանավորներին ուղարկելու տուրքեր, ինչպես նաև զորթևաններ տալու պարտուք[229]։ Համատարմատար Մարտիրոս

227 Մատենադարանի արխիվ, ֆ. կաթ. դիվան, թղթ. 38, վավ. 195, թ. 3։

228 «Собрание актов», часть II, стр. 121; ЦГИА СССР, ф. 1152, 1840 г., д. 129, л.л. 17 об.-18.

229 ЦГИА СССР, ф. 1286, оп. 1, 1803 г., д. 46, л.л. 19—20.

Լեհցիյանի միջոցով Ղարասուբազարի հայ համայնքը 1801—1803 թվականներին այդ կապակցությամբ բողոքներով դիմում է նահանգական և կենտրոնական իշխանություններին՝ ընդդեմ քաղաքի թաթարական համայնքի և ազնվականական գլխավորի, որոնք նրան ծանրաբեռնում էին այդ տուրքերով ու պարտավորություններով։ Համայնքը պահանջում էր պահպանել 1779 թվականի հրովարտակով իրեն արտոնած և 1800 թվականի ապրիլի 18-ին վերահաստատված առանձնաշնորհումները։ Հայ համայնքի բողոքի հետևանքը լինում է այն, որ 1803 թվականի մարտի 23-ին ներքին գործերի մինիստր Վ. Պ. Կոչուբեյի անունով իջեցվում է կայսերական հատուկ հրամանագիր։ Այդ հրամանագիրը, ելնելով հայերի արտոնությունների վերաբերյալ եղած հրովարտակներից և հետագա հրամաններից, ներքին գործերի մինիստրին հրամայում էր հանձնարարել Եկատերինոսլավի նահանգական վարչությանը, որպեսզի սա, համաձայն հայերի բողոքի, տեղում ձեռք բերի անհրաժեշտ տվյալներ ու տեղեկություններ պարզելու համար հայերից՝ արտոնություններից դուրս գանձվող հարկերի պատճառները և այդ բոլորը իր կարծիքի հետ միասին ներկայացնի Վ. Պ. Կոչուբեյին, իսկ մինչև նոր կարգադրություն ստանալը դադարեցնի հայ համայնքից այդօրինակ տուրքերի և պարտավորությունների գանձումը[230]։

1808 թվականի հունիսի 30-ին Տավրիկիայի քաղաքացիական նահանգապետ Գ. Պ. Միլորադովիչը, պատասխանելով Վ. Պ. Կոչուբեի՝ վերոհիշյալ հարցի շուրջը 1803 թվականի մայիսի 12-ին իրեն իջեցրած գրությանը, փորձում է արդարացնել տեղական իշխանությունների գործելակերպը։ Նա, մանավանդ Եկատերինոսլավի նահանգական վարչությունը ջանում են գործն այնպես ներկայացնել, որ իբր թե դրանք «հասարակական պարհակներ են», որոնցից հայ համայնքը ազատված չէ[231]։ Մյուս կողմից, հայ համայնքին սրանք մեղադրում էին այն բանում, որ նա անընդհատ իր մեջ է ընդունում նոր ընտանիքներ, որոնք չպետք է օգտվեն տրված արտոնություններից, թեև ընդունվել են իշխանությունների թույլտվությամբ միայն[232]։ Հայ համայնքը ևս անդիջում էր իր բողոքներում, մանավանդ, որ դրա համար նա ուներ լիակատար իրավական հիմք։ Հավատարմատարի միջոցով 1803 թվականին արած իր բողոքներում համայնքը հայտնում էր, թե արտո-

230 Նույն տեղում, թթ. 1—3։

231 Նույն տեղում, թթ. 6—7 և 20—23։

232 Նույն տեղում, թ. 20ա։

նություններից դուրս իրենցից վերցնում են այդ պարտավորներն ու տուրքերը, այնինչ իրենք հողեր չունեն ոչ միայն մշակման և արոտավայրի, այլ նույնիսկ գերեզմանոցի համար[233]։ Հենց իր՝ նահանգապետ Գ. Պ. Միլորադովիչի ներկայացրած տեղեկագրով Ղարասուբազարի հայ կաթոլիկական դատարանին ենթակա հայերը ծանրաբեռնվել էին պարհակներով, որոնք ունեին դրամական հետևյալ արտահայտությունը.

ա) Եկատերինոսլավի քաղաքացիական նահանգապետ Սելեցկու առաջարկով ղորանոցներ կառուցելու համար 1796 թվականին՝ 850 ռուբ., 1799 թվականին՝ 850 ռուբ.։

բ) Ղարասուբազարի շուրջը փոս անցկացնելու նպատակով բանվորներ վարձելու համար՝ 1800 թվականին՝ 105 ռուբ.։

գ) Հրշեջ գործիքների պահպանման համար 1800 թվականին՝ 34 ռուբ., 1801 թվականին՝ 28 ռուբ. 45¼ կոպ.։

դ) Կապալով տրված քաղաքային չափ ու կշեռքների համար 1800 թվականին՝ 320 ռուբ., 1801 թվականին՝ 320 ռուբ., 1802 թվականին՝ 320 ռուբ.։

ե) Երկու տնակներ կառուցելու համար 1800 թվականին 22 ռուբ.։

զ) Զինվորական պահակատնակի կառուցման համար 1801 թվականին 18 ռուբ.։

է) Սմոլենսկյան դնդի համար թուղթ գնելու նպատակով 1800 թվականին՝ 30 ռուբ., 1801 թվականին՝ 30 ռուբ., 1802 թվականին՝ 30 ռուբ.։

ը) Վերստասյունների կառուցման համար 1801 թվականին՝ 80 ռուբ. 60 կոպ.։

թ) Փոստապարտիք վաճառականներից՝ շնչից 46 ¾ կոպ., մեշչաններից՝ շնչից 23½ կոպ., ընդամենը 1801 թվականին 278 ռուբ. 63 կոպ., 1802 թվականին՝ 311 ռուբ. 82 կոպ., 1803 թվականին՝ 123 ռուբ. 88¾ կոպ.։

ժ) Ջորապարհակ, այսինքն անցնող զորամասերի վրա Ղարասուբազարի թաթարական համայնքի հետ կնքված պայմանագրով կատարված ծախսերի ⅕ մասը, այն է. 1799 թվականին՝ 202 ռուբլի 98 կոպեկ, 1800 թվականին՝ 170 ռուբլի 71½ կոպեկ, 1801 թվականին՝ 49 ռուբլի 93 կոպեկ, 1802 թվականին՝ 52 ռուբլի. ընդամենը բոլոր տուրքերը միասին՝ 4228 ռուբլի 1½ կոպեկ[234]։

233 Նույն տեղում, թ. 25ա և 40բ։

234 Նույն տեղում, թթ. 17—18։

Երկար բաշքշուկից հետո, բաշքշուկ, որով զբաղվում էին կառավարիչ սենատը, ներքին գործերի մինիստերությունը, Խերսոնի ռազմական նահանգապետը, Եկատերինոսլավի նահանգական վարչությունն ու Տավրիկիայի քաղաքացիական նահանգապետը, վերջապես, 1804 թվականի հունվարի 30-ին Խերսոնի ռազմական նահանգապետ Ռոզներգրի անունով իջեցվում է կայսերական ռեսկրիպտ (շնորհագիր)։ Այդ շնորհագիրը[235] հայերի վրա թողնում էր այն պարտությունները, որոնք հասարակական բնույթի էին։ Շնորհագրով Ալեքսանդր I-ը հրամայում էր.

Առաջին. Ղարասուբազարի հայ կաթոլիկ համայնքի վրա դնել փոստային պարհակ, ճիշտ այնպես, ինչպես այն դրված է նման արտոնություններից օգտվող մյուս համայնքների վրա՝ ըստ նահանգում սահմանված պարհակների բաշխման (այսինքն վաճառականներից շնչից 46 3/4 կոպեկ, իսկ մնշաններից՝ շնչից 23 1/4 կոպեկ)[236]։

Երկրորդ. Հայ-կաթոլիկական համայնքի բնակեցման ժամանակ շնորհված իրավունքների և առանձնաշնորհումների հիման վրա նրան ազատել զորքերին օթևան հատկացնելուց և զինվորական այլ պարտություններից, բացառությամբ անցնող զորամասերին օթևանատեղ տալուց, հավասարապես նաև առևտրի դիմաց քաղաքային գանձարան մուծվող հատուկ մուծումներից, ընդսմին խնդրատուներին իրավունք վերապահել մասնակցելու քաղաքի հասարակական եկամուտներին։

Երրորդ. Համայնքը պարտավոր է կրել նաև ոստիկանական պարտություններ, որովհետև ընդհանուր օրենքների համաձայն քաղաքում ապրող և քաղաքային իրավունքներից օգտվող անձանցից և ոչ ոք, այդ թվում նաև հայերը, չէին ազատվում այդ տուրքից։

Չորրորդ. Թեև Ղարասուբազարի հայ-կաթոլիկական դատարանի իրավասության տակ գտնվող հայ համայնքի մեջ ընդունված այլ մարդկանց՝ իբրև Ռուսաստանի հարավում բնակվելիս հայերին տրված արտոնություններից չօգտվողների, հարկ չկար թողնելու համայնքի կազմում, բայց քանի որ այդ մարդիկ, բնակություն հաստատելով Ղարասուբազարում, մտել են հայ համայնքի մեջ և իրենց գործերը դասավորել ու վարում են դրան համապատասխան, ապա ի խուսափումն այն քայքայման, որ կառաջացնի գոյություն

235 Նույն տեղում, ֆ. 1152, 1840, գ. 129, թ. 20ա, բ։
236 Նույն տեղում, ֆ. 1286, ց. 1, 1803, գ. 46, թ. 21ա։

ունեցող ներկա վիճակի փոփոխումը թե այդ մարդկանց և թե հայ համայնքի համար և ի հարգումն այն բանի, որ նրանք համայնքի մեջ ընդունվել են նահանգական իշխանության գիտությամբ և թույլտվությամբ՝ մինչև այժմ հայ համայնքի մեջ ընդունվածներին թողնել ներկա դրության մեջ, բայց այսուհետև ոչ մի պարագայում թույլ չտալ, «որպեսզի այս համայնքին չպատկանող և նրա իրավունքները չունեցող անձինք ընդունվեն նրա մեջ»[237]։

Եթե չհաշվենք փոստատուրքը, ապա թվում է, թե հայ-կաթոլիկական համայնքի պահանջները բավարարվում էին, որովհետև հիմնական պայքարը գնում էր զինվորական պարտությունների կատարման շուրջը, իսկ դրանք 1804 թվականի հունվարի 30-ի շնորհագիրը թողեց այն վիճակում, որպիսին նախատեսում էին 1779 թվականի հրովարտակն ու 1800 թվականի հրամանագիրը։

Հարկերի ու պարհակների շուրջը բողոքներ էր անում Հին Ղրիմի հայ համայնքը՝ իր հիմնավորման առաջին իսկ տարիներից, որովհետև տեղական քաղաքացիական ու զինվորական իշխանությունները ամեն առիթով ոտնահարում էին հրովարտակներով նրան տրված արտոնությունները։ 1810 թվականի հունիսի 16-ին Հին Ղրիմի հայկական քաղաքային ռատուշան քննարկում է քաղաքագլուխ Մինաս Քսիյանի (Քսիև) դիմումը այն մասին, որ հունիսի 12-ին քաղաք ժամանած Չերնիգովյան գնդի բնակապետն ու մի քանի սոտրին աստիճանավորներ պահանջում են բնակարաններ հատկացնել զինվորների, շտաբի, բարձր և սոտրին սպայության, ինչպես և հիվանդանոցի համար[238]։ Հաջորդ օրը, հունիսի 13-ին, Թեոդոսիայի սոտրին զեմսավային դատարանի ատենակալ Պոպովը, գալով Հին Ղրիմ, չնայած հայերի՝ հրովարտակի հիման վրա արած բողոքներին, զորքերի համար բնակարաններ է նշանակում նաև հայ բնակիչների տներից և «ինքնագլուխ կերպով նրանցում տեղավորում զինվորական աստիճանավորներին»[239]։ «Եվ թեև,— հայտնում էր քաղաքագլուխը ռատուշային,— ռատուշայի անդամ Լուսեղեն Պետրոսյանի հետ միասին Բարձրագույն հրովարտակի հիման վրա պաշտպանեցինք հայ համայնքը զորքերին իջևանատեղ տալուց, ընդ որում հայտարարեցինք, որ հայերը նոր բնակություն հաստատելու հետևանքով տներ չունենալու պատճառով այստեղ ապրում են 2—3

237 ЦГИА СССР, ф. 1152, 1840 г., д. 129, л. 20 об.
238 Крымоблархив, ф. 67, д. 39, л. 2а.
239 Նույն տեղում։

ընտանիքներով միասին և, բացի այդ, իրենց տներում պատըսպարում են Դյուկ դե-Ռիշելյոյի կարգադրությամբ այստեղ բնակության եկած 59 բուլղարական ընտանիքներ, որոնք դեռևս չունեն ոչ միայն տներ, այլև հյուղակներ, բայց նա՝ Պոպովը, չհարգելով մեր և ոչ մի խնդրանքը, հայտարարեց, որ իբր թե 10 տարվա համար սահմանված արտոնությունների ժամկետը արդեն անցել է և այժմ դրանք վերացված են»[240]։

Նորերս հիմնավորվող հայ գյուղաքաղաքի բնակչության համար չափազանց դժվար էր միանգամից տեղավորել երկու հեծելավաշտ և դրա համար էլ այդ տեղավորման պատճառով հայերի տներից, իջևանատներից և սրճարաններից «դուրս էին բերվում ոչ միայն բուլղարները, այլև տանտերերից շատերը»[241]։ Անկարգ այս վիճակը պատճառ է դառնում մի շարք հիվանդությունների։ Տեղավորվելուց հետո համայնքին ներկայացվում է վառելիք տրամադրելու պահանջ։ Եվ որովհետև պատրաստի վիճակում վառելիք չկար, առանձին մարդկանցից վերցվում էր շինափայտ՝ իբրև վառելիք օգտագործելու համար[242]։

Այս ամենի մասին քաղաքագլխի արած հայտարարության հիմքում ընկած էր հայ համայնքից ստացված բողոքագիրը։ Դրան համապատասխան, ռատուշան այդ բողոքների մասին տեղեկացնում է Դյուկ դե-Ռիշելյոյին[243]։

Զինվորական մասերին իջևանատեղ հատկացնելու շուրջը հաճախ վեճեր էին ծագում քաղաքի հայ համայնքի և մյուս համայնքների, հատկապես թաթարների միջև։ Ոչ-հայ համայնքները, կազմելով քաղաքի ծխերի փոքր տոկոսը, բնականաբար, պետք է դժվարանային միայնակ կրելու այդ պարհակը։ Եվ հաճախ բանն այնպես էր ներկայացվում, որ ժամանած զինվորական մասը դասվում էր քաղաքով անցնող զորքերի շարքը, որովհետև այդ դեպքում հայերը ևս պարտավոր էին իջևանատեղ տրամադրել։ Հայ համայնքի դեմ 1820 թվականին այդպիսի մի բողոք է անում քաղաքի թաթար հասարակությունը։ Տավրիկիայի քաղաքացիական նահանգապետ Ա. Բարանովի համակրանքը թաթարների կողմն էր, որովհետև, որպես բարձրաստիճան պաշտոնյա շահագրգռված լինելով զորքերի այսօրինակ կարիքները հոգալու խնդրում, նա գիտակցում էր, որ ընդամենը 30 ծխից բաղկացած քաղաքի թաթարական համայնքը չէր կարող բավարարել զորքերի բնակարանային պահանջները։ Ահա թե ինչու 1820 թվականի մայիսի 24-ի իր գրությամբ նա Հին Ղրիմի հայկական քաղաքային ռատուշային կարգադրում էր, թե հայ համայնքը նույնպես «պարտավոր է թաթարներին հավասար կրել այդ պարհակը»[244]։

XIX դարի 20-ական թվականներին Ղրիմի զանազան քաղաքներում հաստատված բազմաթիվ հայեր իշխանություններին բողոքներ էին անում իրենց զորապարհակով հարկադրելու դեմ։ Գույքություն ունեցող հրովարտակներով Ղարասուբազարի հայկաթոլիկական համայնքն ու Հին Ղրիմի հայերը ազատված էին այդ պարհակից և բողոքողները նրանք չէին, այլ թե այդ և թե մյուս քաղաքներում ապրող այն հայերը, որոնք Ղրիմում հաստատված լինելով 1804 թվականից հետո՝ չէին օգտվում նախկին հրովարտակներով տրված արտոնություններից։ Մինչև 1825 թվականը սրանք ներակոչիկների փոխարեն դրամական տուրք էին մուծում պետական գանձարան[245], որովհետև մինչև այդ թվականը Տավրիկյան նահանգը համարվում էր սահմանամերձ գոտում գտնվող շրջան։ Իսկ 1825 թվականից սկսած, կառավարիչ սենատի № 41371 հրամանի հիման վրա (հոկտեմբերի 31), երբ Տավրիկյան նահանգի բնակչությունից պահանջվում է զորատուրք տալ ոչ թե դրամով, այլ ներակոչիկներով, այդ պարհակը տարածվում է նաև վերոհիշյալ հայերի[246], անգամ Թեոդոսիայում ապրողների վրա, մի քաղաք, որի բնակչությունը 1795 թվականի հոկտեմբերի 2-ի բարձրագույն շնորհագրով, 1802 թվականի հունվարի 24-ի և 1806 թվականի ապրիլի 6-ի հրամաններով առհավետ ազատված էր զորապարհակից[247]։ Սակայն կառավարիչ սենատի 1828 թվականի մայիսի 25-ի հրամանագրով, ի թիվս քաղաքի մյուս բնակիչների, Թեոդոսիայի հայերը կրկին ազատվում են զինվորական պարհակից[248]։ Ենդիրն ավելի է բարդանում մյուս վայրերում ապրող հայերի շուրջը։ Նովոռոսիայի և Բեսարաբիայի գեներալ-նահանգապետ կոմս Վորոնցովը ընդառաջում էր հայերի բողոքներին, մինչդեռ Տավրիկիայի նահան-

240 Նույն տեղում։
241 Նույն տեղում, թ. 2բ։
242 Նույն տեղում։
243 Նույն տեղում, թ. 3ա։
244 Крымоблархив, ф. 67, оп. 1, д. 254, л. 1.
245 ЦГИА СССР, ф. 1286, оп. 4, 1829 г., д. 672, л. 2.
246 Նույն տեղում, թ. 2, և 64—65։
247 Նույն տեղում, 1827 թ., գ. 411, թ. 5ա։
248 Նույն տեղում, թթ. 15—17։

գապահը պնդում էր հայերից զորակոչիկներ վերցնելու վրա[249]։ Ընդ որում, Վորոնցովը գտնում էր, որ պետք է այդ հայերի նկատմամբ պահպանել մինչև 1825 թվականը գոյություն ունեցած կարգը, այսինքն նրանց թույլ տալ դինապարհակը կրելու ոչ թե դինակոչիկ տալով, այլ դրամատուրքով[250]։ Մինչդեռ սրանք 1827—1829 թվականներին վիճում և իրարամերժ կարծիքներ էին ներկայացնում բարձրագույն իշխանություններին՝ նշված հայերից Ղրիմում շարունակում էին դինակոչիկներ վերցնել[251]։ Վերջապես, 1830 թվականին կոմս Վորոնցովի կարծիքը բաժանում են ներքին գործերի և ֆինանսների մինիստրները. հունիսի 30-ին սրանց կարծիքների հիման վրա որոշվում է Տավրիկյան թերակղզու վրա ապրող օտարերկրացիներից ոչ թե զորակոչիկներ վերցնել, այլ՝ դրամական տուրք, ինչպես այն գոյություն ուներ մինչև 1825 թվականը[252]։

XIX դարի 30-ական թվականների կեսերից սկսած արտոնությունների պահպանման համար ղրիմահայերի մղած պայքարը բորբոքվում է նոր ուժով և նոր նախիջևանցիների ու զրիգորիոպոլցիների կողմից բարձրացրած բողոքների հետ միասին ստիպում իշխանության վերին ու ստորին օրգաններին՝ լրջորեն զբաղվելու նրանց հարցերով։ Հայերի բողոքին առիթ էր տվել 1836 թվականի մայիսի 21-ին կառավարիչ սենատին տրված բարձրագույն հրամանը, որը, եթե տեղերում շարունակվեր իրականացվել այնպես, ինչպես այդ սկսեցին նահանգական իշխանությունները, ապա նշված վայրերի հայերը լիովին կզրկվեին 1779 և 1799 թվականների հրովարտակներով, ինչպես և XVIII դարի վերջին և XIX դարի սկզբներին մի շարք հրամանագրերով ու շնորհագրերով ստացած իրենց արտոնություններից ու առանձնաշնորհումներից։

1836 թվականի մայիսի 21-ի կայսերական հրամանում ասված էր. «Աստրախանի, Խերսոնի, Տավրիկիայի ու Եկատերինոսլավի նահանգների և Կովկասի մարզի՝ 1799 թվականի առանձնաշնորհումներից հանված հայերին, ինչպես քաղաքներում ապրողներին և մեշչանական արհեստներով զբաղվողներին, այնպես էլ բավարար քանակի արքունական հողով ապահովված

249 Նույն տեղում, ֆ. 1286, ց. 4, 1829, գ. 672, թ. 2ա և բ։
250 Նույն տեղում, թ. 55ա։
251 Նույն տեղում, թթ. 54—55։
252 Նույն տեղում, թ. 72 և 79։

գյուղական բնակիչներին, համարելով իրավացի հարկերը վճարելու գործում հավասարեցնել մյուս ռուսահպատակներին, որոնց հետ միասին նրանք օգտվում են միևնույն առավելություններից, հրամայում եմ. հայ մեշչաններին, անկախ զեմստվային և քաղաքային պարտականություններ կատարելու գործում նրանց ունեցած պարտականություններից, հարկադրել պետական հատուկ շնչահարկով, սկզբում 5-ական ռուբլով, և բացի դրանից՝ ջրային և ցամաքային հաղորդակցության համար ամեն մի շնչին տարեկան 30 կոպեկ, իսկ 10 տարի անցնելուց հետո, բացի հաղորդակցության համար նշված տուրքից, լրիվ շնչահարկով՝ մեշչանական դրույքով առհասարակ։ Հայ գյուղացիներին, բացի զեմստվային տուրքից, հարկադրել հավասար դրույքով 3-ական ռուբլի շնչահարկով, ջրային և ցամաքային հաղորդակցության համար 30-ական կոպեկով և հողատուրքով՝ սկզբնապես 3-ական ռուբլով, ընդհանրապես շնչից տարեկան 8 ռուբլի 30 կոպեկ, իսկ տասնամյա ժամկետն անցնելուց հետո այդ նույն նահանգների պետական գյուղացիներին հավասար դրույքով։ 3. Այս հարկերի գանձումը սկսել 1837 թվականի հունվարի 1-ից և այդ իսկ ժամանակվանից դադարեցնել նշված նահանգներում մինչև այժմ հայերից կատարվող տարատեսակ գանձումները՝ շնչերից, ծխերից և հողերից»[253]։

Ի կատարումն կառավարիչ սենատից իջեցված կայսերական այս հրամանի, Տավրիկիայի արքունական էքսպեդիցիան շնչահարկով հարկադրում է Հին Ղրիմի հայ համայնքին և Ղարասուբազարի հայ-կաթոլիկական դատարանի իրավասությանը ենթակա հասարակությանը՝ հայ-կաթոլիկ թե հայ-լուսավորչական[254]։

Հայ-կաթոլիկական դատարանը անմիջապես բողոքում է էքսպեդիցիայի այդ կարգադրության դեմ, այն համարելով սխալ։ Հատուկ գրությամբ նա բացատրում է էքսպեդիցիային, թե 1836 թվականի մայիսի 21-ի հրամանը վերաբերում է «1799 թվականի առանձնաշնորհումներից հանված հայերին» (ընդգծումը Վ. Մ), մինչդեռ համայնքի անդամներից ոչ ոք չի հանված այդ արտոնություններից, և, հատկապես, սխալ է այդ հրամանի տարածումը դատարանին ենթակա մարդկանց վրա[255]։ Պետական տար-

253 ЦГИА СССР, ф. 1152, 1840 г., д. 129, л. 16 с об.
254 Նույն տեղում, 16բ։
255 Նույն տեղում։

քեր ատյաններին՝ սկսած նահանգական վարչություններից ու նահանգապետներից ընդհուպ մինչև կառավարիչ սենատն ու կայսրը բողոքներ են անում նաև Հին Ղրիմի, Նախիջևանի և Գրիգորիոպոլի հայ համայնքները։ Բոլորի հիմնական պատճառաբանությունն այն էր, թե 1836 թվականի մայիսի 21-ի հրամանը իրենց չի վերաբերում, որովհետև իրենցից և ոչ ոք հանված չի 1799 թ. (կամ 1779) հրովարտակների առանձնաշնորհումներից։ Նրանք միաժամանակ շեշտում էին, որ արտոնությունները իրենց շնորհված են «մշտնջենապես»[256]։

Հայ համայնքներին բողոքների էր մղում տնտեսական այն վնասը, որ ակնկալվում էր նրանց նկատմամբ կիրառվող հարկային նոր քաղաքականությամբ։ Այս վերջինը որոշ չափով փոփոխվել էր տակավին 1810 թվականից սկսած։ Այդ թվականից ի վեր արտոնություններից օգտվող հայ մեշչանները Հին Ղրիմում, Ղարասուբազարում և Նոր Նախիջևանում ծխի դիմաց վճարում էին ոչ թե 2, այլ 5 ռուբլի. բացի այդ, նրանք սկսել էին վճարել ծխից 30-ական կոպեկ ճանապարհների կառուցման համար, ինչպես նաև 1 ռուբլի 54 կոպեկ՝ զեմստվային հարկ։ Բարձրացել էին նաև հայ վաճառականների կատարած մուծումները. դրամագլխի մեկ ռուբլուց 1 տոկոս տալու փոխարեն, 1810 թվականից սկսած նրանք վճարում էին $4\frac{1}{2}$ տոկոս[257]։ 1810 թվականին կատարված այս փոփոխությունները որոշ իմաստով ձևական էին և այնքան էլ չէին շոշափում հայ համայնքների տնտեսական շահերը։ Դրանք կատարվել էին 1779 և 1799 թվականների հրովարտակներում նշված ծխահարկի (2 ռուբլի) ռեալ արժեքը պահպանելու համար, որովհետև, թեև հրովարտակներում նշված չէր արծաթյա ռուբլի, բայց այն ժամանակ այդպես էլ ենթադրում էին, քանի որ արծաթյա և թղթյա դրամները հավասարարժեք էին։ 1810 թվականին փոփոխված 5 ռուբլին նշանակում էր 2 ռուբլի արծաթով[258]։

Ծխահարկը շնչահարկով փոխարինելը մեծապես հարվածում էր հայ համայնքների տնտեսական շահերին։ Եթե, օրինակի համար, 5 հոգուց բաղկացած հայ ընտանիքը մինչ այդ վճարում էր 5 ռուբլի 30 կոպեկ, ապա այժմ սկսած վճարեր (խոսքը քաղաքային մեշչանների և արհեստավորների մասին է) 5 անդամ ավելի՝ գումարած նաև այն, որ տասը տարի հետո հարկադրվելու էր լրիվ մեշչանական դրույքի շնչահարկով։ Ավելացնենք նաև, որ հրովարտակների արտոնություններից օգտվող բոլոր ղրիմահայերը (բացառությամբ վաճառականների) լրիվ չափով ենթարկվելու էին այդ օրենքին, իբրև քաղաքաբնակ մեշչաններ ու արհեստավորներ, անգամ առանձնաշնորհումներից օգտվող այն ղրիմահայերը, որոնք ապրում էին գյուղատիպ վայրերում, որովհետև սրանք ևս համարվում էին Հին Ղրիմի կամ Ղարասուբազարի հայ համայնքի անդամներ։ Խոսքը չէր վերաբերում այդ համայնքներից դուրս գտնվող այն հայերին, որոնք ուշ էին գաղթել Ղրիմ և հաստատվել թերակղզու տարբեր մասերում։

Տավրիկիայի արքունական էքսպեդիցիան հաշվի չի առնում հայերի բողոքը և նրանց սկսում է հարկադրել շնչահարկով, մինչդեռ սրան հակառակ կարծիքի էր Տավրիկիայի գործադիր էքսպեդիցիան. դժվարանալով կատարել արքունական էքսպեդիցիայի պահանջը, գործադիր էքսպեդիցիան գտնում էր, որ այդ պահանջի իրագործումը անհամատեղելի է հայերին տրված բարձրագույն հրովարտակների հետ[259]։

Հարցի քննարկումը պետական տարբեր ատյաններում տարբեր վերաբերմունքի է արժանանում։ Սակայն կառավարիչ սենատն ու պետական խորհուրդը ի վերջո ստիպված են լինում ընդառաջել Նովոռոսիայի գեներալ-նահանգապետ կոմս Վորոնցովին, ներքին գործերի նախկին մինիստր Բլուդովի և հայ համայնքների փաստաբկներին։ Կառավարիչ սենատի առաջին ենթք դեպարտամենտներում այս հարցի բազմիցս քննության ժամանակ կարևոր նշանակություն էր ստանում այն փաստարկը, որ բերված էր հայ համայնքների և կոմս Վորոնցովի կողմից ներկայացված փաստաթղթերում հայերին տրված արտոնությունների վերաբերյալ։ Այդ փաստարկը հանգում էր հետևյալին. 1. Արտասահմանից Ռուսաստան հրավիրելու և Ղարասուբազար, Հին Ղրիմ, Գրիգորիոպոլ, Նոր Նախիջևան (շրջակա հինգ գյուղերի հետ միասին) բնակություն հաստատելու ժամանակ հայերին 1779 և 1799 թվականների հրովարտակներով տրվել են զանազան իրավունքներ և արտոնություններ և դրանց հիման վրա նրանցից հարկեր են գանձվել ոչ թե ըստ շնչի, այլ ըստ ծխերի։ 2. Այդ հրո-

256 Նույն տեղում, թթ. 16բ, 23բ և 30բ։
257 «Собрание актов», ч. II, стр. 121.
258 ЦГИА СССР, ф. 1152, 1840 г., д. 129, л. 39 с об.
259 Նույն տեղում, թ. 17բ։

վարտակները հետագայում վավերացվել են 1799 թվականի հունվարի 4-ին, 1800 թվականի ապրիլի 18-ին, 1802 թվականի դեկտեմբերի 21-ին և 1804 թվականի հունվարի 30-ին՝ Պավել I-ի և Ալեքսանդր I-ի կողմից։ 3. Վերոհիշյալ համայնքներին շնորհված արտոնություններից 1836 թվականի մայիսի 21-ի հրամանով ոչ ոք չի հանվում և դրա համար էլ այդ հրամանը վերաբերում է այն հայերին, որոնք մինիստրների կոմիտեի՝ բարձրագույն հաստատված 1831 թվականի հունիսի 2-ի կանոնադրության համաձայն հանված են 1799 թվականի արտոնություններից և ոչ թե նրանց, «որոնց Ռուսաստան հրավիրելու ժամանակ շնորհվել են հատուկ իրավունքներ և արտոնություններ, ներկայացնելով փբրև նրանց հաստատման պայմանագիր պարտականություններ, որոնք նույն հիմունքներով եկատերինոսլավի նահանգում բնակություն հաստատած հույների նկատմամբ պահպանում են... իրենց ուժը»[260]։ Սրանից ելնելով, կառավարիչ սենատի առաջին երեք դեպարտամենտների ժողովը 1840 թվականի մարտի 22-ին որոշում է վերոհիշյալ հայերին թողնել նախկին արտոնություններում, այդ որոշումը չտարածելով այն հայերի վրա, որոնք նշված քաղաքներում բնակություն են սկսել 1799 թվականի հոկտեմբերի 28-ի հրովարտակի ընդունումից հետո։ Միաժամանակ որոշվում է խնդրել այդ առթիվ բարձրագույն հրամանագրություն[261]։ 1840 թվականի հոկտեմբերի 28-ին այս նույն կարծիքին է հանդում պետական խորհրդի ընդհանուր ժողովը, որը քննարկում է կառավարիչ սենատի առաջին երեք դեպարտամենտների ընդհանուր ժողովի որոշումը[262]։ Պետական խորհուրդը գտնում էր, որ Հին Ղրիմի, Ղարասուբազարի, Նոր Նախիջևանի և Գրիգորիոպոլի հայերի կողմից հարկեր վճարելու հարցում պետք է դանագանել ա. հարկերի բաշխման կարգը և բ. հարկերի դրույքները։ Առաջին դեպքում շեշտվում էր, թե չի կարելի Ռուսաստանի կողմից զենքով նվաճված հայերին շփոթել այն հայերի հետ, որոնք Ռուսաստան են եկել ռուսական իշխանության կանչով։ Դրա համար էլ, նրա առաջիններր 1836 թվականի մայիսի 21-ի հրամանով մտցվել են ընդհանուր հարկային սիստեմի մեջ և հարկադրվում են ըստ շնչերի, ապա այդ դեռ չի կարող հիմք ծառայել այն բանի

260 Նույն տեղում, թ. 33բ։
261 Նույն տեղում։
262 Նույն տեղում, թթ. 38—40բ։

համար, որպեսզի նույնը տարածվի նաև վերջիններրի վրա, քանի որ «կայսերական կամքով նրանց հրավիրելու ժամանակ շնորհված արտոնություններով հենց խոստացված է եղել նրանց հարկադրել ոչ թե ըստ շնչի, այլ ըստ ծխերի և հողի քանակի»[263]։

Երկրորդ դեպքում, պետական խորհուրդը այլ կարծիքի էր։ Նա գտնում էր, քանի որ հրովարտակներում չի ասված, թե հայ մեշչաններից և արհեստավորներից գանձվող 2 ռուբլի ծխահարկը, ինչպես և գյուղացիներից 1 դեսյատինի դիմաց վերցվող 5 կոպեկը արծաթով պետք է վերցնել և չի ասված այն պատճառով, որ այն ժամանակ առհասարակ բոլոր պետական հարկերը արծաթով էին նշանակվում, և տարբերություն չկար արծաթյա ու թղթե ռրամի արժեքների միջև, այնինչ այժմ ռրամի արժեքը փոխվել էր և հայերից գանձված 2 ռուբլի թղթադրամը կազմում էր նախկին դրույքների երրորդ մասից էլ պակաս[264], ուստի հրովարտակներում նշված հարկերի արժեքը պահպանելու համար նրանցում եղած թվերը պետք է հաշվել ժամանակակից գներով՝ գոյություն ունեցող դրամական կուրսը համապատասխանեցնելով անցյալ կուրսին[265]։ Ընդունելով դրամական վճարման արծաթյա կուրս, պետական խորհուրդը 1840 թվականի նոյեմբերի 25-ին հաստատում է կառավարիչ սենատի զեկուցագիրը՝ հայերին նախկին կարգով հարկելու մասին։ Պետական խորհրդի կարծիքը արժանանում է բարձրագույն հաստատման։ Ըստ այդ որոշման Հին Ղրիմի, Ղարասուբազարի, Գրիգորիոպոլի, Նոր Նախիջևանի հայերի վրա չէին տարածվում 1836 թվականի մայիսի 21-ի կանոնները, նրանք վճարելու էին միայն իրենց առանձնաշնորհումներով ունեցած նախկին հարկերն ու տուրքերը. սակայն այդ կարգը չէր տարածվում այն հայերի վրա, որոնք նշված քաղաքներում բնակություն էին հաստատել 1799 թվականի հոկտեմբերի 28-ի հրովարտակի ընդունումից հետո։ Սրան հետևում է կառավարիչ սենատի 1840 թվականի դեկտեմբերի 28-ի համանուն բովանդակությամբ հրամանը[266]։

Չնայած 1840 թվականի նոյեմբերի 25-ի օրենքին, Տավրիկիայի նահանգական իշխանությունները Հին Ղրիմի հայ հա-

263 Նույն տեղում, թ. 43ա։
264 Նույն տեղում։
265 Նույն տեղում, թ. 43բ։
266 Նույն տեղում, թ. 45բ։ Մատենադարանի արխիվ, Լազարյանների ֆ., թղթ. 111, գ. 36 (32), վավ. 124, թ. 1ա։

մայնքից պահանջում էին 1837—1840 թվականների դիմաց փակել իրենց ունեցած պարտքերը, որ առաջացել էին 1836 թվականի մայիսի 21-ի հրամանը նրանց վրա տարածելու հետևանքով։ Փոխանակ ուղղելու չորս տարի շարունակ 1836 թվականի կանոններով համայնքին հարկադրելու սխալը, իշխանության ներկայացուցիչները 1843 թվականին սպիտում էին նրան մարելու այդ սխալից առաջացած պարտքերը։ Սա էլ հարկադրում է համայնքին 1843 թվականի մայիսի 12-ին բողոքով դիմել դեներալ-նահանգապետ կոմս Վորոնցովին և Հովհաննես ու Թաշատուր լազարյաններին և խնդրել նրանց միջնորդությունը։ Հայ համայնքը նահանգապետին բողոքում էր, որ չնայած 1840 թվականի օրենքին և նահանգապետի կարգադրությանը, չինովնիկ մնդերը հարկերը իրենից պահում է ոչ թե ըստ ծխի, այլ ըստ շնչի[267], նույն օրը լազարյաններին հղած նամակում Հին Ղրիմի հայ համայնքը հայտնելով, որ Ղարասուբազարի, Նախիջևանի և Գրիգորիոպոլի հայերը այլևս չեն հարկադրվում ըստ շնչի, գրում էր. «Իսկ մերս էսկի Ղրիմ ուղրիս և աղքատ ժողովուրդը անդխոթեամբ ենթարկել ի 1837-էն դչորս տարի քզ տուշի (ըստ շնչի—Վ. Մ.) կարգնաց վճարել և գմնադնալն տասն և երկու հազար ռուպլի ասիկնացի փողն ևս պահանջին իբր նեդրիմկա, որ եթե այս չորս տարվան պահանջդչքին դատշի գարձուցանեն գովարե (ծխից —Վ. Մ.), մեք բանիցիմք յայնժամ մնալ պարտական այս տասն երկու հազար ռուպլին...»[268]։

Հին Ղրիմի «աղքատ ժողովրդի» վիճակը ծանրանում էր նաև նրանով, որ նրա վրա մի կատարյալ հարկային բեռ էին նաև հայկական քաղաքային ռատուշայի ծախսերը։ Ի սկզբանն դրանք դրված էին քաղաքի բոլոր հայ բնակիչների վրա անխտիր՝ համաձայն ռատուշայի 1808 թվականի նոյեմբերի 1-ի որոշման։ Նրանցից կատարվում էին հատուկ դանձումներ ռատուշայի քարտուղարի, գրասենյակային աշխատողի և պահակի աշխատավարձը տալու, ինչպես նաև գրասենյակային այլ տեսակի ծախսումների համար[269]։ Այդ ծախսերը կայուն չէին և ամեն տարի տարբերություններ էին տալիս, ճիշտ այնպես, ինչպես տարբեր էին լինում ռատուշայի ծախսերը։ Օրինակ, 1835 թվականին ռատուշայի տարեկան ծախսերը, ըստ նահանգապետի հաստատմանը ներկա-

267 Մատենադարանի արխիվ, լազարյանների ֆ., թղթ. 111, դ. 36, վավ. 119.
268 Նույն տեղում, թղթ. 107, դ. 44, վավ. 125, գ. 1ա, բ։
769 Крымоблархив, ф. 67, оп. 1, д. 10, л. 85 с об.



Հ. Այվազովսկի, Հայերի կատորաթ Տարպիգնում 1895 թ.։

Հ. Այվազովսկի, Արարատ, 1887 թ.:

յացրած. հաշվարկի, հանգում էին հետևյալին. քարտուղարին և դրասենյակային աշխատողներին տրվող աշխատավարձը, դրասենյակային ծախսումների հետ միասին, կազմելու էր 1350 ռուբ., հայերեն լեզվով քարտուղարի աշխատավարձը՝ 400 ռուբ., պահակին և թղթատարին՝ 400 ռուբ., մյուս քաղաքներում ապրող հին ղրիմցիներից հարկ հավաքողին, համայնքի հետ կնքած պայմանագրի համաձայն, 400 ռուբ., ռատուշայի շենքի տաքացման և լուսավորման համար՝ 110 ռուբ., քաղաքային շատրվանների և ռատուշայի շենքի վերանորոգմանը՝ 200 ռուբ. և 75 ռուբ.՝ հանապարհների ու կամուրջների վերանորոգման համար, ընդամենը 2335 ռուբլի[270]:

1840 թվականի նոյեմբերի 25-ի օրենքից հետո արտոնությունների պահպանման համար մղված պայքարը մի փոքր այլ ուղղություն է ստանում Ղարասուբազարում: Այս անգամ պայքարը ծավալվում էր 1804 թվականի հունվարի 30-ի կայսերական շնորհագրի, 1836 թվականի մայիսի 5-ի մինիստրների խորհրդի կանոնադրության և 1840 թվականի նոյեմբերի 25-ի որոշման միջև եղած տարբերությունների հետ, տարբերություններ, որոնց հետևանքով հայ-կաթոլիկական դատարանի իրավասությանը ենթակա համայնքի մի որոշ մասը կարող էր հարկադրման ենթարկվել ընդհանուր հարկային սիստեմով, այսինքն զրկվել առանձնաշնորհումներից:

Ղարասուբազարի հայ-կաթոլիկ դատարանի իրավասությանը ենթակա այն հայերը, որոնք արտասահմանից Ղրիմ էին եկել 1799 թվականից հետո, 1850 թվականին բողոքում են իշխանություններին (Կովկասի փոխարքային, Նովոռոսիայի և Բեսարաբիայի գեներալ-նահանգապետի պաշտոնակատարին, Ֆինանսների մինիստրին), թե Տավրիկիայի արքունական պալատը իրենց դուրս է գրել հայ-կաթոլիկական համայնքից և ենթարկել Ղարասուբազարի քաղաքային դումային, նրանց վրա դնելով ընդհանուր հարկեր և տուրքեր, այսինքն զրկելով հրովարտակով տրվող արտոնություններից[271]:

Ի՞նչն էր հնարավորություն տվել արքունական պալատին այդպես վարվելու հայ համայնքի մի մասի հետ: Գիտենք, որ 1804 թվականի շնորհագրով արտոնությունները տարածվում էին ոչ

270 Նույն տեղում, գ. 647, թ. 44բ:

271 ЦГИА СССР, ф. 1152, 1852 г., д. 17, л. 14 с об.

միայն դատարանին ենթակա այն հայերի վրա, որոնք Ղարասուբազարում հաստատվել էին մինչև 1799 թվականը, այլև նրանց վրա, ովքեր այնտեղ բնակություն էին հաստատել մինչև 1804 թվականի հունվարի 30-ի շնորհագիրը: Մինիստրների կոմիտեի 1836 թվականի մայիսի 5-ին ընդունված կանոնադրությունը ևս ուժի մեջ էր թողնում այս կարգը, թեև ընդառաջելով Ղարասուբազարի մեշչանների հարկերով ծանրաբեռնված լինելու մասին բողոքին, կանոնադրությունը հայ-կաթոլիկական դատարանի իրավասությունից հանում և քաղաքային ռատուշային է ենթարկում 183 հայերի, նրանց վրա դնելով այն բոլոր հարկերն ու տուրքերը, որ կրում էին Ղարասուբազարի մյուս մեշչանները[272]: Մինչդեռ պետական խորհրդի 1840 թվականի նոյեմբերի 25-ի բարձրագույն հաստատված կարծիքը և նրան հետևած կառավարիչ սենատի 1840 թվականի դեկտեմբերի 28-ի հրամանը աչքաթող էին արել 1804 թվականի կայսերական շնորհագիրը և ընդհանուր հարկադրման ենթարկել (այսինքն արտոնություններից և առանձնաշնորհումներից զրկել էին) բոլոր այն հայերին, որոնք Ղարասուբազարում (և ոչ միայն Ղարասուբազարում) հաստատվել էին 1799 թվականի հրովարտակից հետո: Սա էլ հենց օգտագործում էր Տավրիկիայի նահանգական պալատը և արտոնություններից զրկում ու ընդհանուր հարկադրման ենթարկում ոչ միայն 1804 թվականից հետո դատարանի իրավասության մեջ մտած հայերին, այլև նրանց, ովքեր քաղաքում հաստատվել էին 1799—1804 թվականների միջև ընկած ժամանակամիջոցում: Կառավարիչ սենատի 1-ին դեպարտամենտը 1850 թվականի մարտի 1-ին քննարկելով այս հարցը, ընդունում է, որ 1799 թվականի հոկտեմբերի 28-ի հրովարտակից հետո մինչև 1804 թվականի հունվարի 30-ի կայսերական շնորհագիրը Ղարասուբազարում բնակություն հաստատած հայերը պետք է օգտվեն 1799 թվականի հրովարտակով տրված իրավունքներից և արտոնություններից՝ համապատասխան 1804 թվականի հունվարի 30-ի կայսերական շնորհագրի. նրանք պետք է դառնան հայ-կաթոլիկական դատարանի իրավասության տակ, իսկ 1804 թվականի շնորհագրի հրապարակումից հետո ծնված ժառանգները՝ Ղարասուբազարի քաղաքային ռատուշայի տնօրինության տակ, բացառությամբ նրանց այն զավակների ու բարեկամների, ովքեր մասնակից են մինչև 1804 թվականը հայ համայնքի մեջ մտած վաճառականների կողմից հայտարարված ընտանեկան դրամագլուխներին և որոնց պետք է համարել այդ դրամագլուխների անդամակից, քանի դեռ ընտանիքների գլխավորներն իրենց վաճառականական դրամագլուխները հայտարարում են իրենց ժառանգներից անբաժան կերպով[273]: 1851 թվականի հոկտեմբերի 12-ին կառավարիչ սենատի առաջին երեք դեպարտամենտների և գերոլդիայի դեպարտամենտի ընդհանուր ժողովը հավանություն է տալիս սենատի առաջին դեպարտամենտի վերոհիշյալ կարծիքին և որոշում կարգադրել Տավրիկիայի արքունական պալատին՝ նրա կողմից Ղարասուբազարի քաղաքային ռատուշայի տնօրինությանը ենթարկված հայերին կրկին վերադրանցելու հայ-կաթոլիկական համայնքի կազմում[274]: 1852 թվականի մարտի 24-ին պետական խորհրդի ընդհանուր ժողովը, համապատասխան սենատի վերոհիշյալ որոշման, հանգում է նույն եզրակացության, որն արժանանում է կայսերական հաստատման[275]:

Փաստաթղթերից հետևում է, որ Հին Ղրիմի հայկական ռատուշայի և Ղարասուբազարի հայ-կաթոլիկական դատարանի համայնքները մինչև 1870-ական թվականները պահպանել էին հրովարտակներով իրենց շնորհված արտոնությունները: Սակայն հրովարտակներով սահմանված հարկերի կողքին, ինչպես տեսանք, 1804 թվականի կայսերական շնորհագրի հիման վրա նրանք պարտավոր էին կրել հասարակական բնույթի զանազան պարհակներ, վճարել դինվորական, զեմստվային և այլ բնույթի պարտուքիններ ու տուրքեր, որոնք քաղաքաբնակ հայությանն աշխատավոր հատվածի վրա լինելով ծանր մի բեռ՝ ավելի էին վատթարացնում նրա տնտեսական վիճակը:

Հրովարտակներից օգտվող հայ համայնքներից բացի, Ղրիմում անհամեմատ ավելի մեծ թիվ էին կազմում այն հայերը, որոնք ինքնակղզի գալով ուշ շրջանում՝ դուրս էին մնացել առանձնաշնորհումներից և վճարում էին նահանգի մյուս բնակչության կողմից տրվող բոլոր տեսակի հարկերը: 70-ական թվականներին, ռատուշայի և դատաբանի վերացմամբ, «արտոնյալ» համայնքները ևս հավասարվում են սրանց վիճակին:

272 Նույն տեղում, թ. 14բ:

273 Նույն տեղում, թթ. 15բ—16ա:

274 Նույն տեղում, թ. 22ա:

275 Նույն տեղում, թթ. 25բ—26ա:

Վարասուբազարում և մանավանդ Հին Ղրիմում հարկերի գանձումը ուղեկցվում էր մեծ դժվարություններով, որովհետև աշխատավոր հայ զանգվածների մի շոշափելի մասը, գտնվելով աղքատության մեջ, դժվարանում էր ժամանակին վճարել հարկերն ու մյուս տեսակի տուրքերը։ Հին Ղրիմում հարկերի չվճարելը քրոնիկական բնույթ էր կրում, և դրա համար էլ հայկական ռատուշայի գոյության ամբողջ շրջանում մենք հանդիպում ենք աշխատավորների ուսին ծանրացած պարտքերի, որոնք առաջացել էին հարկերը վճարելու անկարողությունից։

Հարկերը վճարելու անկարողության և առանձնաշնորհումների պահպանման մասին արված բազմաթիվ և հաճախակի դիմումները, որ քննարկեցինք վերևում, ղրիմահայ աշխատավոր զանգվածների սոցիալական պասսիվ բողոքի արտահայտություններից մեկը պիտի համարել։ Իշխանությունները ջանք չէին խնայում հարկերն ու տուրքերը ժամանակին գանձելու և այդ առթիվ դատարանի ու ռատուշայի անունով իջեցնում էին անհրաժեշտ կարգադրություններ ու հրամաններ։ Ռատուշան ու դատարանն էլ, որպես վերևից շնորհված և ունևոր խավի շահերն արտահայտող օրգաններ, ձգտում էին բոլոր միջոցներով «պարզերես դուրս գալ» նահանգական իշխանության առաջ։ Արդեն 1810 թվականին, այսինքն ռատուշայի բացումից երկու տարի անց, Հին Ղրիմում հարկերի դիմաց առաջացած պարտքերը վերացնելու համար Տավրիկիայի նահանգական կառավարությունը հրամայում է ռատուշայի անդամներին, որպեսզի սրանք օգտագործեն «իրենց ամբողջ գործունեությունը ապառիքներն ու հարկերը գանձելու համար, որովհետև գանձման դանդաղեցման դեպքում նրանց հետ կվարվեն ըստ օրենքի»[276]։ Սրան համապատասխան, ռատուշան 1810 թվականի նոյեմբերի 7-ի նիստի որոշմամբ քաղաքի ավագ Խաչատուր Սարգսյանին տեղյակ պահելով նահանգական կառավարության այդ կարգադրության մասին, հրամայում է անհապաղ զեկուցել հարկերի գանձման ընթացքի և ապառիքատեր մարդկանց մասին[277]։ 1835 թվականի հունվարին Թեոդոսիայի գավառական գանձատունը Հին Ղրիմի հայկական քաղաքային ռատուշայից պահանջում էր 1833 և 1834 թվականների հարկերից առաջացած ապառիքները, որոնք կազմում էին 3028 ռուբ. 48 կոպ.[278]։

276 Крымоблархив, ф. 67, оп. 1, д. 35, л 159.

277 Նույն տեղում։

278 Նույն տեղում, գ. 647, թ. 39բ։

Գանձատան պահանջը կատարելու համար փետրվարի 9-ի նիստում հայկական ռատուշան որոշում է հայտարարել քաղաքագլխին, որպեսզի ռատուշայի պատգամավորների հետ միասին «ընտրեն վստահելի մի անձ»՝ հարկերից առաջացած գանձումները հավաքելու համար[279]։ «Վստահելի անձի» ընտրությունը կապված չէր միայն չարաշահումներից խուսափելու, այլև հարկերի գանձման դժվարությունների հետ. պետք էր փնտրել մի հարկահավաք, որը ամենայն բծախնդրությամբ ու դաժանությամբ կատարեր ստանձնելիք հանձնարարությունը[280]։

Երբեմն գործն այնտեղ էր հասնում, որ քաղաքացիների մի մասից նրանց չքավորության պատճառով անկարող լինելով հարկերը գանձել, ռատուշան դիմում էր դրանք մարելու կողմնակի աղբյուրների։ Այսպես, 1843 թվականին քաղաքագլուխ Գևորգ Սերոբյանը, հայ համայնքից ունևոր լիազորագրի հիման վրա, համայնքի վրա եղած հարկերի ապառիկները մարելու համար կողմնակի անձանցից վերցնում և Թեոդոսիայի գավառական գանձատունն է ուղարկում 250 ռուբլի (արծաթով)[281]։ Հարկերի գանձման գործը բարդանում էր նաև նրանով, որ հաճախ խուսափում էին իրենց հարկերը վճարել քաղաքում հաստատված ռուս և թաթար համայնքները, որոնք նույնպես ենթակա էին հայկական ռատուշայի տնօրինությանը[282]։

Հարկերի գանձումը հաճախ դժվարությունների էր հանդիպում նաև Ղարասուբազարի հայ-կաթոլիկական դատարանի իրավասությանը ենթակա համայնքում։ 1862 թվականին կազմված «Ղարասուբազարի հայ-կաթոլիկական դատարանի մեշչանական համայնքի հարկատետրում» համայնքի շատ անդամների վրա գրանցված էին ապառիկներ, որոնք առաջացել էին անցյալ տարիների հարկերը չմուծելու հետևանքով[283]։

* * *

Ղրիմահայության ուսերին ծանր բեռ էին եկեղեցական տուրքերն ու գանձումները։ Վերը նշված եկեղեցական եկամուտների

279 Նույն տեղում, թ. 44ա։

280 Նույն տեղում, թ. 44բ։

281 Նույն տեղում, գ. 799, թ. 9ա, բ։

282 Նույն տեղում, գ. 1735, թթ. 1—4, գ. 254, թթ. 1, 7—9։

283 Крымоблархив, ф. 179, оп. 1, д. 291, л. 1—50 («Податная тетрадь Карасубазарского римско-католического (армяно-католического—*В. М.*) мещанского общества на 1862 г.».

դերակշիռ մասը առաջանում էր ժողովրդից կատարված գանձումներից։ Մինչև 1821 թվականի «Կանոնական բարեկարգությունը» դրմահայության կողմից եկեղեցու հանդեպ ունեցած «պարտականությունների» կատարումը կանոնավորվում էր նախ այն առաջարկներով, որ բովանդակում էր Ղարասուբազարի հայության 1807 թվականի սեպտեմբերի 14-ի դիմումը, և որոնք հաստատել էր էջմիածինը[284], և ապա՝ 1808 թվականի սեպտեմբերի 29-ի կաթոլիկոսական կարգադրությամբ ու Մանվել վրդ. Դյումուշխանեցու կողմից 1816 թվականի հոկտեմբերի 1-ին Ղարասուբազարի հայ հոգևոր կառավարության գանձապետին տված դրավոր հանձնարարությամբ[285]։ 1807 թվականի կանոնները սահմանում էին եկեղեցական գանձումների ու տուրքերի չափը[286], ելնելով Հ. Արղությանի և Նոր Նախիջևանի երևելիների կողմից 1795 թվականին ընդունած «Կանոնական բարեկարգությունից»։ Դրանց համաձայն տուրքերը գանձվում էին ըստ առաջին, երկրորդ և երրորդ դասերի, մի բաժանում, որը կատարում էր եկեղեցին իր գանձումները ժամանակին և լիովին ապահովելու համար՝ հայ համայնքների անդամների կարողությանը համապատասխան։ 1807 և 1821 թվականների կանոնները, որ ընդունել էին հարուստ դասի երևելիները բարձրաստիճան հոգևորականության նախաձեռնությամբ, դիտությամբ և հաստատությամբ կոչված էին ապահովելու գաղութահայ եկեղեցու եկամուտները և տնտեսական սիրապահող դիրքերը՝ ի հաշիվ և ի վնաս հայ աշխատավոր զանգվածների։

1807 թվականին ընդունված կարգը սահմանում էր էջմիածնին, առաջնորդարանին և տեղի քահանաներին հասանելիք բաժինները։ Կային գանձումներ, որ կատարվում էին միայն էջմիածնի կամ առաջնորդի օգտին, կային նաև գանձումներ, որոնցից բաժին էր հանվում բոլորին։ Այսպես, 1807 թվականի կարգով «կողոպուտն աստիճանաւորաց, ղինուորաց, դատաւորաց, աթոռակալաց, երեցփոխանաց, գանձապետաց, առաջաւոր իշխանաց և էնաֆպալիից (վաճառականների և արհեստավորների—Վ. Մ.), որք պատկանեցեալք են սբ. աթոռոյն, ըէկլէա ըստ կանոնաց սրբոց հարցն բաղում ինչ է, բայց որովհետև ի ժամանակիս չունի այնպիսի կարողութիւն ազգ մեր, որք ի սոյն սահման, արժան համարեցաք. զի վասն ամենայն կողոպուտի տայցեն միայն նաղտ (կանխիկ—Վ. Մ.) դրամ քան ռուպլի ռուսի սև փող»[287]։

Բայց ի՞նչ էր այդ կողոպուտ (դավառաբարբառով կողոպուրտ) կոչեցյալը։ Դա՝ ննջեցյալի անձնական գործածության այն իրերն էին (հագուստ, անկողին, զարդ և այլն), որ տրվում էին քահանային։

Եթե 1807 թվականին ընդունված կարգը, ի խախտումն ավանդական սովորության, պահանջում էր «աստիճանաւորաց կողոպուտը» մարել դրամով, ապա 1821 թվականի «Կանոնական բարեկարգությունը» չէր պարտադրում դրամական վճարում, սակայն այն ևս դնում էր, որ եթե մեկը չի ցանկանում կողոպուտ տալ, ապա դրա փոխարեն պիտի վճարի դրամով, ընդ որում՝ «առաջինն (հարուստ դասը—Վ. Մ.) տացէ երեք մանէթ, երկրորդն (միջակը—Վ. Մ.) երկու մանէթ, իսկ երրորդն (աղքատ դասը—Վ. Մ.) մի մանէթ»[288]։ Առայժմ մի կողմ թողնենք այն, որ աղքատի համար մեկ ռուբլի վճարելն ավելի դժվար էր, քան հարուստի համար 3 ռուբլի, նշենք սակայն, որ կողոպուտը հասարակության մեջ որոշակի դժգոհություն էր առաջացնում ոչ միայն նյութական շարժառիթներով, այլև բարոյական իմաստով։

Բնականաբար, ամեն մի հավատացյալ չէ, որ ի խորոց սրտի կհամաձայնվեր իր հարազատ ննջեցյալի անձնական գործածության իրերը, հագուստը և այլն տալ քահանաներին։ Այս դժգոհությունն էլ, հավանաբար, 1821 թվականին ստիպել էր կանոնադիր ժամակալին թույլատրել իրերի փոխարեն վճարել դրամով։

Ասացինք, որ կային գանձումներ, որ պատկանում էին միայն առաջնորդին կամ քահանաներին, կային նաև ընդհանուր տուրքեր։ 1807 թվականին հաստատված կարգով էջմիածնի օգտին էին վերցվում նաև, բացի «զկողոպուտն աստիճանաւորաց», հարսանյաց «որէ պսակի նուէրքն», ընդ որում՝ «առաջինքն տացեն երեք ռուպլի, երկրորդքն երկու ռուպլի և երրորդքն մեկ ռուպլի»[289]։ Սա միայն օրինավոր պսակիկ էր վերցվում, այսինքն երբ ամուսնանում էին առաջին անգամ՝ «կոյս ընդ կուսի»[290], իսկ մյուս ամուսնությունների դեպքում՝ այդ դրամի գանձման չափը ամեն անգամ թողնվում էր առաջնորդի հայեցողությանը[291]։ **Էջմիածնին էր**

284 Մատենադարանի արխիվ, ֆ. կաթ. դիվան, թղթ. 18, վավ. 132, թթ. 1—3, տգթ. 38, վավ. 195, թ. 3ա։

285 Նույն տեղում, թղթ. 29, վավ. 2, թ. 1ա, բ։

286 Նույն տեղում, թղթ. 18, վավ. 132, թթ. 1—3։

287 Նույն տեղում, թ. 2։

288 Նույն տեղում, թղթ. 38, վավ. 195, թ. 3ա։

289 Նույն տեղում, թղթ. 18, վավ. 132, թ. 2։

290 Նույն տեղում։

291 Նույն տեղում։

պատկանում նաև անհիշատակ ննջեցյալների (այսինքն անժառանգ մահացողների, որոնց գույքի նկատմամբ ոչ-ոք չէր ապացուցում իր օրինական իրավունքը) ունեցվածքի 1/5-ը, այդ կայքից նույնքան էլ բաժին էր ընկնում թեմի առաջնորդին և ս. Խաչ վանքին, իսկ մնացած 2/5-ը՝ այն քաղաքի եկեղեցուն և աղքատներին, «ուր տէրն նոցին լինիցի վախճանեալ»[229]։

1807 թվականին ընդունված կարգը, որ սահմանել էին Ղարասուբազարի 22 երևելիները և հաստատել էր էջմիածինը[293], եկեղեցական դանձումներից ու տուրքերից անհրաժեշտ բաժին էր հանում նաև թեմի առաջնորդին, որոշելով նրա իրավունքներն ու տնօրինության սահմանները այդ հարցում։ Սրան էր հանում սրբաքաղրամը, որ վերցվում էր հարուստներից հարյուր հիսուն, միջակներից հարյուր և աղքատներից հիսուն կոպեկի չափով[294], նշանի թեկուբան (մատնիկը, այսինքն նշանի համար դանձման գրավոր իրավունքը), որ տալիս էին «առաջինքն նոյնպես 150 կոպ., երկրորդքն՝ 100, երրորդքն՝ 50 կոպեկ»[295], ննջեցյալների թեկուբան՝ առաջիններք երկու ռուբ., երկրորդները՝ մեկ ու կես ռուբ., և երրորդները՝ 50 կոպեկի չափով, ինչպես նաև «դիաքերդն ննջեցեալոց այն չափով, ինչ չափով «ով որ գինչ արկանիլ յօտարեացին, տարինք ի տաղտարաց» (այսինքն հինգ հայտի տների ժամանակ դուրացած դումարները) և այլն[296]։

Կյանքի կոչված լինելով ապահովելու և պահպանելու եկեղեցական գոյի տնտեսական վիճակը, 1807 թվականին սահմանված կարգը մեծապես մասնագիտանում էր նաև եկեղեցիներում գործող սուրբ հոգևորականության խնդրով։ Այդ կարգի երրորդ բաժինը, որ կոչվում էր «յաղագս քահանայից մերոց», սահմանում էր վերջիններիս տրվող տուրքերն ու դրանց չափերը։ Սրան համապատասխան, քահանաները ևս ստանում էին պսակադրամ, որ տալիս էին «առաջինքն ութ ռուբլի, երկրորդքն չորս, երրորդքն երկու»[297]։ Մարկավաղներին ևս տրվում էր այդ տուրքը՝ 50, 25 և 10 կոպեկի չափով, ըստ սահմանված դասային բաժանվածության[298]։ Սակայն ամուսնացողները միայն պսակադրամով չէին

292 Նույն տեղում, թ. 2։
293 Նույն տեղում, թղթ. 38, վավ. 195, թ. 3ա։
294 Նույն տեղում, թղթ. 18, վավ. 132, թ. 2։
295 Նույն տեղում։
296 Նույն տեղում, թթ. 2—3։
297 Նույն տեղում, թ. 3։
298 Նույն տեղում։

կարող ազատել իրենց օձիքը. նրանք վճարում էին նաև «հալալ օրհնելոյ» համար (այսինքն օժիտը օրհնելու համար) «առաջինքն երկու ռուպլի, միջինքն՝ մեկ ռուպլի և յետինքն՝ 50 կոպեկ» և նույնիսկ «տասանորդն արդեանց, զորս տան բարեկամք հարսին վասն ձեռք համբուրելոյ»[299]։ Այս դեռ բոլորը չէր. նշան օրհնելու համար վճարում էին թե տղայի և թե աղջկա կողմերը՝ առաջիններք 2-ական, երկրորդները՝ 1-ական ռուբլու և երրորդները՝ 50-ական կոպեկի չափով[300]։

Աշխատավոր ժողովրդի, մանավանդ նրա առավել չքավոր դասվածների համար, ղպալի բեռ էին ոչ միայն ամուսնական արարողությունների, այլև մեռելաթաղի հետ կապված ծախսերը։ Այդպիսի դանձումներից ղպալի բաժին ունեին քահանաները։ «Ննջեցելոյ թաղման և եօթն ամրիծքի» համար (այսինքն յոթ օր շարունակ ննջեցյալի համար եկեղեցում կարգ կատարելու համար) «առաջինքն տացեն վեց ռուպլի, երկրորդքն՝ չորս ռուպլի և և երրորդքն՝ մեկ ռուպլի»։ Դա միայն քահանային։ Բացի այդ, նույն «կարգի» համար մեռելատերը վճարում էր նաև սարկավագին՝ 50, 25 և 10 կոպեկի չափով։ Քահանաները ստանում էին նաև կողպատ՝ վեց, չորս և երկու ռուբլու չափով[301], նրանց օգտին դանձումներ էին կատարվում կնունքի, ժամուցի (պատարագի), տնօրհնեքի, դերեզմանօրհնեքի և քառասունքի համար[302]։

Ղարասուբազարի հայության ներկայացուցիչ 22 հարուստ երևելիները, որոնց նախաձեռնությամբ կյանքի էին կոչվել 1807 թվականի վերոհիշյալ «կարգն ու կանոնը», կանխավ գիտենալով, որ կարող են հանդիպել ժողովրդի դժգոհությանը, կաթողիկոսի հաստատումից հետո դրանք համարում էին պարտադիր ամբողջ դրիմահայության համար. «ոչ ոք կարէ դժկամակ լինիլ և ըստ հաճոյից իւրոց պակասեցուցանել ինչ»[303],— գրել էին նրանք այդ կանոնների վերջում, որոնք հաստատվելով կաթողիկոսի կողմից՝ ըստացել էին օրենքի ուժ և դարձել պարտադիր։

Այս դեռ բոլորը չէր։ Հայ համայնքների հաշվին էր պահվում Ղարասուբազարի հոգևոր կառավարությունը։ Մանվել վարդապետի

299 Նույն տեղում։
300 Նույն տեղում։
301 Նույն տեղում։
302 Նույն տեղում։
303 Նույն տեղում, թ. 3։

կողմից այդ կառավարությունը 1816 թվականի հոկտեմբերի 1-ին տված դրավոր կարգադրության համաձայն, կառավարության դրամական եկամուտները առաջանում էին Ղրիմի ամեն մի քաղաքի հայկական եկեղեցու քահանաների կողմից տարեկան 50 ռուբլի մուծելուց, այրիները կույսերի հետ ամուսնանալու ժամանակ դանձված գումարի 1/4-ը ստանալուց, զանազան թղթեր հաստատելուց, ինչպես նաև աթոռակալի մոտ հավաքված առաջնորդական գումարների տոկոսներից և այլ դանձումներից[304]։

1807 թվականին ընդունված կարգում, ինչպես և դրան հաջորդած 1808, 1816 թվականներին և այլ տարիների կարգադրություններում էջմիածնի առաջնորդարանի, եկեղեցիների և հոգևորականության օգտին տուրքեր ու դանձումներ կատարելու վերաբերյալ եղած կանոնները ավարտուն և կատարյալ ձևակերպում են ստանում 1812 թվականի «Կանոնական բարեկարգության» մեջ, որը ոչ միայն պահպանում է դրանցում նշված տուրքերը, այլև ավելացնում նորերը, սահմանում դրանց չափն ու վճարման եղանակը։ 1821 թվականի «Կանոնական բարեկարգության» հեղինակներին ավելի շատ մտահոգել էին եկեղեցական տուրքերն ու դանձումները, քան թե եկեղեցու կառավարման գործերի կարգավորումը։ Եվ դրա համար էլ «բարեկարգությունը» ավելի շուտ հիշեցնում էր յուրատեսակ հարկային մի օրենսդրություն. իզուր չէ, որ նրա 20 հոդվածներից 13-ը վերաբերում էին եկեղեցական տուրքերին ու դանձումներին։

Կանոնադրության չորրորդ հոդվածը Ղրիմի հայոց, հոգևոր կառավարության, ռուս և հայ զրագիրների ծախսերը դնում էր ղրիմահայ եկեղեցիների, այսինքն նրանց ծուխը կազմող համայնքների վրա։

Հինգերորդ հոդվածը սահմանում էր եկեղեցական տուրքերի դանձման այնպիսի ձև, որպեսզի հոգևոր դասը ոչ մի վնաս չկրի, նկատի ունենալով անցած երկու և կես տասնամյակում դրամական կուրսի փոփոխությունը։ Այդ հոդվածը գտնում էր, որ թեև պետք է անփոփոխ թողնել 1795 թվականին Հովսեփ Արղությանի և Նոր Նախիջևանի երևելիների կողմից սահմանված էջմիածնին, հոգևոր կառավարությանը, վանքերին և հոգևորականությանը սրբավելիք տուրքերի չափը, սակայն անպայման պիտի փոխել դրանց դրամական ձևը, պահպանել դրամի արծաթյա կուրսը։

304 Նույն տեղում, թղթ. 29, վավ. 2, թ. 1ա, բ։

Վեցերորդ հոդվածը ուժի մեջ էր թողնում ղրիմահայ համայնքների կողմից հոգևոր դասին ցարդ տրվող տուրքերը, իսկ յոթերորդը՝ սահմանում էր քահանաներին հատանելիք կողոպուտի չափն ու վճարման եղանակը։ Ութերորդ հոդվածով սահմանվում էին էջմիածնի և Թեմի առաջնորդի եկամուտները. առաջինին տրվում էր «յատուկ արդիւնք», որն էր՝ «շարաթեական յատկացեալ դանձանակն[305], խոստմունք, կտակ, հոգեբաժինք և նուիրակութիւնք երեք տարին միանգամ», իսկ երկրորդին՝ «շնչադրամ պաղին, դիպաղարգըն, պսակի, նշանի թէսկէրեից գոյացեալըն. ննջեցելոց ամբիծքի թէսկէրեից առեցեալըն, կտակի և հոգեբաժնից մասունքն և տաղաւարաց արդիւնքն»[306]։

Տասներորդ հոդվածը նշանակում էր եկեղեցական տուրքը՝ պաղին, որ ղրիմահայերից դանձվում էր տակավին XVIII դարի վերջերից[307]։ Պաղի պարտավոր էին տալ «ոչ միայն ի Ղրիմ տամբ և ամուսնացելով բնակեալքն, այլև երթ և եկ մշտակայ առևտրականօղքն յայդ երկիր»[308]։

Եկեղեցական տուրքերի ու դանձումների միջոցով հոգևորականությունը եկամուտներ էր ստանում նաև տերունի ժողովրդից։ Տասներեքերորդ հոդվածը սահմանում էր այդ կարգը։ Տերունական ժողովրդից դանձվող տուրքերն այն բաժանում էր երեք հավասար մասի՝ էջմիածնի, առաջնորդի և ս. Խաչ վանքի միջև[309]։ Տերունական էին համարվում ամենաչն հայոց կաթողիկոսի իրավասությանը ենթակա ղրսից եկած անձինք, տվյալ դեպքում Ղրիմում գտնվող նրանք, որոնք դեռ չէին ամուսնացել և չէին ընդունել ռուսահպատակություն։ Ամուսնանալը, հավանաբար, պիտի հասկանալ տեղացի, ռուսահպատակ ղրիմեցի հայի հետ ամուսնանալու իմաստով, որովհետև, ըստ երևույթին, տեղացու հետ ամուսնանալով՝ եկվորը դադարում էր տերունական լինել, այլապես ամուսնացած եկվորն էլ էր տերունական։ Այս կարգի մեջ էին մտնում հրորդ անդամ պսակվողները, անհաղորդ մեռելները, անհիշատակ

305 Գանձանակը այն տուփն էր, որ գնում էին եկեղեցիներում (և ոչ միայն եկեղեցիներում) այնտեղ նվիրատվություններ հավաքելու համար, և դրանից էլ առաջանում էր գանձանակագործը։

306 Մատենադարանի արխիվ, թղթ. 38, վավ. 195, թ. 3ա։

307 Նույն տեղում, թղթ. 10, վավ. 15, թ. 1։

308 Նույն տեղում, թղթ. 38, վավ. 195, թ. 3բ։

309 Նույն տեղում, թ. 4ա։

ննջեցյալները։ Տիրունական հայ բնակչությունը ամեն մի քաղաքում մասնանադրվում էր առանձին և նրանցից վերցվող եկեղեցական տուրքերը՝ «տուն կամ խանութ և օտաօրհնէքէն, պսակադրամքն և կողոպուտքն և թաղմանն» հավաքում էր աթոռակալը ու հանձնում հոգևոր կառավարությանը՝ նշված ձևով երեք տեղով բաշխելու համար։

Ղարասուբազարի, Թեոդոսիայի և Եվպատորիայի հայկական եկեղեցիների քահանաներին ռոճիկ չէր տրվում, ելնելով այն բանից, որ այդ քահանաներն ունեին «զբաւական ժողովուրդս, որովք կարեն քահանայքն այնոքիկ ըստ արժանոյն դառնել պարէն կենաց»[310]։ Խոսքն այն մասին էր, որ այդ քաղաքների հայ համայնքներից եկեղեցիների մեջ «գոյացեալ ամենայն արդիւնք»-ը՝ դանձանակի, բուրվառի, մշտնջենավոր կամ օրական ժամուցի միջոցով հավաքված դրամները, որոնք մնում էին տեղի քահանաներին, բավական մեծ գումար էին կազմում, քան նախատեսվելիք ռոճիկը։ Մինչդեռ մյուս քաղաքների (Սիմֆերոպոլի, Բախչիսարայի և Օրարազարի) հայ քահանաներին տասնյոթերորդ հոգվածը նշանակում էր տարեկան ռոճիկ, որը այդ քաղաքների «ժողովուրդքն պարտին ըստ արժանոյն ռոճիկ տալ»[311]։

Բոլոր այս տուրքերին ավելանում էին նվիրակությունները, որ պարբերական բնույթի էին և կատարվում էին հոգևոր տարբեր մարմինների կողմից։ Հնից եկած սովորությամբ Ղրիմի վիճակը էջմիածնից և այլ վայրերից եկած հոգևոր նվիրակների մշտական այցելավայրն էր։ 1821 թվականի կանոնադրությամբ էջմիածնի օգտին նվիրակությունները կատարվում էին երեք տարին մեկ անգամ։ Այդպես էր նաև մինչև այդ։ Ղրիմի հոգևոր գործերին քաջատեղյակ Մանվել վարդապետ Գյումուշխաննեցու վկայությամբ, 1809—1825 թվականներին երեք տարին մեկ անգամ էջմիածնի ներկայացուցիչները նվիրակություն էին արել Ռուսաստանի և Բեսարաբիայի վիճակներում[312]։ Ամեն մի նվիրակության ժամանակ մեծ գումար էր վերցվում։ «Իւրաքանչիւր նուիրակութիւն յիսունական հազար ռուպլիէն 255.000 ռուպլի յունելի արդեանցն ղրկեցաւ՝ որպես տեսանիմք ի՝ հաշիւս սաղիմայ նուիրակացն»[313],—գրում էր 1825 թվականի մարտի 4-ին Մանվել վարդապետը Ներսես Աշտարակեցուն, նաև դժգոհելով, որ հաճախ նվիրակության արդյունքը էջմիածնին չի հասնում։ «Ըստ որում բազմադիմի դործովք ընդ ժողովրդեանց վշտացեալք և համարձակեալք են առ այս համեմատութեամբ կարեմ ասել թէ միանգամ ժողովեալ յառաջնորդէն նվիրակութեան անուամբ՝ հաշիւ իւր ծախուցն օգտեցաւ»[314]։ Մեզ մնում է արձանագրել, որ «բազմադիմի գործովք վշտացեալ» ժողովրդի համար միևնույն էր, թե իրենից օտարված գումարը ում էր բաժին ընկել՝ էջմիածնին, թե թեմի առաջնորդին։

Վերը մենք լուսաբանեցինք այն տուրքերն ու դանձումները, որ տալիս էին ղրիմահայերը եկեղեցուն։ Մինչև Ղրիմում սովետական կարգերի հաստատումը դրանք դրեթե անփոփոխ վիճակում պահպանել էին իրենց գոյությունը, թեև հոգևոր մարմինների կառուցվածքում փոփոխություններ էին կատարվել։

* * *

Աշխատության այս բաժնում ընդգրկած հարցերի լուսաբանումը, այսպիսով, ցույց է տալիս, որ XIX դարում և XX դարի սկզբներին ղրիմահայերը ունեցել են բավական հոծ տնտեսական կյանք՝ դրան հատուկ բոլոր հիմնական գծերով հանդերձ։ Նրանց զբաղմունքների մեջ մասնավորապես կարևոր տեղ են բռնել առևտուրը, արհեստագործությունը և այգեգործությունը. ունեցել են դասային ընդդծված շերտավորում և ազգային յուրահատկություններ հետ միասին՝ ապրել այն ընդհանուր հոգսերով ու մտքերով, որոնք բնորոշ էին այն ժամանակվա Ղրիմի բնակչությանը առհասարակ։ Հենց դրանով էլ հայկական գաղութը իր շուրջը մասնակցություն էր բերում թերակղզու տնտեսական զարգացմանը։

---

310 Նույն տեղում։
311 Նույն տեղում, թ. 4բ։
312 Նույն տեղում, ցուց. 51, վավ. 102, թ. 1ա։
313 Նույն տեղում։
314 Նույն տեղում։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԴԱՂՈՒԹՈՒՄ

Պայքար կաթոլիկացման դեմ: Դ. Այվազովսկու «դարձը» և Ռուսաստան գալու նպատակը, նրա մտադրության և ռուսական կառավարության հաղորդական նպատակների միահյուսումը: Խալիբյան ուսումնարանի հիմնադրումը: Երկարամյա վեճերը եկեղեցական զումարների շուրջ: Մատենաս—Այվազովսկի հակամարտությունը: Հայ կամավորական զորամասը 1787—1791 թթ. ռուս-թուրքական պատերազմում: Տավրիկյան հայերը և Ղրիմի պատերազմը. հայազգի ծովակալ Լ. Մ. Սերեբրյակովը: Ղրիմահայ հասարակական-հաղորդական կյանքը Եոսեֆոբմյան շրջանում: Հոգաբարձություններ: Քաղաքական խմորումներ: Սոցիալ-դեմոկրատ Արմեն Բանաբյան: Հնչակյաններ Ղրիմում:

Ղրիմահայության հասարակական-քաղաքական կյանքը XIX դարում և XX դարի առաջին մեկ ու կես տասնամյակում ամենից առաջ աղերսվում էր սոցիալ-տնտեսական այն պայմաններին, որոնց մեջ նա դոյատևում էր նշված ժամանակաշրջանում: Այդ չէր նշանակում, իհարկե, թե նրան մտահոգում էին միայն զուտ «տնտեսական» հարցերը: Ընդհակառակը, հասարակական, մշակութային և եկեղեցական կյանքի շատ թևերով կապված լինելով Արևելյան ու Արևմտյան Հայաստանի, ռուսական իրականության, ինչպես նաև Ռուսաստանում ապրող իր ազգակիցների հետ, Ղրիմի հայերը ոչ սակավ դեպքերում մասնակից էին դառնում այնպիսի խնդիրների, որոնք հավասարապես հուզում էին և՛ արևելահայերին, և՛ արևմտահայերին: Դեպքից-դեպք էլ «զուտ ղրիմահայ» հարցերը քաոտանում էին համահայկական երանգավորում, որովհետև շոշափում էին Ռուսական կայսրությանը ենթակա հայության տարբեր խավերի շահերը:

Ղրիմի հայերի այս շրջանի հասարակական կյանքի զարգացումը չէր ընթանում «խաղաղ» հունով՝ հայրենիքից հեռու մի անկյունում ծվարած հայության շահերի ընդհանուր ներդաշնակությամբ, թեև լինում էին հարցեր, որոնք հավասարապես հուզում էին ղրիմահայության բոլոր խավերին: Շահերի ներդաշնակության և ընդհանրության բացակայությունը, որն արդյունք էր դաղութահայ բնակչության դասային ցցուն շերտավորման, իր կնիքն էր դնում նրա հասարակական կյանքի վրա, դրան տալով սոցիալական որոշակի բնույթ և իմաստ: Ղրիմահայության հասարակական կյանքը հուզող որ խնդիրն էլ վերցնենք՝ եկեղեցական հակամարտությունները թե դպրոցական հարցի շուրջը ծագած վեճերը, եկեղեցական գումարների առիթով, թե արտոնությունների պահպանման համար մղված պայքարը, կամ թե քաղաքական այս կամ այն կուսակցության հանդեպ ունեցած վերաբերմունքը և մնացած մյուս հարցերը, դրանք բոլորն էլ պայմանավորված են եղել ղրիմահայոց տնտեսական և քաղաքական դրությամբ, նրանց սոցիալական վիճակով:

* * *

Ղրիմում մնացած և Ազովի նահանգ տեղափոխված հայերին հուզող հարցերից մեկը XVIII դարի 80—90-ական թվականներին դառնում է կաթոլիկությանը դիմադրավելու խնդիրը: Այդ պայքարը, չնայած իր կրոնական քողին, ուներ ազգային և սոցիալական բովանդակություն: Այն ազգային էր, որովհետև օբյեկտիվորեն հանդում էր ազգապահպանման՝ ընդդեմ կաթոլիկ հայրերի ամենակուլ ձգտումների. այդ պայքարը միաժամանակ սոցիալական որոշակի բովանդակություն ուներ, քանի որ դա մի բողոք էր ըստեղծված այն իրավիճակի դեմ, երբ կաթոլիկ քարոզիչները, օգտագործելով տնտեսական դժվարությունները, առանձին հայ ընտանիքների գայթակղում էին նյութական հրապուրիչ հեռանկարներով և դավանափոխում: Եվ պատահական չէ այն, որ կաթոլիկ քարոզիչների գործունեությունը Տավրիկիայի և Ազովի նահանգի հայության մեջ աշխուժացել էր հենց XVIII դարի 80—90-ական թվականներին:

Այս տասնամյակներին հայության տնտեսական դրությունը որոշակիորեն վատթարացել էր՝ տեղահանվելու և Ազովի նահանգ անցնելու կապակցությամբ: Մյուս կողմից, ինչպես տեսանք, հարյուրավոր հայ ընտանիքներ, կանգ չառնելով ոչ մի բանի առջև, ևս

էին փախչում իրենց հին բնակավայրը՝ Ղրիմ։ Այնինչ 80-ական թվականների կեսերին եկատերինոսլավում գտնվող կաթոլիկ հայերը արդեն դրեթե գլուխ էին բերել Ղրիմ վերադառնալու թույլտվությունը։ Վերջին հանգամանքը բավականին զորեղ կռվան էր կաթոլիկ հայրերի ձեռքին։ Տակավին 1780 թվականին Հ. Արղությանը դիմում է Գ. Ա. Պոտյոմկինին, խնդրելով հատուկ կարգադրությամբ արգելել կաթոլիկ հայրերին՝ դավանափոխելու հայերին, որովհետև «1. կաթոլիկ հայրերի գայթակղմամբ շատ հայեր ընդունում են նրանց դավանանքը և դրա հետևանքով նրանց բնակություններում առաջանում են քայքայում ու ատելություն»։ Արղությանը խնդրում էր կաթոլիկ հոգևորականության առաջնորդի միջոցով վերջ տալ քարոզիչների այդ նկրտումներին, որպեսզի «այսուհետև ոչ մի պատրվակով չհանդգնեն հայերին ընդունել տալ իրենց դավանանքը և իրենց ժամասացությունը կատարեն հիվրապալան լեզուներով և ոչ թե հարմարվեն հայկական եկեղեցուն»։ «2. Կաթոլիկությունն ընդունած հայերին, երբ նրանք ցանկանում են վերադառնալ իրենց նախկին հայկական դավանանքին, խոչընդոտներ չհարուցեն»[1]։

Ինչպես երևում է Հ. Արղությանի խնդրանքից, կաթոլիկ քարոզիչները հայկական միջավայր էին թափանցում հայկական որոշակի պատրաստականությամբ, որը արտահայտվում էր ոչ միայն հայերեն ժամասացությամբ, այլև հայ կրոնական «ծեսերի զգեստավորմամբ»[2]։ Նրանք այդպես էին վարվում միջնադարում. գործունեության այդ մեթոդը չէր կերպարանափոխվել նաև այժմ։

Հ. Արղությանին ընդառաջելով՝ Գ. Ա. Պոտյոմկինը 1780 թվականի ապրիլի 17-ին հատուկ հրաման է իջեցնում Ազովի նահանգապետ Վ. Ա. Չերկովի անունով, պահանջելով կանխել կաթոլիկ քարոզիչների այդօրինակ գործունեությունը[3]։ Ելնելով դրանից, 1781 թվականի հունվարի 26-ին Վ. Ա. Չերկովը իր հերթին համանման բովանդակությամբ գրավոր կարգադրություն է անում կաթոլիկ հայերի առաջնորդ Հակոբ վարդապետին[4]։ Սակայն արդելակիչ այս կարգադրությունները հաճախ շրջանցվում էին կաթոլիկ քարոզիչների կողմից, մի հանգամանք, որը և ստիպում է Հ. Ար-

1 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 139, ց. 1, գ. 1465, թթ. 13—14։
2 Նույն տեղում։
3 Նույն տեղում, թ. 16։
4 Նույն տեղում։

դությանին 1793 թվականի նոյեմբերի 12-ին դիմելու Տավրիկիայի մարզի փոխ-նահանգապետ Կ. Ի. Գաբլենցին։ Նա գտնում էր, որ Վ. Ա. Չերկովի կարգադրությունը դժվար թե «հայանի լինի այժմ Տավրիկիայի մարզում գտնվող հայրերին (կաթոլիկ—Վ. Մ.), քանի որ Ղարասուբազարով անցնելիս,—գրում էր Հ. Արղությանը,—այնտեղի հայ հասարակությունից ես իմացա, որ հինգ հոգի հայեր այդ նույն արգելումից հետո դարձել են կաթոլիկներ, իրենց բնակությունները թողնելով հայ դավանանքի մեջ»[5]։ Նշելով դավանափոխների անունները, Հ. Արղությանը փոխ-նահանգապետից խնդրում էր նրանց նկատմամբ, և առհասարակ, կիրառել 1780 թվականի արգելակիչ հրամանը[6]։ Այս առթիվ հատուկ գրություն է իջեցվում Ղարասուբազարի հայ-կաթոլիկական դատարանի անունով։ Կաթոլիկություն ընդունած հայերի կողմից դատարանին ուղղած բացատրություններից պարզվում է, որ սրանք այդ քայլին էին դիմել զուտ Ղրիմում մնալու և նոր նախիջևան չվերադառնալու նպատակով[7]։ Հայ-կաթոլիկական դատարանը փորձում է թաքցնել լուսավորչականությունից հեռացած և կաթոլիկություն ընդունած հայերին, թեև փաստաթղթերից որոշակիորեն պարզվում է, որ նրանք լուսավորչական են, իսկ նրանց հարազատների ու ընտանիքների մի մասն էլ դեռ շարունակում էր մնալ նոր Նախիջևանում[8]։ Ունկընդրելով Ղարասուբազարի և նոր Նախիջևանի հայության բողոքներին և նրանց ուղարկած անտարակելի փաստերին, Հ. Արղությանը 1794 թվականի փետրվարին ոչ միայն նորից դիմում է Կ. Ի. Գաբլենցին, այլև այդ գործի համար հանձնարարություններ է տալիս պրապորշչիկ Քարակաշին[9]։ Փետրվարի 27-ին գրած իր նամակում Հ. Արղությանը հայտնում էր. «Ամեն ինչից համոզված լինելով, որ իրոք արդեն կանխվելու են կաթոլիկների և Ղարասուբազարի նրանց հայրերի մշտական կեղծիքները արդարությունը ժխտելու վերաբերյալ, ես այլևս մտադիր չէի անհանգստացնելու Ձերդ գերազանցությանը։ Բայց որովհետև տեղեկանում եմ, որ նրանք (կաթոլիկ հայրերը—Վ. Մ.) բազմապատկում են դրանք (կեղծիքները— Վ. Մ.) և կաթոլիկություն ընդունած հայերին պաշտպանելու միջոցով են ինձ հայտնում նրանց քննելու մասին, ես ստիպ-

5 Նույն տեղում, թ. 13։
6 Նույն տեղում։
7 Նույն տեղում, թ. 23։
8 Նույն տեղում, թ. 37։
9 Նույն տեղում, թ. 35։

ված եմ խնդրել Ձեզ, ողորմած տեր, անուշադիր չթողնելու նաև այն պատճառաբանությունները, որոնք Ձեզ կներկայացնի պարոն պրապորշչիկ Քարակաշը, որին այս գործի կապակցությամբ որբված է իմ վերահանձնարարականը»[10]:

Պիտի նշել, որ կաթոլիկության դեմ այս շրջանում մղված պայքարը հիմնականում հասավ իր նպատակին, և կաթոլիկ քարոզիչներին չհաջողվեց ձեռք բերել որևէ շոշափելի հաջողություն դրիմահայության մեջ: Այդ ամենին չէր նշանակում, թե հետագայում նրանք հրաժարվեցին իրենց նկրտումներից: 1821 թվականին Մանվել վրդ. Գյումուշխանեցին բողոքում է ռուսահայոց առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսին ճիվիլիա կարգավորների կողմից Հին Ղրիմի հայերին պատճառած նեղությունների մասին՝ «խռովայոյզ արարմանց եկվիտաց կողմանցս ընդ դեմ հայոց դաւանութիւնն»[11]: Իր հերթին Հովհաննես արքեպիսկոպոսը բողոքում է Ռուսաստանի կաթոլիկների առաջնորդ Մեստրենցևիչ Բոգուշին, որը, սակայն, բավարար պատասխան չի տալիս: Սա էլ ստիպում է թեմի առաջնորդին դիմելու կայսերը ու հոգևոր գործերի դեպարտամենտին, միաժամանակ հանձնարարելով Մանվել վարդապետին՝ համբերատար վարել վեճը կաթոլիկների դեմ, տեղիք չտալ անկարգությունների և դիմել Թեոդոսիայի քաղաքագլխի օգնությանը, որին ինքը՝ Հովհաննես արքեպիսկոպոսը, նույնպես համարյա պրոյեկտ է ուղարկել[12]:

40-ական թվականներին կաթոլիկ հայրերը ուժեղացնում են իրենց «քաղաքակիրթ» ոտնձգությունները դրիմահայոց մեջ, որի հետևանքով առաջանում են դժգոհություններ ու բողոքներ: Գործին միջամտում է աշխարհահռչակ նկարիչ Հովհաննես Այվազովսկին, կառավարությանն ու Ներսես Աշտարակեցուն ներկայացնելով կաթոլիկ հայրերին Ղրիմից վտարելու, Մխիթարյանների հրատարակությունների առաքումը արգելելու պահանջը: Կաթողիկոսին ուղղված իր նամակում (17 մայիսի 1846 թ.) երիտասարդ Այվազովսկին յուրաքերում է կաթոլիկացման վնասաբեր հետևանքներին և դրան դիմագրավելու անհրաժեշտության լայնախոհ ընկալում, քաղաքացիական պարտքի զգացում:

Ստորև բերվող քաղվածքը վկայում է նաև այն մասին, որ Մխիթարյան հոգևորականներին Ղրիմից հեռացնելու խնդրանքով նա անձամբ Աշտարակեցուն էր դիմել դեռևս այդ նամակից առաջ.

10 Նույն տեղում, թ. 35:

11 Մատենադարան, ֆ. կաթ. դիվան, թղթ. 38, վավ. 185ա:

12 Նույն տեղում, վավ. 185բ:

«...կը համարձակիմ հիշել այն մասին, որոնց համար ես ունեցա բարեբաղդություն անձամբ խոսելու Ձեր Վեհափառությանը. այն է՝ հեռացնել Մխիթարյանները այս կողմերին և նույն Մխիթարյաններուն տրած գրքերուն Ռուսիա գալը արգելել. այս բանեռուն հարկավորությունը, բացի հայտնի պատճառներեն, որոնք Ձեր Վեհափառությունը գիտե, այս տեղի եկվիդը՝ Հայր Մինաս և Հայր Վրթանես բավական դեղեցին մեր ժողովուրդները (ասել է թե լուսավորչական և կաթոլիկ հայերին— Վ. Մ.) անհարկի խոսքերով, Ձեր Վեհափառությանը ճանապարհորդութենեն հետո, որոնց համբերությունը չի բավականանար. շատ ցավ կու տա մեր շատ ժողովրդյան նոցա արած անկարգ խոսքերն, որոնց պատմելով մի ընդ միոջէ Ձեր Վեհափառությունը անհանգիստ անել չեմ կամենար»[13]:

Հ. Այվազովսկին գիտակցում էր, որ ժողովրդի անուսյալ վիճակի հետևանքով կաթոլիկական քարոզը անխուսափելիորեն պիտի «անկարգ տպավորություն» առաջ բերեր: Եվ դրա համար էլ «առանց կարծյաց» նա գտնում էր, որ «Հռոմեահայոց քահանայիցս այս տեղերեն հեռանալները շատ օգուտ կկարենա գոյացնել մեզ, ազգին»: Ապա անդրադառնալով այս խնդրի շուրջը կաթոդիկոսին անհանգստացնելու շարժառիթներին, Հ. Այվազովսկին նշում է դրա անհրաժեշտությունն ու կարևորությունը հայերի համար: «Խնդրեմ Ձեր Վեհափառութենեն, որ թողություն շնորհեք ինձ, որ թեպետ ես ինձ բավական թույլ տվի այս բաներուն վրա խոսելու՝ բայց պատճառը, նախ իմ պիտենալս է, որ այս բաներեն մեր ազգը կրնա նրջանկանալ. երկրորդ ժամանակն ալ կը ներե, որ այս բաներով շահվիմք և վերջապես կապավինիմ Ձեր Վեհափառությանը կամացը, որովհետև գիտեմ, որ Ձեր հոգին բարեբաղդությանը ցանկությունը Ձեզ հետ է միշտ»[14]:

Հ. Այվազովսկու այս նամակի լույսի տակ դյուրին է ընկալել այն, թե ինչու էր նա այս շրջանում և թե դրանից տարիներ առաջ ու հետո համառորեն համոզում իր ավագ եղբորը՝ դարձ կատարելու դեպի հայրենի եկեղեցին: Այդ մասին, սակայն, մի փոքր հետո:

Հռոմը հանգիստ չէր թողնում նաև բուն հայ-կաթոլիկներին: Հարցն այն է, որ հայ կաթոլիկները, թեև գտնվում էին Հռոմի հն-

13 *Айвазовский*, Документы и материалы, Ереван, стр. 91—92.

14 Նույն տեղում:

թակայության տակ, սակայն լիովին պահպանում էին իրենց նախնավանդ ազգային սովորություններն ու ծեսերը՝ ժամասացությունը նրանց մոտ կատարվում էր հայերեն և հայ եկեղեցական աբարողություններով, ստորին հոգևորականությունն ուներ ամուսնության իրավունք, քահանաները կրում էին մորուք և հագնվում էին հայ հոգևորականների նման[15]։ Չնայած Հռոմի հարյուրամյակներ թափած ջանքերին, հայ կաթոլիկները կազմում էին հոմանակաթոլիկներից անջատ առանձին կրոնական համայնք[16]։ Այս բոլորը, բնականաբար, Հռոմի սրտովը չէր, բայց վերջինս գործում էր «ավելի լավ է մի բան պահպանել, քան թե ամբողջը կորցնել» սկզբունքով, անցյալի փորձից գիտակցելով, որ հակառակ պարագայում, այսինքն հայ կաթոլիկների ազգային եկեղեցական ծեսերն ու արարողությունները վերացնելու դեպքում, առհասարակ կվրկվի նրանցից։ Սրանով էլ հենց բացատրվում է Հռոմի «հանդուրժամտությունը» հայ կաթոլիկ եկեղեցու այդ «ազատության» նկատմամբ, մի երևույթ, որը Հռոմի մոտ արդեն ավանդական ուժ էր ստացել։ Տակավին XV դարում միսիոներներին ուղղած իր խրատականներից մեկում Հռոմը հրահանգում էր. «Որովհետև հայերը շատ են կապված իրենց սովորություններին ու ծեսերին, կաթոլիկ կրոնի հաջողության համար պետք է բավականանալ միայն նրանով, որ հայերն ընդունեն հռոմեական եկեղեցու դավանանքը, իսկ հայ եկեղեցական ծեսերն ու ավանդությունները պետք է թողնել անվթար։ Եվ, վերջապես, հայերից շատերը չգիտեն, թե ինչ բան է հերձվածը։ Միսիոների ճարպկությունը նրա համար է, որ նրանց կաթոլիկ դարձնել, առանց որ նրանք կնկատեն իրենց հերձվածող կամ հերետիկոս լինելը»[17]։ Հարմար առիթի դեպքում Հռոմի ներկայացուցիչները խախտում էին այս սկզբունքն ու հարձակումներ գործում հայ-կաթոլիկների «ազատությունների» վրա։ Վերջիններիս կողմից Հռոմին ցույց տված դիմադրությունն իր էությամբ ազգային դոյատևման համար մղված մի պայքար էր՝ կրոնական քողարկմամբ, և այդ պայքարը շարունակվեց մինչև առաջին համաշխարհային պատերազմը։

Այդպիսի մի պայքար սկսեցին Թեոդոսիայի հայ-կաթոլիկական համայնքը և առհասարակ Ղրիմի հայ-կաթոլիկները Հռոմի դրածո հոգևորականների դեմ 1909—1916 թվականներին, երբ այս

15 ЦГИА СССР, ф. 821, оп. 125, д. 511, л. 85.

16 Նույն տեղում, թ. 121։

17 «Հայրենիք», ամսագիր, Բոստոն, 1933, № 4, էջ 114։

վերջինները փորձեցին Թեոդոսիայի հայ-կաթոլիկական եկեղեցուց դուրս մղել այն ամենը, ինչ կապված է ազգային եկեղեցու հետ, և այն վերածել լատինականի։ Մինչդեռ Թեոդոսիայի հայ-կաթոլիկական եկեղեցու կախումը Հռոմից այնքան ձևական էր, որ բազաթի հայ-կաթոլիկական համայնքի մեջ, այդ հանգամանքի չնայրհիվ, մտել էին նաև Հռոմից դժգոհ օտարազգի այլ կաթոլիկներ, որոնց պատգամները դեռևս անցյալ դարում էին եկել Ռուսաստան։ Թեոդոսիայի քաղաքագլուխ, տեղի հայ-կաթոլիկական եկեղեցու սինդիկ, ազգությամբ իտալացի Դուրանտեն Դ. Զարիխյանին (որը 1916 թվականին Սիմֆերոպոլ էր ժամանել առաքելական կառավարչի գործերը ստուգելու համար) տված ցուցմունքում ասաց. «Ղրիմում ամենուրեք՝ Թեոդոսիայի, Սիմֆերոպոլի, Զարասուբազարի, Կերչի և մյուս քաղաքների մեջ նոքա (օտարազգի կաթոլիկները— Վ. Մ.) տեսնում էին, որ հայ-կաթոլիկ հոգևորականությունը հեռու է պահում իրեն լատին ծեսի մյուս հոգևորականությունից, չհամակրելով նրա ուղղությունը, և հենց այդ իսկ պատճառով Հռոմի Հիզվիտների խնամակալությունից խղճի գործում գրավում էր նոցա (օտարազգի կաթոլիկներին— Վ. Մ.) դեպի ի ծոցը հայ կաթոլիկ եկեղեցվո։ Պետք է գիտենալ,—շարունակում է Դուրանտեն,— որ այն ժամանակները հայ կաթոլիկների եկեղեցական համայնքների գլուխ Ղրիմում կանգնած էին ամենամարդասեր և լուսավորյալ հոգևոր հովիվներ Վենետիկի Մխիթարյան ուխտից, որոց համակրանքը միշտ Ռուսաստանի կողմն էր և նոցա կսկիծը Հռոմից կրոնական գործերում միայն ձևական էր, առանց որևէ բազմական դիտումների»[18] (ընդգծումը մերն է — Վ. Մ.)։

Թեոդոսիայում ծավալված անհաշտություններին ու հակամարտություններին առիթ էր տվել Հռոմի պաշտպան հոգևորականների հավակնությունը՝ տիրանալու հայ-կաթոլիկների եկեղեցուն և այնտեղ արարողությունները կատարելու ըստ լատինական ծեսի։ Հարցի պատմությունը հետևյալն էր. Եկատերինա II-ը 1787 թվականի մայիսին, Ղրիմ կատարած իր այցելության ժամանակ, Թեոդոսիայի հայ-կաթոլիկների ներկայացուցիչների խընդրանքով նրանց համայնքին է նվիրում թաթարական մզկիթը՝ եկեղեցու վերածելու համար, որովհետև պատերազմի ժամանակ, ի թիվս այլ շենքերի, հիմնովին քանդվել էր նաև հայ-կաթոլիկների

18 Մատենադարանի արխիվ, անհատ. անձ., ֆոնդ, թղթ. 88, վավ. 5, թ. 33։

ս. Վերափոխման եկեղեցին[19]։ Այդ եկեղեցում ընդհուպ մինչև 1909 թվականը արարողությունները կատարում էր հայ-կաթոլիկ քահանան, հայկական ծեսով. եկեղեցին էին հաճախում նաև այլազգի կաթոլիկներ (ֆրանսիացիներ, իտալացիներ, լհհեր և այլն)[20]։ 1909 թվականին կաթոլիկ եպիսկոպոս Կեսլերը ինքնագլուխ կերպով եկեղեցուց հեռացնում է հայ կաթոլիկ քահանա Գրիգոր Սաֆարովին և նրա փոխարեն նշանակում Վարբուտյանսկուն։ Սա առաջացնում է հայերի վճռական բողոքը, որովհետև դա նշանակում էր զրկվել ազգային եկեղեցու ավանդություններից և ամեն ինչում ենթարկվել Հռոմին, լատինական ծեսերին, հետևապես և կանոնել ձուլման բացահայտ ուղու վրա։ Հայ-կաթոլիկական համայնքի հուղումները ստիպում են կաթոլիկ հոգևորականության գլխավորներին առայժմ փոխել իրենց վճիռը, և եկեղեցում կրկին վերականգնվում է հայ-կաթոլիկ քահանայի պաշտոնը[21]։ Սակայն դա ժամանակավոր նահանջ էր. 1911 թվականին Կեսլերը կրկին հեռացնում է հայ-կաթոլիկ քահանա Տեր-Գյուլյանին (որովհետև նա հրաժարվում էր ժամասացություններն ու արարողությունները կատարել լատինական ծեսով) և նրա փոխարեն նշանակում եպիսկոպոս Յերին[22]։ Սա մեծ հուզումներ է առաջացնում քաղաքի հայ կաթոլիկների մեջ։ «Օտարազգիականների դեպարտամենտի դիրեկտորի հեռագրով արած կարգադրությամբ, ստացված բողոքների համաձայն, ըստ որոնց, հայ քահանան արգելում է լհհ հոգևորականությանը ժամասացություններ անել ընդհանուր հայ-կաթոլիկական եկեղեցում, վերջինս կնքված է. պաշտոնից հեռացված հայ քահանային առաջարկված է հեռանալ Թեոդոսիայից։ Հայ համայնքը հուզված է. հեռագրեր են ուղարկվում Վ. Ն. Կոկովցևին, ներքին գործերի մինիստրի տեղակալ Ս. Ե. Կրիժանովսկուն և օտարազգիականների դեպարտամենտի դիրեկտոր Ա. Ն. Խարուզինին՝ տաճարը վերադարձնելու միջնորդությամբ, որին հայերը 125 տարի է տիրում են»,—գրում էր «Русское слово» թերթը այդ օրերին[23]։ Նույնն էր հաղորդում «Биржевые ведомости» թերթը[24]։ Եկեղեցում նշանակված լհհ քյոնձր բռնագրավում է հարակից

19 ЦГИА СССР, ф. 821, оп. 139, д. 58, л. 15 об.
20 Նույն տեղում, թ. 12։
21 Նույն տեղում, թ. 17։
22 Նույն տեղում։
23 «Русское слово», 1911, 24. XI.
24 «Биржевые ведомости», 1911, 24. XI.

չենքերը և ջանում տիրանալ նույնիսկ եկեղեցուն կից ծխական դպրոցին[25]։

Այս հակամարտությունների շրջանում և դրանից էլ հետո, ընդհուպ մինչև 1916 թվականը, Հռոմի աջ թևն էր դարձել «պապից ավելի կաթոլիկ» սխրահռչակ Սարգիս վրդ. Տեր-Աբրահամյանը, որը 1909 թվականին նշանակվել էր Ռուսաստանում ապրող հայ-կաթոլիկների առաքելական կառավարիչ։ Սա պատեհ դիպվածը բաց չէր թողնում նեղելու հայ-կաթոլիկ քահանաներին, մանավանդ վենետիկյան կողմնորոշում ունեցողներին, որովհետև, ինչպես ասված էր նրա վերաբերյալ ղրիմահայ կաթոլիկների բողոքներից մեկում, Վենետիկի Մխիթարյանների ուղղության քահանաները անփոփոխ կերպով պահպանում էին հայկական ծեսերն ու սովորությունները, որ ձեռնտու չէր Հռոմին[26]։ Սարգիս վրդ. Տեր-Աբրահամյանի 1909—1916 թվականների ունեցած հակահայ գործունեության մասին ղրիմահայ կաթոլիկները 1916 թվականին բազմաթիվ դիմումներ ու բողոքներ են ներկայացնում Գրիգոր Չարիխյանին։ Ահա Գ. Չարիխյանին ներկայացրած բողոքներից մեկը. «Իբրև հարազատ պրոպագանդիստ մի կողմից նա (Տեր-Աբրահամյանը— Վ. Մ.) բացասական դերը է բռնում Վենետիկի Մխիթարյանների վերաբերմամբ, որոնք հավատարիմ են մնացած հայ եկեղեցու հինավուրց սովորություններին և հայ-կաթոլիկների արտոնություններին, իսկ մյուս կողմից... արձակ հովանավորում էր Հռոմի կոլեջի քահանաներին, որոնք կողմնակից էին լատին ծեսի և ձգտում էին հայ կաթոլիկների եկեղեցական կյանքի կարգ ու կանոնը... ենթարկել հռոմեական կաթոլիկ եկեղեցվո համար սահմանված կանոններին»[27]։ Տեր-Աբրահամյանի կարգադրությամբ Ղրիմի հայ-կաթոլիկ եկեղեցիներից դուրս է մղվում «ձայնավոր պատարագը», հայ հոգևորականներին ստիպում են կրել լատին հոգևորականների զգեստներ, իսկ Ղարասուբազարում «ժամասացությունը կատարել լատին եկեղեցվո ծեսերով»[28]։ Առաքելական կառավարչի հակահայ միտումները հասնում են այնպիսի անպատկառության, որ նա պատերազմի ժամանակ անգամ փորձեր է անում խափանել պատերազմի զրկանքներին զոհ դարձած հայ ընտանիքներին օգնելու գործը[29]։

25 ЦГИА СССР, ф. 821, оп. 139, д. 58, л. 70.
26 Մատենադարանի արխիվ, անհատ. անձ., ֆոնդ, թղթ. 88, վավ. 5, թ. 11։
27 Նույն տեղում, թ. 20։
28 Նույն տեղում, թ. 26։
29 Նույն տեղում։

Առաքելական կառավարիչ Սարգիս վարդապետ Տեր-Աբրահամյանի՝ ըստ էության հակահայ գործունեությանը այդ նույն թվականներին համառորեն դիմադրում են նաև Անդրկովկասի շրջանների և մանավանդ Շիրակի ու Ախալցխայի կաթոլիկ հայերը։ Հետագայում սրա դեմքն ավելի է պարզվում։ Մինչև այժմ էլ տարեց հայ-կաթոլիկներից շատերը հիշում են, թե ինչպես նա հայ-կաթոլիկական եկեղեցի կառուցելու պատրվակով Բաթումում ապաստան գտած աղքատ ու ընչազուրկ հայերից ժողոված մի մեծ գումար յուրացնում և ժողովրդի ինքնագահատանից խուսափելու համար ճողոպրում է Հռոմ՝ իր հոգևոր պետերի մոտ։

Միանգամայն պարզ է, որ հայ-կաթոլիկների ազգային-եկեղեցական սովորությունների համար մղված պայքարը, ըստ էության, մի մարտահրավեր էր ընդդեմ Հռոմի սոսիմիլատորական ձգտումների, և դրա համար էլ նրան մասնակից էին դարձրել ոչ միայն Ղրիմի, այլև ամբողջ Կովկասի հայ-կաթոլիկական համայնքները։

* * *

Անցյալ դարի 50—60-ական թվականներին ղրիմահայության հետ անմիջապես առնչվող հասարակական-քաղաքական և մշակութային մարդի մի քանի խնդիրներ այնպիսի ընթացք են ունենում, որ որոշ իմաստով առանում են համահայկական բնույթ, իրենց շուրջը բարձրացած վեճերին և առաջացած ներհակություններին մասնակից դարձնելով արևելահայ ու արևմտահայ հասարակական գործիչների։ Մենք ամենից առաջ նկատի ունենք Խալիբյան ուսումնարանի հիմնադրման և Նախիջևան-Բեսարաբիայի հայ-լուսավորչական թեմի կենտրոնը Քիշնևից Թեոդոսիա փոխադրելու առթիվ ծագած երկարատև վեճերն ու հակամարտությունները, որոնք առնչվում էին թեմի վիճակավոր առաջնորդի՝ Գաբրիել վրդ. Այվազովսկու եկեղեցական և կրթական գործունեության հետ։ Ընդ որում, մենք նպատակ չունենք զբաղվելու Գաբրիել վարդապետի հասարակական-քաղաքական հայացքների քննարկմամբ և գնահատմամբ, և դա բնավ ոչ թե նրա համար, որ դրանց մասին ակնարկներ արվել են հայագիտական գրականության մեջ, այլ այն պատճառով, որ միանգամայն պարզ ու որոշակի են հասարակական ու քաղաքական հայացքները մի վարդապետի, այժմ արդեն վիճակավոր առաջնորդի, որը ընդամենը սերտորեն կապված էր հայ հարուստ վերնախավի, ցարական արքունիքի և բարձր պաշտոնեության հետ և վերջիններիս օգնության ու հայրենի եկեղեցու շուրջը համախմբելու հետ էր նաև առնչում իր ազգային-կրթական նպատակների իրագործումը, հայ կուլտուրայի զարգացումը։ Կղեր. Գ. Այվազովսկուն, սակայն, չենք կարող չդասել իր կայուն սկզբունքներն ունեցող այն քչերի շարքը, որոնք ոչ միայն չէին հակադրվում «իրենց ժամանակաշրջանի գիտության ու բազաքակրթության լույսին», այլև «նույնիսկ հանդիսանում էին հայ լուսավորական օջախների մեկենասներ ու հովանավորողներ»[30]։ Մեզ հետաքրքրողը առավելապես Գ. Այվազովսկու կուլտուր-կրթական գործունեությունն է, որչափով այն առնչվում էր ղրիմահայ կյանքի հետ մի ժամանակաշրջանում, երբ հայ ժողովուրդն ապրում էր ազգային զարթոնք և երբ «արևելահայ հասարակական հոսանքների ձգտումներն ու մտահղացությունները այս ժամանակաշրջանում դառնում էին հայ ժողովրդի ազգային կազմավորման, նրա ազգային-քաղաքական և ազգային-մշակութային կյանքի հարուցած պահանջների ու խնդիրների շուրջը»[31]։

Բայց կա մի հանգամանք, որը սկզբից ևեթ, իբրև վերապահում, կուզենայինք նշել։ Մեր կարծիքով բոլորովին ճիշտ չէր լինի անցյալի այս կամ այն գործչին ներկայացնել իրենց ապրած ժամանակից դուրս պահանջներ կամ թե նրանց համար չափանիշ ընդունել առաջավոր մտածողներին, ինչպես օրինակ, անցյալ դարի 60-ական թվականների համար, ասենք, Մ. Նալբանդյանին։ Առաջին դեպքում դիմ դնացած կլինեինք պատմական գիտության այն հստակ պահանջին, թե անհատի գործունեության այս կամ այն կողմը բնութագրելիս պետք է անպայման նկատի ունենալ նրա ժամանակի պայմանները և ոչ թե տալագա սերունդներին պարզ դարձած խնդիրների պահանջները։ Իսկ երկրորդ դեպքում մենք հողին կհավասարեցնեինք հիշյալ ժամանակաշրջանի (տվյալ դեպքում 60-ական թվականների) բոլոր գործիչներին և նրանց ծառայությունները, որովհետև իր առաջադիմական, հեղափոխական-դեմոկրատական հայացքներով և բազմակողմանի հասունության առումով հայ իրականության մեջ Մ. Նալբանդյանը մի այնպիսի գագաթ էր, որի բարձրությանը չհասավ նրա ժամանակի հայ հա-

30 Ա. Գ. Հովհաննիսյան, *19-րդ դարի 50—60-ական թվականների արևելահայ հասարակական-քաղաքական հոսանքները*, տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1965, № 4 (31), էջ 57։

31 Նույն տեղում, էջ 56։

տարակական և ոչ մի գործիչ: Պատմաբանի պարտքն է լուսաբանել մեր անցյալի պատմությունը իր ամբողջության մեջ, գործիչներին գնահատել նրանց խաղացած դերով՝ դրական թե բացասական, միշտ մոռացության չտալով դասակարգային մոտեցումը և այն հանգամանքը, որ նրանք եղել են իրենց դասակարգի և էպոխայի ծնունդը: Ընդամին, անհատի գործունեության բացասական կողմերի նշումը չպիտի անտեսի նրա կատարած դրական գործը, և ընդհակառակը: Բոլոր պարագաներում, չպիտի զեկավարվել միայն ժխտելու և կամ դրվատելու սկզբունքով. հարկ է օբյեկտիվությամբ տեղադրել տվյալ դասակարգին ու նրա գործիչներին՝ յուրաքանչյուր ժողովրդի տվյալ ժամանակաշրջանի պատմական զարգացմանը և տակա հնարավորություններին համապատասխան:

Գ. Այվազովսկու Ղրիմում ունեցած կուլտուր-կրթական գործունեությունը լուսաբանելիս մենք աշխատել ենք, որքան հնարավոր է, հավատարիմ մնալ վերևում նշված սկզբունքին:

Կրթական ամենամեծ ձեռնարկումը, որը կապված է Գ. Այվազովսկու գործունեության հետ Ղրիմում, դա Խալիբյան ուսումնարանն էր, որի հիմնադրումը և հետագա գործունեությունը սերտորեն միախառնվեցին ղրիմահայերի (և ոչ միայն ղրիմահայերի, նաև Թեմի մյուս համայնքների և մանավանդ նոր նախիջևանցիների) հասարակական կյանքի մի քանի կնճռոտ խնդիրներին:

Հարավային Ռուսաստանում հայերի համար ժամանակի կրթական մակարդակին ու պահանջներին համապատասխան ուսումնարան հիմնելու վերաբերյալ Գ. Այվազովսկու ձեռնարկած քայլերը սկիզբ էին առնում այն բախումներից, որ Արևելյան պատերազմին նախորդած տասնամյակում մղում էին հայերը Հոռմի կողմից վարվող հակահայ քայլերի դեմ: Այդ պայքարը, որ հայ կաթոլիկներին բաժանել էր երկու խմբավորման, իր մի թևում, որպես պարագլուխ, ուներ Անտոն վրդ. Հասունյանին, որի կուսակիցները լատինասեր էին և «արհամարհին ու անարգին զամենայն ինչ գհայոց»[32] և որի կյանքը, Բաֆֆու բնորոշմամբ, ներկայացնում էր ինտրիգների, խռովությունների և ապստամբությունների մի անդրնդահատ շարք: Իսկ մյուս թևը, որի կողմն էր կաթոլիկ հայության ճնշող մեծամասնությունը, գլխավորում էին Վենետիկի Մխիթարյանները. այդ թևը ձգտում էր անկորուստ պահել ազգային ավանդություններն ու ծեսերը[33]: Կոստանդնուպոլսում սկիզբ առած այս

[32] ЦГИА СССР, ф. 821, оп. 140, д. 24/3136, ч. II, л. 7.

[33] Նույն տեղում:

հակամարտությունն ընդգրկում է գրեթե ամբողջ կաթոլիկ հայությանը, որովհետև այն շոշափում էր բոլորի ազգային շահերը: «Հակահասունյանների ապստամբությունը մի համարձակ, միևնույն ժամանակ հակակրական բողոք էր ընդդեմ Հոռմի քահանայապետի... Նոքա (հակահասունյանները—Վ. Մ.) ճանաչեցին այն վտանգի սխալը, թե արևմուտքից նրանց օգուտ չկա, թե նորանոր պետք է գրավել տիրող պետության հովանավորությունը, հիմնվել յուրյանց սեպհական ուժերի վրա և պահպանել յուրյանց ազատությունը և ազգային իրավունքները»[34]:

Միջամտելով գործին, Հոռմի պապը Մխիթարյաններին հանձնարարում է «նորոյ դաւանութեան և յայտարարութեան հաւատարիմ հպատակութեան իւրեանց առ ամենայն հրամանս և ակնարկութեանս աթոռոյն Հոռմայ և պաշտօնէից ի նմանէ կարգելոց»[35]: Մխիթարյանների առաջնորդ Գևորգ աբբա Հյուրմյուզյանը սպառնալիքի տակ «յանձին կալաւ ամենայն ղայատարարութիւնն զայն առնարժան, և զբաղումս յիւրոցն միաբանից բռնադատեաց ձեռնադրել ի նոյն»[36]: 1856 թվականի մայիսի 18-ին ներսես կաթողիկոսին արած իրենց դիմումում հայտնելով այս բոլորի մասին, Գ. Այվազովսկին և նրա կուսակիցները Սարգիս Թեոդորյան և Ամբրոսիոս Գալֆայան վարդապետները ավելացնում էին, թե դրանով «Մխիթարեան միաբանութիւն իրաւամբ համարեցաւ իմն մասնաւոր իրաւանց ազգիս և միանգամայն նախատիճ ուղղափառութեան վարդապետութեան Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ», որովհետև Պիոս 9-րդ պապին ուղղված իր գրության մեջ Հյուրմուզյանը Հոռմի շուրջը համախմբվելուց հրաժարվող հայերին համարում էր «հերձուածողք և հերետիկոսք»[37]: Այս ոգով էլ 1854 թվականի փետրվարի 2-ին իջեցվում է Պիոս 9-րդ պապի կոնդակը:

Փարիզի Մուրադյան վարժարանի տեսուչներ վերոհիշյալ երեք վարդապետները չեն ենթարկվում Մխիթարյան աբբայի «անբիծ հայտարարութեանը» և երկու-երեք տարի շարունակ բողոքում են նրա դեմ, «որով և առելիք եղաք յայս նոցին, և կասկածելիք առաջի հռոմեական աթոռոյն»[38]: Վարդապետները գիտակցել էին, որ

[34] Բաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 9, Երևան, 1958, էջ 85:

[35] ЦГИА СССР, ф. 821, оп. 140, д. 24/3136, ч. II, л. 7.

[36] Նույն տեղում:

[37] Նույն տեղում:

[38] Նույն տեղում, թ. 7բ:

«որ որ պապական սկզբունքը և հռոմեական տիրապետության հոգին ավելի զորավոր է՝ քան թե որ և իցէ կրոնական, բարոյական և քաղաքական սկզբունք, այնտեղի ազատությունը անունով է միայն և ոչ իրական»[39]: Նրանք դիմադրում են նաև Հյուրմուզյանի հրամանին, «որով նոյն առաջնորդ զրդեալ ի Հռովմայ պաշտօնէիցն՝ կամէր նախ զվարժարանն զայն ի Հռովմ փոխադրել, և ապա զէթ զայն պահանջէր, զի կաթոլիկաց ևեթ մանկունս ընդունիցիմք ի վարժարանն յայն ազգային յաշակերտութիւն, կամ թէ զհայոց մանկտին ևս ընկալեալ՝ ի կաթոլիկութիւն նոսա շրջեսցուք»[40]:

Գ. Այվազովսկին, Ս. Թեոդորյանը և Ա. Գալֆայանը չեն ենթարկվում աբբահոր կարգադրությանը, որի պատճառով առաջինը անմիջապես հեռացվում է Մուրադյան վարժարանից: Նույն վիճակին են արժանանում նաև մյուս երկուսը՝ վեց ամիս հետո Փարիզ ժամանած Հյուրմուզյանի իսկ ձեռքով:

1855 թվականին հեռանալով Մխիթարյաններից, սրանք «լուսավորչական հայ պատանւոց կրթութեան համար» Փարիզի Գրենել արվարձանում հիմնում են Հայկազյան վարժարանը՝ ապավինած Կ. Պոլսի հայ ամիրաների և մեծահարուստների նյութական օգնությանն ու հորդորին[41]: Սակայն թե Մխիթարյանները և թե Հռոմամոլ հոգևորականությունը, ինչպես և Ֆրանսիայի եկեղեցական ու պրոպագանդայի բարձրաստիճան պաշտոնեությունը սվիններով են դիմավորում Հայկազյան վարժարանի ստեղծումը՝ իբրև կաթոլիկությանը վնասակար մի հիմնարկության: Որոնելով քաղաքական պաշտպանություն, երեք վարդապետները դիմում են նախ սուլթանական կառավարությանը, հայցելով նրա հովանավորությունը: Սակայն, ինչպես ասված է ժամանակի փաստաթղթերից մեկում, «նկատի ունենալով մի կողմից պապականների բանսարկությունները, իսկ մյուս կողմից Թուրքիայի հովանավորության անկայուն և երերուն լինելը»[42], Գ. Այվազովսկին իր հայցքներն ուղղում է դեպի Ռուսաստան, քաջ գիտակցելով, որ Ռուսաստանի հարաւում հայկական դպրոց բացելու իր մտադրությունը լիովին համապատասխանում է ռուսական կառավարության արևելյան քաղաքականությանը, որը Ղրիմի պատերազմից հետո ապրելով բավական տկար վիճակ՝ միտում էր շտկել իր դրությունը: Բայց նախքան ցարական իշխանություններին դիմելը, Գ. Այվազովսկին իր կուսակիցների հետ վճռում են վերջնականապես խզել կապերը կաթոլիկության և Հռոմի՝ որպես հայ ժողովրդի ազգային ինքնությանը սպառնացող ախոյանների հետ և վերադառնալ հայրենի եկեղեցու գիրկը: Այդ նպատակով նրանք դիմումներ են անում նախ Կ. Պոլսի պատրիարքին և ապա՝ Ներսես Աշտարակեցուն: Պատրիարքն ու կաթողիկոսը լիասիրտ ընդառաջում են նրանց «դարձ»-ին:

Կաթոլիկ վարդապետների «դարձի» պատճառները տարբեր մոտեցմամբ շոշափվել են հայ մի քանի հեղինակների, այդ թվում նաև ակադեմիկոսներ Ա. Հովհաննիսյանի և Ա. Կարինյանի աշխատություններում[43]: Միևնույն իրավացի է Ա. Կարինյանը, երբ նշում է, թե Գ. Այվազովսկին ձայնակցում էր «հայրենասիրական» դաղափարախոսությանը և որ դա «ոչ միայն «պրակտիկա» էր, այլև միանգամայն մտածված ու հշտադատված նոր ուղեգիծ Այվազովսկու համար», մի ուղեգիծ, որի խնդիրն էր «միահամուռ ջանքերով ամրացնել ազգային շարքերը և զինված եվրոպական կուլտուրայի հատու զենքով, օժանդակել հայ կուլտուրայի վերելքին»[44], պայքարել լատին քարոզիչների ասիմիլյատորական, հայերի համար ազգակործան ոտնձգությունների դեմ: «Այն օրից,— գրում է Ա. Կարինյանը,— երբ նրա (Այվազովսկու— Վ. Մ.) համար պարզվում է կաթոլիկ եկեղեցու ասիմիլյատորական գործելակերպը, նա մշակում է իր «նոր» ուղեգիծը և հարում է «ազգային» եկեղեցուն»[45]: Անհնարին է չհամաձայնվել Ա. Կարինյանին՝ փաստերի համակողմանի վերլուծությունից բխող այս հետևության հետ, ինչպես նաև այն ճիշտ դրույթին, թե գուր էին Գ. Այվազովսկու հակառակորդները «իրենց ուժեղ ախոյանին համարում կեղծ լուսավորչա-

39 Գ. Այվազյան, *Պատմություն Խալիբյան ուսումնարանին, Տփղիս, 1880, էջ 3:*

40 ЦГИА СССР, ф. 821, оп. 140, д. 24/3136, ч. II, л. 7 об.

41 Գ. Այվազյան, *Պատմություն Խալիբյան ուսումնարանին, էջ 1—2: Տես նաև* ЦГИА СССР, ф. 821, оп. 140, д. 24/3136, ч. II, л. 7 об.

42 ЦГИА, ф. 1252, д. 402, л. 4.

43 Ա. Գ. Հովհաննիսյան, *Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք առաջին, Երևան, 1955, էջ 253—283:* Ա. Բ. Կարինյան, *Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության. հատ. 2, Երևան, 1960, էջ 380:*

44 Ա. Բ. Կարինյան, *նշված աշխատությունը, էջ 380:*

45 *Նույն տեղում, էջ 420:*

կան»[46]: Կաթոլիկության վնասները դիտակցած Գ. Այվազովսկին այս անգամ արդեն, իրոք, գտնում էր, որ «միայն «ազգային եկեղեցու» շուրջը համախմբելով կարելի է ղարկ տալ հայրենի կուլտուրայի վերելքին»[47]:

Այս ամենը դրդում էր Այվազովսկուն դառնալ հայրենի եկեղեցու դիրքը, մանավանդ, որ տարիներ շարունակ նրանից այդ էր խնդրում իր հուշակավոր կրոսեր եղբայրը՝ Հովհաննես Այվազովսկին: 1857 թվականի մայիսի 5-ին այս առթիվ նա Հովհաննեսին գրում էր, թե Մխիթարյաններից «բաժանված ըլլալուս անչափ ուրախ էիր՝ 20 տարվա փափաքդ վերջապես կատարված տեսնելով վրաս:

Խնդիրդ դժվարին էր, եղբայր, և իմ անհիշաչար բնավորությունս ու խաղաղասեր դգացմանս շատ հակառակ, սակայն քո արդարակորով մտածությանդ, եռանդուն ազգասիրությանդ, և այսքան ժամանակ իմ քաշածներուս վրա ցուցուցած կարեկցությանդ սիրույն համար պարտական էի չէ՞ չըսել քեզի, և ահա որչափ որ կըրցա՝ կատարեցի խնդիրդ, այնպես որ թե պարտականություն վճարեմ և թե բնական զգացմանս դեմ չգործեմ»[48]: Այսպիսով, Գ. Այվազովսկու «դարձ»-ի մեջ կարևոր դեր է ունեցել նաև մեծահոչակ նկարիչը:

Ի սկզբանն անդի՝ երեք վարդապետները նախագծում էին, որ «դարձը» դեպի ազգային եկեղեցու դիրքը, որ սերտաճում էր նրանց ազգային-կրոնական հայացքների և կրթական մտադրությունների իրականացման հետ, վարդապուն հեռանկարներ չէր խոստանում: Նրանք չէին կարող անգիտանալ, որ հայ հասարակական տարբեր շերտերի առանձին ներկայացուցիչների մոտ նրանց այդ քայլը տեղիք է տալու տարբեր մեկնաբանությունների: Դեռևս 1857 թվականին գրված «Պատմություն և պատճառ վերադարձի երից վարդապետաց հայոց ընդ հովվանու լուսավորչական սուրբ աթոռս» հոդվածում Գ. Այվազովսկին նշում էր. «Եվ սակայն որչափ որ գործողություն մը մեծ երևնա, այնչափ պատճառներուն ուժը հատակ կերպով հասկանալը դժվար կըլլա. անոր համար տարակույս չկա, թե գործյալ պիտի ունենամք ամեն կարգի և ամեն աստիճանի մարդկանց մեջ ալ մեր գործողությունը պարսավողներ և մեղադրողներ: Որը մեր գործողությունը պիտի բանբասե՝ չարաչար դատելով զբարին. որը դիտավորությունիս վար պիտի դարնէ՝ յուր անձնական մտածմունքներուն չափելով. որը խորագիտությունը պիտի համարի խոսքերնուս չհավատալը, որը ինքնիրեն պարտք մը պիտի սեպե մեր ամեն մեկ խոսքին ու քայլափոխին մեջ անհատականության շուք մը փնտռելը, որը պիտի ըսե, թե լոկ բռնական տեղափոխություն մըն է ըրածնիս. որն ալ թե զաղտնորոգայթ հըներք մըն է բանեցուցածնիս և ոչ անկեղծ և անխարդախ ազգասիրություն: Ո՞ր մեկն ըսեմ, շահասիրություն, փառասիրություն, անձնասիրություն, անոնք ամենն ալ անվանիս հարմարցնելնեն ետև, մեկ խոսքով այս պիտի ըսեն շատը թե խաբեբայական ձևացմունք է ըրածնին և ոչ թե սրտանց և հաստատուն բաժանումն ի հռոմեականաց առ հասարակ»[49]:

Եվ չնայած այդօրինակ հեռանկարի նախապես գիտակցմանը, նրանք երեքն էլ հաստատ են մնում Հռոմից հեռանալու իրենց վճռում, ղեկավարվելով այն իմաստությամբ, թե «ամենուն հաճոյանալը կարելի բան չէ»[50]:

Ռուսաստանի հարավում ուսումնարանի հիմնադրման առաջին քայլը եղավ Գ. Այվազովսկու դիմումը Փարիզի ռուսական դեսպան Կիսելյովին: Գ. Այվազովսկին ռուս դիվանագետին ակնարկում էր, որ բացվելիք կրթական օջախը, իր ազգային բնույթին զուգընթաց, կդառնա ռուսական կառավարության ձայնափողը, առհասարակ հայերի և հատկապես արևմտահայության շրջանում[51]: Հետագայում Խալիբյան ուսումնարանն ստուգող կառավարական հանձնաժողովի իսկ փաստարկմամբ այն բացվել էր նաև «ազդեցիկ Թուրքահայերի երեխաների ընդգրկման և այդ եղանակով» ցարիզմի «քաղաքական ազդեցությունը Արևելքում ուժեղացնելու համար»[52]:

Ռուսական կառավարությունը հանդես չէր գալիս լոկ պասսիվ հովանավորողի դերում: Ցարական արքունիքի քաղաքական ձգտումներն ու Գ. Այվազովսկու ծրագրերը հեռանկարում իրար այնքան էին համընկնում, որ իշխանություններն իրենց հերթին ջանք չեն խնայում օգտվելու Հռոմի հետ կաթոլիկ վարդապետների պատկառումներից և թե նրանց կողմից նորերս հիմնած Հայկազյան վարժարանի հանդեպ ֆրանսիական կառավարության բռնած բա-

46 Նույն տեղում:

47 Նույն տեղում, էջ 380:

48 *Айвазовский*. Документы и материалы, стр. 124—125.

49 «Մասյաց Աղավնի», 1858, էջ 200—201:

50 Նույն տեղում:

51 Գ. Այվազովսկի, նշվ. աշխ., էջ 7:

52 ЦГИА СССР, ф. 821, оп. 140, д. 50/3054, л. 21 с об.

ցասական, անհեռատես դիրքից։ Տարիներ անց (1861 թվականի հունվարի 4-ին) Ս. Ս. Լանսկոյը Կովկասի փոխարքային հասցեած դաղտնի գրության մեջ հիշեցնում էր. «Արտաքին գործերի մինիստրի հետ 1857 թվականին իմ ունեցած գրություններից Ձերդ գերդաստանությանը հայտնի է, թե ինչպես օգտվելով Փարիզի հայկական Մուրադյան ուսումնարանի ղեկավորներ Այվազովսկի, Գալֆա և Սարգիս վարդապետների՝ հռոմեական աթոռի հետ ունեցած պատակատումից և գժվարություններից, որոնք ֆրանսիական կառավարությունը, հռոմա-կաթոլիկ հոգևորականության պատվիրանով, կանգնեցնում էր նրանց առաջ Հռոմի հետ հիշյալ պատակման հետևանքով նրանց կողմից հիմնած հայկական մյուս (Գրենելի) ուսումնարանի կապակցությամբ, մեր կառավարությունը գրեց (ընդգծումը մերն է—Վ. Մ.) Այվազովսկի վարդապետին [որ նա] վերաբնակվի Ռուսաստանում, ընդունելով նրա առաջարկությունը մեզ մոտ հաստատելու հայկական ուսումնարան, որը ժամանակի ընթացքում պիտի կարողանար մրցել վերևում հիշված Փարիզի հաստատության հետ և մեր կողմը գրավել հայ պատանիներին Կոստանդնուպոլսից և Աբեթլիի այլ երկրներից (ընդգծումը մերն է— Վ. Մ.)։

Մինչ ֆրանսիական կառավարությունը, ըստ երևույթին, գիտակցելով իր սխալը, իր նախնական սահմանափակիչ դործողությունները փոխարինեց նշված անձանց հովանավորության ցույց տալով, ինչպես պետք է ենթադրել նրանց Ֆրանսիայում պահելու դիտումով,— շարունակում էր մինիստրը,— մենք մեր կողմից Կոստանդնուպոլսում հավաքված տվյալներից համոզվելով այդ անձանց (վարդապետների— Վ. Մ.) ազդության և մեր ու, հատկապես, Այվազովսկի վարդապետի հանդեպ Կոստանդնուպոլսի հայերի ունեցած հակվածության, օգտվեցինք մեղանում հենց այդ նպատակով ազատ թողած հայ-լուսավորչական թեմից՝ Այվազովսկուն նրան վիճակավոր նշանակելու համար»[53]։

Նույնն էր հավատում Ս. Ս. Լանսկոյին հաջորդած Պ. Ա. Վալուևը, մի անգամ ևս ցույց տալով, թե ինչ նպատակներ էր հետապնդում ցարիզմը՝ ընդառաջելով հայկական ուսումնարանի հիմնադրմանը։ «Մեր կառավարությունը,— գրում էր նա 1865 թվականի նոյեմբերի 4-ին արտաքին գործերի մինիստր Ա. Մ. Գորչակովին,— արտասահմանյան հայերի վրա իր ազդեցությունն ամ-

[53] ЦГИА СССР, ф. 821, оп. 140, д. 24/3136, ч. I, л. 22 об.

րապնդելու համար միջոցներ որոնելիս չէր կարող այդ տեսակետից անուշադիր թողնել և չդնահատել այն միջոցառումները, որոնց նպատակն էր արտասահմանյան հայ պատանիներին Ռուսաստանի հայկական ուսումնարանները ընդգրկել»[54]։

1850—60-ական թվականներին Ռուսաստանում հայկական ուսումնարաններ հիմնելու կապակցությամբ սկիզբ առած քաղաքական այս մտայնությունը փայփայում և հմտորեն օգտագործում էին այդ ուսումնարանների հիմնադրումը նախաձեռնող ռուսական կողմնորոշմամբ հայ մտավորականները, այդ թվում Գ. Այվազովսկին և ուսումնարանի ապագա ուսուցիչ Ս. Տիգրանյանը։ Ամփոփելով այս վերջինի կարծիքը, նույն Վալուևը 1866 թվականին գրում էր. «Տիգրանյանը պնդում է, որ Խալիբյան ուսումնարանում արտասահմանյան հայերի երեխաներին ընդդրկելու համար, նկատի ունենալով այն միջոցառումները, որոնք գործադրում է թուրքական կառավարությունը, որը երիտասարդ քրիստոնյաներին, մեծ մասամբ հայերից, կրթության է ուղարկում Փարիզ և նույնիսկ նրանց համար հոգևորականներ է նշանակում՝ քրիստոնեական ծեսերը կատարելու համար, նրանց համար սահմանելով նշանակալից չափով ոռճիկ (6—7 հազար ֆրանկ),—օգտակար կլիներ դաղտնի միջոցներ ձեռնարկել՝ այդ նպատակով իշխանություններր (մերձդանուբյան—Վ. Մ.) և Թուրքիա ուղարկելով հայերից վստահելի անձանց, որոնք հայտնի են Ռուսաստանի հանդեպ տածած նվիրվածությամբ»[55]։

Թուրքիայի հետ ունեցած մրցակցությունը ռուսական կառավարությանը բավական խորհել տվեց նաև Ն. Աշտարակեցուն հաջորդ նշանակելու հարցի շուրջը։ Եվ որովհետև Թուրքիան գործադրում էր բոլոր միջոցները՝ թուլացնելու համար էջմիածնի ազդեցությունը արևմտահայ թեմերի վրա, ռուսական կառավարությունը, որպես դրան հակազդիչ միջոց, ջանում էր կաթողիկոսական աթոռին նստեցնել անպայման թուրքահայ եկեղեցական գործչի, որը, հարկավ, պիտի դանց չտաներ Ռուսաստանի շահերը։ Ժամանակի պաշտոնական փաստաթղթերից մեկում ասված է, որ տակավին մինչև Աշտարակեցու մահը «ներքին գործերի մինիստրը և Կովկասի նախկին փոխարքա Բարյատինսկին անհրաժեշտ համարեցին արտասահմանյան հայերի վրա մեր ազդեցությունը ուժեղացնելու համար նոր կաթողիկոս ընտրելու ժամանակ հատուկ ու-

[54] Նույն տեղում, գ. 55/3166, մ. I, թ. 360ա։

[55] Նույն տեղում, մ. IV, թ. 6բ—7ա։

շադրություն դարձնել թուրքահայերի ցանկությանը և աջակցել նրանց թեկնածուի, թեկուզ և օտարահպատակի, ընտրությանը, միայն թե նա իր մեջ միավորեր ուրիշ, մեր կառավարության շահերին համապատասխանող պայմաններ»[56]։

Այսպես, ուրեմն, Ղրիմի պատերազմին հաջորդած տարիներին Թուրքիայի և Ռուսաստանի միջև հայերի վրա ազդեցությունը ուժեղացնելու մրցության ժամանակ կողմերը կարևոր նշանակություն էին տալիս նաև հայ մանուկներին, մանավանդ երևելիների երեխաներին իրենց տրամադրությամբ դաստիարակելու խնդրին՝ իբրև այդ պայքարում հաղթող դառնալու կարևոր միջոցներից մեկի։

Միամիտ կլիներ կարծել, թե ռուս ժողովրդին խավարի շղթաններում պահող ցարիզմին մտահոգում էր հայ մանուկների կրթության խնդիրը։ «Կոստանդնուպոլսում հավաքած տվյալներից» և Գ. Այվազովսկու խոստումնալից բացատրություններից կառավարությունը տեսնում էր այն բարեպատեհ հնարավորությունը, որ ներկայանում էր բացվելիք ուսումնարանով՝ հայերի մեջ և նրանց միջոցով Արևելքում ռուսական ազդեցությունը տարածելու համար։ Իր հերթին Գ. Այվազովսկին էլ գիտակցում էր, որ իր սկսած գործը լիուլի համակրանք է գտնելու կառավարող շրջաններում և ռուսական կառավարության գործունեության հետ իր ձգտումներն առնչող մեծահարուստ հայության մոտ։ Կանգնած կայսերամերձ դիրքերում՝ Գ. Այվազովսկին ջանում էր դեպի ռուսական արքունիքն ունեցած իր կողմնորոշմամբ օգտակար դառնալ հայ ազգային մշակութային զարգացմանը և, դրանով պայմանավորված, ապրի ու եկեղեցու հարատև ինքնուրույն պահպանմանը։ Քաղաքական առումով Գ. Այվազովսկին ռուսական կողմնորոշում ունեցող այն հայ գործիչներից էր, որոնք, արտահայտելով հայ եկեղեցու և ամենից հարուստ դասի շահերը, այդ կողմնորոշումը առնչում էին ցարիզմի և նրա արտաքին-քաղաքական քայլերի հետ։ Շահագործող հասարակարգի տիրապետության պայմաններում իրենց կողմնորոշումը գործնականորեն իրականացնել կարող էին միայն հայ ունևոր դասակարգերը, այնինչ աշխատավոր մասսաները, քանի դեռ չեն հասել իշխանության, զուրկ են հնարավորությունից՝ իրագործելու իրենց դասակարգային-ինտերնացիոնալիստական, հեղափոխական կողմնորոշումը։

56 Նույն տեղում, ց. 139, գ. 7, թ. 35ա, բ։

Ցարական կառավարությանը ուված հուսադրություններում, ինչպես նաև Թուրքիայում ուսումնարանի համար աշակերտներ ընտրվող գործակալներին ուղղված հրահանգներում և «Մասյայ ազավնու» էջերում, Գ. Այվազովսկին ամենայն ջանասիրությամբ պրոպագանդում էր ցարական կառավարության և արքունիքի հանդեպ ունեցած իր դիրքորոշումը, հանդես գալով նրանց ջատագովի դերում։ Գ. Այվազովսկին այդպես կվարվեր, եթե անգամ Ռուսաստանում միապետության փոխարեն լիներ բուրժուական հանրապետություն. նրա կողմնորոշումը տիրող դասակարգի, իշխանության կողմն էր։ 1861 թվականին Կովկասի փոխարքային ուղղած վերհիշյալ գաղտնի զրության մեջ Ս. Ս. Լանսկոյը Մաքենս կաթողիկոսին ուղղակի մեղադրում էր կառավարության կողմից Գ. Այվազովսկու վրա դրված խնդիրը չմերկնելու սահմանափակության մեջ. «Ձերդ պայծառափայլություն,— գրում էր նա փոխարքային.— ինքներդ կարող էք դատել այն մասին, թե Այվազովսկուն պետք է հանդիմանե՞լ, թե՞, ընդհակառակը, նրա հատուկ ծառայությունը պիտի համարել նրա կողմից հանդեսի հրատարակումը, որը գնալով ավելի ու ավելի տարածում է գտնում արտասահմանյան հայերի մոտ և, ինչպես կաթողիկոսն է արտահայտվում, նրա կողմից Թուրքիայում և այլ երկրներում գործակալներ պահելը... Միայն մեր կառավարության կողմից Այվազովսկու վրա դրված խնդրի նշանակությունը չգիտակցելու սահմանափակ հայացքի դեպքում էին հնարավոր նման մեղադրանքներն ու պահանջները (Գ. Այվազովսկու նկատմամբ— Վ. Մ.)»[57]։

Գ. Այվազովսկին, հարկավ, գիտեր, որ ուսումնարան հիմնելու իր նախաձեռնությունը լիուլի արձագանք կգտնի հայ ժողովրդի ունևոր այն խավերի մեջ, որոնց համար երեխաների կրթության գործը գնալով դառնում էր տնտեսական ու նաև քաղաքական հանապազօրյա գործնական պահանջ։ Դրա արտահայտությունն էին այն համախոսականները, որ արդեն 1857 թվականին Ղրիմի հինդ քաղաքների, ինչպես և Օդեսայի հայ համայնքները հղել էին Ռուսաստանի ներքին գործերի մինիստրին՝ ուսումնարանը բացելու կապակցությամբ Գ. Այվազովսկու առաջարկությունը գլուխ բերելու խնդրանքով. «Ոչ միայն մեզ սահմանակից Թուրքիայում և Մերձդանուբյան իշխանություններում, այլև ամբողջ Նովոռոսիայի

57 Նույն տեղում, ց. 140, գ. 24/3136, մ. I, թ. 27ա, բ։

հրկրամասում հայ պատանիները զրկված են որևէ ուսումնական հաստատությունից»,— գրում էին Ս. Ս. Լանսկոյին Սիմֆերոպոլի հայերը 1857 թվականի հոկտեմբերի 19-ի իրենց համախոսականում, ցանկություն հայտնելով ունևորներից ուսման վարձ վերցնել, իսկ աղքատների երեխաների համար օգտագործել եկեղեցական դումարների մի մասը, որոնք մինչ այդ «մնացել են զրեթե անօգուտ և անօգտագործելի»[58]:

1857 թվականի մարտին Ֆրանսիայում ռուսական դեսպան Կիսելյովը տեղեկացնում է Գ. Այվազովսկուն, որ նորին կայսերական մեծության կամքով ռուսական կառավարությունը իր համաձայնությունն է տալիս Ռուսաստանի Հարավում հայկական ուսումնարան հիմնելու նրա առաջարկին: Ավելին, կառավարությունը չի մերժում Գ. Այվազովսկու առաջարկը ուսումնարանի հայկական բնույթի, նրա շրջանավարտներին հովանավորելու վերաբերյալ: Գեներալ-ադյուտանտ գրաֆ Կիսելյովի միջոցով արտաքին գործերի մինիստր Ա. Մ. Գորչակովը Գ. Այվազովսկուն հայտնում էր, թե ռուսական կառավարությունը միանգամայն համամիտ է նրա ցանկություններին, քան որում.

1. Կառավարությունը ուսումնարանում ապահովում է հավատի հանդուրժողականություն և հայերին դասավանդում:

2. Հովանավորում է ուսումնարանի շրջանավարտներին, որտեղ էլ նրանք գտնվելիս լինեն:

3. Ուսումնարանի կրթական գործը չի ենթարկվում որևէ կողմնակի ազդեցության, այսինքն լուսավորության մինիստրության[59]:

Կառավարությունը խիստ բացառիկ դեպքերում էր նման համաձայնություն տալիս, և լուսավորության մինիստրության կամքին հակառակ այս բացառությունը խոսում է այն մասին, որ Գ. Այվազովսկին կարողացել էր բավական համառորեն օգտվել Արևելյան պատերազմից հետո ստեղծված արտաքին քաղաքական վիճակից, երբ մեծ տերություններից ամեն մեկը ձգտում էր ուժեղացնել իր ազդեցությունը Թուրքիայում ապրող քրիստոնյա ժողովուրդների վրա: Դա, միաժամանակ, վկայում է նաև, որ Գ. Այվազովսկու Ռուսաստան գալու հիմնական նպատակը եղել է ազգային ուսումնարան հիմնելու խնդիրը, որին նա ենթարկում էր մյուս բոլոր հարցերը, այդ թվում նաև վիճակավոր առաջնորդ դառնալը: «Ինձ համար կարևորը բոլորովին այն չէ, որպեսզի մնամ հիշյալ

58 Նույն տեղում, գ. 55/3166, մ. I, թ. 52—53:
59 Նույն տեղում, թ. 27ա, բ:

պաշտոնում (վիճակավոր առաջնորդի պաշտոնում—Վ. Մ.), որը ես պատրաստ եմ թողնել ցանկացած րոպեին. այդ բերը ես ինձ վրա վերցրի լոկ այն նպատակով, որ վիճակավոր առաջնորդի կոչումն ադեն ինձ տալիս էր հնարավորություն և միջոցներ՝ իրագործելու կառավարության կամքով այստեղ իմ կողմից ձեռնարկված գործերը հայ պատանիների կրթության համար (ընդգծումը մերն է— Վ. Մ.)»[60],— գրում էր Գ. Այվազովսկին 1865 թվականի փետրվարին ներքին գործերի մինիստր Պ. Վալուևին, որոշակիորեն շեշտելով, թե վիճակի առաջնորդ դառնալը սոսկ մի միջոց է եղել իր հիմնական նպատակի՝ հայկական ուսումնարան հիմնելու և հայ պատանիների կրթության գործը կազմակերպելու խնդրի իրականացման համար: Իսկ եթե հիմնական նպատակը պիտի ձախողվեր, ապա Գ. Այվազովսկին ոչ մի իմաստ չէր տեսնում նըշված պաշտոնում իր մնալու մեջ: Այդ նույն գրության մեջ նա այդ մասին բացեիբաց գրում էր. «Իսկ եթե այդ գործերը հետագայում լիակատար պաշտպանություն չգտնեն ում և իմ հարձակումներից, եթե այդ մասին ինձ լրիվ երաշխիք չտրվի, և ես, հավասարապես նաև իմ հիմնած հաստատության (ուսումնարանի—Վ. Մ.) բախտը նախկինի պես կախված մնան պատրիարքի կամակորություններից կամ որևէ մեկի բանսարկություններից, որոնց դեմ կառավարությունը կզլանա նախկինի նման ինձ ցույց տալ իրական պաշտպանություն ու օգնություն, ապա նման պարագայում ես ոչ միայն չեմ ցանկանում մնալ թեմի առաջնորդի պաշտոնում, այլև չեմ տեսնում ոչ մի հնարավորություն՝ շարունակելու իմ կողմից սկսված գործերը»[61]: Նույնն էր գրում նա ավելի ուշ, 1880 թվականին: «Նա,—գրում էր Այվազովսկին ինքն իր մասին,—նույնիսկ առաջնորդությունը հանձն առած էր ուսումնարանին համար, ինչպես որ հայտնի է, և ոչ թե ուսումնարանը բանալու ձեռ զարկած էր՝ առաջնորդության հասնելու համար»[62]:

Մաթեոս կաթողիկոսը ևս տեղյակ էր, որ Գաբրիել վարդապետը ուսումնարանի գործերը վեր է դասում վիճակավոր առաջնորդի պարտականություններից: 1860 թվականի նոյեմբերի 25-ի կոնդակում կաթողիկոսը նրան հանդիմանում էր. «դուք զգերադոյն պաշտօն վիճակաւոր առաջնորդութեան, որ պարտաւորէ դձեզ դպահպանութենէ հօտին յանձին բերել զհոգաւորութիւն, ի բաց

60 Նույն տեղում, ֆ. 880, ց. 5, գ. 33, թ. 230:
61 Նույն տեղում:
62 Գ. Այվազյան, նշվ. աշխ., էջ 62:

Ռոզնալ, պարապիք ըստ մեծի մասին ի զբաղմունս վերատեսչական կառավարութեանց Խալիպեան ուսումնարանի, մեծ և երեւելի դասելով զայն, քան զպաշտօն վիճակաւոր առաջնորդութեան»[63]:

Մենք դեռ կանդրադառնանք այն հարցին, թե ինչն էր Գ. Այվազովսկու հասցեին կաթողիկոսի ուղղած այս և մյուս հանդիմանանքների ու մեղադրանքների շարժառիթը: Այստեղ նշենք, որ հատկապես ազգային-կրթական լայն գործունեության հեռանկարն էր Գ. Այվազովսկուն մղում Ռուսաստան, ուր նա ժամանեց 1857 թվականի հունիսին՝ նախապես ապահովված ռուսական կառավարության համաձայնությամբ և Կ. Պոլսի Հայոց Ազգային գերագույն ժողովում նստած եկեղեցական ու աշխարհիկ պլխավորների «միաբան հավանությամբ»[64]:

1857 թվականի հոկտեմբերի սկզբներին Գ. Այվազովսկին, որն արդեն մի քանի ամիս էր, ինչ Ղրիմում էր, թերակղզու հինգ քաղաքների հայ համայնքների՝ ներքին գործերի մինիստրին ուղղած համախոհականները ձեռքին, գալիս է Մոսկվա և ապա անցնում Պետերբուրգ: Պետերբուրգում նրան սպասում էր ոչ միայն արտաքին ու ներքին գործերի մինիստրների ընդունելությունը, այլև կառավարական հրամանը՝ իրեն Նախիջևանի և Բեսարաբիայի հայոց թեմի առաջնորդ նշանակելու վերաբերյալ: Սա մի նշանակում էր, որի մեջ շահադրգիռ մասնակցություն էին ցուցաբերել Լազարյանները, որոնք, ինչպես և Մոսկվայի ու Պետերբուրգի մեծահարուստ մյուս հայերը, նաև Ստ. Նազարյանցը, նկատի ունենալով Գ. Այվազովսկու դիտական համբավն ու ունակությունները (նա տիրապետում էր 9 լեզվի), որոշակի հույսեր էին կապում նրա և նրա ուսումնական ծրագրի հետ: Մոսկվայում ազդեցիկ վաճառականների կողմից Գ. Այվազովսկու պատվին տված ճաշկերույթի ժամանակ 1857 թվականի նոյեմբերի 28-ին «Հյուսիսափայլի» պատասխան խմբագիրը նրա հասցեին արտասանեց հույսերով առլեցուն և դրվատանքով լի մի ճառ[65], որը, ինչպես և նրա նշանակման առթիվ գրավոր ու բանավոր մյուս բարեմաղթություններն ու առհասարակ ընդհանուր դրական ընդունելությունը վկայում էին այն մասին, թե սկզբնապես Գ. Այվազովսկու դեմ բացահայտ առարկություններ չկային, իսկ ուսումնարան հիմնելու նրա ծրագիրը ոչ միայն Ղրիմում, այլև Մոսկվայում, Պետերբուրգում ու Նոր Նախիջևանում ընդունվել էր բավականին շեշտված համակրությամբ: Հակամարտությունները ու բախումները, որ սկսվեցին մի փոքր հետո, կապված էին Գ. Այվազովսկու կրթական ու եկեղեցական գործունեությանը առնչվող այնպիսի շարժառիթների հետ, որոնք շոշափելով թեմի համայնքների շահերը՝ վերջիններիս տարբեր խավերի մոտ տարբեր վերաբերմունք էին առաջացնում նրա նկատմամբ:

Վիճակավոր առաջնորդի առաջին քայլերից մեկը եղավ հոգևոր կոնսիստորիայի տեղափոխումը Քիշնևից Թեոդոսիա: Գ. Այվազովսկին գտնում էր, որ Թեոդոսիան գտնվում է Կ. Պոլսի, Փոքր Ասիայի և Կովկասի գրեթե կենտրոնում, նախագծվող երկաթուղին քաղաքը կմիացնի Մոսկվայի ու Պետերբուրգի հետ, իսկ ծովային մշտական կապը Կ. Պոլսի հետ հնարավորություն կտա այնտեղի հայերին մշտապես գալու Ղրիմ: Բացի այդ, հայերի թիվը Ղրիմում ավելի մեծ էր, քան Բեսարաբիայում, ընդ որում Թեոդոսիան շատ ավելի մոտ է Նոր Նախիջևանին, Աստրախանին, Կովկասին, քան Քիշնևը: Եվ վերջապես, Ղրիմի թերակղզին առավել, քան մյուս վայրերը, գրավում է հայերին իր կլիմայով[66]: Սրանք կոնսիստորիայի տեղափոխման հիմնավորումն էին, մի տեղափոխում, որը հետագայում դարձավ կաթողիկոսի կողմից Գ. Այվազովսկուն ուղղած մեղադրանքներից մեկը:

Կրթական իր ծրագիրը իրականացնելիս և թեմակալի գործունեությունը ծավալելիս Գ. Այվազովսկին գործերի բերումով և ի պաշտոնե միջամուխ է լինում տարիների պատմություն ունեցող կենճռոտ խնդիրների, որոնք շոշափելով թեմի համայնքների շահերը, վերջիններիս տարբեր շերտերում տարբեր վերաբերմունք առաջացրին նրա անձի ու գործունեության հանդեպ և ի վերջո տարիներ հետո ձախողեցին կրթական այն գործը, որի համար Գ. Այվազովսկին անցել էր Ռուսաստան:

Գ. Այվազովսկու առաջին քայլերից մեկն էլ եկեղեցական գումարների շուրջը տարիների պատմություն ունեցող վեճերի կարգավորման խնդիրն էր: Նա չէր կարող չզբաղվել այդ հարցով ոչ միայն այն պատճառով, որ թեմի առաջնորդ էր, այլև այն տեսակետից, որ եկեղեցական գումարների մի զգալի մասի օգտագործումից էր կախված ուսումնարանի բախտը՝ գոնե նրա գոյության առաջին շրջանում: Եվ բացի այդ, որպես թեմի կառավարիչ, նա շահագրգռված էր թեմում «խաղաղության» հաստատելու խնդրով,

63 Նույն տեղում, էջ 338:
64 Նույն տեղում, էջ 10—11:
65 Նույն տեղում, էջ 28—29:

66 ЦГИА СССР, ф. 821, оп. 140, д. 55/3166, ч. I, л. 63 об.

մի հանգամանք, որը լիուլի ներգաշնակվում էր ազգային ուժերը «Հայրենի եկեղեցու շուրջը միավորելու» միջոցով հայ մշակույթի հարաճուն զարգացումը կազմակերպելու նրա կոնցեպցիային. Բայց մոտիկ ապագան ապացուցեց, որ եկեղեցական դումարները սոսկ պատրվակ էին, որոնց շուրջը փաստորեն բախվում էին քաղաքական-անհատական տարբեր նպատակների ձգտող ունևոր դասերի շահերը և խուլ ձևով իրենց պահանջներն էին առաջադրում աշխատավորության լայն ու ամենատարբեր շերտերը:

Գ. Այվազովսկին Թեմի գործերը ընդունելիս ժառանգեց եկեղեցական դումարները տնօրինելու միանգամայն անկանոն մի կարգ: Ներսես Աշտարակեցու՝ Թեմի առաջնորդ լինելու ժամանակվանից եկեղեցական դումարները ծախսվում էին առանց որևէ հսկողության և ոչ միշտ այն նպատակներով, որոնց համար սահմանված էին: Այդպիսի վիճակը հետևանք էր Ներսեսի կողմից Թեմում հաստատված կարգի: Նա հավաքել էր տալիս եկեղեցական եկամուտները և դրանք ծախսում բացարձակապես իր հայեցողությամբ: Դրա համար, սովորական երեցփոխաններից բացի, նա Թեմի գրեթե ամեն մի բաղաքում նշանակել էր եկեղեցական դումարների հատուկ պահպանողներ, որոնք ըստ Գ. Այվազովսկու 1863 թվականին կազմած վիճակագրության՝ «անհաշվետու կերպով միայն նըրան էին ենթարկվում, պարտավոր էին երեցփոխաններից հավաքել բոլոր եկեղեցական դումարները և դրանք պահել իրենց մոտ կամ թե տալ տոկոսներով, այդպիսի դեպքերում ղեկավարվելով սեփական քմահաճույքով»[67]:

Տակավին 1842 թվականին Ն. Աշտարակեցին Հ. Խալիբյանին է հանձնում Նոր Նախիջևանի եկեղեցական դումարների հավաքման ու պահպանման գործը[68]: Այդպիսի պարտականություններով էր նա օժտել նաև Գ. Դելլէբյանին՝ Ղրիմում և Ավետովին՝ Քիշնևում[69]: Թեմի առաջնորդ Ն. Աշտարակեցին առաջին իսկ պահան-

[67] ЦГАДА, ф. 1252, е. х. 402, л. 9 об. См. «Записка об управлении церковными делами и об устройстве учебных заведений в Нахичеванской и Бессарабской армянской епархии управляющим епархией архимандритом Гаврилом Айвазовским, с 1857 до конца 1863 года». Զեկուցագրի վրա Գ. Այվազովսկու ձեռքով գրված է. «Его сиятельству князю «Семену Давидовичу Абамелику от архимандрита Айвазовского».

[68] ЦГИА СССР, ф. 880, оп. 5, д. 33, л. 57 об.

[69] Նույն տեղում, ֆ. 821, ց. 140, գ. 17, մ. I, թ. 14բ:

ջով սրանցից ստանում էր իրեն անհրաժեշտ գումարները և դրանք ծախսում իր հայեցողությամբ: Այսպիսի ճանապարհով Ն. Աշտարակեցին եկեղեցական դումարների միջոցով Քիշնևում, եկեղեցական հողամասի վրա, կառուցել էր զանազան շինություններ, կրպակներ, դրանք տալիս էր վարձով և ստացվող եկամուտները «բացառապես ծախսում էր իր արքեպիսկոպոսական տան պահպանման վրա»[70]:

Դառնալով Էջմիածին և գալով Էջմիածին, Աշտարակեցին իրեն հաջորդած Թեմի առաջնորդին չժառանգեց այն իրավասությունները եկեղեցական դումարների նկատմամբ, որպիսին ուներ ինքը: Էջմիածնից ևս Աշտարակեցին շարունակում էր տնօրինել Նախիջևան-Բեսարաբիայի հոգևոր Թեմի դումարները, եկամուտներն ու ունեցվածքը: Թեմում նշանակված նրա լիազորները կամ հոգաբարձուները շարունակում էին դումարները հավաքել իրենց մոտ և Աշտարակեցու առաջին իսկ պահանջով ուղարկել նրան: Այսպես, Հ. Խալիբյանը Աշտարակեցու պահանջով Էջմիածնին է ուղարկում 15.000 ռուբ., իսկ 18.000 ռուբլի էլ, նրա հրամանով, օգտագործել էր Նոր Նախիջևանի սբ. Խաչ վանքի շինարարության և նրան կից ընդարձակ այգի դնելու վրա[71]: Քիշնևի նշված շինություններից ստացվող եկամուտները ծախսվում էին ոչ թե առաջնորդական կարիքների համար, ինչպես Աշտարակեցին վարվում էր իր թեմակալության ժամանակ, այլ լրիվ չափով ուղարկվում էին դարձյալ Աշտարակեցուն, Էջմիածին՝ «որտեղ պատրիարք Ներսես ժամանակվանից այդ շինությունները դիտում էին որպես պատրիարքի կամ Էջմիածնի վանքի սեփականություն, չնայած նրան, որ դրանք կառուցված էին Նախիջևան-Բեսարաբիայի Թեմի եկեղեցական դումարներով»[72],— գրում էր Գ. Այվազովսկին նշված զեկուցագրում:

Նման դրությունը եկեղեցական դումարների տնօրինման և ծախսման գործում ստեղծում էր կամայականություն և տեղիք տալիս չարաշահումների՝ իրենց իսկ երեցփոխանների կողմից, որոնք սեփական եկեղեցիների կարիքներին անհրաժեշտ գումարներ պահելու պատրվակով եկեղեցական եկամուտների մի մասը թաքցնում էին:

Դառնալով Նախիջևան-Բեսարաբիայի Թեմի առաջնորդ, Մատթեոս արքեպիսկոպոսը ձգտում է իր տնօրինությանը ենթարկել

[70] ЦГИА, ф. 1252, е. х. 402, л. 10.

[71] Նույն տեղում, թ. 10ա, բ:

[72] Նույն տեղում, թ. 10բ:

թեմի եկեղեցիների ամբողջ ունեցվածքն ու եկամուտները։ Մատթեոսը փորձում է ի չիք դարձնել Հ. Խալիբյանի իրավունքները եկեղեցական գումարների նկատմամբ և նրանից պահանջում է հաշվետվություն։ Սա զայրացնում է Աշտարակեցուն, մանավանդ որ Մատթեոսը խուսափում է կատարել այդ կապակցությամբ կաթողիկոսի արած կարգադրությունը՝ իրեն էջմիածին ներկայանալու վերաբերյալ[73]։ Կաթողիկոսի և թեմի առաջնորդի միջև հակամարտությունը ավարտվում է նրանով, որ Մատթեոսը փաստորեն զրկվում է իր պաշտոնից և վերջին տարիներին մշտապես ապրում էր կամ Մոսկվայում և կամ Պետերբուրգում։ Մինչդեռ նախիջևանցիները չեն հանդարտվում։ 1856 թվականին Նախիջևանի և հինդ գյուղերի բնակիչները ընտրում են 6 հոգուց բաղկացած հանձնաժողով, որի անդամները, որպես թեմի առաջնորդ Մատթեոսի լիազորներ և հավատարմատարներ, իրենց կազմած դեկուցագրի համաձայն, Հ. Խալիբյանից պահանջում են հաշվետվություն[74]։

1856 թվականի հուլիսի 19-ին Նոր Նախիջևանի մագիստրատին իջեցրած կոնդակով Ն. Աշտարակեցին նզովում է Մատթեոսին, որը չի ենթարկվում սրբոին, փորձում է սահմանափակել էջմիածնի գործակալ Հ. Խալիբյանի իրավունքները, հրաժարվում է ներկայանալ սինոդ և ինքնագլուխ կերպով լրել է թեմն ու հեռացել Պետերբուրգ։ Մատթեոսը, ասված էր կոնդակում, «իրեն իրավունք է վերապահել գրություն իջեցնել քաղաքային մագիստրատին, Նոր Նախիջևանի հոգևոր կառավարությանը, ծխականների համայնքին, քաղաքագլխին և նույնիսկ թեմական կոնսիստորիային դրամական հաշվետվությունները և գումարները պահանջելու վերաբերյալ, որ մեր կողմից հանձնված է նորին ազնվությանը, մեծապատիվ Արտեմ Խալիբովին, մեր և ս. էջմիածնի պատրիարքական աթոռի ամենահնազանդ հավատարմատարին։ Նման դրավոր կարգադրություն է իջեցրել նա նաև դերպատիվ Խալիբովին, ...[պահանջելով] մագիստրատին և քաղաքային համայնքին հանձնել բոլոր հաշվետվությունները, գումարներն ու վանքապատական գույքը, որ գտնվում են մեր հավատարմատարի (իմա՝ Խալիբյանի— Վ. Մ.) անօրինության տակ»[75]։ Աշտարակեցին հանդիմանում էր նաև նախիջևանցիներին, որոնք լսել են Մատթեոսին և նման պահանջներով լեցուն բողոք գրել Խալիբյանի վրա։ Սակայն կաթողիկոսը

73 ЦГИА СССР, ф. 821, оп. 140, д. 47, ч. I, л. 4.

74 Նույն տեղում, ֆ. 880, ց. 5, գ. 33, թթ. 70—71։

75 Նույն տեղում, ֆ. 821, ց. 140, գ. 17, մ. I, թ. 4բ—5ա։

խոստանում էր ներքին գործերի մինիստրից նրանց բողոքը ստանալուն պես անել անհրաժեշտ կարգադրություն[76], այսինքն դնալ դիջումների։ Դժվար չէ նկատել, որ տվյալ դեպքում պայքարը ընթանում էր առաջին հերթին հայ եկեղեցու կենտրոնական և տեղական իշխանությունների միջև։ Թեմական առաջնորդ եղած ժամանակ, ինչպես նշվեց, Աշտարակեցին ամբողջ այդ գումարները կենտրոնացրել էր իր ձեռքը և ծախսում էր ըստ իր հայեցողության, դառնալով կաթողիկոս, նա պահպանում էր նույն վիճակը։ Դա ոչ միայն շոշափում էր թեմի նյութական շահերը, այլև թեմի առաջնորդին դնում «անվայել կախման մեջ» աշխարհիկ այն անձանցից, որոնց ձեռքում կենտրոնացվում էին եկեղեցական գումարները։ Այլ էր աշխատավորների պահանջը. սրանք ձգտում էին այդ գումարներն օգտագործել կուլտուր-կրթական նպատակներով։

Ահա այս վեճն ու հակամարտությունը ժառանգեց Գ. Այվազովսկին, որի առաջին քայլերից մեկը ուղղված էր դրանց լուծմանը։ Դրա համար Գ. Այվազովսկին 1858 թվականի հունիսի 7-ին ժամանում է Նոր Նախիջևան և սկսում մանրամասն զննել այս հարցի առթիվ տակավին Մատթեոսի օրոք ստեղծված հանձնաժողովի հաշվետվությունը և եղած մյուս բոլոր փաստաթղթերը, այդ թվում նաև Հ. Խալիբյանի հաշվետվությունը։ 1858 թվականի հունիսի 25-ին ներքին գործերի մինիստրին ուղարկած իր դեկուցագրում, այլև՝ «Պատմություն Խալիպյան ուսումնարանին» աշխատության մեջ Գ. Այվազյանը տալիս է թե հանձնաժողովի (դլխավորում էր կարապետ աղա Հայրապետյանը) և թե Հ. Խալիբյանի հաշվետվությունների համեմատությունը, ինչպես և հակամարտություններն իր կողմից սկզբնապես լուծելու պատմությունը։

Հանձնաժողովը Խալիբյանից պահանջում էր.

1. Ոչ միայն Նոր Նախիջևանի եկեղեցական գումարները, որոնք նա ընդունել էր 1842 թվականից ընդհուպ մինչև 1857 թվականը ներառյալ, այլև դրանց տոկոսները՝ 100-ին 6 հաշվով, թեև կաթողիկոսը գումարները Հ. Խալիբյանին հանձնելիս նրանից շահ չէր պահանջել։

2. Այն դրամների տոկոսները, որոնք մնացել էին Նախիջևանի գյուղացիների ձեռքին և որոնցից նա չէր կարողացել դրանք պահանջել։

76 Նույն տեղում, թ. 5ա։

3. Այն 15.000 ռուբլին՝ տոկոսներով հանդերձ, որ նա կաթողիկոսի պահանջով ուղարկել էր Էջմիածին։

4. 18.000 ռուբլին՝ տոկոսներով, որ նա կաթողիկոսի հրամանով ծախսել էր Նոր Նախիջևանի Սբ. Խաչ վանքի շինությունների և նրան մերձակա այգու վրա։ Այս բոլորը ի մի բերելով, հանձնաժողովը Հ. Խալիբյանից պահանջում էր 123.551 ռ. 92 կոպեկ[77]։

Իր ներկայացրած հաշվեփաթեթի մեջ Հ. Խալիբյանը նշում էր, թե Ն. Աշտարակեցու օրոք, 1842—1845 թվականներին, ինքը մեծ դժվարություններով, Գ. Այվազյանի բնութագրմամբ, «չափազանց խստություններով ու անգթություններով» հավաքել էր 39.187 ռուբլի, իսկ Մատթեոսի առաջնորդության ժամանակ՝ 1845—1857 թվականներին, եկեղեցիներից ընդունել էր 10.263 ռուբլի։ Մինչև 1856 թվականը դրանց տոկոսները կազմել էին 24.050 ռուբլի, բացառությամբ մասնավոր անձանց ձեռքին մնացած և գանձման համար անհուսալի գումարների։ Հատուկ դրամագլուխ, որ պատկանում էր թեմի տարբեր եկեղեցիներին, 6863 ռուբ. 58 կոպ., վարկային տոմս՝ 117 ռուբ. 61 կոպ. և ս. Խաչ վանքի արդյունքներից ստացված գումարը՝ 3500 ռուբլի։ Այսպիսով, ըստ Խալիբյանի տվյալների՝ նրա մոտ կար 83.981 ռուբլի 19 կոպեկ եկեղեցական դրամ[78]։

Պաշտպանելով Խալիբին, Գ. Այվազյանը գտնում է, որ անարդարացի կլիներ նրանից պահանջել տոկոսներ և տոկոսների տոկոսներ 100-ին 6 տոկոսի հաշվով, այն ժամանակ, երբ գումարները Աշտարակեցին նրան է հանձնել միայն անկորուստ պահպանելու համար, և մանավանդ որ, չնայած այդպիսի պայմանի, Խալիբյանը ներկայացնում է 24.050 ռուբլի տոկոսագրամ։ Եվ ապա՝ «Թեպետ և բուն ինքյան ապօրինավոր և անկարգ բան էր վիճակի գումարները որևիցե կերպով օտարացնել, կամ նաև ի սուրբ աթոռն անցնելը՝ առանց սինոդական հարկի, սակայն անկարելի էր Խալիբյանին պարտք համարել այն 15.000 ռուբլին, որ նա ուղարկել էր Ներսես կաթողիկոսին և որո անդորրագիրը կամ ընդունելության մուրհակը ձեռքն էր»[79]։ Նա սխալ է համարում նաև Խալիբյանից 18.000 ռուբլու պահանջը, որ նա, կաթողիկոսի հրամանով, ծախսել էր ս. Խաչ վանքի շինությունների վրա, ինչպես նաև գյուղացիներից չգանձված դրամների տոկոսների պահանջը[80]։

Հունիսի 22-ին Գաբրիել վարդապետը իր մոտ է հրավիրում Նախիջևանի բոլոր եկեղեցիների երեցփոխաններին, քաղաքագլխին, մադիստրատի ու վերևում նշված հանձնաժողովի անդամներին և այլ անձանց, թվով քառասունմեկ հոգի, և ներկայացնում իր եզրակացություններն ու հորդորը՝ անհաշտություններին վերջ տալու և Խալիբյանից ներկայացված ձևով հաշիվները ընդունելու վերաբերյալ։ Ժողովականներին նա միաժամանակ խոստանում է հորդորել Խալիբյանին, որպեսզի սա «չափավոր գումար մի տա Նախիջևանի եկեղեցյաց իբրև նվեր կամ ընծա՝ ի նշան յուր հաշտության և ի սեր խաղաղության Նախիջևանի»[81]։

Ժողովականները, այդ թվում նաև հակադիր կուսակցության պարագլուխ Կ. Հայրապետյանը, «միաբերնորդ հավանությամբ» ընդունում են թեմական առաջարկությունն ու վճիռը։ Նոր Նախիջևանի քաղաքագլուխ Ս. Ալաճալյանի և Հովհաննես վրդ. Բևկնադարյանի առաջարկով տեղն ու տեղը ստեղծվում է դրավոր փաստաթուղթ[82]։ Խալիբյանին հակադիր կուսակիցների իսկ ձեռքով կազմած[83] այդ ակտի տակ իրենց ստորագրություններն են դնում բոլոր ներկա գանվողները, առանց բացառության։

«Մեք ներքոյ դերալիս առաջաւորք ժողովրդեան Նախիջևանի, բաղաքական գլխով հանդերձ, և դասաւորք և երէցփոխանք եկեղեցեաց քաղաքիս, և հին ու նոր պատգամաւորք ընտրեալք և կարգեալք ի քննութիւն հաշուոց եկեղեցական դրամոց պահանջելոց կամ պահանջելեաց ի Յարութիւն Աղայէ Խալիպեան, ժողովեալք ի խորհուրդ այսօր ի 22 ամսոյս Յունիսի 1858 ամի ի տեղակալէ Առաջնորդութեան վիճակիս Նախիջևանի և Պեսարապիոյ, յետ լսելոյ զկարծիս և զխորհուրդս նորա՝ հաւանեցաք և հաւնիմք, զի այս խնդիր եկեղեցական դրամոց պահանջելեաց ի Յարութիւն Աղայէ Խալիպեան աւարտեսցի բոլորովին և անդարձ եղանակաւ՝ ըստ առաջարկութեան նորին տեղակալ Հօր, այսինքն հաշտութեամբ և խաղաղութեամբ, դադարելով այսուհետև յամենայն հա-

77 ЦГИА СССР, ф. 880, оп. 5, д. 33, л. 57 об.—58.

78 Գ. Այվազյան, Պատմության Խալիպյան ուսումնարանին, էջ 35—36։

79 Նույն տեղում, թ. 8, և էջ 36—37։

80 Նույն տեղում, էջ 38—39։ Տե՛ս նաև ЦГИА СССР, ф. 880, оп. 5, д. 33, л. 58р։

81 Գ. Այվազյան, նշվ. աշխ., էջ 39—40։

82 Նույն տեղում, էջ 40։

83 ЦГИА СССР, ф. 821, оп. 140, д. 24/3136, ч. I, л. 52 об.

ֆառակութեանց և յընդդիմաբանութեանց և վիճմանց, վստահ գոլով թէ և աղա Յարութիւնն Պօղոսեան Խալիպեանց՝ ըստ խոստմանն առեալոյ չինքեանէ հատուցութեամբ Գերապատիւ Տեղակալի Առաջնորդութեան վիճակիս՝ դազարեսցէ յիւրմէ կողմանէ յամենայն հակառակութիւննէ, և յետս առցէ յամենայն դատաստանական ահեղաց զո՛ր և իցէ բողոք իւր և զգրուած՝ զոր տուեալ իցէ ընդդէմ սրբազան արքեպիսկոպոսին Մատթէոսի նախկին առաջնորդի վիճակիս, և կամ ընդդէմ պատգամաւորաց ընտրելոց հրամանաւ նորա, և ընդդէմ ո՛մ և իցէ ի գիտելոցն ի քննութեան այսր խնդրոյ։ Վստահ եմք և ևս, զի ըստ երաշխաւորելոյ գերապատիւ Տեղակալի Առաջնորդութեանն՝ Յարութիւն Աղա Խալիպեանցն ևս յիւրմէ կողմանէ յաւելցէ ինչ յօգուտ եկեղեցեաց վիճակիս՝ ըստ արժանի իւրումն առատաձեռնութեան, և այն՝ ի նշան հաշտութեան, սիրոյ և խաղաղութեան։ Յաղագս այսր ամենայնի և սատարզրեմք»[84]։ Այնուհետև հաջորդում են ժողովին ներկա բոլոր 41 անձանց սատարգրութիւնները։ Սա ունևոր դասի տարբեր շերտերի ներկայացուցիչների գործարքն էր, որը շրջանցում էր աշխատաւորների շահերն ու ձգտումները։

Եկեղեցական գումարների շուրջը մշտապես դառնող հակամարտութիւնները այսպիսի ավարտի հասցնելու համար Գ. Այվազովսկին արժանանում է անգամ էջմիածնի սինոդի շնորհակալութեանն ու հորդորին։ Հաշտութեան պատճէն կցելով իր գործերին, սինոդը 1858 թվականի սեպտեմբերի 2-ին Գ. Այվազովսկուն տեղեկացնում էր, թէ «սինոդս պարտ վարկանի ծանուցանել Քարձր Արժանապատուութեան Ձերում, թէ ամենայն գովանի գործակատարութիւնք Ձեր, թէ՛ յայսմ մասին և թէ յայլ առնօրինակ գործս վերաբերեալս օգտի սրբոյ եկեղեցւոյն և ձեզ հատուցեալ հօտին, չունին մնալ բնաւ անվարձ առաջի ծայրագոյն Հոգևոր իշխանութեան իւրոյ»[85]։ Ասացինք ամենայն էջմիածնի սինոդը, որովհետև շուտով Մատթեոս կաթողիկոսն ինքը եկեղեցական գումարների շուրջը վերսկսված պայքարը կրքոտ ջանասիրությամբ և կողմնակալ միտումով օգտագործելու է Գ. Այվազովսկու դեմ։

Դադարը տևական չեղավ։ Հունիսի 22-ի հաշտագիրը, հատատելով ձևական խաղաղություն, չէր կարող վերացնել վեճերի ու բախումների արմատական պատճառները։ Աղա Խալիբյանն ու վարդապետ Այվազովսկին մարմնում էին եկեղեցու և ամենաունևոր դա-

[84] Գ. Այվազյան, նշվ. աշխ., էջ 40—41։

[85] Նույն տեղում, էջ 46։

սի շահերի համար, ընդ որում Այվազովսկին այդ պայքարը մղում էր հատկապես իր կրթական ծրագրի նյութական հիմքի ապահովման համար։ Կարապետ աղա Հայրապետյանն ու նրա կուսակիցները սրանց ամբաստանում էին լիբերալ-բուրժուական դիրքերից, և նրանց պայքարը երերուն էր ու տատանվողական, որով և բացատրվում է Խալիբյանի հետ համաձայնության գալու նրանց սեթևեթանքը այն պահերին, երբ թվում էր, թե իրենց դասի շահերը բավարարություն են ստանում։ Հայրապետյանն ու նրա կողմնակիցները եկեղեցական գումարների կապակցությամբ Գ. Այվազովսկու և Խալիբյանի առաջարկություններին իրենց համաձայնությունը տվին 1858 թվականի հունիսին, 1860 թվականի աշնանը, 1861 թվականի հոկտեմբերին և այլն[86]։ 1861 թվականի աշնանը Նախիջևան ժամանելիս կոմս Սիվերսը «կարողացել էր հասնել լիակատար հաշտեցման և Հայրապետովի կողմնակիցներից շատերը նրա հետ միասին եղել էին Խալիբովի տանը. բացի դրանից, Հայրապետովը,— գրում էր Նովոռոսիայի և Բեսարաբիայի գեներալ-նահանգապետ Սորոգանովը 1861 թվականի դեկտեմբերի 5-ին,— կարծես թե իր նախկին մեղքը թոթափելու հույսով և ի օրինակ ամբողջ հասարակության ենթարկվելու հիերարխիական իշխանությանը, ցանկություն հայտնեց անձամբ ներկայանալու Այվազովսկի վարդապետին, և Խալիբովը, անհամաձայնության առիթները վերացնելու նկատառումով, պատրաստակամություն հայտնեց նյութական միջոցներով նպաստել Նախիջևանում ուսումնարանի հիմնադրմանը»[87]։ Այսուհանդերձ, Հայրապետովն ու յուրայինները շարունակ հրաժարվում էին իրենց խոստումներից, Խալիբյանն էլ չէր զիջում, և վեճերն ու կռիվները վերսկսվում էին նոր ուժով ու թարմությամբ։

Իրենց օբյեկտիվ բովանդակությամբ ժողովրդական դանգվածների պահանջներն ու ձգտումները միանգամայն այլ էին և տրամաբանորեն հականժար այդ երկու ունևոր խմբակցությունների նպատակներին։ Տվյալ դեպքում մասսաներն իրենց բողոքն արտահայտելու հետ միատեղ կամենում էին այդ գումարներն օգտագործել գոնե իրենց երեխաների կրթության վրա։

Պաշտպանելով տխրահռչակ Խալիբյանին, որը նյութական նեցուկ էր դարձել Թեոդոսիայում բացված ուսումնարանի համար, Գ. Այվազովսկին իր վրա սպիտ վերցներ և ամբաստանություններ

[86] ЦГИА СССР, ф. 821, оп. 140, д. 24/3136, ч. I, лл. 1 об. 12,58.

[87] Նույն տեղում, թ. 58բ։

բնոր։ Սկզբից ևեթ Այվազովսկին զգում էր այդ։ 1860 թվականի նոյեմբերի 12-ին կառավարությանն ուղղած իր գրության մեջ նա շեշտում էր. «քաղաքագլուխ Հայրապետովն իր մի քանի կողմնակիցների հետ միասին կազմում և կանգնած է կոլեգիալ ասեսոր Խալիբովի հակառակորդների կուսակցության գլուխը, որոնք նրա դեմ ունեցած անձնական ատելության հետևանքով իրենց անբավականությունը տեղափոխել են իմ և հավասարապես նաև այն ամենի վրա, որ կատարում եմ ես այստեղ ժողովրդի լուսավորության օգտին, և պատրաստ են բոլոր միջոցներով խոչընդոտել իմ ձեռնարկումները»[88]։ Նալբանդյանի հետ ունեցած իր հակամարտությանը ևս նա տարիներ անց տալիս էր նույն բացատրությունը. «Սա (Մ. Նալբանդյանը—Վ. Մ.),—գրում էր նա, 1880 թ.,—ուրիշ պատճառ չուներ Գաբրիել վարդապետին հակառակելու, եթե ոչ այս՝ որ նախ նա (Գ. Այվազովսկին—Վ. Մ.) յուր թշնամվույն, այսինքն Խալիպյան Հարություն Աղային ազգային բարեգործությունը ընդունեցավ և առաջ տարավ. և երկրորդ այս՝ որ նա (Այվազովսկին—Վ. Մ.) հաջորդել էր Մատթեոս արքեպիսկոպոսին տեղը, որ յուր պաշտպանն ու բարերարն եղած էր ժամանակով, թեպետև նորա խորհրդոցը և գործոցը անհաղորդ»[89]։

Ուսումնարան հիմնելու միջոցներ որոնելիս Այվազովսկին, այսպիսով, գործարքի գնաց Խալիբյանի հետ, գործարք, որը նրա վրա բևեռեց Խալիբի հակառակորդների հարվածները, ապա նաև ուղղակի ատելությունը, հանդամանք, որը, ինչպես արդեն ակնարկել ենք, Գ. Այվազովսկին նախապես կանխազգում էր։

Գ. Այվազովսկու կարծիքով, նա Հ. Խալիբյանին պաշտպանելուց բացի այլ ելք չուներ, եթե մտադիր չէր իր ուսումնարանը զրկել նյութական միջոցներից։ Այս վերջին հանգամանքն էր նաև ստիպել նրան կանգնելու Հ. Խալիբյանի պաշտպանության դիրքերում, թեպետև գիտակցում էր դրանից բխող անախորժ հետևանքները։ Պատասխանելով Ս. Լազարյանի՝ Մ. Էմինի մոլապատիր դրդումով իր հասցեին արված կշտամբանքին, թե ինչու է ինքը համաձայնվել ուսումնարանը Խալիբյան անվանելու, Գ. Այվազովսկին գրում էր. «Ձեզ հայտնի է, որ Ռուսաստան փոխադրվելիս իմ մտադրությունն ու նպատակը այն էր, որպեսզի այստեղ՝ Ռուսաստանի հարավում և

88 Նույն տեղում, թ. 1։
89 Գ. Այվազյան, նշվ. աշխ., էջ 79։

Սպենդիարյանների շիրիմատունը Սիմֆերոպոլի հայկական գերեզմանատանը։



Յալթայի հայկական եկեղեցին:

Արևելքին մոտ ուսումնարան հիմնում մեր ժողովրդի պանգված լուսավորության համար, որը մինչև այսօր քարացել է ծայրահեղ տգիտության մեջ: Ռուսական լուսավորյալ կառավարության կողմից ես հանդիպեցի լիակատար պաշտպանության՝ օգնելու ինձ իմ մտադրության իրագործման համար, բայց դրա համար, բացի այդ, անհրաժեշտ էին նաև նյութական միջոցներ, որոնք կառավարությունը պարտավոր չէր և չէր կարող ինձ տալ: Ես հանդիպեցի Մամարդու (Հ. Խալիբյանին—Վ. Մ.), որը պատրաստակամություն հայտնեց իմ կողմից նախատեսվող հիմնարկության համար պահաբերելու 200 հազար ռուբլի, բայց այն մտադիր պայմանով, որ դպրոցի գլխավոր ուսումնարանը, որ ես կբացեմ, կրի նրա անունը: Մի՞թե ես կարող էի չընդունել այդպիսի նշանակալից զոհաբերությունը այն հիման վրա միայն, որպեսզի չբավարարեմ նրա, ասենք թեկուզ և փառասեր, թեկուզ և անարդարացի ցանկությունը»[90]: Առավել պարզ դժվար է բացատրել Խալիբյանին պաշտպանելու նրա քայլերի իմաստն ու նպատակը: Բայց վերը բերված տողերից հետևում է նաև, որ այդ պաշտպանությունն ունեցել է գործը չձախողելու նպատակ, ժամանակակից լեզվով ասած, գործարքի բնույթ:

Եվ հիրավի, տարիներ անց, 1871 թվականին, Գ. Այվազովսկին վճռականապես դեմ է դուրս գալիս Խալիբյան ուսումնարանի փոխարեն բացվելիք թեմական դպրոցը կրկին Խալիբյանի անվամբ կոչելուն, որին ձգտում էին վերջինիս ժառանգները, որոնք դպրոցի տարեկան 26 հազար ռուբլու ծախսից համաձայնվում էին տալ միայն 6000 ռուբլի: 1871 թվականի սեպտեմբերի 27-ին Գ. Այվազովսկին այս առթիվ կաթողիկոսին գրում էր. «Թող դի և տէրութիւնն իրաւամբ չհաւանիսցի ընդ այսպիսի կոչումն (Խալիբյան անվամբ —Վ. Մ.) դպրոցին, և ազգն առհասարակ անիրաւութիւն իմն նշմարիսցէ յայնմ անուանակոչութեան, որպես և արդեն նշմարին բազումք, որովհետև նուիրատուութիւնն խոստացեալ ի ժառանգաց Խալիպեանի հազիւ թէ բաւական լինի ի պահպանութիւն Խալիպեան անհիցն որ ի նմա»[91]:

Եկեղեցական գումարների կապակցությամբ բողոքի առաջին ձայնը բարձրացրեց Մ. Նալբանդյանը: «Հյուսիսափայլի» № 11-ում նա տպագրեց «Նամակ առ հրատարակողը» հոդվածը, որտեղ Խալիբյանի մոտ եղած եկեղեցական գումարները ներկայացնելով

90 ЦГИА СССР, ф. 880, оп. 5, д. 33, л. 199 об.

91 Մաաենադարանի արխիվ, ֆ. կաթ. գիվան, բղթ. 218, վավ. 18, թ. 54բ:

150—200 հազար ռուբլի՝ բողոքում էր Գ. Այվազովսկու կողմից հարցի նման լուծման դեմ: «Առաջնորդը փոխվելով... վիճակային դործերի կառավարիչ գերապատիվ Այվազովսկի Գաբրիել վարդապետը գնաց Նախիջևան... ստացավ 62.000 մանեթի մուրհակները և հրապարակից պ. Խալիպյանցը պաշտպանությունից ազատ»[92],— դրում է Մ. Նալբանդյանը: Սրան հաջորդում է 1860 թվականին այս առթիվ Մ. Նալբանդյանի ներկայացրած բողոքը Մատթեոս կաթողիկոսին, երբ ինքը ժամանել էր Էջմիածին՝ Հնդկաստան մեկնելու կապակցությամբ: Բողոքը Նալբանդյանը ներկայացնում է Նախիջևանի նախկինում ընտրված 6 անձից բաղկացած հանձնաժողովի անունից[93]: Եկեղեցական գումարների շուրջը մթնոլորտը վերստին շիկանում է նաև Նախիջևանում, որի բնակչության մի զգալի մասը փայփայում էր կրթական օջախը իր մոտ բացելու հույսերը և այս պատճառով այնքան էլ ջերմորեն չէր ընդունել Թեոդոսիայում ուսումնարանի հիմնադրման լուրը:

Իր հերթին Գ. Այվազովսկին էլ ձեռքերը ծալած չի նստում: Նա բողոքներով լեցուն դիմումներ է անում ներքին գործերի մինիստրին, մինիստրության օտարազավանների դեպարտամենտին, Լազարյաններին: Այդ բողոքները նա սկսել էր մինչև «Նամակ առ հրատարակողը»: Դեռևս հայերին հոգևոր հոդվածների և դրականության գրաբննչի պարտականությունները[94] ստանձնելիս, մի բան, որ տեղի էր ունեցել Խաչատուր Լազարյանի հավանությամբ, Գ. Այվազովսկին վերջինիս բողոքում է «Հյուսիսափայլում» հայ հոգևորականության մասին անբարեմիտ ելույթների դեմ: 1858 թվականի հոկտեմբերին նա գրում է Խ. Լազարյանին. «ինձ համար միանգամայն հաճելի էր իմանալ Ձեր հավանության մասին այն կապակցությամբ, որ ես ստանձնել եմ հայերին գրքերի գրաքննչի պարտականությունը: Հարմար այս առիթով ես ինձ թույլ եմ տալիս դիմելու Ձերդ գերազանցությանը, որպես Լազարյան ճեմարանի հոգաբարձուի, խոնարհ խնդրանքով՝ մատնացույց անելու «Հյուսիսափայլ» մոսկովյան հանդեսի պարոն խմբագրին այն անբարեմտության և մեր հոգևորականության դեմ այն անձնականությունների մասին, առհասարակ, որոնցով լեցուն են այդ պարբերականի հոդվածներից մի քանիսը և խնդրելու նրանից այսուհետև իր հանդեսում տեղ

92 «Հյուսիսափայլ», 1858, № 11, էջ 435—436:

93 ЦГИА СССР, ф. 821, оп. 140, д. 24/3136, ч. I, л. 33.

94 Մատենադարանի արխիվ, անհատ. անձանց ֆոնդ, թղթ. 205, վ. 1300. Տե՛ս նաև Одесский облархив, ф. 8, оп. 1, д. 23, л. 7 об.

չտալու այդօրինակ անվայել հոդվածներին: Հակառակ դեպքում ես ստիպված կլինեմ «Հյուսիսափայլի» դեմ գնալ օրինական ճանապարհով, նրա անբարեմիտ հոդվածների վրա հրավիրելով ներքին գործերի պարոն մինիստրի ուշադրությունը»[95]:

Գ. Այվազովսկու բողոքը, ինչպես և պետք էր սպասել, Խ. Լազարյանն ընդունում է կարեկցանքով, նշելով, որ նրա փաստարկումները «Հյուսիսափայլի» դեմ հիմնավոր են և արդարացի[96]: Սա համանման մտածելակերպի տեր մարդկանց հայացքների միասնություն էր անտարակույս: Խ. Լազարյանը Ստ. Նազարյանցին խորհուրդ է տալիս «ձեռնպահ մնալ և վերջ տալ անվայել, վիրավորական հոդվածներին մեր հոգևորականության, այլև այն մարդկանց հասցեին, որոնք ծառայում են Լազարյան ճեմարանում, ինչպիսիք են պ. Մսուրը և պ. Էմինը, որովհետև հրատարակիչը և նրա վստանգավոր աշխատակիցը նրանց և մյուսների հետ թշնամանքի մեջ են: Հայտնի է, որ պ. Նալբանդյանցը գիտուն է և օժտված է ընդունակություններով, բայց... ըմբոստ է և համառ»[97]: Սակայն խմբագիրն ու նրա «վստանգավոր աշխատակիցը» բնավ մտադիր չէին լռել: Խ. Լազարյանին ընդհանուր պատասխան տալով, Ստ. Նազարյանցը միաժամանակ № 11-ում տպագրում է Մ. Նալբանդյանի «Նամակ առ հրատարակողը», որտեղ եկեղեցական գումարների պատրվակով ձաղկվում էին Խալիբովը և նրա պաշտպանները: Այս անգամ Գ. Այվազովսկին արդեն ուղղակի դիմում է ներքին գործերի մինիստրին, որպես իր վեհակալ դերատեսչության, որովհետև նրա մեջ մտնող օտարազավանների դեպարտամենտի ենթական էր ինքը՝ իբրև թեմի առաջնորդ: Որպես թեմում լույս տեսնող հոգևոր բնույթի հոդվածների ու գրքերի քննիչ, Գ. Այվազովսկին հայտնում էր մինիստրին, թե «հայերի մեջ «Հյուսիսափայլը» հանդեսի հետագա տարածումը նրա այդպիսի հակակրոնական և ոչ-բարոյական ուղղությամբ» վտանգավոր է ու խնդրում էր «որքան կարելի է արագ արգելել այդ հրատարակությունը նրա ներկայիս ոգով, այնպես, որպեսզի չարը սկզբում ևեթ խափանվի, իսկ վերոհիշյալ նամակի հեղինակ Նալբանդյանցին, որ օտարազավանների դեպարտամենտում հայտնի է իբրև մի վնասակար և անհանգիստ մարդ, պատժել օրենքի ամբողջ խստությամբ»[98]:

95 ЦГИА СССР, ф. 880, оп. 5, д. 33. л. 45 об.

96 Միքայել Նալբանդյան, վավերագրերի ժողովածու, Երևան, 1956, էջ 87:

97 Նույն տեղում, էջ 87—88:

98 Նույն տեղում, էջ 94—95:

Մինիստրությանն ու Խ. Լազարյանցին Գ. Այվազովսկու ուղղած գրություններից ակներևաբար երևում է, որ նրա բողոքների հիմնական պատճառը ոչ միայն եկեղեցական գումարներն էին, այլև հոգևոր դասի ու եկեղեցու շահերի պաշտպանությունը: Զարմանալու ոչինչ չկար, եթե չենք մոռանում, որ այդ կատարողը Թեմի առաջնորդն էր, ոտից գլուխ կրոնական մի գործիչ: Տարօրինակը, բնդհակառակը, կլիներ այն, եթե նրանից ակնկալենք հակառակ գործելակերպ: Թեմում աշխատող հոգևորականներին և կրոնական գոմանները պաշտպանելու դիրքերից է նա հանդես գալիս «Հյուսիսափայլի» դեմ: «Ես ամենևին էլ դեմ չեմ,—գրում է նա Խ. Լազարյանին 1860 թվականի փետրվարի 10-ին,—որպեսզի հայերեն լեզվով լույս տեսնեն որքան հնարավոր է ավելի շատ հանդեսներ: Դա, համենայն դեպս, պարզ ցույց է տալիս ժողովրդի մեջ մտածողության զարթոնք: Ես մտադիր չեմ ուշադրություն դարձնելու այն հոդվածներին, որոնք լցվելու են մանր անձնականությունների՝ ուղղված իմ դեմ կամ իմ երկների դեմ և այլն: Այդ բոլորին ես ոչ մի նշանակություն չեմ տա:

Բայց չարամիտ հարձակումները իմ ուսմունքների և ճարտկումների իմ գործողությունների վրա (ընդգծումը—Վ. Մ.) ես պարտավոր կլինեմ հերքել ամբողջ եռանդով ու վճռականությամբ և նման անվայել մեղադրանքները դատարկելու համար կարիք կունենամ որոնելու ոչ միայն Ձերդ գերազանցության աջակցությունը, այլև խնդրելու բարձր իշխանությանը՝ պատժելու դրանում մեղավոր անձանց»[99]:

Միաժամանակ Գ. Այվազովսկին և Նոր Նախիջևանի հոգևոր կառավարությունը կարգադրություն ու հրաման են իջեցնում «Հյուսիսափայլի» տարածումն արգելելու մասին:

1858—1861 թվականներին և հետագայում ներքին գործերի մինիստրությանը, Խ. Լազարյանին և այլոց Գ. Այվազովսկու գրած զեկույցներն ու դիմումները, որոնցից մի քանիսում ամբաստանություններ են բովանդակում նաև Մ. Նալբանդյանի դեմ, վերաբերել են եկեղեցական գումարներին, Խալիրովի, իրեն և Թեմի առանձին հոգևորականների պաշտպանությանը, Խալիբյան ուսումնարանի բնույթին և գոյությանը՝ կապված եկեղեցական գումարների օգտագործման հետ: Նախ այդ բողոքները, գերակշիռ մեծամասնությամբ, գրված են Հայրապետովի և նրա խմբակցության դեմ: Եվ

99 ЦГИА СССР, ф. 880, оп. 5, д. 33, л. 178.

երկրորդ, վերոհիշյալ հարցերի գծով արված այդ հաղորդումներից և ոչ մեկում չենք հանդիպում քաղաքական որևէ մեղադրանքի՝ կապված Մ. Նալբանդյանի հեղափոխական-դեմոկրատական գործունեության հետ, որոնց Այվազովսկին անտեղյակ էր ու անհաղորդ: Ամենախիտ մեղադրանքները Մ. Նալբանդյանի հասցեին, որոնց հանդիպում ենք Գ. Այվազովսկու հաղորդումներում, ամփոփված են վերը մեր կողմից բերված տողերում («օտարադավանների դեպարտամենտում [Մ. Նալբանդյանը] հայտնի է իբրև վնասակար և անհանգիստ մարդ»), ինչպես նաև 1861 թվականի փետրվարի 14-ին կոմս Ստրոգանովին հասցեագրած գրության մեջ: Եկեղեցական գումարների կապակցությամբ նա Ստրոգանովին գրում էր, թե այն «կուսակցությունը, որը ղեկավարում է Նալբանդովը, որը Մոսկվայի ոստիկանությանը հայտնի էր իր անհանգիստ բարքով և այն վնասակար մասնակցությամբ, որպիսին նա ունեցել է հանդուցյալ կաթողիկոսի (Ն. Աշտարակեցու—Վ. Մ.) և Թեմի կառավարման գծով իմ նախորդի միջև եղած դժբախտ վեճին, վերջերս կարողացել է (կուսակցությունը—Վ. Մ.), նշված Նալբանդովի հաղորդումների օգնությամբ, կաթողիկոսին և էջմիածնի սինոդին դրգռելու՝ անելու որոշ կարգադրություններ, որոնք բոլորովին հակառակ են Ռուսաստանում հայկական եկեղեցու կառավարման մասին կանոնադրության ոգուն ու իմաստին»[100]: Դժվար չէ նկատել, որ այս տողերում ևս քաղաքական մատնության հետք անգամ չկա: Եվ առհասարակ, Մ. Նալբանդյանի ձերբակալումն անհնարին է առնչել Գ. Այվազովսկու զեկուցագրերի հետ: Մեր ձեռքի տակ են 1858—1865 թվականներին ներքին գործերի մինիստրությանը, նրա օտարադավանների դեպարտամենտին և Խ. Լազարյանին ուղղած Գ. Այվազովսկու բոլոր գրությունների միկրոպատճենները, և դրանցից ամենակասկածելի տողերը մենք բերեցինք վերևում: Կրկնում ենք, նրա գրություններում քաղաքական մեղադրանք և մատնություն չկա Նալբանդյանի հասցեին: Եվ առհասարակ, եթե Այվազովսկին ցանկանար մատնագիր ուղարկել, ապա այն պետք է ուղղեր ոչ թե ներքին գործերի մինիստրություն, այլ Ոստիկանության դեպարտամենտ: Նախ այդ: Եվ ապա այն, որ Այվազովսկին ներքին գործերի մինիստրին էր դիմում ոչ թե որպես քաղաքական մեղադրանքներ ընդունող օրգանի, այլ որպես մի գերատեսչություն, որն իր ուղղակի վերադասն էր, հոգևոր գործերի գծով: Տակավին 1865 թվականին «Արդյոք ով էր կամ ինչ էր Նախիջևանու երկպա-

100 Նույն տեղում, ф. 821, оп. 140, д. 24/3136, ч. I, л. 52 с об.

ռակութեան պատճառը» հոդվածում նրա հեղինակ Ալ. Պոյաճյանը, պատասխանելով նման շշուկներին, գրում էր. «գիտենք, որ երբ նույն երիտասարդը (Մ. Նալբանդյանը—Վ. Մ.) երկու օրեն եռքը հանկարծակի պաշարվեցավ յուր տան մեջ տերության զինվորներեն և բռնվեցավ տարվեցավ Փեթերբուրկ, և տերության դեմ հանցավոր դտնվող չարագործաց բերդը բանտարկվեցավ, կարծիք ընողներ եղան, թե այն պատուհասին ալ պատճառ առաջնորդն էր. բայց ոչ ապաքեն շուտով իմացան և նոքա՝ թե գ. առաջնորդը բոլորովին անգետ և անտեղյակ էր այն վտանգավոր երիտասարդին գործերուն և թե միաբն ալ չէր անցած, որ այդպիսի որոգայթ մը լարև անոր...»[101]: Այսպես, ուրեմն, այդօրինակ լուրերը Գ. Այվազովսկու հասցեին ժամանակին մերժվում էին: Ձնոք կարծում, թե Գ. Այվազովսկուն «մատնիչ» կնքելը ավելի կբարձրացնի Մ. Նալբանդյանին: Պատմությունը կշռոքի նժար չէ, իսկ Մեծն Նալբանդյանը իր հեղափոխական-դեմոկրատական հայացքներով ու գործունեությամբ, գրական-հրապարակախոսական ժառանգությամբ և ազգօգուտ գործերով այնպիսի մի հսկա է, որ բնավ կարիք չի զգում այդօրինակ մի նեցուկի: Մյուս կողմից, «մատնիչ» մեղադրանքի հերքումը չի կարող վերացնել հետադիմական այն դիրքավորումը, որ բռնել էր թեմի առաջնորդ Գ. Այվազովսկին Մ. Նալբանդյանի և «Հյուսիսափայլի» հանդեպ:

* * *

Այլ կերպարանք ուներ այն պայքարը, որ այս շրջանում բորբոքվեց նոր թեմական և նորընտիր կաթողիկոսի միջև: Անհեռատես և սահմանափակ Մատթեոսը դեմ էր գնում նույնիսկ կրթական այն ձեռնարկումներին, որ սկսել ու շարունակում էր Գ. Այվազովսկին: Հավանաբար, Մատթեոսը ցավագին էր ընկալել այն լուրը, որ դեռևս 1857 թվականից սկսած տարածվել էր Գ. Այվազովսկու կաթողիկոս դառնալու հավանական թեկնածության շուրջը: Իսկ այդպիսի լուրեր ու մտադրություններ իրոք եղել էին: 1857 թվականի ապրիլի 18-ին թուրքական դեսպանատան խորհրդատու Հակոբ Կերչիչյանը Փարիզից գրում էր, թե «այժմ Թուրքիայում բռնակվող հայերը մենակ Այվազովսկի վարդապետից բացի ոչ ոքի չեն ճանաչում այնքան գիտուն, այնքան տարբեր լեզուներ իմացող, այնքան հայ ազգը սիրող, բարեկարգությանը այնքան նվիրված և այնքան արժանի՝ լինելու կաթողիկոս: Միայն նրան պետք է նա-

101 «Միածան», Թեոդոսիա, 1865, էջ 47:

խասահմանեն կաթողիկոս ընտրվելու համար և այդ պատճառով էլ թուրքահայերը ցանկանում են իմանալ՝ Ռուսաստանում ապրող հայերը արդյոք համաձայն կլինե՞ն Գաբրիել վրդ. Այվազովսկուն ընտրելու կաթողիկոս»[102]: Խ. Լազարյանին հայտնելով, որ դա թուրքահայոց ընդհանուր ցանկությունն էր, Կերչիչյանը նրանից խնդրում էր այդ կապակցությամբ երկու գրություն հղել՝ մեկը Կ. Պոլիսի Հայոց պատրիարքին, մյուսը՝ Ազգային եկեղեցական խորհրդին և նրա անդամներին, հայտնելով ռուսահայոց կարծիքը:

Գ. Այվազովսկուն կաթողիկոս դարձնելու տեղեկությունը, հավանաբար, այդ ժամանակ հայտնի է դառել հայկական շրջաններում՝ թե Թուրքիայում և թե Ռուսաստանում: Գաբրիել Այվազովսկու այսպիսի առաջքաշման նախաձեռնողներից մեկը Ի. Դելյանովն էր: Գ. Այվազովսկու եղբայր հանրահռչակ նկարիչ Հովհաննեսը, որը 1857 թվականին նստած էր Փարիզում և ժամանակին քիչ դեր չէր խաղացել եղբոր «գործի» և Փարիզի ռուսական դեսպան Կիսելյովի հետ նրա ունեցած բանակցություններում, այս կապակցությամբ 1857 թվականի մարտի 24-ին Փարիզից Խ. Լազարյանցին գրում էր, թե Դելյանովը և Սեմյոն Դավիդովիչ Լազարևը (գեներալ-մայորը) ցանկություն են հայտնել Գ. Այվազովսկուն տեսնելու կաթողիկոսական պաշտոնում: «Դրանից մենք եզրակացնում ենք, թե դա Ձեր (Լազարյանի—Վ. Մ.) ընդհանուր կարծիքն է, որը շատ սրտաշարժել է եղբորս, և ինձ շատ է ուրախացնում, բայց դրա հետ մեկտեղ լիովին գիտակցում ենք դժվարությունը և անգամ անկարելիությունը՝ նրա աստիճանի և տարիքի առնչությամբ, բայց եթե ցանկությունը լինի ընդհանուր, ապա, ինչպես ասում են, էջմիածնի սինոդը իրավունք ունի նրան օծելու եպիսկոպոս, եթե նա մեծամասնությամբ ընտրվի պատրիարք... Դատելով լուրերից և նամակներից, Արևվելքում բոլոր հայերը եղբորս, քան թե ուրիշի կողմն են, իսկ իշխանությունների (մերձդանուբյան—Վ. Մ.) հայերի մասին խոսելն ավելորդ է, նրանք բոլորը, մինչև վերջինը, Գաբրիելի պարտիզաններն են... [նույնն են ուղում] Փարիզում մի քանի անձինք տարբեր կողմերից, և պետք էր տեսնել նրանց հիացմունքը, երբ ես նրանց հաղորդեցի այն կարծիքը, որ շարադրված էր Իվան Դավիդովիչի նամակում. նրանք բոլորը ստանձնեցին այդ գաղափարը հայտնելու յուրայիններին՝ Կոստանդնուպոլիս, Մոլդովիա, Պարսկաստան: Կասկած չկա, որ եթե վերոհիշյալ պատճառներով խոչընդոտներ

102 ЦГИА СССР, ф. 880, оп. 5, д. 33, л. 1 с об.

չլինեն, ապա նա կընտրվի, առավել ևս եթե դուք ստանձնեք միջամտելու Պետերբուրգում և Անդրկովկասյան երկրամասում,— այդ էլ հենց գլխավորն է, ինչպես Ձեզ հայտնի է»[103]:

Կաթողիկոս դառնալու լուրերը, հավանաբար, քիչ դեր չխաղացին Գ. Այվազովսկու դեմ անհամակիր կարծիքների առաջացման մեջ: Մատթեոսը, իհարկե, չէր կարող անտեղյակ լինել ժամանակին տարածված այս լուրերին, և ճիշտ կլիներ կռահել, որ Այվազովսկու նկատմամբ նրա բռնած բացասական դիրքն ու թշնամական վերաբերմունքը հետևանք էին նաև սուբյեկտիվ մոտեցման:

Հարձակման նախաձեռնողը ինքը Մատթեոսն էր: Չնայած լարյանների, հայ հոգևորականության վերնախավի մի զգալի մեծամասնության և կառավարության բազմակի միջնորդություններին, Մատթեոսը համառում և հրաժարվում էր Գ. Այվազովսկուն ձեռնադրել եպիսկոպոս: Կ. Հայրապետյանի և նրա կողմնակիցների հուշումով 1860 թվականի հոկտեմբերի 6-ին կաթողիկոսը Գ. Այվազովսկուն դատափետող մի կոնդակ է իջեցնում Նախիջևանի քաղաքագլուխ արդեն ծանոթ Հայրապետովի անունով և սրան պատվիրում այն «ծանուցանել ազգին մերոյ»[104]: Հայրապետյանը, իհարկե, կատարում է այդ: Ինչի՞ մեջ էր, սակայն, մեղադրվում թեմակալը: 1860 թվականի հոկտեմբերի 6-ի և նոյեմբերի 25-ի կոնդակներում Կովկասի փոխարքային, պաշտոնական անձանց և Ալեքսանդր 2-րդին գրած բողոքներում կաթողիկոսը Գ. Այվազովսկուն ներկայացնում էր հետևյալ մեղադրանքներն ու ամբաստանությունները: Այս վերջինները ամենից ամփոփ շարադրված են 1860 թվականի նոյեմբերի 25-ի կոնդակում, որը և մեջբերումներով վերարտադրում ենք ստորև՝

1. Այվազովսկին հանդգնել էր թեմական կենտրոնը Քիշնևից տեղափոխել Թեոդոսիա: Մենք արդեն առիթ ենք ունեցել այս կապակցությամբ ծանոթանալ Գ. Այվազովսկու բացատրություններին:

2. Գ. Այվազովսկին կրթական և առհասարակ աշխարհիկ դործերը վեր էր դասել եկեղեցական իր պաշտոնավարությունից: «Դուք,— կարդում ենք կոնդակում, որից մասամբ օգտվել ենք,— զգերազոյն պաշտօն վիճակաւոր առաջնորդութեան, որ պարտաւորէ զձեզ զպահպանութենէ հօտին յանձին բերել ջնորհատարութիւն, ի բաց թողեալ, պարապիք բուռ մեծի մասին ի զբաղմունս վերատեսչական կառավարութեանց Խալիբեան ուսումնարանի, մեծ և երևելի դասելով զայն, քան զպաշտօն վիճակաւոր առաջնորդութեան. պարտապիք նոյնպես և նուիրեալ իսկ էք բոլորովին զամենայն ժամանակս ձեր՝ ի զբաղմունս «Միածնի» անուան օրագրական տպագրութեան, ընդ որ ոչ ոք յառաքելական պատուիրանաց և ի կանոնաց եկեղեցականաց հարկադրեն զձեզ լինել ձեռնամուխ, մանաւանդ թէև և արգելուն իսկ»[105]: Այս նույն կետում Գ. Այվազովսկին ամբաստանվում էր աշխարհիկ ստեղծագործությամբ զբաղվելու և դրքեր դրելու համար:

3. Հանդիմանում է, որ չնայած ժամանակին ինքը հատուկ կոնդակով արգելել է Գ. Այվազովսկուն Խալիբյան ուսումնարանն ընդունել բողոքական և կաթոլիկ դավանանքի հայ երեխաներին, բայց այդ հանձնարարականը նա չի կատարում:

4. Գ. Այվազովսկին մեղադրվում էր հայ աղջիկների համար դպրոց բացելու մեջ. «Անպատեհ և անվայել մինչ իսպառ հոգևոր կոչման ձերոյ ձեռնամուխ եղայք ի հաստատել ի Խալիպեան ուսումնարանի անդ զկրթարան օրիորդաց, ուր ուսանելուց են նոքա զկարաւ կայթից, որոյ հոդաստարութենանց փոյթ ունել աշխարհականաց միայն է վայել և ոչ հոգևորականաց, զորմէ և առանց ինչ ակնածութեան արժան էիք դատեալ հրատարակել տպագրութեամբ, պարծանք ձեզ համարելով զայն»[106]:

5. Կաթողիկոսի կողմից Գ. Այվազովսկուն ներկայացված մեղադրանքներից մեկն էլ Խալիբյան ուսումնարանում գործող «Լաւրան կենցաղօգուտ գիտելեացն» էր, որի նպատակն էր, որպեսզի «մեծահասակ ժողովրդականներն ևս զուրկ չմնան բոլորովին այն հարկաւոր տեղեկութիւններեն՝ որ կարելի է դյուրաւ և զվարճութեամբ սովորեցնել իրենց»[107]: Շարաթը մեկ անգամ ուսումնարանի մեծ սրահն էին հավաքում «արց և կանանց», որոնց համար Գ. Այվազովսկին, Խորեն վրդ. Գալֆայանը և ուրիշներ դյուրիմաց ճառով գիտելիքներ էին հաղորդում «սուրբ գրոց, ազգային և արտաքին պատմութենեն, աշխարհագրութենեն, ի բնագիտութենեն և այլն: Այս օգտակար ձեռնարկությունը այնքան հաճո երևեցավ ժողովրդյան, որ քանի գնացին բազմացան լսարանի նկոդները, և հարկ եղավ շարունակել նաև երկրորդ տարվույն ձմեռը»[108]: Լսա-

---

103 *Н. К. Айвазовский*, Документы и материалы. Ереван, 1957, стр. 121—122.

104 ЦГИА СССР, ф. 821, оп. 140, д. 24/3136, ч. I, л. 4.

105 *Մատենադարանի արխիվ, անհատ. անձ. ֆոնդ, թղթ. 150, վավ. 114, թ. 1բ:*

106 *Նույն տեղում, թ. 2ա:*

107 *Գ. Այվազյան, նշվ. աշխ., էջ 103:*

108 *Նույն տեղում, էջ 104:*

բանում սովորեցնում էին նաև գրագիտություն ու թվաբանություն: Լսարանի բացման կապակցությամբ արված հայտարարության մեջ ասված էր, որ «կարդալ գրել և թվաբանության ու հաշվենկալության սկզբունք սովորել կամեցողները մեկ ժամ առաջ պիտի ժողովին և առանձին դաս առնուն»[109]:

1861 թվականի սեպտեմբերի 3-ի ամբաստանական կոնդակում Մատթեոսը գրում էր, թե «Լուսեր հնարեց լսարան» և ամեն ինչ հանդեցնելով կրոնի քարոզի՝ պահանջում էր դադարեցնել նրա գործունեությունը, որպես լուսերականության կամ կալվինականության, ու բավարարվել միայն եկեղեցիներում տրվող քարոզով[110]:

Այնքան էլ զարմանալի չեն, որ ամենայն հայոց կաթողիկոսը նման մեղադրանքներ էր նետում: Առավել զարմանալին այն է, որ, ելնելով Գ. Այվազյանի հետ հաշվիները մաքրելու խնդրից, Կ. Հայրապետյանն ու նրա կողմնակիցները էին գրգռում կաթողիկոսին՝ դիմելու այդպիսի քայլերի: Դժվար չէ նկատել, որ լիբերալ-բուրժուական գործիչ Կ. Հայրապետյանը տվյալ դեպքում, տակտիկական նկատառումներով, հետընթաց քայլ էր կատարում իր իսկ դասի շահերին համապատասխանող դիրքերից:

Կաթողիկոսին, Կովկասի փոխարքային, Նովոռոսիայի և Բեսարաբիայի գեներալ-նահանգապետին, ներքին գործերի մինիստրին և ի. լազարյանին այս հարցերի առթիվ տված իր բացատրականներում Գ. Այվազովսկին, փաստորեն, ավելի առաջադիմական դիրքավորում է ցուցաբերում, քան ոչ միայն կաթողիկոսը, այլև Կ. Հայրապետյանն ու նրա լիբերալ կուսակիցները:

Նախ լսարանի մասին: Պատասխանելով կաթողիկոսի հանդիմանանքին, Գ. Այվազովսկին գրում էր, թե «Լսարան կենցաղօգուտ դիտելյաց»-ը, որը ձմեռային կիրակի երեկոները ժամը 7—9-ը հավաքում է դասի կանանց և աղամարդկանց և նրանց ուսուցանում ընդհանուր դիտելիքներ, «ոչինչ բնաւ ամենևին ունի նմանութիւն ընդ խմբարանաց Լուտերականացն և Կալվինականաց»[111]: Նրա ասելով՝ լսարանը կյանքի էր կոչվել ընդդեմ այն «թանձր տգիտութեան», որը «գրաւեալ պատեալ ունի զմիտս եկեղեցականաց և աշխարհականաց առհասարակ», մի վիճակ, որին «նորա միայն կարող

109 «Մասյաց աղավնի», 1860, էջ 186:
110 Գ. Այվազյան, նշվ. աշխ., էջ 105—106:
111 Նույն տեղում, էջ 109:

են լինել խելամուտ լինել, որ ի մօտոյ ժողովուրդս մեր տեսանիցեն, և ընդ նոսա և նոսին թարթափիցեն՝ զէմ զամ մի և զերկուս»[112]:

Անդրադառնալով եկեղեցու նկատմամբ լսարանի ունեցած առավելությանը, Գ. Այվազովսկին գրում էր կաթողիկոսին. «բնամասացութիւնք և քարոզութիւնք յեկեղեցւոջ թէպէտ և ստէպ—ստէպ լինիցին առ ի մէնջ, և այն ըստ կարի պարզ և դիւրիմաց բանիւք, սակայն և այնպէս յանհնարինն իմն է այնպէս դիւրընտիւ և ախորժ ընծայեցուցանել նոցա զոճ քարոզութեանն և պատմութեան, և այնպէս ի մանուսն իջանել, և այն ընդ ժամս ձիգս, զի ցանգ չօժարափոյթ սիրով ունկնդիր լինիցին ժողովուրդքն, և ի միա ամենայն զբանն, առնուցուն. ևս առաւել անմարթէ նոցա նստել հանդարտութեամբ յեկեղեցւոջ, և այն ի ձմերային յաղանակի, և ժամս երկուս և երիս անընդհատ մտադրութեամբ ունկն դնել խրատուց և քարոզից պատմութեանց»[113]:

Գ. Այվազովսկու դրությունը վատթարացնելու և մանավանդ Թուրքիայի հայ հոգևորականության աչքում նրան հեղինակազրկելու ուղղությամբ Մատթեոսի կատարած առաջին քայլերից մեկը 1860 թվականի հոկտեմբերի կոնդակն էր, որով հրամայվում էր թույլ չտալ արտասահմանից եկած որևէ հայ եպիսկոպոսի մտնելու Նախիջևան-Բեսարաբիա բեմի սահմանները՝ մինչև սա անձնական հանդիպում չունենար կաթողիկոսի հետ՝ թեմն անցնելու նպատակով հատուկ կոնդակ ստանալու համար: Այս կարգը տարածվում էր նաև նրանց վրա, ովքեր թեմ էին գալիս նույնիսկ Կ. Պոլսի պատրիարքի գրավոր հանձնարարություններով: Կոնդակի նպատակն էր Գ. Այվազովսկու նկատմամբ Թուրքիայի հայ բարձր հոգևորականության մեջ բորբոքել անբավականություն, «որովհետև կպատահեն դիպքեր, թեպետ և սակավ,—գրում էր Գ. Այվազովսկին,—որ մարդիկ ուղարկվին հոգևոր կարևոր հանձնարարություններով և կամ Թուրքիայից և այլ երկրներից հոգևոր կամ իրենց մասնավոր գործերով այստեղ ծովափնյա քաղաքները գան հոգևոր զանազան մարդիկ, և եթե նրանց անձնագրերը կարգին լինեն, ինչպես ես կարող եմ ինձ վրա պատասխանություն վերցնել՝ նրանց վտարելու ինձ հանձնված վիճակից և ուղարկել էջմիածին՝ պատրիարքական կոնդակի հասնելց»[114]: Այս կոնդակը, որը կաթողիկոսը իջեցրել էր ոչ թե վիճակավորի, այլ նոր Նախիջևանի հոգևոր կառա-

112 Նույն տեղում, էջ 108:
113 Նույն տեղում:
114 ЦГИА СССР, ф. 821, оп. 140, д. 24/3136, л. 9 об.—10.

վարութեան և քաղաքագլխի անունով, փաստորեն մի արհամարհանք ու մարտահրավեր էր՝ ուղված Գ. Այվազովսկուն։

1860 թվականի նոյեմբերի 12-ին ներքին գործերի մինիստրին գրած նամակում Գ. Այվազովսկին քաղաքագլուխ Հայրապետյանին մեղադրում էր այն բանում, որ նա ժողովրդի մեջ միտումով հրապարակել է կաթողիկոսի 1860 թվականի հոկտեմբերի կոնդակը, որպեսզի մասսայի մեջ առաջացնի անվստահություն, ատելություն և անհնազանդություն թեմի առաջնորդի հանդեպ։ Անդրադառնալով կաթողիկոսի բուն մեղադրանքներին, Գ. Այվազովսկին գրում էր. «բոլոր այն արարքները, որոնց մեջ ինձ մեղադրում է նորին պայծառափայլություն, հանգում են տղաների համար իմ կողմից ուսումնարան բացելուն, օգտակար գրքեր հրատարակելուն և իգական սեռի համար վարժարան հիմնելուն։ Պատրիարքի կարծիքով այդ բոլորը ավելի վայել է աշխարհականներին, քան հոգևոր անձին, և անհամատեղելի է վիճակավոր առաջնորդի պաշտոնի հետ, այնինչ ես համարձակվում եմ կարծել, որ իր հոտը լուսավորելու մեջ են ինձ կայանում յուրաքանչյուր հոտի առաջնորդի կարևորագույն պարտականություններ»[115] (ընդգծումը մերն է—Վ. Մ.)։

Խալիբյան ուսումնարանի ծրագրի և նրան առընթեր լսարանի օրինակով տեսանք, որ հոտը լուսավորելու տակ նա հասկանում էր ոչ միայն բուն կրոնի պրոպագանդը, այլև աղգային ու ընդհանուր պատմությունից և կիրառական գիտություններից ամենանախնական և ամենանշանավոր գիտելիքների հաղորդումը։ Մինչդեռ կաթողիկոսը պահանջում էր «կամ յառաջնորդութենէ հրաժարիլ կամ ի գործոցն՝ զորոց ասացաք, և զորս վայելուչ դատիմք մանաւանդ աշխարհականաց, քան առն հոգևորի»[116]։

Անդրադառնալով օրիորդաց վարժարանին, որն, իրոք, ստեղծվել էր Թեոդոսիայում իր նախաձեռնությամբ ու պնդավորությամբ, Գ. Այվազովսկին հայտնում էր, թե այն չի գործում Խալիբյան ուսումնարանին առընթեր, «այլ կայ յառանձինն և ի հեռաւոր գաւառի ընդ անդ մէջ հսկողութեամբ դաստիարակու...»[117]։

Հետաքրքիր էր թեմակալի վերաբերմունքը Խալիբյան ուսումնարանը կաթոլիկ և բողոքական հայ երեխաներին ընդունելու հարցում։ Ուսումնարանն հիմնելով բոլոր հայերի համար, նա չէր դնում

115 ЦГИА СССР, ф. 821, оп. 140, д. 24/3136, ч. I, л. 3 с об.

116 Նույն տեղում, թ. 4ա։

117 Մատենադարանի արխիվ, անհատ. անձանց ֆոնդ, թղթ. 150, վավ. 115, թ. 1բ։

պավանանքի խստություն, ուրեմն և գործնականում անտեսում էր այդպիսի տարբերությունը՝ իբրև ազգի հատկանիշ։ Թեև ուսումնարանի վրա ծախսվում էին նաև հայ-լուսավորչական թեմի գումարները, բայց Գ. Այվազովսկուն այդ բոլորովին չէր մտահոգում, և նա, ինչպես տեսանք, ուսումնարանի դռները բաց էր արել նաև կաթոլիկ ու բողոքական հայ երեխաների առաջ, սրանց չպարտադրելով, սակայն, «ունկնդելու կրոնագիտության դասերը՝ ըստ հայ լուսավորչական եկեղեցու կանոնների»[118]։ Այս վարքագիծը ներդաշնակ էր ազգային միաբանություն ստեղծելու նրա ծրագրին։

Որովհետև իր վրա արված բողոքներում անընդհատ շոշափվում էր եկեղեցական գումարների խնդիրը, Գ. Այվազովսկին 1862 թվականի հոկտեմբերի 2-ին այս հարցի առթիվ ներքին գործերի մինիստրին ներկայացնում է ծավալուն մի զեկուցագիր։ Այդպիսի բովանդակությամբ զեկուցագրեր նա կազմում էր նաև հետագայում։ Ըստ 1862 թվականի զեկուցագրի, 1858 թվականին Գ. Այվազովսկին ընդունել էր հետևյալ եկեղեցական գումարները[119].

1. Թեմի նախկին առաջնորդ Մատթեոսից . 15.353 ռ. 80 կ.
2. Խալիբովից և Դուլվետովից . . . . . 46.333 ռ. 50 կ.
3. Դարձյալ նրանցից . . . . . 20.367 ռ.
4. 1859 թ. մինչև 1861 թ. ներառյալ Օդեսայի, Տագանրոգի և Տավրիկայի բանկերից հանված եկեղեցական գումարները . . . . . 24.071 ռ. 22½

Ընդամենը . . . . 106.125 ռ. 52½ կ.։

Այս գումարի զգալի մասը ծախսվել էր ուսումնարանի վրա, իսկ մյուսը՝ տրվել էր մասնավոր անձանց՝ 100-ին 6—10-ը տոկոս շահով։ Վերջին գումարը հավասար էր 32.114 ռուբ.[120]։ Եկեղեցական գումարներից Խալիբյան ուսումնարանի վրա 1858—1862 թվականներին ծախսվել էր 82.382 ռուբ. 01 կոպ., իսկ տպարանի վրա՝ 18.974 ռուբ. 36 կ., ընդամենը՝ 101.356 ռուբ. 37 կոպ.[121]։

Խալիբյանի նվիրած գումարը ամբողջովին (152.000. ռուբ.)[122] ծախսվել էր ուսումնական շենքի շինարարության վրա, իսկ ուսումնարանի համար նյութական կայուն բազա ստեղծելու նպատակով

118 ЦГИА СССР, ф. 821, оп. 140, д. 55/3166, ч. I, л. 64 с об.—65.

119 Նույն տեղում, թ. 240ա։

120 Նույն տեղում, թ. 241բ։

121 Նույն տեղում, թ. 242բ—243ա։

122 Նույն տեղում, թ. 288բ։

Խալիբյանի գնած 7000 դեսյատին հողերը Ղրիմում[123] և երկու շենքերը՝ Տագանրոգում, 1862 թվականին դեռևս ուսումնարանին եկամուտ չէին բերել[124], այնինչ միայն ուսումնարանի ծառայողներին տարեկան 11.000 ռուբ. ռոճիկ էր վճարվում[125]: Գ. Այվազովսկին գտնում էր, որ տնտեսապես ոտքի կանգնելուց հետո, երբ լիաթոշակ աշակերտների թիվը կբազմապատկվի և Խալիբյանի նվիրած հողերն ու շենքերը կսկսեն եկամուտ բերել, ուսումնարանը հնարավորություն կունենա ոչ միայն այլևս չծախսելու եկեղեցական գումարները, այլև ծախսվածները վերադարձնելու կոնսիստորիային: Ջատի վերադարձվեին միայն այն գումարները, որոնք ծախսվել էին ուսումնարանում սովորող 30 հոգևոր սանների վրա[126]: Սակայն առայժմ առաջարկվում էր եկեղեցական գումարներից տարեկան ուսումնարանի վրա ծախսել 7500 ռուբլի, քանի որ այնտեղ ձրի սովորում էին 30 աղքատ աշակերտներ[127]:

Չի կարելի չնշել, որ այն ժամանակ հայ եկեղեցական գումարները դժվար թե որևէ այլ տեղ առավել նպատակահարմար օգտագործում էին գտել, քան վերոհիշյալ ծախսումներն էին: Գ. Այվազովսկին, ակներևաբար, իրեն հաշիվ էր տալիս այդ ծախսումների համար և դիտակցում դրանց նպատակային օգուտը աղգային-կրթական գործում: 1865 թվականին նա իր ընդդիմախոսներին պատասխանելիս ընդգծում էր եկեղեցական գումարները աղգային-կրթական նպատակներով ծախսելու կարևորությունը: Փետրվարի 13-ին նա Ա. Լազարյանին գրում էր. «Ինչի մեջ են, իսկն ասած, ինձ մեղադրում և ով է մեղադրողը: Ինձ մեղադրող կաթողիկոսը և եպիսկոպոս Անդրեասի այսպես կոչված ստուգումը, իսկապես ասած, ի՞նչ, ի՞նչպիսի հանցանքներ են գտել իմ գործողություններում՝ իմ կողմից Թեմի կառավարման յոթ տարիների ընթացքում: Բոլոր մեղադրանքները, որ մինչև այսօր լսել եմ, հանգում են մեկ կետի՝ որ ես Խալիբյան ուսումնարանի հիմնման և պահպանման վրա օգտագործել և շարունակում եմ օգտագործել եկեղեցական դրամները: Բայց, չխոսելով այն մասին, որ ես լիազորված եմ եղել նշված նպատակով օգտագործելու եկեղեցական գումարները և որ ես առաջարկեցի, համենայն դեպս, ժամանակին եկեղեցական կապիտային վերադարձնել այն ամենը, ինչ նրանից

123 Նույն տեղում, գ. 24/3136, մ. I, թ. 14բ:
124 Նույն տեղում, գ. 55/3166, մ. I, թ. 243բ—244ա:
125 Նույն տեղում, թ. 244ա:
126 Նույն տեղում:
127 Նույն տեղում, թ. 245:

օգտագործվել է ուսումնարանի վրա, չխոսելով այդ մասին,— մի՞թե եկեղեցական գումարները կարող էին ավելի լավ և սրբությամբ օգտագործվել, քան թե ժողովրդի կրթության վրա: Մի՞թե հոգևորականության առաջին պարտականությունը չէ հոգ տանել ժողովրդի հոգևոր կրթության մասին: Մի՞թե բոլոր լուսավորյալ երկրներում չեն լսվում հանդիմանություններ հոգևորականության հասցեին հենց այն բանի համար, որ նա չի ուզում եկեղեցական ունեցվածքն ու եկամուտներն օգտագործել ժողովրդական լուսավորության օգտին: Իսկ ինձ անհրաժեշտ են գտել մեղադրել նրանում, որ ամենուրեք ես եկեղեցական դրամները կրճատում եմ ժողովրդական կրթության համար: Չէ՞ որ ես չեմ ծախսում, այդ դրամները չեմ օգտագործում սեփական օգուտիս համար: Չէ՞ որ յոթ տարիների ընթացքում ես պահում եմ ուսումնական մի հաստատություն, ուր սովորում և լրիվ ապրուստ են ստանում (սնունդ, հագուստ և այլն) ավելի քան 100 աղաներ, որտեղ միայն նշանակալից ոռճիկ ստացող ծառայողները 125 հոգի են»[128]:

Նամակի վերջին տողերը կասկածից վեր են դարձնում նյութական այն զոհողությունները, որոնց գնացել է Գ. Այվազովսկին ուսումնարանի պահպանման համար. «Ուսումնարանի պահպանումը,— գրում էր նա,— ամեն տարի ինձ վրա նստում է 25—30 հազար արծաթե ռուբլի, և ես անձնապես ոչ միայն չեմ օգտվում եկեղեցական գումարներից, այլև որպես թեմական առաջնորդի օրենքով ինձ հասանելիք ամուսնության, թաղման, կնունքի և այլ եկամուտները ամբողջովին տալիս եմ Խալիբյան ուսումնարանի պահպանմանը»: Իր նամակը նա ավարտում է հուսահատ մի վերջաբանով. «Բավ են ինձ համար և անցած յոթ տարիները, որոնք անցկացրի անլուր ու անսպասելի տառապանքների մեջ... Եվ եթե հարկ լինի շարունակելու իմ կողմից սկսած գործը, ապա ես դրան կհամաձայնվեմ ոչ այլ կերպ, քան ում և իցե անարժան հարձակումներից իմ գործունեությունը, իմ պատիվը, իմ անձը կայուն երաշխիքներով և եռանդուն հաստատ պաշտպանությամբ ապահովելու պայմանով»[129]:

Մնում է ավելացնել Գ. Այվազովսկու հետևյալ խոսքերը՝ ընդգծելու համար նրա շահագրգռվածությունը կրթական գործի նկատմամբ. «Ես ոչ միայն կառավարում եմ այն (ուսումնարանը—Վ. Մ.),— գրում էր նա ներքին գործերի մինիստրություն,— այլև ինքս

128 ЦГИА СССР, ф. 880, оп. 5, д. 33, л. 226 с об.
129 Նույն տեղում, թ. 227ա, բ:

մի քանի առարկա եմ դասավանդում՝ լավ դասատուներ և նրանց հրավիրելու միջոցնևր չլինելու պատճառով։ Ուսումնարանը կառավարելու և դասավանդման համար ես ոչ մի վարձատրություն չեմ ստացել։ Որպեսզի Խալիբյան ուսումնարանը պահեմ կարգին վիճակում, ես անձամբ ինձ այն աստիճանի եմ նյութապես նեղել, որ ապրում եմ կառավարությունից ստացվող 2200 ռուբլով, բնակվում եմ իմ աղզականների տանը, չունեմ հովվապետական կարգին տուն։ Ասեմ առանց ավելորդ համեստության՝ իսկ ո՞վ է մեր հովվապետներից իմ նման ապրում։ Իսկ ինձ, համենայն դեպս, մեղադրում են եկեղեցական «մեծ» գումարների ոչ ճիշտ ծախսման մեջ»[130]։

Կրթական գործի հանդեպ Գ. Այվազովսկու դիրքը պարզելու առումով անհետաքրքիր չէ Լազարյան ճեմարանի հոգևոր բաժանմունքի ապագա բախտի շուրջը Գ. Այվազովսկու և Լազարյան եղբայրների կարծիքների քննարկումը։ 1841 թվականից սկսած ճեմարանում գործում էր հոգևոր բաժանմունք, որի նպատակն էր պատրաստել հոգևորականներ հայ եկեղեցու համար։ Բաժանմունքը պահվում էր մայրաքաղաքների եկեղեցիների եկամուտների հաշվին, տարեկան 6000 ռուբլու մուծումներով։ Մինչև 1857 թվականն շուրջ 16 տարի բաժանմունքը տվել էր ընդամենը 31 շրջանավարտ, որոնցից միայն 5-ը ունեին հոգևոր կոչում։ Սովորելով թեմի եկեղեցական գումարների հաշվին, աղքատ ծնողների այս զավակները հրաժարվում էին դառնալ հայրենական եկեղեցու սպասարկուներ։ Սա առաջ էր բերում վերջինիս գլխավորների բողոքը, և դրանցից առաջինը Ներսես Աշտարակեցին էր, որ սպառնում էր իրերի նման վիճակը շարունակվելու դեպքում բաժանմունքը զրկել եկեղեցու նյութական աջակցությունից։ 1857 թվականի նոյեմբերի 9-ին, Գ. Այվազովսկու Պետերբուրգում լինելու ժամանակ, Հովհաննես և Խաչատուր Լազարյան եղբայրները նրան ծանոթացնում են հոգևոր բաժանմունքի այս վիճակին և առաջարկում փակել բաժանմունքը և նրա վրա տարեկան ծախսվող 6000 ռ. օգտագործել հոգևոր այն սեմինարիայի վրա, որ Գ. Այվազովսկին մտադիր էր բացել Թեմում՝ աշխարհիկ ուսումնարանից դաս[131]։ Այվազովսկին, հակառակ Լազարյանների սպասածին, մերժում է նրանց առաջարկը, և հետաքրքիրը ամենից առաջ այդ մերժման պատճառաբանությունն է։ «Վարդապետ Այվազովսկին չհամաձայնվեց մեր

130 Նույն տեղում, թ. 229ա, բ։
131 Նույն տեղում, գ. 235, թ. 67ա։

այդ առաջարկին,— գրում էր Հովհաննես Լազարյանը ճեմարանի դիրեկտորի պաշտոնակատար Դելյանովին 1857 թվականի նոյեմբերի 9-ին,— ապացուցելով, որ Լազարյան ինստիտուտին առընթեր հոգևոր բաժանմունքը, թեպետ հոգևոր թեկնածուներ չի տալիս, բայց օգուտ է բերում նրանով, որ կրթում է աղքատ հայերին»[132]։ Հովհաննես Լազարյանի առաջարկով Գ. Այվազովսկուս Մոսկվա ժամանելուն պես Դելյանովը նրան է ներկայացնում Լազարյան ճեմարանի խորհուրդը, որի հետ միասին վերատին անդրադառնում են հոգևոր բաժանմունքի խնդրին։ Սակայն այս խորհրդակցության ժամանակ ևս Գ. Այվազովսկին մնում է նույն կարծիքին. «Վերջում,— գրում էր Դելյանովը Հովհ. Լազարյանին,— Գաբրիել վարդապետը կարծիք հայտնեց, որ թեև մինչև այժմ հոգևոր բաժանմունքը քիչ է տվել հոգևոր կոչում ընդունած անձինք, բայց նա օգտաբեր է այն տեսակետից, որ կրթություն է տալիս աղքատ և որբ հայերին, որոնց համար կրթության այլ ուղիները անմատչելի են»[133]։

Գ. Այվազովսկին չէր կարող չհասկանալ, որ Թեոդոսիայում ուսումնարանի բացումը այն նպաստավոր առիթներից էր, որ իր հակառակորդներն օգտագործում էին նոր նախիջևանցիներին իր դեմ բորբոքելու համար։ Ուստի և նա ընդառաջում է նոր նախիջևանցիների ցանկությանը և նախաձեռնում այնտեղ առևտրական դպրոց բացելու գործը։ Այս նպատակով 1862 թվականին Այվազովսկին ժամանում է Նոր Նախիջևան։ Քաղաքագլուխ Կ. Հայրապետյանի մասնակցությամբ գումարվում է Նախիջևանի բնակչության ներկայացուցիչների ժողով, որը քննում է ուսումնարան հիմնելու հարցը։ Այվազովսկին առաջարկում է ուսումնարանը բացել 400 երեխայի համար, որոնցից 100-ը պիտի լինեն աղքատ ծնողների զավակներ, և որպես այդպիսիք, ձրիավարժներ՝ ի հաշիվ թեմի եկեղեցական գումարների[134]։ Մնացած աշակերտները վճարելու էին տարեկան միջինը 50—60 ռուբլի, այդ թվում՝ 50 աշակերտ՝ 60-ական ռուբլի, 150 աշակերտ՝ 30-ական ռուբլի և 100 աշակերտ՝ 15-ական ռուբլի[135]։ Դպրոցի կառավարումը հանձնվում էր երեք տարին մեկ անգամ մագիստրատի կողմից ընտրված հոգաբարձուներին[136]։ Սա-

132 Նույն տեղում, թ. 67բ։
133 Նույն տեղում, թ. 78։
134 Նույն տեղում, ֆ. 821, ց. 140, գ. 24/3136, մ. 1-ին, թ. 65—66։
135 Գ. Այվազյան, նշվ. աշխ., էջ 299։
136 Նույն տեղում, էջ 296։

կայն Հայրապետյանի կողմից նախապատրաստված մի քանի ժողովականներ պահանջում են ուսումնարանը բացել և պահել բացառապես եկեղեցական դումարների հաշվին, և ժողովը ոչ մի արդյունքի չի հասնում: Հաջորդ տարում ևս Գ. Այվազովսկու այդ առաջարկը մերժվում է: 1863 թվականի նոյեմբերի 13-ին եկատերինոսլավի նահանգապետին ուղարկած իրենց համախոհականում 35 նախիջևանցիներ տեղեկացնում էին, թե ուսումնարան բացելու կապակցությամբ դումարված ժողովին Կ. Հայրապետովը ներկայացրել էր նախապես պատրաստված բացասական վճիռ ստորագրելու համար, սակայն իրենք հրաժարվել են ստորագրել այն, որովհետև այնտեղ ուղղակի պատասխան չէր տրվում մինիստրի հարցմանը՝ Նախիջևանում առևտրական դպրոց բացելու կապակցությամբ Այվազովսկու առաջարկի առթիվ[137]: Բնականաբար, նոր նախիջևանցիները, մանավանդ առևտրա-արհեստավորական խավը, շահագրգռված էին այդ ուսումնարանի բացմամբ, և դրա համար էլ նրա բացակայության պայմաններում Թեոդոսիայում ուսումնարանի գոյությունը նրանց մոտ որոշակի դժգոհություն էր առաջացնում դեպի թեմի առաջնորդը: Հայկական նախատեսվող ուսումնարանի հիմնադրումը Նոր Նախիջևանում, անշուշտ, կվերացներ այդ դժգոհության պատճառը, իսկ դրան, իհարկե, չէր կարող համաձայնել Կ. Հայրապետովը, որովհետև դա ձեռնտու այն կովաններից էր, որ նա օգտագործում էր Գ. Այվազովսկու դեմ՝ նախիջևանցիներին դրգռելիս:

Մատթեոս կաթողիկոսը, ամբաստանագրերին զուգընթաց, Կ. Հայրապետյանի եռանդուն մասնակցությամբ, դիմում է գործնական միջոցների՝ Գ. Այվազովսկուն թեմից հեռացնելու համար: 1863 թվականի աշնանը Մատթեոսը Այվազովսկուն կրկին կանչում է էջմիածին: Թեև նրան բավարարում է թեմի դրության մասին Գ. Այվազովսկու տված զեկույցը, բայց վերջինիս կրկին ճամփա է դցում՝ առանց եպիսկոպոսական աստիճան տալու և Այվազովսկու մեկնելուց մի փոքր անց նրա հետից ուղարկում է Անդրեաս եպիսկոպոսին՝ որպես վերաղննիչ Նախիջևանի և Բեսարաբիայի վիճակային գործերի[138]: Այդ քննության առթիվ Գ. Այվազովսկին բողոքում է ներքին գործերի մինիստր Վալուևին, հայտնելով, որ «իր կողմից վիճակի եկեղեցական գործերի ընդհանուր կառավարման մասին ո՛չ սինոդը, ո՛չ պատրիարքը ոչ որից ոչ մի բողոք չեն ստա-

137 ЦГИА СССР, ф. 821, оп. 140, д. 24/3136, ч. I, стр. 77.

138 Նույն տեղում, գ. 33/3032, մ. III, թ. 20:

ցել» և որ «թեմը կառավարելու կապակցությամբ քննություն նշանակելու վերաբերյալ պատրիարք-կաթողիկոսի ներկա կարգադրությունը ոչ միայն հիմնավոր չէ և հակաօրինական, այլև վերին աստիճանի վիրավորական է իմ պատվի, աշխատանքի և գործունեության, իմ ամբողջ կյանքի համար, որը ես բացառապես նվիրել եմ իմ հավատակիցների օգտին և լուսավորմանը անշահախնդիր ծառայելուն»[139]: 1863 թվականի հոկտեմբերին, երբ Այվազովսկին էջմիածնում էր, սինոդն ու կաթողիկոսը ոչ միայն բավարարվեցին թեմի կառավարման մասին նրա տված զեկուցագիր-հաշվետվությամբ, այլ ակնարկ անգամ չարեցին թեմի գործերը ստուգելու մասին: Այնինչ, էջմիածնից դեռևս Թիֆլիս չհասած՝ Գ. Այվազովսկուն հետևեց Անդրեաս եպիսկոպոսի վիրապննիչ հանձնախումբը: Դրա համար էլ 1864 թվականի հունվարի 22-ին Գ. Այվազովսկին Օտարադավանների հոգևոր դեպարտամենտի դիրեկտոր կոմս Սիվերսին հայտնում է, թե ինքն առհասարակ դեմ չէ վերստուգմանը, այլ դեմ է իր նկատմամբ քննիչ նշանակելուն, որպիսին արել է կաթողիկոսը[140]: «Իսկ պատրիարք-կաթողիկոսի ներկա կարգադրությունն իմ նկատմամբ քննություն նշանակելու վերաբերյալ բացառապես բխում է իմ հանդեպ ունեցած խոր ատելությունից և մանր նախանձի անարժան զգացումից՝ ժողովրդի մեջ գրավոր աշխատություններիս ու գործունեությանս հետևանքով իմ վաստակած հարգանքի և շնորհակալության նկատմամբ»[141]:

Սակայն Գ. Այվազովսկու բողոքները չեն կանգնեցնում Անդրեասի վերաղննությունը: Այվազովսկին էլ սրան ազատ գործելու հնարավորություն ընձեռելու և ավելորդ կասկածանքների տեղիք չտալու համար մեկնում է նախ Մոսկվա-Պետերբուրգ և ապա՝ արտասահման: Հետաքրքիր է այն բացատրությունը, որ Այվազովսկին ավել է Խ. Լազարյանին գրած նամակում Նոր Նախիջևանում կատարվող ստուգմանը չմասնակցելու մասին: «Չնայած իմ բոլոր բացատրություններին,— գրում էր նա,— մինիստրությունում չուզեցին և չեն ուզում հասկանալ, որ Նախիջևանի քաղաքագլուխ Հայրապետովի և նրա երկու-երեք համախոհների, այնտեղի մոդիստարատի անդամների, ուղղակի միջամտությամբ ու մասնակցությամբ առաջ են բերվել, պաշտպանվում ու տեղի են ունենում ոչ միայն ներկա ստուգումն ու ստուգողի խելացնոր գործողություն-

139 Նույն տեղում, թ. 23ա, բ:

140 Նույն տեղում, թ. 45ա, բ:

141 Նույն տեղում, թ. 24բ:

ները, այլև հենց նրանց կողմից են կատարվել ու կատարվում բոլոր այն երկպառակությունները ու անհանդստությունները Նախիջևանի հասարակության մեջ, որոնց մասին այնքան լավ հայտնի է մինիստրությանը։ Այդ մարդիկ Խալիբովի անձնական անհաշտ թշնամիներն են և այդ պատճառով էլ նույնպիսի թշնամիներ դարձան նաև իմ հանդեպ։ Որպեսզի հաղթեն իրենց թշնամիներին, այդ մարդիկ, դրզված իրենց խոր բանսարկություններով և ուրիշ ոչ մի բանով, չեն խորշում ոչ մի միջոցից, և իմ հանդեպ ունեցած իրենց թշնամանքում, հանձինս և ի խշխանություն այժմյան կաթողիկոսի, գտել են իրենց հավատարիմ դաշնակցին, որի առաջարկությունների ու կարգադրությունների վրա մշտապես հենվում են։ Եվ որովհետև Հայրապետովն ու նրա կողմնակիցները, նախիջևանում ունեցած իրենց դիրքով, իբրև գլխավոր վարչական իշխանություններ և որպես շատ հարուստ մարդիկ (ընդգծումը մերն է—Վ. Մ.), անսահմանափակ ազդեցություն ունեն քաղաքի ազգաբնակչության զանգվածի վրա և միշտ օգտվում են նրանից, որպես իրենց նպատակներին հասնելու միջոցի, ապա այդպիսի պարագաներում իմ ներկայությունը Նախիջևանում մի ստուգողի առաջ, որը ղեկավարվում և պաշտպանվում է Հայրապետովի, որպես քաղաքում գլխավոր անձի, և մագիստրատի կողմից (որից նույնպես կախված է ոչ միայն ժողովուրդը, այլև հոգևորականությունը) կարող է միայն վարկաբեկել և՛ իմ իշխանությունը, որպես վիճակի առաջնորդի, և՛ իմ անձնական արժանապատվությունը... Դե՛ թող իշխանությունից հեռացվեն Հայրապետովն ու մագիստրատի անդամները, այն ժամանակ... ստուգողը իրեն թույլ չէր տա նշույլն անգամ այն ամենի, ինչ որ կատարում է այժմ»[142]։

Անդրեասի վերաքննությունը ի սկզբանե մատնված էր անուղղամիտ և կանխակալ գործելակերպի՝ վերաքննողի իսկ հետին նպատակների պատճառով։ 1864 թվականի նոյեմբերի սկզբներին ներքին գործերի մինիստրությանը ի պաշտպանություն Այվազովսկու ներկայացրած բողոք-համախոսականում նախիջևանցիները (313 մարդ, այդ թվում 9 եկեղեցական, 9 չինովնիկ և ազնվական, 20 առաջին գիլդիայի և 25 երկրորդ գիլդիայի վաճառականներ, 7 արհեստավորներ, 57 մեշչաններ, 186 դյուղացիներ) հայտնում էին, թե Անդրեասը «նույնիսկ անարդարացի ուղիներով պետք է միջոցներ գտներ մեղադրելու նրան (Այվազովսկուն—Վ. Մ.).

142 Նույն տեղում, ֆ. 880, ց. 5, գ. 33, թ. 211ա, բ։

ստավել ևս, որ նա (Անդրեասը—Վ. Մ.) մտադիր էր մնալ մեր վիճակի առաջնորդ»[143]։

Անդրեասը սակայն իրեն այնքան հանդուգն ու անխոհեմ պահեց, որ կաթողիկոսը չհամարձակվեց նրան նշանակել առաջնորդ, մանավանդ, որ դա կբացահայտեր վերստուգման իսկական դրդապատճառները։ 1864 թվականի դեկտեմբերին, առանց Օտարազավանների դեպարտամենտի հետ համաձայնեցնելու, կաթողիկոսը Այվազովսկուն ազատում է և ժամանակավոր կառավարիչ նշանակում Հովհաննես եպիսկոպոս Արշարունուն։ Սակայն Պետերբուրգը թույլ չի տալիս նրան ստանձնելու թեմակալի պարտականությունը։

1865 թվականի մարտի 7-ին կաթողիկոսը դիմում է ցարին, խնդրելով Այվազովսկուն ազատել թեմի առաջնորդի պաշտոնից, սպառնալով, հակառակ դեպքում, թողնել կաթողիկոսական աթոռը և թաշվել որևէ վանք[144]։ Մինչ այդ արդեն նշանակված էր դնդապետ Կավելինի գլխավորած հանձնաժողովը, որը ստուգից նախ Խալիբյան ուսումնարանը և ապա, կաթողիկոսի ներկայացուցչի մասնակցությամբ, թեմի եկեղեցական գործերը։ Հանձնաժողովը եկեղեցական գումարների գծով հայտնաբերում է 6160 ռուբ. 33 կոպեկ պարտք, որն առաջացել էր ոչ թե շռայլումների, այլ կոնսիստորիայում հաշվային գործերը չիմանալու պատճառով[145]։ Կավելինի հանձնաժողովն այս ստուգումը կատարում է 1865 թվականի հոկտեմբերին, այնինչ հուլիսի 16-ին արդեն որոշում էր ընդունվել Գ. Այվազովսկուն պաշտոնից արձակելու մասին։ Սակայն մինչև 1866 թվականի մայիսը նա շարունակում էր վարել թեմի եկեղեցական գործերը, մինչև որ նրան փոխարինելու է գալիս նոր վիճակավորը։

1871 թվականին, երբ մահանում է թեմի առաջնորդ Գևորգ արքեպիսկոպոսը, Սիմֆերոպոլի, Ղարասուբազարի, Նոր-Նախիջևանի և նրա շրջակա հինգ հայկական դյուղերի համայնքները համախոսականներով դիմում են կաթողիկոսին՝ Գ. Այվազովսկուն վերստին թեմի առաջնորդ նշանակելու խնդրանքով[146]։ Այդ համախոսականներից յուրաքանչյուրի տակ դրված էին ծխականների ստորագրությունները, որոնք մի քանի էջ էին զրաղեցնում։

143 Նույն տեղում, ֆ. 821, ց. 140, գ. 55/3166, մաս I, թ. 255—262։

144 Նույն տեղում, գ. 33/3032, մ. III, թ. 282—283։

145 Նույն տեղում, թթ. 373—374, 438։

146 Մատենադարանի արխիվ, ֆ. կաթ. դիվան, թղթ. 201, վվ. 123, 124, 126, 128, 198, 199.

Բոլոր համախոհականներում խնդրանքի շարժառիթը համարվում էր Գ. Այվազովսկու կրթական գործունեությունը. «ամենայն ժողովուրդ,— գրում էին նոր նախիջևանցիները,— դիմէ առ ի լուսաւորութիւն... նմանապէս և ժողովուրդ մեր՝ այժմ զամենայն զուշ իւր դարձուցեալ է ի վերայ դաստիարակութեան և կրթութեան: Բայց այս մեծ գործ առանց առաջնորդի և առանց ձեռնարկողի ոչ լինի, ուստի խնդրէ հասարակութիւնն վասն իւր յառաջնորդ և ի հոգևոր հայր ղգերապատիւ Գաբրիէլ արք. Այվազեանց. որպէս զի բազմադիմի գիտութեամբ իւրով և հմտութեամբն առաջնորդեսցէ մեզ ի միջի այս նոր կենաց»[417]: Սակայն այդ նշանակումը տեղի չունեցավ: Գ. Այվազովսկին նշանակվեց վիրահայ թեմի առաջնորդ:

* * *

Ճորտատիրությունից զրեթե զերծ մնացած Ղրիմում կապիտալիստական հարաբերությունների զարգացումը համեմատաբար արագ էր ընթանում, քան կայսրության շատ ծայրամասերում: Կապիտալիզմի զարգացումը ղրիմահայերին ավելի ու ավելի էր հաղորդակցում բնակղգու և համառուսական անցուդարձերին, ընդլայնում նրանց հասարակական կյանքի շրջանակները, մասնակից դարձնում քաղաքական իրադարձություններին:

Ղրիմահայերը, օրինակ, անտարբեր չմնացին ռուս-թուրքական պատերազմների հանդեպ: XVIII դարի վերջին և XIX դարում մղված այդ պատերազմների ժամանակ նրանք, անվերապահորեն կանգնելով Ռուսաստանի կողմը, ջանում էին հնարավոր միջոցներով աջակցել ռուսական զենքի հաղթանակին: Այդպիսի դիրքորոշումը առնչվում էր քաղաքական և տնտեսական շարժառիթների հետ: Ղրիմահայությունը չէր կարող չըմբռնել, որ Ռուսաստանի հաղթանակը թուրքական լծի տակ հեծող իր ազգակիցներին անհամեմատ ավելի լավ հեռանկար էր խոստանում: Ղրիմահայոց այս վարքագիծը սկիզբ էր առնում հայերի՝ դեպի Ռուսաստանն ունեցած քաղաքական այն կողմնորոշումից, որը սկսել էր ձևավորվել դեռ XVIII դարի առաջին քառորդում, մի ժամանակաշրջանում, երբ հայ ժողովուրդը թուրք-պարսկական լծի դեմ ծավալել էր ազատագրական պայքար: Սակայն սա հարցի մի կողմն է: Մյուս կողմն էլ այն էր, որ ներգրավվելով ընդհանուր ռուսական տնտեսական, մշակութային ու հասարակական կյանքի ոլորտը, ղրիմահայությունը, մանավանդ առևտրա-արհեստավորական ունևոր վերնախավը, ռուսական զենքի հաղթանակի հետ էր աղերսում իր գործառնությունների առավել ծավալումն ու ընդլայնումը:

1787—1791 թվականների ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Ղրիմից միայն նորերս Ազովի նահանգ անցած հայերը ստեղծում են կամավորական մի զորախումբ և ցանկություն հայտնում մասնակցելու թուրքերի դեմ մղվող պատերազմին: Գործի կազմակերպողն ու նախաձեռնողը նոր Նախիջևանի քաղաքագլուխ Միքայել Կողբեթլյանն էր: 1788 թվականի մայիսի 14-ին Գ. Ա. Պոտյոմկինին ուղղած նրա գրությունից երևում է, որ այդ զորամիավորումը նա ստեղծել էր Գ. Ա. Պոտյոմկինի կարգադրությամբ և որ նրա մեջ, բացի հայերից, մտնում էին նաև մալորուսներ: «Յանկանալով արժանանալ Ձերդ պայծառափայլության հատուկ բարհաճությանը,— գրում էր նա,— ես զերազանց ջանասիրությամբ կատարեցի Ձեր կամքը և ոչ միայն հավաքեցի կամավորներ հայերից և մասամբ էլ մալորուսներից, այլև նրանց համար իմ հաշվին ձեռք եմ բերել ձիեր, նրանց տվել եմ կանոնավոր հագուստ և զինել եմ պատշաճ կերպով և այս բոլորի շնորհիվ նրանց այնպիսի դրության հասցրել, որ ուղած հաջողությամբ նրանք կարող են օգտագործվել թշնամու դեմ: Նրանք բոլորը ցանկանում են մասնակցել [պատերազմի] Տավրիդայում, քանի որ այդ տեղերը նրանց ավելի ծանոթ են»[148]: Նա, այնուհետև, խնդրում էր այդ զորախմբից մի շարք մարդկանց շնորհել զինվորական աստիճաններ, իսկ ամբողջ զորախմբին՝ նշանակել ռոճիկ[149]: Ահա նաև «Հայ կամավորական զորախմբի ցուցակը», որը այդ դրությանը կից քաղաքագլուխը ներկայացրել է Գ. Ա. Պոտյոմկինին, հայցելով նրանց համար նշանակել հետևյալ չափով տարեկան վարձատրություն[150] (տե՛ս 248 էջի տեղեկագիրը):

Արխիվային նյութերը լռում են զորախմբի մարտական գործողությունների մասին, սակայն նրա ստեղծումն իսկ արդեն մի երևույթ է, որը վկայում է մղվող պատերազմի հանդեպ հայերի բռնած դիրքի մասին:

Ղրիմահայությունը իր ուժերի ներածին չափ աջակցում էր ռուսական զորքերին Ղրիմի պատերազմի և Սևաստոպոլի պաշտպանության ժամանակ: Անցքերին ժամանակակից ղրիմահայ մտավորական Հ. Տեր-Աբրահամյանը վկայում է, որ պատերազմի ժամա-

147 Նույն տեղում, վ. 198, թ. 1բ:

148 ЦГВИА, ф. 52, оп. 1/194, д. 396, 1786 г., л. 1 с об.—2.

149 Նույն տեղում, թ. 2:

150 Նույն տեղում, թ. 4:

ՅՈՒՑԱԿ

Հայ կամավորական գորախմբի (1788 թ.)

	Մարդկանց քանակը	Նրանց տրվելիք տարեկան վարձատրությունը	
		մեկին	բոլորին
Հրամանատար մայոր	1	—	450
Կապիտան	1	—	280
Պորուչիկներ	2	190	380
Փոխ-պորուչիկներ	2	150	300
Վախմայստերներ	6	75	450
Ենթասպաներ	4	60	240
Կապրալներ	8	50	10.400
Շարքայիններ	200		

նակ Սևաստոպոլի պատերազմական պիտույքի մատակարարման հոգսը հայ վաճառականները նշանակալից չափով վերցրել էին իրենց վրա[151]: Մի շարք ղրիմահայեր պատերազմի ժամանակ ցուցաբերած ծառայությունների համար պարգևատրվում են շքանշաններով ու մեդալներով: Սրանց թվումն էին նաև Ղարասուբազարի հայ կաթոլիկական դատարանի անդամները[152]: Եվ ոչ միայն ղրիմահայերը: Պատերազմի ժամանակ զորքերի մատակարարման գործում իրենց լուման են ներդնում նաև նոր Նախիջևանցիները: 1854 թվականին Նոր Նախիջևանի և շրջակա հայկական գյուղերի բնակիչները գործող բանակին նվիրաբերում են 10.500 փութ պաքսիմատ[153]: Իսկ Նոր Նախիջևանի առաջին գիլդիայի վաճառական Քրիստափոր Իվանովը Ալեքսանդրովսկում ունեցած իր սեփական ածխահանքերից զորքերին տրամադրում և Ղրիմ է տեղափոխում 300 հազար փութ ածուխ[154]:

151 Հ. Տեր-Աբրահամյան. Պատմության խրճիթ, մաս I, էջ 120:

152 Крымоблархив, ф. 179, оп. 1, д. 275, л. 9.

153 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 139, ց. 1, գ. 85, թ. 1:

154 ЦГВИА, ф. МА, св. 9, оп. 237, д. 34, лл. 11, 21, 25, 28—29, 41, 45—46 (с оборотами).

Պատերազմի նկատմամբ անտարբեր չմնաց նաև հռչակավոր նկարիչ Հ. Այվազովսկին: Զորքերին նյութական օժանդակություն ցույց տալուց բացի[155], Հ. Այվազովսկին Թեոդոսիայից մեկնում է Սևաստոպոլ, ականատես դառնում քաղաքի հերոսական պաշտպանությանը և նկարում ոչ միայն տեսարաններ ճակատամարտերից, այլև առանձին ծովայինների՝ քաջալերելով նրանց սխրանքները: Մեծ նկարիչը Սիմֆերոպոլում և Պետերբուրգում կազմակերպում է ցուցահանդեսներ, որոնցից ստացված եկամուտները հատկացնում է զոհվածների և վիրավորների ընտանիքներին օգնող ֆոնդին[156]:

Ղրիմի պատերազմի ժամանակ տեղացի հայերի մասնակցությունը նշելիս ամենից առաջ պիտի շեշտել հայազգի ծովակալ Ղազար Մարկոսի Արծաթագործյանի (Լազար Մարկևիչ Սերեբրյակովի) գործունեությունը: XIX դարի 30—40-ական թվականներին Կովկասի սևծովյան ափի և նրա հարակից շրջանների վրա Ռուսաստանի դիրքերը ամրապնդելու, լեռնականներին հնազանդեցնելու և թուրքական ոտնձգություններին դիմագրավելու գործին Սերեբրյակովի մատուցած ծառայությունների մասին կարելի է մի առանձին աշխատություն գրել: Դա դուրս է մեր խնդրի շրջանակներից: Մենք կանգ առնենք ռուսական ռազմական նավատորմում նրա ծառայության և Ղրիմի պատերազմի ժամանակ խաղացած դերի ամփոփ նշումով միայն: Լ. Մ. Սերեբրյակովը ծնվել է 1792 թվականին Ղարասուբազար քաղաքում, հայ կաթոլիկ ընտանիքում[157]: 18 տարեկան հասակում, 1810 թվականին, նա ծառայության է մտնում Սևծովյան նավատորմը, իբրև կամավոր:

Սերեբրյակովին վիճակվում է կրել ռազմա-ծովային ծառայության դրեթե բոլոր ուսադիրները՝ շարքային ծովայինից հասնելով մինչև ծովակալի բարձր աստիճանին: Մինչև 1830 թվականը Սերեբրյակովը համարյա անընդմեջ ծառայում է Սևծովյան նավատորմում, մասնակցելով մի շարք ճակատամարտերի, իսկ 1830—1832 թվականներին՝ Ֆիննական ծոցում: 1833 թվականին նա ծառայում է Կոստանդնուպոլսի ռուսական զորքերի ճամբարում, իսկ 1834—35 թվականներին՝ Բալթիկ ծովում, որպես «Պոլտավա» ռազմանավի հրամանատար:

155 Նույն տեղում, ֆ. 2, ց. 281, գ. 22, թ. 51, 58—59:

156 Ա. Մալխասյան. Հայ ծովակալները, «Սովետական գրականություն», ամսագիր, 1961, № 5, էջ 87:

157 Մատենադարանի արխիվ, ֆ. կաթ. դիվան, թղթ. 148, վավ. 588:

1837 թվականին Սերեբրյակովը գործուղվում է կովկասյան գծի զորքերի հրամանատար գեներալ-լեյտենանտ Վելյամինովի մոտ և ստանձնում լեռնականների դեմ Սև ծովի արևելյան ափին գործող հերթապահ շտաբ-սպայի պարտականությունները: Այդ նույն թվականին աչքի ընկած ծառայությունների համար նա ստանում է առաջին աստիճանի կապիտանի կոչում, իսկ 1838 թվականին Սոչիի, Տուապսեի և Շապսուխոյի գրավման ժամանակ լեռնականների դեմ ծավալած գործողությունների համար պարգևատրվում է հատուկ սրով՝ «քաջության համար» փորագրությամբ և արժանանում կոնտր-ծովակալի կոչման: Միևնույն ժամանակ նա նշանակվում է Նովոռոսիյսկ նավահանգստի և սևծովյան 1-ին առափնյա գծի պետ, իսկ 1851 թվականից՝ սևծովյան ամբողջ առափնյա գծի պետ, որպիսի պաշտոնում և փոխ-ծովակալի կոչումով մասնակցում է Ղրիմի պատերազմին[158]:

Սևծովյան առափնյա գծի պետի պաշտոնը վարելիս Սերեբրյակովը ի մոտո ծանոթանում է կովկասյան ափում և լեռնային մասերում հնուց հաստատված և իր օրոք եկող արևմտահայ իր ազգակիցների կյանքին, ջանում օգնել նրանց՝ դիմագրավելու օտար միջավայրում ձուլվելու վտանգին: 1849 թվականին նա դիմում է Ներսես Աշտարակեցուն՝ չերքեզահայերի մոտ հայ հոգևորական ուղարկելու խնդրանքով: Հունիսի 27-ին գրած իր նամակում նա կաթողիկոսին տեղյակ էր պահում, թե Նովոռոսիյսկ նավահանգստում կան 14 հայ ընտանիքներ և 25 չամուսնացած հայեր, որոնք անհաղորդ են ազգային կրոնին և որ նման վիճակում է նաև լեռներում ցրված հայությունը: «Հիշելով միայն, որ իրենց նախնիները լուսավորված էին Ավետարանի հավերժական ճշմարտությամբ, նրանք (չերքեզահայերը —Վ. Մ.) լոկ հայրերի ավանդմամբ են դավանում քրիստոնեություն, և, ապրելով մահմեդականների շրջանում, զուրկ են հավատով սահմանված ժամասացություն և արարողություններ կատարելուց: Կան և այնպիսիները, որոնք լիովին կորցրել են կրոնի նույնիսկ այդ մնացորդը, ոչինչ չեն դավանում: Տխրալի էր տեսնել այդպիսի մարդկանց, առավել տխրալի էր լսել նրանց արտունչը եկեղեցուց բաժան լինելու վերաբերյալ»[159]: Սերեբրյակովի հաղորդումից իմանում ենք նաև, որ «Նովոռոսիյսկի հիմնադրմամբ

158 Центральный государственный архив военно-морского флота (в дальнейшем ЦГАВМФ), ф. Справочная библиотека архива, л. 965. «Общий морской список», т. VIII, стр. 208—212 типогр.

159 *Մատենադարանի արխիվ, ֆ. կաթ. դիվան, թղթ. 148, վավ. 588:*

Թուրքահպատակ շատ հայ-լուսավորչականներ Տրապիզոնից, Սինոպից և սահմանամերձ այլ տեղերից բնակության են անցել այնտեղ»[160]: Սրանց կրոնական խնդիրներին ընդառաջելով՝ Սերեբրյակովը նույնիսկ մարդ է ուղարկում Ղարասուբազար՝ այնտեղից եկեղեցական պարագաներ բերելու համար: Իսկ այս գրությամբ Աշտարակեցուն ուղղակի խնդրում էր անհրաժեշտ կարգադրություն անել Ղրիմի հայկական եկեղեցիներից մեկին՝ բավարարելու չերքեզահայերի պահանջը և նրանց մոտ ուղարկելու բանիմաց մի հոգևորական: Ազգային եկեղեցու նկատմամբ Սերեբրյակովի այս մտահոգությունը համահնչուն էր այս տարիներին լեռնականների շրջանում Թուրքիայի ոտնձգությունների դեմ Ռուսաստանի մղած պայքարին: Ռուսական իշխանություններին ուղղած իր բազմաթիվ բանիմաց զեկույցներում Սերեբրյակովը մահմեդական հոգևորականության օգնությամբ Թուրքիայի ձեռնարկած հակառուսական քայլերի դեմ կարևոր միջոց էր համարում կովկասյան այս շրջաններում քրիստոնեության տարածումը, եկեղեցիների հիմնումը:

Իր բազմամյա ծառայության ընթացքում Սերեբրյակովը պարգևատրվել էր տասնյակ ռուսական և օտարերկրյա շքանշաններով ու մեդալներով: Ղրիմի պատերազմի ժամանակ գտնվելով ռուսական բարձր հրամանատարության կազմում, Սերեբրյակովը իր ամբողջ հմտությունն ու փորձը նվիրաբերում է թշնամու դեմ պայքարի գործին: Նա մանավանդ հաջող կերպով նախապատրաստում և դուրս է հանում սևծովյան առափնյա գծի ամրությունների՝ Նովոռոսիյսկու, Տենգինի, Վելյամինովի, Գոլովինսկու և Նավագինսկու կայազորները:

Հայտնի է, որ պատերազմին նախորդած շրջանում թուրքական կառավարությունը, Անգլիայի և Ֆրանսիայի սադրանքներով, ջանք չէր խնայում դժգոհ լեռնականներին Ռուսաստանի դեմ ապստամբեցնելու ուղղությամբ: Թուրքիան մեկը մյուսի հետևից իր ներկայացուցիչներն էր ուղարկում Սև ծովի արևելյան ափերը և չերքեզներին գինված ապստամբության դրդում: Անդրկուբանում գավթելով իշխանությունը, Մահմեդ-Ամինը 30 հազար լեռնականների պատրաստում էր հարձակման ռուսական մերձծովյան ամրությունների վրա և ապստամբ էր դաշնակիցների նավատորմի երևալուն[161]:

160 *Նույն տեղում:*

161 *Н. Ф. Дубровин,* История Крымской войны и обороны Севастополя. СПб, 1890, т. 1, стр. 75.

Այս բոլորը ծայրահեղորեն բարդացնում էր սևծովյան առափնյա գծի վիճակը. այն ընկնում էր երկու կրակի արանք՝ ցամաքից կտրվում էր հաղորդակցությունից, իսկ ծովից նրան չէր կարող օգնել Սևաստոպոլում փակված սևծովյան ամբողջ նավատորմը: Գելենջիկից մինչև Աբխազիայի սահմաններն ընկած կայազորները չունեին նահանջի ուղի: Դաշնակիցների կողմից Սևաստոպոլը, ուրեմն և սևծովյան նավատորմը շրջափակելու դեպքում լոկ թուրքական նավատորմն էլ բավական կլիներ ոչնչացնելու առափնյա ամրությունները և զրավելու դրանց կայազորները[162]:

Դեռ նախապատերազմյան շրջանում կռահելով այսպիսի ծանր վիճակի առաջացումը, ամբողջ առափնյա գծի պետ Լ. Մ. Սերեբրյակովը 1854 թվականի հունվարին գալիս է Սևաստոպոլ և իշխան Մենշիկովին զեկուցում ակնկալվելիք զրության մասին՝ պատերազմ ծագելու դեպքում: Վերջինս մերժում է Սերեբրյակովի խնդրանքը նավերի մի մասը Սևաստոպոլից հանելու և Սև ծովի արևելյան ափերն ուղարկելու մասին. Մենշիկովը վախենում էր կորցնել ծովային ուժերը, որոնք նշանակալից գերակշռություն էին տալիս ռուսներին թուրքերի հանդեպ Սև ծովում: 1854 թվականի հունվարի 9-ին այս մասին տեղեկացնելով Կովկասի փոխարքային, Սերեբրյակովը գրում էր. «Այնուամենայնիվ պարտքս եմ համարում ամենայն հարգալիցությամբ զեկուցել Ձերդ պայծառափայլությանը, որ ինձ հանձնված գիծը, ծովային թույլ միջոցների պատճառով, գոնվում է ողբալի վիճակում»[163]:

Անելանելի դրությունը ստիպում է Սերեբրյակովին դիմելու միակ քայլին՝ խնդրել թույլտվություն մինչև պատերազմ հայտարարելը ոչնչացնելու մի քանի միջին ամրություններ և նրանցից դուրս բերելու կայազորները: Թագավորի հրամանով Սերեբրյակովի այս առաջարկը ընդունվում է[164]: Այսպես ոչնչացվեցին վերևում նշված ամրությունները:

Այլ էր վերաբերմունքը Նովոռոսիյսկի, Գելենջիկի և Սուխումկալեի նկատմամբ: Սրանց զրավմամբ թշնամին ստանում էր հարմար դիրք պատերազմը վարելու համար: Առաջին երկուսը առևելու դեպքում, որոնք գոնվում էին Ղրիմին մոտիկ, թշնամին մի կողմից թերակղզուն մերձակա հարմար խարսխակայան էր ստանում,

162 Նույն տեղում:
163 Նույն տեղում, էջ 76:
164 Նույն տեղում, էջ 78:

իսկ, մյուս կողմից, կարող էր սպառնալ մերձազովյան հաղորդակցությանը: Այդ պատճառով Սերեբրյակովը սկզբնապես առաջ չէր բաշում այս ամրությունների ոչնչացման հարցը:

Պատերազմական իրադարձությունների զարգացումը Սերեբրյակովին ստիպում է «մաքրել» նաև Նովոռոսիյսկն ու Անապան: Այս առթիվ 1855 թվականի մայիսի 25-ին կայսրը գրում էր Դորյակովին. «Ես ուրախ եմ, որ Սերեբրյակովը վճռել է մաքրել Նովոռոսիյսկը, ուր կայազորը անխուսափելիորեն կդառնար ծովի կողմից կատարված ամեն մի հարձակման զոհը: Բայց ես չէի կարող համաձայնվել Անապան թողնելու հետ: Այդ հենակետի պահպանումը, որի վրա, կարող է պատահել, հարձակում չի էլ լինի, անհրաժեշտ է լեռնականների վրա մեր բարոյական ազդեցության համար»[165]:

Պատերազմի ամբողջ ընթացքում Սերեբրյակովը հմտորեն զեկավարում է ծովափնյա կարևոր հենակետերի պաշտպանությունը, իր տրամադրության տակ եղած ռազմանավերով հարձակումներ գործում թշնամու վրա, ձախողում կովկասյան ծովափնյա հատվածում թշնամու և լեռնականների գործողությունները: Պատերազմի ժամանակ մատուցած ծառայությունների համար Սերեբրյակովին 1856 թվականի օգոստոսին շնորհվում է **ծովակալի կոչում**[166]:

* * *

Ղրիմի պատերազմին հաջորդած հետևֆորմյան տարիները կապիտալիզմի համեմատաբար արագ զարգացման տարիներ էին նաև Ղրիմի համար: Ղրիմահայ հասարակական կյանքն էլ, թեև դանդաղ, բայց կամա թե ակամա սկսում է հարմարվել նորաձև զարգացման ընթացքին: Դպրոցների, հասարակական կազմակերպությունների հետ միասին դարավերջին առաջանում և գաղութի քիչ թե շատ նշանակալից բնակչություն ունեցող հատվածներում տարածում են գտնում հոդաբարձությունները, որոնց միջոցով ոտքի ելնող գաղութահայ բուրժուազիան և եկեղեցին ջանում էին ազգը «բարձրացնել» քաղաքակրթության մակարդակը, ինչպես նաև իրազործել ազգատախնամ նպատակներ: Եկեղեցին ընդառաջում էր ազգային բուրժուազիայի՝ նման կազմակերպություններ ստեղծելու նախա-

165 Նույն տեղում, հատ. 3, էջ 194—195:
166 ЦГАВМФ, ф. Справочная библиотека архива, д. 965; «Общий морской список», т. VIII, стр. 212, типограф.

ձեռնությանը, մանավանդ որ դրանք թեմական հոգևոր իշխանությունների ենթակայությունից դուրս չէին։ Գաղութահայ նորաթուխ բուրժուազիան և եկեղեցին պարզապես համագործակցում էին՝ բուրժուական-բարեգործական նպատակներ իրականացնելու և հայ աղքատ զանգվածների վրա իրենց ազդեցությունը ուժեղացնելու համար։ Սակայն, անկախ սոցիալական բնույթից, հոգաբարձությունները XIX դարի վերջին տասնամյակին և XX դարի սկզբներին ծավալած իրենց գործունեությամբ բավականաչափ նպաստեցին մանավանդ կրթական գործի կազմակերպմանը գաղութում։ Քանի որ բոլոր հոգաբարձությունները գործում էին բացարձակապես միատիպ կանոնադրությամբ, ապա Թեոդոսիայի ս. Սարգիս եկեղեցուն կից ստեղծված աղքատ ծխականների հոգաբարձության կանոնադրության քննարկմամբ կաշխատենք ցույց տալ դրանց գործունեության սկզբունքները։ Ըստ այդ կանոնադրության[167].

1. Ս. Սարգիս եկեղեցուն կից հիմնվում է հոգաբարձություն։

2. Հոգաբարձությունը բաղկացած է 7 անձից, որոնցից 5-ը ընտրովի են՝ 3 տարի ժամանակով, իսկ մնացած երկուսը ներկայացնում են նշված եկեղեցու երեցփոխանին և թեմական առաջնորդի նշանակած անձին։

3. Հոգաբարձության ընտրովի անդամները պետք է հաստատվեին թեմի առաջնորդի կողմից։

4. Հոգաբարձության անդամները իրենց միջից ընտրում են նախագահ, որի բացակայության դեպքում նախագահում է հոգաբարձության եկեղեցական անդամը։

5. Հարցերը վճռվում են ձայների մեծամասնությամբ. ձայների հավասար բաշխման դեպքում վճռական դեր է խաղում նախագահողի ձայնը։

Պարտականությունների մասին կանոնադրության մեջ ասված էր.

«Հոգաբարձությունը պարտավոր է հոգ տանել նշված եկեղեցու աղքատ ծխականներին անհրաժեշտ պարագաներում հնարավոր նպաստներ տալու մասին, փնտրելու միջոցներ այդ եկեղեցուն կից դպրոց, աղքատանոց և առավածահաճո այլ հիմնարկներ հիմնելու համար, ինչպես նաև ստեղծելու ձեռնարկություններ (նկատի ունի անտեսական զանազան եկամտաբեր հիմնարկներ ունենալը —Վ. Մ.), այդ մասին, ըստ հաստատված կարգի, նախապես հարցնելով քաղաքացիական իշխանության թույլտվությունը»[168]։ Հոգաբարձության դրամական և նյութական եկամուտների աղբյուրը կազմում են. ա) եկեղեցում եղած այն դրամագլուխը, որը առանձնացված էր աղքատներին օգնելու համար, բ) բարեգործական նպատակներով արված կտակները, գ) կամավոր նվիրատվությունները։

8. Հոգաբարձության տնօրինության տակ եղած շարժական և անշարժ գույքը ենթակա է եկեղեցական գույքի ձեռքբերման, օտարման և դատական պաշտպանության վերաբերյալ օրենքով հաստատված կանոններին։

9. Հոգաբարձությունն օգտվում է հոգևոր և քաղաքացիական իշխանությունների հովանավորությունից և գտնվում նրանց հսկողության տակ։ Իր գործերը հոգաբարձությունը վարում է անհրաժեշտ հրապարակայնությամբ, վերանայելով ավելորդ ձևականությունները։ Տարեվերջին իր գործողությունների և տնօրինած գույքի ու դրամարների մասին հոգաբարձությունը հաշվետվություն է տալիս ս. Սարգիս եկեղեցու ծխականների ընդհանուր ժողովին. ծխականներն իրենց միջից ընտրում են հինգ հոգու՝ հաշվետվությունը վերստուգելու համար։

Ժողովի կողմից հաստատված հաշվետվությունը ներկայացվում է թեմական իշխանությանը, Տավրիկայի նահանգապետին և ներքին գործերի մինիստրին։ Նշված հաշվետվությունը, համընդհանուր տեղեկացման համար, տպագրվում է։

10. Ընդհանուր ժողովի տեղն ու ժամանակը որոշում է թեմի առաջնորդը։ Ժողովը օրինական է ճանաչվում, եթե ներկա է 1/10-ը այն մարդկանց, որոնք իրավունք ունեն մասնակցելու ժողովին։ Ժողովում հարցերը վճռվում են ձայների մեծամասնությամբ։

11. Եթե ծագել են այնպիսի հարցեր, որոնց լուծումը վեր է հոգաբարձության և ընդհանուր ժողովի իրավասությունից, ապա դրանց լուծումը վերապահվում է թեմական իշխանությանը։

Այսօրինակ կանոնադրությամբ հոգաբարձություններ էին գործում ոչ միայն Թեոդոսիայում։ XIX վերջին և XX դարի առաջին տասնամյակին կրթական և աղքատախնամ նպատակներով նկատելի գործունեություն էին ծավալել նաև Սիմֆերոպոլի, Ղարասուբազարի, Արմյանսկի Բազարի, Կերչի և Եվպատորիայի հայկական եկեղեցիների ծխական հոգաբարձությունները։ Պահպանվել են տարբեր տարիներին ներքին գործերի մինիստրությանը ներկայացրած և

167 ЦГИА СССР, ф. 821, оп. 140, д. 60, ч. II, л. 172—173.

168 Նույն տեղում, թ. 172բ։

առանձին գրքույկներով հրատարակված այդ հոգաբարձությունների հաշվետվություններից շատերը։ Հաշվետվություններից երևում է, թե ըստ էության ինչ բնագավառներ էր շոշափում և ինչպիսի բովանդակություն ուներ դրանց գործունեությունը։ Վերցնենք, օրինակ, Սիմֆերոպոլի ս. Աստվածածին եկեղեցու աղքատ ծխականների հոգաբարձության 1906 թվականի հաշվետվությունը՝ ներկայացված 1907 թվականին[169]։

Այս հոգաբարձությունը իր գործունեությունը սկսել էր 1897 թվականից։ 1906 թվականին հոգաբարձության խնամածության տակ կային 25 հայ ընտանիքներ՝ փոքրահասակ երեխաներով և 15 աշխատանքի անընդունակ միայնակներ։ Սրանցից 10 ընտանիք և 12 միայնակներ անվճար ապրում էին Ա. Ա. և Լ. Ա. Սպենդիարյանների (այսինքն կոմպոզիտորի և նրա հորեղբոր տղայի) կողմից հատկացված շինություններում, օգտվելով նրանց նյութական օժանդակությունից։

Խնամածյալներին տրվում էր բժշկական ձրի օգնություն, դեղբայքներ։ Հաշվետու տարում՝ 1906 թվականին, հոգաբարձության ընդգրկել էր. 1. Ամենամյա մշտական նպաստների բաշխում։ 2. Միանվագ նպաստների հատկացում (թաղման, հիվանդությունների բուժման, ճանապարհի և այլ ծախսերի համար)։ 3. Ծխականների աղքատ երեխաներին հանդերձանք տալը։ 4. Աղքատներին վառելիք բաշխելը։ 5. Աղքատ երեխաների ուսման վարձի վճարումը և աղքատ աշակերտներ պահելը[170]։

Առ 1-ը հունվարի 1907 թվականի հոգաբարձության միջոցները կազմել էին. ա) Ս. Գ. Միխիրյանի կողմից նվիրված տունը Սիմֆերոպոլի Երկրորդ հատվածում, բ) հոգաբարձության միջոցներով կառուցված երեք առանձնաշինքները, գ) Ն. Կ. և Վ. Լ. Սպենդիարովների նվիրած երկու բակերը՝ շինություններով հանդերձ, դ) 10.243 ռ. 10 կ. անձեռնմխելի գումարը և ե) 1510 ռ. 92 կ. ծախսվելիք գումարը[171]։

Հոգաբարձության անձեռնմխելի կապիտալը կազմում էին. ա) Ս. Ս. Թոփալյանի նվիրաբերած 2000 ռ. գումարը, որի տոկոսները գնում էին հոգաբարձության միջոցների ավելացման նպատակին. բ) Լուսեղենովի նվիրաբերած 500 ռ., որի տոկոսները նույնպես գնում էին վերոհիշյալ նպատակին, գ) Ս. Ն. Սպենդիարովի նվիրաբերած 3000 ռ., այս գումարի տոկոսները, իբրև թոշակ, տրվում էին աղքատ աշակերտներին, դ) Վ. Թումանովի նվիրած 2903 ռ. 80 կոպեկը, որի տոկոսներն առայժմ տրվում էին նրան, իսկ նրա մահից հետո անցնելու էին հոգաբարձությանը, ե) Ի. Կ. Սելինյանի և Ա. Ռ. Բուռնազյանի անվան թոշակ հաստատելու նպատակով ծխականների կողմից հոգաբարձությանը տրված գումարը, որը իր տոկոսներով 1907 թվականի հունվարի 1-ին կազմում էր 1839 ռ. 30 կ.[172]։

Նման պատկեր էին ներկայացնում նաև մյուս հոգաբարձությունների հաշվետվությունները՝ ներկայացված տարբեր տարիների համար։

* * *

Արևելահայ եկեղեցական ու դպրոցական կյանքի հետ միասին ղրիմահայ եկեղեցին ու դպրոցը ևս 1903—1905 թվականներին ապրեցին ծանր ժամանակներ։ Հայկական եկեղեցական գույքի գրավման և դպրոցները փակելու վերաբերյալ 1903 թվականի հունիսի 12-ի անփառունակ օրենքը մեծապես հարվածում էր ղրիմահայ հատկապես աղքատ դասի շահերին, որովհետև սրանց զավակներն էին, որ ծխական դպրոցների ունեզրկման հետևանքով կորցնում էին քիչ թե շատ կրթություն ստանալու հնարավորությունը։ Ղրիմահայ եկեղեցու ունեցվածքը ցույց տալիս մենք արդեն առիթ ունեցանք նշելու հիմնական այն գույքն ու կապիտալը, որ ցուցակագրել էին բռնագրավման նպատակով Ղրիմ գործուղված հատուկ հանձնարարության չինովնիկներ Գեսսելն ու Ռոմանյուկը։ Ղրիմահայ հասարակական գրեթե բոլոր խավերի դժգոհությունը առաջացնող հակահայ այս միջոցառումն ուներ նաև մեկ այլ կողմ. այսպես թե այնպես այն խթանում էր հակացարական տրամադրությունների և ազգային-ազատագրական ձգտումների զարթոնքը գաղութահայության շարքերում։

Հայտնի է, որ XX դարի սկզբներին Ղրիմը դառնում է սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ստեղծման և հեղափոխական շարժման կարևոր կենտրոններից մեկը Ռուսաստանում, իսկ 1905—1907 թվականների հեղափոխության ժամանակ թևակոխող աշխատավորները, Սևծովյան նավատորմի մարտիկների հետ միա-

169 ЦГИА СССР, ф. 821, оп. 140, д. 60, ч. V, лл. 17—25.

170 Նույն տեղում, թ. 19ա։

171 Նույն տեղում, թ. 19բ։

172 Նույն տեղում։

սին, ընթացան ռուսական առաջին հեղափոխության ավանդարդում և փայլուն էջեր թողեցին նրա տարեգրության մեջ։

Սոցիալ-դեմոկրատական շարժումն ու ռուսական առաջին հեղափոխությունը իրենց կնիքն են դրել նաև ղրիմահայության հասարակական կյանքի վրա։ Թերակղզու մյուս ազգերի ներկայացուցիչների կողքին ղրիմահայության լավագույն ներկայացուցիչները, նրանք, որ բարձրացել էին մարքսիստական ուսմունքը և սոցիալ-դեմոկրատական շարժման պատմական անխուսափելիությունը ըմբռնելու մակարդակը, դառնում են այդ շարժման գլխավորներից ու կազմակերպիչներից։ Դրանցից էր, օրինակ, Արմեն Առաքելի Բահաթրյանցը, որի մասին պահպանված փաստաթղթերը հետևյալ տեղեկությունն են հաղորդում։

Արմեն Բահաթրյանցը եղբայրն էր Վարդանուշ Բահաթրյանի՝ աշ-անհայտ կաուրայի, որը 1919 թվականին Ղրիմի հեղկոմի նախագահն էր և հանրաճանաչ հեղափոխական մի անձնավորություն՝ 1918—1920 թվականներին։

1905—1907 թվականներին Արմեն Բահաթրյանցի ծավալած հեղափոխական գործունեության մասին պահպանվել է ընդամենը մի քանի փաստաթուղթ, բայց եղածն էլ հաստատում է այն, որ նա, Տավրիկիայի նահանգական ժանդարմական վարչության պետի խոսքերով ասած, այդ ժամանակ հանդիսանում էր «սոցիալ-դեմոկրատների կուսակցության պարագլուխը»[173] Ղրիմում։

Օդեսայի և Տավրիկիայի պահնորդական բաժինների միջև 1907 թվականին Ա. Բահաթրյանցի անձնավորության շուրջը ծագած գրագրությունից երևում է, որ հեղափոխության անկման սկզբում նա փորձում է Ղրիմում վերականգնել կուսակցական աշխատանքը, կապ հաստատելով Խարկովի և Կիևի սոցիալ-դեմոկրատների հետ։ Օդեսայի պահնորդական բաժնի պետը 1907 թվականի հունիսի 1-ին № 597 շրջաբերականով գրում էր Տավրիկիայի նահանգական պահնորդական բաժնի պետին.

«Հանցագործ կազմակերպություններին պատկանող անհայտ մի անձնավորություն, «Ավեր» ստորագրությամբ, գրագրություն է պահպանում, ինչպես այդ երևում է ինձ մոտ եղած գաղտնի տեղեկություններից, հենց նման հանցագործ կազմակերպությունների պատկանող զանազան անձնավորությունների հետ, ինչպես, օրինակ, ինչ-որ «Մարուսիայի» հետ՝ Խարկովում, իսկ նրա միջոցով՝ ինչ-որ «Ավգուստի» հետ՝ Կիևում, վերջինիս հասցեագրելով այսպես. «Կիև, Ալեքսանդր Դրոմովին, ց՝պահանջ»։ Նշված «Ավերը» գտնվում է Սիմֆերոպոլում և «Ավգուստի» հետ ունեցած իր գրությունների մեջ խոսում է մարդկանց (գործիչների—Վ. Մ.) վերաբերյալ ունեցած կարիքի, մտավորական գործադրկության, Ռոստովից ինչ-որ հայտնի մի գործչի ժամանման մասին, որը ստիպված թողել է Սիմֆերոպոլը և գնացել Դնեպրինսկ, որտեղ կազմակերպությունը մտադիր է նրա համար ձեռք գցել ուսումնարանում դասարանի ղեկավարի պաշտոն. այնուհետև [«Ավերը»] հիշատակում է իր անդամակիցների (կազմակերպության անդամների—Վ. Մ.) մասին, բացատրելով, որ Մաքսիմը գտնվում է համագումարում (ՌՍԴ (բ) Կ 5-րդ համագումարը, որը տեղի ունեցավ 1907 թվականի մայիսին —Վ. Մ.) Ղրիմից, Պավելը՝ Սևաստոպոլում, Լիլյանը՝ Օդեսայում, Վլադիմիրը նստած էր Մելիտոպոլում, իսկ այժմ Պետերբուրգում է»[174]։

Օդեսայի պահնորդական բաժնի պետը խնդրում էր պարզել, թե ով է «Ավեր» ստորագրությունը կրող անձնավորությունը։ Տավրիկիայի ժանդարմական վարչության պետը հուլիսի 11-ին պատասխանում է, թե «գործակալական ավյալներով կարելի է գրեթե հաստատված կերպով ենթադրել, որ «Ավեր» ստորագրողը Արմեն Առաքելի Բահաթրյանցն է, ինժեներ-տեխնոլոգ։ Այժմ նա մեկնել է Սուդակ։ Նա սոցիալ-դեմոկրատների կուսակցության պարագլուխն է։ Նրա նկատմամբ նշանակված է հսկողություն»[175]։ Այդ գործը հանձնարարված էր չինովնիկ Սաչկովին[176]։ Հունիսի 18-ից մինչև հուլիսի 16-ը Ա. Բահաթրյանցը մնում է Սուդակում և ապա վերադառնում կրկին Սիմֆերոպոլ, որտեղ նրա նկատմամբ հաստատվում է գաղտնի հսկողություն»[177]։ Արխիվային փաստաթղթերը լռում են Ա. Բահաթրյանցի հետագա հեղափոխական գործունեության մասին, սակայն եղածն էլ բավական է համոզվելու, որ նա եղել է Ղրիմի սոցիալ-դեմոկրատների ղեկավար գործիչներից մեկը, այնքան հայտնի մի գործիչ, որ լուրջ անհանգստություն էր պատճառել Օդեսայի ու Ղրիմի ժանդարմական վարչություններին։ Դժվար չէ ենթադրել, որ Արմենը ժամանակին հեղափոխական բարերար ազդե-

173 Крымоблархив, ф. 706, оп. 1, д. 203, л. 23.

174 Նույն տեղում, թ. 22ա։
175 Նույն տեղում, թ. 23ա։
176 Նույն տեղում, թ. 26։
177 Նույն տեղում, թ. 25ա։

ցություն է գործել իր կրտսեր քրոջ՝ Վարդանուշի հեղափոխական հայացքների ձևավորման վրա։

* * *

Ռուսական առաջին հեղափոխությանը հաջորդած տարիներին և հատկապես Բալկանյան պատերազմների շրջանում ղրիմահայության մեջ իրենց գործունեությունն են աշխուժացնում հնչակյանները, որոնց գլխավորներին թվում էր, թե բարեպատեհ վիճակ է ներկայացել հայկական հարցի լուծման համար։ Հայկական ազգային մանր-բուրժուական մյուս կուսակցության՝ դաշնակցության ներկայացուցիչները այս շրջանում Ղրիմում որևէ գործունեություն չունեցան։

Փաստաթղթեր են պահպանվել, որոնք վկայում են այն մասին, որ դեռևս 1909 թվականին «Հնչակի» ներկայացուցիչները Կովկասից կամ Թուրքիայից գալիս էին Ղրիմ՝ պրոպագանդիստական և գրամական միջոցներ հավաքելու նպատակով։ 1909 թվականի մայիսին, օրինակ, ոստիկանությունը կալանավորում և Թեոդոսիայի բանտն է նետում հին ղրիմեցի առևտրական, թուրքահպատակ Գառնիկ Մուսայանին, որին ներկայացվում էր այն մեղադրանքը, թե նա օգնում է Սուբաշի գյուղի հայկական ծխական դպրոցի ուսուցիչ Հովսեփյանին՝ Թուրքիայից և Կովկասից գրականություն ու նամակներ ստանալու գործում[178]։ «Սուբաշի գյուղում ապրող Սուրաշիի հայկական ուսումնարանի ուսուցիչ Հովսեփյանը զբաղվում է ինչ-որ պրոպագանդայով, —գրում էր Հին Ղրիմ քաղաքի ոստիկանական վերակացուն։— Որոշ ժամանակ հետո ես տեղեկացա, որ Հովսեփյանը, գալով Կովկասից, զբաղվում է տեղական հեղափոխականներին, մեծ մասամբ երիտասարդությանը, գրքեր մատակարարելով, որոնք իբր թե ստանում է Կովկասից»[179]։ Վերակացուն հայտնում էր, որ բոլոր գրքերն ու նամակները Հովսեփյանը ստանում է ալրավաճառ Մուսայանի միջոցով։

1912—1913 թվականներին Սիմֆերոպոլում, Սուդակում և Եվպատորիայում ընդհատակյա գործունեություն են ծավալում Կովկասից ու Թուրքիայից եկած հնչակյանները[180]։ 1912 թվականի վերջին ամիսներին Ղրիմ է գալիս հայտնի հնչակյան Սյունիքը, որը այստեղ հանդես է գալիս Հովսեփ Դեյիրմենջու անձնագրով, նաև՝

178 Նույն տեղում, գ. 294, թ. 14ա։

179 Նույն տեղում։

180 Նույն տեղում, գ. 706, թ. 1—114։

Բագրատունի, Բիրակյան, Ամիրյան, Սյունիքյան և այլ ծածկանունների տակ։

Սյունիքը, որպես պրակտիկ գործիչ, մեծ համարում ուներ դեռևս ռուսական առաջին հեղափոխության տարիներին։ Նա հնչակյան կուսակցության Փարիզի (1905) և Կ. Պոլսի (1909) համագումարների պատգամավորներից էր, իսկ հետագայում, սկսած 1920 թվականից, նրա ակտիվ գործիչներից մեկը սփյուռքում։

Կուսակցության կենտրոնի հանձնարարականով անցնելով Ղրիմ, Սյունիքը շուտով կապ է հաստատում հայ երիտասարդության հետ և վերջինիս մեջ ոչ միայն ազգային զգացափարներ բորբոքում, այլև նրա օգնությամբ նպաստում հնչակյան գրամաքսակի զորացմանը։ Սյունիքը Ղրիմում գրամ է հավաքում և ուղարկում Փարիզ ոչ-անհայտ Վարազդատի՝ «Երիտասարդ Հայաստանի» նախկին խմբագրապետ Հակոբ Թուրաբյանի, ինչպես նաև Սապահ-Գյուլյանի անուններով։ Սյունիքի գործունեությանը պետք առնչել Սիմֆերոպոլում հնչակյան կուսակցության բաժանմունքի ստեղծումը, որն անգամ ուներ «Հնչակյան կուսակցության ԿԿ Սիմֆերոպոլի բաժանմունք» մակագիր բլանկը[181]։

Սակայն ոստիկանության աչքից չէր վրիպել Սյունիքի գործունեությունը։ Ոստիկանական դեպարտամենտը 1913 թվականի ապրիլի 9-ին գաղտնի գրություն է իջեցնում Տավրիկիայի նահանգական ժանդարմական վարչության պետի անունով, հայտնելով, թե «ոստիկանական դեպարտամենտում եղած տեղեկությունների համաձայն հայկական «Հնչակ» կուսակցության հայտնի անդամ Սյունիքը, որը Կոստանդնուպոլսից եկել է Ռուսաստան և ապրում է Ստեփան Ամիրյան անվան տակ, իսկ իրականում անունը Տիգրան է, ներկայումս գտնվում է Սիմֆերոպոլում։ Սյունիքը մտավորական է, ծագում է կովկասյան հայերից և սովորել է Շուշու ռեալական դպրոցում»[182]։

Նախքան սրան կալանավորելը Տավրիկիայի ժանդարմական վարչությունը խուզարկություն է կատարում Հարություն և Արտաշ Կայալովների, Պողոս Մանուկի Զաքիևի և թուրքահպատակ Միհրան Վարդանի Մանուկյանի տներում, որոնց մասին վարչությունը տեղեկություններ էր ստացել, թե «նրանք Սիմֆերոպոլում դրամ են հա-

181 Նույն տեղում, գ. 416, թ. 44ա։

182 Նույն տեղում, գ. 411, թ. 99ա։

վաքել հայկական սոցիալ-դեմոկրատական «Հնչակ» կուսակցության օգտին»[183]։

Ապրիլի 9-ին ֆոն Պլատոյի կողմից կազմված արձանագրությունից երևում է, որ հնչակյանների գործունեության մասին առաջին տեղեկություններից մեկը տեղական ոստիկանությանը տվել էր հայ մեծահարուստ վաճառական Նախշումյանը։ «Սևաստոպոլի պահնորդական բաժնի պետը ինձ հայտնել է,— գրում է գնդապետ ֆոն Պլատոն,— թե այս տարվա հունվարին կամ փետրվարի սկզբին Եվպատորիայում վաճառական Նախշումովի մոտ են եկել երկու հայ՝ պահանջելով 2000 ռուբ. հեղափոխական նպատակների համար, ընդ որում նրանցից մեկը կարող է լինել Սիմֆերոպոլում բնակվող հայազգի Միհրանը»[184]։

Սյունիքն իր ամբողջ քաղաքագործությունը ուղարկում և ստանում էր Միհրան Մանուկյանի անունով, իսկ վերջինս էլ այդ բոլորը ստանում էր հայազգի Կայալով եղբայրների խանութի հասցեով։ «Միհրան Մանուկյանի անունով, Կայալով եղբայրների խանութի հասցեով, ընթացիկ տարում Փարիզից և Կոստանդնուպոլսից ստացվել են «Հնչակ» սոցիալ-դեմոկրատական կուսակցության կենտրոնական կոմիտեի նամակները՝ այդ կուսակցության օգտին դրամի հավաքում կազմակերպելու խնդրանքով, կուսակցություն,— գրում էր ֆոն Պլատոն,— որը մտադիր է օգտվել Բալկանյան թերակղզում ստեղծված քաղաքական դրությունից հայերի նվիրական բաղձանքի՝ ինքնավար Հայաստանի ստեղծման համար»[185]։ Արձանագրության մեջ ընդգծված էր, թե բոլոր այդ նամակները սկսվում են «Ընկեր Սյունիք» խոսքերով։

Սյունիքին հայտնաբերելու և ձերբակալելու մասին Տավրիկիայի ոստիկանությունը առաջադրանք էր ստացել դեռ 1912 թվականի հուլիսին։ Հուլիսի 12-ին Թիֆլիսի ժանդարմական վարչության պետը Ղրիմի իր կոլեգային գրում էր, թե դրամ հավաքելու նպատակով «Կովկասից Ղրիմ պետք է գա «Հնչակ» սոցիալ-դեմոկրատական կուսակցության Կոստանդնուպոլսի կոմիտեի կողմից գործուղված կուսակցական հայտնի մի գործիչ, որն ապրում է Թուրքահպատակ Ստեփան Հարությունի Ամիրյանի անձնագրով, կուսակցության մեջ հայտնի է «Սյունիք» մականվամբ, որին հայտնաբերելուն պես պետք է խուզարկել, ձերբակալել և ուղարկել Թիֆլիս»[186]։

183 Նույն տեղում, գ. 416, թ. 1ա։
184 Նույն տեղում, թ. 2ա։
185 Նույն տեղում։
186 Նույն տեղում, թ. 2բ։

Մինչև ձերբակալումը Միհրան Մանուկյանի միջոցով Սյունիքը վերջինիս տանը գումարում է ժողովներ, դրանց մասնակից դարձնելով Սիմֆերոպոլի հայ երիտասարդության ներկայացուցիչներին։

Նշենք, որ Ղրիմի մեծահարուստ հայերը, ինչպես և պետք էր սպասել, բացասաբար էին տրամադրված հնչակյանների ծավալած գործունեության նկատմամբ։ Մենք արդեն հիշատակեցինք, որ մեծահարուստ վաճառական Նախշումյանը (Եվպատորիայից) Սևաստոպոլի պահնորդական բաժնին հայտնել էր հնչակների մասին։ Այդպես են վարվում նաև Կայալով եղբայրներն ու նրանց մերձավոր ազգական, հայազգի Գ. Ռ. Կարասևը։ Առաջինները ցուցմունքներ են տալիս, որ թեպետ նամակները ստացվել են իրենց խանութի հասցեով, բայց իրենք չեն իմացել դրանց բովանդակությունը և կասկածներ ծագելու առաջին իսկ պահից Մ. Մանուկյանին առաջարկել են դադարեցնել իրենց հասցեով նամակների ստանալն ու առաքումը, որովհետև իրենք չեն համակրում այդ գաղափարները[187]։ Ավելի հեռու է գնում ֆաբրիկանտ Կարասևը։ «Միհրանի քննակալ Թյուբյունջուց ես լսել էի,— ասում է նա իր ցուցմունքում,— որ Միհրանը դրամ է հավաքում թուրքահայերի օգտին։ Դրա համար էլ ես ասացի, որ եթե Միհրանն ինձ մոտ գա փողի պահանջով, ապա ես անհապաղ այդ մասին կհայտնեմ ոստիկանությանը, թեկուզ և այդ պատճառով նա ինձ սպառնա վրիժառու լինել»[188]։

Մեծահարուստ հայերի այս վարքագիծը չի բացատրվում միայն նրանց զգուշությամբ՝ կապված այդ հարցում ցարական կառավարության բռնած բացասական դիրքի հետ։ Սա հարցի մի կողմն է միայն։ Հարցի մյուս կողմն էլ այն է, որ մտահոգված իր կապիտալի ծավալման համար անհրաժեշտ ապահով պայմանների պահպանմամբ, գաղութահայ բուրժուազիան այդ իմաստով ոչ մի հեռանկար չէր տեսնում հայ ազգային մանրբուրժուական կուսակցությունների՝ թե հնչակյանների և թե դաշնակցականների նախագծումներում և պրակտիկ գործունեության մեջ. այդ պատճառով էլ նա ոչ միայն չէր աջակցում, այլև խրտնում էր նրանցից և ուղղակի թշնամական դիրք բռնում։ Շահույթի ապահովման նկրտումները գաղութահայ բուրժուազիային դարձրել էին կոսմոպոլիտական, և շահադիտական իր նպատակների իրականացման ճանապարհին նա ոչ մի հավատ ու հույս չէր տածում ապագա Հայաստանի «վարդագույն» հեռանկար-

187 Նույն տեղում, թ. 19բ։
188 Նույն տեղում, թ. 25ա։

ների նկատմամբ, որ քարոզում էին հիշյալ կուսակցությունները։ Հայ ազգային-ազատագրական շարժումների ղեկերգական վախճանի պատճառներից մեկը գաղութահայ (և ոչ միայն գաղութահայ) բուրժուազիայի հներտ, իսկ հաճախ էլ ուղղակի թշնամական վերաբերմունքն էր։ Կառչած շահագիտական իր էությունից, հայ բուրժուազիան ոչ մի նշանակություն չկամեցավ տալ այն կարևոր խընդրին, որի բովանդակությունը հայկական հարցն էր[189]։

Անդրադառնանք, սակայն, հնչակյանների գործունեությանը։ Ապրիլի կեսերին խուզարկություններից հետո ձերբակալվում են Միհրան Մանուկյանը, Պողոս Զաքյանը (Զաքիև) և Հովսեփ Դեյիրմենջիի՝ Սյունիքը, թեև վերջինիս բնակարանից խուզարկությամբ ոչինչ չհայտնաբերվեց։ Հայտնաբերված գրականության մեջ էին Գ. Պլեխանովի «Հաց, լույս և ազատություն», Կաբակովի «Ագրարային հարցը Նոր Զելանդիայում», Թումչյանի «Արհեստակցական միությունները» գրքույկները, ինչպես նաև հնչակյան կուսակցության Սիմֆերոպոլի բաժանմունքի վերոհիշյալ բլանկը[190]։

Ըստ էության հակակառավարական և հակառուսական ոչինչ չտեսնելով իրենց գործողություններում, սրանք բոլորը, բացի Սյունիքից, իրենց ցուցմունքներում խոստովանում են հնչակյան կուսակցության օգտին կատարած աշխատանքների մասին։ Տեղին ենք համարում քաղվածքներ բերել Մ. Մանուկյանի՝ 1913 թվականի ապրիլի 25-ի ցուցմունքից. դա հատկապես կարևոր է այն առումով, որ իբրև հնչակյան ակտիվ գործիչներից մեկը և ամենից մոտիկ կանգնածը Սյունիքին, նա իր այդ ցուցմունքում լրիվ բացատրում է հնչակյանների գործունեության աշխուժացման շարժառիթները 1912—1913 թվականներին։ «Բալկանյան թերակղզում ծագած պատերազմից ի վեր,— ասաց նա, պատասխանելով քննիչի հարցին,— թուրքահայերի մեջ վերածնվեց թուրքական լուծը թոթափելու հույսը՝ օգտվելով թուրքերի ռազմական անհաջողություններից. թերթերից մենք, հայերս, իմանում ենք, որ Փարիզում նիստեր է ունենում ինչ-որ պատվիրակություն, որը նպատակ ունի մեծ տերությունների ներկայացուցիչների հետ դիվանագիտական բանակցությունների միջոցով բարձրացնել հայկական հարցը այն կոնֆերանսում, որը հրավիրվելու է պատերազմը վերջանալուց հետո։ Հավատարապես ինձ հայտնի է, որ հայ ժողովրդի շահերը պաշտպանում է հայկական սոցիալ-դեմոկրատական «Հնչակ» կուսակցությունը, որը նույնպես իր ներկայացուցիչներն ունի Փարիզում... Այդ կուսակցության գործունեությունը վերջին շրջանում բացարձակապես դրսևորվել է ազգայնական ոգով»[191]։ Դրամ հավաքելու նկատմամբ հարուստ և աղդեցիկ ղրիմահայերի վերաբերմունքի մասին Մ. Մանուկյանը ասաց. «Դրամ տալու կապակցությամբ այստեղի հայերը, որքան ես կարողացա հասկանալ խոսակցություններից, այն կարծիքին են, թե այդ հարցի բարձրացումը առայժմ վաղ է, քանի որ տակավին հայտնի չէ ռուսական կառավարության տեսակետը արևելյան հարցում»[192]։

Ազգային կուսակցությունների գործունեությունը այդ շրջանում խստորեն հետապնդվում էր ցարական իշխանությունների կողմից։ Եվ դա չի բացատրվում միայն արտաքին-քաղաքական նկատառումներով։ Ցարիզմը էապես բացասաբար էր տրամադրված ազգային ինքնավարության և անկախության այն գաղափարի հանդեպ, որի իրականացմանը ձգտում էին այդ կուսակցությունները։ Սրանով պիտի բացատրել վերջիններիս գործունեության հետապնդումը. «Հետաքննության ժամանակ ժանդարմական վարչության պետն ինձ ասաց,— գրում էր Սյունիքը Տավրիկիայի նահանգապետին,— թե վարչությունը տեղեկություններ է ստացել, որ Սիմֆերոպոլ և Եվպատորիա քաղաքներում տեղի է ունենում նվիրատվությունների հավաք «Հնչակ» կուսակցության օգտին՝ Թուրքահայաստանի ազատագրության համար, որպիսի գործը, թեև ոչնչով չի վերաբերում ռուսական կառավարությանը, և որ նա, վարչության պետը, ևս հակառակ ոչինչ չունի այդ գործի դեմ, բայց համենայն դեպս ցանկանում է ծանոթանալ գործի հանգամանքներին...»[193]։

Հայերի անկախության նկատմամբ ցարական կառավարության բացասական դիրքը նորություն չէր և ուներ տրադիցիոն պատմություն։ Տակավին 1865 թվականին ցարի հրամանով Կովկասի փոխարքայի մոտ, ներքին և արտաքին գործերի մինիստրների մասնակցությամբ, տեղի ունեցած խորհրդակցությունն ուղղակի որոշում է ամենուրեք և ամեն ինչում դեմ դուրս գալ հայերի քաղաքական ձգտումներին, ընդ որում այդ որոշումն ընդունվում էր այնպիսի մի ժամանակ, երբ խորհրդակցությունը հրավիրված էր մշակելու ուղի-

189 Նույն տեղում։

190 Крымоблархив, ф. 706, д. 416, л. 54.

191 Նույն տեղում, թ. 54ա, բ։

192 Նույն տեղում, թ. 54բ։

193 Նույն տեղում, գ. 411, թ. 193ա, բ։

ներ՝ Թուրքիայում և առհասարակ Արևելքում ապրող հայերի վրա ռուսական ազդեցությունը ուժեղացնելու նպատակով քաղաքական կուրս մշակելու համար։ Ի պատասխան արտաքին գործերի մինիստր Ա. Մ. Գորչակովի այն հայտարարությանը, թե արտասահմանյան հայերի նկատմամբ ռուսական ազդեցությունը ուժեղացնելու նպատակով ներքին վարչական նկատառումները (այսինքն Ռուսաստանում ապրող հայերի արտոնությունների, կառավարության և նրանց միջև եղած վարչական փոխհարաբերությունների և այլ հարցեր—Վ. Մ.) պիտի ենթարկել արտաքին քաղաքական պահանջներին, ներքին գործերի մինիստր Պ. Ա. Վալուևը, արտասահմանյան հայերին Ռուսաստանի կողմը տրամադրելու համար ձեռնարկվող միջոցների կարևորությունն ու նշանակությունն ընդունելով հանդերձ, ասաց. «Ինչպես արտասահմանյան, այնպես էլ մասամբ տեղական հայերի՝ իրենց ազգային ավտոնոմիան վերականգնելու՝ կառավարությանը ոչ անհայտ ձգտումների հետևանքով, պետք է խուսափել այն ամենից, ինչը կարող է ուղղակի կամ անուղղակի կերպով նպաստել այդպիսի ձգտումների պաշտպանությանը և զարգացմանը»[194]։ Իր հերթին, Կովկասի փոխարքա մեծ իշխանը ավելացրեց. «Հայկական բնակչությունը մեր սահմաններում խմբավորված է առավելապես Անդրկովկասի երկրամասում, որը բնակեցված է շատ այլազան ցեղերով, որ կառավարությունը պետք է ձգտի հայերի աստիճանաբար միաձուլմանը կայսրության մեջ տիրապետող բնիկ ռուսության հետ (ընդգծումը մերն է—Վ. Մ.) և ամենևին ոչ թե սեպարատիզմի խրախուսման...»[195]։ Խորհրդակցությունն ընդունում է որոշում, որը 1865 թվականի հուլիսի 12-ին արժանանում է բարձրագույն հաստատման։ Այդ որոշումը դնում էր, որ «հայ եկեղեցուն և հայ ժողովրդին վերաբերող հարցերում բոլոր գերատեսչությունների գործողություններում պետք է արտաքին քաղաքականության նկատառումները վարչական պահանջների հետ համաձայնեցվեն այնպես, որպեսզի հակազդելով որոշ հայերի երազկոտ քաղաքական ձգտումներին, արտասահմանյան հայերի վրա պահպանվի կաթողիկոսի և Էջմիածնի՝ մեզ համար ձեռնտու հոգևոր նշանակությունն ու ազդեցությունը»[196]։

Դիրքորոշումը չէր փոխվել և այժմ։ Հնչակների հետաքննության ժամանակ ոստիկանությանը հաջողվում է պարզել, որ Սյունիքը ազգային լայն գործունեություն էր ունեցել նաև Կովկասում, 1905—1907 թվականներին։ Սյունիքի անձնավորությունը պարզելու գործին միջամտում են Թիֆլիսի, Բաքվի, Աստրախանի, Բաթումի ժանդարմական վարչությունները։ Գրագրություններից երևում է, որ Սյունիքը սերտ կապեր է ունեցել Կովկասի ու Թուրքիայի հնչակյան կոմիտեների և գործիչների հետ։ 1913 թվականի նոյեմբերի 16-ին նահանգական իշխանությունների կարգադրությամբ Սիմֆերոպոլի օկրուգային դատարանի քննիչի միջոցով Սյունիքի դեմ դատական գործ է հարուցվում։ Թե այդ գործն ինչ ընթացք է ստացել՝ անհայտ է, հայտնի է միայն, որ 1914 թվականի հունվարին Սյունիքը դեռևս գտնվում էր Սիմֆերոպոլի բանտում։

Այդ նույն ժամանակ Սյունիքի հետ միասին Ղրիմում գործում էին Կովկասից վտարված Գևորդ Քոփչյանը, Բաթումից եկած Ռուբեն Կարապետյանը և այլ հնչակյաններ[197]։

* * *

Ղրիմի հայկական գաղութը հայ գաղթաշխարհի այն օջախներից էր, որոնք բացառիկ սերտ կապերի մեջ էին կովկասահայության, Արևելյան և Արևմտյան Հայաստանի, ինչպես նաև Թուրքիայի տարբեր վայրերի հայկական շրջանների հետ։ Այդ պատճառով էլ հայ ժողովրդին կամ նրա առանձին հատվածներին հուզող հարցերը անմիջական արձագանք էին գտնում տավրիկահայության մեջ, մրատհոգում նրան։

Համայն հայ ժողովրդի հետ միասին ղրիմահայերին մեծ վիշտ պատճառեց հայկական մեծ եղեռնը։ Ղրիմահայ բոլոր գաղթօջախները իրենց արժանի լուման ներդրեցին թուրքական սրից մազապուրծ դարձած իրենց ազգակիցներին օգնելու գործում։

Հայ գաղթականներին և որբերին օգնություն ցույց տալու գործը ղրիմահայ գաղութում դրվեց կանոնավոր հիմքերի վրա։ Ղրիմահայ գրեթե բոլոր գաղթօջախներում այդ նպատակով հիմնվեցին հայկական կոմիտեներ, որոնք կազմակերպում էին դրամական և նյութական միջոցների հավաքումը։

Միայն Էջմիածնի սինոդի անունով առ 1 հունիսի 1915 թ. հայ գաղթականներին օգնելու համար Ղրիմից ուղարկված դրամական միջոցները ունեին հետևյալ պատկերը[198].

194 ЦГИА СССР, ф. 821, оп. 139, д. 7, л. 42.

195 Նույն տեղում, թ. 42ա, բ։

196 Նույն տեղում, թ. 42բ, 43ա։

197 Крымоблархив, ф. 760, оп. 1, д. 441, л. 292, 346.

198 «Արարատ», ամսագիր, 1915, № 6, էջ 505—511։

Սիմֆերոպոլի հայկական կոմիտեից . .	7000 ռուբ.
Սևաստոպոլի հայերից	375 »
Սևաստոպոլի հայոց հանձնաժողովից . .	1600 »
Սևաստոպոլցի Հովհ. Տեր-Սիմոնյանից .	50 »
Ղարասուբազարի հայոց կոմիտեից . . .	4000 »
Յալթայի հայոց կոմիտեից	1000 »
Յալթայի ժամանակավոր հանձնաժողովից .	500 »
Եվպատորիայի հանձնաժողովից . . .	120 »
Թեոդոսիայի հանձնաժողովից . . .	1000 »
Կերչի հայերից	358 »
Եվպատորիայի հայկ. բարեգործ. ընկերությունից	157 ռ. 47 կ.
	16.160 ռ. 47 կ.

Հունիս-հուլիս ամիսներին միայն Սիմֆերոպոլի, Եվպատորիայի և Կերչի հայերը սինոդի հայ գաղթականներին օգնող հանձնաժողովին են ուղարկում 7270 ռ. 22 կ.[199]: Դրամական միջոցների հավաքումն ու առաքումը շարունակվում է նաև մյուս ամիսներին և հաջորդ տարիներին: Այսպես, 1916 թվականի սկզբներին Տավրիկյան նահանգի հինգ քաղաքներից գաղթականներին օգնելու համար էջմիածնի սինոդ է ուղարկվել 4085 ռ. 87 կ.[200], իսկ Ղարասուբազարի հայերից 1917 թվականի սեպտեմբերին՝ 3177 ռ. 99 կ.[201]:

Հայ որբերին պատսպարելու և օգնելու ուղղությամբ տաղմարդկանցից ետ չեն մնում Ղրիմի հայուհիները: Տիկին Յու. Ի. Սպենդիարյանի գլխավորությամբ գործող Սիմֆերոպոլի հայ կանանց կոմիտեն, Ղրիմի մյուս քաղաքների կոմիտեների համաձայնությամբ, 1915 թվականի աշնանը որոշում է գաղթական հայ երեխաների համար Սիմֆերոպոլում բացել որբանոց. կոմիտեն դիմում է էջմիածնին՝ խնդրելով իրեն տրամադրել որբեր: Սակայն քանի որ որոշված էր Կովկասի սահմաններից ոչ մի հայ որբ դուրս չթողնել, այս հարցի շուրջը սկսվում են տևական բանակցություններ՝ մի կողմից կոմիտեի, իսկ մյուս կողմից էջմիածնի սինոդի և Թիֆլիսի հայ գլխավորների միջև: Սիմֆերոպոլի կանանց կոմիտեն երկու անգամ իր ներկայացուցիչներին ուղարկում է էջմիածին և Թիֆլիս, բայց որբեր ստանալու գործը ձգձգվում է: 1915 թվականի

199 Նույն տեղում, 1915 թ., № 7—8, էջ 523—530, 665:
200 Նույն տեղում, 1916, № 1—2, էջ 8, 22, 157, 160:
201 Նույն տեղում, 1917, № 9—10, էջ 849:

դեկտեմբերի 25-ին էջմիածին ուղարկած իր հեռագրում կոմիտեն նշում էր.

«Էջմիածին, Տիրայր վարդապետին. Ղրիմի հայուհիները Սիմֆերոպոլում բաց են անում որբանոց թուրքահպատակ որբերի համար: Միանվագ ժողովված է 3500 ռ., իսկ ամսական 700 ռ., երեք տարի ժամանակով: Ոգևորությունը մեծ է: Մեր պատգամավորուհիներին Թիֆլիսում արգելեցին բերել երեխաներին: Թախանձագին խնդրում ենք ստանալ նորին օծության թույլտվությունը՝ վերցնելու երկսեռ երեխաներ գավառից, եթե այդպիսիները գտնվեն»[202]: Որբեր չստանալու հետևանքով որբանոցը չի բացվում: Կանանց կոմիտեն հավաքված գումարը տրամադրում է հայ գաղթականների համար սերմացու գնելու նպատակին:

Ղրիմահայերը կարեկցանքով և զրկաբաց են ընդունում այն հայ գաղթականներին, որոնց թոհուբոհի այդ շրջանում կյանքը նետում է Ղրիմ: Առաջին համաշխարհային պատերազմի և նրան հաջորդած երկու-երեք տարիներին ղրիմահայոց թիվը ավելանում է մանավանդ Տրապիզոնի և նրա մերձակա շրջանների հայության հաշվին: Ղրիմ քաշված հայ գաղթականական ընտանիքները, տեղի հայության բազմակողմանի աջակցության շնորհիվ, գծնդակ այդ տարիներին կարողանում են փրկվել սովի ու մահվան ճիրաններից, հաստատվել թերակղզու վրա և նոր երանգ հաղորդել նորագույն շրջանի ղրիմահայ պատմության:

* * *

Աշխատության այս գլխում քննարկված հարցերի շարադրանքը, այսպիսով, անհրկբա վկայում է, որ Ղրիմի հայկական գաղութին, «իր» խնդիրներից բացի, հավասարապես մտահոգել են նաև ամբողջ հայությանը վերաբերող քաղաքական, ազգային, մշակութային ու կրոնական հարցերը, նաև համառուսական կյանքի կարևորագույն իրադարձությունները: Սակայն միջամուխ լինելով այդ խնդիրներին՝ ղրիմահայության սոցիալական ամեն մի դաս ի հայտ էր բերում ուրույն մոտեցում և առաջարկում իր դեղատոմսը: Այլ կերպ չէր էլ կարող լինել, որովհետև յուրաքանչյուր դասակարգ ու հասարակական խավ ելնում է իր սոցիալ-տնտեսական և քաղաքական շահերից:

202 «Մշակ», օրաթերթ, Թիֆլիս, 1916, № 54:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՂՐԻՄԱՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Մխիթարյանների օրինակով կրթական—մշակութային կենտրոն հիմնելու գաղափարը: Նախկին դպրոցները, նրանց գործունեությունն ու նշանակությունը: Խալիբյան ուսումնարանն ու տպարանը: Ղրիմահայ պարբերականները: Մշակույթի նշանավոր գործիչներ:

Ղրիմահայ մշակույթը հայկական հարուստ կուլտուրայի արժեքավոր բեկորներից է: Կապված Հայաստանի, հայաշատ կենտրոնների, մանավանդ Կոստանդնուպոլսի և Թիֆլիսի հետ, կենտրոններ, որոնցում հայ մշակույթը շարունակ վերելք էր ապրում, տավրիկյան հայերը ուժերի ներածին չափ զարկ էին տալիս հայրենի մշակութային ավանդությունների զարգացմանը: Դա ծառայում էր ոչ միայն նրանց հոգևոր պահանջմունքների բավարարմանը, այլև ազգապահպանման խնդիրներին, ազգային գեմնից չկտրվելու նպատակին: Գաղութի վերստեղծման առաջին իսկ տարիներից ղրիմահայերը հիմնում են դպրոցներ, հետագայում նաև ուսումնարան, տպարան, հրատարակում հանդեսներ ու գրքեր, տալիս համազգային և նույնիսկ համաշխարհային մասշտաբի արվեստագետներ:

Հարկ է հավաստել այն ճշմարիտ իրողությունը, որ կուլտուրական միջոցառումները իրականացնելիս ղրիմահայերին մեծապես նպաստում էին Ռուսաստանում նրանց ունեցած արտոնությունները, որոնք տալիս էին բավական ազատ հնարավորություններ զարգացնելու մշակութային կյանքը, հարկավ, այն ժամանակվա ընկալումներին ու վիճակին համապատասխան:

Այդ արտոնությունների և հնարավորությունների օգտագործումը այնքան զորեղ ատաղձ էր թվում, որ XIX դարի սկզբներին պոլսահայ մի շարք աշխարհիկ և եկեղեցական գործիչներ լրջորեն մտադրվում և գործնական քայլերի են դիմում՝ Ղրիմում վենետիկի Մխիթարյան միաբանության նման և նրան հակառակ հայկական մշակութային օջախ ստեղծելու ուղղությամբ: Այդ նպատակով աշխարհիկ և եկեղեցական 12 գործիչներ Կոստանդնուպոլսից 1807 թվականի դեկտեմբերի 20-ին դիմում են Նախիջևան-Բեսարաբիայի հայկական թեմի առաջնորդ Եփրեմ արքեպիսկոպոսին, խնդրելով Հին Ղրիմ քաղաքին մերձակա ս. Խաչ վանքը տրամադրել իրենց՝ այնտեղ միաբանություն հիմնելու և մշակութային լայն գործունեություն ծավալելու համար: Սրանք չէին նշում իրենց անունները, հավանաբար, վախենալով թուրքական կառավարության գործակալներից, որոնք Ռուսաստանի և Թուրքիայի միջև մղվող պատերազմի այդ շրջանում կարող էին կանխել նրանց խնդրանքը և տարբեր պատրվակների տակ անգամ քաղաքական մեղադրանք ներկայացնել: Սրանց խնդրանքի շարժառիթն էլ, սակայն, միայն գործունեության համար Ղրիմում առկա համեմատական ազատ հնարավորությունները չէին, այլ նաև՝ այդօրինակ նպատակների իրականացման համար Թուրքիայում տիրող անապահով և աննպաստ վիճակը, առհասարակ, իսկ հայերի համար, մասնավորապես: Եփրեմին ուղղած իրենց վերոհիշյալ գրության մեջ նրանք, խոսելով Ռուսաստանում հայերի համար ստեղծված ապահովության մասին, գրում էին. «և մինչ մեք զմեզ ի յայն յապահովութենէ վերջացնալ և զրկեալ տեսանեմք թախծագին ցաւիմք և տագնապիմք, քանզի բնակիչ կողմանցդ մինչ ազատեն ի հարկապահանջմանց և ի պէս պէս նեղութեանց. հեծեմք և ընդ հեծելն հառաչեմք. սմին իրի բազումք են որք ըղձակերպս լեալ թալկանան և յօժարին կեալ ընդ բնօք խնամոցդ»[1]:

Խնդրատուները չէին թաքցնում այն, որ իրենք նախանձով են լցված դեպի Մխիթարյանները և մտադիր են առավել լայն ծրագրեր իրականացնել: «Նախանձաւոր լեալ եմք վանուցն Ղազարու,—գրում էին նրանք,—որ ի վենետիկ ի ձեռս հետելոցն ի մէնջ. ինքեանք իսկ խոստովանին՝ ոչ արծաթեղէնօք և ոսկեղէնօք ասեն զպայծառանալն վանուց. այլ ապահովութիւն տեղւոյն և անթակ միաբանութիւն սիրով կապակցեալ...»[2]:

Սրանք գիտակցում էին, որ ազգային-մշակութային լուրջ գործունեություն անզոր պիտի լինեն ծավալել, եթե ապավինեն միջնա-

1 Մատենադարան, ֆ. կաթ. դիվան, թղթ. 18, վավ. 52, թ. 1ա:

2 Նույն տեղում, թ. 1բ:

դարյան մեթոդներին։ Գործը գլուխ գալու պարագայում նրանք մտադիր էին ստեղծվելիք մշակութային օջախը ապահովել տպարանով, որի համար արդեն նախապես գտել էին տպագրիչ. «զմիտս ունիմք և ձեռնամխել ի տպագրութիւնս իսկ, որ կա աստ ի պատրաստի հանճարեղ տպագրիչ մի և յօժարէ վառիլ նախանձ մեր. զի նոքա (Մխիթարյանները—Վ. Մ.), որ ունեցան և ստացան գողութեամբ, մենք որ ստանամք նորոգ ի ձեռն աշխատութեամբ մի թէ շատ ինչ իցէ. այս նախանձ վառեաց զմեզ ի սէր միաբանութեան»[3]։

Նամակի վերջում կրկնելով, թե ս. Խաչ վանքը բավական կլինի իրենց համար, խնդրում էին Հովհաննես վարժապետ Տեր-Աբրահամյանի, Ստեփան Զելեպու կամ նրա եղբայր Նիկողայոս ամիրայի միջոցով տալ պատասխան «թղթոյն մերոյ, բայց վաղվաղակի»[4]։

Իր հերթին Եփրեմ արքեպիսկոպոսին է դիմում Հովհաննես Տեր-Աբրահամյանը՝ միջնորդելով ընդառաջել Կ. Պոլսի 12 կուսակրոնների խնդրանքին։ Սա միաժամանակ հայտնում էր, թե Կ. Պոլսում մի քանի ջերմեռանդ մարդիկ վաղուց էին հղացել այդ միտքը։ «Ի վաղուց քանի մի ջերմեռանդ անձինք զիղձս և յօժարութիւնս ունէին գնալ ի վանորայս որք ի կոմմանս միջերկրայս, զորոց կերպակերպ ձախորդութեան լուրս լսելով յետս չոգան ի յայն յօժարութեամբ և յամեցուցին զգնալն, մանաւանդ զի ընդ բերմանց ժամանակիս չմնաց վանք ինչ որ ոչ կրեաց զվիշտ և զնեղութիւն»[5]։ Անդրադառնալով խնդրատուների ով լինելուն, կրթական մակարդակին և նյութական դրությանը, Հ. Տեր-Աբրահամյանը ավելացնում էր, թե նրանցից մեկը Պոլսի պատրիարքարանի «ի վաղուց բազմաշխատ գրագիրն, որոյ եղբայր սարկաւագ Գալուստ արքեպիսկոպոսի աշակերտն, որք ի ձեռս մեր լինելոյն ի վաղուց ժամանակէ, ուստի և վարուց և բարուց սոցին լաւապէս տեղեակելով իմ ծանուցի զպատասխանութիւն ս. Խաչ վանուց, որ ի Ղռիմ և յորդորեցի միանգամայն գալ և բնակիլ անդ ապահովապէս... Գործունեայ անձինք են և հաւատով իսկ... սիրով ընկալան ղյորդորումն մեր»[6]։

Եփրեմ արքեպիսկոպոսը ուրախությամբ է ընդունում սրանց խնդրանքը և չի պատրաստվում արագ պատասխանել։ 1807 թվականի դեկտեմբերի 25-ին նա մի քանի նամակներ է գրում խնդրատուներին՝

3 Նույն տեղում։
4 Նույն տեղում։
5 Նույն տեղում, վավ. 53, թ. 2ա։
6 Նույն տեղում։

Հ. Նալբանդյանը իր աշակերտ Յաշա Նեյֆեցի հետ։

Աննա Թավշյանի գեղեցման-ճուշաձանը Սիմֆերոպոլի հայկական գեղեցմանատանը:

Տեր-Աբրահամյանին և Ստեփանոս Չելեպուն: Խնդրատուներին ուղղած նամակում Եփրեմը ողջունում էր նրանց մտադրությունը և ընդգծում այն կարևոր դերը, որ կարող է խաղալ նրա իրականացումը ազգի ծաղկման գործում մի ժամանակաշրջանում, երբ հայերը մշակութային առումով ետ էին մնում քրիստոնյա զարգացած ազգերից: Խրախուսելով և հորդորելով նրանց, Եփրեմը գրում էր. «ապաքէն եթէ դուք ընդ ջերմեռանդ խոստման ձերոյ ունիցիք ի միտս ձեր ուհաստատութիւն միաբանութեան, արդարև նոր թարգմանիչք և նոր պատճառք լուսաւորելոյ զբազումս դիտութեամբ լինելոց եք յազգի մերում և անուն ազգիս պանծալոց է զովութեամբ և բազումք ևս ի հոգևորականաց և ի մաքմնաւորականաց կողմանցս և այլոց տեղաց, որք և ընդ որում ընդ մեզ ունին զփափագ ջերմեռանդութեան ի հաստատութիւն այսր առաջարկութեան, յօժարութեամբ ձայնակից լինելոց են մեզ, եթէ լուիցեն զձէնջ զփոյթ հաստատութեան և սիրոյ միաբանութեան»[7]:

Թեմի առաջնորդը, այսպիսով, որպես գործին ի մոտո կանգնած անձ, համոզված էր, որ սրանց խնդրանքը և ձեռնարկումը լայն արձագանք է գտնելու ազգակիցների շրջանում: Դրա համար նա ուներ նաև ուղղակի փաստեր. «յուսամք ձեզ ևս յայտնի լինել,— հայտնում էր նա խնդրատուներին,— թէ որպէս և ի հեռաւոր վայրեաց գրեն մեզ ի սոյն առաջարկութիւն փոյթ ունել և հաստատել. նմին իրի յորդոր լինիմք սիրելի որդւոցդ մերոց...»[8]:

Եփրեմն առաջարկում էր, որպեսզի այդ միաբաններից երկուսը ժամանեն Ղրիմ և տեղում ծանոթանան դրությանը, թեպետ և իրենց ընտրած վայրը «ապահով է և վայելուչ»[9]:

Խնդրատու «միաբաններին և վարժապետներին» ուղղած իր վերոհիշյալ պատասխանը նա ուղարկում է Ստեփան Չելեպուն: Սակայն Եփրեմը ցուցաբերում է բավական զգուշավորություն, որը նա բացատրում էր խնդրանքի տակ հիշյալ անձանց անունների բացակայությամբ: Նա Ստ. Չելեպուն պատվիրում էր նախ մոտիկից ծանոթանալ այդ անձանց իսկական դիտավորությանը և ապա նոր հանձնել նրանց ուղղված իր պատասխան նամակը, «եթէ արդարև իցէն նոքին անվտանգաբերք և բաղձացօղք մշտնջենաւոր»[10]: Բայց «եթէ չիցէն հաւատարիմ և արժանաւորք գալոյ յայսկոյս, յայնժամ և զթուղթսն որ ի մէնջ գրեցեալ, և զօրինական գրութեանց նոցին և

7 Նույն տեղում, վավ. 54, թ. 2ա, բ:
8 Նույն տեղում, թ. 2բ:
9 Նույն տեղում:
10 Նույն տեղում, վավ. 56, թ. 3ա:

վարժապետին պահել առ ձեզ զանց արասջիք, և ճեպով ծանուսջիք ի միամտութիւն»[11]։ Ստ. Ջելեպուն ուղղած մի այլ նամակում Եփրեմը գրում էր, թե նախքան երկու ներկայացուցիչների Ղրիմ գալը, պետք է իրեն հայտնի դառնան 12-ի անունները, որպեսզի ինքը հնարավորություն ունենա նրանց անունները ներկայացնելու կայսրին և կաթողիկոսին՝ գոյություն ունեցող կարգի համապատասխան թույլտվություն ստանալու համար[12]։

Հիմք ունենք ենթադրելու, որ Ստ. Ջելեպին Եփրեմի վերոհիշյալ բոլոր հանձնարարություններով է գործել և նրան հայտնել սրբանց անունները, որովհետև միայն նման պարագայում դիմողները հնարավորություն կունենային ծանոթանալու թեմի առաջնորդի՝ իրենց ուղղած պատասխան-նամակին և 1808 թվականին (ամիսամսաթիվը հայտնի չէ) պատասխանել նրան։ Այս վերջին նամակում նրանք Եփրեմին հավաստիացնում էին, թե հոժարությամբ համաձայն են ենթարկվելու կաթողիկոսին և իրեն՝ Եփրեմին, և շուտով Ղրիմ կուղարկեն իրենց երկու ներկայացուցիչներին։

Կոստանդնուպոլսի աշխարհիկ և հոգևորական մտավորականների այս ծրագիրը չիրականացվեց, և մեզ հայտնի չեն դրա պատճառները, որոնք կարող են բազմաթիվ և բազմազան լինել՝ առընչված ոչ միայն նյութական պայմանների, այլև Ռուսաստանի ու Թուրքիայի միջև տիրող քաղաքական վիճակի հետ։ Սակայն հայ մշակույթի զարգացման համար Ղրիմում կենտրոն ստեղծելու գաղափարը շարունակում էր մտահոգել մի շարք հայ գործիչների։ Հետաքրքիր մի նախաձեռնությամբ հանդես է գալիս, օրինակ, Մանվել վրդ. Գյումուշխանեցին 1814 թվականին։ Սա փորձում է արդեն մի զնդակով երկու նապաստակ խփել՝ վենետիկի Մխիթարյաններին տեղափոխել Ղրիմ, հիմնել միաբանություն և այդ տեղափոխմամբ հարվածել Հռոմի՝ կաթոլիկ հայերի վրա ունեցած ազդեցությանը։ 1814 թվականի դեկտեմբերի 14-ին Մանվել վարդապետը երկար մի նամակով դիմում է Վենետիկի Մխիթարյաններին, որտեղ աշխատում էր վերջիններիս համոզել կաթոլիկության սխալ և հայերի համար վնասակար ու կորստաբեր լինելը։ Նկարագրելով հայերին և հայ եկեղեցուն Ռուսաստանում շնորհված արտոնությունները ու կառավարության հովանավորությունը, Մանվելը նրանց խորհուրդ էր տալիս թողնել կաթոլիկ Իտալիան և տեղափոխվել Ռուսաստան[13]։

11 Նույն տեղում։
12 Նույն տեղում, վավ. 57, թ. 3բ։
13 Նույն տեղում, թղթ. 25, վավ. 89։

Մխիթարյաններին շահագրգռելու և իր նամակը հիմնավորդարձնելու նպատակով Գյումուշխանեցին նրանց տեղեկացնում է այն փաստը, որ Հին Ղրիմի հայերին ռուսական կառավարությունը տվել է 12.000, իսկ ս. Խաչ վանքին՝ 3.500 դեսյատին հող[14]։ Սակայն Գյումուշխանեցու ցանկությունը նույնպես մնում է անկատար։ Բայց Ղրիմի հայկական գաղութը հիմնեց իր մշակութային և կրթական օջախները, և այդ առումով ամենից առաջ կանգ կառնենք ղրիմահայ դպրոցական կյանքի լուսաբանման վրա։

* * *

Գաղութի կազմավորման առաջին իսկ շրջանից հայկական եկեղեցիներին կից հիմնվում են ծխական դպրոցներ։ Այդ գործի նախաձեռնողներն իրենց երեխաների ըրազիտությամբ մտահոգված ղրիմահայ համայնքներն էին, որոնց ցանկությանը ընդառաջում էր ղրիմահայ կղերը՝ կրոնական պրոպագանդի, ազգային-եկեղեցական գործունեության ծավալման մտադրությամբ։ Եկեղեցականների մեջ կային և այնպիսիները, որոնք լինելով կրթված անձինք՝ անշահախնդիր կերպով և նվիրվածորեն ծառայում էին հայ մանուկների կրթության գործին, ի հայտ բերելով նախանձելի եռանդ և բանիմաց նախաձեռնություն։

Ղրիմահայ առաջին դպրոցը հիմնվեց Ղարասուբազարում, 1816 թվականին։ Այդ գործի նախաձեռնողը Մանվել վարդապետ Գյումուշխանեցին էր։ Ռուսահայոց առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսին ներկայացնելով ութ տարիների ընթացքում Ղրիմում ունեցած իր գործունեության արդյունքը, 1820 թվականի հունիսի 22-ին Գյումուշխանեցին գրում էր. «...ի Ղարսու ութսուն երեխա առանց վարձու հայերէն և ռուսերէն կարդալ գրելու դպրատուն հաստատեցի»[15]։ Գյումուշխանեցին, իրոք, հորդորից Ղարասուի հասարակությանը կազմակերպելու դպրոց, մանավանդ, որ «տեսանէր [նա] զրաղումն ի մանկանց դատարկաշրջիկս ի փողոցսն, և զայլս ի մէնջ բաժանեալ նզբարց ինքնին գաթոլիկ անուանելոց վարդապետաց ձեռն գրաւեալս. և բազմաց աստ և անդ առ քահանայս, առ կանայս և առ խանութքանս ցրուեալս»[16]։ Եկեղեցու բակում Մանվելի կարգադրությամբ և ղեկավարությամբ կառուցվում է երկու սենյակ,

14 Նույն տեղում։
15 Մատենադարան, ֆ. կաթ. դիվան, թղթ. 36, վավ. 329, թ. 1բ։
16 Նույն տեղում, Լազարյանների արխիվ, թղթ. 105, գ. 11, վավ. 130, թ. 1բ։

որոնցում սկզբնապես տեղավորվում է դպրոցը: Մանվել վարդապետն է հոգում նաև դպրոցի նյութական միջոցները: Նրա սահմանած կարգի համաձայն, դպրոցի օգտին Ղարասուի հասարակության ներկայացուցիչները հատկացումներ են կատարում: Ինքը՝ Մանվել վարդապետը, եկեղեցական դրամներից դպրոցին տրամադրում է 1000 ռուբլի[17]:

Դպրոցական գործը Ղարասուբազարում կանոնավորելու և ընդլայնելու նպատակով Մանվելը նույնիսկ խնդրում է Հովհաննես արքեպիսկոպոսից իրեն ազատել Ղրիմի հաջորդի պաշտոնից և թողնել միայն դպրատանը[18]: Իր այդ նպատակին հասնելու համար նա 1820-ական թվականներից մշտապես հաստատվում է Ղարասուբազարում:

Ղարասուբազարի և առհասարակ Ղրիմի հայկական ծխական դպրոցները այս շրջանում զուրկ էին քիչ թե շատ բանիմաց և հմուտ մանկավարժներից: Այդ բացը վերացնելու նպատակով 1824 թվականի գարնանը Գյումուշխանեցին դիմումներ է անում Լազարյաններին և խնդրում Ղարասուբազարի ծխական դպրոցից 4—5 երեխաների ընդունել Լազարյան ճեմարան, որպեսզի ավարտելուց հետո նրանք աշխատանքի գային տեղի դպրոցը[19]: Ղարասուբազարի հասարակությունը 1824 թվականի մարտի 30-ին նույնպես դիմում է Լազարյաններին, խնդրելով Ղրիմից հինգ երեխա ընդունել ճեմարանը, ելնելով յոթ քաղաքների հայ համայնքների շահերից: Հասարակությունը հայտնում էր, որ չնայած Գյումուշխանեցու ջանքերին, նրա հիմնած ուսումնարանը կկործանվի, եթե նրան փոխարինող երիտասարդ ուժեր չլինեն, որպիսիք կարող են դառնալ այդ աշակերտները[20]: Լազարյանները տալիս են իրենց համաձայնությունը[21]:

Ղարասուբազարի հայկական ծխական դպրոցը անշուք վիճակ է ապրում 1828—1836 թվականներին՝ Գյումուշխանեցու Ղրիմից հեռանալու պատճառով: Սակայն 1836 թվականին իր ցանկությամբ և կաթողիկոսի թույլտվությամբ վերադառնալով Ղրիմ, Գյումուշխանեցին վերստին զարկ է տալիս դպրոցական կյանքի աշխուժացմանը[22]: Նա կազմում է «Նորոգեալ կարգադրութիւն Ղարասուի հայոց

17 Նույն տեղում:
18 Նույն տեղում, ֆ. կաթ. դիվան, թղթ. 36, վավ. 329, թ. 2ա:
19 Նույն տեղում, Լազարյանների արխիվ, թղթ. 105, գ. 11, վավ. 131:
20 Նույն տեղում, վավ. 136:
21 Նույն տեղում, վավ. 140:
22 «Արարատ», ամսագիր, 1917, № 9—10:

վարժարանին», որը վարժարանի գոյատևության և գործունեության կարգավորիչ հիմքն էր: Այդ կանոնադրությամբ Թադևոս վարդապետը նշանակվում էր «խնամածու վարժարանին, վերատեսուչ վարժապետին և հոգածու վարժացեալ մանկանց»[32]: Սա հոգաբարձուներ Եսայիկ Տոլվեթյանի և Հովհաննես Սելինովի հետ միասին անում էր բոլոր կարգադրությունները. նրանք էին ընտրում և արձակում ուսուցիչներին, ընդունում աշակերտներին: Կանոնադրությամբ ձրիավարժ աշակերտներ էին համարվում միայն աղքատ ծնողների զավակները, սրանք ձրի էին ստանում նաև գրենական պիտույքները: Մուծումները բաժանվում էին երեք կարգի, որոնցից առաջին կարգի կարողության ծնողները երեխայի համար տարեկան վճարում էին 9 ռուբլի, երկրորդի համար՝ 6 և երրորդի՝ 3 ռուբլի[24]:

Ղարասուբազարին զուգընթաց ծխական դպրոցներ են ստեղծվում Հին Ղրիմում, Թեոդոսիայում, Եվպատորիայում, մի փոքր ուշ նաև Սիմֆերոպոլում, Կերչում, Օրաբազարում, Սուրբշում:

Բոլոր այս դպրոցներում դասավանդվող առարկաներն էին՝ կրոնագիտություն (ըստ հայ լուսավորչական դավանանքի), հայոց լեզու, թվաբանություն, իսկ դարի կեսերից սկսած՝ նաև ռուսաց լեզու: Ուսուցման ժամկետը 4 տարի էր[25]: Այս դպրոցների մեջ XIX դարի առաջին կեսում ամենանշանավորը Ղարասուի դպրոցն էր, որտեղ սկզբից ևեթ հայերենի կողքին դասավանդվում էր նաև ռուսաց լեզու, իսկ 40-ական թվականներին՝ արդեն 6—7 առարկա՝ կրոնագիտություն, բարոյագիտություն, քերականություն, ազգային, արտաքին և կրոնի պատմություն, թվաբանություն, աշխարհագրություն և կրկնատումար վաճառականություն[26]:

Դասավանդման մակարդակը ցածր էր: Այդ են վկայում Գյումուշխանեցու, Գ. Այվազովսկու, Տելվեթյանի և այլոց բազմաթիվ բողոքները: Այլ կերպ չէր էլ կարող լինել, որովհետև դասավանդումը ծխական դպրոցներում վստահված էր քահանաներին ու միրացուներին, որոնց մեջ քիչ թե շատ զոհացուցիչ գիտելիքներ և կրթություն ունեցող անձինք հազվադեպ էին:

50—60-ական թվականներին Ղրիմում դպրոցական գործի կանոնավորմանն ու ընդլայնմանը զգալապես նպաստում է Թեմի առաջնորդ Գ. Այվազովսկին: Սա մոտիկից ծանոթանում է թեմի դպրոց-

23 Մատենադարան, ֆ. կաթ. դիվան, թղթ. 91, վավ. 134, թ. 1բ:
24 Նույն տեղում:
25 ЦГИА СССР, ф. 821, оп. 140, д. 53, ч. I, л. 5.
26 Մատենադարան, Լազարյանների ֆոնդ, թղթ. 107, գ. 44, վ. 241, թ. 1բ:

ներին, անհրաժեշտ կարգադրություններ անում, փոխում անկարող վարժապետներին։ Դպրոցական ցանցի մեջ ավելի շատ հայ երեխաներ ընդգրկելու համար նա գտնում էր, որ «այնպիսի դպրոցներ պետք է ունենալ, որոց մեջ աղքատը, այսինքն ամենայն աղքատ, ձրի ուսում առնու, իսկ միջակը և հարուստը չափավոր վճարք մը հատուցանելով»[27]։ Նշենք, որ անկախ կրոնական իր հայեցակետից, հայ երեխաների կրթության գործում նրա ունեցած այս մոտեցումը այն ժամանակվա համար նվաճում էր։ 1859—60 թվականներին Գ. Այվազովսկին, հակառակ կաթողիկոսի սպառնալից արգելքներին, Թեոդոսիայում բացում է աղջիկների դպրոց, որտեղ, բացի կրոնից, հայոց, ռուսաց ու ֆրանսերեն լեզուներից և թվաբանությունից, ուսուցանվում էր կար ու ձև և այլ «ազգային այժմյան վիճակին պատկանելիք հարկավոր ուսմունքներ»[28]։

Ռուսաստանում գոյություն ունեցող հայկական ծխական դպրոցները ենթարկվում էին հայ-լուսավորչական եկեղեցուն և անկախ էին կրթական գերատեսչություններից։ 1861 թվականին լուսավորության մինիստրությունը փորձում է Ղրիմի հայկական ծխական դպրոցները ենթարկել Տավրիկիայի նահանգի ուսումնարանների դիրեկցիային։ Այս առիթով Գ. Այվազովսկին դիմում է ներքին գործերի մինիստրությանը։ Ի պատասխան դրան՝ Օտարագավառների հոդևոր գործերի դեպարտամենտը 1861 թվականի հուլիսի 17-ին Գ. Այվազովսկուց մանրամասն տեղեկություններ է պահանջում Նախիջևան-Բեսարաբիայի թեմի հայկական ծխական դպրոցների վերաբերյալ։

Դիմադիր կանգնելով լուսավորության մինիստրության պահանջին, Գ. Այվազովսկին 1861 թվականի օգոստոսի 26-ին Օտարագավառների դեպարտամենտ ներկայացրած տեղեկանքում իր բողոքը հիմնավորում էր նրանով, որ վաղուց ի վեր հարատևող այդ դպրոցները գործում են հայկական եկեղեցիներին կից և պահվում ծխականների միջոցներով, իսկ որոշ դեպքերում, ծխականների աղքատության պատճառով, եկեղեցական գումարներով, ուստի և նա անօրինական էր համարում դրանց ենթարկումը պետական գերատեսչություններին[29]։

Գ. Այվազովսկու զեկույցում դպրոցներում սովորողների քանակի մասին բերված էր հետևյալ տեղեկությունը[30].

1. Նախիջևանում, քաղաքի 6 եկեղեցիներին կից դպրոցներում	100	աշակերտ
2. Սիմֆերոպոլում	35	»
3. Ղարասուբազարում	56	»
4. Հին Ղրիմում	25	»
5. Թեոդոսիայում	38	»
6. Կերչում	10	»
7. Նողայսկում	26	»
8. Պերեկոպում	25	»
9. Եվպատորիայում	10	»
10. Օդեսայում	25	»
11. Աքերմանում	65	»
12. Գրիգորիոպոլում	30	»
13. Քիշնևում	25	»

Լուսավորության մինիստրությունը ջանում էր ինչ գնով էլ լինի դուրս բերել իր պահանջը՝ հայկական դպրոցները ենթարկել տեղական օրգաններին, դրանք զրկել ինքնուրույնությունից և դասավանդման ազատությունից, հատկապես աշակերտներին ազգային ոգով դաստիարակելու առումով։ Նման փորձեր մինիստրությունը կատարել էր դեռ 40-ական թվականներին՝ կոմս Ուվարովի մինիստր եղած ժամանակ։ Այս հարցի շուրջը 1861—1862 թվականներին կրկին մտքերի փոխանակություն է ծավալվում։ Գործին միջամտում է էջմիածնի սինոդը, որը բողոքում է ներքին գործերի մինիստրությանը լուսավորության մինիստրության պահանջների դեմ։

1862 թվականի հուլիսի 18-ին ներքին գործերի մինիստրը հատուկ գրությամբ դիմում է լուսավորության մինիստրին, որ նման քայլը քաղաքական անհրապույր հետևանքներ կունենա։ Մինիստրը գրում էր, թե հնուց ի վեր հայ ժողովրդի կրթության գործը ստանձնել են հոգևորականները և որ այդ դպրոցները ուսումնական վարչությանը ենթարկելու պահանջը դժգոհություն կառաջացնի ժողովրդի մեջ։ «Մյուս կողմից, այդպիսի միջոցառումը ամենաանբռնապատ տպավորություն կթողնի հոգևորականության վրա, որպես նրա արմատական իրավունքի ոտնահարում, իրավունք, որը սրբությամբ պահպանում են նույնիսկ մահմեդական կառավարությունները... Այնինչ հայ-լուսավորչական եկեղեցու իրավունքը կամ ազատությունը խախտող կառավարական ամեն մի միջոցառում հակասում է Արևելքում մեր քաղաքական մտադրություններին, որ

[27] «Մասյաց աղավնի», 1860, էջ 42։
[28] Նույն տեղում, էջ 104։
[29] ЦГИА СССР, ф. 821, оп. 140, д. 53, ч. I, л. 5 об.
[30] Նույն տեղում, թ. 6։

նպատակ ունի մեր կողմը տրամադրելու արտասահմանյան հայերի միտքը, որոնք մեծ քանակությամբ բնակվում են Թուրքիայի և Պարսկաստանի սահմանամերձ մարզերում ու իրանական Թուրքիայի գլխավոր քաղաքներում և այնտեղի իրենց դրությամբ ազդում են Արևելքի հանդեպ ունեցած մեր քաղաքականության վրա[31]:

Քաղաքական այս նկատառումը ստիպում է լուսավորության մինիստրությանը առժամանակ նահանջել: Անփոփոխ պահելով ծխական դպրոցների ենթակայության նախկին կարգը, մինիստրությունը թեմի առաջնորդին, սակայն, պարտավորեցնում էր տարին մեկ անգամ իրեն տեղեկագրեր ներկայացնել այդ դպրոցների վիճակի մասին[32]:

60-ական թվականների վերջերից հայկական ծխական դպրոցները ղեկավարվում էին 1868 թվականին էջմիածնի ս. Աթոռի ուսումնական հանձնաժողովի կողմից իջեցված կանոններով: Ծխական դպրոցները թեև մնում էին եկեղեցու տնօրինության տակ, բայց կառավարվում էին ընտրովի հոգաբարձուների կողմից: Մացնելով այդպիսի կարգ, կանոնադրությունը սահմանում էր դասավանդվող առարկաները, որպիսիք էին՝ կրոն, ընթերցանություն և վայելչագրություն, քերականություն, սկզբնական պատմություն, ռուսաց լեզու, թվաբանություն[33]:

Այս կանոնները դպրոցներում դժվար էր պահպանել՝ նյութական հնարավորությունների և մանկավարժական կադրերի բացակայության պատճառով: 1872 թվականին Ղրիմի և Բեսարաբիայի հայկական դպրոցներն այցելած տեսուչը գրում էր, թե այդ կանոնները չեն պահպանվում, հոգաբարձուները չեն ընտրվում և «ազգասիրական գործի» անվան տակ նրանք յուրացնում են դպրոցների նյութական միջոցները: Տարիներ շարունակ անփոփոխ մնացած հոդաբարձուներն իրենց այդ չարաշահություններով ժողովրդին վանում էին դպրոցներից[34]: Հայտնելով այդ, վերստուգող տեսուչը ավելացնում էր, թե ծխական դպրոցների գումարները Ղրիմում և Բեսարաբիայում գտնվում են «ոչ թե շահեցուցիչ ու ապահով՝ հապա շռայլիչ ու կորստական ձեռքերու մեջ. այնպիսի անձանց ձեռքը, որոնք քան-երեսուն տարի շարունակ հոգաբարձություն կընեն, հաշիվ պահանջող չեն տեսած, հասարակ ժողովրդյան ձայնը առ ոչինչ համարած են»[35]:

XIX դարի առաջին տասնամյակներին ստեղծված Ղրիմի հայկական ծխական դպրոցները գոյատևեցին մինչև առաջին համաշխարհային պատերազմը և պատերազմի առաջին տարիները: Ջնայած 1903 թվականի հակահայկական օրենքին, 1905 թվականին, երբ ցարական կառավարությունը ստիպված էր մասամբ (գույքն ու կապիտալը վերադարձնելու իմաստով) նահանջել, ղրիմահայ կրթական օջախները կրկին վերսկսում են գործել: 1905 թվականի դրությամբ Տավրիկյան նահանգի հայկական ծխական դպրոցների, ուսուցիչների և աշակերտների վերաբերյալ աղյուսակը ուներ հետևյալ պատկերը[36].

Քաղաքներ	Դպրոց	Ուսուցիչ	Աշակերտներ երկու սեռի	Եկեղեցի	Քահանա
Սիմֆերոպոլ	2	8	82	2	2
Ղարասուբազար	1	2	40	1	1
Կերչ	1	2	31	1	1
Եվպատորիա	1	2	15	1	1
Թեոդոսիա	1	2	28	4	1
Հին Ղրիմ	1	2	40	1	1
Մելիտոպոլ	1	2	15	1	Թափուր
Օրբաղազար	1	3	—	1	1
Նոզայսկ	—	—	—	1	Թափուր

Այս աղյուսակից հետևող ամենից ուշագրավ եղրակացությունն այն է, որ նշված դպրոցները երկսեռ էին, մի բան, որն այն ժամանակի համար, անկասկած, առաջադիմական երևույթ էր և վկայում էր ղրիմահայության զարգացման համեմատաբար ոչ ցածր մակարդակը: Դա ինքնին հասկանալի է և պատճառաբանված, որովհետև ղրիմահայությունը իր զբաղմունքներով հիմնականում կապված էր առևտրի, արհեստների ու արդյունաղործության հետ, որոնք

31 Նույն տեղում, թ. 23բ:

32 Նույն տեղում:

33 «Ազգասեր», 1868, № 6, էջ 70—72:

34 Նույն տեղում, 1872 թ., № 7—10, էջ 192—293, 371—374: (Տե՛ս «Համառոտ տեսություն Ղրիմու և Պեսարաբիո քանի մի հոգևոր ծխական դպրոցաց ներկա դրության» հոդվածը):

35 Նույն տեղում, էջ 293:

36 «Լույս», Հանդես, Թիֆլիս, 1905, էջ 166:

պահանջում էին մատավոր գիտելիքների քիչ թե շատ ընդունելի մակարդակ և կանանց աշխատանքի օգտագործում։ Աղջիկների համար, բացի ծխական դպրոցներից, 900-ական թվականներից Սիմֆերոպոլում, Ղարասուբազարում և այլ վայրերում գործում էին նաև կար ու ձևի դասընթացներ[37]։

Ղրիմում և, ընդհանրապես, Նախիջևանի և Բեսարաբիայի հայ լուսավորչական ամբողջ թեմում հայկական դպրոցի զարգացումը XIX դարի 80-ական թվականներից սկսած լուրջ խոչընդոտների է հանդիպում և փոփոխություններ կրում, որոնք հիմնականում արտահայտվում էին նրա ինքնուրույն վիճակի և դրանով պայմանավորված ազգային-կրթական բնույթի աստիճանական կորստյամբ։ Որքան բարձրանում էր հայ ազգաբնակչության ազգային ինքնագիտակցությունն ու ինքնուրույնության ձգտումը, կառավարությունը այնքան ավելի էր ուժեղացնում դրանց դիմազրավող հակամիջոցները։ Կառավարությանը անհանգստացնում էր նույնիսկ Թուրքիայում ապրող հայերի քաղաքական ինքնուրույնության համար ձեռնարկած քայլերը. «Հինգական թվականներին գերազանցապես Թուրքահայերի շրջանում սկսում է զարգանալ մի նոր ուղղություն՝ սկզբնական շրջանում անորոշ, բայց խիստ ազգային երանգով, իսկ հետագայում պարզորոշ է դառնում Թուրքիայի գերիշխանության տակ քաղաքական ինքնուրույնության և ավելի հեռավոր ապագայում՝ լրիվ անկախության նրա ձգտումը,— կարդում ենք 1891 թվականի փետրվարի 12-ին հայկական գործերին նվիրված կառավարական խորհրդակցության արձանագրության մեջ։ Թուրքական կառավարության կարճատեսության ու թուլության հետևանքով Կոստանդնուպոլսում Հայկական ազգային ժողովը կազմեց հայ քաղաքական կյանքի նոր կենտրոն, որը խիստ արագ կերպով իր ձեռքն առավ Թուրքիայի հայկական բոլոր գործերի ղեկավարումը և հաջողությամբ տարածեց իր ազդեցությունը նաև թուրքական սահմաններից դուրս»։ Անհանգստությունը հայերի ավտոնոմ ձգտման հանդեպ այն խթանիչն էր, որը մղում էր կառավարությանը՝ կիրառելու միջոցներ «հակակառավարական ուսմունքներ տարածելու համար իրենց դիրքը ի չար գործադրող ուսուցիչներով համալրված եկեղեցական ծխական դպրոցները»[38] տեղական ուսումնական վարչությունների հսկողության տակ դնելու համար։ Հայկական դպրոցների նկատմամբ խիստ հսկողություն էին սահմանում, օրինակ, 1884

[37] ЦГИА СССР, ф. 821, оп. 140, д. 73 б/5, л. 8, 16 об.

[38] «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1967, № 1, էջ 87, 88։

թվականի փետրվարի 16-ի կանոնները, որոնց հետ չհամաձայնվելու պատճառով՝ հայկական դպրոցները 1885 թվականին փակվեցին։ Հաջորդ տարում կառավարությունը, հանդիպելով լուրջ դիմադրության, զիջումների գնաց, և դպրոցները կրկին բացվեցին, թեև 1884 թվականի կանոնների մեջ էական փոփոխություն չմտցվեց։

Սակայն այն, ինչ կառավարությանը չհաջողվեց իրականացնել 80-ական թվականներին, գլուխ բերվեց 90-ական թվականների երկրորդ կեսին։ Հավանաբար, դրա համար ստեղծվել էին նպաստավոր պայմաններ՝ թե ցարիզմն էր արտաքին-քաղաքական համեմատաբար նպաստավոր վիճակում և թե հայերն էին թուլացել՝ 90-ական թվականների կեսերին Թուրքիայում տեղի ունեցած կոտորածների պատճառով։ 1897 թվականի մայիսի 3-ին պետական խորհուրդը ընդունում է որոշում, որը հունիսի 2-ին ստանում է բարձրագույն հաստատություն։ Հայկական ծխական դպրոցները այսուհետև պիտի ենթարկվեին լուսավորության մինիստրությանը. նրբանցում հայ հոգևորականությանը միայն իրավունք էր վերապահվում վերահսկելու աշակերտների կրոնական դաստիարակությանը։ Մանկավարժական կադրերին, բացի կրոնի ուսուցիչներից, նշանակում էին իշխանությունները, իսկ թեմական կոնսիստորիաները դրկվում էին ուսումնական գործերին միջամտելուց, թեև նրանց վրա էր դրվում դպրոցների տնտեսական հոգսը[39]։ 1903 թվականի հունիսի 12-ի օրենքը գործնականորեն ավարտի հասցրեց կառավարական այս նկրտումները և դարձավ հայկական դպրոցների համատարած փակվելու պատճառը։ 1905 թվականի օգոստոսի 1-ի բարձրագույն հրամանը, թեև հայ հոգևոր իշխանություններին էր վերադարձնում եկեղեցական ու դպրոցական ունեցվածքը, բայց վարչական և ուսումնա-դաստիարակչական գծով ոչ մի փոփոխություն չմտցվեց, և դպրոցները շարունակեցին մնալ լուսավորության մինիստրության տնօրինության տակ։

Առաջին ռուսական հեղափոխությանը հաջորդած ռեակցիայի տարիներին հայկական ծխական դպրոցների կառավարումն ընթանում էր այս օրենքների արտոնությամբ լիազորված տեսուչների կամայական վերահսկողության ներքո։ Այդ տեսակետից առավել վատ էր Անդրկովկասից դուրս, այդ թվում նաև Ղրիմում գտնվող հայկական դպրոցների վիճակը, որովհետև Անդրկովկասում իշխանությունները, այնուամենայնիվ, հանդիպում էին դիմադրության և զիջումներ կատարում, մինչդեռ Ղրիմում և մյուս վայրերում նրանք

[39] ЦГИА СССР, ф. 821, оп. 140, д. 53, ч. III, л. 133.

անարգել տնօրինում էին այդ դպրոցների բախտը: Անդրադառնալով 1905 թվականի օգոստոսի 1-ի «ժամանակավոր կանոններին», Նախիջևանի և Բեսարաբիայի հայ լուսավորչական թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոսը 1909 թվականի նոյեմբերի 11-ին Մատթեոս Բ կաթողիկոսին ուղղած գրության մեջ այն միտքն էր հայտնում, թե դրանք հրատարակել են «միայն ի կիրառութիւն վասն դպրոցաց Կովկասի, ուր բանան դպրոցք և ապա տան միայն տեղեկութիւն զբացմանէ նոցին քաղաքական իշխանութեան»: Այնինչ Նախիջևանի և Անդրկովկասի վիճակներում պարտավոր էին այդ թույլտվությունը ձեռք բերել նախքան դպրոց բացելը, «ի հակառակ դեպս զանցառուք ենթարկվեն ընդ խիստ պատասխանատուութեամբ»[40]: Թեմի ծխական դպրոցներում ուսուցիչներին և ուսուցչուհիներին պաշտոնում հաստատում էին ժողովրդական դպրոցների վերատեսուչները. սրանք էին հաստատում նույնիսկ «դասացուցակ աւանդելի առարկայից յընթացս տարւոյ»: Առանց վերատեսուչների թույլտվության հնարավոր չէր գործից ազատել և ոչ մի ուսուցչի: «Եւ զայս հանդամանս ի նկատի առեալ ուսուցչաց, առաւել ևս յենուն ի վերայ վերատեսչաց, քան հոգևոր կառավարութեան»[41]:

Ազգային պատմության և, առհասարակ, երեխաներին ազգային ոգով դաստիարակելու իմաստով այս միջոցառումը խիստ վնասաբեր էր, իսկ կառավարությունը հենց այդ նպատակն էլ հետապնդում էր՝ որպես կարևոր հակամիջոց հայերի այսպես կոչված «սեպարատիզմի» դեմ: Ստեղծված կարգը հնարավորություն էր տալիս ուսուցիչներին՝ քմահաճորեն վերաբերվել առարկաների դասավանդմանը և զանց առնել ազգային-կրթական խնդիրները: Այս առումով խիստ բնորոշ է Եվպատորիայի հայկական եկեղեցու քահանա Ստեփանոս Իսկանդարյանի նամակ-բողոքը թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոսին՝ գրված 1909 թվականի նոյեմբերի 2-ին. «Դպրոցի տնտեսականը,— գրում էր նա,— հոգացվում է եկեղեցու և ծխական միջոցներով, իսկ վարչական և ուսումնական մասը՝ բացարձակ անհատների քմահաճույքի ասպարեզ է դարձել՝ չենթարկվելով ոչ մի իշխանության, օրենքի, կանոնների և ուսումնական ծրագրի: Մի ուսուցչի կամքին է թողնված դպրոցը ամբողջապես, որը տնօրինում է դպրոցի վիճակը, ինչպես ինքն է ցանկանում՝ իր սեփական համոզմունքներով: Կազմում են ծրագիր ինքը՝ ուսուցիչը, իր

40 Հայկական ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 2110, թ. 5:

41 Նույն տեղում:

կնոջ՝ վարժուհու հետ. և ինչ առարկա որ ուզում են, և որպես կամ երբ դասավանդում են, չկատարելով նույնիսկ այն պայմանը, ինչ պայմանով որ հրավիրված են: Դասավանդել են միայն հայոց լեզու, ռուսաց լեզու և թվաբանություն: Իսկ երբ հարցնում են ուսուցչին՝ ինչո՞ւ ավարտող երեխաները աշխարհագրություն կամ հայոց պատմություն և այլն չեն սովորել, պատասխանում է. «ժամանակ չունենք»: Նույն ուսուցչին հարցնում եմ՝ ինչու՞ հայկական դպրոցների ծրագրով չի առաջնորդվում, ինչպես և պայմանավորվել է հրավիրման ժամանակ, պատասխանում է. «ես ոչ մի հայ հոգևոր իշխանություն և ծրագիր չեմ ճանաչում, հայ հոգևոր իշխանությունը խառնվում է միայն դպրոցի տնտեսականին, ես ճանաչում եմ ռուս ինսպեկցիային միայն»... Այս խոսքերը ասվում էին հոգաբարձուների ներկայությամբ, ժողովում: Նույն ժողովում ես խնդրեցի, որ դպրոցում դասամիջոցների ժամանակ աշակերտները հայերեն խոսեն, նույն ուսուցիչը պատասխանեց. «որ ի՞նչ միջոց, որ գործադրեք, խնդնախաբեություն է»: Օրինակ բերելով Լեհաստանի հայերին, ասաց. «որքան որ աշխատենք, չենք կարող ռուսանալու առաջը առնել»: Այս ասողը հայոց լեզվի ուսուցիչն է— Պետրոս Թումանյանը— հին ղրիմեցի»[42]:

Ուսումնական-դաստիարակչական գծով դպրոցները ենթարկելով իրենց, ցարական կառավարությունը բռնի ռուսիֆիկացման քաղաքականություն էր վարում և այդ ուղղությամբ որոշակի հաջողություններ հասնում էր: Այդ են վկայում Պ. Թումանյանի վերոհիշյալ բացատրությունները: Համենայն դեպս ճանաչված մտավորական Պ. Թումանյանին անհնարին է մեղադրել օտարամոլության մեջ, մանավանդ որ իր էությամբ նա հայ մշակույթի հետ կապված գործիչ էր: Նրա տված պատասխանը պարզապես գոյություն ունեցած վիճակի արձանագրումն էր, վիճակ, որ ստիպում էր ղրիմահայ դպրոցներում հայոց պատմությունը դասավանդել գաղտնաբար, այլ առարկաների անվան տակ: Սիմֆերոպոլի հայկական դպրոցում, օրինակ, 1913 թվականին հայոց պատմությունը ավանդվում էր վայելչագրության փոխարեն, իսկ Հայաստանի քարտեզն էլ դասարան էին տանում կրոնի պատմություն դասավանդելու պատրվակով. և դասից հետո փակցնում դահլիճում, որը չէր համարվում դպրոցի մաս: Սակայն մատնության հետևանքով դպրոց եկած վերատեսուչը սպառնալիք է կարդում: Նույնն է անում վերջինս Ղա-

42 Նույն տեղում, թ. 6:

բասուբազարի հայկական դպրոցում։ Նա ուղղակի հարցնում է. «Ի՞նչ իրավունքով, ո՞ւմ թույլտվությամբ և որպիսի՞ ծրագրով է ավանդվում հայոց պատմությունը։ Բարեբախտաբար այս տարի նրանց (Ղարասուբազարի դպրոցի) ցուցակում հայոց պատմությունը գրած չեն եղել,—հայտնում էր Նալբանդյանը։—Քահանան (Ղարասուբազարի—Վ. Մ.) բացատրում է, որ նա ավանդում է կտորներ եկեղեցական պատմությունից։ «Իսկ ինչո՞ւ է պետք ձեզ Հայաստանի քարտը»։ Բացատրում է, որ պատմական տեղերն ու վայրերը ցույց տալու համար։ Նա չի բավարարվում այս պատասխանով ու... բի՞ տակ կրկնում է. «Да, у вас препадается армянская история».[43]

Այդ նույն նպատակներով վերատեսուչը բառացիորեն քննություն և խուզարկություն է կատարում Սիմֆերոպոլի հայկական դպրոցում, հենվելով ուսուցչուհի Գրիկյանի մատնության վրա[44]։

Լուսավորչական հայերի ծխական դպրոցներից բացի Ղրիմում վարժարաններ էին բացել նաև կաթոլիկ հայերը։ Դրանցից մեկը հիմնվել էր 1823 թվականին Ղարասուբազարում, իսկ մյուսը՝ 1863 թվականին՝ Սիմֆերոպոլում։ Վերջին դպրոցը կառավարվում էր քահանայի և հինգ հոգաբարձուների կողմից։ Դարավերջին դպրոցում աշխատում էին 5 ուսուցիչներ։ Ղարասուբազարի դպրոցը ուներ երկու բաժանմունք, որոնցից ամեն մեկն ուներ երկու դասարան։ Այս դպրոցը գնալով կորցնում էր իր ազգային կերպարանքը. 90-ական թվականներին այնտեղ հայերեն լեզվով դասավանդվում էին միայն կրոն և հայոց լեզու, իսկ մնացած առարկաները՝ թվաբանություն, աշխարհագրություն, Ռուսաստանի պատմություն և ձեռագործ աշխատանք, դասավանդվում էին ռուսերեն[45]։ Այս ավյալները վերաբերում էին 1894 թվականին, ուրեմն դպրոցը սկսել էր իր ազգային բնույթը կորցնել մինչև 1897 թվականի հունիսի 2-ի օրենքը։

XIX դարի առաջին տասնամյակում հայ կաթոլիկների երեխաների համար մի դպրոց էլ սկսում է գործել Թեոդոսիայում։ Դպրոցում դասավանդվում էին կրոն, հայերեն և լեհերեն[46]։ Այս վերջինը մտցված էր լեհ երեխաների համար, որոնց ծնողները հաճախում էին քաղաքի հայ կաթոլիկների եկեղեցին։ Հայ կաթոլիկների դպրոցները նույնպես երկսեռ էին։

43 Մատենադարան, անհատ. անձ. ֆոնդ, թղթ. 132, վավ. 232, թ. 1ա, բ։

44 Նույն տեղում։

45 ЦГИА СССР, ф. 821, оп. 125, 1892, д. 486, л. 92.

46 Նույն տեղում, գ. 506, թ. 1—2, ց. 139, գ. 58, թ. 18բ։

Հայկական ծխական դպրոցները գաղութում, ինչպես ասվեց, պահվում էին ծխականների և մասամբ էլ եկեղեցական գումարների հաշվին։ Նրանց համար զգալի օգնություն էին նաև զանազան նվիրատվություններն ու կտակները, որոնք արտահայտվում էին և՛ անշարժ գույքի, և՛ թե դրամական ձևով։ Կտակները երբեմն հասնում էին տասնյակ հազար ռուբլու, ընդգրկում բազմատեսակ շենքեր և հսկայական հողատարածություններ։ Այսպես, հին ղրիմեցի Մոմջյանը Հին Ղրիմի, Ղարասուբազարի և Սիմֆերոպոլի հայկական դպրոցներին 1873 թվականին կտակում է 23.400 ռուբլի. դրանից ստացվող տոկոսները մինչև առաջին համաշխարհային պատերազմը և պատերազմի ժամանակ էլ ծախսվում էին նշված վայրերի հայկական ծխական դպրոցներում սովորող աղքատ երեխաների ուսուցման վրա։ Իր կալվածքի պատկառելի մասը 1899 թվականին Թեոդոսիայի ս. Սարգիս եկեղեցուն է կտակում Հովհաննես Այվազովսկին։

Սուդակի հովտում գտնվող այդ հողամասը վաճառվում է 50 հազար ռուբլով, որից գոյացած տոկոսները ծախսվում են հիշյալ եկեղեցու և նրան կից ծխական դպրոցի կարիքների վրա՝ համաձայն կտակարարի ցանկության[47]։ Հին Ղրիմի և Ղարասուբազարի ծխական դպրոցներին 3000 ռուբլի էր նվիրել Մարիամ Դաուդյանը, իսկ Մ. Թոփալյանը Սիմֆերոպոլի ծխական դպրոցին կտակել էր 2000 ռուբլի[48]։ 1914 թվականին Հին Ղրիմի ծխական դպրոցին 6000 ռուբ. կտակել էր Գևորգ Կարամուրզայանը[49]։ Խոշոր կտակատուներից էին նաև Սպենդիարյանները։ Իրենց միջոցներով ծխական հոգաբարձությունները հաճախ ձեռք էին բերում առևտրական կըրպակներ, հողեր և այլն, որոնցից ստացված եկամուտները ծախսում էին դպրոցների վրա։ Նվիրատվություններն ու կտակները, որպես օժանդակ միջոցներ, բնականաբար, նյութական նշանակալից աջակցություն էին դպրոցների համար։ Բայց ոչ հիմնական։ Դպրոցները պահող ու պահպանողը ծխականներն էին, որոնց ցանկությամբ ու կամքով դրանք կյանքի էին կոչվել։

* * *

Ղրիմահայ ուսումնական հաստատություններից որոշակիորեն պատրոշվում էր Խալիբյան ուսումնարանը՝ թե ուսումնա-դաստիարակչական գործի դրվածքով և թե ուսուցչական կազմով։ Գաղութի

47 Նույն տեղում, ց. 140, գ. 706/5, թ. 23—24։

48 Նույն տեղում, գ. 72, մ. 3, թ. 38, 43։

49 «Արարատ», ամսագիր, 1915, № 6, էջ 439։

հասարակական-քաղաքական կյանքի լուսաբանմանը նվիրված բաժնում մենք արդեն շարադրել ենք ուսումնարանի հիմնադրման առթիվ Գ. Այվազովսկու և ռուսական կառավարող շրջանների միջև կայացած բանակցությունների համառոտ պատմությունը: Այժմ տեսնենք, թե խալիբյան ուսումնարանը, որպես կրթական հաստատություն, ըստ էության ինչ էր իրենից ներկայացնում:

Գ. Այվազովսկու ուսումնական նախագիծը, որը 1857 թվականի նոյեմբերին հանձնվեց կառավարության քննության, կազմված էր հինգ բաժիններից և որոշակի պատասխան է տալիս այն հարցին, թե իր կրթական ծրագրերով ո՞վ էր նա՝ խավարամտության ջատագո՞վ, թե՞ կանգնած էր ժամանակի կրթական պահանջներին համապատասխան ուսումնական հաստատություն ստեղծելու դիրքերում: Առաջին բաժնում, ինչպես նշել ենք, տրված էր Թևոդոսիա քաղաքը թեմի կենտրոն դարձնելու և ուսումնարանն այնտեղ հաստատելու հիմնավորումը: Երկրորդ բաժինը վերաբերում էր ուսումնարանի նյութական միջոցներին: «Քանի որ խիստ ցանկալի է, որպեսզի նախատեսվող ուսումնարանում դասախարակություն ստանան ոչ միայն այն երիտասարդները, որոնք միջոցներ ունեն լրիվ վճարելու վարձը, այլև նրանք, որոնք վճարել կարող են լոկ դրա կեսը, հավասարապես նաև աղքատ ծնողների երեխաները (ընդգծումը մերն է — Վ. Մ.), հարկավոր կլիներ ուսումնարանի հիմնադրման և պահպանման վրա ծախսել Նովոռոսիայի երկրամասի եկեղեցական գումարների մի մասը՝ համաձայն այն խնդրագրերի, որ տվել են նորին բարձր գերազանցության ներքին գործերի պարոն մինիստրին Տավրիկյան նահանգի հինգ քաղաքների հայերը»[50]:

Երրորդ բաժնում նշված էին ուսումնարանի ընդհանուր կանոնները, որոնց համաձայն հայկական ուսումնարանը համարվում էր մասնավոր հաստատություն և այնտեղ սովորել կարող էին անխտիր բոլոր հայ երեխաները՝ անկախ ծագումից ու հայրենիքից[51]: Դավանանքին նույնպես նշանակություն չէր տրվում. հայ լուսավորչական երեխաների կողքին ուսումնարանի դռները գոց չէին նաև կաթոլիկ և բողոքական հայ երեխաների համար, «բայց ոչ այլ կերպ, քան ենթարկվելով կատարելապես այդ ուսումնարանում

50 Նույն տեղում, գ. 55/3136, մ. 1, թ. 63բ—64ա:
51 Նույն տեղում:

հաստատված կարգին, նրանք չեն հարկադրվում միայն ունկնդրելու կրոնագիտության դասերը՝ ըստ հայ-լուսավորչական եկեղեցու կանոնների»[52]: Ուսումնարանի վարչության լիակատար իրավասությանն էր պատկանում ուսուցիչների նշանակումը, դասագրքերի ընտրությունը և դասավանդման մեթոդը: Ուսումնարանին կից հիմնվում էր տպարան և հրատարակվում հանդես:

Չորրորդ բաժինը բովանդակում էր ուսումնական ծրագիրը: Ուսումնարանում դասավանդվում էին հայոց, ռուսաց, ֆրանսերեն և թուրքերեն լեզուներ, «հավասարապես նաև այն գիտությունները, որոնք մտնում են ընդհանուր գիմնազիական կրթության շրջանակներում կամ անհրաժեշտ են առևտրին նվիրվողների համար»[53]: Ընդ որում «ռուսահպատակ հայերը պարտավոր չէին սովորելու թուրքերեն, իսկ թուրքահպատակ հայերը՝ ռուսերեն»[54]:

Ամբողջ դասընթացը բաժանվում էր վեց դասարանի, ուսուցումը կատարվում էր հայերեն, բացառությամբ ռուսաց լեզվի, ռուսաց պատմության և ֆրանսերեն լեզվի, որոնցից առաջին երկուսը դասավանդվում էին ռուսերեն, իսկ վերջինը՝ ֆրանսերեն[55]: Ուսումնարանի սաները թեպետ և բաժանվում էին լիաթոշակ և կիսաթոշակների, վարձը լրիվ և կիսով չափ վճարողների, ինչպես նաև ձրիավարժների, բայց ապրում էին ուսումնարանում, հավասար պիշերօթիկ պայմաններում[56]:

Նախագծի հինգերորդ բաժինը ուսումնարանի կառավարումը հանձնում էր Գ. Այվազովսկուն: Ուսումնական մասը գտնվում էր վերատեսչի և նրա նշանակած ուսուցիչներից կազմված խորհրդի ղեկավարության ներքո, իսկ տնտեսական մասը տնօրինում էր վարչությունը: Վերջինս նույնպես գտնվում էր վերատեսչի նախագահության տակ և բաղկացած էր վեց անդամից, որոնցից չորսը ընտրվում էին «այն վայրի պատվավոր բնակիչներից, որտեղ գտնվում էր ուսումնարանը»[57]:

Այվազովսկու ներկայացրած այս նախագիծը 1858 թվականի հուլիսի 4-ին հաստատվում է Ալեքսանդր II-ի կողմից՝ «Կանոններ

52 Նույն տեղում, թ. 64բ—65ա:
53 Նույն տեղում, թ. 65բ:
54 Նույն տեղում:
55 Նույն տեղում, մաս 4, թ. 94բ:
56 Նույն տեղում, մ. 1, թ. 65բ:
57 Նույն տեղում, թ. 66ա:

հայկազյան ուսումնարանի, որն հաստատվում է Տավրիկյան նահանգի Թեոդոսիա քաղաքում» անվամբ։ «Կանոնները» նույնությամբ կրկնում էին Գ. Այվազովսկու նախագիծը, միայն որոշ հարցերում ավելի ընդարձակելով բացատրությունները։ Վերատեսուչ Գ. Այվազովսկուն (տեսուչը Ս. Տիգրանյանն էր) հանձնելով ուսումնարանի կառավարումը և այն համարելով մասնավոր հաստատություն, «Կանոնները» ուսումնարանն ազատում էին լուսավորության մինիստրությանը ենթարկվելու գործություն ունեցող կարգից[58]։ Այս պահանջը Գ. Այվազովսկին առաջ էր քաշել ուսումնարանի ազգային-կրթական ուղղությունն ապահովելու և նրա նկատմամբ լուսավորության մինիստրության ու նրա տեղական օրգանների ունեցած ոտնձգություններից զերծ մնալու համար. կառավարությունը չէր կարողացել դրան չընդառաջել՝ ելնելով մեր կողմից արդեն նշված քաղաքական նպատակադրումից։ Բայց ուսումնարանի վերատեսուչը պարտավոր էր Օդեսայի ուսումնական շրջանի կառավարչին տարեկան տեղեկագրեր ներկայացնել ուսուցիչների և աշակերտների քանակի և ուսման ընթացքի վերաբերյալ։ Կառավարությունը Գ. Այվազովսկուն թույլատրում էր վիճակի եկեղեցական գումարների և եկամուտների մի մասը ծախսել ուսումնարանի շինության պահպանման վրա։ Այդ գումարների չափը որոշվելու էր ըստ տարեկան ծախսերի, և երբ սաներից գանձվող գումարը կհասներ նշանակալից չափերի և Խալիբյանի կողմից ուսումնարանին կտակած անշարժ ունեցվածքը (Ղրիմում գնած հողերը) կսկսեին բավականաչափ եկամուտներ բերել, այդ գումարը ուսումնարանը պետք է վերադարձներ ըստ պատկանելության՝ հոգևոր կոնսիստորիային։ Ուսումնարանին թույլ էր տրվում ունենալ իր սեփական տպարանը[59]։

1858 թվականի հոկտեմբերի 12-ին ուսումնարանը վերջապես բացվեց։ Մինչև նոր շենքի շինարարության ավարտը այն տեղավորված էր վարձված շենքում։

Առաջին տարում այնտեղ սովորում էին 89 աշակերտ։ Սրանից թիվը հաջորդ տարիներին, ընդհուպ մինչև 1865 թվականը, նշված քանակից ավելի է մեծանում։ 1865 թվականից սկսած, ուսումնարանի նյութական գրության վատթարացման և Գ. Այվազովսկու հեռանալու պատճառով, աշակերտների քանակը նվազում է։ 1867

58 Գ. Այվազյան, Պատմություն Խալիպյան ուսումնարանին, էջ 55։
59 Նույն տեղում, էջ 55։



Խալիբյան ուսումնարանի շենքը Թեոդոսիայում։

թվականին, օրինակ, այնտեղ սովորում էին ընդամենը 62 աշակերտ, որոնցից 48-ը օտարահպատակներ էին[60], այնինչ մինչև 1865 թվականը այդքան փոքրաթիվ աշակերտներ ուսումնարանը հրաբիք չէր ունեցել։ Այդ են վկայում ստորև բերվող տվյալները։

Աշակերտների բաշխվածությունը ըստ ազգության և ուսումնական տարիների[61]

Ուսումնական տարի	Աշակերտների թիվը	Նրանցից վճարովի	Օտարահպատակներ
1858—59	89	42	5
1859—60	127	85	12
1860—61	139	93	?
1861—62	117	75	8
1862—64	92	53	7

Առաջին իսկ ուսումնական տարում ավանդվում էին հայոց, ռուսաց և ֆրանսերեն լեզուներ, թվաբանություն, երկրաչափություն, պատմություն, աշխարհագրություն, կրոն, նկարչություն, գեղագրություն, մարմնամարզություն, հետագայում նաև՝ ֆիզիկա, քիմիա և այլ առարկաներ[62], որոնք տարբեր դասարաններում անցնում էին տարբեր դասագրքերով։ Այս առարկաների դասավանդումը արդեն առաջին ուսումնական տարում ստանձնել էին բավական հիմնավոր դիտելիքների տեր մանկավարժներ, որոնց մինչև գործի ընդունելը Գ. Այվազովսկին մի լավ ստուգում էր։

Գ. Այվազովսկու ուսումնական ծրագիրը և ուսումնարանում դասավանդված առարկաները վկայում են, որ նրա նպատակն է եղել աշակերտներին հաղորդել այն հիմնական գիտելիքները, որոնք այն ժամանակ կազմում էին միջնակարգ կրթության հիմունքները Ռուսաստանում և Եվրոպայում։ Լինելով կրթված անձնավորություն և երկար տարիներ զբաղվելով մանկավարժական գործունեությամբ,

60 ЦГИА СССР, ф. 821, оп. 140, д. 55/3166, ч. IV, л. 94 об.

61 Նույն տեղում, գ. 50/3054, թ. 51։

62 Նույն տեղում, գ. 55/3166, մ. 1, թ. 155բ, 180—181, մ. 4, թ. 44։

եվրոպական այնպիսի մի քաղաքում, ինչպիսին Փարիզն էր, Գ. Այվազովսկին, անկախ իր կրոնական հայացքներից, ուսումնամանկավարժական գործունեությամբ ստար էր լինում ի խնդիր ազգային կրթության և այդ իմաստով հանդես գալիս որպես կրթական լուրջ աշխատանք նախաձեռնողներից մեկը հայ ժողովրդի ազգային դարթոնքի այն ժամանակաշրջանում, երբ ռուսական կայսրության մեջ ապրող հայերի համար գործող կրթական լուրջ օջախները կարելի էր մատների վրա հաշվել։ Բայց ոչ միայն ռուսահպատակ հայերի համար։ Նրա հիմնած ուսումնարանի սաների մեջ էին նաև թուրքահպատակ ծնողների զավակներ և աղքատ ու որբ ծրիտավարժ երեխաներ։ Այս վերջինները աշակերտների քանակի վերաբերյալ վերը բերված տվյալների հավաստմամբ կազմում էին 35—40 տոկոս։ Վարդապետ և թեմի առաջնորդ Գ. Այվազովսկու բացած ուսումնարանում առաջին իսկ ուսումնական տարում աշխատող 10 մանկավարժներից միայն մեկն էր հոգևորական՝ կրոնադիտության դասատուն, մնացած 9-ը՝ աշխարհիկ հիմնավոր կրթություն ստացած անձինք էին։ Այդ ինը դասատուներից (հետագայում սրանց թիվն ավելանում է) վեցը ուներն բարձրագույն կրթություն, որոնցից չորսը կրթություն էին ստացել Ռուսաստանում, իսկ երկուսը՝ Փարիզում[63]։ Մենք տեսանք, որ կաթողիկոս Մատթեոսի՝ Գ. Այվազովսկուն նետած մեղադրանքների մեջ անընդհատ հոլովվում էին աշխարհիկ կրթության գործերով զբաղվելը, աղջիկների դպրոց բացելը, պարերի դասեր մացնելը և այլն, առարկաներ և գործեր, որոնք, անտարակույս, վկայում են կրթության հարցում նրա ունեցած առաջադեմ սկզբունքների, ուսումնարանի սաներին բազմակողմանի դիտելիքներ տալու ձգտումների մասին։ Այլ է հարցը, իհարկե, որ Գ. Այվազովսկին չանում էր այդ գիտելիքները սաներին հասցնել հայ եկեղեցու և «ազգային միասնության» ու «միաբանության» դիրքից։ Նրա մանկավարժական գործունեությունը Փարիզում ևս ազատ չէր դրանից, իսկ Ռուսաստան գալուց հետո փոխվեց միայն այն իմաստով, որ ռուսական միապետի և տիրող կարգերի հանդեպ ունեցած վերաբերմունքն ու համակրանքը ավելի մեծ չափերի հասան և կոնկրետ բովանդակություն ստացան։ Սակայն դա հարցի այլ կողմն է, և վերջապես, այդ ո՞ր ուսումնարանն

63 Նույն տեղում, թ. 155բ։

էր, որ այն ժամանակ հրաժարվում էր միապետին գովելուց։ Բայց ինչ էլ որ լինի՝ ուսումնարանում աշակերտները, որոնց թվում նաև չքավորների երեխաները, ժամանակի մակարդակին համապատասխան բավական հիմնավոր գիտելիքներ էին ստանում, և սրա դրական նշանակությունը ծիծաղելի կլիներ ուրանալ։

Ինչ միջոցների հիման վրա էր գոյատևում Խալիբյան ուսումնարանը։ Մենք արդեն առիթ ենք ունեցել նշելու Խալիբյանի ներդրած գումարը ուսումնական շենքի շինարարության վրա, որը նախնական 50 հազար ռուբլուց հասավ 152 հազարի[64], մինչև որ շենքը կառուցվեց և 1862 թվականի սեպտեմբերին կատարվեց նրա հանդիսավոր բացումը[65]։ Խալիբյանը ուսումնարանին էր կտակել, նրա հետագա գոյությունը ապահովելու նպատակով, 7000 դեսյատին հողամաս[66] և երկու տուն Տագանրոգում։ Սրանք միասին տարեկան բերելու էին 3600 ռուբլու եկամուտ։ 1861 թվականից սկսած Խալիբյանը սկսում է կանոնավոր մուծումներ կատարել ուսումնարանի օգտին[67]։ Սակայն եկեղեցական գումարները շարունակում էին վճռական դեր խաղալ ուսումնարանի տնտեսական կյանքում, և այդ վիճակը երկարատև եղավ։ Ստորև բերվող աղյուսակը պարզ պատկերացում է տալիս Գ. Այվազովսկու ժամանակ ուսումնարանի մուտքի և ծախսի գումարների մասին (տե՛ս էջ 295)։

Այս աղյուսակը ցույց է տալիս, որ մինչև 1865 թվականը, չհաշված հարյուր սենյականոց ուսումնական շենքի շինարարության վրա Խալիբյանի ներդրած 152 հազար ռուբլին, բուն ուսումնարանի պահպանման օգտին տրված գումարը ստացվել էր երեք հիմնական աղբյուրներից՝ սանների վճարումներից (79.465 ռուբ. 43 կոպ.), Խալիբյանի մուծումներից (10.662 ռ. 84 կ.) և եկեղեցական գումարներից (105.209 ռուբ. 45 կ.). սրան ավելացնելով նվիրատվություններից ստացված 970 ռուբ. 31 կոպ. ընդհանուր գումարը, ընդհանուր մուտքը կկազմի 196.308 ռ. 03 կ., իսկ ընդհանուր ելքը այդ նույն թվականներին հավասար էր 196.294 ռ. 03 կոպեկ։

1865 թվականից հետո ուսումնարանը աստիճանաբար անկում է ապրում՝ հատկապես եկեղեցական գումարներից զրկվելու հետևանքով։ Ուսումնարանը գոյատևում է ևս 6 տարի՝ մինչև 1871 թվականի

64 Նույն տեղում, գ. 55/3166, մ. 1, թ. 288։
65 Նույն տեղում, ֆ. 1252, գ. 402, թ. 16.
66 Նույն տեղում, ֆ. 821, գ. 140, գ. 24/3136, մ. 1, թ. 14բ։
67 Նույն տեղում, գ. 55/3166, մ. 1, թ. 280։

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր[68]

Խալիբյան ուսումնարանի հիմնադրման և նրա պահպանման համար 1858 թվականից մինչև 1865 թվականի հունվարի 1-ը ընդունված և ծախսված գումարների

Մուտք										Ելք					
Աշակերտների վճարումներից		Խալիբյանի մուծումներից		Նվիրատվություններ		Եկեղեցական գումարներ		Ընդհանուր մուտքը		Քան ուսումնարանի մատյանների		Թեմի առաջնորդական հարկադրությամբ		Ընդհանուր ելքը	
ռ.	կ.	ռ.	կ.	ռ.	կ.	ռ.	կ.	ռ.	կ.	ռ.	կ.	ռ.	կ.	ռ.	կ.
—	—	—	—	—	—	21.396	07	21.396	07	3.931	43	17.464	64	21.396	07
2.287	50	—	—	—	—	21.051	—	23.338	50	19.436	92	3.901	58	23.338	50
13.579	54	—	—	337	50	17.427	30	31.344	34	29.546	88	1.797	46	31.344	**34**
17.705	74	1862	84	632	81	16.910	44	37.111	83	31.829	56	3.194	49	35.024	05
16.664	57	1200	—	—	—	8.250	—	26.114	57	28.202	35	—	—	28.202	35
14.239	08	3600	—	—	—	16.455	10	34.294	18	30.003	29	4.290	89	34.294	18
14.989	—	4000	—	—	—	3.719	54	22.708	54	22.305	40	389	14	22.694	**54**
79.465	43	10.662	84	970	31	105.209	45	196.308	03	165.255	83	31.038	20	196.294	03

68 Նույն տեղում, գ. 55/3166, մ. 2, թ. 5։

ապրիլ ամիսը և փակվում։ Ուսումնարանը պահպանելու շուրջը ձևավորված քայլերը՝ մինիստրությունների, Խալիբյանի և կաթողիկոսի միջև տեղի ունեցած բանակցությունները, կառավարական հանձնաժողովներն ու նրանց առաջարկած դեղատոմսերը նրան չեն փրկում փակվելու վտանգից։ Այդ բոլորի թեկուզ և հակիրճ շարադրանքը հետաքրքիր է այն տեսակետից, որ մերկացնում է ցարական կառավարության իսկական մտադրությունը հայերի ազգային կրթության նկատմամբ և պարագաների փոփոխման տակ՝ նրա ապրած նահանջը։

Գնդապետ Կավելինի հանձնաժողովին և կառավարական տարբեր աստյաններին 1865 թվականին ուսումնարանի հետագա գոյությունը ապահովելու նպատակով արված Խալիբյանի առաջարկությունները հանգում էին հետևյալին. նա ուսումնարանին խոստանում էր տարեկան տրամադրել 4500 ռուբլի, պետությունը պիտի տար 11 հազար ռուբլի, իսկ հոգևոր տեսչությունը՝ 3000 ռուբլի։ Այս առաջարկությունը հաստատվում է ներքին գործերի մինիստրության կողմից, և ուսումնարանը պետությունից ու Խալիբյանից ստանում է այդ գումարները, մինչդեռ կոնսիստորիան հրաժարվում է տալ իրեն վերապահված 3000 ռուբլին։ Կառավարությունն այս մուծումը հանձն էր առել, ելնելով քաղաքական այն օգուտից, որ նա սկզբնապես մտադիր էր ստանալ Խալիբյան ուսումնարանի հիմնադրումից։ Մինչև 1870 թվականը կառավարությունը դեռևս հույսը չէր կտրել դրանից, և նրա կատարած մուծումների հաշվին հիմնականում սնվորում էին Թուրքիայից ժամանած հայ երեխաները։ 1867 թվականի ապրիլի 28-ին լուսավորության մինիստրին ուղղած իր գրությամբ ներքին գործերի մինիստրը հայտնում էր. «արտաքին գործերի մինիստրության՝ Կոստանդնուպոլսի մեր դեսպանից ստացված զեկույցներից, ի միջի այլոց, երևում է, որ Կոստանդնուպոլսի հայերը նոր պատրաստակամություն են հայտնում Խալիբյան ուսումնարանն ուղարկել իրենց երեխաներին և որ նման ուսումնարանների ստեղծումը, գեներալ-ադյուտանտ Իգնատևի (դեսպանի — Վ. Մ.) կարծիքով, կարող է ստանալ շատ կարևոր նշանակություն և մեծ օգնություն ցույց տալ մեզ՝ Արևելքում մեր քաղաքականության մեջ»։

1865—1871 թվականներին Խալիբյան ուսումնարանի պահպանման կամ նրա վերափոխման կապակցությամբ տեղի ունեցած բանակցությունների ընթացքից հետևում է, որ լուսավորության մինիստրությունը ջանում էր ըստ էության ուսումնարանը դարձնել ռուսական ուսումնական հաստատություն՝ ձևի և մոլորության համար պահպանելով նրա սոսկ հայկական անվանումը։ Ի պատասխան ներքին գործերի մինիստրի վերոհիշյալ գրության՝ Դ. Ա. Տոլստոյը, լուսավորության մինիստրը, այն կարծիքն էր անսքող կերպով հայտնում, թե ուսումնարանի հայկական բնույթը և հայերեն դասավանդումը պահպանելու դեպքում կառավարությունը կստանա իր քաղաքական սպասումների հակառակ արդյունքը։ 1867 թվականի հունիսի 17-ին նա գրում էր. «եթե բոլոր առարկաների դասավանդումը իրականացվի հայերեն լեզվով, ապա արդյունքը, ամենայն հավանականությամբ, կլինի սպասածին հակառակ, այսինքն՝ ոչ թե օտարերկրյա հայերը կգրավվեն Ռուսաստանի կողմը, այլ ռուսահայերը կօտարանան Ռուսաստանից»[70]։

Այնինչ Հ. Խալիբյանը այս օրերին (1867 թվականի հոկտեմբերի 24-ին) ներքին գործերի մինիստրությանն է ներկայացնում Խալիբյան ուսումնարանի իր ծրագիրը, որով առաջարկում էր ուսումնարանը բոլոր հարցերում հավասարեցնել գիմնազիաներին, իսկ հետագայում, միջոցների բավարարության դեպքում, սաներին տալ նաև բարձրագույն կրթություն. այդ միջոցները ներառնելու էին իր կողմից ամենամյա մուծվող 4.500 ռուբլին, կառավարության կողմից տրվող 11.000 ռուբլին և աշակերտներից գանձվող վարձը։ Ուսումնարանը կաթողիկոսին էր ենթարկվում միայն կրոնական դաստիարակության խնդրով, իսկ ուսումնա-դաստիարակչական և տնտեսական կարևոր հարցերը լուծում էր մանկավարժական խորհուրդը։ Ուսումնարանն ուներ իր հոգաբարձուն, դիրեկտորը և տեսուչը, որը դիրեկտորի օգնականն էր ուսումնա-դաստիարակչական աշխատանքների գծով[71]։ 96 հոդվածներից բաղկացած այս նախագիծը այդպես էլ մնաց թղթի վրա։ Մինչդեռ լուսավորության մինիստրը և մինիստրության կառավարիչ Դելյանովը ուժեղացնում են իրենց ջանքերը՝ Խալիբյան ուսումնարանը փակելու համար, այս անգամ արդեն նույն պահանջը տարածելով նաև Աստրախանի Ազատրբյան դպրոցի վրա։ Գերատեսչական խնդիրների ճնշման տակ արտաքին և ներքին գործերի մինիստրությունների կարծիքները այս հարցում անհամատեղելի էին լուսավորության մինիստրության դեմ

69 Նույն տեղում, մ. 4, 52ա, բ։

70 Նույն տեղում, թ. 61բ։

71 Նույն տեղում, թ. 71—87։

կությանը և փաստորեն համապատասխանում էին Խալիբյանի նախագծին։ Ռուսաստանի ազդեցությունը արտասահմանյան հայերի վրա տարածելու խնդրին համեմատ, առաջին երկուսի կարծիքով, այդ ուսումնարանները պիտի լինեին զուտ ազգային, հայերեն դասավանդմամբ, ունենային բացարձակ իրավունքներ և արտոնություններ։ Մնալով որպես մասնավոր դպրոցներ՝ միաժամանակ դրանց ծառայողները պետք է համարվեին պետական ծառայողներ, իսկ շրջանավարտները ստանային պետական ծառայության 14-րդ աստիճան՝ հետագայում թոշակավորման իրավունքից օգտվելու համար։ Ուսումնարանները պետք է ենթարկվեին ներքին գործերի մինիստրությանն ու կաթողիկոսին։ Դելյանովը կարուկ կերպով դեմ է դուրս գալիս այս առաջարկություններին, դրսևորելով ցարական արքունիքի նկրտումներին և պաշտոնական ռեակցիոն շրջանների ամենակուլ ձգտումներին օժանդակելու և հարմարվելու տենդենց և նվիրվածություն։ 1868 թվականի հունիսի 12-ին ներքին գործերի մինիստրին հղած իր պաշտոնական կարծիքում Դելյանովը գրում էր, թե ռուսական կառավարությունը պետք է հակահարված տա ռուսահայ երիտասարդների մեջ ազգային ձգտումների ու երազանքների զրգռմանը, որոնք ռուսական ուսումնական հաստատություններում դաստիարակվում են «իրենց ռուսական հայրենիքին և թագավորին անսահման նվիրվածության ոգով... Նրանց (հայերի—Վ. Մ.) նկատմամբ ընդհանուր կառավարական սիստեմից Ռուսաստանի կատարած շեղումը անխուսափելիորեն կմեկնաբանվի ազգային-քաղաքական ձգտումների խրախուսման իմաստով, որոնք արհեստականորեն զրգռվում են հայերի մեջ մեղ թշնամի քաղաքականության կողմից և մտքեր զրգռելով այդ ուղղությամբ, գործի հետագա ընթացքում և վերոհիշյալ նախագիծը գործնականում ընդունելու դեպքում այն կունենար ամենակործանարար հետևանքներ։ Ապրելով արհեստականորեն ստեղծված ազգային-հայկական միջավայրում (հայկական ուսումնարաններում—Վ. Մ.), շրջապատված հայ վարիչներով, դաստիարակներով, ուսուցիչներով և հասակակիցներով, որոնցից շատերը, անկասկած, կժամանեին Թուրքիայից կամ Պարսկաստանից, արդեն թունավորված Ռուսաստանի հանդեպ տածվող անվստահության և չարակամության և հին հայկական թագավորությունը վերականգնելու ոգով, դաստիարակվելով բացառապես հայերեն լեզվով, հայ գրականությամբ և դաստիարակության հայկական աղբյուրներով, ռուսահայերի երիտասարդ սերունդը, կարելի է համոզվածությամբ ասել, նշված պլանով կառուցված ուսումնարան-

ներից (Խալիբյան և Աղաբաբյան—Վ. Մ.) դուրս կգաներ սեր ոչ թե Ռուսաստանի, այլ ֆանտաստիկ, ապագա Հայաստանի հանդեպ և իրենից կներկայացներ Ռուսաստանի անբարյացակամների կողմից քարոզվող հայկական ինքնավարության ջերմ համախոհներ։

Նթե Ռուսաստանում էլ, Ֆրանսիայի և անգամ Ավստրիայի նման հայերը բնակչության կազմում հաշվվեին միայն հարյուրներով և, նույնիսկ, մի քանի հազարներով և ընդ որում իրենց սկզբնական հայրենիքից հեռացած լինեին մի քանի հազար մղոն, առանց որևէ ուղղակի շփման կամ հաղորդակցման իրենց ազգակիցների հետ,—շարունակում էր Դելյանովը,—այդ դեպքում վերոհիշյալ նախագծի իրականացումը միանգամայն անվտանգ կլիներ. բայց, ինչպես հայտնի է, այդ տեսակետից Ռուսաստանը գտնվում է բոլորովին այլ վիճակում»[72]։ Հարկ կա՞ արդյոք ասելու, որ դառնալով ինքնակալական քաղաքականության ձայնափողը, հայազգի այս ծառայամիտը պապից ավելի կաթոլիկ էր ձևանում։ Այս ամենից հետո բոլորովին զարմանալի չէ, որ 1880 թվականին մենք նրան արդեն տեսնում ենք ոչ թե մինիստրության կառավարչի, այլ հենց մինիստրական աթոռին բազմած։ Ավելի հարմար թեկնածու, ըստ երևույթին, դժվար էր ճարել՝ 80-ական թվականներին հայկական դպրոցների դեմ միջոցառումներ կենսագործելիս։

Դելյանովը վճռականորեն դեմ էր դուրս գալիս Ռուսաստանում հայ պատանիների ազգային կրթությանը և հայերի վրա ռուսական ազդեցությունը տարածելու համար նպատակահարմար էր գտնում Թուրքիայում և Պարսկաստանում պետական ծախսերով բացել հայկական դպրոցներ։ Բայց Ռուսաստանի դեմ եղած թշնամական իներցիաները, գրում էր նա, կարելի է չեզոքացնել ռուսահայերին ռուսական դպրոցներ ընդգրկելով և նրանց ռուսական ոգով դաստիարակելով։ Խալիբյան և Աղաբաբյան ուսումնարաններին տրվող գումարը նա առաջարկում էր ծախսել հայերի համար նախապատրաստական դասարան և գիշերօթիկ պահելու վրա, որոնք ավարտելուց հետո աշակերտներն իրենց կրթությունը պիտի շարունակեին ռուսական ուսումնարաններում։ «Արևմտյան պետությունների օրինակը, որոնք իրենց մոտ հայկական դպրոցներ են հիմնել նրանցում հայերեն լեզվի տիրապետմամբ՝ օտարահպատակ հայերին ներգրավելու և այդ միջոցով իրենց ազդեցությունն Արևելքում ուժեղացնելու համար,— օրինակ, որի վրա հիմնվում է նաև պետական քարտուղար

---

72 Նույն տեղում, թ. 120—122։

Վալուևը,— ոչ մի կերպ չի կարող տիպար հանդիսանալ Ռուսաստանի համար, քանի որ Ռուսաստանը ամենից առաջ պարտավոր է հայ պատանեկության ազգային-ռուսական կրթությամբ նրան պատսպարել իր (Ռուսաստանի —Վ. Մ.) չարակամների բոլոր տեսակի քաղաքական և կրոնական խարդավանքներից և ապա նոր իր ազդեցությունը տարածել նաև արտասահմանյան հայերի վրա, որովհետև և՛ Ավստրիան, և՛ Ֆրանսիան, և՛ Անգլիան, իրենց մոտ գրեթե չունենալով հայկական ծագմամբ հպատակներ, կարող են հայերի համար դպրոցներ հիմնել»[73],—գրում էր Դելյանովը նշված կարծիքում։ Կառավարող, մանավանդ լուսավորության բնագավառի աշխատողների շրջանում դեռևս 50-ական թվականներին տիրող այս մտայնությունը ցույց է տալիս, թե ինչքան խոչընդոտներ էր պետք հաղթահարել Թեոդոսիայում հայկական ուսումնարան հիմնելու համար։

1869 թվականի ապրիլի 5-ին բարձրագույն հրամանով ստեղծվում է հատուկ հանձնաժողով՝ Խալիբյան ուսումնարանի վերակազմման և դրան առնչվող հարցերի գծով։ Նրա մեջ մտնում էին Դելյանովը, Սիվերսը (Օտարազգիների դեպարտամենտի դիրեկտորը) և դաշտնի խորհրդական Սարեմոուխովը։ Ապրիլի 26-ի նիստում հանձնաժողովը որոշում է Թեոդոսիայի ուսումնարանի փոխարեն հիմնել հոգևոր սեմինարիա և այդ կապակցությամբ դիմում է Խալիբյանին՝ նրա նվիրաբերությունները սեմինարիայի վրա օգտագործելու համար։ Հանձնաժողովի այդ առաջարկը Խալիբյանը մերժում է։ Նա գրում էր. «Ինչպես Թեոդոսիայում ուսումնարան հիմնելու, այնպես նաև տպարանի և աղքատ ընտանիքների 30 տղաների դաստիարակության և պահպանման վրա կատարված իմ զոհողությունների ժամանակ, որպիսի նպատակով իմ կողմից ծախսվել է մոտ կես միլիոն ռուբլի, ես նկատի ունեի ոչ թե հոգևոր դասը, այլ ամբողջ ազգը... Դառը փորձով ես համոզվեցի, որ մեր հոգևորականությունը, դժբախտաբար, հոգ չի տանում ժողովրդի մտավոր ու բարոյական կրթության մասին։ Նրա անհոգությունը հասնում է այն աստիճանի, որ նա ավելի քան 30 տարվա ընթացքում չի կարողացել բանալ կայսրության մեջ ոչ մի սեմինարիա՝ համաձայն 1836 թվականին բարձրագույնս հաստատված կանոնադրության... Դեռ ավելին, նա չի պաշտպանում նաև գոյություն ունեցող հաստատությունը...

---

73 Նույն տեղում, թ. 131բ։

Ես այստեղ արդեն լռում եմ մեր հոգևորականության բարոյական և մտավոր կրթության մակարդակի մասին»։ Դրա համար էլ, պատճառաբանում էր նա, ինքը չէր կարող համաձայնվել Խալիբյան ուսումնարանի փոխարեն հոգևոր սեմինարիա բացելու առաջարկին, որովհետև «իմ գլխավոր նպատակն է եղել աշխարհիկ հաստատություն հիմնելը»[74]։

Բազմաթիվ տարբերակներ են ծագում ուսումնարանի վերացմանը աղերսված. անգամ որոշում է կայացվում Կ. Պոլսում հայկական ուսումնարան հիմնելու մասին[75]։ Սակայն դրանցից և ոչ մեկին վիճակված չէր կյանքի կոչվելու։ Վերջ ի վերջո 1870 թվականի դեկտեմբերի 4-ին կայսերական վճիռ է իջեցվում ուսումնարանը փակելու մասին։ 1871 թվականի հունիս-հուլիս ամիսներին այն փակվում է, իսկ նրա ունեցվածքը՝ շենքը, կահկարասին և տպարանը, ընդունելով Սարգիս Տիգրանյանից՝ էջմիածնի պատվիրակ Նիկողայոս Տեր-Հովսեփյանը հանձնում է Դաորրել Այվազովսկուն։ Այսպիսով, 13-ամյա գործունեությունից հետո Խալիբյան ուսումնարանը փակվեց։ Նրա ուսումնական շենքը տարիներ շարունակ տրվում էր վարձով՝ սկզբում 1500 (տարեկան), իսկ հետո 3000 ռուբլով[76], որը մբռնում էր թեմական գանձարանը։

Խալիբյան ուսումնարանի փակելը և Այվազովսկուց կառավարության երես շուռ տալը կապված էին Ռուսաստանում կատարվող տեղաշարժերի հետ։ Հետռեֆորմյան տարիներին ցարական բարձրաստիճան չինովնիկության մի մասին ևս համակած ազգային-բուրժուական մտայնությունը չէր հաշտվում հայկական ազգային դպրոցի գոյության և դրանից բխող ազգային զարթոնքի հետ, չնայած այդ դպրոցից ակնկալվող նկատառումները հեռանկարում դեռ չէին կորցրել իրենց ուժը։ Այսուհանդերձ, ուսումնական բարձր գերատեսչություններում հայկական դպրոցների նկատմամբ բացասական դիրքավորումը գնալով զորանում էր, որը արտահայտություն գտավ նաև Խալիբյան ուսումնարանի փակման փաստում։ Ըստ երևույթին, Այվազովսկին այլևս այն հարկավոր անձը չէր, որպիսին նրան դիտում էին 1857—1861 թթ.։

* * *

Խալիբյան ուսումնարանին կից գործում էր տպարան։ Գ. Այվազովսկին ուսումնարանի հետ միասին կառավարությունից թույլ-

---

74 Նույն տեղում, թ. 180—181։

75 Նույն տեղում, ֆ. 880, ց. 5, գ. 396, թ. 2։

76 Նույն տեղում, ֆ. 1152, ց. 140, գ. 479, թ. 21։

տվութիւն էր ստացել նաև տպարան հիմնելու և հանդես հրատարակելու մասին։ Կառավարութիւնը լիակամ ցանկութեամբ բավարարել էր նրա խնդրանքը, քաջ գիտակցելով, որ նեթն ուսումնարանի միջոցով Գ. Այվազովսկին հայ երեխաների վրա տարածելու է ռուսական միապետին հավատարիմ և անդավաճան ծառայելու գաղափարները, ապա տպարանը, նրա հրատարակութիւններն ու պարբերականը լինելու են այն կռվանը, որը հնարավորութիւն կտա այդ նույն գաղափարները պրոպագանդելու հանուր հայութեան մեջ՝ նրա արևելյան ու արևմտյան հատվածներում։

Իր գոյութեան առաջին իսկ շրջանից, որն սկսվեց ուսումնարանից մի փոքր հետո, 1860 թվականին, տպարանը բավական բեղմնավոր գործունեութիւն ունեցավ։ Գ. Այվազովսկին նախապես հոգացել էր նրա անխափան աշխատանքն ապահովելու մասին։ Դրա համար նա առատորեն օգտագործում էր եկեղեցական գումարները, որոնցից մինչև 1865 թվականի հունվարի 1-ը տպարանի վրա ծախսվել էր 39.127 ռուբլի 19 կոպեկ[77]։ Ուսումնական նոր շենքի կառուցումն ավարտելուց հետո տպարանը ևս տեղափոխվում է այնտեղ և պահվում էր, ինչպես հատատում էր Կավելինի հանձնաժողովը, «մեծ կարգ ու կանոնով»[78]։ Տպարանի արդյունավետ աշխատանքի համար մեծ ջանքեր էր թափում նրա տնօրեն Հովհ. Տեր-Աբրահամյանը, ժամանակի կրթված և բանիմաց հայ մտավորականներից մեկը, որի հեղինակած և նույն տպարանում տպագրած «Պատմութիւն Խրիմու» աշխատութիւնը մինչև օրս էլ չի կորցրել իր գիտական հետաքրքրութիւնը։

Տպագրված գրքերը բազմաբնույթ էին, բայց գերակշռում էին դասագրքերը։ Սրանց զուգընթաց տպագրվում էին նաև տարեգրքեր՝ հայերեն ու ռուսերեն լեզվով, նշանակալից տպաքանակով գեղարվեստական և պատմական գրքեր, թարգմանական և եկեղեցական գրականութիւն։ 1871 թվականին, տպարանը փակվելու պահին, նրա գրապահեստում մնացած գրքերի ցուցակը պատկերացում կարող է տալ տպագրված գրքերի բնույթի մասին. դրանց թվումն էին, օրինակ՝ «Այբբենարան», «Բառագիրք ի տաճիկ լեզուէ ի հայ», «Պատմութիւն միջին դարուց», «Աշխարհագրութիւն», «Գաղթահայ գրուցագրութիւն», «Ընդհանուր պատմութիւն», «Լամարթին», «Рассказы», «Պարտք և իրավունք», «Հանդարան», «Феодосия».

77 ЦГИА СССР, ф. 821, оп. 140, д. 55/3166, ч. I, л. 276 об.

78 *Նույն տեղում, թ. 276։*

«Պատմութիւն հին ազգաց», «Թվաբանութիւն», «Очерки русской литературы», «Եղիշե», եկեղեցական գրքեր և այլն[79]։

Միայն Գ. Այվազովսկու հեղինակած գրքերից այստեղ տպագրվեցին շուրջ մեկ ու կես տասնյակ անուն աշխատութիւններ, այդ թվում «Դասագիրք ժողովրդական դպրոցաց», «Երուսաղեմի առումն ու տաճարի կործանումը», «Լսարան կենցաղօգուտ գիտելեաց», «Խանդարմունք հայկաբանութեան ի հնումն և ի նորումն», «Մխիթարյանց երաշխուս մեկ կարծեացը քննութիւն» և այլն։ Գ. Այվազովսկու կարգադրութեամբ և խորեն վրդ. Գալֆայանի ներածականով Խալիպյան ուսումնարանի տպարանը 1861 թ. լույս ընծայեց Եղիշեի «Պատմութիւն Վարդանանց»-ը ըստ «անձնագեացն օրինակի», ամենահին ձեռագիր օրինակներից մեկի։ Վերջին առիթով խ. Գալֆայանը գրում էր. «Յոյժ հնոց ժամանակաց էր մատեանն, եօթներորդ կամ ութերորդ դարու գործ, եթէ ոչ եւ առաւել ևս հնագոյն»[80]։

Գրքերի մի մասը տպարանն ընդունում և տպագրում էր զուտ նյութական նկատառումներով՝ ծախսերի գոնե մի հատվածը այդ ուղիով գոցելու համար։ 1865 թվականին, երբ կարծիք կար տպարանը փակելու մասին, Նովոռոսիյսկի և Բեսարաբիայի գեներալ-նահանգապետը նշում էր, որ գործի լավ դրվածքի դեպքում տպարանը ոչ միայն վնասով չի աշխատի, այլև ի վիճակի է տարեկան բերել 1000 ռուբլու եկամուտ[81]։

Բայց ուսումնարանի գոյութեանն սպառնացող վտանգը կախվում է նաև տպարանի գլխին։ Ուսումնարանի գոցվելուց մի փոքր հետո տպարանը ևս փակվեց։ Այդ պահին տպարանն ուներ 9196 ռուբլի 22 կոպեկի չվաճառված գրքեր, 294 փութ 34 ֆունտ հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն տառեր, տպագրական մեքենաներ ու գործիքներ, որ ժամանակին բերվել էին արտասահմանից և այլն[82]։

* * *

Ղրիմահայ գաղութում գործող ծխական դպրոցները և կրթական այլ տեսակի կազմակերպութիւններն ու միջոցառումները նպաստում էին անգրագիտութեան վերացման, գաղութահայ բնակչութեան

79 *Մատենադարանի արխիվ, ֆ. կաթ. դիվան, թղթ. 218, վավ. 18, թ. 23—25 և* ЦГИА СССР, ф. 821, оп. 140, д. 55/3166, ч. I, л. 379.

80 *Եղիշե, Պատմութիւն Վարդանանց, ըստ Անձնագեացն օրինակի, Թեոդոսիա, ի Խալիպեան տպարանին, 1861, էջ Դ։*

81 ЦГИА СССР, ф. 821, оп. 140, д. 55/3166, ч. I, л. 373.

82 *Մատենադարանի արխիվ, ֆ. կաթ. դիվան, թղթ. 218, վավ. 18, թ. 23—25։*

դրագիտական մակարդակի բարձրացման գործին։ 1915 թվականին, Տավրիկյան նահանգում ապրող 14 ազգությունների գրագիտության մակարդակին վերաբերող տվյալների համաձայն, հայ ազգաբնակչությունը գրավում էր առաջատար տեղերից մեկը։

Ահա աղյուսակներից մեկը։

Աղյուսակ

Ըստ ազգությունների Տավրիկյան նահանգի բնակչության գրագիտության

	Տվյալ ազգի 100 աղամարդիանոցից գրագետ են	Տվյալ ազգի 100 կանանոցից գրագետ են
Հառնեացիներ . . .	73,81	71,77
Գերմանացիներ . . .	68,36	67,08
Հրեաներ	64,94	43,61
Չեխեր	63,97	58,96
Լեհեր	56,69	46,18
Հայեր	54,98	47,71

Այնուհետև, ըստ տոկոսային հարաբերության, հետևում էին հույները, վելիկոռուսները, բուլղարները, բելոռուսները, մոլդովանները, մալոռուսները, թուրքերը, թաթարները և ցիգանները[83]։ Հայ աղամարդիկ ութերորդ տեղն էին գրավում ռուսաց լեզվից գրագիտության գծով, իսկ հայ կանայք՝ հինգերորդ տեղը, նա մնալով միայն էստոնուհիներից, չեխուհիներից, գերմանուհիներից և հրեուհիներից[84]։ Հայ աղամարդիկ երկրորդ տեղն էին բռնում տարրականից բարձր կրթություն ստացողների շարքում, զիջելով միայն լեհերին, իսկ հայ կանայք գրավում էին առաջին տեղը[85]։

Գրագիտության զարգացումը շատ բանով առնչվում էր ազգաբնակչության ինտեգրական վիճակի, նրա զբաղմունքների հետ։ Ղրիմահայությունը հիմնականում կապված լինելով քաղաքային զբաղմունքների՝ առևտրի, արդյունագործության և արհեստների հետ, բնականաբար, իր կյանքի ու կենցաղի պահանջներով իսկ պետք է մեծ հակում և հետաքրքրություն ցուցաբերեր գրագիտության հանդեպ։ Այս հանգամանքներն էին, հարկավ, պատճառը այն համեմատաբար բարձր տեղերի, որ գրավում էին հայերը Ղրիմում գրա-

83 «Статистический справочник Таврической губернии», вып. 1—VIII. Симферополь, 1915, часть первая, «Статистический очерк Таврической губернии», стр. 47.

84 Նույն տեղում, էջ 50։

85 Նույն տեղում, էջ 52։

գիտությանը վերաբերող տարբեր տվյալների գծով. դրանում պակասդեր չէին խաղում նաև ազգային-մշակութային ավանդությունները։

* * *

Ղրիմի հայկական գաղութը XIX դարում ուներ իր պարբերական մամուլը. 60—70-ական թվականներին լույս տեսան «Մասյաց աղավնի» և «Դաստիարակ» հանդեսները։

«Մասյաց աղավնին» հայ ընթերցողին ծանոթ էր 1855 թվականից։ Անցնելով Ռուսաստան, Գ. Այվազովսկին մի երկու տարի անց հանդեսը նույնպես փոխադրեց Ղրիմ և 1860 թվականից վերսկսեց նրա հրատարակումը՝ «առանց յուր հոգին, նպատակը և գլխավոր հատկություններ փոփոխելու[86]»։ «Հոգվույն չփոփոխվածին հուսանք, որ ամենայն ազգասերք զոհ և ուրախ պիտի ըլլան, վասն զի ամենուն ալ փափակելի գիտենք այժմ ու ժամանակիս, որ ամենայն ազգային օրագրաց և լրագրաց ջանքն ըլլա գիտության և լուսավորության հետ միանգամայն սեր և միաբանություն և խաղաղություն տարածել մեր ազգին մեջ ամեն տեղ, ինչպես որ Մասյաց Աղավնին ալ մինչև ցայժմ ըրեր է, ու կխոստանա այսուհետև ավելի ևս ընել»[87]։

Փարիզյան շրջանի նրա «հոգու, նպատակի և գլխավոր հատկությունների» ըստ ամենայնի հետազոտումը և արժեքավորումը պատկանում են ակադեմիկոս Ա. Կարինյանին[88]։

Անփոփոխ պահած իր հասարակական-քաղաքական հավատամքը, Թեոդոսիայից ևս հանդեսը քարոզում էր միրապաշտ դաղափարներ, ազգային միաբանություն, ձեռք չէր քաշում լամարթինականությունից և կրոնա-ազգային պատրիոտիկայից՝ հենված «միշտ կրոնական ցեմենտով կոփված ազգային կուլտուրայի»[89] տարածման վրա։ 60-ական թվականների մթնոլորտում այս և հայ կղերի ու ամիրաների շահերին միահյուսվող համանման մյուս գաղափարների քարոզը, բնականաբար, չէր կարող չլինել իրրև քաղաքական մի ռեակցիա հեղափոխական մտայնության հանդեպ։

Որքան էլ կապված գրականության հետ՝ հանդեսի խմբագիր Գ. Այվազովսկին հաշվի էր նստում պրակտիկ կյանքի հետ և նկատի

86 «Մասյաց աղավնի», Թեոդոսիա, 1860, № 1, էջ 1։

87 Նույն տեղում, էջ 4։

88 Ա. Բ. Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հատ. 2, էջ 378—430։

89 Նույն տեղում, էջ 410։

ունենում ոչ միայն «հայ իրականության մեջ իշխող ուժեղի տրամադրությունները»[90], այլև ցարի ու ռուսական պետական մեքենայի պահանջներին հարմարվելու անհրաժեշտությունը, որոնց հետ էր նա այսուհետև անվարան կերպով կապում հայ ժողովրդի ապագան և իր մշակութային ծրագրերի իրականացումը։ Այս ուղղությամբ հանդերձ՝ «Մասյաց աղավնին» Թեոդոսիայում ևս մնալով որպես «լուրջ և բովանդակալից պարբերական»[91], անկասկած, նպաստում էր ազգային մշակույթի զարգացմանը։

Ինչ թեմաների շուրջ էր հանդեսը խոսում իր ընթերցողների հետ։ Դրանք ընդգրկում էին արտաքին-քաղաքական լուրեր և տեսություններ, տեղեկություններ ազգային կյանքից և անցքերից, բելետրիստիկա, բանասիրություն, պատմական և կրթական խնդիրներ, ազգային-եկեղեցական կյանք, տնտեսական գիտելիքներ, լեզվաբանություն, գիտելիքներ բնական գիտություններից և բնության երևույթների մասին, հոդվածներ՝ նվիրված առանձին անհատների և այլն։

Իբրև գոյություն ունեցող կարգերի երկրպագու և ազգային միության ջատագով, Գ. Այվազովսկին Թեոդոսիայում ևս հանդեսի էջերից պարզում էր ազգային միասնության դրոշը, որը նա համարում էր ազգային բարօրության հասնելու կարևոր պայման։ Որպես այդպիսին՝ այդ միությունը պարտադրվում էր բոլոր դասակարգերին ու խավերին հավասարապես, որովհետև նրա պահանջն էր «ամեն բանէ առաջ մեկ միտք ունենալ որչափ որ կարելի է՝ ազգային խնդրոց մեջ, ազատ պահելով ամեն մարդ յուր կարծիքը. մեկ հասարակաց լեզու բանեցնել... և մեկ օրենք պաշտել, այսինքն Քրիստոսի մերո սուրբ ավետարանը»[92]։ Դասակարգերի հաշտեցման բավականին ծեծված քրիստոնեական սկուտեղի վրա մատուցվող այս դատափարախոսությունը սոցիալ-քաղաքական տվյալ հարաբերությունների մեջ կարևոր մի դեր էր հայ ունևոր դասի ձեռքին, թեև զգվռոցն առկա էր նաև սրա տարբեր թևերում։ Ազգային միության հասնելու համար «Մասյաց աղավնին» իրեն «դուրս էր դնում» կուսակցություններից և որպես «անկուսակցական» մի պարբերական՝ ձգտում, որ հայ ազգի մեջ «կուսակցությունները վերնան կամ քչնան»։ «Աղավնին» դիտակցում էր, որ բոլորին հաճոյանալ և դուր

90 Նույն տեղում, էջ 394։
91 Նույն տեղում, էջ 382։
92 «Մասյաց աղավնի», 1861, էջ 8։

դալ անհնարին է, ուստի աշխատում էր «յուր ընթացքը և պաշտոնը քաջությամբ» կատարել «ոչ թե ամենուն հաճոյանալով,—որ անկարելի կճանաչէ,—հապա գոնե շատին ընդունելի ընելով յուր խոսքերը»[93]։

Ջուր էր ջանք թափում «Մասյաց աղավնին» համոզելու իր ընթերցողներին, որ իրը թե ինքը հեռու է «ազգին մեջ հավատո կռիվներ» բորբոքելուց, այն ժամանակ, երբ հենց այդ խոսքերի կողքին և մյուս համարներում ընդարձակ էջեր էր տրամադրում դանազան պարբերականներից կատարվող արտատպություններին՝ ընդդեմ Մ. Նալբանդյանի և «Հյուսիսափայլ»-ի՝ կապված եկեղեցական դումարների հետ։

Ազգային միությունն ու միասնությունը այն հզոր պատնեշն ու գենքն էին, որոնց համար և օգնությամբ պայքար էր մղվում Հռոմի պապի և կաթոլիկ հոգևորականության դեմ՝ իբրև հանուր հայության թշնամիների։ «Մասյաց աղավնին» Ղրիմից ևս շանթեր էր արձակում պապի և նրա սպասարկուների գլխին, ըստ ամենայնի քննարկում կաթոլիկացման ազգային-քաղաքական վնասները հայ ժողովրդի համար։ Ռուսաստանը արդեն կաթոլիկ Ֆրանսիան չէր, և հակակաթոլիկ պրոպագանդն ու պայքարը Ղրիմի ափերից ավելի դյուրին ու նպաստավոր էր մղել, չխնայելով անգամ իրեն հոգևոր սնունդ տված Մխիթարյաններին։ Գ. Այվազովսկին գիտեր, իհարկե, որ խնդրի էությունը դավանաբանական տարբերությունը չէ, այլ կաթոլիկության ընդունման ազգավնաս հետևանքները։ Մերժելով Ղևոնդ Ալիշանին, որը գոնում էր, թե «հայք կրնան ընդհանրական (իմա կաթոլիկ—Վ. Մ.) եկեղեցւոյ սերտ միաբան ըլլալով ի հավատս, պահել իրենց ազգային լեզուն, ծեսն ու օրենքները», «Մասյաց աղավնին» գրում էր. «Այդ բանը ոչ միայն Հ. Ղևոնդին, այլև ընդհանրապես ամեն Մխիթարյանց մեկ երազն է, որ շատ անգամ տեսեր են, և քանի մը անգամ արթննալեն ետքն ալ կտեսնեն ու կզվարճանան, թեպետ և իրենք ևս, գոնե ամենքը, չեն հավատար... Անկարելի բան է կսեմք, որ կաթոլիկության հետ սերտ միաբան լինել ի հավատս և միանգամայն հայկական ազգությունը... պահպանել»[94]։ «Մասյաց աղավնին» բացատրում էր դրա պատճառը, ընդգծելով, թե պապերը ջանք են թափում, որպեսզի «հոգևոր և մարմնավոր իշխանությամբ բոլոր աշխարհիս տիրապետեն, ամեն

93 Նույն տեղում, էջ 26։
94 Նույն տեղում, 1863, էջ 136։

մի ազգին ճակատը պապականության կնիքը կոփեն և ամեն տեսակ ազգություն աշխարհիս երեսեն վերացնելով՝ կաթոլիկությունը և պապականությունը ազգության տեղ անցնեն»։ «Հռոմա եկեղեցին իրեն տիրապետության հոգին մեկդի չդներ»[95],—ավելացնում էր հանդեսը՝ ամփոփելու համար Հռոմի նկրտումների և դրանց կուլ գնացող հայության կատարած քայլի ազգակործան հետևանքները։ Ճիզվիթները, նրա բնորոշմամբ, ենիչերիներ են, իսկ պապականները «ավելի կսիրեն տաճիկ մը, այլազգի անհավատ մը, քան թե արևելյան քրիստոնյա մը, որ պապին գերության տակ չուզեր խոնարհիլ»[96]։ Այսպիսով, կաթոլիկության դեմ պայքար էր մղվում ոչ թե զուտ կրոնական, այլ դարձյալ «ազգային շարքերի» միասնության ու ամրապնդման դիրքերից։

«Մասյաց աղավնին» լույս էր տեսնում աշխարհաբար հայերենով։ Նրա խմբագիրը և՛ Փարիզում, և՛ Թեոդոսիայում, չկորցնելով դեպի գրաբարն ունեցած հարգանքը, միանդամայն գրական վերաբերմունք էր ցուցաբերում աշխարհաբարի հանդեպ, թեկուզ և «այդքան ակտիվ կերպով պաշտպանելով աշխարհաբարի իրավունքները... ակներևաբար ձգտում էր ընդգծել իր «առաջադեմ» հայացքները և ինչ որ առաղձ դծել բախվող հոսանքների միաբանության համար»[97]։ Գ. Այվազովսկին կողմնակից էր գրական նոր հայերենի ստեղծմանը հոգ չէ թե որ բարբառը կընկներ նրա հիմքում։ Նրա ուղեգիծն էր «աշխարհաբարին պարզությունը պահել ու միանգամայն կամաց-կամաց խորթություններ դուրս ձգելով, գրաբարին մոտեցնել»[98]։

Ճիշտ էր Գ. Այվազովսկու պահանջը այն մասին, թե նոր գրական հայերենը, իբրև պետոր ջուր, կարիք ունի զտվելու, զուլալվելու. «խոշոր աղտերը մեջեն հանելեն ետև կերևնա՝ թե քիչ մը աման ձգելու ենք, որ մանր ու բարակ դիրտը տակը նստի, հստակվի, պարզվի ու ախորժելի լեզու մը ըլլա»[99]։ Նա կողմնակից էր թե արևելահայ և թե արևմտահայ աշխարհաբարին, միայն թե իր «փափագն ու վախճանն էր» համարում «երկուքին ալ պակասությունները ուղղել ու կատարելագործել, իրենց մորը կամ աղբյուրին, այսինքն գրոց

95 Նույն տեղում, էջ 137։
96 Նույն տեղում, էջ 250։
97 Ա. Բ. Կարինյան, նշվ. աշխ., էջ 390։
98 «Մասյաց աղավնի», 1856, էջ 33։
99 Նույն տեղում։

(իմա գրաբար—Վ. Մ.) լեզվին նմանեցնելով»[100]։ Նա դեմ էր այդպիսի մերձեցման կամայական քայլերին և առաջարկում էր դա կատարել աստիճանաբար ու անշտապ և ոչ թե «անձնական ախորժակը կամ թե ի մանկութենե մեզի ընտանեցած և ախորժելի դարձած լեզուն ու բառերը անխախտելի կանոնի պես ազգին առջևը դնելով, ու ջանալով մեր խելքին ու անոնց ախորժակին բռնությամբը ընդունելի ընելու մեր ինքնահաճո և ինքնահնար լեզուն»[101]։

Վերը շարադրվածից հետո ամենևին ավելորդ ենք համարում գրիչ շարժել Գ. Այվազովսկու այն քննադատների դեմ, որոնք նրան դասել են աշխարհաբարի թշնամիների շարքը։ Ավելացնենք նաև, որ ելնելով աշխարհաբարի զարգացման շահերից, «Մասյաց աղավնին» «Բառաղնություն» վերտառության տակ պարբերաբար յայն տեղ էր տալիս աշխարհաբարին առնչվող կոնկրետ խնդիրների պարզաբանմանը, անծանոթ և սակավ գործածվող բառերի բացատրություններին։

«Մասյաց աղավնու» մեջ 1860—1865 թվականներին շոշափված քաղաքական (արտաքին թե ներքին) խնդիրները լուսաբանություն էին գտնում Գ. Այվազովսկու որդեգրած ուղղությանն ու դեպի ցարիզմն ունեցած նրա դիրքորոշմանը համեմատ, լծորդվում գաղրակալ կայսրության հզորացմանը նպաստող գործոններին։

«Մասյաց աղավնու» մեջ աղբատ էր գեղարվեստական գրականության բաժինը. ամենից աչքի ընկնող գործը Կռիլովի առակներն էին՝ թարգմանված Գ. Այվազովսկու կողմից։ Այն ժամանակվա ընթերցողի համար գուցե կոնկրետ կիրառական նշանակություն ուներ «Բանալի բնական գիտելյաց» բաժինը, որը ընթերցողներին մատչելի տեղեկություններ էր հաղորդում բնության զանազան երևույթների մասին, իսկ հաճախ էլ՝ նրանց ծանոթացնում բնական գիտություններին վերաբերող այս ու այն նորություններին։

«Մասյաց աղավնու» փակվելուց ութ տարի հետո Թեոդոսիայում 1873—1874 թվականներին լույս է տեսնում գրիմահայ երկրորդ պարբերականը՝ «Դաստիարակ» ամսագիրը։ Խմբագիր-հրատարակիչ Գ. Տեոլվեթյանը «Ծանուցման» մեջ գրում էր. «Դաստիարակ» անունը, որ առաջնորդող, կրթություն տվող, խրատող կնշանակի, անոր համար ընտրեցինք, որ առանց երկար բացատրության հասկացնենք, թե մեր դիտավորությունը և այս աշխատության նպա-

100 Նույն տեղում, 1860, էջ 5։
101 Նույն տեղում։

տակն է օգտավետ դաստիարակություն ազգիս առհասարակ»[102]։ Ամսագիրը իր նպատակներից դուրս էր համարում «կրոնական խընդիրներ կամ վիճաբանություններ և քաղաքական կառավարության վրա խորհրդածություններ»[103]։ «Դաստիարակը» հոդվածներ էր տպագրում գյուղատնտեսության, վաճառականության, մանկավարժության և առողջապահության մասին, հաղորդում աշխարհագրական և պատմական տեղեկություններ, լուրեր, զետեղում բանասիրական նյութեր, «հետաքրքրական և զվարճալի վիպասանություններ» և այլն։

«Դաստիարակի» կյանքը կարճ եղավ։ Ընդամենը մի քանի համար լույս տեսնելուց հետո 1874 թվականին այն դադարեց, հավանաբար, միջոցների սղության պատճառով։

* * *

Նոր շրջանի ղրիմահայ մշակույթի նկատելի դրսևորումներից մեկը ճարտարապետությունն է, հայերի շինարարական գործունեությունը թերակղզու վրա։ Իհարկե, այդ գործունեությունը այնքա՛ն ծավալուն ու ընդգրկումներով չուներ, որպիսին միջնադարումն էր, բայց այն ժամանակվա Ղրիմի համար հայերը, այնուամենայնիվ, ստեղծեցին մի շարք ուշագրավ գործեր։

Որպես հոյակապ մի կոթող, հայկական դասական ճարտարապետական իր ոճով Յալթայում, գեղահայաց բարձրության վրա, վեր է խոյանում հայկական եկեղեցին, որի շինարարությունն սկսվել է 1909 թվականին և ավարտվել 1916 թվականին։ Ճարտարապետական գեղեցիկ մի կոթող է Հովհ. Այվազովսկու պատկերասրահը, որը կառուցվել է նրա իսկ նախաձեռնությամբ և միջոցներով անցյալ դարի 80-ական թվականներին։

Անցյալ դարի կեսերին երկարամյա ձգձգումից հետո ավարտվում է նաև Եվպատորիայի սուրբ Նիկողայոս եկեղեցու շինարարությունը։ Հայերը եկեղեցիներ են կառուցում Հին Ղրիմում, Արմյանսկի Բազարում, Սիմֆերոպոլում։ Յավոք, նորակառույց այդ եկեղեցիներից մի քանիսը չեն պահպանվել։ Ժամանակին Թեոդոսիայի ամենամեծ և գեղեցիկ շինությունը Խալիպյան ուսումնարանի եռահարկ շենքն էր, որը հայրենական պատերազմի ժամանակ ոչնչացման հետևանքով ավերվել է և այժմ գոյություն չունի։ Ղրիմի զանազան քաղաքներում քաղաքացիական բազմաթիվ շենքեր էին կառուցել Սպենդիարյանները, Թոփալյանները, Սեֆերովները և ուրիշներ։

* * *

Ղրիմահայ մշակույթի բնութագիրը կմնա թերի, եթե, թեկուզ և համառոտակի, չհիշատակենք այն ներկայացուցիչներին, որոնցից մի քանիսի ստեղծագործության համբավը դուրս է եկել հայկական, անգամ համառուսական շրջանակներից և ստացել միջազգային ճանաչում։ Փոքրաթիվ ղրիմահայության միջից, հիրավի, ծնվեցին մշակույթի նշանավոր շատ գործիչներ, և դրան նպաստողը, հարկավ, սոսկ այն չէր, որ տավրիկյան հայերը լայն հնարավորություններ ունեին մոտիկից հաղորդակցվելու կուլտուրայի ռուսական ու եվրոպական կենտրոնների և հայ մշակութային օջախների, մասնավորապես, Կոստանդնուպոլսի ու Թիֆլիսի հետ։ Դա խնդրի մի կողմն է միայն։ Մինչդեռ հիմնական ազդակը այն էր, որ ղրիմահայ գաղութը ավելի սերտորեն էր ներքաշվել զարգացման կապիտալիստական հարաբերությունների մեջ, իսկ դա չէր կարող թափ չհաղորդել նաև կուլտուրայի զարգացմանը։ Խոսելով ղրիմահայերից սերված արվեստագետների մասին, ամենից առաջ պետք է նշել Հ. Այվազովսկու, Ալ. Սպենդիարյանի, Քր. Կարա-Մուրզայի, Է. Մահտեսյանի և Ն. Նալբանդյանի անունները։ Սրանք գեղանկարչական և երաժշտական կուլտուրայի այնպիսի դեմքեր են, որոնց համարձակորեն կարելի է դասել հայ մշակույթի հսկաների շարքը, իսկ Հ. Այվազովսկուն համեմատել համաշխարհային նկարչության հին և նոր շրջանի ամենաերևելի ներկայացուցիչների հետ։ Նրանց կյանքի ու գործի մասին բավական շատ է գրվել. հենց այդ պատճառով էլ մենք այդ հարցին կանդրադառնանք խիստ համառոտակի՝ որքան դա պատշաճում է պատմագիտական բնույթի աշխատությանը։

Հովհաննես Կոստանդինի Այվազովսկին ծնվել է Թեոդոսիա քաղաքում, 1817 թվականի հուլիսի 17-ին (հին տոմարով)։ Նրա հայրը՝ Գևորգ-Կոստանդին Այվազը, լեհահայ էր, բնիկ Ստանիսլավ քաղաքից, Այվազ կամ Հայվազ կալվածատիրական տոհմից, որը հաստատված էր Գալիցիայում և Բուքովինայում։ Գևորգ Այվազը նախ տեղափոխվում է Մոլդավիա և ապա՝ Ղրիմ, ուր հաստատվում է վերջնականորեն։ Ռուսաստանի մյուս հայազգի Այվազովներից տարբերվելու համար Կոստանդինը իր ազգանունը դարձնում է Այվազովսկի։ Որպես բանիմաց և բարի մարդ՝ Կոստանդինը Թեոդո-

102 «Դաստիարակ», Թեոդոսիա, 1873, № 1, էջ 1։
103 Նույն տեղում։

սիայի բազմազգ բնակչությունից հարգված ու սիրված անձնավորություն էր։ Տիրապետելով բազում լեզուների (հայերեն, լեհերեն, մոլդավերեն, հունգարերեն, ռուսերեն և այլն), Կոստանդինը շատ հաճախ կատարում էր թարգմանչի և առևտրական միջնորդի պարտականություններ։ Նրա ընտանիքը բազմանդամ էր՝ երեք տղա և երկու աղջիկ։ Հովհաննեսը տղաներից կրտսերն էր։ Այվազովսկիների ընտանիքն ապրում էր նյութական սուղ պայմաններում։ Սնանկացած վաճառական Կոստանդինը ընտանիքի կարիքները ծածկում էր թարգմանչի և առևտրական միջնորդի պարտականություններ կատարելով։

Հովհաննես Այվազովսկին սկզբնական կրթությունն ստանում է Թեոդոսիայի հայկական ծխական դպրոցում։ Այդ էր պատճառը, որ նա չմոռացավ մայրենին, և հայ գործիչների հետ գրագրությունը վարում էր մեծամասամբ հայերեն՝ համեմված ղրիմահայ բարբառով։ 1830—33 թվականներին Հովհաննեսը սովորում է Սիմֆերոպոլի գիմնազիայում։ Նկարչական բարձր ընդունակությունների համար նրան 1833 թվականից, իբրև թոշակառու ուսանող, ընդունում են Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիան, որը նա ավարտում է 1837 թվականին, ժամկետից երկու տարի շուտ։ Մեր խնդրից դուրս է աշխարհահռչակ նկարչի գեղարվեստական ժառանգության վերլուծությունը. հնում թե մեր օրերում, մեզանում թե արտասահմանում արվեստի հայտնի ու շարքային տեսաբանները արդեն կատարել են այդ։ Նպատակահարմար ենք գտել հատկապես շեշտել այն սերտ կապը, որ մեծ նկարիչը միշտ պահպանում էր հայրենի իրականության հետ՝ սկզբից մինչև իր կյանքի վերջին օրերը։

Տակավին Պետերբուրգում ուսանելիս Հ. Այվազովսկին, թեև մշտապես շփվում էր ակադեմիականների և պալատականների շրջանում, բայց «գրեթե ամեն օր» գտնվում էր տեղի հայկական եկեղեցու «ծխականների թվում»[104] և չէր կորցնում կապը հայրենակիցների հետ։ Ակադեմիան ավարտելուց և երկարամյա արտասահմանյան շրջագայություններից հետո վերջնականապես հաստատվելով հայրենի Թեոդոսիայում, Այվազովսկին ջանում էր ամեն ինչով օգտակար լինել Ղրիմի (և ոչ միայն Ղրիմի) իր ազգակիցներին, թե ու թիկունք կանգնել նրանց հոգսերին ու պահանջներին։ Արդեն խոսել ենք այն վճռական բողոքների մասին, որ Այվազովսկին ներկայացրել էր Աշտարակեցուն՝ ընդդեմ կաթոլիկ հայրերի հակահայ ոտընձգությունների և նշել 50 հազար ռուբլիանոց այն կտակի մասին, որ նա թողեց Թեոդոսիայի ս. Սարգիս եկեղեցուն և ծխական դպրոցին։ Ազգօգուտ նվիրատվություններ նա կատարում էր ոչ միայն Թեոդոսիայի հայերի համար։ Իր հաշվին նա մի նոր եկեղեցի կառուցեց Հին Ղրիմի հայերի համար, իսկ հայկական մի շարք եկեղեցիներ զարդարեց նկարներով, որոնք նա կատարում էր ձրիարար՝ ընդառաջելով հայ առանձին հոգևորականների խնդրանքին։ Իր ազգակիցներին օգնելու նպատակով Հ. Այվազովսկին կազմակերպում էր ցուցահանդեսներ։

Հովհ. Այվազովսկին խոր վիշտ էր ապրում հարազատ ժողովրդի դժբախտ պահերին և մանկան նման ուրախանում նրա փոքր իսկ հաջողություններով։ Մեծ նկարիչը ծանր օրեր ապրեց մանավանդ 90-ական թվականներին՝ կարմիր սուլթանի կազմակերպած հայկական ջարդերի կապակցությամբ։ «Խորին ցավով վշտացած է սիրտս անբաղդ հայոց չլսված չտեսնված կոտորածով,—գրում էր ութսունամյա Այվազովսկին կաթողիկոս Խրիմյանին, 1896 թվականի սեպտեմբերին։—Ձեր վեհափառությունը այդտեղ, մենք այստեղ և ամենքըն փրենց տեղեր, կուլանք և կողբանք մեր թշվառ կորստյան մատնըված հայոց վերա»[105]։ Բայց Այվազովսկին չի բավարարվում սոսկ իր վիշտը հայտնելով։ Նա վճռական բողոքի ձայն է բարձրացնում թուրքական վայրագությունների դեմ։ Ի նշան բողոքի՝ նա իր թուրքական շքանշանները նետում է ծով և տաճկական հյուպատոսին հայտնում. «Արյունկղակ տիրոջդ ինծի տված պատվանշանները ծովը նետեցի. ահավասիկ անոնց ժապավենները, իրեն դրկե։ Եթե կուզե, թող ինքն ալ իմ պատկերներս ծովը նետե, բայց հոգս չէ...»[106]։

Հայ ժողովրդի համար դժնդակ այդ օրերին Հովհ. Այվազովսկին ձգտում էր ամեն կերպ, նյութապես թե բարոյապես, ամոքել նրա վերքերը։ «Ձեր օծությունը,—գրում է նա Խրիմյանին,—շատ զգայուն և զեղեցիկ առաջարկություն կանեք ինձ նկարել կարմիր գունով հայոց կոտորածի պատկեր, արյան դաշտեր և լեռներ և վշտահար Հայոց Հայրիկին ավերակաց վերա։ Եթե տերը կհաճի ինձ դեռևս կյանք պարգևել, կուգա օր, որ կկատարեմ այդ սրտաշարժ առաջարկությունը»[107]։

104 «Մշակ», Թիֆլիս, 1887, № 9։

105 *Айвазовский*, Документы и материалы, стр. 277.

106 *Հայկական ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», հասարակական գիտություններ, 1965, №. 2, էջ 91 (Գ. Հարությունյանի «Հովհաննես Այվազովսկու տոհմի ծագումնաբանությունը և ազգանվան փոփոխումը» հոդվածը)։*

107 *Айвазовский*, Документы и материалы, стр. 277.



Ի. Այվազովսկի. Հայերին ցցում են ճակեր:

Թուրքական ասպատակություններից տուժած հայերին օգնելու համար Այվազովսկին Օդեսայում բացում է ցուցահանդես, որտեղ, ի թիվս այլ նկարների, ցուցադրում է երեք նկարներ, որոնք պատկերում էին «հայերի ջարդը Տրապիզոնում, ինչպես կենդանի հայերին շոգենավից գցում են Մարմարա ծովը և, երրորդը, թե ինչպես թուրքերը Թեսալիայում պատերազմի ժամանակ այրում են հույներին»[108],— գրում էր Այվազովսկին Կ. Եզյանին: Ցուցահանդեսից ստացված գումարը՝ 2000 ռուբլին, բաժանելով երկու հավասար մասի՝ Այվազովսկին մեկ մասն ուղարկում է հայերին, իսկ մյուսը՝ հույներին: Մի քանի օր անց նա, հայ աղքատներին բաժանելու համար, Կոստանդնուպոլսի ռուսական դեսպանի հասցեով ուղարկում է ևս 3000 ֆրանկ[109]:

Հովհ. Այվազովսկին սերտ և մտերմական կապերի մեջ էր ժամանակի հայտնի հայ գործիչների՝ կաթողիկոսներ Ն. Աշտարակեցու, Գևորգ Դ-ի, Խրիմյանի, ինչպես նաև Կ. Եզյանի, Ն. Բյուզանդացու, Պ. Ադամյանի, Մ. Մամուրյանի, Գ. Ապտալյի (Ասատվածատրյանի), Ս. Պալյանի, Հ. Տատյանի, Խ. Սաեփանեի և շատ ուրիշների հետ: Ամենայն ուշադրությամբ հետևելով հայ կյանքի և մշակույթի զարգացմանը, մեծ նկարիչը ջանում էր իր ուժերի ներածին չափ օգտակար լինել դրան: Նա ջերմ հոգատարություն ցուցաբերեց, օրինակ, Խորեն Սաեփանեի նկատմամբ, որը հեռացված ս. Խաչ վանքը՝ փաստորեն անգործության էր մատնվել: Խրիմյանին գրած իր նամակում, հայտնելով իր մտահոգությունը հայ մշակույթի զարգացմանը պիտանի գործիչներին նպատակահարմար օգտագործելու առիթով, նա գտնում էր, որ Խորեն Սաեփանեին պետք է արժանի գործ հանձնարարել.

«Ի վաղուց իմ գրած թղթիս Խորեն եպիսկոպոս Սաեփանեի մասին պատասխան չընդունեցա,— գրում էր նա Խրիմյանին 1900 թ. փետրվարի 16-ին:— Բայց Նորին կդիմեմ Ձեր վեհափառության և կխնդրեմ անուշադիր չթողուլ այս օգտակար եկեղեցականը:

Ցավալի է, որ այսպիսի գործունյա և իրոք հայասեր եկեղեցականի կյանքը ապարդյունք կանցնի, մանավանդ Ձեր վեհափառության օրով... Կտեսնենք Խորեն եպիսկոպոսին եռանդը նույնիսկ իր անմարդաբնակ անտառի մեջ և ավելի կցավինք, որ իր ունեցած շնորհներն այն օգուտ չեն տար, որի կարիք շատ զգալի է ամեն տեղ:

---

108 Նույն տեղում, էջ 298:
109 Նույն տեղում, էջ 299—300:



Հ. Այվազովսկու ձայերեն ձեռագիրը:

Իր վանքի մեջ այսօր նոր դպրեթ կշինե, վաղը աղբյուր կնորոգե, մի ուրիշ անգամ այգիներ խնամքով մշակել կտա, մերձակա Սիմֆերոպոլի, Թեոդոսիայի, Կարասուբազարի հայոց ժողովրդյան թե անձամբ քարոզելով և թե գրով կհորդորե իրենց մայրենի լեզուն սովորել, իրենց եկեղեցին պաշտել, ազգային քրիստոնեական պատարագը չմոռնալ և այլն: Բայց այս ամենն մի ուրիշ վանահայր կարող է անել և սրա համար միթե՞ պետք է փակել զեորեն եպիսկոպոսն անտառի մի մեջ»: Նամակի վերջում Հովհ. Այվազովսկին իր պարտքն էր համարում շեշտել, որ որպես հայ՝ իր համար ցավալի է նման գործչին անգործության մատնելը, «Դուք գիտեք,—դիմում է նա կաթողիկոսին,—որ ինձ համար ոչինչ անձնական պետք չկա այս խնդրո մեջ, այլ իբրև հայ և տեսնելով հանգամանքները, կցավիմ շատ այս գործության վրա: Պետերբուրգի մեջ պատրաստ եմ հարկավոր միջնորդություն անել Խորեն եպիսկոպոսի վերաբերմամբ, եթե կհաճիք: Ուստի բարեհաճեցեք ընդունել խնդիրս, զոր կհատուցանեմ Ձեզ կյանքիս վերջին շրջանի մեջ, ապարդյուն չթողլով հայ ժողովրդյան համար այս արժանավոր հոգևորականի կյանքը»[110]:

Հովհ. Այվազովսկու խնդրանքը, ըստ երևույթին, հասնում է իր նպատակին. 1900 թվականի աշնանը Խորեն Ստեփաննեն գալիս է Թիֆլիս, սակայն արդեն ուշ էր. նոյեմբերի 15-ին նա կնքում է իր մահկանացուն[111]:

Հովհ. Այվազովսկու թողած գեղարվեստական հարուստ ժառանգության մեջ (շուրջ 6000 պատկեր) ուրույն տեղ են բռնում հայկական թեմաներով պատկերները (ընտապատկերներ, հայկական ջարդերը, հայ կենցաղն ու պատմական անցյալը պատկերող գործեր և այլն): Հայկական թեմաներով նկարված գործերից են «Արարատ լեռան հովիտը», «Արարատ», «Հայ ժողովրդի մկրտությունը», «Խրիմյան Հայրիկը էջմիածնի շրջակայքում», «Նոյը իջնում է Արարատից», «Երդում», «Բայրոնի այցելությունը Մխիթարյաններին՝ Ս. Ղազար կղզում», «Հայերի ջարդը Տրապիզոնում 1896 թվականին», «Հայերին լցնում են նավերը», «Կենդանի հայերին թուրքերը թափում են Մարմարա ծովը», «Հովիվները հոտի մոտ», «Կարս քաղաքի գրավումը գիշեր ժամանակ» և այլ նկարներ, ինչպես նաև Խրիմյան Հայրիկի, Հովհ. Լազարյանի, Լորիս-Մելիքյանի, Գար. Այվազովսկու և այլոց դիմանկարները:

---

110 «Մշակ», օրաթերթ, 1900, № 90:

111 Նույն տեղում, № 216:

1877 թվականին, երկարամյա ձգձգումից հետո, Հովհ. Այվազովսկին ստանում է էջմիածնի սինոդի թույլտվությունը՝ իր անգլուհի կնոջից, Յուլիա Կրևսից, ապահարզան ստանալու վերաբերյալ: Հինգ տարի անց, 1882 թվականին, Հովհ. Այվազովսկին ամուսնանում է Աննա Մկրտչի Սարգսյանի (Բուռնազյանի) հետ: Ապահարզանի հիմնական պատճառներից մեկն էլ Հ. Այվազովսկին համարում էր այն, որ անգլուհին իր աղջիկներին (չորսն էին) անջրպետում էր հայկական միջավայրից, ամուսնացնում օտարների հետ և, ընդհակառակը, արգելում նրանց ամուսնությունը հայերի հետ[112]: Մյուս կողմից, 65-ամյա նկարիչը քաղաքացիական քայլ էր համարում հայուհու հետ իր կատարած ամուսնությունը: Գևորգ Ապոլային նա գրում էր. «առջի կընկանըս հետ 20 տարի է, որ չէր կենայի, չի տեսածըս նորա՝ կա 14 տարի: Հինգ տարի ալ կա, որ էջմիատջինին սինոսը և կաթողիկոսը ինծի բաժանմունք տվին. այնպես որ կըրնայի կարգվիլ. միայն շատ կվախենայի մեկ ուրիշ ասգի հետ կապվելու՝ ու նորին անպահիվ լալ» (ընդգծումը—Վ. Մ.): Ապա ավելացնում էր. «Շատ ուրախ կըլլայի, երբ որ կարելի է նե Պոլիսի լըրագիրներուն մեջ ես Պոլիսի մեր պատրիարգը մեկ շնորհակալության գիր մը գրեր էջմիատ.[ծին] կաթողիկոսին, որ ինձի ազատեցին առջի սըսպակես ու ատով ավելի նորեն ասգիս մոտըկցա»[113] (ընդգծումը—Վ. Մ.):

Հովհ. Այվազովսկու ստեղծագործությունը վիթխարի մի կամուրջ էր հայ և ռուս կուլտուրանների մերձեցման ճանապարհին: 1887 թվականին, երբ նշվում էր նրա ստեղծագործական ուղու 50-ամյակը, հայ ժողովրդի հետ միասին նրան սրտագին ողջունում էին ռուսական հասարակայնության ու մյուս ժողովուրդների ներկայացուցիչները: Նրանց հավասարապես ցնցեց Հովհ. Այվազովսկու մահվան լուրը. հանճարեղ նկարիչը իր մահկանացուն կնքեց 1900 թվականի ապրիլի 19-ին: Իր իսկ պատվերով նրան թաղեցին Թեոդոսիայի հայկական հինավուրց ս. Սարգիս եկեղեցու բակում: Նրա գերեզմանին դրված հուշարձանը, իր հայատառ մակագրությամբ, գալիք սերունդներին շարունակ հիշեցրել է և կհիշեցնի համաշխարհային գեղանկարչության ամենակարկառուն ներկայացուցիչներից մեկի՝ Հովհաննես Այվազովսկու մասին, թե՝ «Մահկանացու ծնեալ անմահ գիւրն յիշատակ եթող»:

112 Հայկական ՍՍՀ ՆԳՄ Արխիվային վարչության «Գիտա-ինֆորմացիոն բյուլետեն», Երևան, 1958, № 1 (8), էջ 18—19:

113 «Բազմավեպ», 1929, № 3, էջ 73:

Տաղանդավոր նկարչի համբավ էր ձեռք բերել ղրիմահայ էմանվել Մահտեսյանը (1857—1908), որը ծնվել ու մեծացել էր Արմյանսկում: Մահտեսյանը թեև Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիայի սաներից էր, բայց համարվում էր Հովհ. Այվազովսկու տաղանդավոր աշակերտը ոչ միայն նրա գեղարվեստական դպրոցում սովորելու համար, այլև իբրև իր հանճարեղ ուսուցչի արվեստի տաղանդավոր շարունակող: Մահտեսյանը Պետերբուրգի նկարիչների շրջանում ճանաչված արվեստագետ էր, նկարիչներ, որոնք նրա մեջ «բացի Այվազովսկուց ստացած տեխնիկայից», տեսնում էին նաև «ինքնուրույն սեփական ուղղություն»[114]: Մահտեսյանի պատկերները այնքան լայն ճանաչում են ստանում, որ 1886 թվականից սկսած դրանք ցուցադրվում էին Պերեզվիժնիկների ցուցահանդեսներում և ակադեմիայի սրահներում, Պետերբուրգում, Մոսկվայում, Օդեսայում:

1896 թվականին Մահտեսյանը Սիմֆերոպոլում բացում է իր անձնական պատկերասրահը, ուր տեղավորված էին նրա 150 ծովանկարները: Մահտեսյանի լավագույն գործերից են՝ «Գիշերը Սև ծովի ափին», «Հողմը սաստկանում է», «Ադալարը անձրևից հետո», «Ալեկոծ ծովը», «Փոթորիկ ծովի վրա» և այլն:

Հայ մշակույթին ղրիմահայությունը տվել է նաև երաժշտական արվեստի անվանի գործիչներ, և նրանց շարքում ամենից առաջ պետք է հիշել Ալեքսանդր Սպենդիարյանին, հայ դասական երաժշտության այդ խոշոր ներկայացուցչին: Սպենդիարյանը ծնվել է 1871 թվականին, Տավրիկյան նահանգի Կախովկա բնակավայրում, ուր 1855 թվականին գաղթել էր նրա պապ Ավքսենտի Սպենդիարովը Արմյանսկի Բազարից՝ շատերի նման ահաբեկված բաշիբոզուկ ավազակախմբերի խժդժություններից: Ալ. Սպենդիարյանը վեց տարեկան էր, երբ նրանց ընտանիքը, մոր գլխավորությամբ, կրկին վերադարձավ Ղրիմ, այս անգամ արդեն առմիշտ հաստատվելով Սիմֆերոպոլում:

Դեռևս նախադպրոցական հասակում Ալ. Սպենդիարյանը անզուգական ընդունակություններ է դրսևորում արվեստի մի շարք բնագավառներում, մասնավորապես նկարչության և երաժշտության մեջ: Վեցամյա Ալեքսանդրի պատրաստած թղթյա զանազան կենդանիներն ու թռչունները այնքան կատարյալ էին, որ իրենց վրա

114 «Գեղարվեստական աշխոմ Հ. Այվազովսկու հիշատակին», Ս. Պետերբուրգ, 1903, էջ 58:

են հրավիրում Հովհ. Այվազովսկու ուշադրությունը: Վերջինս դրանցից մի քանիսը վերցնում է իր հետ՝ գեղարվեստի ակադեմիայում ցուցադրելու համար: Մասնագետները հիացած էին նաև 8-ամյա Ալ. Սպենդիարյանի նկարչությամբ: Դեռևս գիմնազիայի ցածր դասարաններում սովորելիս Ալ. Սպենդիարովը հորինում էր երաժշտություն, իսկ մի փոքր ավելի ուշ՝ գրում բանաստեղծություններ:

1890 թվականին Ալ. Սպենդիարովը ավարտում է Սիմֆերոպոլի գիմնազիան և նույն թվականին ընդունվում Մոսկվայի համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետի բնագիտական բաժինը, սակայն մեկ տարի անց տեղափոխվում է իրավաբանական ֆակուլտետ, որն ավարտում է 1896 թվականին:

Իր երաժշտական առաջին դասերը ապագա կոմպոզիտորն առնում է Սիմֆերոպոլում՝ նախ դաշնամուրի, ապա ջութակի վրա: Այս տարիներին արդեն նա գրում էր երաժշտություն, ծանոթանում ժողովրդական երգերի հետ: Սակայն երգահանությամբ ղբաղվելու առաջին խորհուրդը նա ստանում է Մոսկվայում՝ Ն. Ս. Կլենովսկուց, որի մոտ ինքը երաժշտությամբ էր պարապում: 1896 թվականին Ալ. Սպենդիարովը մեկնում է Պետերբուրգ և իր երաժշտական ստեղծագործությունները ներկայացնում Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովին: Վերջինիս մոտ ուսանելով՝ Ալ. Սպենդիարովը, թեև մասնավոր, բայց երաժշտական կատարյալ կրթություն է ստանում: Այս շրջանում Ալ. Սպենդիարյանը բարեկամական սերտ կապեր է հաստատում ռուս դասական երաժշտության խոշոր ներկայացուցիչներ Ա. Կ. Գլազունովի և Ա. Կ. Լյադովի հետ:

Արդեն Կլենովսկու և Ռիմսկի-Կորսակովի մոտ սովորելու տարիներին Ալ. Սպենդիարովը ստեղծում է երաժշտական մի շարք ավարտուն գործեր, որոնք լայն ճանաչում են ստանում: 1900 թվականին նա գրում է «Համերգային նախերգանք» մեծածավալ սիմֆոնիկ գործը, որի առաջին կատարումը (1901 թ. հունիսի 5-ին) կոմպոզիտորը համարեց իր ստեղծագործական կյանքի սկիզբը, թեև դրանից շատ ու շատ առաջ արդեն կատարվում էին նրա ստեղծագործությունները:

Գնալով իրականանում էին Հովհ. Այվազովսկու՝ «Երիտասարդ Մոցարտի» վրա դրած հույսերը: Ուսումնառության տարիներին Սպենդիարյանը գրում է «Մենուետ», «Հինավուրց պար», «Օրորոցային» սիմֆոնիկ գործերը և բազմաթիվ ռոմանսներ ու այլ երգեր, որոնք հասարակական ճանաչում են գտնում, իսկ Պետերբուրգի

պրոֆեսիոնալ երաժշտական միջավայրում Ալ. Սպենդիարովը «Արևելյան Գլինկա» անունն է վաստակում:

1901 թվականից Ալ. Սպենդիարյանը հաստատվում է Ղրիմում՝ նախ Յալթայում, իսկ 1915 թվականից՝ Սուդակում: Ղրիմում Ալ. Սպենդիարյանը երաժշտական բեղմնավոր աշխատանք է ծավալում, ստեղծելով մեծակտավ և գողարիկ հիասքանչ գործեր, այդ թվում՝ «Ղրիմի էսքիզներ»-ը, «Երեք արմավենի»-ն, «Չհնձած արտ»-ը, «Վ. Վ. Ստասովի հիշատակին», «Զինորան ու փերին», «Ա՛ռ Հայաստան», «Մի լար, բլբուլ» և այլն: «Երեք արմավենի»-ն 1905 թվականին արժանանում է Գլինկայի անվան մրցանակին: Հետագայում նույն մրցանակն են ստանում նաև նրա «Բեդա-քարոզիչ» բալլադը և «Մենք կհանգստանանք» մելոդեկլամացիան[115]:

Մանկուց ի վեր Սպենդիարյանը կապված էր իրեն այնքան հարազատ հայ կյանքի հետ: Նրա հայրը ժամանակին հոգացել էր, որպեսզի իր զավակները սովորեն մայրենի լեզուն և գրականությունը, մշակույթը: Տակավին Ղրիմում, Սպենդիարյանը մտերմական հարաբերություններ է հաստատում ժամանակի հռչակավոր ջութակահար Հովհ. Նալբանդյանի հետ: Տեղափոխվելով Մոսկվա, Սպենդիարյանն ու նրա ուսանող եղբայր Լեոնիդը սերտորեն շփվում են տեղի հայկական գաղութի հետ, մոտիկից ծանոթանում ու բարեկամանում Մոսկվայի հայազգի ճանաչված գործիչների՝ պրոֆեսորներ Ն. Ներսիսովի և Յու. Ղամբարովի, բժիշկ Ս. Շահինյանի, Գր. Ջանշիևի, Ալ. Ծատուրյանի և այլոց հետ: Յալթայում ստեղծագործելու ամենաբուռն տարիներին իսկ Ալ. Սպենդիարյանը այնտեղի հայության շունչն ու ոգին էր: Նա Յալթայի Հայկական բարեգործական ընկերության նախագահն էր, ընկերություն, որի գործերի վրա կոմպոզիտորը բավական շատ ժամանակ էր ծախսում:

Ալ. Սպենդիարյանին մեծապես հուզում էին հայ ժողովրդի ճակատագիրն ու ապագայի հեռանկարները: 1896 թվականին նա, իր եղբոր հետ միասին, Մոսկվայի հայկական շրջանների այն բուռն վեճերի մասնակիցներից էր, որոնց ժամանակ քննարկվում էին Թուրքիայում սանձազերծված հայկական ջարդերի և ազգաբաց հայ բնակիչներին օգնելու խնդիրները:

Կապը հայ իրականության և գործիչների հետ որոշակի ազդեցություն է թողնում կոմպոզիտորի վրա, նրան մղում ստեղծելու ազգային թեմաներով գործեր, իր ստեղծագործությամբ արձագան-

115 Ք. Գրիգորյան, Ալեքսանդր Սպենդիարով, Երևան, 1952, էջ 11:

քելու հարազատ ժողովրդի ցավերին ու հոգսերին: Սպենդիարյանը բարեկամական և ստեղծագործական սերտ կապ էր հաստատել բանաստեղծ Ալ. Ծատուրյանի և նկարիչ Վ. Սուրենյանցի հետ: Ա-ռաջինի խոսքերով նա գրեց «Հայկական երգ»-ը («Մի լար, բլբուլ»), իսկ «Արևելյան երգեր»-ի («Ալջամասա», «Հայկական երգ», «Հաֆ-պից» և «Այշե») շապիկի ձևավորումը վստահեց Վ. Սուրենյանցին: 1911 թվականին Բաքվի Հայկական մշակութային ընկերությունը Սպենդիարյանին պատվիրում է գրել մի կանտատ՝ նվիրված Խ. Ա-բովյանի հիշատակին: Կոմպոզիտորը սիրով կատարում է այդ պատ-վերը և 1914 թ. հունվարին գրում «Հերոսների հետքերով («Աղասու դերեզմանը») հերոսական երգը, որը առաջին անգամ կատարվում է Յալթայում, Գլազունովի ներկայությամբ[116]:

Առաջին համաշխարհային պատերազմի դժնդակ օրերին, 1915 թվականի սկզբներին, Ալ. Սպենդիարովը, արձագանքելով հայ իրա-կանության, ստեղծում է «Հայ զինվորի երգը», որի հրատարակ-ման շապիկը ձևավորել էր Մարտիրոս Սարյանը: Մեծ եղեռնը խո-րապես ցնցեց կոմպոզիտորին: Նա բանաստեղծ Հովհ. Հովհաննիս-յանի խոսքերով գրեց «Ա՛ռ Հայաստան» ներբողը, իսկ Մոսկվայում, «Հայկական շարաթ»-ի ժամանակ հանդես եկավ համերգներով: Հայ-րենասիրական զգացմունքներով համակված կոմպոզիտորը այս շըր-ջանում հղանում է ազգային օպերա գրելու գաղափարը: Այդ նպա-տակը 1916 թվականի փետրվարին նրան բերում է Թիֆլիս, որտեղ մոտիկից ծանոթանում է հայկական կյանքի և մշակութային գործիչ-ների հետ, ունկնդրում աշուղական խմբերի և ժողովրդական երգիչ-ների կատարումները: Օպերային թեմայի համար նա կանգ է առնում Հ. Թումանյանի «Քմկաբերդի առումը» պոեմի վրա և քաղաքացիա-կան կռիվների ծանր տարիներին ստեղծում իր ամենանշանավոր գործերից մեկը՝ «Ալմաստ» օպերան:

Ալ. Սպենդիարյանը իր խառնվածքով անաչառ մարտիկ էր, ամեն տեսակի բռնության ու անարդարության թշնամի: Այս առու-մով ուշագրավ է այն վճռական դիրքորոշումը, որ գրավեց նա 1905 թվականին, երբ հեղափոխական ուսանողությանը պաշտպանե-լու համար ավելի քան 30-ամյա գործունեությունից հետո Ռիմսկի-Կորսակովին հեռացրին Պետերբուրգի կոնսերվատորիայից: Սպեն-դիարյանը չհապաղեց մամուլում հանդես գալ մի նամակով, որտեղ

116 Մարիետա Սպենդիարովա, *Սպենդիարով*, Երևան, 1966, էջ 105:

իր համակրանքն ու համերաշխությունն էր հայտնում ռուս մեծ կոմ-պոզիտորին: Նա գրում էր.

«Քանկագին Նիկոլայ Անդրեևիչ. ի դեմս Ձեզ բարձր գնահատե-լով ազնվագույն և ուղղամիտ մարդուն ու ակնածանքով խոնարհվե-լով ռուսական արվեստում Ձեր վիթխարի նշանակության առջև, ան-կեղծորեն համամիտ եմ Ձեր արդարացի և ազնիվ բողոքին, որը նամակով հայտնել եք Ս. Պետերբուրգի կոնսերվատորիայի դիրեկ-ցիային, և իմ մեջ չեմ կարող զսպել խոր զայրույթի զգացումը՝ կապ-ված այդ բողոքի առթիվ կոնսերվատորիայից Ձեր ազատման հետ. ամոթալի փաստ ազատողների համար, անհավատալի ու չլսված»[117]:

Փետրվարյան հեղափոխությունից հետո Սպենդիարյանը Սու-դակում հասարակական լայն գործունեություն է ծավալում, կանգնե-լով ժողովրդական լայն զանգվածների շահերի պաշտպանության դիրքերում: Սուդակի սովետը նրան նշանակում է լուսավորության հանձնաժողովի նախագահ, իսկ մի փոքր հետո Սպենդիարովը գլխավորում է արվեստի աշխատողների Թեոդոսիայի բաժանմունքի Սուդակի քարտուղարությունը: Սերտ կապը կոմիսար Վ. Վ. Օրլով-սկու (հետագայում սովետական բանակի գեներալ) հետ Ալ. Սպեն-դիարյանին հնարավորություն է տալիս հիմնելու երաժշտական ստուդիա: Քաղաքացիական կռիվների տարիներին Սպենդիարյանը հասարակական աշխատանք էր կատարում նաև Յալթայում ու Թեո-դոսիայում:

1924 թվականին իրականանում է կոմպոզիտորի նվիրական իղձը: Սովետական Հայաստանի կառավարության հրավերով նա տեղափոխվում է Երևան և ամբողջությամբ լծվում ազգային երա-ժըշտական կուլտուրայի և նրա օջախների ստեղծման ու զարգաց-ման գործին: Ալ. Սպենդիարյանի գործունեության այս շրջանը, իրոք, խոշոր նշանակություն ունեցավ սովետահայ երաժշտական մշակույ-թի զարգացման համար: Մյուս կողմից, հարազատ ժողովրդի գրկում կոմպոզիտորը ստեղծեց ինքնատիպ, իսկական ժողովրդական շատ ու շատ գործեր:

1926 թվականին Սովետական Հայաստանի հասարակայնու-թյունը լայնորեն նշեց Ալ. Սպենդիարյանի երաժշտական-հասարա-կական գործունեության 25-ամյակը: Նրան շնորհվեց Հանրապետու-թյան ժողովրդական արտիստի պատվավոր կոչումը: Ստեղծագործա-կան կյանքի ամենաեռուն շրջանում 1928 թվականի մայիսի 7-ին կտրվեց կոմպոզիտորի կյանքի թելը: Բայց նրա գործն ու անունը ան-

117 Մարիետա Սպենդիարովա, նշվ. աշխ., էջ 94:

մոռաց են: Հայ ժողովուրդը բարձր է գնահատում իր տաղանդավոր ու արժանավոր զավակի ծառայությունը. հայկական երաժշտական մշակույթի ամենախոշոր օջախներից մեկը՝ Երևանի օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնը կրում է նրա անունը:

Հայ երաժշտությանը մատուցած ծառայության տեսակետից դժվար է գերագնահատել մեկ այլ ղրիմահայի՝ Քրիստափոր Կարա-Մուրզայի* դերը: Կարա-Մուրզան ծնվել է 1854 թվականին, Ղարասուբազար քաղաքում, կարիքավոր ընտանիքում: Այդ էր հենց պատճառը, որ չնայած իր ցանկությանը՝ հայրը չկարողացավ Քրիստափորին կանոնավոր կրթության տալ: Գիղարվեստի հետ ունեցած իր առաջին շփումների համար Կարա-Մուրզան պարտական էր այն ներկայացումներին, որ կազմակերպվում էին իրենց քաղաքի Մխիթարյան վարդապետների գլխավորած դպրոցում, ինչպես նաև երաժշտական ու դրական-թատերական բավականին կենդանի միջավայրին, որի նախաձեռնողները քաղաքի հոգևոր հովիվ Վրթանես Պոտուրյանցը և Խանբեկյան ու Նալբանդյան ընտանիքներն էին: Նախնական կրթությունը Կարա-Մուրզան ստանում է հենց Պոտուրյանցի դպրոցում, ուր առանձնակի ընդունակություններ է դրսևորում երաժշտության բնագավառում: Փոքր հասակում նա սովորում է ոչ միայն դաշնամուր նվագել, այլև նոտաներ գրել ու կարդալ: Իղուր էր հայրը ջանում նրան մղել առևտրական գործունեության և հաշվապահության սովորելու համար ուղարկում Օդեսա: Երիտասարդ հասակից Քրիստափորը նվիրվում է երաժշտությանը, մասնավոր դասեր առնում, ծանոթանում երաժշտության տեսությանը:

Երաժշտական գործունեության առաջին քայլերը Կարա-Մուրզան անում է Ղարասուբազարում: Մինչև 1882 թվականը նա այստեղ քառաձայն խմբեր էր կազմակերպում և համերգներ տալիս: Սակայն այլ էր նրա նպատակը, որը հանգում էր ոչ միայն հայկական ժողովրդական և հոգևոր երգերի հավաքմանն ու ձայնագրմանը, այլև դրանց քառաձայն կատարմանը: Հայկական երաժշտության մեջ բազմաձայնության արմատավորման հարցը, որ առաջին անդամ առաջ քաշեց Կարա-Մուրզան, թեև այն ժամանակ ազգային երաժշտության հետագա զարգացման արմատական պահանջներից

* Ք. Կարա-Մուրզայի կյանքի ու գործունեության համակողմանի լուսաբանումը տրված է Մ. Հ. Մուրադյանի «Քրիստափոր Կարա-Մուրզան և բազմաձայնության արմատավորումը հայ երաժշտության մեջ» մենագրության մեջ (Երևան, 1956 թ):

էր, լուծվում էր, սակայն, մեծ դժվարություններ հաղթահարելու գնով:

Կարա-Մուրզան գիտակցում էր, որ ազգային երաժշտական լայն գործունեության, մասնավորապես իր ծրագրած նպատակների իրականացման համար սոսկ ղրիմահայ միջավայրով չի կարելի սահմանափակվել: 1882 թվականին նա գալիս է Թիֆլիս և իր պլաններին ծանոթացնում Գրիգոր Արծրունուն, Գամառ-Քաթիպային, Րաֆֆուն, Մերենցին: Քաջալերված վերջիններից, նա ձեռնամուխ է լինում իր նպատակների իրականացմանը: Կարա-Մուրզան շրջում է Կովկասի հայկական շրջաններում, կազմում քառաձայն երգչախմբեր, համերգներ տալիս, գրի առնում ժողովրդական ու եկեղեցական երգեր, ստեղծում սեփական երաժշտական գործեր: Տասնյոթ տարվա ընթացքում (1885 թվականից մինչև իր մահը՝ 1902 թվականը) Կարա-Մուրզան 47 քաղաքներում կազմել է 90 երգչախումբ (ամեն մի խումբ միջինը բաղկացած էր 40—150 երկսեռ անձից), տվել 248 համերգ, գրել ու մշակել է 320 երգեր, հորինել 67 ինքնուրույն գործեր[118]: Նա համերգներով հանդես է եկել Թիֆլիսում, Բաքվում, Ալեքսանդրապոլում, Երևանում, Էջմիածնում, Ատրպատականում, Ղրիմում, Նոր Նախիջևանում, Կ. Պոլսում, հայաշատ գյուղական շրջաններում և այլուր:

Իր նպատակին հասնելու համար Կարա-Մուրզան օժտված էր ֆանատիկ նվիրվածությամբ. նրա գործունեությունը կանխել չկարողացան ոչ նյութական ծանր զրկանքները, ոչ էլ հայ հոգևոր դասի հետամնաց ներկայացուցիչների բանսարկությունները, որոնց ճնշման տակ նա հեռացվեց Էջմիածնից, ուր ճեմարանում դասեր էր տալիս, իսկ եկեղեցում դեկավարում էր իր կազմած քառաձայն երգչախումբը: Հետամնաց կղերը, Աղվանյան եպիսկոպոսի գլխավորությամբ, Կարա-Մուրզային հեռացնելու պահանջը «հիմնավորում է» այն անմիտ «պատճառաբանությամբ», թե «աստված մեկ, ձայնն էլ մեկ պետք է լինի», որ «քառաձայնը աստծուն հաճելի չէ»[119]: Էջմիածնից հեռանալով, Կարա-Մուրզան, սակայն, չընդհատեց բուռն և արդեն մեծ արդյունքների հասցրած գործը, թեև նյութական աննպաստ պայմանները հաճախ այն աստիճան էին նեղում, որ երբեմն ստիպում էին քաղցած պահեր տալ: Նա շարունակում էր շրջագայությունները, համերգներն ու ստեղծագործական աշխատանքը:

118 Հ. Կարապետյան, Քրիստափոր Կարա-Մուրզա, Թիֆլիս, 1904, էջ 98:
119 Ն. Թեոլեմեզյան, Քրիստափոր Կարա-Մուրզա, Վիեննա, 1925, էջ 34:

Կարա-Մուրզայի գործունեության և ժառանգության արժանիքը ոչ միայն այն է, որ նա առաջինը սկսեց հայկական ժողովրդական երգերի հավաքման, ձայնագրման ու քառաձայն մշակման գործը, այլև այն, որ դրաղվեց դրանց լայն պրոպագանդմամբ, ժողովրդական երգերի մասսայականացմամբ, հիմք դրեց հայկական համերգային կուլտուրային և դրանով էլ «երաժշտությանը հաղորդեց հասարակական-քաղաքական ազդեցության մեծ ուժ և վերածեց ժողովրդի գեղարվեստական դաստիարակության հզոր աղդակի»[120]:

Ղրիմահայության միջից ծնվեց հայ առաջին կոմպոզիտորներից մեկը՝ Անդրեաս Քաղցածյանը: Նա առաջին հայ արվեստագետներից էր, որոնք մեր իրականության մեջ ներմուծեցին նոտագրելու և երաժշտություն հորինելու արվեստը: Քաղցածյանը ծնվել է Ղարասուբազարում, 1809 թվականին: Նա հատուկ երաժշտական կրթություն չէր ստացել, սակնք այդպիսի երաժշտական հաստատություններ այն ժամանակ Ղրիմում չկային: Երաժշտության մեջ առաջին քայլերը նա անում է նախ՝ սրինգի վրա նվագելով և ապա մասնավոր մարդկանց մոտ երաժշտության դասեր առնելով, մարդիկ, որոնց գիտելիքները այդ բնագավառում խիստ սահմանափակ էին:

Քաղցածյանների ընտանիքը ապրում էր սուղ պայմաններում, և այդ պատճառով էլ, Ղարասուբազարի հայկական դպրոցն ավարտելուց հետո, ընդունակ և բանիմաց Անդրեասը ստիպված էր մասնավոր դասեր տալ՝ հոգալու համար ընտանեկան կարիքները: Նոտագիր մի պոլոնեզ կարդալու և եղանակը պարզելու համար (մի բան, որ չեն կարողանում անել քաղաքի երաժիշտները) Անդրեասին վարժապետ անունն են կնքում, և ամբողջ կյանքում այդպես էլ Քաղցածյանը կրեց Անդրեաս վարժապետ անունը: Կարախ Պողովիչը իր երեխաների տաղանդավոր դաստատու երիտասարդ Անդրեասին դաշնամուր է նվիրում. դա առհասարակ առաջին դաշնամուրն էր Ղարասուբազարում[121]:

XIX դարի առաջին տասնամյակներին ղրիմահայ վաճառականները, մանավանդ կաթոլիկ, շարունակում էին սերտ կապեր պահպանել նախկին լեհական շրջանների հետ, ուսկից կղերը, կաթոլիկական մոլեռանդության հետ մեկտեղ, Ղրիմի հայկական գաղութն էր ներմուծում նաև եվրոպական մշակույթի նշխարներ: Անդրեաս Քաղցածյանի իսկ խնդրանքով ղրիմահայ կաթոլիկների առաջնորդ

120 Մ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 7:
121 «Բազմավեպ», 1881, էջ 40—41:

Մինաս վրդ. Բժշկյանը 1842 թվականին նրան ուղարկում է Բերդիչև քաղաքը՝ երաժշտություն ուսանելու: Այստեղ կաթոլիկ վանահոր հսկողությամբ և երաժշտագետներ Ռեկուլսկու և Մարզովսկու ղեկավարությամբ[122] նա երաժշտական կրթություն է ստանում և երկու տարի հետո վերադառնում Ղրիմ, ուր երաժշտական-մանկավարժական լայն գործունեություն է ծավալում Ղարասուբազարում, Սևաստոպոլում և Սիմֆերոպոլում, դառնալով թերակղզում ամենից ավելի համբավավոր երաժիշտներից մեկը: Քաղցածյանի երաժշտական գործունեության վարակիչ օրինակը, թերևս, այն խթաններից մեկն էր, որ Ղրիմում երաժշտության հայտնի դասատուներից շատերը նրա հայրենակից ղարասուբազարցիներից էին: Վերջիններիս շարքը կարելի է դասել Հովակիմ և Միքայել Ուղունյաններին, Գաբրիել, Մելքոն և Մարտիրոս Նալբանդյաններին, Կարապետ Խանբեկյանին, Քրիստափոր Կարա-Մուրզային, Հովհ. Մաիլյանին և ուրիշների, որոնք ժամանակին երաժշտական-մանկավարժական ճանաչված գործիչներ էին Սիմֆերոպոլում, Կերչում, Ղարասուբազարում, Թեոդոսիայում, Արմյանսկի-Բազարում[123]:

Կենդանության օրոք Ա. Քաղցածյանը տպագրված տեսավ իր ստեղծագործություններից միայն մեկը՝ «Սինոպի քայլերգ»-ը, որը նվիրված էր ծովակալ Նախիմովին՝ թուրքական նավատորմի նկատմամբ Սինոպում տարած հաղթանակի առթիվ, և որը կատարվեց հեղինակի ղեկավարությամբ, երբ ծովակալը հաղթանակով մտնում էր Սևաստոպոլի նավահանգիստը: Այդ ժամանակ Քաղցածյանը այնտեղ վարում էր ղինվորական նվագախմբի ղեկավարի պաշտոնը: Կյանքի վերջին տարիներին Քաղցածյանն ապրում էր Սիմֆերոպոլում, որտեղ և մահացավ 1856 թվականին:

Երաժշտական արվեստին ղրիմահայության տված անվանի գործիչների մասին խոսելիս պատշաճը պետք է համարել Հովհաննես Նալբանդյանին, մի երաժիշտ-կատարողի, որը համառուսական և համաշխարհային հռչակի էր հասել իր կատարողական արվեստով և մանկավարժական գործունեությամբ: Նալբանդյանը ծնվել է Սիմֆերոպոլում, 1871 թվականին, երաժշտասեր ընտանիքում, հանգամանք, որը սակավ դեր չի խաղում տաղանդավոր երեխայի ապագան կողմնորոշելու խնդրում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի հայկական դպրոցում: Ութ տարեկան հասակում Նալբանդյա-

122 «Բազմավեպ», 1881, էջ 42:
123 Նույն տեղում, էջ 43:

նը երաժշտության դասեր է առնում սիրող-ջութակահար Մաիլյանի մոտ, ապա աշակերտում է Ֆիլհերկովսկուն։ Տասնմեկ տարեկան հասակից Հովհաննեան սկսում է համերգներ տալ Սիմֆերոպոլում, Թեոդոսիայում, Սևաստոպոլում և Ղրիմի այլ քաղաքներում։

1886 թվականին տեղական արտիստական ուժերի նյութական աջակցությամբ Նալբանդյանը մեկնում է Պետերբուրգ և ընդունվում կոնսերվատորիա։ Այստեղ նա աշակերտում է Ն. Գալկինին, որը նրան համարում էր «մեծ տաղանդ» և ապա՝ հռչակավոր ջութակահար, պրոֆեսոր Լ. Աուերին։

Հենց սկզբից Նալբանդյանը նյութական ծանր դրության մեջ է ընկնում։ Պետք էր վճարել տարեկան 200 ռուբլի ուսման վարձ։ Նրան օգնության են հասնում «Հայ ուսանողների հայրենակցական ընկերության» անդամները։ Շուտով նրա դրությունը համեմատաբար բարվոքվում է. կոնսերվատորիայի դիրեկտոր Ռուբինշտեյնը, տեսնելով Նալբանդյանի տաղանդը, նրան ազատում է ուսման վարձից և դարձնում թոշակառու ուսանող։

1894 թվականին Նալբանդյանը, ութ տարի ուսանելուց հետո, փայլուն կերպով ավարտում է կոնսերվատորիան և աշնանը Աուերի միջամտությամբ ու Պետերբուրգի թատրոնների նյութական օժանդակությամբ գործուղվում է Բեռլին՝ խոշորագույն վարպետ Իոախիմի մոտ կատարելագործվելու։ Արտասահմանից Նալբանդյանը վերադառնում է Պետերբուրգ՝ իր արվեստը առավել կատարելագործած։ Անգլիայում նա ծանոթացել էր նաև աշխարհահռչակ Սարասատեի հետ, որը Նալբանդյանի մեջ տեսել էր «վիրտուոզ ջութակահարի հիանալի տաղանդ»[124]։

1895 թվականից Աուերի հրավերով Նալբանդյանը անցնում է մանկավարժական աշխատանքի Պետերբուրգի կոնսերվատորիայում, որի պրոֆեսորներից էր 1908 թվականից մինչև իր կյանքի վերջը։ Նրան են աշակերտել այնպիսի մեծատաղանդ ջութակահարներ, ինչպիսիք են Յա. Խեյֆեցը, Մ. Էլմանը, Ե. Յոմբալիստը, Պ. Կեռլինը, Մ. Պիաստրոն, Ա. Լուկաշևսկին, Ա. Կոգանը և ուրիշներ, անուններ, որոնցից շատերը համաշխարհային հռչակ են վաստակել։

Մանկավարժական աշխատանքը ամենևին չընդհատեց նրա՝ իբրև ջութակահար-կատարողի գործունեությունը, որը, լայն ճանաչում գտնելով տակավին անցյալ դարի վերջերին, գնալով մեծ հռչակ

124 Գ. Գևորգյան, Հովհաննես Նալբանդյան, Երևան, 1968, էջ 44(Գ. Գևորգյանը հանգամանորեն լուսաբանել է Հ. Նալբանդյանի կյանքն ու գործը)։

էր բերում Նալբանդյանին և նրան դասում աշխարհի խոշորագույն ջութակահարների շարքը։ Նրա արտասահմանյան համերգները (1911 և 1914 թվականներին) արժանանում են մամուլի և հասարակայնության ամենաբարձր գնահատականին։

Նալբանդյանը մեծապես կապված էր հայ իրականության հետ։ Նրա ամենամտերիմ ընկերներից ու բարեկամներից էր Ա. Սպենդիարովը, մտերիմ ծանոթներից էին Պետերբուրգի կոնսերվատորիայի պրոֆեսոր Օ. Քալանթարովան, Կարա-Մուրզան, բժիշկ Վարանովը (Պետերբուրգի կանանց բժշկական ինստիտուտի դիրեկտոր), երգիչ Շահմալյանը, նկարիչներ Հ. Այվազովսկին ու Գ. Բաշինջաղյանը և ուրիշներ։ Նալբանդյանը «Պետերբուրգի հայ ուսանողների հայրենակցական ընկերության» կազմակերպած համերգների մշտական մասնակիցն էր, իսկ հետագայում նա մեծ եռանդով ու ցանկությամբ համերգներով հանդես էր գալիս հայկական շրջաններում (Թիֆլիսում, Բաքվում, Ղրիմում, Ալեքսանդրապոլում և այլ վայրերում)։ Իբրև հայրենասեր գործիչ՝ նա մասնակցում է հայ գաղթականներին ցույց տրվող օգնությանը։ 1928 թվականին այցելելով Սովետական Հայաստան, Նալբանդյանը ծանոթանում է Երևանի կոնսերվատորիայի վիճակին և իր գրավոր ու բանավոր խորհուրդներով օգնում սովետահայ կուլտուրայի զարգացմանը։

Ողջունելով Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը, Նալբանդյանը մեկն էր այն հին մտավորականներից, որոնք առանց երերալու լծվեցին սովետական կուլտուրայի զարգացման գործին։ Պրոֆ. Բ. Ստրուվեի խոսքերով ասած՝ նա, «որպես երկու ժամանակաշրջանների ներկայացուցիչ, հանդիսացավ այն կարևորագույն օղակներից մեկը, որը Աուերի ստեղծած ռուսական ջութակային դպրոցը կապեց սովետական կատարողական արվեստի հետ»[125]։

Բարձր գնահատելով սովետական երաժշտական կուլտուրային Նալբանդյանի մատուցած ծառայությունները, սովետական կառավարությունը 1926 թվականին նրան շնորհում է ՌՍՖՍՀ վաստակավոր արտիստի, իսկ 1937 թվականին՝ արվեստի վաստակավոր գործչի կոչում։ Հ. Նալբանդյանը մահացավ 1942 թ., Տաշքենդում. այստեղ նա էվակուացվել էր պատերազմի սկզբին, Լենինգրադի կոնսերվատորիայի հետ միասին։

Վերը նշեցինք միայն դեղանկարչական և երաժշտական արվեստի ներկայացուցիչներին, որ ավել է ղրիմահայ գաղութը։ Բայց Ղրիմ-

125 Գ. Գևորգյան, նշվ. աշխ., էջ 9։

մի հայկական գաղութից ելած կամ այնտեղ աշխատած մշակութային գործիչների ցուցակը սրանցով չի սահմանափակվում։ 19-րդ դարում Ղրիմում էին գործում հայագիտության աշքի ընկնող ներկայացուցիչներ, ի թիվս որոնց՝ Մ. Բժշկյանն ու Ք. Քուշներյանը։

Մ. Բժշկյանի գործունեությունը Ղրիմում սկսվում է անցյալ դարի 20-ական թվականներից և ընդգրկում գրեթե մինչև 40-ական թվականների վերջերը։ Մինչև Ղրիմ գալը (նա ծնվել էր Տրապիզոնում, 1777 թվականին) Բժշկյանն արդեն ճանաչված հայագետ էր և մի քանի աշխատությունների հեղինակ, աշխատություններ («Հմտություն Թիւն մանկանց», «Պատմութիւն Պոնտոսի», «Վարժութիւն մանկանց» և այլն), որոնցից շատերը արժանացել էին մի քանի հրատարակությունների, իսկ Կ. Պոլսում աշխարհաբարով գրած և իր իսկ աշակերտների միջոցով բեմադրած թատերգություններով Մ. Բժշկյանը փաստորեն հանդես էր եկել որպես հայ նոր թատրոնի ու թատերգության հիմնադիրներից մեկը[126]։

Ղրիմում եկեղեցական ու կրթական աշխատանքը Բժշկյանը զուգակցում է գիտական գործունեության հետ։ Համատեղելով ռուսերենի մեջ, նա կազմում է «Քերականութիւն ռուսերէն-հայերէն» (1828), «Քերականութիւն հայկազեան լեզուի բացատրեալ ի ռուսաց բարբառ» (1840), «Քերականութիւն բազմալեզու» (1844)։ Ղրիմում է Բժշկյանը գրում իր ամենանշանավոր աշխատությունը՝ «Ճանապարհորդութիւն ի Հնդաստան եւ յայլ կողմանս բնակեալս ի հայկազանց», որը մինչև օրս էլ պահպանում է իր բազմակողմանի գիտական արժեքը։ Բժշկյանը մահացել է 1851 թվականին, Վենետիկում, Մխիթարյանների վանքում, ուր նա վերադարձել էր մի քանի տարի առաջ Ղրիմից։

Նշանավոր հայագետ էր նաև Քերովբե Քուշներյանը։ Նա ծնվել է Ղարասուբազարում, 1841 թվականին։ Վենետիկի Մխիթարյանների մոտ ուսանելուց հետո Քուշներյանը 1865 թվականին վերադառնում է Ղարասուբազար և եկեղեցական պաշտոնավարությանը զուգընթաց (1871 թվականից նա Տավրիկյան նահանգի բոլոր հռոմեա-կաթոլիկական եկեղեցիների դեկանն էր) գիտական ու գրական բեղմնավոր աշխատանքներ է կատարում։ Նա գիտնական-հայագետ էր, գրականագետ և թարգմանիչ։

Վենետիկից հայրենիք վերադառնալուն պես Քուշներյանը կապ-մակերպում է ծխական դպրոց, որը տեղացի հայերի մեջ բարի համբավ էր վայելում։ Քուշներյանին մանավանդ հետաքրքրում էր Ուկրաինայի, Ղրիմի և Մոլդավիայի հայ գաղթականությունների պատմությունը։ 1877 թվականին նա ծավալուն մի հոդված է հրատարակում «Տավրիկյան թերակղզու հայկական հնություններր» վերնագրով[127]։ Ավելի ուշ, 1895 թվականին Վենետիկում եամահու լույս տեսավ Ք. Քուշներյանի «Պատմութիւն գաղթականութեան Խրիմու հայոց» գրքույկը, որը մինչև օրս էլ չի կորցրել իր թարմությունը։ Քուշներյանը պատմության և հնությունների Օդեսայի կայսերական ընկերության թղթակից-անդամներից էր։ Նա տիրապետում էր բազմաթիվ լեզուների, զբաղվում թարգմանություններով։ Քուշներյանը, մասնավորապես, թարգմանություններ է կատարել Կոխլովի, Պուշկինի, Լերմոնտովի և Շևչենկոյի գործերից։ Քուշներյանը մահացավ 1891 թվականին Ղարասուբազարում։

Վերևում նշված աշքի ընկնող գործիչներին զուգընթաց XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբներին Ղրիմում գրական-հրատարակչական և կրթական նշանակալից գործունեություն էին ծավալել Հ. Տեր-Աբրահամյանը, Տեվլեթյանը, Ս. Տիգրանյանը, Խ. Ստեփանեն, Պ. Թումանյանը, Հ. Սուրխաթյանը, Դոդոխյանը և ուրիշներ, գործիչներ, որոնք նշված ժամանակահատվածի տարբեր տարիներին թափ ու եռանդ էին հաղորդում ղրիմահայության նոր շրջանի մշակութային կյանքին։

126 Մ. Պատուրյան, Հայ հանրագիտակ, Պուքրեշտ, 1938։

127 ЗООИД, т. 10, 1877.

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ա. ՁԵՌԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

ա) Հայկական ՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվ (ՊԿՊԱ):

Ֆոնդ 56, էջմիածնի լուսավորչական հայոց սինոդ, թ. 42, վ. 38, թ. 69, վ. 38, թ. 87, վ. 8; ֆոնդ 57, Ամենայն հայոց կաթողիկոսական դիվան, ց. 2, գգ. 1046, 2028, 2110; ֆոնդ 139, Նոր Նախիջևանի հայկական մագիստրատ, ց. 1, գգ. 85, 1465, 1777; ֆոնդ 227, «Մշակի» խմբագրություն, ց. 1, գ. 31, ց. 3, գ. 195:

բ) Հայկական ՍՍՀ Մինիստրների Սովետին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ (Մատենադարան):

1. Ձեռագրեր № 2940, 4587, 8916;

2. Մատենադարանի արխիվ:

Ֆոնդ Կաթողիկոսական դիվան, թ. 6, վ. 56, թ. 8, վ. 18, թ. 9, վվ. 41, 60, 96, 109, 113, 126, 147, թ. 10, վվ. 6, 11, 15, 25, 46, 47, թ. 11, վ. 89, թ. 18, վվ. 49, 51, 52, 53, 54, 55, 58, 132, թ. 23, վվ. 165, 135, թ. 24, վ. 5ա, թ. 25, վ. 89, թ. 28, վ. 140, թ. 29, վվ. 2, 73, 132, թ. 31, վվ. 26, 302, 329, թ. 38, վվ. 184, 187, 185ա, 185բ, 189, 195, թ. 42, վ. 160, թ. 45, վ. 182, 196, թ. 51, վվ. 102, 106, 107, թ. 53, վ. 158, թ. 59, վ. 531, թ. 71, վ. 246, թ. 72, վ. 407, թ. 74, վ. 336, թ. 77, վ. 507, թ. 82, վ. 170բ, թ. 86, վվ. 323ա, 323դ, 324ա, թ. 89 վվ. 222, 237բ, թ. 91, վ. 134, թ. 101ա, վ. 33, թ. 102, վվ. 8, 29, 32, թ. 103, վ. 241, թ. 105, վվ. 232, 279, թ. 107բ, վ. 63, թ. 108, վ. 408, թ. 110, վվ. 178, 180, թ. 111, վ. 564:

Անհատական անձանց ֆոնդ, թ. 25, վ. 62, թ. 30, վ. 12, թ. 88, վ. 5, թ. 102, գ. 4, վվ. 168, 174, 180, թ. 105, գ. 11, վվ. 79, 130, 131, 136, 140, թ. 107, գ. 44, վվ. 125, 241, 322, թ. 111, գ. 36, վ. 119, թ. 114, գ. 49, վվ. 54, 82, թ. 117, վվ. 20, գ. 52, թ. 126, վվ. 257, 431, 455, 460, 467, թ. 132, վվ. 139, 156, 177, 195, 222 I, 222 III, 222 VI, 231, 232, 280 I, 296 III, թ. 150, վվ. 29ա-գ, 114, 115, թ. 154, վվ. 20, 22, 29, 34, թ. 167, վ. 56, թ. 205, վ. 1300, թ. 207, վ. 2010, թ. 232, վ. 85, 86:

գ) *Центральный Государственный исторический архив СССР. Фонд 13,* Департамент министра коммерции, оп. 1, д. 28, оп. 2, д. 850, 1804 г. *Фонд 383,* Первый департамент МГИ, оп. 29, д. 188. *Фонд 398,* Департамент земледелия, оп. 81, дд. 4, 331, 854, 857, 858, 864, 878, 883, 1006, 1016, 1027, 1048. *Фонд 821,* оп. 6, дд. 34, 418, 504, 561; оп. 67, дд. 95, 96, 97; оп. 70, д. 102; оп. 125, дд. 506, 509, 511, 2434; оп. дд. 17, ч. 1, д. 30, 35, чч. II—XVIII; оп. 140, отдел III, дд. 24/3136, ч. I—II, 32/3031, 33/3032, чч. I—III, 50/3054, 55/3166, чч. I—IV. *Фонд 880,* Абамелик-Лазаревы, оп. 5, дд. 33, 34, 108, 235, 386, 387, 389, 396. *Фонд 994,* оп. 2, д. 1583. *Фонд 1149,* Департамент законов, 1835 г., д. 21, 1861 г., д. 39. *Фонд 1152,* Департамент экономии, 1836 г., д. 76, 1840 г., д. 129, 1852 г., д. 17, 1882 г., д. 479, 1897—1898 гг., д. 494; *Фонд 1263,* оп. 1, дд. 23, 1054. *Фонд 1281,* оп. 4, дд. 15, 36, 49; оп. 2, дд. 159, 162; оп. 11, дд. 160, 161. *Фонд 1286,* Департамент полиции исполнителей, оп. 1, дд. 14, 46, 49, 72, 251, 284, 293; оп. 3, д. 35; оп. 4, дд. 217, 411, 672, 677. *Фонд 1305,* Крымская комиссия, оп. 1, дд. 1, 2. *Фонд 1307,* Комитет для устроения Новороссийской губернии, оп. 1, дд. 17, 36. *Фонд 1343,* О дворянстве, оп. 16, дд. 656, 657, 657а; оп. 49, д. 10. *Фонд 1374,* Департамент генерал-прокурора, оп. 1, дд. 25, 32, 55, 68, 154, 197, 198, 318, 605; оп. 2, дд. 1815, 1719; оп. 3, дд. 1790, 2489.

դ) *Центральный Государственный архив древних актов (ЦГАДА). Фонд 1252,* Абамелик-Лазаревы, дд. 392, 395, 402, 424, 471, 528.

ե) *Архив внешней политики России. Фонд Главный архив У-Бз,* дд. 232 (1824 г.), 256 (1827 г.), 259 (1829 г.). *Фонд Главный архив П-3,* д. 4 (1826—1829 гг.), д. 1 (1840 г.). *Фонд Главный архив П-12,* д. 2 (1845 г.). *Фонд Главный архив П-19,* д. 1 (1820 г.).

զ) *Центральный Государственный военно-исторический архив СССР* (ЦГВИА СССР). *Фонд МА,* св. 1, оп. 258, д. 4; св. 9, оп. 273, д. 34. *Фонд 2,* оп. 281, д. 22; *Фонд 52,* оп. 1/194, д. 336, ч. III, д. 396; *Фонд ВУА,* дд. 2802, 5584.

է) *Центральный государственный архив военно-морского флота* (ЦГАВМФ). *Фонд 19,* оп. 2, д. 209. *Фонд 212,* Указы I отдела, д. 47; Указы II отдела, дд. 65, 66; указы III отдела, д. 39; *Фонд 212,* Дела по годам, д. 30, 1742 г. *Фонд 233,* оп. 1, дд. 19, 54, 189, 204, 216, 222а, 226, 228, 257, 259.

ը) *Крымский областной государственный архив* (Крымоблархив). *Фонд 24,* Комиссия для разбора споров по землям, оп. 1, дд. 11, 57, 199, 300; оп. 3, д. 1. *Фонд 26,* Канцелярия таврического губернатора, оп. 1, д. 5583. *Фонд 27,* Таврическое губернское правление, оп. 1, дд. 1355, 7131, 7191. *Фонд 45,* Канцелярия феодоссийского градоначальника, оп. 1, дд. 44, 590, 945. *Фонд 54,* Симферопольская мещанская управа, оп. 1, д. 14. *Фонд 63,* Симферопольская городская управа, оп. 1, дд. 328, 422, 442. *Фонд 67,* Старокрымская армянская городская ратуша, оп. 1, дд. 6, 7, 8, 10, 17, 28, 35, 39, 54, 56, 58, 77, 78, 79, 88, 103, 109, 115, 141, 143, 236, 254, 290, 314, 336, 337, 350, 359, 383, 454, 493, 517, 647, 799, 803, 1339, 1517, 1523, 1689, 1735, 1758. *Фонд 169,* Карасубазарская городская дума, оп. 1, дд. 5, 96; *Фонд 179,* Карасубазарский римско-католический (армяно-католический) суд, оп. 1, дд. 32, 59, 62, 138, 139, 157, 161, 203, 223, 226, 246, 249, 253, 263, 275, 289, 291, 320, 322, 324, 326, 329, 333, 338, 340. *Фонд 183,* Симферопольская городская дума, оп. 1, дд. 182, 417. *Фонд 706,* Таврическое губернское жан-

дармское управление, оп. 1, дд. 203, 291, 411, 416. *Фонд 799,* Таврическое областное правление, оп. 3, дд. 8, 13. *Фонд 801,* Екатеринославский и таврический генерал-губернатор, оп. 1, д. 17.

р) *Государственный архив Одесской области. Фонд 1,* оп. 191, д. 33, 1832 г.; оп. 219, д. 4, 1816 г., д. 10, 1823 г., оп. 221, д. 2, 1805 г. *Фонд 8,* оп. 1, д. 23. *Фонд 11,* оп. 1, дд. 58, 79.

Բ. ՏՊԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

ա) Հայերեն

Բժշկեան Մ., *«Ճանապարհորդութիւն ի Ղրիմաստան եւ յայլ կողմանս բնակեալս ի հայկազանց...»,* Վիեննաիկ, *1836:*

«Գեղարվեստական ալբոմ Հ. Կ. Այվազովսկու հիշատակին», Ս. Պետերբուրգ, 1903:

«Դիւան հայոց պատմութեան», գիրք Թ, Թիֆլիս, 1911, նույնը, գիրք ԺԲ, 1917:

Հարությունյան Գ., *Վավերագրեր և նյութեր Հովհաննես Այվազովսկու վերաբերյալ, ՀՍՍՀ ԳԱՄ Արխիվային վարչության «Դիտա-ինֆորմացիոն բյուլետեն». № 1 (8), Երևան, 1958:*

Պողոսյան Մ., *Հայ Հանրագիտակ, Պուրբերշտ, 1938:*

բ) Ռուսերեն

«Айвазовский. Документы и материалы», Ереван, 1967.

«Археологические разыскания в южной России по отчетам Императорской археологической комиссии», ЗООИД, т. VI.

«Ведомость о состоящих в городе Каффе жилых домов, поступивших под квартиры полкам...», ЗООИД, т. V.

«Всекрымская армянская беспартийная конференция», Симферополь, 1926.

«Иван Константинович Айвазовский», «Русская старина», тт. XXI—XXIV, 1878.

«Иван Константинович Айвазовский», ИТУАК, № 55.

Меликсет-Беков Л., Из материалов для истории армян на юге России, ЗООИД, т. 29, отд. II.

«Ордер господину колежскому советнику, правящему должность вице-губернатора Таврического и кавалеру Габлицу», ИТУАК, № 13.

«Отношение графа Зубова правителю Таврической губернии» от 30 IV 1794 г., ИТУАК, № 25.

«Первая всеобщая перепись населения Российской империи, 1897 г.», XLI, Таврическая губерния, СПб., 1904.

«Письма о Крыме, об Одессе и Азовском море», М., 1810.

«По поводу столетнего юбилея присоединения Крыма», Симферополь, 1883.

«Приложение к всеподданнейшему отчету о состоянии Таврической губернии за 1892—1901 гг.», Симферополь, 1893—1902.

«Распоряжения (ордера) светлейшего князя Потемкина Таврического», ЗООИД, т. XV.

«Сборник статей по экономике, быту и истории Феодосийского района», вып. 1, Симферополь, 1831.

«Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа», т. I, М., 1833.

«Статистический справочник Таврической губернии», составил Ф. Н. Андриевский, вып. I—VIII, Симферополь, 1915.

Գ. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

ա) Հայերեն

«Արարատ», ամսագիր, Էջմիածին, № 6, 1868, №№ 7—10, 1872:

«Արշալույս», լրագիր, Կահիրե, № 54, 1906:

«Բազմավէպ», հանդես, Վիեննաիկ, 1888 թ. (էջ 40—41), № Ա, 1880 թ., №№ 11—12, 1904 թ., № 3, 1929:

«Բանբեր Հայաստանի արխիվների», № 1, Երևան, 1967:

«Գաւառական», ամսագիր, Թեոդոսիա, № 1—5, 1873:

«Հայրենիք», ամսագիր, Բոստոն, № 4, 1933:

«Հանդէս ամսօրեայ», Վիեննա, № 10—11, 1929 թ., № 1—5, 1931:

«Յուսիսափայլ», Մոսկվա, №№ 1—12, 1858:

«Մասյաց աղավնի», Թեոդոսիա, 1860—1865 թթ., բոլոր համարները:

«Մեղու Հայաստանի», Թիֆլիս, №№ 22, 27, 28, 36, 1880 թ.:

«Մշակ», օրաթերթ, Թիֆլիս, № 9, 1887:

«Մուրճ», ամսագիր, Թիֆլիս, № 6, 1903:

բ) Ռուսերեն

«Биржевые ведомости», 24.XII 1911 г.

«Записки Императорского общества сельского хозяйства России», Одесса, за 1847 и 1873 гг.

«Записки одесского общества любителей истории и древностей» (ЗООИД), Одесса, тт. V, VI, IX, XI, XII, XIV, XV.

«Известия Таврической ученой архивной комиссии» (ИТУАК), Симферополь, №№ 9—13, 25, 35, 37, 38, 39, 55.

«Крым», газета, Симферополь, №№ 39, 62, 64, 1889 г., №№ 37, 113 1892 г., №№ 29, 39, 1895 г., №№ 194, 196, 235, 1896 г., №№ 41, 53, 84, 123, 174, 266, 1897 г.

«Крымская почта», газета, Симферополь, за 1913—1917 гг.

«Крымский вестник», газета, за 1888—1917 гг.

«Новороссийский календарь», Одесса, на 1836—1839, 1841—1846, 1853—1855, 1857, 1863, 1868, 1872 и 1893 гг.

«Таврические губернские ведомости», газета, Симферополь, №№ 86, 88—92, 1869 г., №№ 29, 58, 59, 61, 1870 г., №№ 49, 53, 56, 61, 68, 77, 87, 1872 г., №№ 1—5, 11, 18—23, 41, 54, 61, 76, 82, 1873 г., №№ 9, 34—36, 40, 63, 66, 88, 89, 99, 1874 г., №№ 13, 19, 28, 83, 1875 г., №№ 37—47, 1884 г., №№ 50—57, 1887 г., №№ 88, 100—119, 1888 г., №№ 15—30, 1891 г.

«Таврические епархиальные ведомости», газета, Симферополь, за 1869—1890 гг.

Գ. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ա) Հայերեն

Այվազյան Գ., *Պատմություն Խալիպյան ուսումնարանին, Տփխիս, 1880:*

Բաբայան Վ., *Տավրիկյան նահանգի հայոց ուսումնարանները («Մուրճ», 1903, № 6):*

Գևորգյան Գ., *Հովհաննես Նալբանդյան, Երևան, 1962:*

Գրիգորյան Ք., *Ալեքսանդր Սպենդիարով, Երևան, 1952:*

Երկանյան Վ., *Հայ պղոցը և ցարիզմի քաղաքականությունը (1890-ական թվականներին), («Բանբեր Հայաստանի արխիվների», 1967, № 1):*

Թերլեմեզյան Ի., *Քրիստափոր Կարա-Մուրզա, Վիեննա, 1925:*

Խորեն վրդ. Ստեփաննե, *Խրիմու ս. Խաչ. վանքը, Ս. Պետերբուրգ, 1891:*

Կարապետյան Հ., *Քրիստափոր Կարա-Մուրզա, Թիֆլիս, 1904:*

Կարինյան Ա., *Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հատ. երկրորդ, Երևան, 1960:*

Հարությունյան Գ., *Հովհաննես Այվազովսկու տոհմի ծագումնաբանությունը և ազգանվան փոփոխումը (ՀՍՍՀ ԳԱ հասարակական բաժանմունքի «Տեղեկագիր», 1965, № 2):*

Հովհաննիսյան Ա. Գ., *19-րդ դարի 50—60-ական թվականների արևելահայ հասարակական-քաղաքական հոսանքները («Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1965, № 4 (31):*

Հովհաննիսյան Ա. Գ., *Նալբանդյանը և նրա ժամանակը, դիրք 1, Երևան, 1955:*

Մալխասյան Ա., *Հայ ծովակալները («Սովետական գրականություն», 1961, № 5):*

Մաշուր, *Քանի մը խոսք Կարասուբազարի հայոց վրայօք, Թիֆլիս, 1913:*

Մուրադյան Հ., *Հ. Քրիստափոր Կարա-Մուրզան և բամմաձայնության արմատավորումը հայ երաժշտության մեջ, Երևան, 1956:*

Սպենդիարովա Մ., *Սպենդիարով, Երևան, 1966:*

Տաւխաբյան, *Ղրիմի հայերը («Լույս», հանդես, Թիֆլիս, 1905):*

Տեր-Աբրահամյան Հ., *Պատմություն Խրիմու, Թեոդոսիա, 1865:*

Փորձնեյան Ք., *Պատմություն գաղթականության Խրիմու հայոց, Վենետիկ, 1895.*

բ) Ռուսերեն

Айвазовский И. К., Открытое письмо о Феодосии («Новое время», газета, 1889, № 4904).

Брун Ф. К., Черноморье, ч. I, Одесса, 1879.

Барсамов Н. С. Феодосия, Симферополь, 1957.

Виноградов В. К. О водоснабжении г. Феодосии в период русского владычества, Симферополь, 1885.

Гаврил, Архимандрит (Айвазовский Г.), Армяно-григоринские архиерен в Новороссии и Бессарабии (ЗООИД, т. 9).

Державин Н., Болгарские колонии Новороссийского края, Херсонская и Таврическая губернии, Симферополь, 1908.

Дживилегов А. К., Торговля на западе в средние века. СПб., 1904.

Дубровин Н. Ф., История крымской войны, ч. I, СПб., 1890.

Жильбер Ромм, Путешествие в Крым в 1786 г., Л., 1941.

Завадовский А. Заметки о Крыме, Одесса, 1883.

Завадовский А. Г. Сто лет жизни Тавриды, Симферополь, 1885.

Завадский-Краснопольский А. К., Русское царство. Крым, природа, население и особенности края, СПб., 1874.

Зенкевич Х. Х., Настоящее и прошлое Тавриды, Керчь, 1890.

Козинцев Н., Заметка о шелководстве в Крыму («Северный справочный листок», 1885, № 60).

Колли Л. П., О судьбе некоторых исторических зданий в Старом Крыму и Феодосии, Симферополь, 1903.

Колли Л. П., Херувим Кушнеров, член-корр. Одесского общества любителей истории и древностей и декан католических церквей Таврического полуострова, Одесса, 1891.

Кондораки В. Х., В память столетия Крыма, чч. I и V, М., 1883.

Кондораки В. Х. Универсальное описание Крыма, тт. I—IV, СПб., 1875.

Кунцевич Ф. П. Революция 1905—1907 гг. в Крыму, материалы, Симферополь, 1955.

Маркевич А. И., Переселение крымских татар в Турцию в связи с движением населения в Крыму, («Известия» АН СССР, Отделение гуманитарных наук, 1928 г.).

Маркевич А. И., Старокрымские древности (ИТУАК, № 17).

Муравьев-Апостол И. М., Путешествие по Тавриде в 1820 г., СПб., 1823.

Надинский П. Н., Очерки по истории Крыма, ч. I, Крымиздат, Симферополь, 1951.

Прилипко Ф. С. Старый Крым, Симферополь, 1960.

Радзевич Н., Проект наделения землей в Старом Крыму Братства искупления (ЗООИД, т. XXII).

Секиринский С. А., К вопросу о заселении Крыма в конце XVIII в. («Известия Крымского педагогического института», 1957, № 23).

Скальковский А., Армяне-католики в Новороссийском крае («Новороссийский календарь», на 1850 г.).

Скальковский А., Опыт статистического описания Новороссийского края, Одесса, 1850.

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՅԱՆԿ

Աբամելիք—*տե՛ս Լազարև Ս. Գ.*
Աբովյան Խ.—322
Աբրահամ, *առևտրական,—121*
Աբրահամ, *արքեպիսկոպոս*—49
Աբրահամ, *վրդպ.*—36
Աբրամով—65
Ադամյան Պ.—315
Ալաճալյան Ս.—221
Ակեսանդր I—49, 53, 94, 108, 109, 112, 143, 174
Ակեսանդր II—232, 289
Ալբունջի Կ. Օ.—64
Ալբունջի Օ. Պ.—64
Ալբունջիներ—135
Ալֆոնս Մարիա Լիգորի—140
Ախչաև—39
Ակոպով—120
Ամեդ, *խոջա*—100
Աղափիրյան Գր.—88
Աղվանյան, *եպիսկոպոս*—325
Ամիրյան—*տե՛ս Սյունիք*
Ամիրյան Ս. Հ.—*տե՛ս Սյունիք*
Այվազ—*տե՛ս Այվազ Գևորգ-Կոստանդին*
Այվազ Գևորգ-Կոստանդին—311
Այվազյան Գ. Կ.—*տե՛ս Այվազովսկի Գ.*
Այվազով Տ. Ի.—48, 83
Այվազովսկի Գ.—88, 146, 148, 152, 190, 200—217, 219—233, 235—246, 277, 278, 288—290, 292—294, 301—303, 305—309, 317
Այվազովսկի Հ. Կ.—136, 155, 156, 161, 194, 195, 206, 231, 249, 287, 310—320, 329
Այվազովսկի Ն. Ա.—67
Այվազովսկիներ—135, 311, 312
Անդրեաս, *եպիսկոպոս—238, 242—245*
Անտիկ Պ.—80
Աշտարակեցի Ներսես—86, 88, 144, 147, 148, 189, 194, 203, 205, 209, 216—218, 220, 229, 240, 250, 251, 315
Ապոլա Գ.—315, 318
Առավածատրյան—*տե՛ս Ապոլա Գ.*
Ավետիքով Մ.—70
Ավետով—216
Ահակչեև—96
Ահարոնազործյան Ղ. Մ.—*տե՛ս Սևբրբյակով Լ. Մ.*
Ահրոնի Գրիգոր—325
Արղության Հովսեփ—7, 16—20, 23, 24, 33, 36, 47, 89, 139, 182, 186, 192, 193
Արշարունի Հովհաննես—245
Աստե Լ.—328

Բաբաև Մ. Լ.—64
Բագրատունի—261
Բախշիսարայցև Գ. Խ.—63
Բախտիյար—121
Բահաբյան Ա. Ա.—190, 258, 259
Բահաբյան Վ. Ա.—258
Բաղդասար Ագճավուր-Օղլի—48
Բայրոն—317
Բաշինջաղյան Գ.—329
Բարաճով Ա.—168
Բարաճով Ա. Օ.—63
Բարին—63
Բարյատինսկի—209
Բարսամով Ն.—98
Բեդրոսով—108
Բեդրոսով Բ.—25, 26
Բեդրոս-Օղլի—*տե՛ս Հարությունյան Պ.*
Բենգազյան Թադևոս—85, 147, 150, 277
Բենի Մելնարիֆ—76
Բեկնազարյան Հովհ.—221
Բենեդիկտ *XIV*, *Հռոմի պապ*—140
Բենկլիևներ—135
Բժշկյան Միհաս—195, 327, 330
Բիրակյան—*տե՛ս Սյունիք*
Բլյումենֆելդ Ֆ. Ֆ.—127
Բյուդով—173
Բյուզանդացի Նարայր—315
Բոնապարտ-Օղլի—52
Բոյաջիև Ի. Բ.—124
Բոյաջիև Յա. Կ.—64
Բոյաջիև Ս. Կ.—64,
Բոյաջիևներ—124
Բոյաջյան Խ. Բ.—64
Բորոզդին—141
Բրանդտ—66
Բուռնազյան Ա. Ի.—257

Գաբլենց Կ. Ի.—99, 193
Գաբրիել վրդպ.—*տե՛ս Այվազովսկի Գ.*
Գաբրելով Մ.—73
Գազարին Գ.—48
Գալկին Ն.—328
Գալուստ, *արեպ.*,—272
Գալֆա—*տե՛ս Գալֆայան Ա.*
Գալֆայան Ա.—203, 204, 208
Գալֆայան Խ.—233, 303
Գամառ-Քարիպա—325
Գառնակերյան—*տե՛ս Հովհաննես արքեպիսկոպոս*
Գասպար Աահաբշի-Օղլի—39
Գեսսել—153, 257
Գևորգ, *վրդպ.—88*
Գևորգ *արքեպ.—տե՛ս Տեր-Մկրտչյան Գ.*
Գևորգ Գ, *կաթողիկոս—315*
Գևորգյան Գ.—328
Գևորգյան Գ., *ֆաբրիկանտ,*—159
Գլազունով Ա. Կ.—320, 322
Գլինկա—321
Գյումուշխանեցի Մանվել—49, 57, 85, 89, 141—145, 182, 185, 188, 189, *194, 208, 274—277*
Գարշակով Ա. Մ.—212, 266
Գրոմով Ա.—259
Գրիգոր աղա—99
Գրիգոր, *արքեպ.*—84, 87
Գրիգոր, *վրդպ.*—24
Գրիգորև—75
Գրիգորյան Ք.—321
Գրիգորով Մ.—120
Գրիկյան—286
Գուսիկով Ֆ. Մ.—63
Գուսիկովներ—124

Գաբախով Ա. Օ.—64
Գաուդյան Մ.—287
Գաուտովա Ս. Ս.—65
Գերեվան—10
Գեյլանով Ի. Գ.—231, 241, 297—300
Գելվեքյան Գ.—216
Գեյիրմենֆի Հ.—*տե՛ս Սյունիք*
Գեոպիկ Գ. Գ.—64
Գյոպրե—52
Գողոնյան—331
Գուրովին Ն. Ֆ.—251
Գուվլեսով—*տե՛ս Ք. Տևվևիյան*
Գուչչին Ե.—80
Գուսով Լ. Յա.—63, 64
Գուրանտ Օ. Ա.—67, 197

Եգյան Կ.—315
Եկատերինա II—15, 81, 197
Եղիշե—303
Եփրեմ—84, 85, 87, 96, 271—273

Զավադովսկի Ա. Գ.—9
Զավադսկի-Կրասնոպոլսկի Ա. Կ.—58, 160
Զաքիև Պ. Մ.—*տե՛ս Զաքյան Պ. Մ.*
Զաքիևներ—124
Զաքյան Պ. Մ.—261, 264
Զյամբիլով Գ.—116
Զուբով Ե.—127
Զուբով Պ.—16, 17, 33, 34

Էլման Մ.—328
Էմին Մ.—224, 227
Էնգել—50—52

Թադևոս վրդպ.—*տե՛ս Բեկզադյան Թ.*
Թախսուզով Խ. Խ.—66
Թեմիրշիլ Մուրզա—139
Թեմրեզ—25, 129
Թեոդորյան Սարգիս—203, 204, 208
Թերլեմեզյան Ռ.—325
Թյութունջի—263
Թորոսով Գ.—101, 102
Թոփալյան Մ.—287
Թոփալյան Պ. Ս.—83
Թոփալյան Ս. Ս.—256
Թոփալյաններ—124, 135, 311
Թոփալով Ա. Մ.—63, 64
Թոփալով Յ. Մ.—64
Թոփալով Ս. Մ.—64
Թոփչյան Գ.—264, 267
Թուբև Ու.—115
Թումանյան Հ.—322
Թումանյան Պ.—285, 331
Թումանով Կ. Ա.—65
Թումանով Պ.—39
Թումանով Ս.—134
Թումանով Վ.—257
Թումանովա Ա. Ա.—65
Թումանովներ—124, 135
Թուրաբյան Հ.—261

Ժամգոչև Գ. Ֆ.—64
Ժեզուլին Ս. Ս.—13, 17—19, 32—34, 138, 139
Ժիլբեր Ռոմ—11, 12

Իգելստրոմ—99
Իգնատև—296
Իլինկիրյան Հ.—46, 132
Իսկանդարյան Ս.—284
Իվանով Ք.—248

Լազարև Հովակիմ, *զարասուբաղարցի վաճառական—114, 115*
Լազարև Ս. Գ., *դիվերսիա-մայոր*—88, 216, 231
Լազարյան Եսայեան Հովակիմի—176, 224, 226—228, 231, 238, 240, 243
Լազարյան Հովակիմ—*տե՛ս Լազարև Հովակիմ*
Լազարյան Հովակիմ Աղազարի—40, 84, 85, 96
Լազարյան Հովհ. Աղազարի—138, 139
Լազարյան Հովհ. Հովակիմի—176, 240, 241, 317
Լազարյաններ—139, 214, 226, 232, 240, 276
Լանժերոն—109, 142, 143
Լանսկոյ Ս. Ս.—208, 211, 212
Լաուրա—*տե՛ս Բահաթրյան Վ. Ա.*
Լենցիյան Մ.—164
Լեսնիդ—*տե՛ս Սպենդիարյան Լ. Ա.*
Լերմոնտով Մ. Յու.—331
Լիշման—259
Լյադով Ա. Կ.—320
Լոկաշևսկի Ա.—328
Լոշկարև—141, 143
Լորիս-Մելիքյան—317
Լուսեղենով—256
Լուսեղենով Ա.—76

Խալիբ—*տե՛ս Խալիբյան Հ. Պ.*
Խալիբյան Հ. Պ.—190, 216—228, 237, 238, 244, 294, 296—298, 300
Խալիբով—*տե՛ս Խալիբյան Հ. Պ.*
Խանբեկյան Կ.—324, 327
Խանջին Լ.—116
Խանջինա Մ. Ֆ.—66
Խաչատուրով—120
Խաչատուրով Ա., *վաճառական*—99
Խարաբջանով Ս.—76
Խարա-Կարաևա Ռ. Ս.—64
Խարտալյար Ֆ.—102, 107
Խարուզին Ա. Ն.—198
Խնյֆեց Յա.—328
Խերոսմով—79
Խիտունով—108
Խրիմյան Հայրիկ—313, 315, 317
Խուդավերդյան Ն.—88, 284

Ծատուրյան Ալ.—321, 322
Ծերենց—325

Կարակով—264
Կալպակչին—121
Կախովսկի Վ. Վ.—8, 32
Կախցազով Բ. Ա.—63
Կայալով Ա.—261
Կայալով եղբայրներ—262
Կայալով Հ.—261
Կայտմազով Է.—115
Կանկրին Ե.—95, 96
Կապրելով Մ., *ռամման*—70, 108
Կապրելով Մ. Ա.—63, 64
Կապրելով Ն.—108
Կավելին—245, 302
Կարաև Յա. Ռ.—63
Կարա-Մուրզա Մարզար—115
Կարա-Մուրզա Քրիստափոր—311, 324—327, 329
Կարամուրզայան Գ.—287
Կարապետ, *վրդպ.*—36, 139
Կարապետյան Հ.—325
Կարապետյան Ռ.—267
Կարապետով Հ.—121
Կարասև Գ. Ռ.—263
Կարինյան Ս. Բ.—205, 296, 305, 308
Կեչիև Ի. Մ.—63
Կեսլեր—198
Կևորկով—*տե՛ս Գևորգյան Գ., Ֆաբրիկանտ*
Կետլին Պ.—328
Կերչիչյան Հ.—230, 231
Կիսելյով—212, 231
Կիրկոր Հ.—134
Կլենովսկի Ն. Ս.—320
Կոզաև Ա.—328
Կոզինց—102
Կոլովլև—134
Կոկովցև Վ. Ն.—198
Կողբելյան Մ.—247
Կոնդոռակի Ա.—80
Կոնդոռակի Վ. Խ.—8, 11, 99, 158
Կոչուբեյ Վ. Պ.—24, 45, 46, 164
Կոստանդին—312
Կոստանդինով—10
Կոխլով—309, 331
Կրես Յուլիա—318
Կրիժանովսկի Ս. Ե.—198
Կուշչին Գր.—115
Կուշչին Լ.—115
Կուշչին Վ.—115
Կուրկչիևներ—65

Հակոբ, *վրդպ.*,—15, 192
Հակոբ, *քահանա*—75
Հայվազ—*տե՛ս Այվազ Գևորգ—Կոստանդին*
Հայրապետյան Կ.—*տե՛ս Հայրապետով Կ.*
Հայրապետով Կ.—219, 223, 224, 228, 232, 234, 236, 241—244
Հասունյան Անտոն—202
Հարությունյան Ա.—159
Հարությունյան Գ.—313
Հարությունյան Պ.—106
Հյուսմուզյան Գևորգ—203, 204
Հովհաննես, *առևտրական*—121
Հովհաննես, *արքեպիսկոպոս*—87, 88, 89, 95, 96, 144, 194, 276
Հովհաննես, *նկարիչ—տե՛ս Այվազովսկի Հ. Կ.*
Հովհաննեսով Աստվածատուր—76
Հովհաննեսով Սիմոն—76
Հովհաննիսյան Աշ.—205, 322
Հովսեփյան—260

Ղազար, *վրդպ.*—140
Ղամբարով Յու.—321

Մազլումով Յա. Գ.—140
Մազլումով Պ.—116
Մազլումովներ—124
Մախլյան Հ.—327, 328
Մալիև Կ.—115
Մալխասյան Ա.—249
Մահմեդ Ամին—251
Մահմեդ-բեյ—134
Մահտեսյան Է.—311, 319
Մամուրյան Մ.—315
Մանվել, *վրդպ.*,—*տե՛ս Գյումուշխանեցի*
Մանուկյան Մ. Վ.—261—265
Մանուկով Բ. Կ.—73, 107, 108
Մանուկով Խ.—25, 26, 128
Մանուկով Օ.—108
Մատթեոս I-ին, *կաթողիկոս*—190, 211, 222, 226, 230, 232, 234, 235, 242, 284, 293

Մատթեոս Վենապետյան—88, 217—220, 222, 224, 237
Մարզովսկի—327
Մարկևիչ Ա. Ի.—12
Մահսիմ—259
Մելիմ—141
Մելիքսեթ-Բեկով Լ.—87
Մելներ—176
Մենշիկով—252
Միլոռադովիչ Գ. Պ.—164, 165
Միխելսոն Ի. Ի.—48, 140
Միհաս—*տե՛ս Բժշկյան Միհաս*
Միհաս, *առևտրական*—120
Միհասով Հ.—41
Միսիրյան Ս. Գ.—286
Միսիրով Մ., *վաճառական*—116
Միսիրով Մ. Ս., *հողատեր*—63
Միտիխանով Կ.—108
Մխիթարյան Ստ.—88
Մխիթարյաններ—194, 195, 197, 199, 202—204, 206, 270, 272, 274, 275, 307, 317, 324, 330
Մոմջիև Մ.—*տե՛ս Մոմջյան Մ., կատակարար*
Մոմջյան Բ., *ձևնարկատեր*,—159
Մոմջյան Մ., *կատակարար*—154, 156, 287
Մովսիսյան Հ.—88
Մորդվինով—8, 96
Մսուր—227
Մրզյան Խ.—79
Մուզեռդիչով Օ.—108
Մուշե, *վրդպ.*,—149
Մուսայան Գ.—260
Մուրադյան Մ. Հ.—324
Մուրադով Հ.—71
Մուրզան Գ.—115
Մուրզան Է. Գ.—69
Մուրզան Խ.—115
Մուրզան Հ.—115
Մուրզան Մ. Ա.—67
Մուրզան Պ. Վ.—66
Մուրզաներ—135
Մուրզակևիչ Ն.—128

Յուսուֆ—102
Յուֆուդ Զորեֆ—149

Նադինսկի Պ. Ն.—122
Նազարյանց Ստ.—214, 227
Նալբանդյան Գ.—327
Նալբանդյան ընտանիք—324
Նալբանդյան Հովհ.—327—329
Նալբանդյան Մարտիրոս—327
Նալբանդյան Մելիոն—327
Նալբանդյան Միխայել—201, 224—230, 286, 307
Նալբանդյան Ն.—311
Նալբանդով Մ.—*տե՛ս Նալբանդյան Միքայել*
Նալբանդով Ս. Ս.—63
Նալբանդով Վ. Մ.—63
Նալբանդովա Ա. Կ.—65
Նալբանդովա Վ. Ս.—63
Նալբանդովներ—135, 136
Նախիմով, *ծովակալ*—327
Նախշումյան—262, 263
Նախշումով Ե. Կ.—66
Ներսես, *արքեպիսկոպոս—տե՛ս Խուդավերդյան Ն.*
Ներսես, *կաթողիկոս—տե՛ս Աշտարակեցի Ներսես*
Ներսեսով Է. Ն.—63
Ներսեսով Խ.—79
Ներսիսյան Հ.—*տե՛ս Հովհաննես արքեպիսկոպոս*
Ներսիսով Ն.—321
Նիկիտին Ա.—100
Նիկոլայ I—97, 102
Նիկողայոս ամիրա—272
Նիկողոսով Ա.—111
Նիկողոսով, *հայր*—141

Նահապիզյան-Կամսարական—*տե՛ս Աշտարակեցի Ներսես*
Նահիրովներ—67
Նահին-Փիրեյ, *խան*—10, 139
Նահինյան Ս.—321
Նահմազյան—329
Նահվերդյան Ն. Կ.—161
Նահվերդյան Պ. Կ.—133
Նեշենկո—331
Նիշկով—144
Նիվոռյան Հ.—66
Նենայդեր—63
Նոեռնգոլդ—156

Զալրաշ Պ.—66
Զալխուշյան Ստ.—33, 39
Զարիխյան Գր.—197, 199
Զելեպի Ստ.—272—274
Զևատի—145
Զերնոկով Ե.—102
Զերտկով Վ. Ա.—192, 193
Զիրախով Կ. Խ.—64, 65

Պալյան Ս.—315
Պավել I—15, 69, 139, 174, 259
Պետրոսով Դ.—102
Պետրոսով Լ.—70, 167
Պերեդվիժնիկներ—319
Պիաստրո—328
Պիոս IX—203
Պլատո—262
Պլեխանով Գ.—264
Պոլիվանով Ստ.—39
Պողոս, *առևտրական*,—119, 121
Պոյանյան Ալ.—230
Պոպով, *առևնակալ*,—167, 168
Պոպով Ա.—151, 152
Պոպով Հ.—39
Պոպով Մ. Կ.—66
Պոպովա—66
Պոպովիչ, *կարախմ*—326
Պոռյոմկին Գ. Ա.—10, 12, 18, 99, 127, 138, 140, 192, 247
Պոտուրյանց Վ.—324
Պուշկին—331

Ջանշին Գ.—321
Ջիվիլեգով Ա. Կ.—93

Ռազումով—145
Ռաֆայելյան Բ.—159
Ռեկույլսկի—327
Ռիմսկի-Կորսակով—320, 322
Ռիշելյո *(Էմանուել Դյուկ-դե-Ռիշելյո)*—26, 29, 37—39, 41—43, 70, 141, 142, 168
Ռոդզևիչ Ն.—140
Ռոզենբերգ—166
Ռոմանյուկ—153, 257
Ռուբինշտեյն—328
Ռուդ Մ. Օ.—65

Սահակ, *առևտրական*—121
Սահինյան Գր.—88
Սամբուլով—19
Սաչկով—259
Սապաճ-Դյուլյան—261
Սավա Իվանով Գուրջի—76
Սարաւատ—328
Սարգիս, *առևտրական*—120
Սարգիս, *վրդպ.—տե՛ս Թեոդորյան Սարգիս*
Սարզյան Ա. Մ.—318
Սարզյան Խ.—180
Սարիև Ն. Ա.—63
Սարկիսով Ա.—111
Սարյան Մ.—322
Սաֆարով Գ.—198
Սեիդ-օղլի Զելերի—134
Սելեցկի Ի.—56, 165
Սելիմով Ա.—80
Սելինյան Ի.—257
Սելինյան Հ.—277
Սեմյոնով—152
Սեմյոնով Ա.—116
Սեստրենցևիչ Բոգուշ—194
Սերեբրյակով Լ. Մ.—134, 135, 190, 249—253
Սերեբրյակով նղբայրներ—64
Սերկիզով Հ.—102
Սերոբյան Գ.—181
Սեֆերով Բ. Մ.—64
Սեֆերով Լ. Ա.—63, 64
Սեֆերով Մ. Լ.—66
Սեֆերով Պ. Յա.—64
Սեֆերովներ—135, 311
Սիմյոն, *առևտրական*—121
Սիմոն Մ., *առևտրական*—120
Սիմոնով Ա.—120
Սիվերս—223, 243, 300
Սկալկովսկի Ա.—12, 59
Սյունիֆ—260—267
Սյունիֆյան—*տե՛ս Սյունիֆ*
Սոսնիկով—107
Սպենդիարյան Ալեքսանդր Ալֆանասի—136, 256, 311, 319—323, 329
Սպենդիարյան Ալֆանաս Ակսենտի—136
Սպենդիարյան Գ. Ս.—148
Սպենդիարյան Լ. Ա.—256, 321
Սպենդիարյան Յու. Ի.—268

Սպենդիարյան Ս. Գ.—87
Սպենդիարյաններ—124, 136, 287, 311
Սպենդիարով, *կապալառու*—155
Սպենդիարով Ա.—319
Սպենդիարով Ալ. Աֆ.—*տե՛ս Սպենդիարյան Ալ. Աֆ.*
Սպենդիարով Գ. Ա.—63
Սպենդիարով Գ. Լ.—67
Սպենդիարով Լ. Լ.—136, 137
Սպենդիարով Կ. Ի.—65
Սպենդիարով Մ. Ալ.—323
Սպենդիարով Ն. Կ.—256
Սպենդիարով Ս. Ն.—256
Սպենդիարով Վ. Լ.—256
Սպենդիարով Օ. Ի.—65
Սպենդիարովա Ն. Կ.—136
Սպենդիարովա Վ. Լ.—136
Ստեփանե Խորեն—315, 317, 331
Ստեփանովներ—135
Ստոդանով—223, 229
Ստռուվե Բ.—329
Սրապիոնյան, *գանձապետ*—89
Սրապիոնյան Ս.—159
Սումարոկով Պ.—7, 8, 103, 114, 127
Սուսքատմազով—39
Սուրենյանց Վ.—322
Սուրխաբյան Հ.—331

Վաժնիչի նվիրատուներ—65
Վալուև Պ. Ս.—208, 209, 213, 242, 266, 300
Վառազդատ—*տե՛ս Թուրաբյան Հ.*
Վարբուտյանսկի—198
Վարդանուշ—*տե՛ս Բահաթրյան Վ. Ա.*
Վարդանով, *գանձապահ*—112
Վարդերես—133
Վարտանով, *բժիշկ*—329
Վարտանով Մ.—108
Վենապետյան Մ.—*տե՛ս Մատթեոս Վենապետյան*
Վլադիմիր—159
Վորոնցով, *նահանգապետ*—*169, 170, 173, 176*
Վրթանես, *վրդպ.*—195

Տատյան Հ.—315
Տարասով Մ.—80
Տելվեքյան Թ.—86, 237
Տենիլով—145
Տեռվեքյան Գ.—309, 331
Տեր-Աբրահամյան Հովհ., *տպարանի տնօրեն*—*13, 103, 123, 133, 248, 302, 331*
Տեր-Աբրահամյան Հովհ., *վրդպ.*—272, 273
Տեր-Աբրահամյան Սարգիս, *վրդպ.*—199, *200*
Տեր-Դյուլյան—198
Տեր-Կասպարյան Ս.—88
Տեր-Կարապետյան Ե.—88
Տեր-Հովսեփյան Ն.—301
Տեր-Մանուկով Պ.—116
Տեր-Մկրտչյան Գ.—88, 245
Տեր-Պետրոսյան Մ.—88
Տեր-Սիմոնյան Հովհ.—268
Տիգրան—261
Տիգրանյան Ս.—209, 290, 301, 331
Տիրայր, *վրդպ.*— 269
Տոդոռով.—142
Տոլստոյ Գ. Ա. —297
Տոլվեքյան Խ. —277
Տոնապետյան Դր. —132
Տոպալով.—*տե՛ս Թոփալյան Պ. Մ.*

Բաֆֆի.—202, 203, 325

Յեր, եպիսկոպոս —198
Յիզոև Կ. Խ.—65
Յիզոև Պ. Լ.—64
Յիզոև Ս. Բ.—64
Յիզոև Տ. Խ.—65
Յիզոև Օ. Մ.—63
Յիզոևներ—135
Յիմբալիատ Ե.—328
Յուրով—134

Ուզունյան Հ.—327
Ուզունյան Մ.—327
Ուվարով—279

Քալանթարովա Օ.—329
Քաղցածյան Ա.—326, 327
Քարակաշ, *պրապորշչիկ*— *193, 194*
Քարակաշ Եզար—65
Քարակաշ Եղիազար—134
Քեշիշյան Ե.—149
Քեչիև Հ.—115
Քեչիևներ—124
Քյուրճի Խաչատուր—10, 139
Քոպռև Մ.—115
Քսիյան Մ.—167
Քրիստափորով Գ. Ն.—124
Քուչնարև, *հոդատեր*—*65*
Քուչնարև Կ. Գ.—66
Քուչնարև Վ. Ս.—67
Քուչնարևա Վ.—115
Քուչնարևներ—65, 135
Քուչներյան Ք.—330, 331

Օրերով Ա. Ն.—64
Օրերովներ—135
Օդաբաշև Գ.—40
Օվաճեսով Կ.—120
Օվաճեսով Հ.—121
Օրլովսկի Վ. Վ.—323

Ֆիերկովսկի—328

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբխազիա—102, 252,
Ագի-Կայդաչ—65, 143—146, 148, 149
Ագռավի ավազան—98
Ագռավի ճահիճ—81, 138, 191, 192, 247
Ալեշկի—60
Ալեքսանդրապոլ—325, 329
Ալեքսանդրովկ—248
Ալբին-չաիր—66
Ախալցխա—200
Ախտիյար— *տե՛ս Անաստասիոլ*
Ակմեչիթ— *տե՛ս Սիմֆերոպոլ*
Ամասիա— 46, 49, 132
Այտավի հովիտ—146, 155
Անապա—102, 253
Անաստասևկա—64
Անատոլիա—17, 18, 52
Անհայոյ-Ալի—64
Անգլիա—251, 300
Անդրիովկաս—200, 232, 266, 283, 284
Անկարա—49
Աշքար—67
Ասարախան—22, 70, 87, 94, 170, 215, 267, 297, 325
Ավստրիա—299, 300
Արարատ—317
Արբատ—33
Արևելյան Հայաստան—190, 267
Արևմտյան Հայաստան—46, 132, 190, 265, 267
Արմյանկ— *տե՛ս Արմյանկի Բազար*
Արմյանկի Բազար— 56, 58, 83, 84, 87, 91, 103, 124,, 148, 151, 155, 160, 188, 255, 277, 281, 310, 319, 327
Արտակ—136
Ափերման—279

Բաբում—200, 267
Բալակլավա—60
Բալթիկ ծով—249
Բախչելի—90, 150, 154
Բախչիսարայ—10, 26, 28, 56, 58, 59, 83, 91, 110, 151, 156, 188
Բահու—267, 322, 325, 329
Բ. Դուռ— *տե՛ս Թուրքիա*
Բեյոոուսիա—16
Բեկի-էլի—65
Բեշկուրտկա—67
Բեշկուրտկա-Ջանկոյ— *տե՛ս Բեշկուրտկա*
Բեոլին—328
Բեսարաբիա—56, 84, 87, 118, 148, 149, 152, 169, 177, 188, 200, 214, 215, 217, 221, 223, 234, 235, 271, 278, 280, 282, 284, 303
Բեսարաբիայի ճահիճ—88, 134
Բերդիչև—327
Բերդյանսկ—58, 59
Բերդյանսկի գավառ—59
Բիյզյազի-սադ—65
Բիյուկ-Ջարա—136
Բոգատոյե—19
Բուզազ—102
Բուկովինա—311

Գալիցիա—311
Գելենջիկ—252
Գենջինսկ—259
Գոլովինսկ—251
Գրենել—204, 208
Գրիգորիոպոլ—32, 45, 85, 144, 172—176, 279

Դեզերմենջի—134
Դեմիրչի—66
Դիարբեքիր—49
Դմիտրի Ռոստովսկու ամրոց—31
Դենպրի գավառ—60
Դենսար—48
Դոնի զորհերի մարզ—88

Եկատերինոսլավ—11—14, 27, 28, 37—40, 164—166, 192, 242
Եկատերինոսլավ— *տե՛ս Նովոմոսկովսկ*
Եկատերինոսլավի կուսակալություն—32, 34—36
Եկատերինոսլավի ճահիճ—88, 134, 159, 170, 174
Ենիկալե—60
Եվդոկիա—49
Եվպատորիա—23, 26, 28, 31, 34, 35, 56, 58, 60, 66, 83, 91, 99, 101, 110, 113, 122, 124, 151, 156, 162, 188, 255, 262, 263, 265, 268, 277, 279, 281, 284, 310
Եվպատորիայի գավառ—60, 66
Եվրոպա—292
Երևան—323—325, 329

Էմիածին—22, 83, 85, 86, 88, 90, 141, 147, 149, 182—184, 186—189, 209, 217, 218, 220, 226, 229, 231, 235, 242, 243, 266—269, 279, 280, 301, 317, 318, 325
Էակի Ղրիմ— *տե՛ս Հին Ղրիմ*
Էսսեն-էլի—67
Էրզրում—49
Էֆենդի-Իյոյ—134, 135

Թաման—102
Թեոդոսիա—10, 11, 17—21, 25, 26, 29, 34—36, 44, 47—54, 56, 58, 60, 61, 67, 76, 83, 90, 91, 98, 99, 101, 102, 106, 107, 109, 111, 113, 118, 122, 124, 129, 139, 144—146, 150—152, 154, 157, 159, 161, 162, 167, 169, 180, 181, 188, 194, 196—198, 200, 215, 223, 226, 232, 236, 241, 242, 249, 254, 255, 260, 268, 277—279, 281, 286—288, 290, 291, 300, 305, 306, 308—313, 317, 318, 323, 327, 328
Թեոդոսիայի գավառ—60, 67, 132, 136, 137
Թեսալիա—315
Թերեքլի-շահ Ալի—64
Թիֆլիս—144, 243, 262, 267—270, 311, 322, 325, 329
Թուրքահայաստան— *տե՛ս Արևմտյան Հայաստան*
Թուրքիա—7, 10 12, 30, 46, 47, 49—55, 57, 58, 61, 92, 96, 101—103, 124, 130, 132, 138, 161, 204, 209—212 230, 231, 235, 251, 260, 266, 267, 271, 274, 280, 282, 283, 296, 298, 299, 321

Իզյումովկա—138
Իտալիա—140, 274

Լազովայա—101, 122
Լենինական—9, 16, 285, 330
Լենինգրադ—329

Խարկով—101, 123, 258
Խերսոն—26, 109, 143, 166
Խերսոնի ճահիճ—88, 134, 170
Խիր-Խարտով—64

Կախովկա—319
Կարա-Թոզայ—136
Կարաչա—66
Կարասուբազար— *տե՛ս Ղարասուբազար*
Կարս—317
Կաֆա— *տե՛ս Թեոդոսիա*
Կեղի Խակեր-կոյ—64
Կերչ—26, 56, 58, 60, 101, 102, 122, 155, 197, 255, 268, 277, 279, 281, 327
Կերչ-Ենիկալեի բաղաքապետարան—60
Կիև—258, 259

Պիևի նահանգ—134.
Պիզակ—134
Պիզյար—131
Պիլչենի—12
Պիրկ—134
Պոչոեզերմեն—64
Կոստանդնուպոլիս—11, 47—50, 52—54, 100, 103, 202, 204, 205, 208, 210, 214, 215, 231, 235, 249, 261, 262, 271, 272, 274, 282, 296, 301, 311, 315, 318, 325, 330
Կովկաս—30, 101, 102, 159, 177, 200, 208, 211, 215, 234, 249, 252, 260, 265—268, 325
Կովկասի մարզ—170
Կոտոր—66
Կարդա-էլի—63
Կուրաճ—102

Հայաստան—91, 146, 203, 262, 263, 270, 285, 299, 321,
Հայկական գյուղ—21
Հին Ղրիմ—7, 10, 17—30, 36, 38—44, 47, 56, 58, 60, 61, 69, 70, 72—76, 78, 81, 83, 91, 92, 97, 103, 104, 106—114, 126, 128—132, 139—142, 146, 149, 150, 155—157, 159, 163, 167, 169, 171—176, 179, 180, 194, 260, 271, 275, 277, 279, 281, 287, 310, 313
Հնդկաստան—226
Հոռմ—195—200, 202—205, 207, 208, 274, 307, 308
Հունական սյոբոդա—21

Ղամիշլիկ—67
Ղարասու, *գետ*—154
Ղարասու, *քաղաք—տե՛ս Ղարասուբազար*
Ղարասուբազար—11, 13, 14, 16, 17, 19, 23, 26—30, 34, 35, 41, 46, 47, 51, 55—59, 69, 72, 73, 78—84, 86, 87, 89—91, 97, 103—107, 109, 113—119, 122, 124, 126, 133, 135, 147, 148, 150—152, 154, 156—159, 163—166, 169, 171—175, 177—182, 184, 185, 188, 193, 197, 199, 245, 248, 249, 251, 255, 268, 275—277, 279, 281, 282, 285—287, 317, 324, 326, 327, 331
Ղրիմ, գյուղ—41
Ղրիմի թեռակղզի—9, 61, 170, 331

Մարմարա ծով—315, 317
Մելիտոպոլ—58, 60, 84, 259, 281
Մելիտոպոլի գավառ—60
Մեծ Սալա—41
Մոլդավիա—30, 84, 87, 231
Մոն-Ռեպոո—64
Մոսկվա—87, 88, 101, 214, 215, 218, 241, 243, 319—322
Մուստաֆա-բեյ—64
Մուրադչայ-Սարայ—76

Յալթա—12, 56, 60, 268, 310, 321—323
Յալթայի գավառ—58, 60, 66, 137
Յաշպեկ—66

Նախիջևան—*տե՛ս Նոր Նախիջևան*
Նավագինսկ—251
Նիկոլաև—107
Նոդայսկ—58, 59, 245, 279, 281
Նովոմոսկովսկ—11, 13, 14
Նովոռոսիա—45, 56, 87, 111, 118, 140, 169, 177, 211, 223, 234, 288, 303
Նովոռոսիյսկ—250, 252, 253
Նովոտրոիցկ—251
Նոր-Ջելանդիա—264
Նոր Նախիջևան—11, 16, 24, 26—34, 37—46, 56, 57, 84, 85, 87, 88, 101, 110, 148, 149, 152, 172—176, 182, 186, 193, 200, 214, 216—221, 223, 226, 228, 229, 232, 235, 241, 243—245, 247, 248, 271, 278, 279, 282, 284, 325

Շախվալ—64
Շապսուխո—250
Շիրակ—200
Շուշա—261

Ջաբայ—66
Ջալդր—41
Ջերնիգովի նահանգ—9, 134
Ջերբիզիա—101, 102
Ջամբայ—134
Ջոնդուլայ—66
Ջուրյուկ-սու—134

Պարսկաստան—96, 231, 280, 298, 299
Պետերբուրգ—24, 85, 87, 88, 144, 159, 214, 215, 218, 230, 232, 240, 243, 245, 249, 259, 312, 317, 319, 320, 322, 323, 328, 329
Պերեկոպ—26, 28, 33, 58, 60, 65, 73, 103, 107, 108, 110, 113, 145, 279
Պերեկոպի գավառ—60, 65, 87, 136, 143—145, 148, 149, 155
Պոլիս—*տե՛ս Կոստանդնուպոլիս*
Պոլտավայի նահանգ—134
Պոմոռս—330
Պրիյատճոյե Սվիդանիյե—65

Ջաբա—65
Ջանդամ-զայ—134
Ջանտուզան—65
Ջարակ—134
Ջեյրուկ—65

Ռոստով-Դոն—41, 259
Ռոստովի օկրուգ—88
Ռուսաստան—7—9, 16, 20, 22, 30, 32, 46—49, 52, 56, 87, 88, 93—96, 98, 102, 113, 122, 124, 131, 138, 140, 158, 159, 166, 173, 174, 188, 190, 194, 197, 199, 205, 209—212, 214, 215, 224, 229, 231, 246, 249, 251, 257, 261, 266, 270, 271, 274, 278, 286, 292, 293, 297—301, 305, 307

Սամար—12
Սեաստոպոլ—9, 47, 60, 83, 101, 122, 123, 156, 159, 162, 247, 248, 252, 259, 263, 268, 327, 328
Սեաստոպոլի հաղամապետարան—60
Սև ծով—252
Սիմֆերոպոլ—23, 26, 28, 56, 58—61, 63—67, 83, 84, 91, 109, 113, 118, 122, 124, 125, 136, 148, 149, 151, 154, 156, 157, 159, 161, 188, 197, 212, 245, 249, 255, 256, 259—265, 267—269, 277, 279, 281, 282, 285—287, 310, 312, 317, 319, 320, 327, 328
Սիմֆերոպոլի գավառ—59, 63, 134, 135
Սինոպ—251, 327
Ս. Ղազար կղզի—317
Սոչի—250
Սովետական Հայաստան—323, 329
Ստանիսլավ—311
Սուրաշ—151, 156, 260, 277
Սուրաշի լիճ—161
Սուդակ—19, 146—148, 155, 259, 260, 287, 321, 323
Սուխում-կալե—252
Սուրխաթ—*տե՛ս Հին Ղրիմ*

Վալախիա—87
Վելյամինովո—250, 251
Վենետիկ—197, 199, 202, 271, 274, 330, 331
Վոլինի նահանգ—134
Վորոնեժի նահանգ—9

Տագանրոգ—41—43, 100, 237, 238
Տագանրոգի օկրուգ—88
Տաշհենդ—329
Տավրիդա—*տե՛ս Տավրիկիա*
Տավրիկա—*տե՛ս Տավրիկիա*
Տավրիկիա—9, 16, 18, 25—28, 31, 33, 34, 35, 38, 39, 41, 46, 55, 57, 69, 71, 81, 83, 99 106, 109, 112, 115, 118, 128, 130, 131, 138, 141, 143, 159, 164, 166, 168, 173, 175, 177—179, 180, 191, 237, 247, 255, 258, 259, 261, 262, 265
Տավրիկյան թեռակղզի—*տե՛ս Ղրիմի թերակղզի*
Տավրիկյան մարզ—8, 14, 17, 20, 32, 35, 193
Տավրիկյան նահանգ—7, 30, 37, 42, 44, 58, 59, 61, 62, 70, 84, 93, 108, 113, 123, 169, 170, 268, 278, 281, 288, 290, 304, 319, 330
Տենգին—251

Տրապիզոն—49, 52, 103, 251, 269, 315, 317, 330
Տաւասպե—250

Ուկրաինա—123, 159, 331
Ունիա—100

Փարիզ—203, 204, 207, 208, 209, 230, 231, 261, 262, 264, 265, 293, 308
Փոքր Ասիա—215

Քիշեն—87, 200, 215, 216, 217, 232, 279

Օբերով—66
Օրիաուշա—110, 151, 156
Օդեսա—26, 141, 237, 258, 259, 279, 290, 315, 319, 324, 331
Օղի-Կայգաչ—*տե՛ս Ադի-Կայգաչ*
Օրուզ—145, 155
Օտաբազար—*տե՛ս Արմյանսկի Բազար*
Օրթալանկ—67
Օրխով—58

Ֆիննական ծոց—249
Ֆրանսիա—204, 212, 251, 299, 300, 307

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 6
Գլուխ առաջին.—Գաղութի վերականգնումը 7
Գլուխ երկրորդ.—Վարչա-կառավարման օրգանները 69
Գլուխ երրորդ.—Ղրիմահայերի զբաղմունքները և տնտեսական դրությունը 92
Գլուխ չորրորդ.—Հասարակական-քաղաքական կյանքը գաղութում . 190
Գլուխ հինգերորդ.—Ղրիմահայ մշակույթը 270
Աղբյուրների և գրականության ցանկ 332
Անձնանունների ցանկ 338
Տեղանունների ցանկ 346

ՎԱՐԴԳԵՍ ԱԼԵՔՍԱՆԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
ВАРДГЕС АЛЕКСАНДРОВИЧ МИКАЕЛЯН

ՂՐԻՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
1801—1917 թթ.

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր
Վ. Ա. ԴԻԼՈՅԱՆ

Հրատարակչական խմբագիր
Ա. Հ. ԾԱՂԳԱՄՅԱՆ

Նկարչ. ձևավորումը՝
Կ. Կ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆԻ

Տեխնիկական խմբագիր
Մ. Կ. ՋԱՋՈՐՅԱՆ

Սրբագրիչ
Լ. Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՖ 63523 Պատվեր 195 Տպաքանակ 5000
ԽՀԽ 1236 Հրատ. 3260

Հանձնված է արտադրության 23/IV 1970 թ.: Ստորագրված է տպագրության 25/XI 1970 թ.: Տպագր. 22,0 մամուլ + 5 ներդիր, հրատ. 18,71 մամուլ: Թուղթ № 1, $60 \times 90\ 1/16$: Գինը 1 ռ. 44 կ.:

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան,
Երևան, Բարեկամության, 24: